Ս. Վրացեան

Կեանքի ուղիներով

Ղէպքեր
Դէմքեր
Պատումներ

Բ. Հատոր

Պէյրութ
1980

Aram webaram.com

Aram webaram.com

Ս. ՎՐԱՑԵԱՆ

ԿԵՎՆԵՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ՊԷՊՔԵՐ
ՊԷՄՔԵՐ
ՎԻՊՐՈՒՄՆԵՐ

Բ. ՀԱՏՈՐ

ՏՊԱՐԱՆ ՄՇԱԿ
ՊԼՅՈՒԹ
1960

Aram webaram.com

Aram webaram.com

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Երբ, հինգ տարի առաջ, 1955ին, մամուլին էի յանձնում իմ «Կեանքի Ուղիներով»ը մտօվս աւգամ չէր անցնում, որ գիրքը կարճ ժամանակում ամբողջովին պիտի սպառուի եւ նոր տպագրութեան պէտք պիտի զգացուի: Նոր տպագրութեան փոխարէն՝ ահա մի նոր հատոր:

Առաջին հատորի մասին մամուլն ու հինադատները բարեացակամ արտայայտութիւն ունեցան, աւելի ճիշդ պիտի լինէր ասել բարեկամական: Իմ կարծիքը, սակայն, իրրեւ հեղինակի, առաջինի մասին էլ նոյնն է, ինչ որ այս հատորի· *պարապ վախտի խաղալիք*: Ո՛չ պատմութիւն, ո՛չ կատարեալ իմաստով յուշագրութիւն, ո՛չ, եւս առաւել, գրականութիւն, այո՛, պարզապէս պարապ վախտի խաղալիք:

Բայց խաղալիքներն էլ, հարկաւ, անարժէք բաներ չեն: Երեխայի համար, օրինակ, խաղալիքը անհամեմատ աւելի թանգ է, քան ոսկին եւ գոհարը կամ հիւղէն իր բոլոր ենթահիւղէներով:

«Կեանքի Ուղիներով»ի այս հատորն էլ գրուած է նոյն մտածումով եւ միեւնոյն ոգիով ինչ որ առաջինը: Ես աշխատել եմ իմ կեանքի Ուղիներիս վրայ հանդիպածս, տեսածս ու լսածս, ինչո՞ւ չէ, նաեւ մտածածս ու զգացածս պատկերացնել, ինչքան հնար է, հարազատօրէն, առարկայօրէն՝ ներկայացնելով կեանքը ինչպէս որ է, ինչպէս որ եղած է:

Անշուշտ, «*ինչպէս որ է*»ն էլ սահման ունի· կան բաներ, որ ուզում ես, բայց չես կարող պատմել, եւ կան բաներ, որ չես ուզում, բայց պարտաւոր ես ասել:

Aram webaram.com

«Սիւնիի Գործ»ը՝ օրինակ: Ես դառնութեամբ ու վարանումով եմ գրի առել: Գիտեմ, որ մեղադրողներ էլ պիտի լինեն. մարդը մեռել գնացել է, ի՞նչ հարկ հին դարմանը խառուն տալու: Բայց եթէ այս մտածումը դարձնենք առաջնորդող սկզբունք, այն ժամանակ կեանքը կը դառնայ անտանելի: Մարդ հասարակական էակ է, հետեւաբար, իր հանրային արարքների համար հաշուետու է հասարակութեան: Եւ հասարակութիւնը պարտաւոր է լաւին լաւ ասել ու վատին՝ վատ: Ընկերային յառաջդիմութեան առաջին եւ գլխաւոր պայմաններից մէկն է այս:

Ինչ որ ասուած է «Կեանքի Ուղիներով»ի առաջին հատորի յառաջաբանում՝ ամբողջապէս կիրառելի է եւ ներկայ հատորի համար: Ես միշտ ի մտի ունիմ Ուկրայնացի մեծ հայրենասէր բանաստեղծ Տարաս Շեւչենկոյի խօսքը ասուած իր «*Կոբզար*»ի առթիւ.

Մի կաթ արցունք աչքերից սեւ՝
Ես պաներից պանն եմ արդէն...

Բայց ինչո՞ւ միայն *արցունք*, պիտի հարցնէ ընթերցողը, ինչո՞ւ ոչ *ծիծաղ էլ*:

Չէ՞ որ արցունքն ու ծիծաղը, որպէս Սիամի երկուորեակներ, անբաժան են իրարից մեր կեանքի ուղիների վրայ:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

Մայիս 28, 1960

Երեւան

Aram webaram.com

ԴԷՊԻ ԱՂԲԻՒՐԸ ԼՈՑՍԻ

I.— ՍՈՒՐԲ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Մեծ Սալա գիւղը վերադառնալով՝ մայրս հասաւ իր նպատակին. զաւակները ԵՈՒ չեղան. մնացին հայ. մանաւանդ ես արագ հայացայ: Բայց մեր Տիմաշովկայի բարեկեցութիւնը խախտուեց:

Շուշանիկ քոյրիկիս եղերական մահը ցնցեց մեր ընտանեկան երջանկութիւնը: Մօրս դէմքից ընդմիշտ անհետացաւ ժպիտը: Գառուն չբացուած Շուշանիկին հետեւեց եւ մեր սիրելի տատիկը, որ, իր ասելով, արդէն հարիւր տարեկան էր, բայց Տէր Աբսէնը, որ պոց դիտէր իր ծուխի պատմութիւնը եւ ամէնքի տարիքը, հաւատացնում էր, թէ մեր մեծ–մայրը 116 տարեկան մեռաւ՝ ինչ որ գիւղի եկեղեցու թղթերն էլ հաստատում էին:

Գիւղից կարծես մի բան պակասեց Մերկեանի Քերոբի այրիի մահով: Վերջին տարիները նա սկսել էր երեխայանալ. բուսել էին նոր ատամներ բերանում, ջահել աղջկայ հովեր էր առնում: Երբ տղամարդու ձայնն էր լսում (այլեւս չէր տեսնում), կարծում էր, թէ իր նշանածն է եկել եւ աչխատում էր դէմքը ծածկել, իբր թէ ամօթից: Գիւղում ամենքը խօսում էին նրա մասին: Պառաւները նախանձով ասում էին. «Մերկեանի Քերոբի կնկանը չափ ապրիմ»...:

Սիրելի մեծայի մահով մեր տունը բոլորովին ամայացաւ: Հօրս գործերն էլ յաջող չգնացին: Իր մէկ բարեկամին փոխարինաբար տուել էր մի խոշոր գումար մէկ ամսից վերադարձնելու պայմանով: Բարեկամը սնանկացաւ ու սրտի ցաւից մեռաւ, եւ հօրս դրամը կորաւ: Տիմաշովկայից բերած դրեթէ ամբողջ դրամը գործի մէջ

Aram webaram.com

դրեց՝ վարձելով դիւղի պետական օղեվաճառատունը լաւ չահի յոյսով: Այդ տարին սաստիկ երաշտ եղաւ, ճըթճըթները կերան արտերը, եւ հազարաւոր ռուս մշակները, որ ամէն ամառ գալիս էին հունձքի եւ իրենց վաստակի մեծ մասը ծախսում էին օղիի վրայ, այդ ամառ չեկան, եւ հայրս գործի մէջ դրած դրամի մեծ մասը կորցրեց: Դժբախտութիւն դժբախտութեան յետեւից թափուեց մեր տան գլխին:

Պատահածը անակնկալ չէր մօրս համար: Մեր գիւղ վերադառնալու յաջորդ առաւօտն իսկ, մօրս պատմելով, մեր տան բարձր ծխնելոյղի վրայ թառել էր մի սեւ ագռաւ եւ իրար յետեւից երեք անգամ դանչել անճոռնի ձայնով.

— Ղա՛, ղա՛, ղա՛...

Դանչել էր երեք անգամ եւ թռել–հեռացել:

— Սեւ ձիւն եկաւ մեր գլխուն, սարսափած ասել էր մայրս, խադդան փորձանք պիտի բերէ մեզի...

Տարիների աշխատանքով ձեռք բերած ամբողջ հարստութիւնը կորցնելով՝ հայրս այլեւս չէր կարող մնալ գիւղում: Գիւղում ձախողած մարդիկ, սովորաբար, հեռանում էին՝ քաղաքում նոր բախտ փորձելու: Մենք էլ, թօթուելով փոշին մեր ոտքերից՝ փոխադրուեցինք Նոր–Նախիջեւան:

Ես յաճախում էի Մեծ Սալայի տղայոց դպրոցը, ուր համարւում էի յառաջադէմ աշակերտներից: Արդէն գիտէի բաւականաչափ հայերէն, ունէի մտերիմ ընկերներ: Ուսուցիչները լաւ էին վերաբերւում դէպի ինձ, մանաւանդ, ռուսերէնի դասատու Յովհաննիսեանը, մասնաւոր ուշադրութեամբ էր հետեւում իմ աշխատանքներին: Դպրոցի աւագ ուսուցիչ Լոյսպարոն Նորաբեւեանը, որ յետոյ դարձաւ տէր–Գրիգոր, հօրս բարեկամը, իրրեւ օրինակ էր ցոյց տալիս ինձ աշակերտներին.

— Նայեցէք, մէկ խօսք հայնակ չիտէր, չինտիխ բուլբուլի պէս կալաճի կ'անէ...

Բուլբուլի պէս, թէ խադդայի, ես իսկապէս որ հայերէն լաւ «կալաճի կ'անէի», այնքան, որ մեր կրօնի դասատու Շուղուեան Տէր Օվակիմը ասում էր, թէ եկող տօներին Դանիէլի կարդալ պիտի տար ինձ: Դանիէլի միայն հարուստների տղաներն էին կարդում...

Քաղաք փոխադրուելով՝ այս ամէնը կորաւ: Մասնաւորապէս ծանր եկաւ ինձ բաժանումը գիւղի ընկերներից, որոնց մէջ ունէի

Aram webaram.com

սրտակից մտերիմներ, ինչպէս Եղիա Ախայեանը, Ադամ Դոմբայեանը, Սերոբ Տիրացուեանը եւայլն:

Եղիան մարմնով դիւրաբեկ, քնքոյշ եւ լաւ սովորող տղայ էր: Ադամն ու Սերոբը մարմնով կոշտ, բայց սրտով ազնիւ, իսկական դիւղացիներ էին: Ցետոյ, թեմականում միացան ինձ, Եղիան եւ Ադամը ուսանողներ էլ եղան Պետերբուրգում:

Երկար որոնումներից ու վարանումներից յետոյ, հայրս որոշեց բանալ կէս պանդոկի, կէս քարվանսարայի նման մի բան, գլխաւորապէս դիւղացի յաճախորդների համար: Շատ էլ նախանձելի գործ չէր, բայց — անճարը կերել էր բանջարը...

Մեր Դվոռը — այդպէս էին կոչում ռուսերէն — գտնւում էր Նոր-Նախիջեւան քաղաքի 24րդ գծի վրայ, քաղաքի հիւսիսային ծայրում, Դոտի Բազարի մօտ, ցորենի չուեմարանների շրջանում: Այստեղից էին քաղաք գալիս եւ վերադառնում Մուրը Ծաչի, Մեծ Սալայի, Փոքր Սալայի, Նիսվիտայի բնակիչները եւ հազարաւոր ցորեն փոխադրող սայլեր:

Մեր Դվոռը բաղկացած էր ընդարձակ, սալայատակ բակից, որի ներսի եզերքը բռնում էր լայնանիստ ախոռը ձիերի եւ խոտի համար: Մէկ մեծ չէնքում տեղաւորուած էր ճաշարանը եւ երկու խոշոր սենեակներ, իբրեւ յաճախորդների դիշերելու տեղ: «Պատուաւոր» յաճախորդների համար տեղ կար երկրորդ չէնքում, ուր ապրում էր նաեւ մեր ընտանիքը:

Հայրս մի սպասաւորի օգնութեամբ վարում էր Դվոռի ընդհանուր գործերը, մայրս մի ռուս սպասուհու հետ հետեւում էր խոհանոցին ու ճաշարանին: Եւ որովհետեւ հայրս դիւղացիներից էր, առհասարակ, բոլորի կողմից յարգուած եւ սիրուած մարդ էր եւ դիշերները հիանալի հէքեաթ պատմող, ծանօթ-անծանօթ քաղաք եկող դիւղացիները մեզ մօտ էին իջեւանում եւ իրենց ծանօթներին էլ յանձնարարում:

— Խաղարոս աղայի Դվոռը իջէք. անկէ աղէկ տեղ չկայ...

Եւ իջնում էին: Ամէն օր մեր Դվոռը լիքն էր լինում դիւղացիներով, որոնք բերում էին իրենց բերքը ծախելու եւ քաղաքից տան համար գնումներ անելու: Երեկոյեան, ընթրիքից յետոյ, հաւաքւում էին մեծ սենեակում, լեցնում էին մախոռկայով իրենց չիբուխները եւ մինչեւ ուշ դիշեր պատմութիւններ լսում: Կային նշանաւոր պատմողներ, ինչպէս Պոմպուղին Մարկոսը, Քէմէչէճի Պապուչը, Շուն Նալող Օսկանը, բայց դրանից ոչ մէկը չէր կարող մրցել հօրս

Aram webaram.com

վառ երեւակայութեան, սուր հեղնանքի եւ ճարտար ու սրամիտ լեզուի հետ: Երբեմն դիւղերից մարդիկ էին գալիս միայն Խազարոս աղայի պատմութիւնները լսելու համար:

Եւ ապահովեմբ ականջ էին դնում այդ հրաշալի պատմութիւններին: Ինձ յափշտակում էին, մանաւանդ, հէքեաթները, որոնք պատմում էին իբրեւ իրականութիւն:

Պոմպուղին Մարկոսը, մասնաւորապէս, խնդալիք բաներ էր պատմում: Մէկ օր, օրինակ, պատմում էր նա, «սապահատան կանոխ սոխախ էլայ: Աչքս բանամ ու տեսնեմ, ի՞նչ տեսնեմ, մէքատ պալապան Փիչի (տակառ): Ի՞նչ գործ ունի սա Փիչին հոս, միտք կ'անիմ: Բանամ, մէջը տեսնեմ, ի՞նչ տեսնեմ, պարապ է: Մանիմ, ասի, մէջը, քիչ մը եալ անիմ (հանգստանամ): Սաղ դիշերը բարձիս ընկերը (կինը) դըռ-դըռ, դըռ-դըռ, եալ չեղայ: Մտայ, պառկեցայ Փիչիի մէջ, խափխափը քաշեցի ու քուն էգայ:

«Ձասիս որ մեր դրացինին Փիչին է. եղիլ է մարդը քաղաք պիտ տանի աղայի հարսնիքին ռախի բերելու: Մէյմալ աչքս բացի որ Խազարոս աղայի Դվոռն իմ...»:

Լսողները հըռ-հըռ ծիծաղում են, իսկ ես զարմանում եմ, թէ Պոմպուղին Մարկոսը, այդ ամուսական մարդը ինչպէ՞ս էր տեղաւորուել տակառում եւ ինչպէ՞ս առանց չնչահեղձ լինելու հասել է քաղաք...

Սակայն, ինձ աւելի յափշտակում էին հէքեաթները դեւերի, վիշապների եւ հերոսների մասին, որոնց վարպետը հայրս էր: Նա կարող էր ամբողջ գիշեր, առանց յոգնելու, իրար յետեւից զարմանահրաշ պատմութիւններ անել եւ լսողները մնում էին կախուած նրա բերանից:

Ուսումը ինձ շատ չէր հրապուրում. ես ընդունուել էի Սուրբ Համբարձում թաղի ծխական դպրոցը, ուր աւագ ուսուցիչ էր եւ հայերէնի ու երգեցողութեան դասատու՝ Պարոն Մելիքեանը. թուաբանութեան ուսուցիչ էր կաղ պարոն Սահաւեանը եւ ռուսերէն լեզուի ուսուցչուհի՝ «հին օրիորդ» Մարիամը, նոյնպէս կաղ, որ դժգոհ էր աշխարհից, թէ ինչու իր ձեռքը խնդրող չէր գտնուել: Աշակերտների թիւը հարիւրը կ'անցնէր եւ մէկը չգտնուեց, որի հետ ես մըտերմանայի:

Աւագ ուսուցչի հետ իմ յարաբերութիւնները աստիճանաբար լաւացան, բայց առաջին տպաւորութիւնս այնքան վատ էր, որ ես քիչ մնաց փախչէի դպրոցից:

Aram webaram.com

Պարոն Մելիքեանը, հաստամարմին, եղի դլխով եւ գորտի խոշոր աչքերով, չար երեւոյթով մարդ էր. յետոյ պարզուեց, ընդհակառակը, որ սուրբի նման հեզ էր ու բարի:

— Անունդ ի՞նչ է, — հարցրեց նա խրոխտ ձայնով, երբ ես առաջին անգամ ներկայացայ նրան:

— Սիմոն Գոռուզեան, պատասխանեցի ես վախվխելով:

Մեր ընտանեկան անունը Գոռուզեան էր, որովհետեւ շատ գոռուզ մազերով մարդիկ կային մեր գերդաստանում:

— Հէ՞, ինչ ասի՞ր, պոռաց վրաս աւագ-ուսուցիչը, Գոռուզա՞ն. այդպիսի անուն չկայ: Քո անունը Գրուզինեան է, հասկացա՞ր: Պապայիդ ասա, որ դու Գրուզինեան ես, հասկացա՞ր:

Ինձ համար միեւնոյնն էր՝ Գոռուզեան, թէ Գրուզինեան, բայց այս մարդը ինչո՞ւ կը պոռար վրաս:

Շատ վատ տպաւորութեամբ հեռացայ դպրոցից եւ այնուհետեւ դարձայ Գրուզինեան:

Nomina odiosa sunt, ասում էին հին հռովմայեցիք, որ հայերէն կարելի է ասել, թէ անունները բնորոշում են մարդը: Գոռուզեան թէ Գրուզինեան՝ միեւնոյնը եղաւ ինձ համար, միայն մայրս դժգոհ մնաց, որ ես դաւաճանում էի մեր գերդաստանին: Մերկեան հօրեղբայրս էլ հետեւեց ինձ, եւ երբ ես դարձայ Վրացեան, մեր գերդաստանը, ըստ անունի, բաժանուեց երեք խմբակցութեան՝ Գոռուզեան, Գրուզինեան, Վրացեան: Հիմա կարելի է ասել Nomina odiosa sunt որովհետեւ երեքն էլ բնաւորութեամբ ու նկարագրով տարբեր են... Կարապետ հօրեղբայրս մնաց Գոռուզեան, անխառն եւ պահպանողական հայ. Մերկեան հօրեղբայրս՝ Գրուզինեան — նոր բաների սիրահար, իսկ ես, ինչպէս տեսնում էք, Վրացեան...

Ասացի, որ մեր յարաբերութիւնները Պր. Մելիքեանի հետ աստիճանաբար լաւացան, եւ դրա համար լուրջ պատճառներ կային: Ես փաստօրէն դպրոցում անելիք չունէի. Սուրբ Համբարձումում աւանդուող բոլոր դիտութիւնները ես արդէն սովորել էի Մեծ-Մալայում: Պր. Մելիքեանը չուտով հասկացաւ այդ փաստը, որից հանեց գործնական եզրակացութիւն:

Աւագ-ուսուցչութիւնից զատ Պր. Մելիքեանը անում էր ուրիշ գործեր էլ դուրսը, եւ, ի միջի այլոց, զբաղւում էր ամուսնական եւ ամուսնալուծական հարցերով, չնորհիւ կոնսիստորիայի հետ ունեցած բարեկամական կապերի: Եթէ մէկը ուզում էր ամուսնանալ չհաս օրիորդի հետ կամ ուզում էր բաժանուել չսիրած կնոջից եւ

Aram webaram.com

կոնսիստորիան դժուարութիւն էր հանում, դիմում էր իմ աւագ-ուսուցչին: Սա խնդրագիրը պատրաստում եւ ապա միջնորդում էր կոնսիստորիայում, անշուշտ, իւղելով մեքենայի կարեւոր ա-նիւները եւ, ի հարկ է, ստանալով իւղի իր բաժինն եւս: Խնդիրը չէր կարող դրել իր ձեռքով — այդ էր պահանջում գործի բնոյթը — պէտք է ուրիշի ձեռքով գրուած լինէր: Եւ ահա այս դեմքի վրայ ծնունդ առաւ եւ զարգացաւ մեր մտերմութիւնը:

Մի օր Պր. Մելիքեանը ասաց ինձ.

— Կէսօրէ վերջը կը գաս մօտս, քեզ կարեւոր ասելիք ունիմ:

Գնացի: Նստեցրեց եւ տուեց մի թուղթ արտագրելու: Խնդրագիրը էր ուղղուած Նոր-Նախիջեւանի եւ Բեսարաբիոյ թեմի առաջ-նորդին. խնդրարկուն յայտնում էր, թէ իր կինը անհաւատարիմ է իրեն, խնդրում էր ապահարզան եւ արտօնութիւն կրկնամուսնու-թեան: Զարմանալի զուգադիպութեամբ ես ճանաչում էի այդ պարո-նին. իրապէս ինքն էր անհաւատարիմը...

Երբ Պր. Մելիքեանի կազմած խնդրագիրը արտագրեցի-վեր-ջացրի եւ յանձնեցի իրեն, նա հարցրեց.

— Բան հասկացա՞ր, ի՞նչ էր գրուած մէջը:

Ես սուտ խենթ ձեւացայ եւ պատասխանեցի, թէ չգիտեմ ինչ է:

— Ալբիս, ասաց նա, մի մեծ տանձ տուեց ձեռքս եւ ճամբու դրեց:

Երեւի, ես նրան գոհ էի թողել: Այնուհետեւ ամէն շաբաթ մէկ կամ երկու անգամ մօտն էր կանչում ինձ եւ զանազան թղթեր տալիս արտագրելու: «Իմ քարտուղարս», ներկայացրեց նա ինձ իր հնոջ կատակով, եւ Տիկ. Մելիքեանը այնուհետեւ, տանձ կամ խըն-ձորի հետ միասին, հիւրասիրում էր եւ թէյով, անուշով ու խմո-րեղէններով: Մանաւանդ, հիանալի էր նրա պատրաստած վիշնայով սամսան...

Տարուայ վերջը ինձ քննութեան չենթարկեցին: Աւարտական ոսկետառ վկայականիս մէջ գրուած էր՝ «փայլուն յաջողութեամբ»: Եւ Պր. Մելիքեանը, յաջորդ տարեսկզբին, ինքը անձամբ տարաւ ինձ թեմական դպրոցի տեսուչ պետական խորհրդական եւ ասպետ Գա-լուստ Կարապովիչ Զարըխեանի մօտ արձանագրելու թեմական դպրո-ցի աշակերտ:

Պր. Մելիքեանին պարտական եմ ես եւ իմ ծանօթութիւնը մի նշանաւոր յեղափոխականի հետ:

Aram webaram.com

Մեր տան մօտերը ապրում էր Թուխ դէմքով, երկար մազերով ու խորհրդաւոր երեւոյթով մի երիտասարդ: Առանձնապէս ուշադրաւ էին նրա լայնեզր գլխարկը եւ նեղ տափատը, որով կրկէսի դերասանի տպաւորութիւն էր թողնում:

Փողոցից անցնելիս չարաճճի տղաները նրա յետեւից կանչում էին.

— Հէ՛յ, մայմուն խաղցնող, դանդալախ...

Մի օր, դասերից յետոյ, Պր. Մելիքեանը կանչեց ինձ մօտը եւ խորհրդաւոր ձեւով հարցրեց.

— Ձեր դրացի դրսեցի երիտասարդին ճանաչո՞ւմ ես:

— Դանդալախի՞ն, հարցրի ես առանց մտածելու:

— Հա, խնդաց նա, բայց դանդալախ չէ, այլ յեղափոխական: Գիտե՞ս, ի՞նչ ասել է յեղափոխական:

Ես չդիտէի, ինչ ասել է յեղափոխական:

— Կ'երթաս մօտը, չարունակեց ուսուցիչս, իմ կողմից բարեւ կանխս եւ կասխս. «Պր. Մելիքեանը քեզ է սպասում»:

Այդպէս էլ արի: Գնացի յեղափոխականի տունը եւ առանց դուռը զարնելու մտայ ներս: Մխոտ սենեակի մէջտեղը դրուած էր մի մեծ սեղան, որ ամբողջապէս ծածկուած էր էժանագին գրքոյկներով: Սեղանի մօտ նստած էր դանդալախը գրիչը ձեռքին. երեւի ներշնչուած՝ ստեղծագործում էր:

— Ո՞վ ես, ի՞նչ կ'ուզես, հարցրեց նա անվրդով:

— Պր. Մելիքեանը ուղում է ձեզ տեսնել, ասացի ես եւ դուրս թռայ ծխոտ սենեակից:

Մի քանի օր վերջը, երբ անցնում էի դանդալախի տան մօտից, նա պատուհանից նկատեց ինձ եւ ներս կանչեց:

Անունդ ի՞նչ է, հարցրեց:

Ասացի անունս:

— Գիրք կարդալ կը սիրե՞ս:

— Այո, պատասխանեցի ես:

— Առ այս սեղանի վրայէն ինչ որ կ'ուզես եւ ընկերներուդ ալ տուր թող կարդան:

Առի մի քանի հատ:

Այնուհետեւ երբեմն տեսնում էի նրան փողոցում եւ աշխատում էի խուսափել նրա հետ խօսելուց. ինչ որ անհամակրելի բան կար մէջը: Անունն էլ տարօրինակ էր — Շուռտ: Ի՞նչ էր նշանակում Շուռտ...

Շարաթներ վերջը լուր տարածուեց, թէ դանդալախը անհե-

Aram webaram.com

տացել է: Մի դիշեր հաւաքել է իր ղրքերը եւ անհետացել առանց սենեակի վարձքը վճարելու: Շուտով յայտնի եղան եւ մանրամասնութիւնները:

Դանղալախը կամ Շուտը Ընկերութեան մարդ է եղել. ինչ որ կասկածելի բաներ է արել. ոստիկանութիւնը ուզել է ձերբակալել, բայց նա յաջողել է փախչել: Ընկերութեան մարդիկ փախցրել էին նրան:

Երբ արդէն ես էլ «ընկերութեան մարդ» էի, իմ յեղափոխական ուսուցիչ Սահակ աղա Լուսիքոյեանը պատմեց, թէ դանղալախը, Շուտ անունով, Հայաստանի նշանաւոր յեղափոխականներից էր, որը եկել էր Թոստով Նոր-Նախիջեւանի շրջանում Հայաստանի ազատութեան համար դրամ հաւաքելու:

Աւելի վերջը իմացայ, որ նեղ տափաստով դանղալախ Շուտի բուն անունը Համլեակ Աբրամեանց էր՝ նշանաւոր հնչակեան գործիչ:

Իմ բնազդը ինձ չէր խաբում. հէնց սկզբից ես չսիրեցի ազատագրական դաւաճանին:

Հայաստանի փրկութեան համար Թոստով-Նախիջեւանում դրամ հաւաքող դանղալախ Շուտ-Համլեակ Աբրամեանցը իր կեանքը վերջացրեց, իբրեւ դաւաճան, հայ յեղափոխականի վրէժխնդիր դնդակով:

II.— ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Նոր Նախիջեւանի թեմական դպրոցը միջնակարգ ուսումնարան էր Թիֆլիսի Ներսիսեան կամ Շուշիի ու Երեւանի թեմական դպրոցների նման: Ըստ Պոլոժենիէի, ամէն հայկական թեմ իրաւունք ունէր միջնակարգ հոգեւոր դպրոց կամ դպրանոց ունենալու: Նոր Նախիջեւանի թեմական դպրոցը միւսներից տարբերւում էր նրանով, որ ծրագրով աւելի մօտ էր պետական գիմնազիաներին, ռուսերէնը աւելի ուժեղ էր, պարտադիր էր լատիներէն լեզուի ուսուցումը: Մի խօսքով՝ աւելի ռուսութիւն կը հոտէր:

Դպրոցի տեսուչն էր պետական խորհրդական եւ ասպետ Գալուստ Զարըխեանը՝ կառավարութեան վստահութիւնը վայելող մի ստիճանաւոր, որ վերջը դարձաւ դրաքննիչ Պետերբուրգում: Բազմահմուտ, բազմալեզու, բայց ջղային եւ տարօրինակութիւններով հարուստ մի մարդ էր՝ յայտնի չէր, թէ չափով հայ եւ թէ չափով ռուս: Ընտանիքով ապրում էր առանձին չէնքում դպրոցի բակում

Aram webaram.com

եւ յաճախ դպրոցի սեփականութիւնը չփոթում էր իր ունեցածի հետ: Պետական պաշտօնեայի համազգեստով, ոտն օրերին սուրը կախած կողքին՝ անվերջ սրախօսութիւնների առարկայ էր աշակերտութեան եւ հասարակութեան կողմից:

Ուսուցչական կազմի մէջ կային լաւ ուժեր, ինչպէս տեսչի օգնական Վահան Քիւրլեանը, որ լատիներէնի եւ ընդհանուր պատմութեան դասատու էր, Երուանդ Շահազիզը՝ հայերէն լեզուի եւ Հայոց պատմութեան, Ս. Թանդեանը՝ ֆրանսերէն եւ ռուսերէն լեզուների, Ծամբուրեանը՝ մաթեմատիկի եւ բնագիտութեան, Գէորգ սարկ. Զէօրէքլեանը՝ կրօնի, եկեղեցական պատմութեան եւ երաժշտութեան, Ա. Զամինեանը՝ Հայոց դրականութեան, եւայլն:

Աշակերտների թիւը երեք հարիւրից աւելի էր՝ մեծ մասը նոր Նախիջեւանցիներ, բայց կային եւ դրսի քաղաքներից՝ Արմաւիրից, Ծրիմից, շրջակայ գիւղերից: Դպրոցը ունէր դիշերօթիկ բաժին՝ դրսից եկողների կամ չքաւոր ու որբ աշակերտների համար:

Դպրոցը տեղաւորուած էր քաղաքի կենտրոնում, չուկայի հրապարակի վրայ, սեփական երկյարկանի երկար շէնքում, որի վարի յարկի հրապարակի վրայ նայող մասը վարձու տրուած էր խանութների համար:

Կենտրոնական խանութի վրայ դրուած էր մի մեծ ցուցանակ, որի վրայ խոշոր տառերով գրուած էր ռուսերէն Մուկա, որի տեսքը իմ վրայ սարսափ էր ազդում, երբ գիւղից քաղաք էի գալիս: Մուկա, չեչոտը առաջին վանկի վրայ, նշանակում է տանջանք, չարչարանք: Մերկեան հօրեղբայրս ասել էր, որ այդտեղ ինձ նման փոքր տղաներին չարչարում են եթէ խելօք չմնային: Թեմական դպրոցը մտնելուց յետոյ միայն իմացայ, որ ալիւրի խանութ է եղել: Մուկա, չեչոտը երկրորդ վանկի վրայ, ռուսերէն նշանակում է ալիւր:

Թեմական դպրոցը նախակրթարաններ չունէր: Եկեղեցական-ծխական դպրոցներից, որոնց ծրագիրը յարմարեցուած էր Թեմականի ծրագրին, աշակերտները ընդունւում էին համապատասխան դասարան: Իբրեւ Մուրը Համբարձման տարրական նախակրթարանի շրջանաւարտ, ես ընդունուեցի առաջին դասարանը:

Թեմականցիք հաղնում էին համազգեստ — խոշոր գլխով զօտի, ձեւաւոր գլխարկ, ձմեռը ոսկեզօծ կոճակներով վերարկու եւ ոսկեզօծ բաշլըխ: Արտաքինով Թեմականցիք չատ քիչ էին տարբերւում պետական դպրոցների աշակերտներից, նոյնիսկ աւելի շիք էինք երեւում եւ առանց դժուարութեան մրցում էինք գիմնազիստ-

Aram webaram.com

ներէ հետ օրիորդներէ չրջանում, մինչդեռ Կովկասում Սեմինարիստ (թեմականցի) դրեթէ հայհոյանքի հաւասար բառ էր:

Հակառակ որ Նոր Նախիջեւանի բնակչութեան մեծ մասը ռուս էր եւ աշակերտները գոնւում էին ռուսական միջավայրի ազդեցութեան տակ, չնայած կառավարութեան ռուսացման քաղաքականութեան, թեմական դպրոցում տիրական էր աւանդապաշտ հայկական ոգին: Պարտադիր էր եւ ամէն կիրակի ու տօն օրեր մեզ տանում էին եկեղեցի, Սուրբ Լուսաւորիչ Մայր Տաճարը, տեսչի առաջնորդութեամբ եւ ուսուցիչների ընկերակցութեամբ: Ծնունդի, բարեկենդանի եւ Զատկի արձակուրդի օրերին կազմակերպւում էին ներկայացումներ, դրական-դեղարուեստական երեկոյթներ, ճառ, արտասանութիւն, երգ, պար, ներկայացում՝ միշտ հայերէն: Ցատուկ ուշադրութիւն էր դարձւում հայերէն լեզուի ու Հայոց պատմութեան վրայ: Ուսուցիչները, ընդհանուր առմամբ, խստապահանջ էին եւ, բացի Թանդեանից, որ անհոգ ու ծոյլ մարդ էր, բոլորն էլ բարեխղճութեամբ էին վերաբերւում դէպի իրենց պաշտօնը:

Ցեղափոխական շարժումը դեռ մուտք չէր գործել դպրոց, բայց ազգային ոգին վառ էր՝ ազգային-պահպանողական դունաւորումով: Հանդէսներում արտասանւում էին Գամառ Քաթիպայի հըբաչունչ ազատութեան երգերը, ճառերի մէջ շեշտւում էին ազգ եւ եկեղեցի, սիրուած երգերն էին «Մխիթեռնակ», «Արի Իմ Սոխակ», «Հայրիկ, Հայրիկ», «Լռեց Ամպերը»... 90ական թուականների վերջին տարիներն էին, յեղափոխական երգերի մասին դեռ զաղափար չունէր Նոր Նախիջեւանցին:

Սուրբ Համբարձումից եւ Մելիքեանից ու Սախաւեանից յետոյ, թեմական դպրոցը ամէն տեսակէտից, հիանալի էր. մեծ եւ լուսաւոր դասարաններ, համակրելի ուսուցիչներ, հետաքրքրական դասեր, ամէն տեսակ գրքերով լեցուն մատենադարան... Մեծը բացարձակապէս արգելուած էր, ոչ յօրինակ, Սուրբ Համբարձումի, ուր աշակերտները սարսափում էին Պր. Սախաւեանի քանոնից:

— Հոս արի, կանչում էր նա մօտը չարութիւն արած աշակերտին, բայց աւուճդ...

Տղան մեկնում էր բայց ափը: Թա՛խկ, թա՛խկ: Տղան ցաւից բացագանչում ու ցատկոտում էր: Որոշուած հարուածը հասցնելուց յետոյ, Պր. Սախաւեանը ասում էր հանդիստ.

— Այժմ գնա, մամայիդ բարեւ արա...

Թեմականում այդպիսի բաներ չկային: Ուսուցիչները նոյնիսկ

Aram webaram.com

չափից աւելի քաղաքավարի էին, բացի վերակացու Պր. Մերոբէ Զաթալպաշեանից: Անիրաւը խիղճ չունէր: Աշակերտները ակամայ ծիծաղում էին՝ տեսնելով նրա զուռնա քիթը եւ խուռպաղայի աչքերը: Նա այդ ղղում էր եւ որովհետեւ կարելի չէր ծեծել, բռնում էր յանցաւոր նկատուածի քունքի մազից եւ վեր-վեր քաշում, մինչեւ որ տղան ցաւից սկսէր լալ: Աշակերտները նրան սադիստ էին կանչում. ես դեռ այդ բառի իմաստը չէի հասկանում, կարծում էի ռուսերէն սադ՝ պարտէզ բառից էր եւ զարմանում էի՝ ինչ կապ կար մեր անիրաւ վերակացուի եւ պարտէզի միջեւ:

Զաթալպաշեանը քաղաքացի էր եւ դիւղացիներին չէր սիրում: Ինձ հետ էլ լաւ չէր: Հէնց սկիզբից չսիրեց ինձ:

Առաջին օրը, երբ դասարան էի մտնում, կանչեց մօտը, թէ՝

— Ինչո՞ւ կօշիկներդ լաւ չեն մաքրուած:

Մեր նշանաւոր Դվոռում ո՞վ կարող էր մտածել կօշիկների մասին: կեցայ դլուխս կախ: Պէտք է խոստովանուել, որ կօշիկներս շատ էլ համակրելի երեւոյթ չունէին:

— Ո՞ր տեղացի ես, հարցրեց Զաթալպաշեանը:

— Մեծ Սալայից, պատասխանեցի ես:

— Ա՛ա, արտասանեց նա հեգնական շեշտով, հասկացայ. հիմա կարող եմ զարմանալ՝ ինչո՞ւ կօշիկներդ այդքան մաքուր են...

Այս արդէն Պր. Սահաւեանի «Գնա, մամայիդ բարեւ արա»ից էլ վատ էր...

Այնուհետեւ Զաթալպաշեանը ինձ հանգիստ չթողեց, մանաւանդ, երբ իմացաւ, որ լաւ եմ սովորում. Բաբիեանը դիրք էր պատռում, պատասխանատուն ես էի. Զորչոփեանը չարութիւն էր անում, յանցաւորը ես էի: Պաղ պատերազմ կար մեր միջեւ, որ քիչ մնաց տաք պատերազմի փոխուէր:

Զաթալպաշեանը նաեւ մատենադարանապետ էր եւ ուղղակի զայրանում էր, որ ես շատ դիրք էի կարդում: Դիւղացին ի՛նչ պէտք ունէր դիրք կարդալու...

Մի օր, երբ մատենադարանից դիրք էի առնում, Զաթալպաշեանը երեսիս չպրտեց մի փոքրիկ դրքոյկ:

— Ա՛ռ, կարդա՛:

Խրիմեան Հայրիկի կենսագրութիւնն էր: Ասացի՝ կարդացել եմ:

—Հէ՛, բարկացաւ նա զարմացած: Ո՞րտեղից առիր:

Ասացի Բաբիեանից առի, առանց կասկածելու, որ պատասխանս փոթորիկ առաջ պիտի բերէ: Ամէն աշակերտ պարտաւոր էր

Aram webaram.com

չաթաթը մէկ դիրք առնել մատենադարանից, եւ մատենադարանապետի պարտականութիւնն էր հսկել, որ կարդան: Բաբիեանը այն աշակերտներից էր, որ դիրք չէր սիրում եւ ինձ էր տալիս կարդալու: Ես էլ համառօտ պատմում էի նրան բովանդակութիւնը, որպէսզի եթէ Զաթալպաշեանը հարցնէր, կարողանար պատասխան տալ:

— Ուրեմն, Բաբիեանը չի՞ կարդացել եւ նրա տեղը դո՞ւ ես կարդացել, փրփրեց Զաթալպաշեանը:

— Ոչ, կարդացել է, ասեցի ես. ես էլ եմ կարդացել...

— Հա, այդպէ՞ս, դու ի՞նչ իրաւունք ունէիր ուրիշի դիրքը կարդալու:

Ես լուռ գլուխս կախեցի:

— Քեզ եմ հարցնում, ի՞նչ իրաւունքով ուրիշի դիրքն ես կարդում... Այսուհետեւ մատենադարանից քեզ դիրք չկայ, գնա՛...

Դուրս եկայ չշմած: Ներկայ հոգեբանութեամբ պէտք է երթայի բողոքէի մեր դասախօսակ Շահազիզին, բայց այն օրերին ուսուցչի դէմ բողոքելը յանցանք էր նկատւում:

Ամիսներ վերջը, երբ այցելութեան էի գնացել իմ ազգական Գէորգ Սարկաւագ Զէօրէքճեանին, սա, ի միջի այլոց, հարցրեց, թէ ի՞նչ եմ կարդում: Թէեւ ես չարունակում էի Բաբիեանի եւ ուրիշների մատենադարանից առած դրքերը կարդալ, պատասխանեցի.

— Ինձի դիրք չի տար Պր. Զաթալպաշեանը:

— Ի՛նչու, զարմացաւ Գէորգ Սարկաւագը:

Պատմեցի միջադէպը:

Երկու երեք օր անցած Զաթալպաշեանը կանչեց ինձ մատենադարան, թէ՝

— Պատիժդ վերջացաւ. ի՞նչ դիրք կ՛ուզես...

Եւ այնուհետեւ, ոչ միայն տաք պատերազմ տեղի չունեցաւ, այլ պաղն էլ վերջ դուաւ...

Բայց Զաթալպաշեանը ինձ համար մնաց միշտ նոյն Զաթալպաշեանը... դուռնա քիթ եւ խուռպաղայի աչքեր: Տարիներ վերջը, կարծեմ, տէրտէր ձեռնադրուեցաւ:

Իմ ամենէն սիրած ուսուցիչը տեսչի օգնական Պր. Վահան Քիւրկեանն էր: Կարճահասակ, դունդուկլոր մարդ էր: Հաղնում էր անթերի խնամքով: Բարձր կրունկներով կօշիկ էր գործածում, եւ թեւի, իբրեւ հակադարման հասակի կարճութեան: Ման էր գալիս

Aram webaram.com

քիթը վեր: Չէր ծիծաղում, խօսում էր մեղմ եւ յանդիմանելիս բառեր չէր փնտռում:

— Ցանցառ, փուչ կենդանի, ծոյլերի թագաւոր....

Բայց անսահման բարի ու հոգածու մարդ էր եւ հիանալի դաստատու: Կարելի է ասել, նրա դասերից խուսափող չկար. նոյնիսկ ծոյլ ու դըժուարին Բարխեանը ուշադրութեամբ հետեւում էր նրա պատմութեան դասին:

Չեմ ասում սիրում էր, բայց դէպի ինձ շատ լաւ էր վերաբերւում Պր. Քիրլեանը: Արտաքին որեւէ փաստ չէի կարող ցոյց տալ, բայց զգում էի, որ լաւ էր վերաբերւում: Գուցէ պատճառը այն էր, որ ես գիւղացի էի եւ լաւ էի սովորում: Գիւղացիների հանդէպ առանձին համակրանք ունէր: Զգում էի նոյնպէս, որ ուշադրութեամբ հետեւում էր իմ պարապմունքներին: Մի դէպք քիչ մնաց փոխել տար նրա լաւ կարծիքը իմ մասին:

Մեր դրաբար լեզուի դասատուն Վենետիկի չրջանաւարտներից էր, սպիտակ, երկար մօրուքով մի ծերունի, Պր. Խաչատուրեանը: Սքանչելի դրաբար գիտէր, բայց խիստ թոյլ ուսուցիչ էր, աշակերտները նրան ձեռք էին առնում դասի ժամանակ:

Շաբաթը մէկ անգամ դրաբար աշխատանք էր տալիս Պր. Խաչատուրեանը: Ցայտնում էր նիւթը, եւ մենք մէկ ժամ չարադրութիւն պիտի գրէինք: Եւ որպէսզի չդողանայինք դրքից կամ հարեւանից չընդօրինակէինք, ինքը ամբողջ ժամանակ դասարանում մանգալով՝ հսկում էր:

Ես դրաբար լաւ չարադրութիւն էի գրում եւ շատ արագ: Ընկերների խնդրանքով, յաճախ, օրուայ նիւթի մասին առանձին չարադրութիւն էի գրում, Բարխեանը գնդասեղով ամրացնում էր Պր. Խաչատուրեանի կոնակը, եւ ընկերներս ընդօրինակում էին փոխոխութիւններով: Պր. Խաչատուրեանը դիւրացնում էր նրանց գործը՝ դանդաղ չրջելով դրասեղանների միջեւ:

Շատ դիպուածով՝ պատահեց, որ մի օր, մեր չարադրութեան ժամին, դասարան մտնէր տեսչի օգնական Քիրլեանը: Նա սուր աչքերով խակոյն նկատեց Պր. Խաչատուրեանի մէջքի թուղթը, բայց ձայն չհանեց: Մենք սառոյց կտրեցինք:

Պր. Քիրլեանը ընդհանուր հայեացք ձգեց դասարանի վրայ: Մի քանի խօսք փոխանակեց Պր. Խաչատուրեանի հետ, ապա, իբր թէ փոշին թափ տալիս մեր ուսուցչի կոնակից՝ աննկատելի կերպով առաւ թուղթը, դրպանը դրեց եւ դուրս եկաւ դասարանից: Բանս բուրդ է, սարսափով մտածում էի ես...

Aram webaram.com

Այնուհետեւ ինչ անցաւ–դարձաւ չգիտեմ. միայն զգում էի, որ մեր ուսուցիչները ինձ հանդիպելիս ժպտում էին կասկածելի ժպիտով: Ու մի օր, դասերից յետոյ, Զաթալպաշեանը եկաւ, թէ՝

— Պր. Քիրլեանը քեզ կը կանչէ քովը, ղնա:

Գնացի: Պր. Քիրլեանը մենակ նստած էր կանաչ սեղանի մօտ: Ինձ թուաց, թէ ժպիտի նման մի բան երեւաց շրթունքներին:

— Փուչ կենդանի, այդ ի՞նչ էիր արել, ասաց նա հանդարտ, բայց խիստ ձայնով, հիմա ինչպէ՞ս վարուեմ ես քեզ հետ:

Ես լուռ սպասում էի վերջին դատավճռին:

— Գիտակցո՞ւմ ես յանցանքդ, արտասանեց նա, աւելի խիստ:

— Այո, հընչացի ես:

— Դէհ, ուրեմն, կ'երթաս Պր. Խաչատուրեանի ձեռքը կը համբուրես եւ ներողութիւն կը խնդրես, փուչ կենդանի, գանցա՛ռ:

Պր. Խաչատուրեանը թոյլ չտուեց, որ ձեռքը համբուրեմ, եւ ներեց:

Այս անգամ աժան պրծանք: Մի ուրիշ դէպք քիչ մնաց ճակատագրական վերջ ունենար:

Նոր Նախիջեւան էր եկել դերասանուհի Սիրանոյշը իր խմբով եւ քաղաքային թատրոնում ներկայացումներ էր տալիս: Երիտասարդութիւնը խուդուրմիշ էր եղել (խենթացել էր):

Թատրոնի առջեւ ցոյցեր էին տեղի ունենում: Ձիերը արձակելով՝ երիտասարդները իրենք էին լծւում կառքին եւ այդպէս տուն տանում Սիրանոյշին: Մեր զպրոցում ամէնքի բերանին Սիրանոյշի անունն էր: Ինչպէ՛ս դիմանայիր...

Ես թէեւ արդէն երկրորդ դասարանում էի, բայց իրաւունք չունէի թատրոն երթալու. տեսչութիւնը արուոնել էր բարձր դասարանների տղաներին միայն ներկայ լինելու Սիրանոյշի ներկայացումներին:

Իմ մէկ ընկերոջ հետ որոշեցինք անպատճառ տեսնել մեծ դերասանուհու խաղը, թէկուզ դպրոցից վռնտուելու գնով: Ցոյս ունէինք, որ պիտի կարողանայինք 20 կոպեկ տալ թատրոնի գոնապան Իվանին եւ ներս մտնել, ինչպէս անում էինք ուրիշ անգամներ: Իվանը այս անգամ կտրուկ կերպով մերժեց: Նախ, ասաց նա, այսպիսի ներկայացման 20 կոպէկով կարելի չէ ներս թողնել. երկրորդ՝ տեղ չկայ:

Բայց եթէ տեղ չկար, ինչո՞ւ էր 20 կոպէկը յիշում: Մտանք սակարկութեան եւ, ի վերջոյ, համաձայնութեան եկանք դումարի

Aram webaram.com

չուրջ: Տեղի համար էլ Իվանը մէկ հնարաւորութիւն էր տեսնում մեզ յիշեցնելու, թէ մենք երկայնքով, դրուած էինք լայն դերանների, որոնց վրայ կարող էինք պառկել եւ վերից վար հետեւել խաղին: Դրան էլ համաձայնուեցինք:

Առաջին ներկայացումը «Մեդէա»ն էր, արդոնաւոների օրերից: Մեդէայի դերում Սիրանոյշը անզուգական էր: Ռուս նշանաւոր դերասանուհիները նախանձով դիտում էին նրա խաղը: Մինչեւ այժմ իմ ականջներում հնչում է Սիրանոյշի յուսահատ ճիչը՝ «զաւա՛կս»...



ՍԻՐԱՆՈՑՇ

Առաջին ներկայացումը անցաւ փայլուն. մենք երջանիկ էինք:

Երկրորդ անգամ ներկայ եղանք Շիլլէրի «Օրլէանի կոյսը» խաղին, ուր Սիրանոյշը կատարում էր Ժան դ'Արքի դերը: Երկարած դերանների վրայ, յուզումով հետեւում էինք նրա աստուածային խաղին:

Ահա արքայական պալատը: Թագաւորը բազմած է գահի վրայ՝ շրջապատուած զօրավարներով, սպասում է հերոսուհի Ժանին: Քաջամարտիկ զօրավարներից մէկն էլ... մեր տեսչի օգնական Պր. Քիրլեանն է: Ծաւաքարտէ պողպատի զրահների մէջ, ոսկեզօյն սաղաւարտով, կողքին պատկառելի սուր՝ մեր տեսչի օգնականը, բեմի վրայ, հերոսական տեսք ունէր: Շուտով ներս սլիտի բերէին Օրլէանի կոյսին, եւ զօրավար Քիրլեանը ինչ որ ճառում էր Թագաւորին: Ես, վերը, մոռացել էի ամէն զգուշութիւն եւ որպէսզի ամէն բան տեսնեմ, ամէն բան լսեմ, գլուխս դուրս էի հանել դերանի վրայից եւ կախուել

Aram webaram.com

թատուրի դահի վերեւ: Մէկ էլ, «երկինքը վկայ, տէր արքայ», Պր. Քիրլեանը աչքերը ուղղեց դէպի վեր ու մի պահ չփոթուեց: Երկընքից նրան էին նայում մեր չորս աչքերը...

Ի՞նչ պատահեց յետոյ, ինչպէ՞ս, առանց վար ընկնելու, ի-ջանք մեր զբաղմունքների վրայից ու փախանք, չեմ յիշում ոչինչ:

Ի՞նչ պիտի լինէր մեր վիճակը: Ճաշարդ կէսօրուայ դադա-րին, եկաւ Զաթալպաշեանը, թէ Պր. Քիրլեանը կանչում է մեզ ու-սուցչանոց:

Ընկերոջս հետ ներս մտանք ուսուցչանոց: Պր. Քիրլեանը նստած էր սեղանի գլուխը, մի քանի ուսուցիչների հետ, խոժոռ դէմքով: Լաւ նշան չէր, բայց եւ ոչ շատ սարսափելի, որովհետեւ Պր. տեսուչը ներկայ չէր:

— Փուչ կենդանիներ, ո՞ւր էիք դուք երէկ գիշեր, բարկացած հարցրեց նա:

Տարօրինակ հարցում: Ինքը շատ լաւ գիտէր, թէ ուր էինք: Եւ արդէն, առանց պատասխանի սպասելու, շարունակեց:

— Դուք չգիտէի՞ք, որ ձեզ արգելուած է թատրոն երթալը:

Այդ էլ գիտէինք, ի հարկէ:

— Գիտէինք, վրայ բերեց ընկերս, բայց, Պր. Քիրլեան, մենք ուզում էինք ձեր ներկայացումը տեսնել...

— Լաւ, յանցատ... Ուզում էին իմ ներկայացումը տեսնել: Հիմա ես ձեզ ցոյց կը տամ ներկայացումս...

Ու սկսեց մեր գլուխը արդուկել սովորականից աւելի խիստ խօսքերով: Որոշ էր, թէ եղրակացութիւնը վատ պիտի լինէր մեզ համար, բայց դեռ եղրակացութեան չհասած՝ դուռը ծեծեցին եւ Պր. Զաթալպաշեանի առաջնորդութեամբ ներս մտաւ... Տիկին Սիրանոյշը մի քանի զբաստան-զբաստանուհիների ընկերակցութեամբ:

Քիրլեանը եւ ուսուցիչները զբաղուեցին հիւրերով եւ մեզ մո-ռացան:

Երբ սիրալիր ընդունելութեան բոլոր խօսքերը ասուած էին, Պր. Քիրլեանը խնդալով՝ ներկայացրեց մեզ Սիրանոյշին.

— Այս փուչ կենդանիները ձեր երկրպագուներն են...

Եւ պատմեց գիշերուայ դէպքը: Սիրանոյշը ուրախ ծիծաղեց:

— Եւ դուք աս տղաքը կ'ուղէք պատժե՞լ, զարմացած հարցրեց նա:

— Օրէնք է. անկարգապահութիւն են արել, պատասխանեց Քիրլեանը:

Aram webaram.com

— Կ'աղաչեմ, այս անգամ ներեցէք... ինձ համար, խնդրեց Սիրանոյշը:

Ֆիլլեանը կարո՞ղ էր մերժել: Աւելին, Սիրանոյշի խնդրանքով թոյլ տուեց մեզ, իրրեւ բացառութիւն, որ յաջորդ ներկայացման էլ ներկայ լինենք, այս անգամ ոչ դերանի վրայ պառկած:

Պէտք է ասեմ, որ Թեմական դպրոցի բոլոր ուսուցիչներից, նոյնիսկ դըրլաճի Թանդեանից, նոյնիսկ Զաքարեպաշեանից ջերմ յիշատակ է մնացել իմ սրտում: Ամէնքը մարդկային էին եւ իրենց կոչումին գիտակից: Եւ եթէ մի քիչ երկար խօսեցի Պր. Ֆիլլեանի մասին, պատճառը այն է, որ, ինչպէս վերջը կը տեսնենք, նա ճակատագրական դեր կատարեց իմ կեանքում:

Դպրոցական կեանքը հաճելի էր, դասերը դիւրին: Շուտով ունեցայ մտերիմ ընկերներ: Բնաւ չզգացի, թէ ինչպէս անցաւ առաջին տարին: Երկրորդ դասարանում էլ արդէն, երբ դրսի յեղափոխական տրամադրութիւնները սկսեցին մուտք գործել մեր դպրոցը: Հնչակեանները փորձեցին Թեմական դպրոցի աշակերտներից մի խումբ կազմել, բայց նրանց նախաձեռնութեամբ կազմուեց մի դաշնակցական խումբ, որի անդամ եղայ նաեւ ես: Այդ գաւեշտական դէպքը ես պատմել եմ մի ուրիշ տեղ(*):

Դաշնակցական խումբի կազմութեամբ ես զգացի, որ իմ կեանքը նոր բովանդակութիւն եւ նոր ընթացք է առանում: Ես գիտէի բաները, որ իմ ընկերներից շատերը չգիտէին: Ես ունէի մի բարձր նպատակ, որի մասին միւս աշակերտները զաղափար չունէին: Այդ ուրախութիւն էր պատճառում ինձ եւ դրդում էր աւելի մեծ եռանդով աշխատելու, այսինքն՝ դասերը լաւ սովորելու եւ շատ կարդալու: Ընթերցասիրութիւնը բնական պահանջ էր իմ մէջ, կարդում էի, Զիչիկովի Միտրոֆանի պէս, ինչ որ ձեռքս ընկնէր, այժմ փնտռում էի դրքեր որոշ ուղղութեամբ եւ որոշ ոգիով: Հայ հեղինակների գլխաւոր գործերը, Աբովեանի «Վէրք Հայաստանի»ից սկսած, մինչեւ նորագոյն հեղինակների երկերը կարդացել էի Թեմական դպրոցում: Ինձ հետ մրցակից ունէի միայն իմ սեղանակից Սարգիս Տիրացուեանին, որը, իր ասելով, Րաֆֆիից էլ մեծ դրող պիտի լինէր, բայց վերջը դարձաւ Նոր Նախիջեւանի ջրմուղի ճարտարապետ:

1900 թ. Մայիսի վերջերը, առանց դժուարութեան, ես փոխադրուեցի երրորդ դասարան: Տարեվերջի հանդէսին ինձ տուին

(*) Տես «կեանքի ուղիներով», Ա. Հատոր, էջ 46 եւ 51:

Aram webaram.com

առաջին կարդի մրցանակ՝ Ա. Պուշկինի «Ամբողջական գործերը» հսկայ հատորը: Հատորը թեւիս տակ, դուրս եկայ Թեմական դպրոցից այլեւս չվերադառնալու որոշումով:

Իմ մտերիմ ընկերներից ոմանք մտադիր էին համալսարան երթալ եւ այդ պատճառով փոխադրուում էին պետական գիմնազիա՝ դիւրութեամբ բարձրագոյն դպրոց ընդունուելու համար: Սարգիս Սրապիոնեանը ընտրել էր Բագուի գիմնազիան: Համբարձում Տէր-Ոսկեանը կապուել էր Վլադիկաւկազի գիմնազիայի հետ, Ալեքսան Մեսանիկեանը յոյս ունէր փոխադրուելու Լազարեան ճեմարանը, Մոսկուա: Սրանց օրինակին հետեւելով՝ ես էլ մտածում էի ամառը պատրաստուել եւ մտնել հարեւան Ռոստովի գիմնազիան:

Հաւաքեցի պէտք եղած դրքերը եւ Յունիսից սկսեցի պատրաստուել: Սեպտեմբերին պիտի ներկայանայի քննութեան: Եւ գիմնազիան աւարտելուց յետոյ — երազում էի — պիտի ուսանէի իրաւաբանութիւն:

Նոր էի սկսել աշխատանքի, երբ, պատահաբար, ընկայ Գր. Քիրլեանի ձեռքը:

— Ի՞նչ գործի վրայ ես, հարցրեց նա լուրջ:

Պատճառ չունէի ծածկելու, յայտնեցի, թէ ինչ գործի վրայ էի:

— Հէ՛, բացագանչեց նա բարկացած, գիմնազիա՞. ցանցառ բաներ ես մտածում. մենք հայր Սարկաւագի հետ որոշել ենք ուղարկել քեզ Էջմիածնի ճեմարանը, հասկա՞ց, ցանցա՛ռ:

Անկարելի եղաւ խուսափել: Մօրս սրտովն էլ չէր գիմնազիան: Ի վերջոյ, Գր. Քիրլեանի ասածը եղաւ. մէկ կողմ դրի գիմնազիայի դասագրքերը եւ սկսեցի պատրաստուել Էջմիածնի ճեմարանը մըտնելու, Գէորգ սարկաւագ Զէօրէքչեանի ղեկավարութեան ներքեւ:

Գիմնազիա, համալսարան, իրաւաբանութիւն — դուր երազներ, դուր յոյսեր:

Իմ պատանեկան միտքը այժմ յուզում էին նոր գաղափարներ, նոր ծրագիրներ:

Սասունի ազատութեան հարցն էլ օրակարգի վրայ էր... Մովսէս Բոստանջեանի համար ճեմարանը Սասունի ճանապարհին էր գտնուում(*):

(*) Տես «Կեանքի ուղիներով», Ա. Հատոր, էջ 62:

Aram webaram.com

Երբ ես դնացի հայր Սարկաւագի մօտ մնաս բարովի, նա զբաղուխս չոյելով ասաց.

— Տխուր կ'երեւաս, ինչո՞ւ: Ճեմարանը լոյսի աղբիւր է, բախտաւոր եղիր, որ ճեմարան կ'երթաս:

Ես աղօտ գաղափար ունէի Գէորգեան ճեմարանի մասին: Գիտէի, որ իմ համագիւղացիներից ոմանք սովորում էին էջմիածնում: Հօրաքրոջս տղան՝ Ղուկասը դնացել էր էջմիածին, ճեմարան մտնելու յոյսով եւ ձեռնունայն վերադարձել. նա շատ էր գովում ճեմարանը: Գէորգեան ճեմարանի մասին խիստ նպաստաւոր խօսքերով արտայայտւում էին եւ Պր. Քիւրլեանն ու հայր Սարկաւագը: Նոյնիսկ Պր. Զաքարեանը, մի անգամ հանդիպելիս, հեգնեց.

— Էջմիածի՞ն պիտի երթաս, հա՛... մեղք չէ՞ ճեմարանին:



ԳԷՈՐԳ ՍԱՐԿԱՒԱԳ ՋԷՕՐՋԷՋԵԱՆ

Այսպէս թէ այնպէս, ես մեծակ, մօրս արցունքը երեսիս եւ մի նիհար պայուսակ ձեռքիս՝ 1900 թ. Օգոստոսի վերջերը, Իոաննովի երկաթուղային կայարանից մեկնեցի եւ տասը օրից հասայ էջմիածին: Տխուր էի շատ. մենակութիւնն ու անորոշութիւնը տանջում էին ինձ: Սակայն, նոր վայրերը, ծովն ու բարձրաբերձ լեռները, հանդիպումները նոր մարդկանց հետ մոռցնել տուին վիշտս:

Aram webaram.com

Յաջորդ օրը ես արդէն Նովորոսիյսկում էի, Սեւ ծովի ափին: Պէտք է ասել, որ ծովը ոչ մի տպաւորութիւն չգործեց վրաս. մեր անծայրածիր դաշտերի պէս մի բան էր, միայն՝ հողի տեղ ջուր: Իմ ուշադրութիւնը գրաւեց նաւահանգիստից մեկնող գրօշակներով զարդարուած մի ապիտակ, մեծ նաւ: Ահագին բազմութիւն նաւում եւ քարափին՝ ողամարդ, կին ու երեխայ: Աղմուկ, երդ, հայհոյանք: Շատերը հարբած: Կանայք երկար համբուրում էին նաւ բարձրացող մարդկանց: Երեխաները լալիս էին աղմուկով: Ոստիկանները աշխատում էին կարգ պահել, բայց չէին յաջողում:

Ես արդէն մեր նաւի վրայ էի, երբ ապիտակ նաւը մեկնեց: Քարափից աղմուկով ճանապարհ էին դնում: Զինուորական նաւադախումբը հնչեցրեց «Բոժէ, ցարեա խրանի»՝ Աստուած, պահիր թագաւորին...

Մեր նաւում մի ռուս մուժիկ բացատրեց ինձ.

— Հասկանո՞ւմ ես, ողաս, մեր հերոսներն են, գնում են օգնելու Բուռերին նզովեալ Անգլիայի դէմ: Բուռերը քրիստոնեայ են, մեզ նման, հասկանո՞ւմ ես...

Վերջը իմացայ, որ «մեր հերոսները» ռուս կամաւորներ էին, որոնք գնում էին Տրանսվաալ, մասնակցելու Բոէր-Անգլիական պատերազմին, Բոէրների հետ, Անգլիայի դէմ, անշուշտ, ռուս կառավարութեան ջակցութեամբ: Ռուս միամիտ դիւղացու երեւակայութեան մէջ «մեր հերոսները» գնում էին օգնելու քրիստոնեայ Բոէրներին անհաւատ Անգլիացիների դէմ...

Նաւի վրայ ամէն բան նոր էր ինձ համար եւ հետաքրքրական: Տեղաւորուել էի տախտակամածի վրայ, նաւի մէջտեղը: Վարը մեքենաներն էին: Ես ժամերով դիտում էի նրանց բարդ շարժումները: Ուշադրաւ էր նաեւ դելֆինների սրարշաւ վազքը նաւին զուգընթաց. նրանք, կարծես, մրցում էին նաւի հետ: Մերթ թռչում էին ջրից դուրս, երեւի տեսնելու համար, թէ նաւը հասնո՞ւմ է իրենց: Եւ ուժեղ բազուկով արձակուած նետի պէս սլանում էին առաջ:

Ծովը հանդարտ էր, եւ նաւը լողում էր անվրդով, եղերքից ոչ շատ հեռու: Մինչեւ Տուապսէ, եղերքը բարձր չէր եւ ծածկուած էր կանաչ անտառով: Այնուհետեւ սկսում էր Կովկասեան ամեհի լեռնաշղթայի վերելքը: Երեւում էին ձիւնապատ գագաթներ: Ես գոց գիտէի Պուշկինի Կովկասեան քերթուածները եւ արտասանում էի ինքս ինձ:

Պուշկինի երկերի հատորը, որ առացել էի մրցանակ թեմական դպրոցում, միակ գիրքն էր, որ տանում էի հետս ճամարան:

Aram webaram.com

Պուշկինը իմ սիրած հեղինակներից էր: Նրա պարզ ու հիւթեղ ոուսերէնը, հարուստ յանգերը դիւթում էին ինձ:

Իմ ընկերները հայհոյում էին Պուշկինին, որ Հայերի մասին գրել էր՝

Դու երկչոտ ես, դու ստրուկ ես, դու հայ ես...

Ես պաշտպանում էի Պուշկինին: Այդ իր խօսքերը չեն, ասում էի ես, լեռնականի խօսքերն են՝ ուղղուած իր երկչոտ որդուն: Լեռնականի կարծիքով եւ ոչ թէ Պուշկինի, Հայերը վախկոտ էին, ինչ որ, աւա՛ղ, այն դարում չատ հեռու չէր իրականութիւնից: Ուրիշ տեղ Պուշկինը ջերմ համակրանքով է արտայայտում Հայերի մասին: Օրինակ, իր «Ճամբորդութիւն դէպի Էրզրում» գրուածքում...

Այսօր էլ ինձ թւում է, ճշմարիտ է իմ այն ժամանակուայ կարծիքը: Պուշկինից աւելի անբաւական լինելու են, վրացիները: Ռուս մեծ բանաստեղծը մի տեղ ասում է.

Փախչում էին վախկոտ վրացիները...

Վրացիների մասին ես էլ բարձր կարծիք չունէի: Երբ մեկնում էի մեր գիւղից, մօրս պնդումով դնացի մնաս բարովի-ձեռք պաղնելու Միքիշքա դայիս: Շատ ջերմ համակրանք չունէի այդ քեռիս հանդէպ, որ գիւղապետ էր, խիստ հարուստ եւ նշանաւոր կծծի: Սուրբ կարապետ ուխտի էր դնացել եւ կարծում էր, թէ ամէն բան դիտէ: Միքիշքա դայիս, ինչպէս միշտ, ուրախութեամբ ընդունեց ինձ եւ իմանալով, որ մեկնելու եմ էջմիածին՝ հաղարերորդ անգամ արաւ Սուրբ Կարապետ իր ճամբորդութեան պատմութիւնը: Եւ բաժնուելիս համբուրելով երկու թուշս՝ ափիս մէջ սեղմեց մի բան եւ ասաց.

— Նայէ, ստակդ ամուր պահէ, ես աղէկ կը ճանչնամ հարամի դուրջիներին, ճամբան ստակդ կ'առնեն ձեռքէդ:

Երբ դուրս եկայ, բացի ափս. 20 կոպէկ էր տուել միլիոնատէր քեռիս: Այս երբ պատմեցի, նոյնիսկ մայրս վրդովուեց: Բայց եւ այնպէս, Միքիշքա դայիս խօսքը ամուր տեղ դուաւ մտքիս մէջ՝ «հարամի դուրջի»: Եւ ճակատագրի հեղնանքին նայիր. ուս մուժիկից յետոյ, երկրորդ մարդը, որ նաւում ուշադրութիւն դարձրեց իմ վրայ, մի վրացի էր, ինչպէս ինքն էր ասում, Գուրիայի ազնուականներից, Ջուռնաշվիլի անունով: Իրապէս, ոչ ազնուական էր, ոչ Ջուռնաշվիլի: Փոթիում իմացայ, որ Գուրիայիսցի դինեվաճառ էր եւ անունը՝ Վալիկո: Խորամանկ աչքերով, չատախօս, ուրախ, պարծենկոտ մի մարդ էր: Երբ լսեց անունս, որ Թարգմանւում էր Վրաց-

Aram webaram.com

եան, «Դու մերոնցից ես» ասաց ինձ եւ առաւ իր հովանաւորութեան տակ:

Ամէն նաւահանգստում «հարսանի գուրջին» ցամաք էր իջնում եւ ինձ էլ տանում էր հետը, Տուապսէ, Սոչի, Ադլէր, Նոր Աֆոն, Սուխում, Օչեմչիրի, ամէն տեղ ծանօթներ էր գտնում, նրանց հետ կարմիր գինի էր խմում, ինձ էլ ստիպում էր խմել...

Ինձ վրայ մասնաւորապէս ուժեղ տպաւորութիւն թողեց Նոր Աֆոն վանքը, ուր ուխտի էր գնում մեր նաւի ռուս մուժիկը: Նոր Աֆոնը, Յունաստանի Աթոս լերան հռչակաւոր վանքի օրինակով, ռուսական մի հարուստ վանք էր բազմաթիւ միաբաններով, որոնք, իբր թէ, ճգնում էին, բայց արտաքինից բնաւ ճգնաւորի տպաւորութիւն չէին թողնում: Ռուսաստանի բոլոր կողմերից բազմահազար ուխտաւորներ էին գալիս առատ նուէրներով: Հաւատացեալները ամէն տեղից դրամ էին ուղարկում, որպէսզի անաչխատ, հաստավիզ վանականները աղօթեն իրենց հոգու փրկութեան համար:

Վանքի մուտքում, բարձր պատուանդանի վրայ, կանգնեցուած էր մարդկային մի անճոռնի կմախք: Տակը գրուած էր.

— Ես եղել եմ ֆեզ պէս, դու պիտի լինիս ինձ պէս:

Իմ մուժիկ բարեկամը, տոպրակը մէջքին, մտաւ վանք, իսկ Վալիկօն ինձ քաշեց գինիի ընկեր գտնելու համար:

Նաւի վրայ ես համոզուեցի, որ իմ Միքիչքա դային չարաչար սխալւում էր. գուրջի Վալիկօն հարսանի չէր. ընդհակառակը, հիանալի մարդ էր եւ ճանապարհի անփոխարինելի ընկեր: Վալիկօյից առակ պահելու ես պէտք չունէի. եւ արդէն ինչքան առակ ունէի որ... Վալիկօն ինքն էր ծախսում իմ վրայ, եւ երբ ես նազ էի անում, բուռով գրպանից հանում էր դեղին, կապոյտ եւ կարմիր թղթադրամներ, կոխում էր աչքս եւ ասում կոտրտուած ռուսերէնով.

— Կա՛ցօ, այս ինչ է որ, դատարկ բան: Մի քանի անգամ էլ գինի տանեմ Ռուսաստան, դու յետոյ տես, շէնի ջիրիմէ...

Սոխումում նաւը մնաց սովորականից երկար. չատ ապրանք ունէր պարպելիք եւ առնելիք: Վալիկօն տարաւ ինձ մի պատառ հաց ուտելու իր մէկ բարեկամի դուխանը ուր չուտով հաւաքուեցին եւ ուրիշ վրացի բարեկամներ: Բացուեց մեծ սեղան: Շարեցին գինիի չիշեր ու բաժակներ: Գինի, կարմիր բողկ, չուտով բերին եւ չամփուրներով խորոված: «Մի պատառ հաց»ը դարձաւ լուկուլոսեան դիներբուք: Վալիկօն խմում էր եւ խմցնում: Ուտում էր եւ ստիպում ուրիշներին էլ ուտելու: Անվերջ կենացներ...

Aram webaram.com

Չնկատեցինք, ինչպէս անցաւ ժամանակը: Եթէ ես չյիշեցնէի եւ չպնդէի, երեւի նաւը կ'երթար առանց մեզ:

Վալիկոն թունդ հարբած էր, բայց ամուր կեցած էր ոտքի վրայ: Երգելով բարձրացաւ նաւ:

— Ես ոչինչ, կրկնում էր նա անվերջ, կացո՛, ես ոչինչ, դու կը տեսնես, թէ Փոթիում ինչ կը լինի:

— Ես Բաթում պիտի գնամ. այնտեղից երկաթուղի պիտի առնեմ, առարկեցի ես:

— Բաթո՞ւմ, մամա ձաղլի... ի՞նչ կայ Բաթումում, ես քեզ Փոթի պիտի հանեմ. այնտեղ էլ երկաթուղի կայ...

Ինչ ասում եմ՝ Փոթի, հասկացա՞ր, շէնի ջիրիմէ...

Եւ այնուհետեւ, մինչեւ Փոթի, նա ինձ հանգիստ չձգեց:

— Կացո՛, ի՞նչ գործ ունես Բաթումում: Փոթիից էլ երկաթուղի կայ ուղիղ Թիֆլիս...

Եւ, իսկապէս, ի՞նչ տարբերութիւն՝ Բաթում թէ Փոթի:

Փոթի նաւահանգստում ես իջայ ցամաք Վալիկոյի հետ: Արդէն քարափում, ամէն կողմից, սկսեց լսուել.

— Կամարջոբա, Վալիկո, բարի՛ եկար...

— Կարգի մարջոս, պատասխանում էր Վալիկօն ղուարթ, թեւերը շարժելով օդում:

Իմ գնացքը դէպի Թիֆլիս մեկնում էր երեկոյեան: Նոյն գնացքով մեկնելու էր եւ Վալիկօն դէպի Ռութայիս: Ամբողջ ցերեկը մեր առջեւն էր:

Փոթին, Ռիոնի ճահճոտ դելտայում, տափակ, փոշոտ, անհրապոյր մի քաղաք էր: Ոչ մի հետաքրքրական բան չունէր տեսնելիք:

— Ինձ այստեղ ճանաչում է ամէն շուն, ասաց Վալիկօն. երթանք մի պատառ հաց ուտենք Դարչոյի դուխանում: Պատուական մարդ է Դարչօն, իսկ նրա կարմիր գինին, փա՛հ, փա՛հ, փա՛հ, շէնի ջիրիմէ...

Դարչոյի դուխանը դրսից փառաւոր տեսք չունէր: Մէկ յարկանի, առջեւը բաց, մի ընդարձակ կառուցուածք էր՝ ցեխից ու եղէգից: Մուտքի ճակատին, մեծ ու ծուռումուռ տառերով գրուած էր ռուսերէն. Դուխան Դարչօ. Գինի, Շաշլիք: Մուտքի առջեւ, արեւի տակ, ընկած էին գինիով լեցուն տիկերը, կարծես կռնակի վրայ պառկած խոզեր լինէին: Ներսը՝ սեղաններ, մի քանի «իշոտնուկ» հասարակ աթոռներ: Մի կողմ՝ խորովածի օճախը: Դիմացը՝ ամանեղէնով դարակը: Սեղանների վրայ, ամանների վրայ, ամէն կողմ

Aram webaram.com

ճանճեր: Եւ դուխանի մէջտեղը՝ ինքը Դարչօն իր ամբողջ անճով՝ դոզնոցը մէջքին:

— Վա՛յ, կամաքջոքա, շէնի ջիրիմէ, Վալիկօ Ջան, ուրախացած փաթաթուեց Վալիկոյի վզին Դարչօն, ե՞րբ ես եկել, որտեղի՞ց ես գալիս, դու հազար բարով եկար....

Վրացերէն չէի հասկանում, բայց ենթադրում եմ, թէ այսպէս ասած պիտի լինէր:

Նոյն ձեւով եւ մխեւնոյն իմաստով պատասխանեց Վալիկօն: Երկու բարեկամների միջեւ սկսուեց կենդանի խօսակցութիւն՝ վրացերէն:

— Բիջօ, հէ՛յ, պոռաց Դարչօն, եւ հեւ ի հեւ ներս ընկաւ դոզնոցը մէջքին մի տղայ, երեւի դուխանի գառսոնը, եւ Դարչոյի հիմնարկութիւնը կենդանացաւ:

Մի քանի սեղաններ իրար մօտ քաշուեցին եւ ծածկուեցին սփռոցով: Շիշեր ու բաժակներ ռազմական դիրքեր գրաւեցին սեղանի վրայ: Օջախում սկսուեց ճռթճռթալ ածուխը: Դարչօն իր ձեռքերով մսի կտորներ էր շարում փայլուն շամփուրների վրայ՝ մէջընդմէջ սոխի, լոլիկի եւ կանաչ պղպեղի հետ:

Շուտով Դարչոյի դուխանում երեւացին եւ Վալիկոյի բարեկամները: Նրանք իմացել էին Վալիկոյի վերադարձը Թուսաստանից եւ շտապել էին բարի գալուստ մաղթելու նրան՝ խանդավառ բացականչութիւններով ու համբոյրներով: Խանդավառութեան քիչ չէր նպաստում, ի հարկէ, եւ սեղանի ու շամփուրների առինքնող տեսարանը:

Ինձ տարօրինակ էր թւում, թէ ինչպէ՞ս այս բարի եւ կենսուրախ մարդկանց իմ քեռի Միքիչեան ատելակ եւ խարդախ էր կոչում: Երկար տարիներ պէտք է անցնէին, դառն հիասթափութիւնների պէտք է ենթարկուէի, որպէսզի ես էլ համոզուէի, թէ Միքիչեա գայիս իրաւունք ունէր: Բայց այդ տարբեր պատմութիւն է...

Այժմ, սակայն, Փոթիում, Դարչոյի աննման դուխանում, Վալիկօն եւ իր վրացի բարեկամները բարի, անկեղծ, ընկերական եւ զուարթ մարդկանց տպաւորութիւն էին թողնում իմ վրայ, մանաւանդ, երբ շարժման մէջ դրուեցին դինիի մարտկոցները եւ ամէն բարիքով բեռնաւորուած սեղանի վրայ դրուեց Դարչոյի ստեղծագործած բուրումնաւէտ խորովածը: Ես առաջին անգամ այստեղ ճաշակեցի վրացական «պուրի» հացը եւ լեռնականների աննման պանիրը: Եւ առաջին անգամ հասկացայ, թէ ինչ ասել է կովկասեան քէֆ...

Aram webaram.com

Վալիկօն ինձ էլ էր ստիպում խմելու: Օգտուելով յարմար առիթից՝ ես դուրս եկայ քաղաքում պտտելու: Այնքա՜ն ամէն բան նման չէր մեր կողմերին: Բոլոր խանութներն էլ գրեթէ Դարչոյի դուխանի նման ողորմելի չէնքեր էին, նոյն դինեի սիճորները բոլոր ճաշարանների առջեւ: Տները՝ հողից, տափակ տանիքներով: Բնակիչները՝ բարձրահասակ, բարեկազմ, բայց աղքատ հագնուած: Ամէնքը խօսում էին բարձր, կոկորդային, ականջ ծակող հնչիւններով՝ վրացերէն:

Շուկայում գտայ մի խանութ եաև վերջացող անունով: Դուրս եկաւ, որ հայ էր, Տրապիզոնի գիւղերից գաղթած: Իրեն նման ուրիշ հայեր էլ կային Փոթիում, որոնք գոհ չէին իրենց վիճակից. գործ չկար, եւ օդն էլ վատ էր: Իսկապէս որ այս յետամնաց նաւահանգստում, Բաթումի ճամբու վրայ, չատ քիչ նաւեր էին հանդիպում, օդը անտանելի էր, ճահճատենդի բոյն եւ կանայք գեղեցիկ չէին:

Նաւահանգիստը կառուցման վիճակում էր, քարափի շինութիւնը բոլորովին լրացած չէր դեռ, թէեւ նաւերը մօտենում էին ցամաքին: Մեզ բերող նաւը արդէն մեկնել էր Բաթում, եւ ամբողջ նաւահանգստում ձանձրալի ամայութիւն էր տիրում:

Աւելի ուշ, ինձ յայտնի եղաւ Փոթիի խղճուկ պատկերը: Սեւ ծովի՝ Անդրկովկասի միակ ելքը Բաթումն էր, որը երկաթուղիով եւ նաւթամուղ խողովակով միացած էր Բագուի հետ: Ռուս կառավարութիւնը միջոց չէր խնայում ծաղկեցնելու համար Բաթումը, բայց Բաթումը դարձել էր միջազգային քաղաք եւ մօտ էր Տաճկաստանին: Վրացի հայրենասէրները ուզում էին դուտ վրացական նաւահանգիստ ունենալ Վրաստանի համար: Իր աշխարհագրական դիրքով Փոթին յարմար էր այդ դերին. դուտ վրացական Ռիոնի գետաբերանին, դուտ վրացի բնակչութեամբ, անմիջապէս կապուած Քութայիսի եւ ներքին Վրաստանի միւս շրջանների հետ:

Եւ Կովկասեան ռուս ու վրացի մամուլի էջերում, նոյնիսկ մայրաքաղաքի թերթերում սկսեցին լոյս տեսնել յօդուածներ, որոնք, հիմնուելով համառուսական պետական շահերի վրայ, աշխատում էին ընդունել տալ հանրային կարծիքին ու կառավարական շրջաններին Փոթին բանուկ նաւահանգստի վերածելու անհրաժեշտութիւնը: Այդ շարժման ետեւը կեցած էր Վրաց աղնուականութիւնը յայտնի հայրենասէր Նիկոլաձէի գլխաւորութեամբ: Կառավարութիւնը ընդառաջ գնաց եւ զանազան վարկեր արամադրեց Փոթիի նաւահանգստի կառուցման համար, բայց ամէն յարմարութիւններով

Aram webaram.com

օժտուած Բաթումի կողքին Փոթին չզարդացաւ եւ մնաց խեղճ վիճակի մէջ։

Այս ամէնին եւ ուրիշ շատ բաների ես, ի հարկէ, անտեղեակ էի, երբ մտամոլոր եւ ձանձրոյթից յօրանջելով պատում էի Փոթիի արեւահար, ու փոշոտ փողոցներում։ Երեկոյեան դէմ վերադառնալով Դարչոյի հաստատութիւնը՝ գտայ իմ բարեկամ Վալիկոյին լոլիկ դարձած, ընկած թախտի վրայ, դուխանի յետեւի սենեակում։ Իր վրացի բարեկամները չկային։ Դարչօն շատ ուրախ տրամադրութեան մէջ, ինձ էլ տեղ տուեց մի քիչ հանգստանալու։

Գիշեր էր արդէն, որ մենք, Վալիկոյի հետ միասին, Փոթիի երկաթուղու կայարանից, միեւնոյն գնացքով մեկնեցինք՝ նա, Ճանապարհին, բաժնուելու համար դէպի Քութայիս, ես չարունակելու համար ճամբաս դէպի Թիֆլիս։

— Կա՛ցո, ասաց նա ինձ հրաժեշտ տալիս, տե՛ս, չմոռանաս, եկող տարի դու իմ հիւրն ես Քութայիսում, հասկացա՞ր, շէնի ջիւրիմէ...

Ես հասկացայ, բայց Քութայիսի երեսը տեսնելու բախտը չունեցայ։ Վալիկօն ջնջեց իմ մտքից Միքիչքա դայիս աննպաստ կարծիքը Վրացիների մասին։ Եթէ բոլոր Վրացիները Վալիկոյի կամ Դարչոյի նման բարի եւ սիրալիր մարդիկ էին, աններելի էր նրանց «հարամի զիւրջի» կոչելը...

Թիֆլիսը գեղեցիկ քաղաք էր, բայց ափսոս, այստեղ երկար չէի կարող մնալ։ Նոյն գնացքով պէտք է չարունակէի ճանապարհը մինչեւ Աղստաֆա կայարանը եւ այնտեղից կառքով կամ փուդոնով անցնէի Երեւան։ Ալեքսանդրապոլ–Երեւան, Ջուլֆա երկաթուղին դեռ չէր շինուած։

Աղստաֆան էլ, Փոթիի նման, փոշոտ, կեղտոտ եւ անհրապոյր քաղաք էր։ Մէկը չունէի հետս, որ օդնէր կառք վարձելու։ Վալիկօն զգուշացրել էր. «Տե՛ս, աչքդ բաց պահիր Աղստաֆայում, որ կառապանները քեզ չկողոպտեն»։ Ամէն կերպ աչքատեցի աչքս բաց պահելու, բայց կառապան ասածդ ստեղծուած է կողոպտելու համար։ Երկար սակարկութիւնից յետոյ, մի տեղ գտայ Երեւան մեկնող փուրգոնում, որի հայախօս թուրք կառապանը բոլոր սըրբութիւններով երդւում էր, թէ դրեթէ ձրի էր տանելու ինձ, որովհետեւ ես աշակերտ էի եւ ինքը շատ էր համակրել ինձ։ Եւ, անշուշտ, համակրանքից դրդուած՝ նստեցրեց իր կողքին։

Ղազախում փուրգոնը բարձրացաւ մօթալ փափախով, լեցուն խուրջինը ուսին մի բիճա եւ տեղ դրաւելով իմ յետեւը, ձեռքի երեք

Aram webaram.com

մատերը բարձրացնելով վեր, կանչեց կառապանին.

— Ա, դեադա, երեւան երեք մանէթ:

Կառապանը գլուխը չարժելով վերից վար՝ մտրակեց ձիերին:

Ինձանից, ի նշան բացառիկ համակրանքի, առաւ հինգ մանէթ: Երեւի, իմ քեռի Միքիչքան, Սուրբ Կարապետ գնալիս, հայհոյս Թուրք կառապանի չէր հանդիպել...

Ֆուրգոնը անցնում էր Ղազախի գորչ ու փոշոտ դաշտով: Ապա սկսեց բարձրանալ դէպի հայկական լեռնաշխարհը: Քարվանսարայից արդէն բնութիւնը բոլորովին փոխուեց եւ օդը դարձաւ հաճելի: Ճանապարհի երկու կողմը բարձր լեռներ եւ կանաչ, խիտ անտառ: Հիանալի էր, մանաւանդ, ամարանոց Դիլիջանը, ուր Ֆուրգոնը կեցաւ մի ժամ ձիերին հանդիստ ու կեր տալու համար:

Ճամբորդները թափուեցին պաղ աղբիւրի շուրջ, ստուերախիտ ծառերի ներքեւ եւ բացին իրենց խուրջինները կամ ուտելիքի ծրարները:

— Բալա ջան, համէ ինձ հետ մի պատառ հաց կեր, հրաւիրեց ինձ մոթթալ փափախով բիձան՝ հանելով խուրջինի միջից տեսակ տեսակ ուտելիքներ:

Առաջին անգամն էի վայելում հայկական հիւրասիրութիւն Հայաստանի հողի վրայ: Եթէ բանաստեղծ լինէի, երեւակայո՞ւմ էք, թէ ինչ բարձր ոճով պիտի արտայայտէի իմ զգացումները, մանաւանդ որ բիձայի խորոված հաւը, սպիտակ լաւաշ հացը, տիկի պանիրն ու թարխունը աքանչելի էին: Բայց որովհետեւ բանաստեղծ չէի, բաւականացայ միայն պարզ շնորհակալութիւն յայտնելով:

Բիձան ճիշդ հակապատակերն էր վրացի Վալիկոյի — լուրջ, սակաւախօս, զուսպ: Հարցրեց ո՞րտեղից եմ գալիս եւ ո՞ւր եմ գնում: Դուրս եկաւ, որ իր մէկ ազգականը Նոր Նախիջեւան-Ռոստովում շրջուն առեւտրական էր եւ սրա որդին սովորում էր էջմիածնի ճեմարանում, որին, ի հարկէ, ես պիտի հանդիպէի: Ինքը գնում էր Երեւան ինչ որ գործով:

Դիլիջանից սկսում էր մի բարձր վերելք ոլորապտոյտ ճանապարհով: Ձիերը դժուարութեամբ էին քաշում Ֆուրգոնը: Կառապանը մերթ քնքշութեամբ, մերթ հայհոյանքով ու մտրակի շառաչով յորդորում էր քրտինքի մէջ կորած կենդանիներին առաջ չարժուելու: Բիձան եւ մի քանի ուրիշ ճամբորդներ իջանք Ֆուրգոնից եւ կարուկ ճանապարհով ելանք լեռնաշղթայի գլուխը, որտեղից զմայլելի տեսարան էր բացւում Սեւանի ուղղութեամբ:

Aram webaram.com

— Էն ա՛, էն եանը, ձեռքը պարզեց բիճան. Սեւանայ վանքն ա, կարծես էն ա, իսկոյն կը հասնես, ամա չմտածես, թէ շատ մօտ ա....

Եւ, իսկապէս, մինչեւ որ ֆուրգոնը հասաւ մեզ, մինչեւ որ կարեցինք ոլոր-մոլոր վայրէջքը, արդէն ցերեկը վերջանում էր: Սեւանայ լճի եղերքից անցանք մութ դիշերով: Կզզին չէր երեւում: Հեռուից միայն առկայծում էին վանքի լոյսերը: Դեռ Շանթը չէր վրդովել հին աստուածների հանգիստը, իսկ նոր աստուածներ չկային Սեւանի ամայի վանքում:

Ձեմ յիշում, ո՞ր կէտում իմ տեսողութեան առջեւ, կարծես մոգական ուժով, բացուեց հէքեաթային մի տեսարան՝ Մասիսը վեհափառ, որ այնուհետեւ, մինչեւ Երեւան, չէր հեռանում մեր աչքերից:

— Տեսնո՞ւմ ես էս Մասիսը, ասաց Բիճան խորին հաւատով, էս ա պահում մեզ. քանի Մասիսը կանդուն է, Հայութիւնն էլ կանդուն կը մնայ: Մասիսը ասել ա Հայ...

Ով Մասիսից հեռանայ,
Հայութիւնը կ'ուրանայ...

Արեւոտ, պայծառ կէսօր էր, երբ ֆուրգոնը Քանաքեռի բարձունքից իջաւ Երեւան եւ Աստաֆեան պողոտան կտրելով՝ կանգ առաւ չուկայի հրապարակում, Ղանթարի կողքին, յաւերժական Մասիսի հովանու ներքեւ: Ինձ թւում էր, թէ ես երազում էի, այնքան արտասովոր էր տեսարանը — հեռուում Մասիսը ցնորք եւ չուրջը, հրապարակի վրայ եւ Ղանթարի տակ առաստղեալական աստուածեամբ ձմերուկ, սեխ, դեղձ, սերկեւիլ, տեսակ-տեսակ խաղող, բանջարեղէն: Եւ հայ դեղջուկներ եւ դեղջկուհիներ աղմկոտ՝ գոյնզգոյն տարազներով: Ամէն ինչ նոր էր ինձ համար, օտարոտի ու տարօրինակ...

Այս հրապարակից, Զանգուի կամուրջը անցնելով, չուտով պիտի հասնէի էջմիածին, հազիւ քսան կիլոմետր հեռու Երեւանից:

— Բարի ճանապա՛րհ, մաղթեց համակրելի Բիճան, Աստուած քեզ առողջ եւ անվտրճանք պահի...

Արեւի ճառագայթները ոգողել էին հրապարակը: Մեր առջեւ, հեռուում, վեհափառ կեցած էր Մասիսը՝ Հայաստան աշխարհի յաւիտենական պահակը...

Aram webaram.com



ՄԱՍԻՍԸ՝ ՀԱՑՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՀԱՊԱՆ

Aram webaram.com

IV.— ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԸ

19րդ դարու Ամենայն Հայոց Կաթողիկոսաներէ չարքում երկու դէմք, իրենց բացառիկ անհատականութեամբ, անջնջելի կնիք են դրել հայ կեանքի վրայ՝ Գէորգ Զօրավարդ եւ Խրիմեան Հայրիկ: Հայրիկը, յեղափոխական ու բանաստեղծ, աչքի զարնող նիւթական հետք չի թողել էջմիածնում, Գէորգ Դ. գործի մարդ էր եւ, որպէս չինարար, իրաւամբ արժանի է մեծագործ անուան: Իր հիմնած ճեմարանը միայն բաւական էր անմահացնելու Գէորգ մեծագործ անունը Հայոց պատմութեան էջերում:




ԳԷՈՐԳ Դ.

Գէորգ Դ. գալիս էր Պոլսից, ուր Հայոց կեանքում, արդէն գոյութիւն ունէր ահմանադրական իրաւակարգ, կրթական – մշակութային, համեմատաբար զարգացած հաստատութիւններ, ազգային հարցեր արծարծող եւ հանրային կարծիք մշակող մամուլ: Ռուսահայոց իրականութիւնը, այդ տեսակէտից, խիստ աղքատ էր, իսկ էջմիածնում ամայութիւն էր տիրում: Մի խեղճուկ ժառանգաւորաց վարժարան, որտեղից դուրս էին գալիս ոգեւորականներ, եւ իր կոչման անարժան միաբանութիւն:

Գէորգ Դ., որ պահպանողական եւ ոչ ռուսասէր մարդու համբաւ ունէր, հետեւաբար եւ չէր վայելում ռուսահայ ազատամիտ տարրերի համակրանքը, հասկացաւ, որ ռուսահայերը եւ, ընդհան-

Aram webaram.com



ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Aram webaram.com

բապէս, բոլոր Հայերը, ամէնից աւելի, պէտք ունէին մտաւոր լուսաւորութեան եւ զարգացած, ժամանակի պիտութեան եւ ոգուն բաւարարող մտաւորականութեան, յատկապէս, առողջ մտքի տէր հոգեւորականութեան: Հայութիւնը ամէն տեղ գոյութիւն ունէր, իբրեւ եկեղեցական համայնք, եւ եկեղեցական ոգին դեռ ուժեղ էր ամէն տեղ:

1874 թուին, էջմիածին վանքին կից, ընդարձակ հողի վրայ, Գէորգ Դ. իր ձեռքով հիմը դրեց մի դպրոցի, որ իր անունով կոչուեց Գէորգեան ճեմարան: Իր ժամանակի համար փառաւոր էր ճեմարանի չէնքը, որի համար կաթողիկոսը ոչինչ չխնայեց: Թուրք կառավարութեան արտօնութեամբ Մողանլուի հռչակաւոր անտառից քերել տուեց խոշոր գերաններ: Գործի կանչեց անուանի վարպետներ: Ինքը անձամբ հսկում էր շինութեան վրայ: Ասում էին, որ յատակագիծն էլ էր պատրաստել իր ձեռքով:

Եւ, իսկապէս, իր ժամանակի համար հոյակապ էր Գէորգեան ճեմարանը: Վաղարշապատ գիւղի դէպի Երեւան տանող մեծ պողոտայի վրայ, վանքի արեւելեան կողմը, պարտէզի մէջ, արեւմուտքից արեւելք երկարող, բաւճրանում էր սրբատաշ քարերից կարմիր ներկուած երկյարկանի մի չէնք, որի ներսը լայն միջանցքով բաժանում էին երկու չարք լուսաւոր դասարանները: Շէնքի մէջտեղը, հարաւային մուտքի վրայ, տեղաւորուած էր հոյաչէն գմբէթը, ճեմարանի համբաւաւոր սրահը, ուր տեղի էին ունենում ճեմարանի հանդէսները: Այստեղից հարաւային պարտէզի վրայ նայող լայն պատուհաններից, երեւում էր վեհափառ Մասիսը իր ամբողջ հասակով: Վարը, պարտէզում, տարածուած էին աշակերտների հայրենակցական մարզերը: Այստեղ, այս սրահում, Մասիսին նայող դաշնամուրի առջեւ նստած՝ կոմիտասը յօրինում էր իր անմահ երգերը:

Սրահի ճակատին կախուած էր Գէորգ Դ.-ի խւղաներկ մեծ նկարը: Նրանից քիչ հեռու բազմած էր Խրիմեան Հայրիկը՝ ծխախոտից դեղնած պեխերով: Մի քիչ անդին՝ Այվազովսքիի նշանաւոր նկարը՝ «Նոյը իջնում է Արարատից» եւ միւս կողմը՝ Թադէոսեանի «Էջմիածին» նկարը, Քիսուսը իջնում է երկնքից Էջմիածնի հիմքը դնելու նպատակով:

Սրահի առջեւ, միջանցքում, ամէն առաւօտ, դասերից առաջ, երկու չարքով կանգնում էին ճեմարանի երկու հարիւր աշակերտները երգելու համար առաւօտուայ աղօթքը՝ «Առաւօտ Լուսոյ» եւ երեկոյեան՝ «Հրեշտակ Զուարթուն»: Միջանցքի արեւելեան ծայրը

Aram webaram.com

տեսչարան–ուսուցչանոցն էր, իսկ հիւսիսային կողմը՝ ընդարձակ սերտարանը եւ ընդարձակ մատենադարանը 40·000 գրքերով ու պարբերականներով:

Ճեմարանի գլխաւոր մուտքը նայում էր դէպի հիւսիս՝ վաղարշապատ գիւղի վրայ: Հիւսիսային պարտէզում, մեր օրերին, կանգնեցուեց Գամառ Քաթիպայի պղնձէ կիսանդրին: Վարդազոյն տուֆէ պատուանդանի վրայ դրուած էր հայրենաշունչ բանաստեղծի կտակը.

Կեանքիս մէջ մի հատ սիրն փառք ուներցայ,
Սուրբ էջմիածնում թաղուել ցանկացայ,
Սիրական իմ ազգ, քէ Աստուած սիրես,
Այս իմ մէկ հատիկ իղձը կատարես:

Ճեմարանի արեւելեան կողմը ձգւում էր քարաշէն երկար ննջարանը երկու հարիւր դիշերօթիկ աշակերտների համար: Եւ ննջարանից այն կողմ, հարաւ–արեւելք տարածւում էին ճեմարանի արտերը, ուր աշակերտները հողագործութեան փորձեր էին անում:

Ննջարանի կողքին, դէպի հիւսիս, գտնւում էր ճեմարանի հիւանդանոց–դարմանատունը եւ աւելի հեռու, բակի ծայրում, լուացքի տունը, ուր կանայք լուանում էին ճեմարանցիների սպիտակեղէնը, երբեմն էլ օգնում էին խոհարարին ճաւար մաքրելու կամ դոլմա փաթթելու:

Լուացքի տնից այս կողմ, փողոցի մեծ դրան մօտ, բարձրանում էր երկյարկանի անճոռնի մի շէնք, որի վերի յարկը յատկացուած էր լսարանցիների ննջարանի, վարը խոհանոցն էր եւ փուռը, ուր թխւում էր ճեմարանի նշանաւոր «բոմբի»ն:

Այս ամէնի վրայ, աւելացաւ Աբրիամեան Հայրիկի չինել տբուած անճաշակ ճաշարանը, խոհանոցի ու հիւանդանոցի միջեւ, եւ պաւէշտական արտաքնոցները, որոնք, չգիտեմ ինչու, եւրոպա էին կոչւում: Երեւի օրիէնտացիայի հարց էր...

Ամէն օր, իմ ժամանակ, ճեմարանում հաց էին ուտում մօտ 250 աշակերտներ, վերակացուներ եւ սպասաւորներ: Սպասաւորները, Հայրիկի կաթողիկոսութեան օրով, գրեթէ անխտիր բոլորը վանեցի էին, որոնց մէջ նշանաւոր էին Նախօ բիձան, դիշերապահը, եւ Հայրօն՝ մեր երեւելի խոհարարը: Գայեանէի վանքում պահւում էին ճեմարանի կովերը, որոնց կաթը երբեմն պատահաբար, աշակերտներին էլ էր հասնում:

Այսպիսի խոշոր տնտեսութիւն վարելու համար ճեմարանը ունէր յատուկ պաշտօնեայ, մեր ժամանակ, Պր. Մեսրոպը, որ ճե–

Aram webaram.com

մարանի նիւթական միջոցով տնտեսավարական կրթութիւն էր ստացել Օդեսայում:

Ճեմարանի ելեւմուտքը, դարձեալ իմ ժամանակ, տարեկան 50·000 ռուբլի էր — 25·000 դոլար —, որ փոքր գումար չէր այն օրերի համար: Այդ գումարի մեծագոյն մասը հոգում էր վանքը, փոքր մասը գոյանում էր թոշակներից: Շուրջ 200 աշակերտներից հազիւ 10–15 հոգի թոշակ էր վճարում: Միւսները ձրիաւարժ էին:

Պէտք է ասել, որ նիւթական տեսակէտից, տնտեսապէս ճեմարանը լաւ էր կազմակերպուած: Աշակերտների տնունդը ընդհանրապէս բաւարար էր, բացի պաս օրերից, որոնք բոլորն էլ, չորեքշաբթի եւ ուրբաթ, շաբաթական պասեր, մեծ պաս՝ 7 շաբաթ անընդհատ, բոլորը պահում էին անայլայլ եւ ի մեծ դժգոհութիւն աշակերտների: Պաս օրերի կերակուրներն էին, առաւօտեան՝ մի պնակ խաշած կարմիր լոբի եւ մի բաժակ թէյ հացով: Կէսօրին՝ մախոխ, ոսպի կամ լոբիի ապուր ու խաշած գետնախնձոր. երեկոյեան՝ դրա նման մի բան: Պատմութիւնը վկայում էր, որ ճեմարանի բոլոր ցոյցերն ու յեղափոխութիւնները սեղանատնից էին սկսւում...

1905ին, Գարեգին Վարդ. Յովսէփեանի տեսչութեան օրով, երբ Ռուսաստանում սկսուել էին յեղափոխական շարժումները, ճեմարանի աշակերտութիւնը հացադուլ յայտարարեց մեծ պասի կերակուրների դէմ:

Խրիմեան Հայրիկը լսելով տեսչի զեկուցումը՝ հրամայել էր. «Թանապուր տուէք»: Եւ այնուհետեւ ամէն օր մեզ թանապուր էին տալիս, մինչեւ որ թանապուրի դէմ էլ հացադուլ արինք:

Հայրիկը զարմանքով լսել էր, որ աշակերտները չեն ուզում թանապուր ուտել.

— Թանապուր չեն ուզե՞ր, մխա տուէք, որ ուտեն:

Ճեմարանի ուսումնական մասը կախուած էր տեսչից եւ ուսուցչական կազմից, որոնք տարբերւում էին ըստ Վեհարանի քաղաքականութեան: Կաթողիկոսն էր նշանակում տեսչին եւ տեսուչը հրաւիրում էր ուսուցիչներին կաթողիկոսի հաւանութեամբ: Լինում էին չրջաններ, երբ ճեմարանը ունենում էր ընտիր ուսուցչական կազմ եւ կրթական ծրագիրը լրիւ կերպով եւ յաջողութեամբ դրծագրւում էր: Պատահում էին եւ հակառակ տարիներ: Վանքի ներքին հակամարտութիւնները եւ կաթողիկոսի օրուայ տրամադրութիւնները, առաջին հերթին, անդրադառնում էին ճեմարանի դեկավարութեան վրայ: Այսպէս, երբ Հայրիկը բազմեց Էջմիածնի աթոռի վրայ, ի զարմանս եւ ի վրդովում ազատամիտ տարրերի, ճամբու

Aram webaram.com

դրեց ճեմարանի ազատամիտ համարուած ուսուցիչներին: Գլխաւորապէս ազատամիտ եւ պահպանողական դաղափարների շուրջ տեղի էին ունենում եւ ճեմարանի ներքին խռովութիւնները: Նոյն Հայրիկի կաթողիկոսութեան առաջին շրջանում տեղի ունեցաւ ճեմարանի «մեծ դէպքը», երբ ութսունից աւելի աշակերտներ արտաքսուեցին ճեմարանից՝ նոյնիսկ ոստիկանութեան ուժին դիմելով:

Նման դէպքերը, սակայն, բացառիկ երեւոյթ էին. ճեմարանի կրթական կեանքը, ընդհանրապէս, խաղաղ էր առաջ գնում:

Գէորգեան ճեմարանը, կրթական ծրագրի տեսակէտից, բաժանւում էր երկու մասի. 1) վեցամեայ միջնակարգ դպրոց եւ 2) եռամեայ լսարաններ:

Հայոց եկեղեցական–ծխական դպրոցների չորրորդ դասարանը յաջողութեամբ աւարտողները ընդունւում էին ճեմարանի առաջին դասարանը: Ճեմարանի դասարանական բաժինը իր ծրագրով համապատասխանում էր թեմական դպրոցների կամ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի ծրագրին, միայն ճեմարանում աւելի ուժեղ էին հայագիտական առարկաները եւ, իրրեւ օտար լեզու, սովորում էին, ռուսերէնից զատ, գերմաներէն եւ հին յունարէն: Ճեմարանի դասարանական բաժինն աւարտողը ստանում էր համապատասխան վկայական եւ, իրրեւ միջնակարգ դպրոց աւարտած, իրաւունք ունէր Հայոց եկեղեցական–ծխական դպրոցներում պաշտօնավարելու կամ քահանայութեան աստիճան ստանալու եւ կամ Եւրոպական բարձրագոյն դպրոցներում ուսումը շարունակելու: Ռուսական համալսարաններ ընդունուելու համար պէտք էր գիմնազիայի կամ ռէալական դպրոցի քննութիւն անցնէին:

Ճեմարանի դասարանական բաժինը աւարտողների մի մասը դուրս էր գալիս եւ մտնում էր գործնական կեանքի ասպարէզ, իրրեւ ուսուցիչ, քահանայ, ազգային հաստատութիւններում պաշտօնեայ եւայլն, մեւսները շարունակում էին իրենց ուսումը երեք տարի եւս, լսարանական բաժնում:

Ճեմարանի լսարանները, կարելի է ասել, եռամեայ բարձրագոյն դպրոց էր, մի տեսակ համալսարան: Նման հաստատութիւն մենք չենք ունեցել ուրիշ ոչ մի տեղ:

Լսարանական բաժնում դասաւանդւում էին հետեւեալ առարկաները.

ա) Հայոց լեզու, աշխարհաբար եւ գրաբար, քննական.

բ) Հայոց պատմութիւն, քննական.


գ) Մաաենագիտութիւն եւ գրականութիւն.

Aram webaram.com

դ) Փիլիսոփայութեան պատմութիւն.
ե) Հոգեբանութիւն.
զ) Տրամաբանութիւն.
է) Մանկավարժութիւն.
ը) Հայոց եկեղեցական իրաւունք:

Իսկ վերջին տարիները նաեւ՝ ընկերաբանութիւն եւ քաղաքաւոնութիւն:

Եթէ ի նկատի ունենանք դասախօսների որակեալ կազմը, այլ եւ հարուստ մատենադարանը եւ առատ ընթերցանութիւնը, հասկանալի կը լինի, որ ճեմարանի լսարաններից դուրս էին գալիս բազմակողմանի եւ խորունկ զարգացման տէր երիտասարդներ, որոնց համար գործը ապահովուած էր հայ մշակոյթի, կրթական եւ հասարակական ասպարէզներում:



ԿԱՐԱՊԵՏ Վ. ՏԷՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Գէորգեան ճեմարանում, իբրեւ տեսուչ կամ ուսուցիչ, զանազան ժամանակներում, պաշտօնավարել են բազմաթիւ բարձր մտաւորականներ, ինչպէս Մաղաքիա Արք. Օրմանեան, երբ դեռ վարդապետ էր, Գարեգին վրդ. Յովսէփեան, ապագայ Կիլիկիոյ Կաթողիկոսը. բազմահմուտ դիտնական Կարապետ վրդ. Տէր Մկրտիչեանը. երաժշտապէտ Կոմիտաս վրդ., մանկավարժ Սեդրաք Մանդինեանը, Ստեփանոս Պալասանեանը, Կարապետ Կոստանեանը, Մանուկ Աբեղեանը, Մինաս Բերբերեանը, Հրաչեայ Աճառեանը, Յակոբ Մանանդեանը, Սիրական Տիգրանեանը, Յովհաննէս Յովհաննէսեանը, Լէօն, Եր. Տէր Մինասեանը, Ա. Տէր Պօղոսեանը եւ բազում ուրիշներ:

Գէորգեան ճեմարանը, որպէս կրթական հաստատութիւն,

Aram webaram.com

պատմական մեծ դեր կատարեց Հայ ժողովրդի ազգային կեանքի բոլոր ասպարէզներում: Կարելի է յիշել բազմաթիւ անուանի ճեմարանականներ՝ հոգեւորական, դիւանական, դրող, լրագրող, արուեստագէտ, հասարակական գործիչ, յեղափոխական, բայց մանաւանդ ուսուցիչ: Միայն իրրեւ օրինակ, այստեղ առաջ բերենք, լոկ յիշողութեան վրայ հիմնուած, մի քանի անուններ, որոնք աւելի քան որեւէ ներբողանք՝ ցոյց կը տան Գէորգեան ճեմարանի ազգային արժէքը:

Հոգեւորականներ. Գէորգ Ջ. Ջէօրէքճեան, Կաթողիկոս Ամենայն Հայոց, դիւանական Գարեգին Ա. Յովսէփեան, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, երաժշտագէտ Կոմիտաս վարդ. Սողոմոնեան, Կարապետ Եպ. Տէր Մկրտիչեան, Ներսէս Արք. Մելիք Թանդեան, Բագրատ Եպ. Վարդապարեան, Տիրայր Արք. Տէր Յովհաննիսեան, Գիւտ Եպ. (Պեսիմիսա), Յուսիկ Եպ. Զոհրապեան, Արսէն Աւ. քահ. Սիմէոնեանց:

Գիտնական, բանասէր–բննադատ. Ակադեմիկոս Մանուկ Աբեղեան, Փրոֆ. Ն. Ադոնց, Նիկ. Ադրալեան, Ա. Աբեղեան, Ստ. Մալխասեան, Մտ. Կանայեան, Եր. Տէր Մինասեան, Վ. Խորէնի, Գ. Գիւզալեան, Արսէն Տէրտէրեան, Գ. Խաժակ:

Գրող, բանաստեղծ. Աւ. Ահարոնեան, Լ. Շանթ, Ա. Իսահակեան, Դ. Դէմիրճեան, Ալ. Բակունց, Լեւ Կամսար, Գ. Քեաւաշեան:

Հասարակական–քաղաքական գործիչ. Ա. Վռամեան (Օ. Դերճակեան), Ա. Գիւլխանդանեան, Ռ. Տէր Մինասեան, Ա. Զամալեան, Ա. Մռաւեան, Սահ. Թորոսեան, Ա. Միկոյեան, Խ. Կարճիկեան, Ա. Խոնդկարեան, Ց. Տէր Ցակոբեան (Իրազեկ), Արտակ Դարբինեան, Ար. Միքայէլեան:

Կրթական գործիչներ. Աւ. Տէր Պօղոսեան, Արշ. Շաւարշեան, Գ. Էդիլեան, Ա. Բարսեղեան, Վ. Հախնազարեան:

Երաժշտագէտներ. Կոմիտաս, Սպ. Մելիքեան:

Այսքանը միայն պատահաբար յիշուած անուններ են. եթէ ճեմարանականների լրիւ ցանկը ունենայինք, անկասկած, կարելի պիտի լինէր ուրիշներ եւս աւելացնել: Խօսքս միայն անուանի գործածների մասին է, իսկ անդին դեռ հարիւրաւոր ճեմարանականներ կան, որոնց անունը պակաս յայտնի է եւ կամ բնաւ յայտնի չէ եւ որոնք ապրել ու գործել են ժողովրդի մէջ եւ ժողովրդի համար ազգային կեանքի զանազան ասպարէզներում: Չկայ ուրիշ մի հայ դպրոց, որ որակով ու քանակով այսքան շատ եւ այսքան կարեւոր դէմքեր տըւած լինի ազգին:

Aram webaram.com

Գէորգեան ճեմարանը գործեց 43 տարիներ անընդհատ։ Հիմնուելով 1874ին, Գէորգ Դ. Կաթողիկոսի ձեռքով, նա ընդմիշտ փակուեց Գէորգ Ե. Կաթողիկոսի օրով, Ռուսաստանի յեղափոխութեան հետեւանքով։ Ցարական կառավարութիւնը մէկից աւելի անգամներ փորձեց իր հակակշռի տակ առնել ճեմարանը, ինչպէս եւ միւս հայ դպրոցները, բայց չյաջողեց՝ հանդիպելով Հայ ժողովրդի դիմադրութեան։ Ինչ որ չկարողացան անել ցարերը, արին նրանց յաջորդ՝ կոմիսարները։

Ճեմարանը եւ թեմական դպրոցները, ըստ Պոլոժենիէի, հոգեւոր վարժարաններ էին՝ նպատակ ունենալով հայ հոգեւորականներ պատրաստել եւ Հայ ժողովրդի հոգեկան մակարդակը բարձրացնել։ Փաստօրէն, սակայն, նրանք ազգային աշխարհիկ ուսումնարաններ էին։ Ճեմարանից, օրինակ, շուրջ 200 աշակերտներից, մինչեւ հաշուով, տարեկան հազիւ մէկ–երկու հոգեւորական էր դուրս գալիս, իսկ լինում էին տարիներ, երբ շրջանաւարտներից ոչ մէկը հոգեւոր կարգ չէր ընդունում։ Ճեմարանը եւ թեմական դպրոցները, որոնց մէջ ամէն տարի սովորում էին, մինչեւ հաշուով, առնուազն 2000 աշակերտներ, տալիս էին, հայկական տեսակէտից, ազգային առողջ կրթութիւն ու դաստիարակութիւն, որ չէր համապատասխանում ցարերի ռուսացման քաղաքականութեան։

Հայաստանի Հանրապետութեան օրով, համալսարանի հիմնումով, նախկին ձեւի ճեմարանի պէտքը չզգացուեց, նրա որակեալ ուսուցիչները՝ Մ. Աբեղեան, Գարեգին Եպ. Յովսէփեան, Յ. Մանանդեան եւայլն, դարձան համալսարանի փրոֆէսօրներ, եւ ճեմարանը չվերաբացուեց, թէեւ էջմիածինը իրաւունք եւ հնարաւորութիւն ունէր վերաբանալու։ Խորհրդային յեղաշրջումից յետոյ, էջմիածինը այլեւս ոչ իրաւունք ունէր եւ ոչ հնարաւորութիւն վերաբանալու Գէորգ Դ.ի հիմնած ճեմարանը։ Այն՝ ինչ որ դոյութիւն ունի այժմ էջմիածնում, Գէորգ Զ. Զէօրէքլեան Կաթողիկոսի հաստատած Գէորգեան ճեմարան անունով, ծաղրանկարն է նախկին Գէորգեան ճեմարանի՝ անընդունակ թէ ծրագրով եւ թէ ոգիով նախկին ճեմարանականների նման սերունդ պատրաստելու։

Ճեմարանական, արեւելեան իրականութեան մէջ, նշանակում էր, ուսեալ, բազմակողմանի հայագէտ, ազգային գաղափարներով տոգորուած եւ ազգին ծառայելու պատրաստակամ մտաւորական։ Անուրանալի է ճեմարանի լուսաւորիչ եւ յեղաշրջիչ դերը հայ կեանքի բոլոր բնագաւառներում։

Aram webaram.com



ՄԷԿ ՆՄՈՑՇ ՃԵՄԱՐԱՆԻ ԼՍԱՐԱՆՆԵՐԻՑ.— (Ոտի՝ ձախից առաջինը՝ կարապետ Բարունակեան, երրորդը՝ Ա. Վռամեան: Նստածներից ձախից չորրորդը՝ Արտաշէս Տէր Անդրէասեան, 1896ի Սամաթիոյ հերոսական կռիւի ընտիրներից: Նստած, ձախից առաջինը՝ Լ. Շանթ, երկրորդը՝ Յովհաննէս Զարիփեան):

Aram webaram.com

V.— ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ահա այս դպրոցն էին ուղարկել ինձ Պր. Քիւրկեանը եւ Գէորգ սարկաւագ Զէօրէքլեանը:

Այս էր ինձ համար ճակատագրի սահմանած աղբիւրը լոյսի...


Գէորգեան ճեմարանում իմ անցկացրած վեց տարիների մասին ես առիթ ունեցել եմ դրելու «Կեանքի Ուղիներով»ի Ա. հատորում՝ «Կոմիտասի հետ», «Արտաշէսի լանջին», ինչէս նաեւ յուշերիս մէջ Հայրիկի մասին: Եթէ ես կեանքումս որեւէ մի լաւ բան եմ արել Հայ ժողովրդի համար, այդ ամէնը պարտական եմ ճեմարանին, ուր կազմաւորուեց իմ նկարագիրը, ուր ես կարողացայ խորացնել իմ մտաւոր զարգացումը, ձեռք բերել սեփական աշխարհայեացք, լայնացնել մտքիս հորիզոնը:

Եթէ ես փորձէի մանրամասն ներկայացնել ճեմարանական կեանքիս օրերը, հազիւ թէ արտակարգ մի բան կարողանայի պատմել. երեւութապէս, երեւի դիշերօթիկ դպրոցի սովորական պատկեր, բայց մթնոլորտը, դոնէ ինձ համար, բացառիկ երեւոյթ ունէին:

Նախ՝ միջավայրը: Էջմիածինը գտնւում է Արարատեան դաշտի սրտում. իսկ Արարատեան դաշտը, Մասիսի եւ Արագածի հովանու ներքեւ, Հայաստանի սիրտն է, հարուստ ամէն քայլափոխին պատմական յուշարձաններով եւ պատմական յիշատակներով: Այստեղ էին, աւերակների տակ, հայ հին քաղաքակրթութեան հետքերը, Հայոց պանծալի մայրաքաղաքները, Հայ ժողովրդի անցեալ փառքը յիշեցնող յուշարձանները, նշանաւոր ուխտավայրերն ու վանքերը, Էջմիածին, Հռիփսիմէ, Գայեանէ, Շողակաթ, անդին Գեղարդ, Խորվիրապ, Օշական, Զուարթնոց, որ դեռ ծածկուած էր թանձր հողով: Աւելի հեռու՝ Հաուիճ, Հաղրատ, Սանահին եւ պերճաշուք Անին ապառոր, Սեւան, ուր դեռ պայքարը հին եւ նոր աստուածների միջեւ չէր վերջացած, Տաթեւ իր պատմական անապատով եւ չարժական սիւնով...

Էջմիածնից դէպի հարաւ՝ Սուրմալուն եւ Կողբը, ուր բանաստեղծ ժողովուրդը չարունակում էր ստեղծագործել երգեր: Մասիսից եւ Բարթողեան լեռնաշղթայից այն կողմ՝ Աւետեաց երկիրը՝ նոյնպէս հարուստ պատմական վառուռտը անցեալով, աղգային յիշատակարաններով եւ ուր երկիրը՝ նոյնպէս հարուստ էր աղգային յիշատակներով եւ ուր Հայոց ժողովուրդը տառապում էր անօրէն Թուրքի լծի տակ՝ ազատութիւն երազելով: Ուր հայ քաջերը ա-

Aram webaram.com



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Aram webaram.com

բիւն էին թափում հերոսական կռիւներում, եւ ես էլ պատրաստւում էի իմ արիւնը խառնել նրանց արեան հետ... Սասունի ազատութեան համար:

Աբարատեան դաշտի մէջտեղից հոսում էր Մայր Արաքսը: Լաւին հեղինակը նրան կոչել է կամուրջներ չհանդուրժող Արաքս. բայց այստեղ նա մեղմ ու խոնարհ էր Աբարատեան դաշտի դոմէշների պէս, պղտոր ու ողմուռ: Եթէ կանգնէիր Մայր Արաքսի ափին՝ դէմքդ դէպի հարաւ եւ դանդաղ դառնայիր դէպի աջ, ականատես կը լինէիր սքանչելի մի համայնապատկերի. Մասիսը իր անպատմելի վեհութեամբ, որից դէպի աջ, ուղղի կարաւանի պէս, ձգւում են Բարթողեան լեռները կողքի աղահանքի սուր դագաթով: Դէպի աջ՝ Արագածը արդաւանդ, ջրառատ, սիրնքը Հայոց Աչխարհի իր հայացատ դիւղերով: Միչտ դէպի աջ՝ Արայի լեռը սիրուն, Արմաղանի լեռները Երեւանից վեր, Գեղարդի ձորը իր բարձունքներով, կարմիր լեռը՝ դէպի Վայոց ձոր եւ մի նեղ անցք Շարուրի ուղղութեամբ:

Ամէն առաւօտ, երբ գնում էինք աղբիւրի մօտ լուացուելու, եւ ամբողջ օր, առաւօտից մինչեւ երեկոյ, այս ներդաշնակ համայնապատկերը մեր աչքի առջեւն էր: Միակ աննկարագրաշնակութիւնը վանքն էր՝ իր միաբաններով, բայց վանքը ամէն տեղ էլ վանք է:

Վանքում կաթողիկոս Խրիմեան Հայրիկը իր վանեցիներով իրեն համար էր, հին միաբանները՝ իրենց համար, նորերը՝ առանձին՝ բաժնուած թայֆաների եւ ենթաթայֆաների, յարաբերւելու եւ պայքարի մէջ միմիանց հետ, հացի եւ պաշտօնի համար: Սակաւ էր թիւը զաղափարապաշտ, հաւատաւոր, անձնուէր եւ մաքուր հոգիների, որոնց համար սրբութիւնը սրբութիւն էր:

Վանքի եւ ճեմարանի մէջեւ քաշուած էր քարէ բարձր պատ: Մի երկաթէ դուռ միայն ծառայում էր, իրրեւ անցք ճեմարանից դէպի վանքը: Դրան վերեւ կախուած էր նշանաւոր ազդարարը, որի հնչիւններով զարթնում էին վանք ու ճեմարան ամէն առաւօտ: Բնթախտաբար, դուռը այնքան լայն չէր, որ վանական բարքերը ազատ մուտք գործէին ճեմարան:

Ճեմարանը ապրում էր իր սեփական մթնոլորտով: Խօսքերով դժուար է պատկերացնել այդ մթնոլորտը, որ անչօշափելի էր, բայց զգացւում էր միչտ եւ ամէն բանի մէջ:

Մեր մեծ ուսուցիչ Ռոստոմը ասում էր. «Կանգնեցրէք չարքով տասը հոգի, եւ ես, դէմքերին նայելով, կ'ասեմ՝ սա դաշնակցական

Aram webaram.com

է, սա հնչական է, սա՝ պահպանողական: Թէ Աստուածդ սիրէք, մի հարցնէք, թէ ի՞նչ է դրանց յատկանիշը...»:

Ի՞նչ էր ճեմարանական մթնոլորտի կամ ճեմարանական ոգու յատկանիշը, թէ Աստուածդ սիրէք, մի հարցնէք. չեմ կարող մատչելի ձեւով բացատրել, բայց որ այդ մթնոլորտը եւ ոգին կային, կասկածից վեր է: Հիմքը, թերեւս, կարելի է ասել, աղգասիրութիւնն էր. սէրը եւ նուիրումը ամէն բանի, որ հայկական էր: Հայ անցեալ, հայ ապագայ, հայ մշակոյթ, հայ արուեստ, Հայութիւն՝ այս ամէնով յագեցած էր ճեմարանի մթնոլորտը:

1900 թ. Սեպտեմբեր ամսի առաջին օրերն էին, որ, քննութիւնից յետոյ, ես ընդունուեցի ճեմարանի չորրորդ դասարանը: Թեմական դպրոցի տուած վկայականին նայելով՝ ինձ պէտք է նըստեցնէին երրորդ դասարանը, բայց դրին չորրորդը, երեւի, նաեւ այն պատճառով, որ ես մարմնով տարիքիցս աւելի մեծ էի երեւում: Քննութեան պահուն մի զաւեշտական դէպք, որ բաւական խնդացրեց ընթերակայ ուսուցիչներին, հատանաբար, նոյնպէս ազդեց իմ քննութեան արդիւնքի վրայ:

Հայոց պատմութեան քննիչն էր Ստ. Կանայեանը, որ մատցրիւ մարդ էր: Նա ասաց, որ պատմեմ Վարդանանց պատերազմի մասին: Երբ ես անսայթաք վերջացրի պատմութիւնս, հարցրեց.

— Հապա, ասա տեսնենք, այն ո՞ր թագաւորն էր, որ երբ գերի տարուեց Պարսկաստան, ասաց. «Ես, Արշակ թագաւորս...»:

— Արշակը, պատասխանեցի ես, առանց սպասելու, որ վերջացնէ խօսքը:

— Ապրիս, ասաց Կանայեանը, առանց հասկանալու, թէ ինչու էին ծիծաղում ընթերակաները:

Ճեմարան ընդունուելուս յաջորդ օրն իսկ մեր հանդերձապահ վարպետը, վարից վեր փոխեց վրայիս հագուստը: Ճեմարանն ունէր իր տարազը Գէորգ Դ.-ի կողմից հաստատուած, կապտաւուն մահուդից բաճկոն եւ անդրավարտիկ, բասքեան բեռէի եւ մշեցիների քոլոզի մէջառեղը բռնող մի փէս, եւ իբրեւ վերարկու, հոգեւորականի սեւ սքեմ: Ամառ ձմեռ այդ էր ճեմարանականների հագածը:

Այդպէս զուգուած ես դուրս եկայ վարպետի սենեակից՝ այլեւս վեց տարի վանական սքեմ կրելու համար: Եւ երբ, աւարտելուց յետոյ, առաջին անգամ վրաս առի քաղաքացիական հագուստ, ինձ թւում էր, թէ մերկ եմ ման գալիս, եւ ամբողջ աշխարհ ինձ է նայում զարմացած:

Aram webaram.com

Ճեմարանի ներքին կեանքը միօրինակ էր։ Առաւօտ ժամը 6ին, բոլոր աշակերտները արդէն ոտքի վրայ էին։ Փոքրերը լուացւում էին ներսը, ննջարանի լուացարանում. մեծերը՝ բակի աղբիւրից, Եւրոպայի կողքին, Մասիսի դիմաց։ Եւ մինչեւ ժամը 7 սերտողութիւն՝ վերակացուների հսկողութեան ներքեւ։ Լսարանցինները դասարաններում էին սերտողութիւն անում։ Ապա չարք-չարք գնում էին ճաշարան նախաճաշի՝ մի բոմբի հաց, մի Հիմկո բաժակ թէյ, մի քիչ պանիր, իսկ պաս օրերին խաշած կարմիր լոբի կամ գետնախնձոր։ Ժամը 8ից 10 րոպէ պակաս՝ աղօթք վերեւի միջանցքում։ Ճիշդ ժամը 8ին սկսւում էին դասերը։ Ժամը 12ին ճաշ, որից յետոյ մի ժամ հանգիստ եւ նորից դաս երկու ժամ։ Ժամը 5–7 սերտողութիւն՝ փոքրերը սերտարանում, մեծերը՝ դասարաններում կամ դուրսը, պարտիզում։ Ժամը 7ին ընթրիք։ Փոքրերը անկողին էին մտնում ժամը 8ին, մեծերը իրաւունք ունէին մինչեւ ժամը 10–11 պարապել դասարանում։

Հաստատուն կարգի տակ դրուած, միապաղաղ, զօրանոցային կեանք էր, որ ընդմիջւում էր տօնական հանդէսներով կամ չնախատեսուած դէպքերով։ Այսպէս, դեռ հազիւ մի քանի շաբաթ էր անցել իմ ճեմարան ընդունուելու օրից, էջմիածին եկաւ Պարսից Մուզաֆէր էդդին շահը, որ վանք պիտի մտնէր ճեմարանի բակից, ուր նրան համակրական ընդունելութիւն ցոյց պիտի տրուէր։ Համարեա մի շաբաթ ճեմարանի կեանքը խանգարուեց։

Մեր դասարանը, իր կազմով, ճեմարանի մանրանկար պատկերը կարելի էր համարել. աշակերտներ կային համարեա հայաբնակ բոլոր շրջաններից՝ Արարատեան դաշտից, Կարսից, Ախալքալաքից, Քութայիսից, Գանձակից, Ղարաբաղից, Զանգեզուրից, Դարալագեազից, Գողթնից, Սալմաստից, Ղազուինից, Վասպուրականից, Տարօնից, Եողղաթից, Նոր Նախիջեւանից, եւայլն։ Դաստիարակն էր կոմիտաս Վարդապետը, որ մեզ հետ մնաց մինչեւ մեր աւարտելը։

Կոմիտասի շնորհիւ մեր դասարանը, յաճախ, դասերից յետոյ կամ տօն օրերին պատյտի էր գնում Վաղարշապատի այգիները, մօտիկ դիւղերը կամ Արարատեան դաշտի հետաքրքրական վայրերը։ Այս պատյտները, Կոմիտասի ընկերակցութեամբ, ոչ միայն հաճելի զբօսանք էին, այլեւ մի տեսակ դաս Հայոց պատմութեան եւ Հայաստանի բնութեան մասին։ Այս պատյտները մենք կոչում էինք «գիտական արշաւ»։

Ծննդեան եւ Զատկի տօներին ճեմարանցինները աւելի մեծ, գիտական արշաւներ էին կազմակերպում։ Այսպէս, մի ամառ մենք մի

Aram webaram.com

խմբով հիւր եղանք Ներսէս Վարդ. Մելիք-Թանգեանին, Տաթեւի վանքում եւ ամբողջ Զանգեզուրը ոտքի տակ տուինք:

— Ուսումնասիրեցինք, հեղնում էր Ներսէս Հայր Սուրբը:

Մի ուրիշ ամառ մենք անցկացրինք Հառիճում եւ չրջեցինք Աբրագածոտնի ու Շիրակի հայ գիւղերը, մի քանի օր մնալով Անիի աւերակների մէջ՝ Միքայէլ Վարդապետի հետ:

Անմոռանալի են այդ օրերը: Ակադ. Մառը եւ Թորոմանեանը արդէն սկսել էին պեղումների աշխատանքը Բագրատունեաց մայրաքաղաքում: Անիի «վանահայր» Միքայէլ վարդապետը դուրդուրանքով ցոյց էր տալիս յայտնագործուած ամէն մի առարկայ, ոգեւորութեամբ պատմելով աւերակ քաղաքի փառաւոր անցեալի մասին:

Այսօր Անին Թուրքի ձեռքն է, եւ Միքայէլ Հայր Սուրբի խնամքով պահած սրբազան քարերը ցրիւ են տրուած պիղծ ձեռքերով: Իր արիւնոտ պատմութեան ամբողջ տեւողութեան ընթացքին Թուրք ազգը մի հատ Անի կարողացե՞լ է ստեղծել...

Մթնոլորտը ինքնին բաւական էր, որ մեր մէջ զարգանար ազգային ոգին, բայց դրան մեծ չափով նպաստում էր եւ դպրոցական միջավայրը: Մեր ամբողջ ժամանակը անցնում էր կամ դասարանում, ուսուցիչների հետ, կամ մտաւոր զրոյցներով ու վէճերով եւ կամ ընթերցանութեամբ:

Ճեմարանի հարուստ մատենադարանը մեր տրամադրութեան տակ էր: Ես ունէի այն առաւելութիւնը, որ չուտով նշանակուեցի մատենադարանապետի օգնական, հետեւաբար, ամէն գիրք ու պարբերական մատչելի էր ինձ. եւ ես ազահութեամբ լափում էի ամէն բան: Կարող եմ առանց չափազանցութեան ասել, որ ճեմարանում ես կարդացել եմ բոլոր հայ մատենագիրների գործերը, գրեթէ բոլոր հայ հեղինակների երկերը, հայ պարբերական մամուլի մեծ մասը — «Հիւսիսափայլ», «Արծիւ Վասպուրականի», «Փորձ», «Արձագանք», «Մուրճ», «Լումայ», «Մշակ», «Նոր Դար», Պոլսի, Իզմիրի եւ Մխիթարեան հրատարակութիւնները, եւայլն:

Վերջին տարիներին յափշտակութեամբ կարդում էինք եւ ժողովրդական հրատարակութիւնները, մանաւորապէս «Դրօշակ»ը:

Հայերէն հրատարակութիւնից զատ մեր ընթերցանութեան առարկայ էին կազմում եւ ռուս եւ եւրոպական գրականութիւնն ու մամուլը:

Առանձնապէս ինձ գրաւում էին Վիկտոր Հիւկոն, Շէքսպիրը, Բայրընը, Սերվանդէսը, Լոնգֆելոյի Հայաւատը, Սենկեւիչը, Ադամ

Aram webaram.com

Միցկեւիչը: Տարաս Շեւչենկոյի ուկրայներէն «Կոբզար»ը դոց դիտէի:

Հայ հեղինակներից ոչ պակաս ինձ մտերիմ էին եւ ռուս գրողները, որոնց մէջ իմ սիրելին էին Պուշկինը եւ Գոգոլը: Ես ցաւում էի, որ Պուշկինի նման մի մեծ հայ բանաստեղծ չունէինք: Իմ աշխարհահայեացքի ձեւաւորման վրայ մեծ ազդեցութիւն են արել Միխայլովսկիի գործերը:

Հայ հեղինակներից իմ վրայ ամէնից ուժեղ ազդեցութիւն է ունեցել Րաֆֆին, որի մեծ վէպերը ճեմարանում ես կարդացել եմ մի քանի անգամ: Եւ այսօր էլ, ինձ թւում է, Րաֆֆին չարունակում է մնալ հայ ամենամեծ գրողը: Զկայ մէկը, որ գերազանցէր նրան:

Ընթերցանութիւնից դատ ժամանակ էինք գտնում եւ դրելու ու վիճելու համար: Ճեմարանցիք նշանաւոր վիճաբանող էին: Նրանց մասին հեղնանքով ասում էին. «Գնանք լճի ափ, վիճենք»: Ներսէսեան լիճը, ինչպէս եւ կողքին՝ Ներսէս Աշտարակեցու տնկած անտառը, մեր զբօսանքի սիրած վայրերն էին, ուր յաճախ լսւում էին իրար հետ վիճաբանող ճեմարանցիների բորբոքած ձայները: Ի դէպ՝ Ներսէսեան լիճը նաեւ վանքի միաբանների տեսակցութեան վայրն էր՝ Վաղարշապատի տիկինների եւ օրիորդների հետ:

Գրելու ասպարէզը, գլխաւորապէս, դասարանական թերթերն էին, ուր աշակերտները գրական փորձեր էին կատարում եւ շատ անդամ էլ խիստ քննադատութիւններ էին անում՝ հարուածելով տեսչից սկսած մինչեւ մախոխ եփող խոհարար Հայրոյին: Դասարանական թերթերը արդելուած էին — արդելուած պտուղը քաղցր է լինում — այդ պատճառով երբ յայտնագործում էին, խմբագիրներին սպառնում էր ծանր պատիժ: Արգելուած էր եւ լրագիրների մուտքը ճեմարան. այդ պատճառով մենք գաղտնի էինք կարդում ազատամիտ «Մշակ»ն ու պահպանողական «Նոր Դար»ը: Ամէն ճեմարանցու զբաղոց լեցուն էր արձակ եւ բանաստեղծական գրուածքներով, որոնք, աւա՛ղ, երբեք գրչից դուրս չէին գալիս: Ինչքա՛ն հանճարեղ երկեր կորան առանց լոյս աշխարհ տեսնելու...:

Հապա ուսումնասիրութիւննե՛ր... Ամէն ճեմարանցի առնուազն մի քանի հատ տետրակներ ունէր, ընդհանրապէս, շատ լուրջ ուսումնասիրութիւններով: Իմ դասընկեր Արամ Դադեանը հայերէն բառարան էր կազմում, որ պիտի գերազանցէր Հայկազեան բառարանը: Նա պարծենում էր, թէ հնարել է մի գործիք, որ ինքնաբերաբար բառեր էր հաւաքում գրքերից: Ա՛ռ այժմ գաղտնի էր պահում իր հրաշագործ գիւտը:

Aram webaram.com

Արամը նշանաւոր Խաչիկ Վարդապետ Դադեանի եղբայրն էր եւ դասարանում յայտնի էր իբրեւ փչող. մեր ուսուցիչները նրան ձեռք էին առնում:

Մեր ուսուցիչները — կարելի՞ է մինչ մոռնալ նրանց — այնքան նուիրում, այնքան սէր ու գուրգուրանք էին ցոյց տալիս դէպի ճեմարանը եւ ճեմարանի աշակերտութիւնը: Նոյնիսկ տեսուչ Կարապետ Կոստանեանը, որից մենք վախենում էինք եւ աչխատում էինք աչքին չերեւալ, նոյնիսկ այդ դաժան համարուած մարդը, ինչպէս վերջը հասկացանք, ամբողջ սրտով կապուած էր ճեմարանի եւ աշակերտութեան հետ:

Ինչպէս հաւատացեալը քահանայի դիմաց, ես ամօթով պէտք է խոստովանեմ, որ յանցաւոր եմ եղել Կոստանեանի առջեւ: Ճեմարանում ինձ թւում էր, որ նա առանձնապէս հալածում էր ինձ: Քանի՛-քանի անգամներ նա վերակացուներին խուզարկել է տուել իմ գրքոյը: Քանի՛ անգամ կանչել է ինձ մօտը, նայել է իմ գրքերն ու տետրակները եւ խիստ նկատողութիւն արել աննշան բաների համար: Ես հաւատացած էի, որ նա աւելի էր փնտռում ինձ ճեմարանից հեռացնելու համար: Ես նրան, կարելի է ասել, ատում էի:

Ճեմարանը աւարտելուց յետոյ, երբ ես Ալեքսանդրապոլում էի, ուր ապրում էր Կոստանեանը, մի օր փողոցում, մայթի վրայ, հանդիպեցի մեր տեսչին: Նա հայեացքը յառած ինձ՝ ակնյայտնի կերպով սպասում էր, որ բարեւեմ: Ես, տրուպս փանաքի պիտի ասէր մինչնադարեան վանականը, ուղղակի փախայ, եւ անցայ դիմացի մայթը: Վերջը լսեցի, որ նա վերադարձել է տուն եւ լացել դառն արցունքով: Եւ այժմ, ամէն անգամ, երբ յիշում եմ այդ ամօթալի դէպքը, սիրտս ճմլւում է, ամաչում եմ իմ վայրենի արարքից: Կոստանեանը, այդ բազմահմուտ, վաստակաւոր գիտնականը, ի հարկէ, ինձ թշնամի չէր, բայց այդպէս էր իր մանկավարժական հասկացողութիւնը...

Տարբեր մարդ էր նոյնպէս բազմահմուտ գիտնական մեր ուսուցիչ Մանուկ Աբեղեանը: Մենք՝ աշակերտներս գիտէինք, որ նա չի սիրում տեսուչ Կոստանեանին եւ այդ աւելի եւս բարձրացնում էր նրան մեր աչքում: Աբեղեանը մեզ աւանդում էր հայերէն լեզու եւ գրականութիւն: Նա հիանալի գիտէր իր աւանդած առարկան, ինչպէս եւ աշակերտներին սիրցնելու ձեւը: Արտաքինով կոշտ ու կոպիտ՝ զարմանալի քնքոյշ սիրտ ունէր. նաեւ մեզ հետ մտերիմ ընկեր էր. յարգելուց աւելի մենք նրան սիրում էինք. նա էլ սիրում էր ճեմարանը եւ աշակերտներին:

Aram webaram.com

Կարելի է ասել, սիրում էինք եւ Հայոց պատմութեան ու դերմաններէնի ուսուցիչ Ստեփանոս Կանայեանին, որ կենսուրախ ու բարի մարդ էր, բայց, որպէս դասատու, Աբեղեանից չատ թոյլ էր: Երբ դասը սովորած չէինք լինում, մէջտեղ էինք ձգում որեւէ մի հարց կամ անծանօթ մի բառ, օրինակ՝ «Պր. Կանայեան, ինչո՞ւ Աբարատը կոչւում է Մասիս», եւ ժամը անցնում էր բացատրութիւններով ու վէճերով:

Կանայեանը մի քանի ոտանաւորներ էլ գրել է Հայ Արմէն ծածկանունով եւ իրեն համարում էր Սասմայ ծռերի մասնագէտ: Աբեղեանը չատ էլ բարձր կարծիքի չէր նրա այդ մասնագիտութեան մասին:

Ինձ առանձնապէս մտերիմ էր Մ. Կանայեանը: Ես նրա հետ միասին աշխատել եմ Ագաթանգեղոսի ձեռագիրների համեմատութեան վրայ, որ լոյս տեսաւ Ղուկասեանի մատենաշարում Կանայեանի խմբագրութեամբ: «Նրա հետ աշխատել եմ»-ի տեղ աւելի համեստ կը լինէր ասել «նրա ձեռքի տակ աշխատել եմ»:

Սիրով ու երախտապիտութեամբ յիշում եմ եւ մեր յունարէնի ու պատմութեան ուսուցիչ Յակոբ Մանանդեանին, որ վերջը դարձաւ նշանաւոր պատմաբան: Բարձրահասակ, բարեկազմ, համակրելի դէմքով, միշտ կոճկուած ու լուրջ՝ մարդամօտ չէր, պաշտօնական էր աշակերտների հետ, բայց հիանալի ուսուցիչ էր: Ուսած էր ռուսական եւ գերմանական բարձրագոյն դպրոցներում եւ իր աւանդած առարկաները՝ յունարէն ու պատմութիւն, սիրելի էր դարձնում աշակերտներին: Նրա անունը մենք դրել էինք Գիգնոնտաչ:

Աշակերտներից մէկը կարդում էր Քսենոֆոնի մէկ կտորը:

— Քիրուէոտերու գիգնոնտաչ փայդոս դուոս...

— Ի՞նչ մասունք բանի է գիգնոնտաչ, Դաղեա՛ն, ցուցամատը պարզելով վեր՝ հարցրեց Մանանդեանը:

— Ածական է, անվրդով պատասխանեց Դաղեանը:

Մանանդեանը զարմացած նայեց երեսին եւ հարցրեց լուրջ.

— Ի՞նչ է նշանակում գիգնոնտաչ փայդոս դուոս:

— Երկու փայդոսի ածականը, չտապով պատասխանեց Դաղեանը:

Նոյնիսկ Մանանդեանը ծիծաղեց, եւ ցուցամատը մնաց օդի մէջ:

— Գիգնոնտաչ, գիգնոնտաչ բաչ է, նշանակում է ծնունդին, այսինքն՝ կիւրոս կրտսերին ծնունդին երկու երեխաներ:

Aram webaram.com

Եւ Մանանդեանի անունը մեզ համար մնաց Գիդնոնտայ:

Իմ յիշողութեան մէջ անմոռանալի է Մանանդեանի մէկ ճառը ուղղուած աշակերտներին՝ մի տօնական ճաշկերոյթի առթիւ: Նիւթն էր Հայ ազգի ներկայ վիճակը եւ ճեմարանականների պարտականութիւնը Ազգի հանդէպ: Այսօրուայ պէս հնչում են իմ ականջներում նրա ոգեշունչ խօսքերը.

— Մեր Ազգը տգէտ է, մեր Ազգը ճնշուած է, մեր Ազգը թշուառ է...

Եւ վերջը.

— Դուք պէտք է պատրաստուէք ամօքելու ազգի ցաւը: Ազգի յոյսն էք դուք...

Մեր սրտից էր խօսում նա, որովհետեւ մենք էլ համարում էինք մեզ Ազգի յոյսը:

Մանանդեանին չատ մտերիմ էր Սիրական Տիգրանեանը՝ մեր Ռուսաց պատմութեան, եկեղեցական իրաւունքի եւ հոգեբանութեան ու տրամաբանութեան դասատուն: Ռուսական համալսարանը նոր աւարտած, ասորական փառաւոր մօրուքով ու տկար աչքերով համակրելի մի երիտասարդ էր՝ Ալեքսանդրապոլի Տիգրանեան նշանաւոր դերդաստանից, եղբայրը կոյր երաժշտագէտ Նիկողայոս Տիգրանեանի: Նոյնպէս կոճկուած ու լուրջ մարդ էր, աշակերտների հետ չատ չէր յարաբերւում, բայց վայելում էր ամէնքի համակրանքը: Մենք սիրում էինք նրա դասերը:

Հայ եկեղեցական կալուածների գրաւման տարին էր: Ես ճեմարանի Դաշնակցական կազմակերպութեան կողմից պատգամաւոր էի կուսակցութեան Երջանայինի ժողովում, որ գաղտնի գումարուած էր Վաղարշապատի մեծ այգիներից մէկում: Եւ որքա՜ն եղաւ իմ զարմանքը, երբ տեսայ ժողովի նախագահ Սիրական Տիգրանեանին եւ նրա կողքին նստած Յակոբ Մանանդեանին:

Հետագային Յ. Մանանդեանը դուրս եկաւ Դաշնակցութիւնից եւ մնաց անկուսակցական, իսկ Ս. Տիգրանեան մինչեւ մահ մնաց Դաշնակցական: Իրրեւ Դաշնակցութեան թեկնածու ընտրուեց Պետական Դումայի անդամ: Եղաւ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործերի նախարար եւ Խորհրդարանի փոխ-նախագահ, ինչպէս եւ ուսուցչապետ Հայաստանի անդրանիկ համալսարանին:

Չեմ կարող չյիշել եւ բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանին, որ մեր ռուսերէն լեզուի եւ ռուս գրականութեան ուսուցիչն էր: Աղպղպեղ ճոխ մազերով, առոյգ եւ պատկառելի տեսքով, ուշադրաւ եւ կենսուրախ մարդ էր նա: Առաջին հայեացքից առիւծի

Aram webaram.com

տպաւորութիւն էր թողնում: Լազարեան ճեմարանի եւ Մոսկուայի համալսարանից չբջանաւարտ էր: Գիտէր հիանալի հայերէն եւ ռուսերէն, ինչպէս եւ դասական լեզուները: Ասում էին, որ Հոմերոսը բնագրից է թարգմանում հայերէնի, եւ ինքն էլ չէր ժխտում, բայց, կարծեմ, միայն խօսք էր: Վերին աստիճանի ծոյլ էր, եւ թղթախաղն ու որսորդութիւնը աւելի «գործնական» էր համարում, քան թէ դրականութիւնն ու դասատուութիւնը:

Հակառակ դրան, մենք սիրում էինք նրան, մանաւանդ նրա դրականութեան դասերը: Ինձ համար սիրելի էր նրա պաշտամունքը Պուշկինի հանդէպ: Ցաճախ, դասի ժամանակ, վարպետութեամբ արտասանում էր կտորներ Պուշկինից: Մի անգամ «Պոլտաւա» քերթուածը արտասանելիս մի տեղ կեցաւ. մոռացել էր մի բառ, ես խոկոյն յիշեցրի: Նա զարմացած վրաս նայեց եւ չատ ուրախացաւ, երբ իմացաւ, որ Պուշկինի այդ զմայլելի գործը ես դոց գիտէի:

Յովհաննիսեանը մեր շարադրութիւնները երբեմն տալիս էր սրբագրելու իր քրոջ, որ բարձր զարգացում ունեցող մտաւորական աղջիկ էր: Պատահում էր, որ մեր շարադրութիւնների սրբագրութեան գործին մասնակցում էին եւ Յովհաննիսեանի փոքր երեխաները. մեր շարադրութեան տետրակները վերադառնում էին երեխաների կողմից խազմզած եւ զանազան մանկական նկարներով: Յովհաննիսեանը կուշտ ծիծաղում էր, երբ ցոյց էինք տալիս իր զաւակների ստեղծագործութիւնները:

Պատմում էին, որ Կաթողիկոսի Նոր Տարուայ ընդունելութեան առթիւ Յովհաննիսեանը հեռը տարել է եւ Տիկին Յովհաննիսեանին, որ մի կարճահասակ, նիհար ու փխրուն կին էր:

— Ա՞ս է քո Թարլան եարը, այսքան պզո՞ւկ, կատակել է Հայրիկը:

— Ադամանդն էլ փոքրիկ է, վեհափա՛ռ, պատասխանել է բանաստեղծը եւ իրաւունք ունէր, որովհետեւ Տիկ. Յովհաննիսեանը ոսկի սրտի տէր կին էր եւ սքանչելի մայր: Յոնէ ես նրան այդպէս եմ ճանաչել:

Նոր Կտակարանի ներածութիւնը մեզ աւանդում էր Գարեգին Վարդ. Յովսէփեանը. Հին Կտակարանը յանձնուած էր իմ ազգական Յուսիկ Վարդ. Զոհրաբեանին, որ աւելի իր երկար բեխերի ու մօրուքի յարդարանքով էր զբաղւում, քան թէ դասերով: Գարեգին Վարդապետը, Գերմանիայից նոր վերադարձած, դիտուն եւ եռանդուն ուսուցիչ էր, բայց թէ՛ վանքում, թէ՛ ճեմարանում սիրուած չէր: Ղարաբաղցի էր...: Զգային բնաւորութիւն ունէր եւ դիմել էր

Aram webaram.com

Երեւանի նշանաւոր բժիշկ Յովհաննիսեանին, որ կոպիտ ու բաց խօսող մարդ էր: Ինձնէլուց յետոյ, բժիշկը ասել էր.

— Վարդապե՛տ, կնիկ պէտք է առնես, թէ չէ բանդ բուրդ է:

Գարեգին Վարդապետը սարսափահար պատասխանել էր.

— Ի՛նչ էք ասում, բժի՛շկ, ես Աստծոյ առջեւ ուխտել եմ կոյս մնալ:

— Որ այդպէս է, ինչո՞ւ էք եկել մօտս, դիմեցէք Աստծուն, ասել էր բժիշկը:

Գարեգին Վարդապետի պաշտած հերոսը Պօղոս Առաքեալն էր, որին համարում էր քրիստոնէութեան իրական հիմնադիրը: Նա մեզ հրճուանքով կարդում էր Պօղոս Առաքեալի Թուղթերը եւ յափշտակութեամբ խօսում Առաքեալի մասին:

— Պօղոս Առաքեա՛լը... Պօղոս Առաքեալը այսպէս, Պօղոս Առաքեալը այնպէս...

Անունը մնաց Պօղոս Առաքեալ:

Իրրեւ դասատու հմուտ մարդ էր: Սիրում էր եւ նուիրուած էր ճեմարանին, բայց մենք նրան չէինք սիրում:

Սիրում էինք, կարելի է ասել, պաշտում էինք Կարապետ Վարդ. Տէր-Մկրտիչեանին, որ ճեմարանի տեսուչն էր իմ եկած տարին եւ մեզ աւանդում էր աստուածաբանութիւն: Բարձր, յաղթանդամ, թուխ եւ մի քիչ կոշտ խոշոր դէմքով տղամարդ էր: Զոկ էր: Աստուածաբանութիւն եւ քրիստոնէութիւն էր ուսել Գերմանիայում: Լայն ու խորունկ զարգացման տէր, շատ կարդացած ու կարդացող, բնաւորութեամբ քաղցր՝ նա յարգուած ու սիրուած էր բոլորից, բացի... Կաթողիկոսից: Չէի հասկանում, ինչո՞ւ Հայրիկը չէր սիրում Գերմանիայում ուսածներին:

Բացի դասերից, Կարապետ Հայր Սուրբը զբաղուած էր եւ դիտական-գրական աշխատանքով: Նա պատրաստում էր Աստուածաշնչի նոր հրատարակութիւնը բնագիրների սրբագրութեամբ: Աստուածաշնչի թուղթն էլ արդէն ապահովուած էր, բայց վերջը գործը խափանուեց ի մեծ ցաւ Կարապետ Վարդապետի: Աստմ էին հին միաբանները բողոքել էին Հայրիկին, եւ սա վերջ էր տուել ձեռնարկին:

Կարապետ Վարդապետը եւ «Արարատ»ի խմբագիր էր, ուր սրամիտ բանակռիւ էր մղում «Մշակ»ի եւ, յատկապէս, նրա մեծաւոր աշխատակից Լէոյի դէմ, որ կատաղի եւ անվայել յօդուածներ էր գրում էջմիածնականների դէմ, վեղարը նմանեցնելով հըտպիտի թաղիքէ քօղին:

Aram webaram.com

Կարապետ Վարդապետը, սակայն, ճեմարանում երկար չմնաց. Կաթողիկոսի հրամանով նա կոչուեց վարչական պաշտօնի, ապա նշանակուեց Ատրպատականի թեմի առաջնորդ եւ մեռաւ կոյր աղիքի գործողութեան հետեւանքով: Հայոց Եկեղեցին կորցրեց մի մեծ դիտնական հոգեւորական:

Ճեմարանից արցունքով մեկնեց Կարապետ Վարդապետը: Լալիս էին եւ ուսուցիչներն ու աշակերտները: Նրա տեղը տեսուչ եկաւ Կարապետ Կոստանեանը:

Մեր երաժշտութեան ուսուցիչն ու դաստիարակը Կոմիտաս Վարդապետն էր: Ուսուցչից աւելի նա ընկեր էր մեզ համար՝ մտերիմ ու սիրելի: Կոմիտասի մասին ես երկար գրել եմ «Կեանքի Ուղիներով»ի մէջ(*). այստեղ ասեմ միայն, թէ Կոմիտասի ազդեցութիւնը մեր վրայ եղել է անսահման: Ճիշեմ նոյնպէս, որ Կոմիտասն էլ գոհ գնաց վանական հեղձուցիչ մթնոլորտին, ինչպէս եւ Կարապետ Վարդապետը:

Իբրեւ ուսուցիչ, ճեմարանում ունեցել ենք եւ դաւեչտական տիպեր: Այսպէս Կարապետ Վարդապետի տեսչութեան օրով փորձ եղաւ մտցնելու դիւղատնտեսութեան դասեր: Դասատու հրաւիրուեց Ամերիկայում դիւղատնտեսութիւն ուսած մի հոգեւոր: Շատ եմ ցաւում, որ մոռացել եմ նրա անունը: Կարճահասակ, աննշան թուխ դէմքով, ճղճիմ մի մարդ էր: Մսեղէն չէր ուտում. կերակրւում էր լոկ հացով, ընկոյզով, ձէթով, բանջարեղէններով ու պտուղներով: Մենք նրան առաջին օրից կոչեցինք Պատուելի: Պատուելիի առաջին դասը եղաւ հանդիսաւոր եւ բախտորոշ նրա ապագայի տեսակէտից:

Ճեմարանի ամենամեծ դասարանը լեցուած էր աշակերտներով: Առջեւը, աթոռի վրայ, բազմած էր տեսուչ Կարապետ Վարդապետը: Պատուելին դասը սկսեց կցկտուր ներածութեամբ դիւղատնտեսութեան նշանակութեան ու կարեւորութեան մասին եւ անմիջապէս անցաւ պարարտացման նիւթերին: Դիւղատնտեսութեան հիմքը, նրա կարծիքով, պարարտացումն էր եւ հողի պարարտացման հիմքը՝ աղբը: «Առանց աղբի հաց չուտուիր», յայտարարեց նա վճռական կերպով: Կարապետ Հայր Սուրբը ժպտաց, եւ դասարանը թնդաց հրհռոցից: Դասախօսը անվրդով չարունակեց նկարագրել կենդանիների աղբի տեսակներն ու յատկութիւնները եւ վերջացրեց.

— Հիմա դուրս գանք անասուններու աղբէն, յաջորդ անգամ կը մտնենք մարդկային աղբի մէջ...

(*) «Կեանքի Ուղիներով», Ա. հատոր, էջ 71:

Aram webaram.com

Նոր անասելի հրհռոց դասարանում:

Ճաշօրդ անգամ հազիւ 10–12 աշակերտ եկաւ դասի: Պատուէրին երկու տարի մնաց ճեմարանում՝ աւելի զբաղուելով արտի աճուններով ու Գայեանէ վանքի դոմերի կովերով, քան թէ դասերով: Ես մինչեւ վերջ էլ մնացի նրա հաւատարիմ աշակերտը եւ նրանից սովորեցի միայն կով կթել՝ պայմանով որ կաթը ուրիշները ուտէին:

Հայրիկի կարգադրութեամբ փորձ եղաւ եւ չերամաբուծութիւն մտցնելու ճեմարանում:

Դարձեալ Հայրիկի կարգադրութեամբ ուսուցիչ էր նշանակուել Բրուսայի գիւղատնտեսական վարժարանում ուսած մի կոկոզավիզ պարոն, որի անունը նոյնպէս մոքիցս փախել է: Հեռադրի սիւնի պէս երկար ու չոր, չիփ չիտակ, ճմռթկուած դէմքով, մինչեւ զազաթը ճաղատ, սակաւախօս մի մարդ էր, կարծես աշխարհի դէմ բարկացած: Սրա ապազան էլ որոշեց առաջին դասը:

Իր ներածութիւնը սկսեց Հրիմեան Հայրիկի փառաբանութեամբ: Ապա անցաւ աշլամային. «Աշլամային թութին ծառը, ասաց նա, չերամաբուծութիւն ըսել է»: Եւ հետը բերած արկղից հանելով թթենիի տերեւի վրայ դրուած չերամի որդը՝ սկսեց ցոյց տալով բացատրել, թէ ինչպէս որդից կազմւում է բոժոժը եւ բոժոժից դուրս է գալիս մետաքսի թելը այնպիսի ոգեւորութեամբ ու խրթին բառերով, կարծես Հայկ Դիւցազնը կարդալիս լինէր:

Դասից յետոյ աշակերտները երգում էին.

Աշլամային թութին ծառը,
Կեցցէ Հայոց վեհափառը...

«Աշլամային թութին ծառը» մէկ տարի միայն պաշտօնավարեց ճեմարանում:

Ինչպէ՞ս մոռանալ ու չյիշել նաեւ մեր վերակացուներէն, Պր. Յովսէփին եւ Պր. Ղազարեանին:

Յովսէփ Գրիգորեանը 9 տարի սովորել էր ճեմարանում եւ 10–11 տարի էլ ուսուցիչ–վերակացու էր. հեզ, քաղցրաբարոյ, ամբողջ էութեամբ զղրոցին եւ աշակերտութեան նուիրուած մարդ էր: Մենք նրան սիրում էինք, նա էլ սիրում էր մեզ: Աւելի ընկեր էր, քան թէ վերակացու: Նա մեր փրկիչն էր եւ ազատարարը ամէն անդամ, երբ նեղութեան մէջ էինք ընկնում:

Բոլորովին հակապատկերն էր Գէորգ Ղազարեանը, որ չգիտեմ ինչպէս ընկել էր ճեմարան: Կարեցի էր, ուսուցչական սեմինարիայի չրջանաւարտ եւ հայեցի կրթութիւն չունէր: Կարսում ու-

Aram webaram.com

սուցիչ էր եղել Կուկունեան արշաւանքի ժամանակ եւ մասնակցել էր Կուկունեան արշաւախումբի կազմութեան: Խիստ կարգապահութեան հետամուտ եւ պաշտօնական մարդ էր: Սիրում էր դործածել պաշտօնական բառը, այդ պատճառով նրա մասին ասում էինք.

— Պաշտօնական պաշտօնեայ Պարոն Ղազարեանը պաշտօնական պաշտօնին պաշտօնական պաշտօնակցին պաշտօնապէս պաշտպանեց:

Իր դործին նախանձախնդիր, աշակերտների ամէն քայլափոխին հետեւող, տեսչին հլու կամակատար՝ իսկապէս մենք նրան սիրելու պատճառ չունէինք, բայց սիրում էինք: Պատճառը դուցէ այն էր, որ Կուկունեանին դործակից էր եղել կամ, այն, որ դիտէինք, թէ Դաշնակցական էր:

Մենք, յաճախ, ձեռք էինք առնում նրան՝ օդտուելով նրա հայերէնի տկարութիւնից:

— Պարոն Ղազարեան, ի՞նչ է նշանակում կածան:

— Կածա՞ն, կածա՞ն, մօրուքը շփելով պատասխանում էր նա. կածան նշանակում է քոթոթ, արջի ձագ:

— Բայց, Պարոն Ղազարեան, Հայկազեան բառարանում ասուած է՝ լեռնային նեղ ճանապարհ...

— Դէ՛, ես էլ հէնց այդ եմ ասում, լեռնային նեղ ճանապարհ, որով անցնում են քոթոթները...

Ղազարեանը «չդիտեմ» բառը չդիտէր. ամէն հարցի պատասխանը ունէր:

Արշաւիր Տէր Մկրտիչեանը քիչ մնաց դրան զոհ դնար. նա հնարել էր մի բառ մի թի թրիֆ բառերից եւ մի օր հարցրեց.

— Պարոն Ղազարեան, ի՞նչ է նշանակում յունարէն միթիթրիֆ բառը:

Ղազարեանը անմիջապէս պատասխանել էր.

— Միթիթրիք յունարէն միթոս բառից է. նշանակում է...

Չեմ յիշում, Պր. Ղազարեանի վերագրած նշանակութիւնը նորահնար բառին, բայց Արշաւիրը անզդուշութիւն էր ունեցել իր խաղը պատմելու ընկերներին, եւ լուրը հասել էր Կոստանեանի ականջը: Մարդ մնաց, որ Արշաւիրին հեռացնէին ճեմարանից, մանաւանդ որ նրա վարքի նիշը այնքան էլ բարձր չէր:

Գ. Ղազարեանը դասաւանդում էր թուաբանութիւն եւ որպէս ուսուցիչ պարտաճանաչ էր ու բարեխիղճ: Իրրեւ հասարակութեան անդամ նա վայելում էր ամէնքի համակրանքը:

Aram webaram.com

Վերջը ես զարճայ Գէորգ Ղազարեանի հետ պաշտօնակից Հ. Յ. Դ. Բիւրոյի եւ Հայաստանի կառավարութեան մէջ: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ նա տարագրուեց Թումանիա եւ Երկրորդ Համաշխ. Պատերազմի վերջին աքսորուեց Թուրաստան, ուր եւ մեռաւ խոր ծերութեան մէջ:

Մինչեւ 1904 թուականը արտաքին կեանքը շատ չէր թափանցում ճեմարանից ներս: Եւ ուսուցիչ ու աշակերտ ապրում էին անվըրդով ու համերաշխ: Եկեղեցական կալուածների գրաւման առաջ բերած յեղափոխական յուզումը յափշտակեց եւ ճեմարանցիներին, որոնք բաժանուեցին հակամարտ հատուածների, ըստ քաղաքական համոզման:

Հայ-թաթարական կռիւները եւ ապա Թուրաստանի յեղափոխական շարժումները այլեւս բոլորովին խանգարեցին ճեմարանի ներքին կեանքի բնականոն ընթացքը: Երեւան եկան քաղաքական կուսակցութիւններ եւ կուսակցական պայքար, բաժանումներ ու վէճեր քաղաքական դետնի վրայ, որոնք, յաճախ, սուր ձեւեր էին առանում:

1904-6 թուականներին ճեմարանի ուսուցչութեան մեծ մասը պահպանողական էր. Կարապետ Կոստանեան, Գարեգին, Կոմիտաս եւ Ծուռիկ վարդապետներ, Մ. Աբեղեան, Սէթ. Ցարուխիւնեան, Ստ. Կանայեան, Ցովհ. Ցովհաննիսեան, եւայլն, անկուսակցական-պահպանողականներ էին: Սիրական Տիգրանեան, Ցակոբ Մանանդեան, Գէորգ Ղազարեան՝ դաշնակցական, մնացեալները անորոշ:

Աշակերտութեան կէսից աւելին դաշնակցական էր. կային փոքրաթիւ հնչակեաններ, մի քանի հոգի իրենց սոցիալ դէմոկրատ կարծողներ, եւ մնացեալը — սրանց մենք համարում էինք անգիտակից ճահիճ կամ մոլորեալ ոչխարներ:

Հակառակ պահպանողական ղեկավարութեան, ճեմարանը դաշնակցական էր: Կովկասում այս նկատուած երեւոյթ էր. պահպանողական կամ հակայեղափոխական ղեկավարութիւն ունեցող դպրոցներից, դուրս էին գալիս դաշնակցականներ: Ընդհակառակը, երբ ղեկավարութիւնը անցնում էր դաշնակցականների ձեռքը, յաճախ, աշակերտները դառնում էին հակառակորդ: Այդպէս պատահեցին, օրինակ, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում, Ա. Ահարոնեանի տեսչութեան չրջանում եւ յաջորդ տարիներին երբ ուսուցիչ էին՝ Գ. Ջամակը, Աբր. Աբեղեանը, Ա. Ջամալեանը եւ ուրիշ դաշնակցականներ: Ամենակատաղի բոլշեւիկները Ներսիսեան դըպ-

Aram webaram.com

բոցից դուրս եկան եւ ամենահամոզուած դաշնակցականները՝ Գէորգեան ճեմարանից...

Ճեմարանի դաշնակցական կազմակերպութիւնը հարիւրից աւելի անդամներ ունէր՝ բաժանուած խմբերի: Ամէն խումբ ունէր իր խմբական ժողովից ընտրուած խմբապետը, քարտուղարը եւ հաւաքիչը, որոնք կազմում էին խմբի վարչական մարմինը: Վարչական մարմինների ընդհանուր ժողովում ընտրւում էին ճեմարանի դաշնակցական կազմակերպութեան նախագահը եւ դեկավար մարմնի անդամները, որոնք վայելում էին ենթակոմիտէի իրաւունքներ: Վերջին տարիները անփոփոխ՝ ես էի ընտրւում նախագահ: Փոխնախագահը Սահակ Թորոսեանն էր՝ Գրիչ ծածկանունով: Միւս անդամների անունները մոռացել եմ դժբախտաբար:

Սկիզբի շրջանում խումբերը խիստ գաղտնի էին, եւ մէկ խումբի անդամները ծանօթ չէին միւս խումբերի անդամներին: Իրար ծանօթ էին միայն խմբապետները, որոնք կապ էին պահում, դեկուցում տալիս եւ հրահանգներ ու գրականութիւն էին ստանում նախագահից: Այս վերջինը յարաբերութիւն էր պահում, դեկուցում տալիս եւ հրահանգ ու գրականութիւն էր ստանում Վաղարշապատի կոմիտէից:

Վաղարշապատի կոմիտէն յատուկ ներկայացուցիչ էր նշանակում ճեմարանի դաշնակցական կազմակերպութեան համար: Սա պատասխանատու էր ճեմարանի կուսակցական գործերի համար: Մի ժամանակ կոմիտէի ներկայացուցիչն էր հին յեղափոխական Օհանջանեանը, ապա՝ ուսուցիչ Սիմոն Գեաբկայեանը, վերջը եղաւ վանքի միաբան Մկրտիչ Մուրատեան Սարկաւագը, որ վատ վերջացրեց իր կեանքը:

Սարկաւագ Մկրտիչ Մուրատեանը, որի անունը մենք դրել էինք Բորենի, չէր վայելում մեր վստահութիւնն ու յարգանքը: Մենք նկատել էինք, որ նա, յաճախ, տեսակցութիւն էր ունենում կասկածելի մարդկանց հետ եւ բողոքել էինք կոմիտէին, բայց անօգուտ. Բորենին մնում էր գործի վրայ: Երբ ես, ճեմարանը աւարտեցի յետոյ, ուսանող էի Պետերբուրգում, Բորենին հանդիպեցի այնտեղ, ուսանողական հագուստով: Աւում էր, թէ ուսանող էր Հոգեբնաբոսական ինստիտուտում: Հայկական շրջաններում քիչ էր երեւում, աւելի ռուս ուսանողների, բայց, մանաւանդ, ուսանողուհիների հետ էր: Հակառակ որ աբարանցի աղքատ դիւղացու զաւակ էր, դրամի նեղութիւն չէր քաշում:

Aram webaram.com

1917 թուին, յեղափոխութիւնից յետոյ, երբ բացուեցին ժանդարմական արխիւները, յայտնի դարձաւ, ի միջի այլոց, որ Մկրտիչ Սարկաւագ Մուրատեանը — մեր Բորենին — գաղտնի ոստիկանութեան վճարովի լրտես է եղել: Բորենիի հետ վարուեցին այնպէս, ինչպէս վարւում են բորենիների հետ...

Ճեմարանի դաշնակցական խումբերը զբաղւում էին գլխաւորապէս յեղափոխական հարցերի քննութեամբ, յեղափոխական գրականութեան ուսումնասիրութեամբ եւ դաշնակցական գաղափարների քարոզչութեամբ գիւղերում, արձակուրդի օրերին: Երբեմն, կոմիտէի հրահանգով, շրջիկներ էինք ուղարկում մօտակայ գիւղերը: Այս մարզում առանձնապէս յաջող էր Գրիչը՝ Մահակ Թորոսեանը, որ պերճախօս հռետոր էր եւ գիտէր գիւղացիների մտքին ու սրտին մօտենալու ճեւը:

Ամէն խումբ ունէր իր անունը՝ Դաշոյն, Վրէժ, Սասուն, եւլն.: Խմբերից մէկը՝ Զանգիբասարի աւազակաբարոյ Զօրանքեարա թըրքական գիւղի անունով, կոչւում էր Զօրանքեարա:

Այս խումբը, որի խմբապետը Վաղարշակ Ատովմեանն էր, յատուկ պաշտօն ունէր. կազմակերպութեան աչքն ու ականջն էր լինելու եւ մարտական բոլոր ոյժը միաժամանակ: Նրա միջոցով էին կատարւում հակահետախուզական եւ պատժական գործերը: Երբ մէկը, ճեմարանի շրջանակում, յանցաւոր արարքի մէջ էր գտնւում Դաշնակցութեան հանդէպ, մէկ էլ տեսնես մի մութ անկիւնում, փառաւոր տփոց էր ուտում: Ամէնքը գիտէին, որ Զօրանքեարայի գործն էր այդ եւ զգուշանում էին...

Մի մութ գիշեր էլ Բորենի Սարկաւագի քիթ ու պռունգն էին ջարդել ճեմարանին կից փողոցում: Ոստիկանութիւնը խիստ քննութիւն նշանակեց, բայց չկարողացաւ ծեծողների հետքը գտնել: Զօրանքեարայի մի քանի անդամների գործն էր այդ:

1905 թուի վերջերը, Ռուսաստանի յեղափոխական շարժման ալիքները ներխուժեցին եւ ճեմարան: Դաս եւ դիրք այլեւս կորցրին իրենց հրապոյրը. կեանքը նոր պահանջներ էր դնում:

Հոկտեմբեր 17ին, ցարական հրովարտակով, Ռուսաստանին տրւում էր Սահմանադրութիւն: Կեանքի էր կոչւում Պետական Դուման, օրէնսդրական, սահմանադրական իրաւունքներով: Ազատամիտ մտաւորականութիւնը, բանուոր դասակարգն ու գիւղացիութիւնը, ուսանողութիւնը, յեղափոխական կուսակցութիւնները գոհ չէին այդքանով: Պահանջում էին քառանդամ դրութեամբ ընտրուած խորհրդարան, հողային հարցի եւ աշխատաւորական արմատական

Aram webaram.com

բարեփոխութիւններ: Հրապարակը ողողուած էր բրոշիւրային դրականութեամբ: Տեղի էին ունենում ժողովներ, ուր երիտասարդութիւնը յեղափոխական ճառեր էր խօսում բրոշիւրներից քաղած ծայրայեղ դաղափարներով:

Մեզ ճեմարանցիներիս համար անակնկալ էր այդ ամէնը: Թէեւ Դաշնակցութիւնը արդէն ընդունել էր Կովկասեան գործունէութեան նախագիծը, սոցիալիզմով հանդերձ, բայց ճեմարանը դեռ ապրում էր ազգայնական մթնոլորտում: Գաղտնի հանդէսներում, Վաղարշապատի այգիներում, մենք ոգեւորուած խօսում էինք Յունաստրում եւ Սասունում դաշնակցական հայդուկների գործած քաջութիւնների մասին, եւ դաշնակցական աղջիկները խելայեղ ծափահարում էին մեզ: «Ցաւելեալ արեան» փիլիսոփայութիւնը վճռական կերպով դեռ իշխում էր մեր մտքերի վրայ, մինչդեռ արդէն դրսից եկող ուսանողները խօսում էին «յաւելեալ արժէք»ի մասին, եւ մեր աղջիկները դրանց էլ էին ծափահարում՝ հետզհետէ աւելի ուժեղ:

Ճեմարանում մենք ծանօթ չէինք նոր դրականութեան ու նոր լեզուին: Եկուոր ուսանողութեան հետ վիճելիս, դրեթէ միշտ պարտուողը մենք էինք լինում: Մարքսը այսպէս է դրում, Պլեխանովը այն է ասում, վախտ բրոշիւրներից անհաշիւ վկայութիւններ էին բերում նրանք ի հիացումն մեր աղջիկների, եւ մենք անզօր էինք ջախջախիչ հակահարուածը տալու Մարքսերին ու Պլեխանովներին: Բաֆֆին ու Քամար Քաթիպան այլեւս բաւական չէին, անհրաժեշտ էր զինուելու նոր զէնքերով, այլապէս ոտքի տակ կ'երթայինք: Ինդիրը միայն մեր աղջիկները չէին, երիտասարդութիւնն էլ ապահովութեամբ ականջ էր դնում դրսից եկող ուսանողներին եւ սկսում էր տատանուել «յաւելեալ արեան» եւ «յաւելեալ արժէքի» միջեւ:

Ես հաւաքեցի, ինչքան որ կարող էի, ռուսերէն բրոշիւրներ եւ սկսեցի կարդալ, «ուսումնասիրել»: Իմ ուսումնասիրածը բացատրում էի եւ մեր խումբերում: Աստիճանաբար մենք էլ սկսեցինք արտայայտուել «յաւելեալ արժէքի» լեզուով, առանց, սակայն, դաւանանելու «յաւելեալ արեան»: Երբ Ղարաբաղից ու Զանգեզուրից էջմիածին եկաւ բժ. Լեւոն Աֆթաբէդեանը, որ այն օրերին Բագուի մեր երիտասարդութեան կուռքն էր, ես ճամարանի մեր կազմակերպութեան կողմից խնդրեցի նրան դասախօսութիւն կարդալու ճեմարանի աշակերտութեան. նրա յայտնած ընկերվարական մտքերը արդէն հասկնալի եւ մտերիմ էին մեզ: Մենք նրանից իմացանք, որ մարքսիզմը այլեւս հնացած է եւ սկսել է կորցնել իր համբաւը, որ Դաշնակցութեան սոցիալիզմը աւելի հարազատ է հայ աշխատաւո-

Aram webaram.com

րութեան, որ Ժոռէսի եւ Բերնշթայնի նման ընկերվարականներ աւելի ճիշդ են արտայայտում ընկերվարութիւնը եւ աւելի մօտ են մեզ: Առաջին անգամ նրանից լսեցի «Դէոչէ Ցոլֆսփարթայ» կուսակցութեան անունը, որը, իբր թէ, աւելի ընկերվարական էր, քան Գերմանն սոցիալ-դեմոկրատիան:

Ա.Թաբէդեանի դասախօսութիւնը ուժեղ տպաւորութիւն գործեց մեր վրայ ի մեծ ցաւ մեր տեսուչ Գարեգին Վարդապետի եւ կոմիտասի: Այն էլ ասեմ, որ այլեւս քիչ շատ խելահաս էի ընկերային հարցերում, նկատեցի, որ Ա.Թաբէդեանը այնքան հմուտ տեսաբան չէր ընկերվարութեան, որքան ցոյց էր տալիս ինքը կամ ինչքան կարծում էին ուրիշները իր մասին: Աւելի իր բանասաեղծական պերճախօսութեամբ դրաւում էր ունկնդիրներին:

Արտաքին ազդեցութիւնների տակ, ճեմարանի դաշնակցական աշակերտութեան մէջ, ինչպէս եւ հասարակութեան մէջ ուժեղանում էր գաղափարական շերտաւորումը՝ ազգայնականների եւ ընկերվարականների: Հանդէսներում եւ ժողովներում մենք այլեւս համարձակութեամբ ճակատում էինք եւ յաղթում ընկերվարական ուսանողներին: Երբ նրանք թափում էին մեր առջեւ բրոշիւրներից քաղած հատուածներ, ես նրանց ամբաւորում էի նոյն բրոշիւրներից առնուած վկայութիւններով, եւ մեր աղջիկները բուռն կերպով ծափահարում էին: Կարող եմ ասել, որ Վաղարշապատի աղջիկները մնացին դաշնակցական չնորհիւ այդ բրոշիւրների...

Բայց այժմ էլ մեզ սպառնում էր մի ուրիշ վտանգ. մեր սոցիալիզմից դժգոհ էին դաշնակցական հայդուկներն ու խմբապետները եւ հին գլուխ ընկերները: Մեր ընկերվարական ելոյթները զայրոյթ էին առաջ բերում նրանց մէջ:

Իբրեւ ընկերվարութեան թշնամի, առանձնապէս աչքի էր ընկնում արտասահմանից էջմիածին եկած Մաշտոց վարդապետ Փափազեանը, դրող Վրթանէս Փափազեանի եւ Կոմսի եղբայրը: Երիտասարդ, եռանդուն՝ նա դաշնակցական շրջիկի դեր էր կատարում Վաղարշապատի կոմիտէութեան շրջանում եւ մեր, սոցիալիստների կարծիքով, անթոյլատրելի բաներ էր կատարում: Այսպէս, օրինակ, Փարպի դիւղում ինձ պատմեցին, որ Մաշտոց վարդապետը քննել է մի թեթեւաբարոյ կնոջ դէմ եղած զանգատները եւ որոշել ու դրծադրել է տուել հետեւեալ պատիժը, դիւղի նշանաւոր խմբապետ Ղահրամանի միջոցով:

Կիրակի առաւօտ յանդուգն նկատուած կնոջ երեսին մուր են քսել, կանդնեցրել են եկեղեցու դրան առջեւ եւ հրամայել, որ ամէն

Aram webaram.com

եկեղեցի մտնող ու դուրս ելնող թքնէ կնոջ երեսին: Ապա կնոջ նըստեցրել են էշի վրայ՝ դէմքը դէպի յետ, ձեռքն են տուել էշի պոչը եւ հարայ-հուրայով պտըտցրել գիւղի փողոցներում...

Դէպքը ահագին զայրոյթ էր առաջ բերել չրջանում եւ արձանագրուել էր հակառակորդ մամուլում: Ես բողոքեցի կոմիտէին Մաշտոցի այդ վայրենի արարքի դէմ, բայց, որքան յիշում եմ, կոմիտէն ընթացք չտուեց:

Որոշ ժամանակ վերջը, Վաղարշապատի մի մեծ այգիում տեղի ունեցաւ դիչերային բազմամարդ մի հանդէս: Կոմիտէի կողմից նախագահ նշանակուած էր Մաշտոց Վարդապետը. բանախօսողներից մէկը ես էի: Ճառ, երգ, արտասանութիւն՝ ամէն բան լաւ էր գնում: Ինձ էլ ծափահարութեամբ բեմ հանեցին եւ, ըստ երեւոյթին, խօսածս էլ հաւանեցին: Բայց ճառիս կէսին սատանան մտաւ փորս. եւ սկսեցի խօսել ընկերվարութեան մասին, քննադատեցի մեր հինգլուխ ընկերների հակառակութիւնը, դատապարտեցի պատասխանատու ընկերների անթոյլատրելի արարքները գիւղում եւ քիչ մնաց յիշէի Մաշտոցի քաջագործութիւնը Փարաքարում:

Նախագահ Մաշտոցը ջղային բացատրութեամբ կտրեց խօսքս: Մէկ էլ, յետեւից, մի ուժեղ հարուած իջաւ գլխիս: Բարձրացաւ աղմուկ եւ իրարանցում: Բռունցք հասցնող խմբապետը հայհոյանքով քաշեց ինձ ամբիոնից վար: Վրայ հասան ճեմարանական ընկերներս ինձ օգնելու: Միւս կողմից յարձակուեցին հայդուկները ու սկսեցին քաշքշել ինձ: Ես դիմեցի անկանոն նահանջի եւ պատի վրայից ցատկելով՝ հերոսաբար փախայ այգուց...

Տարիներ վերջը, երբ Մաշտոց Վարդապետը այլեւս Պոլսի «Ազատամարտ» մեծ օրաթերթի խմբագրութեան համեստ պաշտօնեայ՝ Ներսէս Փափազեան էր, ես յիշեցրի նրան Վաղարշապատի դիչերային հանդէսի դէպքը:

— Էհ, երեխայութիւն էր, ասաց նա մեղմ ժպիտով:

1906 թուականի նոր տարուայ արձակուրդը ուրախ չանցաւ. յարաբերութիւնները ուսուցիչների եւ աշակերտների միջեւ փոխուել էին. նախկին ուրախ մտերմութիւնը չէր մնացել. աշակերտների մէջ էլ կուսակցական տարակարծութիւններ կային: Ճեմարանի կեանքը այլեւս դարձել էր անհետաքրքրական: Դաս ու գիրք մեզ չէին գրաւում: Անհամբեր սպասում էինք, թէ երբ պիտի վերջանայ ուսումնական տարին, եւ մենք, վկայականը առած, հեռանայինք մեր տեղերը՝ մասնակցելու համար դրսի եռուն կեանքին: Ա՛հ, ինչքան յիմար էինք մենք...

Aram webaram.com

Դուրսը չարունակւում էին յեղափոխական շարժումները: Հանդիստ չէին Ռուսաստանի միջնակարգ ու բարձրագոյն դպրոցների ուսանողները — ազատութիւն էին պահանջում ցարական վարչաձեւի կապանքներից: Մենք ինչով էինք պակաս: Դաշնակցական ղեկավար մարմնի նախաձեռնութեամբ ժողովներ սկսուեցին նաեւ ճեմարանում, մշակելու աշակերտութեան պահանջները՝ – ճեմարանում ազատ կարգեր հաստատելու համար: Այդ ժողովների պատմութիւնը ես արել եմ արդէն(*): Այստեղ յիշեմ միայն, որ ամիսների ընթացքում, երկար վէճերից յետոյ, մենք կազմեցինք երկար յուշագիր — պետիցիա — մի տեսակ սահմանադրութիւն, որով ճեմարանը կրթական եւ վարչական տեսակէտից պիտի դառնար բոլորովին աշխարհիկ ժողովրդական հաստատութիւն: Պատմել եմ նոյնպէս եւ մեր Պետիցիայի տխուր վախճանի մասին:

Միաժամանակ վերջին լսարանցիներս աշխատում էինք եւ ատարտական չարադրութեան վրայ: Իմ նիւթն էր Անիի Հայոց գաղթը դէպի Վոլգա, դէպի Ղրիմ, Լեհաստան ու Դոն: Շարադրութիւնս արժանացել էր մանկավարժական ժողովի առանձին գնահատութեան, եւ ես նոյնիսկ մտածում էի տպելու մասին:

Ամբողջ Մայիս ամսին մենք համարեա դաս չունեցանք: Պետիցիայի ձախողութիւնից յետոյ, մենք անգործ եւ աննպատակ թափառում էինք ճեմարանի պարտէզում, լճի ափին, Ներսիսեան անտառում: Ուսուցիչները խուսափում էին մեզանից, մենք էլ խուսափում էինք ուսուցիչներից: Պաղ պատերազմ էր: Սպասում էինք անհամբեր ատարտական հանդէսին:

Ըստ աւանդական սովորութեան ատարտական հանդէսը տեղի էր ունենում Գէորգ Դ. Կաթողիկոսի գերեզմանի վրայ, Մայր Տաճարի առջեւ, ուր ատարտական լսարանի կողմից մէկը պիտի կարդար ուխտի ճառը: Այդ պարտականութիւնը — եւ պատիւը միաժամանակ — ընկերներս վստահել էին ինձ: Ես պատրաստել էի իմ ճառը, որը քննուել էր եւ հաստատուել մեր լսարանական ժողովում: Մեր տեսուչ Գարեգին Վարդապետը, զանազան միջոցներով, փորձեց իմանալ մեր ճառի բովանդակութիւնը, բայց յաջողութիւն չունեցաւ. մենք խիստ պաղտնի էինք պահում մեր ասելիքը: Եւ իրաւունք ունէինք այդպէս վարուելու: Ճառ չէր, այլ յեղափոխական ռումբ, որ պիտի պայթէր ճեմարանի տեսչութեան եւ վանքի միաբանների գլխին: Գոնէ մենք այդպէս էինք կարծում: Ճառը սկսւում էր այսպէս.

(*) Տե՛ս «Կոմիտասի հետ», «Կեանքի ուղիներով», Ա. հատոր, էջ 71:

Aram webaram.com

— Նեղութեան եւ տառապանքի այս ծանր օրերին, երբ ամբողջ Հայութիւնը ոտքի է ելած իր գոյութիւնը եւ իրաւունքները պաշտպանելու համար...:

Եւ խիստ խօսքերով դատապարտում էր ազգային ղեկավարութիւնը, մանաւորապէս, հոգեւորականութիւնը, որ չի գտնում իր կոչման բարձրութեան վրայ: Մենք ուխտում էինք Գէորգ Դ. կաթողիկոսի դերեզմանի վրայ, որ հոգեւորական պիտի չդառնանք, այլ ազգին պիտի ծառայենք, իբրեւ աշխարհականներ...

Եթէ Գարեգին Վարդապետը կարդացած լինէր մեր ճառը, անշուշտ, ուշաթափ պիտի լինէր, ինչպէս եղաւ մեր Պետիցիան լսելով:

Աւարտական հանդէսը տեղի ունեցաւ, եթէ չեմ սխալւում, Մայիսի վերջին կիրակին, պատարագից յետոյ: Մեծ բազմութիւն էր հաւաքուած Գէորգ Դ. կաթողիկոսի դերեզմանի շուրջը — միաբաններ, ուսուցիչներ, Երեւանից եկած հիւրեր, վաղարշապատի եւ շրջակայ գիւղերի բնակիչները, ճեմարանի աշակերտութիւնը եւ ... մամուլի ներկայացուցիչներ, այսինքն՝ «Մշակ»ի թղթակից Սագօն:

Մեր ճառը ցնցող տպաւորութիւն չգործեց, — ժամանակները այնպէս էին, որ աւելի ծայրայեղ բաներ էին սպասում — բայց վերջնական կերպով խորտակեց Գարեգին Հայր Սուրբի եւ կոմիտասի յոյսերը մեր միջից վարդապետներ ունենալու: Իմ վերաբերմամբ, Ցուսիկ Հայր Սուրբն էլ փորձեց «դայթակղեցնել», հրապուրիչ պաշտօն առաջարկելով կաթողիկոսական դիւանատան մէջ, բայց նրա խոսքն էլ հանդիպեց քարի:

Սակայն եւ այնպէս, մենք ստացանք մեր վկայականները եւ մնաս բարեաւ ասացինք Էջմիածին վանքին եւ ճեմարանին: Ուրախ չեղաւ բաժանումը մեր Alma Mater–ից:

Ճեմարանաւարտները սովորաբար մտնում էին հասարակական կեանքի ասպարէզ՝ նուիրուելով մեծ մասամբ, ուսուցչութեան ծրխական կամ թեմական դպրոցներում, դառնում էին լրագրող կամ հանրային գործիչ եւ կամ հոգեւորական ու ազգային–հոգեւոր հիմնարկութիւնների պաշտօնեայ: Ձեղափոխական կուսակցութիւնների, մանաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեան մէջ եւս աչքառու տեղ էին գրաւում ճեմարանականները: Այսպէս, մենք չորրորդ դասարանում 24 հոգի էինք. վեց տարի վերջը երրորդ լսարանը աւարտեցինք 8 հոգի եւ բոլորս էլ նուիրուեցինք կրթական–հասարակական գործունէութեան: Ահա նրանց անունները եւ գործի ասպարէզը.

Aram webaram.com

Արշաւիր Շաւարշեան. *Իզմիրցի. ուսումը կատարելագործեց Գերմանիայում իբրեւ մանկավարժ, եւ մտաւ ուսուցչական ասպարէզ: Եղաւ Հանրապետական եւ Խորհրդային Հայաստանի լաւագոյն մանկավարժներից ու կրթական գործիչներից մէկը:*

Անուշաւան Տէր-Միքայէլեան. *Աշտարակեցի. ուսուցիչ մինչ նակարզ դպրոցներում:*

Արշալոյս Քէոսապալեան. *Կարսեցի. ուսուցիչ եւ սպայ պատերազմի ժամանակ: Սպաննուեց 1918ին:*

Մարտիրոս Ստեփանեան. *Գողթնեցի. ուսուցիչ հայկական դպրոցներում:*

Արամ Դադեան. *Ղարաբաղցի. ուսուցիչ:*

Արշաւիր Տէր-Մկրտիչեան. *Երեւանցի. ուսուցիչ, Հայաստանի Խորհրդարանի դիւանապետ:*

Եփրեմ Սարգսեան. *Կոտայքի Ճաթղոան գիւղից. ուսուցիչ եւ հասարակական գործիչ:*

Ութերորդ՝ ձեր խոնարհ ծառան, Նոր Նախիջեւանցի. ինչպէս Նիկոլ Աղբալեանն էր ասում իր մասին՝ ամէն բան եւ ոչինչ:

Մեր լաբանը բացառութիւն չէր կազմում. առաւել կամ նուազ չափով ճեմարանի բոլոր չրջանաւարտներն էլ հանրային ծառայութեան էին նուիրւում: Առեւտրական դառնալ կամ դուս անձնական շահը հետապնդել ամօթ էր համարւում ճեմարանականի համար:

Մի արեւոտ, պայծառ օր էր, Յունիսին, երբ ես թողի ճեմարանը: Առաւօտ կանուխ վազեցի անտառ, մինչեւ ծայրը, վերջին անդամ դիտելու Մասիսը, որի սպիտակ գագաթը առկայծում էր արեւի ճառագայթներով ողողուած: Մի քանի անգամ դարձայ Ներսիսեան լճի չուրջը: Մի քանի վայրկեան հանգստացայ նստարանի վրայ, վանական հիւրանոցի մօտ, ուր առաջին անգամ հանդիպել էի Մելիք Թանգեանին, երբ նա եկել էր վարդապետ ձեռնադրուելու եւ ինձ առաջնորդեց Հայրիկի մօտ: Հարաւային դռնից մտայ վանք, դիտեցի մայր տաճարի առջեւ թաղուած կաթողիկոսների տապանաքարերը: Միաբաններին նոր չէնքի եւ տպարանի մօտով վերադարձայ ճեմարան: Ամէն ինչ այնքա՛ն ընտանի էր, մտերիմ ու հարազատ, այնքա՛ն սիրելի: Այստեղ էին անցել իմ մատաղ կեանքի երջանիկ տարիները: Այստեղ էին մարզուել միտքս ու հոգիս կեանքի պայքարի համար...

Այնպէ՛ս ուզում էի մնաս բարովի երթալ Կոմիտասի մօտ, վերջին անգամ լսել նրա մտերիմ խօսքերը: Գիտէի՝ այժմ նա նստած էր իր փոքրիկ խուցի առջեւ, մի դիրք ձեռքին: Բայց քաջութիւն

Aram webaram.com

չունեցայ երեւալու նրա աչքին: Ի՞նչ պիտի ասէր նա, ինչպէ՞ս պիտի ընդունէր իր անառակ աշակերտին...

Մի պահ լուռ կարդացի իմ հայրենակից Գամառ Քաթիպայի կիսանդրիի պատուանդանին վրայ փորագրուած կտակը:

Գամառ Քաթիպա, Բաֆֆիից յետոյ, իմ ամենէն սիրած հայ հեղինակն էր թեմական դպրոցում: Ես յափշտակութեամբ կարդում էի նրա հայրենասիրական ոտանաւորները: Դեռ սեւը սպիտակից չէի ջոկում եւ իրարից չէի տարբերում խաչապաշտ թագաւորը եւ ոգեւորը: Վերջը միայն զգացի Գամառ Քաթիպայի անզուսպ դայրոյթը Ռուսաստանի հակահայ քաղաքականու թ ե ա ն դէմ:

Նա նոյնիսկ առանձին բառ էր հնարել՝ ոգեւոց, որ ցեղոր բառի ընթերցումն էր՝ հակառակ կողմից: Նա դառնօրէն դանդաւում էր.

Անգութ ոգեւոց, մի-
թէ՞ չես տար
Ազգի աղետալի բախ-
տը սգալ...



ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՄԵԼԻՔԹԱՆԳԵԱՆ

Շառերը, ինչպէս այսօր էլ, Ռուսաստանի մէջ էին տեսնում Հայութեան վրկութիւնը: Գամառ Քաթիպա զայրոյթով դոչում էր.

Ի՞նչ էք փնտռում հիւսիսում,
Ա՛յ, խելացնոր, գիժ Հայեր...

Նա Արաքսի բերանով, վրդովմամբ դառապարտում էր Վրաց ինեներին.

Aram webaram.com

Իմ ազգակից գիժ Քուռը,
Թէեւ այրի ինձ նման,
Ստրկօրէն տանում է
Գայթակղիչի կուռ շղթան:

Հասկնալի է, նման մտքերի տէր բանաստեղծին չպիտի սիրէր ցարական իշխանութիւնը: Իր հայրենակիցները ցանկանում էին իրենց մեծ ազգակցի իղձը կատարել, բայց կառավարութիւնը թոյլ չտուեց նրա աճիւնը թաղել էջմիածնում:

Երախտապէտ ազգը նրա կիսանդրին կանգնեցրեց ճեմարանի պարտիզում, Մայր Աթոռի մօտերը, Մասիսի հովանու ներքեւ:

Երբ Ֆայտոնչի Մուկուչը իմ նիհար պայուսակը տեղաւորեց կառքում, եւ անհամբեր ձիերը չարժուեցին դէպի Կարխուն տանող ճանապարհը՝ աչքիս առջեւից խլելով ճեմարանի գմբէթը, անասելի մի ցաւ զգացի սրտումս: Ուրեմն, երբեք այլեւս չէի տեսնելու այս հարազատ վայրերը...


Մինչեւ Կարխուն իմ առջեւ էր երկնասլաց Մասիսի վեհափառ պատկերը, որից չէր բաժանւում իմ հայեացքը: Մասիսն էլ վերջին անգամ էի տեսնում: Մուկուչը օդի մէջ չրթացնում էր իր մտրակը, փողաքշական խօսքեր էր ասում, երգում էր, եւ ձիերը ուրախ վազում էին արագ:

Կարխուն կայարանը էջմիածնից մօտ ութը կիլոմետրի վրայ էր: Ռուս կառավարութիւնը դիտմամբ վանքից հեռու էր անցկացրել երկաթուղին, որպէսզի Հայերի նուիրական սրբավայրը չզարգանայ: Այստեղ պէտք է առնէի Երեւանից եկող գնացքը Թիֆլիսի եւ Բաքու-Բալաջարի վրայով Նոր Նախիջեւան վերադառնալու համար:

Գնացքում աւելի սուր զգացի ճեմարանից հեռանալու ցաւը: Երբ Աղին կայարանի մօտ Մասիսը ընդմիշտ անհետացաւ իմ տեսողութիւնից, կարծես ինձ դերեզման իջեցրին: Ինչ ուրախութիւններով եկել էի ճեմարան եւ ինչպէս տխուր հեռանում էի...

Գէորգ Սարկաւագը ասել էր՝ «Լոյսի տաճար ես գնում»: Ինձ համար ճեմարանը եղաւ աւելի քան լոյսի տաճար: Ճեմարանում տեղի ունեցաւ իմ լրիւ եւ վերջնական հայացումը: Այնտեղ կազմակերպուեց ու ձեւաւորուեց իմ անհատական դիմագիծը: Ազգային ընդհանուր, լայն ու խոր զարգացում եւ իդէալներ տուեց ինձ ճեմարանը: Հիմա ճեմարանի վկայականը պայուսակումս, պէսպէս ծրագիրներ ու վառ յոյսեր մտքիս մէջ, վերադառնում էի տուն, որ

Aram webaram.com



ԳԱՄԱՌ ՓԱԹԻՊԱ

Ի՞նչ... Ի՞նչ էր խոստանում ինձ ապագան։

Ընկերներիս մեծ մասը ընտրել էր ուսուցչական ասպարէզը։ Ոմանք պատրաստւում էին ուսումը շարունակել բարձրագոյն դըպրոցում, վերջը ուսուցչութեան նուիրուելու համար. և՞ս ինչ պէտք է անէի։

Aram webaram.com

Ուսուցչութիւնը ինձ շատ չէր հրապուրում, աւելի ճիշդ՝ ասպարէզը նեղ էի համարում, թէեւ գիտակցում էի, որ ճեմարանական տրամաբանական ասպարէզը դպրոցն էր: Մեր ժողովրդի բնական պահանջն էլ հայ մտաւորականից ուսուցչութիւնն էր:

Ինքս ինձ, դաղտնի, օրօրում էի ուսումս շարունակելու յոյսով՝ մտնել համալսարան եւ դառնալ իրաւաբան: Այս անգամ իրաւաբանութիւնը նոր լոյսի տակ էր ներկայանում, իբրեւ ապահով միջոց հասարակական եւ դրական ասպարէզներում տեղ գրաւելու: Գրականութիւնը աւելի եւ աւելի յափշտակում էր ինձ:

Մի ուրիշ ծրագիր էլ զբաղեցնում էր միտքս: Մասունը ազատելու ծրագրից թէեւ հրաժարուել էի, բայց մէջս աւելի ամրացել էր յեղափոխութեան դաղափարը, ոչ թէ իբրեւ բնազդական զգացում, ինչպէս ճեմարան մտնելուց առաջ, այլ որպէս գիտակցութիւն. ի՞նչ պէտք կար համալսարանի եւ դրականութեան մասին երազելու, երբ անդին, Բարթողեան լեռնաշղթայի միւս կողմը իմ ազգակիցների արիւնն էր հոսում: Յեղափոխութիւնը բնական եւ անհրաժեշտ պահանջ էր իմ աչքում, եւ ամէն հայ երիտասարդ պարտաւոր էր նոյնիսկ իր արիւնով մասնակցել ազգային յեղափոխական շարժման:

Գլխիցս չէր հեռանում եւ կաթողիկոսական դիւանապետ Ծուսիկ Վարդապետի առաջարկը. նա պնդում էր, որ պաշտօնի մտնեմ Սինոդում կամ դիւանատան մէջ, իբրեւ օգնական իրեն: Ես հասկանում էի, ի հարկէ նրա թաքուն միտքը. էջմիածնում պաշտօնեայ դառնալով՝ ես հետզհետէ կը վարժուէի վանքի մթնոլորտին եւ, ի վերջոյ, կը համաձայնուէի կուսակրօնի սքեմ ընդունել: Է՛հ, ի՞նչ կար որ, նեղութեան եւ տառապանքի իմ ճառից յետոյ, ճիշդ է, միտքս չէր հաշտւում վեղարի հետ, բայց չէ՞ որ վեղարը աւելի կը դիւրացնէր յեղափոխական գործունէութիւնը երկրում: Կային եւ զուտ անձնական ապրումներ եւ մտածումներ: Հոլիշ մօրքուրս, որ դիւղում ամէն բան գիտցող եւ ազդեցիկ կին էր, դրել էր ինձ մեծահարուստ Դոմբայի աղջկայ մասին: Դոմբայեան Մարիամը, գեղեցիկ, հարուստ մարմնով, աղքատ խելքով, կենսուրախ օրիորդ էր. սովորում էր քաղաքի գիմնազիայում եւ մեծ օժիտով նախանձելի հարսնցու էր համարւում: Հոլիշ մօրքուրս հաւատացնում էր, որ աղջկայ հայրը ուզում էր ինձ փեսացու ունենալ, եւ Մարիամն էլ համաձայն էր: Մնում էր, որ ես էլ չուտով համաձայնութիւն յայտնէի այդ թանկագին պատառը ձեռքից չփախցնելու համար...

Aram webaram.com

Ուրիշ ոչ պակաս սրտագրաւ հեռանկարներ էլ յուզում էին ուղեղս: Կծկուած երրորդ կարգի վագոնի մի անկիւնում, «Լոյսի Աղբիւր»ից ստացած վկայականը պայուսակիս մէջ, պէսպէս ծրագիրներ ու վառ յոյսեր գլխումս՝ ես սլանում էի դէպի անորոշ, բայց հրապուրիչ ապագան: Ի՞նչ էր վերապահել ինձ ճակատագիրը...

Բէյրութ, 1958

Aram webaram.com

ԻՄ ՔԵՌԻ ՄԻՔԻՇՔԱՆ

Բուն անունը Մկրտիչ էր — Մկրտիչ Զոպանով կամ Զոպանենց: Այդպէս էր արձանագրուած Մեծ Սալայի Սուրբ Աստուածածին եկեղեցու տոմարում, դիւղի աւագերէցի ձեռքով — Մանուկ Մկրտիչ ծնեալ ի գարմէ Զոպանեանց: Բայց ամէնքին յայտնի էր Միքիշքա անունով, Միքիշքա աղա: Ինձ համար նա Միքիշքա դայի էր: Եթէ ճիշդը ուզում էք իմանալ, մօրս քեռին էր, հետեւաբար, եւ իմ քեռին:

Մեր դիւղում Միքիշքա քեռուս նման հարուստ մարդ քիչ կար: Նշանակում է նման խելօք մարդ էլ քիչ էր: Այդ էր պատճառը, որ նա անընդհատ ընտրւում էր աւագ դիւղապետ: Նիկոլայ երկրորդ ցարի թագադրութեան հանդէսին եւս նա էր, որ հայ դիւղերի կողմից ներկայացուցիչ գնաց Մոսկուա եւ քիչ մնաց գոհուէր Խոդինկայում: Մոսկուայից վերադարձաւ արծաթէ մեդալը կրծքին: Թագաւորին էլ պատիւ էր ունեցել ներկայանալու...

Միքիշքա քեռուս հարստութեան մասին առասպելներ էին պատմում դիւղում: Նրա դրամի հաշիւը իմացող չկար, ի հարկէ, բայց ինչ որ յայտնի էր, իսկապէս որ զարմանալի էր: Գիւղի ամենաչատ ոչխար պահողն էր նա. մինչեւ հարիւր հազար ոչխար ունէր հարեւան կազակներից վարձած հողերի վրայ: Երբ հողը սկսեց պակսել, նա Սիբիրում անասնման արօտավայրեր վարձեց եւ այնտեղ էր ոչխար պահում: Ամառը երկու անգամ բուրդը խուզում ու ծախում էր: Աչնան մեծ մասը մորթում, մորթը ուղարկում էր արտասահման, միսը աղ դրած՝ ծախում էր Ռուսաստանի ներքին նահանգներում:

Aram webaram.com

Հազարաւոր արտաւար ցորեն, գարի, վարսակ էր ցանում եւ բերքը ինքը ուղարկում արտասահման: Հողամշակութիւնը, հունձքն ու կալը անում էր սեփական մեքենայով:

Գիւղի ծայրում ունէր հինգ յարկանի հսկայ ալիւրի գործարան: Մեծ քանակութեամբ ալիւր էր պատրաստում եւ արտահանում զանազան կողմեր:

Անհաշիւ կթան կով ու լծկան ունէր, լծելու եւ հեծնելու ձիեր: Իր հարստութեամբ ամէնքի նախանձն էր շարժում իմ Միքիչքա քեռին, իսկ արտաքին երեւոյթով, ապրելակերպով ու հագուստեղէնով եթէ փողոցում հանդիպէիր, ձեռքդ բնազդօրէն դրպանդ կը տանէիր, որպէսզի մի քանի կոպէկ հանէիր եւ մեկնէիր նրան: Վրայի չէմՓէնը աշխարհագրական քարտէս լինէր կարծես խայտաբղէտ կարկատաններով: Ոտքի կօշիկը ներկի երես չէր տեսնում: Մորթէ գլխարկը յայտնի չէր, թէ ժամանակին ինչ գոյն էր ունեցել: Եւ ձեռքին՝ կոկանից ծուռ ու մուռ գաւազան: Ձեռքերը կոշտ՝ չարաչար աշխատանքից եւ արեւահար դէմքը՝ կնճռոտ:

Եւ որովհետեւ հարուստ էր, փողոցով անցնելիս՝ ամէնքը ոտքի էին ելնում եւ յարգանքով խոնարհութիւն էին անում: Իսկ երբ անցնում հեռանում էր, ասում էին արհամարհանքով կամ ափսոսանքով.

— Ցինգանա:

Զրոռնիում (դիւղապետութեան չէնքում) Միքիչքա քեռուս իշխանութիւնը անսահման էր: Օրէնքի եւ արդարութեան մարդ էր նա: Գրագիր Իվանը դողում էր նրա առջեւ, եւ, յաճախ, մանաւանդ երբ հարբած էր լինում — իսկ ե՞րբ հարբած չէր լինում Իվանը — իր մէջքի վրայ ճաշակում էր կոկանէ գաւազանի հարուածները:

Աղքատ եւ ընչազուրկ դիւղացիները, սակայն, անկեղծօրէն յարգում էին Միքիչքա դայիս: Նա որ գիւղում ամէնից դրամատէրը եւ ժլատ մարդն էր համարւում, յաճախ, ասում էր կնոջը.

— Շողան, սա Մելքոնին էղիան հացի կարօտ է, ըղաթիւն մէկ չուվալ ալուր տուր որ տանէ. պղտիկները կուշտ հաց ուտեն: Մեղք են...

Կամ՝

— Քաղաքէն մէկ ֆիչի մայապալըխ բերիլ իմ, աղքատներուն բաժնէ:

Շողանը, իմ քեռակինը, բարի, փուխր սրտով, ամէնքից սիրուած ու յարգուած էր:

Aram webaram.com

Պաշտօնական ընդունելութիւնները քեռիս կատարում էր զբոսնիում, Օդամանի արծաթէ չղթան վզին:

Մէկը գալիս էր, անխօս կանգնում առջեւը, մորթէ գլխարկը ձեռքում տրորելով:

— Հը՛, ասա նայինք, ի՞նչ կ՚ուզիս, հարցնում էր քեռիս հեղնական շեշտով:

— Միքիչքա աղա, ասում էր խնդրարկուն, մէքսատ եզս սատկիլ է, կը խնդրուեմ քանի մանէթ փոխ տուր, մէքսատ եզ առնիմ...

— Հայդա, հայդա, կտրում էր քեռիս, ե՛զ առնիմ, պիտ էրթաս միհանա, ռախի խմես:

— Ոտքդ պագնեմ, Միքիչքա աղա, զաւակներս մեղք ին, առանց հացի կը մնան: Ռախի՞ս որն է, սապանս կեցիլ է...

Բայց Միքիչքա քեռիս արդէն ծանօթ է խնդրարկուի դրութեան եւ կարճ է կապում.

— Ինչեր կ՚ասիս, էշէք հայվան, քանի մանէթով եզ կը գնուի՞. հէչլմասա (գոնէ) քանհինգ մանէթ հարկաւոր է:

Եւ դառնալով դրագիր Իվանին.

— Քանհինգ մանէթի վեքսիլ (մուրհակ) գրէ աս մարդուն:

Եւ գիւղացին դրամը առած, օրհնելով հեռանում է:

Միքիչքա քեռիս մուրհակը պատռում, ջամբուղն է նետում:

— Ատ հայվանը հինգ հատ պղտիկ ունի, ինչպէ՞ս պիտի եաթբերէ ստակը...

Եւ այսպէս, ձեռքի տակից, չատերին էր օգնում, պայմանով, սակայն, որ մարդ չիմանար: Վայ թէ մէկը իմանար... կարծես թէ ամաչում էր իր սրտի փափկութիւնից:

Մէկ խօսքով, ինքնատիպ մարդ էր Միքիչքա դայիս: Աւողներ շատ ունէր գիւղում, սիրողներն էլ քիչ չէին, բայց ամէնքը պատկառում կամ վախենում էին նրանից եւ ճանաչում էին նրա հեղինակութիւնը. առանց Միքիչքա աղայի գիւղը ինչպէ՞ս պիտի կառավարուէր...

Ես չէի սիրում Միքիչքա դայիս: Ծնունդին կամ Նոր Տարին մօրս ստիպումով, դոռով գնում էի մօտը ձեռքպատունքի: Նա հանդիսաւոր կերպով մեկնում էր ձեռքը որ համբուրեմ, կարծես տէր պապա լինէր, եւ ափիս մէջ գնում էր պղինձէ դրամը, ամենաշատը հինգ կոպէկնոց: Եւ հրամցնում էր, սովորաբար, մէկ–երկու հատ քէչէրոյնուղ: Չէր սիրում երբ Շողան եանկաս իր կողմից էլ նուէրներ էր տալիս: Ինքը զաւակ չունէր. թերեւս այդ էր պատճառը, որ չոր էր դէպի ուրիշների զաւակները:

Aram webaram.com

Չեմ կարող ասել՝ թէ ինձ չէր սիրում։ Ցաճախ, երբ իր մխաճի սայլակով գնում էր արտերը նայելու, ինձ էլ տանում էր հետը եւ հետս խօսում էր, կարծես մեծ մարդ լինէի։ Բացատրում էր, թէ ինչպէս պէտք է հերկել հողը առատ բերք ունենալու համար, որ հողը ինչ յատկութիւն ունի, ցորենի բերքի ո՞ր տեսակից ինչ ալիւր դուրս կու գայ եւ որ ալիւրից լաւ հաց կը թխուի։ Կատակներ էլ էր անում հետս, ծիծաղում էր։ Իսկ երբ վերադառնում էինք դիւղ, դառնում էր նախկին յօնքերը կիտած, կնճռոտ, չոր մարդը։

Այո, ես չէի սիրում Միքիչքա դայիին, թէեւ ուրիշ տղաների առջեւ պարծենում էի, որ այդպիսի նշանաւոր քեռի ունիմ։

Երբ յայտնի եղաւ, որ ես էջմիածին պիտի երթամ, ճեմարանում սովորելու համար, քեռիս վերաբերումը բոլորովին փոխուեց։ Նա սկսեց հետս խօսել «դուք»ով, կարծես ես արդէն առաջնորդական փոխանորդը լինէի։ Եւ երբ վերջին անգամ դնացի մօտը մնաք բարովի, էջմիածին մեկնելուց առաջ՝ նա երկար խրատական կարգաց գլխիս եւ յոյս յայտնեց, որ իղա Բզովին չեմ նմանի։

Բզովը (հորթ) մեր համագիւղացի էջմիածնական վարդապետ Յուսիկ Զօհրապեանն էր, որին, չգիտեմ ինչու, Միքիչքա քեռիս չէր սիրում։

Եւ երբ հեռանում էի իր մօտից, յուզուեց. աչքերում արցունքի նման մի բան երեւաց. ճակատս համբուրեց եւ ափիս մէջ կոխեց մետաղէ մի դրամ։

Երբ դուրսը ափս բացի, արծաթ քսան կոպէկնոց էր։ Միլիոնատէր քեռիս, քսան կոպէկ էր նուիրում էջմիածին մեկնող իր զարմիկին...

Երբ մօրս ցոյց տուի քեռիս ընծայած քսան կոպէկը, նա աւազ լուրջ.

— Դայիդ համար էջմիածնի մէջ մոմ կը վառես...

Էջմիածնից հազիւ Նոր Նախիջեւան վերադարձած՝ իմ բոլոր ծրագիրները յօդս ցնդեցին։ Ճակատագիրը ինձ վերապահեր էր Հ. Յ. Դաշնակցութեան Նալբանդի կենտրոնական կոմիտէութեան չըքնաղիկի պաշտօնը(*)։

Կենտրոնական կոմիտէի երկրորդ թէ երրորդ նիստում — լաւ չեմ յիշում — օրակարգի վրայ դրուած էր մի անորոշ հարց.

— Հանդանակութեան գումարների խնդիրը։

(*) Տե՛ս «Կեանքի Ուղիներով», Ա. հատոր, էջ 120, «Շրջիկի Յուշերից»։

Aram webaram.com

Պարզուեց հետեւեալը.

Հայ-Թաթարական կռիւների ժամանակաշրջանում Հ. Յ. Դաշնակցութիւնը ստիպուած էր եղել պարտադիր հանգանակութեան դիմել հարուստներից, ժողովուրդը եւ մարտական խումբերը զինելու համար: Այդ նպատակով «Փոքրիկ»ի կողմից Ռոստով էր եկել Յ. Շահրիկեան եւ Ռոստով-Նախիջեւանի փողատէրերի վրայ տուրք էր դրել՝ խորհրդակցելով Նալբանդի կենտ. կոմիտէի հետ: Հարուստներից ոմանք յօժարութեամբ վճարել էին իրենց բաժին հանուած խոշոր դումարներ, ուրիշներ վճարել էին մի մասը, եղել էին եւ բոլորովին մերժողներ: Այս վերջիններից էին նաեւ իմ Միքիչքա քեռին եւ իմ ազգական մեծահարուստ վաճառական Պետրոս Խախլաջեանը:

Խախլաջեանը իր վրայ դրած մեծ դումարի մէկ մասը, ոսկեայ նալիքի տակ, վճարել էր, մնացած մասը մերժում էր վճարել: Քեռիս բաժին էր հանուած, համեմատաբար, փոքր դումար՝ 15·000 ռուբլի բայց նա կտրուկ կերպով մերժել էր վճարել: Սպառնացել էր կենտրոնական կոմիտէի կարմիր կնքուած թուղթը յանձնել ոստիկանութեան:

Դրա վրայ կենտրոնական կոմիտէն երկրորդ կարմիր կնքուած պահանջագիրն էր ուղարկել՝ կրկնապատկելով դումարը: Այս անգամ էլ մերժել էր քեռիս:

Կենտ. կոմիտէն երրորդ եւ վերջին ազդարարութիւնն էր արել, դումարը բարձրացնելով 45·000 ռուբլիի եւ յիշեցնելով որ, մերժումի դէպքում քեռիս սպասում է ժամհարեանի ճակատագիրը:

Միքիչքա քեռիս նորից արհամարհանքով ձեռնունայն վերադարձրել էր կենտր. կոմիտէի թուղթը բերած փափախաւոր դանդալախին:

Հիմա կենտրոնական կոմիտէի առջեւ հարց էր դրուած, ինչպէս վարուել այդ յամառ գիւղացու հետ: Կենտր. կոմիտէի անդամները յայտնապէս չէին ուզում ծայրայեղ միջոցի դիմել եւ աշխատում էին պատուաւոր նահանջի ճեւ գտնել: Այնպէս անել, որ ոչ չիշը այրուի, ոչ խորովածը...:

Եւ բոլորի աչքերը ինձ էին ուղղուած. իմացել էին, որ Միքիչքա աղան իմ քեռին էր:

Ես գիտէի, թէ ինչ է լինելու հետեւանքը, եթէ խնդիրը կնճռոտի, եւ անուշի չկապուի: Պատրաստակամութեամբ յանձն առի փորձել խելքի բերելու իմ քեռին եւ ազատել կենտր. կոմիտէն դժուար կացութիւնից: Այս պիտի լինէր չրջիկի իմ առաջին գործը:

Aram webaram.com

Անյոյս բան էր Միքիչքա քեռուց 45·000 ռուբլի ստանալ ազգի համար. կը մեռնէր բայց չէր տայ: Սակայն, պէտք էր փորձել: Իմ առաջարկի վրայ, կենար. կոմիտէն համաձայնուեց բաւականանալ սկզբնական 15·000 ռուբլիով:

Մի քանի օր անցած ես արդէն Մեծ Սալայում էի եւ, բնականաբար, առաջին այցելութիւնս պիտի տայի Միքիչքա քեռուս: Ուրախացաւ: Ձակատս համբուրեց: Ակներեւ էր, որ սպասում էր ինձ: Աւելի ուրախ էր Շողան եանկաս, որ, երեւի, մտածում էր, թէ ես մահից պիտի ազատեմ իր ամուսնուն: Գիւղում լուր ունէին Միքիչքա քեռուս հարցի մասին, ծանօթ էին նաեւ Ժամհարեանի դործին:

Միքիչքա քեռիս սենեակից դուրս հանեց կնոջը, որ երթայ սեղան պատրաստէ, եւ դուն ու դուքը իրար խառնելով՝ անմիջապէս դործի անցաւ՝ դիւրացնելով իմ բաւական փափուկ առաքելութիւնը.

— Դուք Քաւքազէն կու դաք, ասաց նա, ի՞նչ դիտես սա ճանապետներուն մասին:

— Ի՞նչ ճանապէտներ, չհասկնալ ձեւացրի ես:

— Սա ընկերութին կ'ասին, ի՞նչ կ'ասին. ամէնքը կ'ասին դուն ալ ընկերութեան մարդ իս... ի՞նչ կ'ուզին սա հերկէլէները ինձմէ:

Ես ձեւացրի, թէ ոչինչից տեղեակ չեմ. ոչ ընկերութեան ինչ լինելը դիտէի, ոչ էլ ծանօթ էի հերկէլէներին: Պատմէ նայինք, ի՞նչ բան է:

Եւ Միքիչքա քեռիս սկիզբից մինչեւ վերջ հարազատօրէն պատմեց պատահածը: Առաջ իրեն ներկայացել էր ճերմակ փափախով մի դանդալախ, կարմիր փեչատուլ (կնիք) մի թուղթ էր տուել՝ պահանջելով, որ ընկերութեան վճարէ 15·000 ռուբլի: Ինքը հայհոյանքով ճանապարհ է դրել: Վերջը մէկ ուրիշ փափախաւոր դանդալախ 30·000 ռուբլու պահանջ էր ներկայացրել: Վերջը եկել էին երկու դանդալախներ 45·000 ռուբլու պահանջով: Ահա եւ կարմիր փեչատուլ թուղթերը: Վերջին թուղթում ասուած էր, թէ այս վերջին ազդարարութիւնն է, եթէ չվճարէ... եւայլն:

— Ադ չուները ի՞նչ կ'ուզեն ինձմէ... քառասուն հինդ հազար, ես իրե՞նց համար ստակ կը ժողվեմ: Գիտե՞ն, ինչպէս կու դայ ադ ստակը, ուրտեղէն կու դայ:

Մահման չունէր քեռուս դայրոյթը: Ինճանիկ խնդրում էր, որ ազատեմ իրեն այդ փորձանքից: Եթէ իր օձիքից ձեռք չքաշէն, պատրաստ էր թուղթերը յանձնելու կառավարութեան:

— Պիտ սպաննե՞ն, թող սպաննեն, բայց ես իմ արդար քըր-

Aram webaram.com

ինքով վաստակած ստակը չուներուն չիմ տար, որ ուտին ու վրաս խնդան:

Այսպիսի վճռական յայտարարութիւնից յետոյ անխելքութիւն կը լինէր իրաւախոհութեան մասին մտածելը: Մտածում էի նոյնպէս, որ նա կասկածում էր, թէ ես էլ ընկերութեան անդամ եմ եւ մատ ունեմ այդ գործում:

— Գիտե՞ս ինչ, դայի, ասացի ես նրան. ի՞նչ է այդ ընկերութիւնը, ես լուր չունիմ. ինչի՞ ստակ կ'ուզին քեզմէ, տեղեակ չիմ, բայց կը վախնամ, որ սխալ բան կ'անիս, վերջը դէշ կ'ըլլայ: Եթէ կ'ուզիս, երթամ հարց ու փորձ անիմ: Վերջը նայինք, ի՞նչ պիտ անինք...

— Ըշտէ իմ ուզածս ալ ադ է, ուրախացաւ քեռիս: Բայց դիտցիր, ես այդ ռազբոյնիկներուն (աւազակներուն) ստակ տուողը չիմ...

Ճաշորդ առաւօտ իսկ ես վերադարձայ քաղաք, իբր թէ, հետախուզութեան համար, եւ մի քանի օրից ներկայացայ քեռուս:

— Ամէն բան իմացայ, ասացի նրան, դէշ բան է: Կարմիր փէչատով դիր առնողը ազատում չունի: Ազդի համար է, կամ պիտ տայ, կամ վերջը ժամհարովի պէս կ'ըլլայ: Ժամհարովն ալ չտուից, կարմիր փէչատով թուղթը կառավարութեան տուից, վերջը սպանըւեցաւ...

Քեռիս դունատուեց ու կրակ կտրեց:

— Ըլլա՞յ, որ դուն ալ անոնցմէն իս... Որի՞ ստակը որի՞ն կ'ուզիս որ տամ... Քեզի՛ կ'ասիմ, որի՛ ստակը որի՛ն կ'ուզիս որ տամ... Ա երկրին մէջ օրէնք կայ, դատաստան կայ: Ամէն ռազբոյնիքի ստակ կը տրուի՞... Քեզի կը հարցունեմ՝ կը տրուի՞...

— Ինծի նայէ, ասացի, սիրելի դայի, ես աս գործին մէջ չկամ: Ստակը քուկդ է, կ'ուզիս տուր, կ'ուզիս մի տար: Դուն խնդրեցիր որ իմանամ, ես ալ իմացայ: Կ'ուզիս ադէսը տամ, դուն ինքդ գնա տեսնուէ: Միայն քիչի խորհուրդ կու տամ, կառավարութենէն վազ անցիր, մեղք իս: Կառավարութիւնը ժամհարովին չ'ազատիւ...

Միքիչքա քեռիս յայտնապէս ազդուեց:

— Հապա ի՞նչ անիմ, ստա՞կ տամ ադ չուներուն:

— Սիրելի դայի, պատասխանեցի, չուներ չին ադ մարդիկ, ազգին համար կը գործեն: Ադէսը առ, գնա ինքդ հասկցիր:

— Ազգ-մազգ ես չիմ հասկնար, նորից կրակ կտրեց քեռիս. ուրիշէն գոռով ստակ առնողը ռազբոյնիք է:

— Դուն գիտես, ես իմ գիտցածս ասի. կը խնդրեմ քեզի՝ ազէկ միտք արա, մեղք իս:

Aram webaram.com

— Աղէկ միտք արա ո՞րն է, քառասունհինգ հազար մանէթ կը տրուի՞ աղ չունեցուն:

— Միքիչքա դայի, խնդրեցի ես. աղէկ միտք արա. սա՞կը աւելի թանգ է մարդուս համար, թէ՞ կեանքը: Գնա, տեսնուէ այդ մարդոց հետ, պէլքիմ կը պահանջեն: Դուն ալ մեղք իս, Շողան եանկաս ալ մեղք է...

Այդ վայրկեանին կինը լալով ներս ընկաւ. երեւի դրան յետեւից լսում էր մեր խօսակցութիւնը: Փաթաթուեց ամուսնուն՝ աղաչելով որ մտիկ անէ իմ խորհրդին:

Միքիչքա քեռիս բարկացած, բայց այլեւս կակղացած ասաց ինձ.

— Ես աղ չունեցուն երեսը չուզիմ տեսնել. դնա, նայինք ի՞նչ կարող ես անել: Համա իմացիր, ես քառասուն հինգ հազար մանէթ տուողը չիմ...

Նորից ճամբորդութիւն քաղաք: Մի քանի օր վերջը բարի լուր տարի քեռիս.

— Շատ խնդրեցի, աղաչեցի, յօժարեցան պահանջել: Եթէ մէկ չարաթէն 15·000 մանէթ տաս, որոշումը կը փոխեն: Եթէ չտաս...

— Է՛, դո՞ւն ինչ կ'ասիս, հարցրեց նա վրդովումով:

— Պէտք է տաս, պատասխանեցի ես: Այդ թուղթերն ալ կը վառիս, որ մարդ չտեսնէ: Պէտք է տաս, ազատում չկայ:

Եւ Միքիչքա դայիս վճարեց 15·000 ռուբլի՝ Նալբանդի կենտր. կոմիտէին, փոխանցելու համար «Փոթորիկ»ին: Վերջին հաշուով, ինքն էլ դոհ մնաց, կենտ. կոմիտէն էլ, բայց ամէնից աւելի ուրախ ու երջանիկ էր Շողան եանկաս:

Այնուհետեւ, ուր էլ լինէի, Պետերբուրգ, Կարին, Պոլիս, Ամերիկա, ամէն Նոր Տարուայ առթիւ Միքիչքա դայիին մի բացիկ էի ուղարկում: Նա ցոյց էր տալիս համագիւղացիներին եւ դոհունակութեամբ ասում էր.

— Մեր Սիմաւոնն ալ Նալբանդովի ճամբով կը քալէ:

Միքայէլ Նալբանեանի անունը լսել էր. բայց գիտէ՞ր արդեօք, որ Նալբանդեանն էլ ընկերութեան պատկանող «ռազրոյնիքներից» էր...

Երբ 1918ի աշնան, վերջին անգամ, այցելեցի Մեծ Սալան, Միքիչքա քեռիս դեռ առողջ ծերունի էր: Արտաքինով գրեթէ չէր փոխուած. կարկտաններով նոյն հագուստը վրան, նոյն կնճռոտ դէմքը, նոյն կոկանէ ծուռ ու մուռ գաւազանը ձեռքին: Եւ առաջուայ նման հարուստ: Հաղորդակցութիւնը կտրուել էր, եւ նա մտահոգ

Aram webaram.com

էր, թէ ի՞նչ եղան իր ոչխարներն ու ցանքերը Սիբիրում: Եւ վախով լսում էր, որ բոլշեւիկները մօտենում էին Դոնի շրջանին:

Փորձեցի նրան հետաքրքրել Հայաստանով, որ անկախ պետութիւն էր դարձել եւ պէտք ունէր բոլոր Հայերի բարոյական եւ նիւթական աջակցութեան: Միքիչքա քեռուս մտքին ու սրտին ոչինչ չէր խօսում Հայաստանը: Շատ առաջները նա ուխտի էր գնացել Սուրբ Կարապետ. նրա յիշողութեան մէջ մնացել էին միայն Հայաստանի լերկ լեռներն ու քարերը, որոնք փոքր բաներ էին Դոնի եւ Սիբիրի անծայրածիր արգասաբեր դաշտերի հետ համեմատած:

Իրազեկ մարդիկ Միքիչքա քեռուս հարստութիւնը հաշւում էին 4–6 միլիոն ռուբլի (2–3 միլիոն տոլար): Ինչքան աշխատեցի համոզել նրան, որ մի դումար նուիրէ Հայաստանի Հանրապետութեան, ճիգերս անօգուտ անցան. ժպտում էր քթի տակ եւ գլխի անորոշ շարժումներ էր անում: Երբ էջմիածին, ճեմարան էի գնում, դոնէ քանի կոպէկ նուիրեց, այս անգամ բաւականացաւ միայն ողջերթի ճաշով. Շողան եանկան պատրաստել էր իմ սիրած կերակուրը՝ խաշլըխ պէրէք:

Ի՞նչ եղաւ Միքիչքա քեռուս վախճանը, ե՞րբ եւ ո՞ւր մեռաւ նա, չգիտեմ: Ցաւոնքի է միայն, որ Դոնի շրջանում Խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ, բոլշեւիկները բռնագրաւել էին նրա ամբողջ հարստութիւնը եւ իրեն, իբրեւ կուլակի, դուրս էին արել տնից՝ զրկելով քաղաքացիական բոլոր իրաւունքներից: Ցիշե՞ց արդեօք, մահուանից առաջ, վերջին վայրկեանին ասած իմ խօսքերը.

— Սիրելի դայի, մարդ մահկանացու է. քո արտերից, ոչխարներից, ջաղացքից, քո միլիոններից ոչինչ չի մնայ: Կը մնայ միայն բարի գործդ եւ բարի անունդ:

Ա՛ւ, իմ Միքիչքա քեռին մեծ հարստութիւն դիզեց, բայց ոչ բարի գործ կատարեց եւ ոչ էլ բարի անուն ձգեց:

Եթէ մայրիկս ողջ լինէր, պիտի ասէր.

— Տղաս, մոմ վառէ Միքիչքա դայիդ համար...

3 Յունիս 1959

Բէյրութ

Aram webaram.com

ՎԻԵՆՆԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Գէորգեան ճեմարանը աւարտելուց յետոյ, ես Հ. Յ. Դ. Նալբանդի կենտր. կոմիտէութեան անդամ եղայ եւ մի տարի «չրջիկ» հիւսիսային Կովկասի եւ Հարաւային Ռուսաստանի չրջանում:

Իրրեւ «չրջիկ» եկատերինոսլաւում էի, ուր կազմակերպութեան մէջ անհամաձայնութիւններ էին ծագել եւ ինձ կանչել էին, որպէսզի խանգարուած կարգը վերականգնեմ: Կոմիտէի անդամ Մեսրոպի հետ միասին ժողովների վրայ էի, երբ կենտր. կոմիտէի գանձապահ Նաւասարդից հեռագիրը ստացայ, թէ՝

— Շուտով վերադարձիր, շատ կարեւոր է:

Շտապեցի վերադառնալ: Պարզուեց, որ Բիւրօն երկրորդ անգամ հեռագրում է որ Ընդհանուր ժողովին պատգամաւոր ուղարկենք:

Առաջին հեռագրին ընթացք չէինք տուել. ազատ մարդ չունէինք: Հիմա որ նորից հեռագրում էին, նշանակում էր, որ յատկապէս կարեւոր էր, մանաւանդ, որ ժողովը արդէն սկսուած պիտի լինէր Վիեննայում:

Կենտրոնական կոմիտէն, իմ բացակայութեան, որոշել էր, որ ես երթամ: Նաւասարդը, մանաւորապէս, շատ էր պնդում, որ չմերժեմ:

Ես դեռ ինձ արժանի չէի համարում այդպիսի մի բարձր ժողովի պատգամաւոր լինելու եւ վարանում էի, բայց ինձանից զատ ուրիշ մէկը չկար ազատ. ստիպուած համաձայնուեցի:

Շնորհիւ Ռոստովի քաղաքապետարանում Նաւասարդի ունեցած կապերին, ես կարճ ժամանակում արտասահմանի անցագիրը

Aram webaram.com

ստացայ եւ մի քանի օրից, Եկատերինոսլաւի Վոլոչիսկի վրայով հասայ Աւստրօ–Հունգարիայի մայրաքաղաք՝ Վիեննա:

Կէսօրը անցել էր, եւ Նորդբանհոֆ կայարանում տիրում էր արտակարգ եռուզեռ: Հազիւ ճարեցի մի կառք, որ տարաւ ինձ մի պանդոկ, Պրատերշտրասէ վաճառաշահ եւ անցորդով խճողուած պողոտայի վրայ:

Այժմ պէտք էր գտնել Ընդհանուր ժողովի վայրը: Բիւրօն ուղարկել էր մի հասցէ, որ գոյ էի արել· արգիլուած էր մօտս դրաւոր հասցէ ունենալ: Պէտք է երթայի մի պանդոկ (անունը մոռացել եմ) եւ այնտեղ գտնէի Ա. Վաչեանին: Ներանից իմանայի Հաչատուր Մալումեանի (է. Ակնունիի) հասցէն: Նա ցոյց պիտի տար ինձ ժողովի տեղը:

Վաչեանը ընդունեց ինձ սիրալիր, բայց պաշտօնական: Ասաց, թէ Մալումեանը նոյն պանդոկումն է ապրում, իր կողքի սենեակում, բայց այժմ բացակայ է: Առաւ հասցէս եւ խոստացաւ յայտնել Մալումեանին, որ երեկոյեան կը գայ:

Երեկոն անցաւ· բայց Մալումեանը չերեւաց: Ի զուր ժամանակս կորցրի պանդոկի սենեակում, երբ կարող էի չրջել փողոցներում եւ ծանօթանալ քաղաքին:

Առաւօտ հազիւ հագնուել էի, երբ, առանց դուռը զարնելու, ներս մտաւ մէկը, սեւ ու խնամուած մօրուքով, վառվռուն աչքերով, միջահասակ մի երիտասարդ:

— Դուք այսի՞նչն էք, ասաց նա անժպիտ:

— Այո, այսինչն եմ, պատասխանեցի ես՝ յանկարծակիի եկած:

— Սի՛գ, հարցրեց ժպտալով:

— Այո, Միգ:

Այդպէս էր այն ժամանակ իմ կուսակցական անունը: Երբեմն էլ այդ ծածկանունով գրում էի թերթերում:

— Ես էլ Իշխանն եմ... Վասպուրականի պատգամաւոր: Ակնունիի յանձնարարութեամբ եկել եմ, որ ձեզ տանեմ ժողովի...

Ի՛նչ տարօրինակ հանդիպում· ո՛չ դուռը ծեծել, ո՛չ բարեւել, ո՛չ ձեռք սեղմել· կարծես, տարբեր մոլորակի քնակիչ լինէր: Վերջը, երբ իրար աւելի լաւ ճանաչեցինք, տեսայ, որ Իշխանը քաղցր ու զուարթ բնաւորութեամբ եւ բաւական բարեկիրթ մարդ էր:

Դուրս եկանք: Ճանապարհին Իշխանը մի քանի անգամ խանութ մտաւ: Մի տեղ ծխախոտ առաւ, մի ուրիշ տեղ փողկապ գնեց, մի քանի խանութ մտաւ ու ելաւ առանց բան գնելու: Անլեզու՝ ա–

Aram webaram.com

մէն տեղ դէմքի ու ձեռքի շարժումներով խնդացնում էր ապրանք ծախող վիեննուհիներին:

— Գերմաներէն սովորելու ամենալաւ միջոցն է այս, ասում էր նա:

Ոլոր մոլոր ճանապարհներով հասանք ժողովի տեղը: Ազգային–արհեստական սոցիալ–դէմոկրատ կուսակցութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր ժողովի համար ձրի տրամադրել էր մի յարմար սրահ իր կենտրոնական շէնքի մէջ. Մարիահիլֆէ թաղում, Մարիահիլֆէ շտրասէի կողքին: Մօտը, անկիւնում, գտնւում էր Մարիահիլֆէ մեծ սրճարանը: Ժողովականների հաւաքավայրը ժողովից առաջ ժամերին:

Երբ մեր առջեւ բացուեց սրահի դուռը, ներսից աղմուկի հետ իմ երեսը խայթեց ծխախոտի թանձր եւ անախորժ ծուխը:

— Ընկեր Սիպ, Նալբանդի պատգամաւոր, ներկայացրեց ինձ Իշխանը:

Ժողովը մի պահ ընդհատուեց: Ամէնքի ուշադրութիւնը իմ կողմը դարձաւ: Նախագահի բարի գալուստի խօսքից յետոյ, յանձնեցի իմ թղթերը եւ տեղ գրաւեցի Իշխանի կողքին, սրահի վարի մասում, նախագահական սեղանի դիմաց:

Նիստը վերաբացուեց: Ժողովավայրը, համեմատաբար, ցած առաստաղով քառակուսի ընդարձակ սենեակ էր, որի դրեթէ բոլոր աթոռները գրաւուած էին պատգամաւորներից:


Ջեմ յիշում ինչ էր օրակարգի հարցը, երկրորդական մի նիւթ պիտի լինէր: Ճանապարհին Իշխանը բացատրել էր, թէ մէկ ամսից առաջ էր որ Ընդհանուր ժողովը բացուած է, բայց դեռ հազիւ զեկուցումներն էին վերջացել: Օրակարգի ոչ մէկ կարեւոր հարց դեռ չէր քննուել ժողովում: Ամենահրատապ նիւթը ընկերվարութեան հարցն էր, որի շուրջ դուրսը սուր վէճեր էին տեղի ունենում: Անդրանիկը խառնվել ու ժողովներին ներկայ չէր լինում: Նրան հետեւել էր եւ Մուրատը, որ աչքերի ցաւը պատճառ բերելով՝ նոյնպէս ժողովի չէր գալիս: Բուլղարիացի եւ Ամերիկացի պատգամաւորները սպառնում էին, որ ժողովից կը հեռանան, եթէ ընկերվարութիւնը ընդունուի:

Վերջին օրերը պաշտօնական նիստեր քիչ էին գումարուում: Տեղի էին ունենում մասնաւոր հաւաքոյթներ, ուր պատգամաւորները ուսումնասիրում էին ընկերային հարցերը: Դասախօսութիւններ էին կատարում, վիճում էին: Ընդհ. ժողովը մի տեսակ դպրոցի էր վերածուել:

Aram webaram.com

Այժմ Իշխանը, կողքիս նստած, ականջիս չշնչալով՝ ծանոթացնում էր ինձ պատգամաւորներին:

Ժողովին նախագահում էր կարճ մօրուքով ու կարմիր այտերով, ժպտուն աչքերով ու ճակատի վրայ թափուող անհանգստաբար մազերով, Թիֆլիսնիկ սեւ փողկապով համակրելի մէկը. Ֆաչաուր Մալումեանն էր (Ակնունին), որ ճարտարութեամբ վարում էր ժողովը: Նրա ալ կողմը բազմած էր «Ազատութեան ճանապարհին»ի հեղինակ Ղարիբը (Աւ. Ահարոնեան), աչքերը խուփ, կարծես, մտքով հեռու էր ժողովից:



ՍԻՄՈՆ ԶԱԻԱՐԵԱՆ

Ահարոնեանի կողքին նստած էր կարճահասակ ու նիհար, սեւ, խառնիճաղանճ մազերով ու մօրուքով, վառվռուն, դրաւիչ աչքերով Սիմոն Զաւարեանը, Դաշնակցութեան գլխաւոր հիմնադիրներից մէկը: Նախապահի ձախ կողմը՝ ճաղատ գլխով քարտուղարը՝ Մարտիրոս Յարութիւնեանը, ուսուցիչ եւ ուսանող Գերմանիայում: Սրա մօտ, արճանի նման, հանգիստ բազմած էր, խնամուած սեւ մօրուքով, ոսկի շրջանակով ակնոցներով, Եւրոպացիի տեսքով Միքայէլ Վարանդեանը, «Դրօշակ»ի խմբագիրը: Նախագահական սեղանի շուրջ նստած էին նաեւ Ամերիկայի պատգամաւորները՝ Ա. Վռամեան, Թ. Ճելալեան, Վ. Տաթեւեան, Բուլղարիայի պատգամաւոր եւ «Ռազմիկ» թերթի խմբագիր Ռ. Զարդարեանը:

Aram webaram.com

Ֆիչ անդին, ձախ կողմը, դլուխը կախ, սեւ ակնոցներով, Վանի պատգամաւոր Արամը: Նրա կողքին՝ վախտ մարմնով, խոշոր, վառվռուն աչքերով, ջղային չարժումներով, ծխախոտը միշտ շրթունքներին մի ադդիկ՝ Սուլթանի մահափորձի Ռուբինան: Եւ մօտը՝ ժլատ (Վլադիկաւկազի) չրջանի պատգամաւոր Տիկին Ժենիան: Ապա՝ Համօ Օհանջանեանի առիւծի դլուխը:

Սրանց դիմաց, միւս կողմը, ուշադրութիւնս գրաւեց լայն թիկնոցով մէկը, սեփ-սեւ, գոռոզ, չսանրուած մազերով ու մօրուքով մէկը: Կակուղ օձիքի սեւ փողկապը դարձած էր մի կողմ: Հազուստը արդուկի երես չէր տեսել: Զարմանալի էր դլուխը, ո՞ւր էի տեսել: Այնքան նման էր Սոկրատի դլխին, պատմութեան դասագրքում:

— Ռոստոմն է, ասաց Իշխանը: Ինձ դեռ ոչինչ չէր ասում այդ անունը:

Ռոստոմի աջ կողմը, աչքերը փակ, կարծես նիրհում էր Խանասորի Վարդանը: Միւս կողմում՝ բարեկազմ ու մշտազուարթ Սեւքարեցի Մաքօն եւ կապուտաչեայ, չիվահեր Սեպուհը:

Սրանց յետեւն էին Ատրպատականի պատգամաւորները. Կուկունեան խումբի անդամ, Սախալինի տաժանավայրից փախած Ստեփան Ստեփանեանը (Բալաջան) եւ Վահան Զաքարեանը:

Առանձին խումբ էին կազմում ձախակողմեան երիտասարդները, որոնց մէջացայ եւ ես: Եւրոպայի ուսանողական միութեան կողմից պատգամաւոր էր մեր ճեմարանական Արշակ Իսահակեանը, որ յետոյ դարձաւ Ա. Ջամալեան, կուսակցական ծածկանունով Ա. Արիսեան(*):

Շուտով ես այլեւս պէտք պիտի չունենայի Իշխանի օգնութեան: Սենեակ վարձեցի աւստրիացի մի ընտանիքում, ժողովավայրին մօտ, եւ մխրճուեցի Ընդհանուր ժողովի գործերի մէջ: Վիեննան հիանալի քաղաք էր, դեղարուեստի ակութ: Այդ օրերին սրճարաններում ու փողոցներում, ամէն տեղ եւ ամէն ոք երգում էին Լեհարի «Ուրախ Այրին» նոր օփերէթը: Գրաւիչ էին թանգարանները ու թատրոնները: Վիեննայի հռչակաւոր Օփերան ու տո-

---

(*) Ի դէպ յիշեմ, որ Արշակը, Ա. Արիսեան անունով, մի գրքոյկ էր գրել Հ. Յ. Դաշնակցութեան մասին «Ցառաջ» մատենաշարի համար, որ լոյս չտեսաւ: Ձեռագիրը ընկել էր Լրժինի ձեռքը, որ թարգմանել էր տուել ռուսերէն եւ ներկայացրել դատարանին: Հայերէն բնագիրը կորել է, բայց ռուսերէնը մնում է Հ. Յ. Դաշնակցութեան Գործ տպուած համարում, որից մի օրինակ կայ Հ. Յ. Դ. Դիւանում:

Aram webaram.com

նավաճառները: Պատգամաւորներից շատերը, մանաւանդ Իշխանը, ամէն առթից օգտւում էին ծլկելու ժողովից: Ես հաւատարիմ կեր-պով չէի բացակայում ոչ մէկ նիստից, աշխատում էի յանձնախում-բերում, մասնակցում էի Մարիահիլֆէ սրճարանի հաւաքոյթներին: Ժողովներում աւելի լսողի, քան թէ խօսողի դերում էի: Ինձ թւում էր, որ ամէնքը ինձանից աւելի խելացի էին եւ աւելի բան գիտէին. ես պէտք է դեռ շատ բան սովորէի հասնելու համար միւս ընկեր-ներին:



ՌՈՍՏՈՄ

Ընդարձակ օ-րակարգի վրայ դըր-ուած էին խիստ կա-բեւոր ու պատասխա-նատու հարցեր, ո-րոնց մէջ առանձնա-պէս ծանրակշիռ էին յեղափոխական ձեռ-նարկները երկրում, Սուլթանի մահափոր-ձի քննութիւնը, Հայ-Թաթարական կռիւ-ների հետ կապուած խնդիրները, Թրքահայ եւ ռուսահայ գաղթի հաշտեցումը, անջա-տողական շարժումը, Պարսկաստանի յեղա-փոխութեան մասնակ-ցութիւնը եւ, ի հարկէ ընկերվար ու թ ե ան հարցը, որ ապառնում էր պայթեցնել կուսակցութիւնը եւ Ընդհա-նուր ժողովը: Վիեննայի պատմական Ընդհանուր ժողովի մասին ժամանակին շատ է խօսուել ու գրուել մեր մամուլում, բայց փաս-տական տուեալներ շատ չկան: Հակառակ վճարովի չորս քարտու-ղարների, թերի են եւ ժողովի արձանագրութիւնները, որոնք պահ-ուած են Հ. Ց. Դ. կենտրոնական Դիւանում. ինչ որ պիտի ասուի եւ այժմ, չիշողութեան վրայ հիմնուած, բնականաբար, պէտք է լինի անկատար: Բայց եւ այնպէս, փորձենք ներկայացնել ընդհա-նուր պատկերը:

Aram webaram.com

Նախ՝ կազմը: Ինչպէս վերեւ յիշուած անուններից տեսնում ենք, ժողովում կուսակցութիւնը ներկայացուած էր իր մտաւորական եւ մարտական ամենաականաւոր դէմքերով: Ինձ նման համբակները քիչ կային: Հիմնադիրներից սկսած մինչեւ վերջին սերունդը առկայ էր:

Համեմատաբար սակաւ էին բուն երկրից, Թրքահայաստանից պատգամաւորները: Տարօնից, Բարձր Հայքից, Կիլիկիայից եւ Օսմանեան կայսրութեան մէւս մասից մարդ չէր կարողացել գալ, բայց այդ թերին լրացւում էր Անդրանիկի, Մուրատի, Մեպուհի, Զարդարեանի, Արամ Աչոտի, Վռամեանի նման գործիչներով, որոնք գործել էին երկրում եւ քաջածանօթ էին Թրքահայ իրականութեան:

Թրքահայկական հարցը ամէնից շատ էր զբաղեցնում Ընդհ. ժողովի պատգամաւորներին: Մասնաւորապէս Թրքահայ ընկերները վախ էին յայտնում, որ ռուսահայկական դատի եւ ընկերվարութեան որդեդրումը կարող է ծանր անդրադարձում ունենալ Թրքահայկական հարցի վրայ: Դաշնակցութիւնը առեղծուած է Թրքահայաստանի ազատութեան համար. դաւաճանութիւն պիտի լինի, եթէ դրանից դուրս ուրիշ նպատակ դրուի մեր ծրագրի մէջ: Ընդհանուր ժողովում, բայց մանաւանդ յանձնախմբում, բուռն ճառեր արտասանուեցին այս խմաստով, ծանր կամ թեթեւ ճառեր: Ցիշում եմ յատկապէս Վռամեանի, Արամ Աչոտի եւ Ա.. Իսահակեանի երկար եւ յուզիչ ճառերը: Ա.. Իսահակեանը այն ժամանակ դեռ Հայ Գուսան էր:

Պէտք է ասել, որ Թրքահայ հարցի եւ երկրում կատարուելիք յեղափոխական ձեռնարկների շուրջ տարակարծութիւնը մեծ չէր. եւ բանաձեւը անցաւ միաձայնութեամբ: Այ ու ձախ՝ ամէնքը համամիտ էին, որ Հ. Յ. Դաշնակցութեան գլխաւոր նպատակը Թրքահայաստանի ազատագրութիւնն է եւ որ այդ նպատակին ուժեղացնել յարատեւ կռիւը սուլթանական բռնապետութեան դէմ:

Եւ, յիրաւի, Վիեննայի Ընդհ. ժողովից յետոյ Դաշնակցութիւնը աւելի մեծ քանակութեամբ դրամ, մարդ եւ զէնք տրամադրեց Թրքահայ ազատագրական պայքարին. Դաւոյի դաւաճանութիւնը ցոյց տուեց թէ ինչքան շատ զէնք ու ռազմամթերք էր ամբարուած Վանում:

Աւելի բարդ եւ դժուար կարգադրուելիք խնդիր էր Դաշնակցութեան Կովկասեան գործունէութեան կամ Կովկասեան նախագծի խնդիրը, որ Թրքահայ–ռուսահայ տարակարծութեան ձեւ էր ընդու-

Aram webaram.com

նել՝ մի կողմից առաջ բերելով Միհրանական եւ միւս կողմից Անջատողական չարժումները:

Փաստօրէն Կովկասեան գործունէութեան ծրագիրը ընդունուած էր նախագծով, որ եկեղեցական կալուածների դրաւումից յետոյ կազմուած էր Արեւելեան Բիւրոյի կողմից եւ հաստատուած Դաշնակցութեան Մօրհուրդից: Մանաւանդ, 1905 թուի յեղափոխութիւնից յետոյ, Դաշնակցութիւնը ըսկըսել էր գործել իբրեւ Իուսաստանի կուսակցութիւն, մասնակցում էր համապետական եւ տեղական ընտրութիւններին, թերթեր էր հրատարակում, ունէր Արեւելեան Բիւրոյի պաշտօնաթերթը, հիմնել էր «Ցառագ» մատենաշարը, նախաձեռնել եւ մասնակցել էր Էջմիածնի կենտրոնական ժողովին: Ընդհ. ժողովը կատարուած փաստի առջեւ էր դնում: Թրքահայ ընկերները առանձնապէս խիստ քննադատում էին Արեւելեան Բիւրոյին, որ իրաւասութեան սահմաններից դուրս էր եկել եւ ինքնագլուխ ու կամայական որոշումներ էր թոյլ տուել:



ԹՈՎՄԱՍ ՃԷԼԱԼԵԱՆ

— Դուք ի՞նչ իրաւունք ունէիք «Ցառագ» օրաթերթը հրատարակելու, բորբոքուած բացատրութիւն էր պահանջում Ամերիկայի պատգամաւոր Թովմաս Ճէլալեանը:

— Իրաւունք ունէինք, Բիւրոյի կողմից անվրդով պատասխանում էր Համօ Օհանջանեանը:

Aram webaram.com

— Ցոյց տուէք, ի՞նչ իրաւունք, չէր հանգստանում ճէլալեանը:

— Ինչ իրաւո՞ւնք. նայեցէք նախորդ Ընդհ. ժողովի որոշումը, որ իրաւունք է տալիս Բիւրոյին թռուցիկները հրատարակել: «Ճառաջ»ը պարբերական թռուցիկ է...

Սրահը թնդում էր ծիծաղից, իսկ ճէլալեանը չարունակում էր հարուածել Բիւրոյին:

Երկար, յուզումնալից եւ սրտմաշուք վէճերից յետոյ կովկասեան Գործունէութիւնն էլ հաստատուեց ձայների ճնշիչ մեծամասնութեամբ: Հակառակ քուէարկողների մէջ էին, որքան յիշում եմ, Զարդարեանը, Ա. Խահակեանը, ճէլալեանը: Անդրանիկը եւ Մուրատը բացակայ էին ժողովից:

Ինձ առանձնապէս հետաքրքրում էր Անդրանիկի դիրքը ժողովներում, ուր, ընդհանրապէս, քիչ էր ներկայ լինում եւ յաճախ խօսք չէր առնում: Սակայն, երբ առնում էր, համարեա միշտ ընդդիմադիրի եւ քննադատողի դերի մէջ էր ներկայանում: Խօսում էր կցկտուր եւ անկապ, դառնացած եւ կրքոտ, աւելի քննուող հարցի առթիւ, քան մասին: Ինքնատիպ միտք կամ ծանրակշիռ դաղափար չէր յայտնում: Ունէ՞ր ու չէր յայտնում: Ինձ թւում էր, թէ նա մի բանից վիրաւորուած էր, բայց չէր համարձակւում պարզ ասել: Ինչ որ մի որդ կրծում էր նրա հոգին:

Անդրանիկին ամէնքը յարգում էին, եւ գնահատում իբրեւ քաջ մարդ եւ ազգային հերոս, բայց չեմ կարող ասել, թէ ժողովականների մէջ նրան սիրող մէկ հոգի գտնուէր: Անդրանիկի բնաւորութեան տէր մարդկանց չեն սիրում:

Որոշ չափով Թրքահայկական հարցի հետ կապուած էին եւ Հայ-Թաթարական կռիւներին վերաբերուող խնդիրները: Միհրանեան չարժումը, օրինակ, ինչի՞ ծագեց: Հայ-Թրքական հաշտութիւնից յետոյ, կռիւների վայրից վերադարձած զինուորներն ու խմբապետները, անաչխատ, չդոհանալով կուսակցութեան կողմից իրենց տրուած հատուցումից, սկսեցին դրամ պահանջել: Ինքնապաշտպանութեան համար հաւաքուած դումարները մեզ են պատկանում, — ասում էին նրանք: Դաշնակցութեան հակառակորդները, մասնաւորապէս «Մշակ» թերթը, դրգռում էին նրանց, դրդում էին ցոյցեր անել Դաշնակցութեան ղեկավարութեան դէմ, աշխատում էին դաղափարական ձեւ տալ եւ, ի վերջոյ, հրապարակ ելաւ Թրքահայ-ռուսահայ տխմար խնդիրը. իբր թէ ռուսահայերը չահագործում էին Թրքահայոց դատը իրենց նպատակների համար: Սրա-

Aram webaram.com

բապետ Մխիթար Քէչիչեանը դարձաւ այդ շարժման արտաքին դա-
դափարախօսն ու ղեկավարը. իրօք վարիչներ էին Համբարձում Ա-
ռաքելեանները:

Վիեննայի Ընդհ. ժողովի որոշումից յետոյ այս շարժումը
ինքնաբերաբար մեռաւ: Մխիթարը դարձաւ ցարական կառավարու-
թեան զործակալ եւ արժանացաւ արդար հատուցման:

Այս հարցի կապակցութեամբ յիշեմ մի զաւեշտական միջա-
դէպ: Ընդհանուր ժողովում քննւում էին Հայ-Թաթարական կռիւնե-
րին եւ Մխիթարեան շարժման վերաբերող նիւթերը: Սրահում
լարուած, ջղային տրամադրութիւն էր տիրում: Ճօսք առաւ Զա-
ւարեանը եւ մի յուզումնալից ճառ արտասանեց, որ աւելի եւս խըս-
տացրեց սրահի մթնոլորտը: Նա մեղադրեց Մխիթարին, եւ նրա զոր-
ծակիցներին անուանեց բանդիտ: Մանր խօսքեր ասաց նաեւ կու-
սակցութեան ղեկավարների հասցէին, որոնք երկար ժամանակ չէին
հասկացել ծանր պայմանների մէջ կռիւներում եղած եւ վերջը թի-
կունքում անզործութեան դատապարտուած մարդկանց: Բնական
էր, որ անզործ եւ անօթի մնացած մարդիկ պիտի պահանջէին, որ
իրենց անունով ինքնապաշտպանութեան համար հաւաքուած զրամը
իրենց բաժնուէը: Այդ զրամը նրանց բարոյապէս քայքայեց. հիմա
էլ սպառնում են մեզ ուտել:

— Ի՞նչ անենք, ուրեմն, կտրեց նրա խօսքը Ակնունին:

— Ի՞նչ անենք, աչքերից չանթեր արձակելով, բացագանչեց
Զաւարեանը. հիմա ես կ'ասեմ ձեզ՝ ինչ անենք: Ես առաջարկում եմ
Հայ-Թաթարական կռիւների առթիւ հանգանակուած գումարի մնա-
ցորդը բերել այստեղ եւ բոլորիս աչքի առջեւ այրել...

Սրահը որոտաց ընդհանուր ծիծաղից: Ողբերգութիւնը փոխ-
ուեց զաւեշտի: Բայց Զաւարեանը լուրջ կերպով պնդում էր իր ա-
ռաջարկի վրայ:

Ինձ համար անմոռանալի է եւ Սուլթանի մահափորձին վաս-
տօրէն մասնակցող Սաֆոյի դատը: Ընդհ. ժողովը որոշեց ժողովի
ամբողջ կազմով վերածուել դատական մարմնի եւ այդպէս քննել
գործը: Սաֆոն ներկայ էր եւ կորովի կերպով պաշտպանեց իրեն:
Դատախազ չկար, բայց Ռուբինան իր երեւոյթով մի տեսակ դատա-
խազի դեր էր կատարում: Ամէն անգամ, երբ արտասանւում էր
Քրիստափորի անունը, նա ուշաթափւում էր կամ ջղային բացագան-
չութիւններ անում:

Ընդհանուր ժողովի առջեւ Սուլթանի մահափորձի գործը ներ-

Aram webaram.com

կայացուեց այնպէս, որ Քրիստափորի եւ Սաֆոյի հակամարտութեան տպաւորութիւն ստացուեց:

Սաֆոն (Մարգար Մարգարեան) հին յեղափոխական էր, վաստակաւոր գործիչ, մտաւորական եւ մարտական ոյժ: Նրա անունը հանրածանօթ էր Դաշնակցութեան մէջ, առաջին տարիներին, իբրեւ երկրի յեղափոխական ձեռնարկներին մասնակից:

Հ. Յ. Դաշնակցութեան երրորդ Ընդհ. ժողովում, 1904ին, Սոֆիայում, որոշւում է, ի միջի այլ ձեռնարկների, ահաբեկման ենթարկել Սուլթան Ապտուլ Համիդին: Գործի կազմակերպութիւնն ու ղեկավարութիւնը ստանձնում է Քրիստափոր Միքայէլեանը:

Քրիստափորն է կազմում եւ Սուլթանի մահափորձի ծրագիրը — սպաննել ռումբով Սէլամլըքի հանդէսին, մզկիթից դուրս գալու ժամանակ: Քրիստափորը ընտրում է նաեւ իրեն գործակիցներ, որոնց մէջ լինում են եւ Օր. Ռուբինա Արէշեանն ու Սաֆոն: Ռուբինան պէտք է ուժանակով պինուած կառքի մէջ նստած՝ ներկայ լինէր Սէլամլըքի հանդէսին եւ երբ Սուլթանը դուրս գար մզկիթից, պայթեցնէր կառքը, եւ ինքն էլ սպաննուէր Սուլթանի հետ միասին:

Քրիստափորը, մեծահարուստ Սամուէլ Ծայն անունով, Ռուբինայի հետ — իբրեւ իր աղջիկը — այցելում էր Պոլիս, ներկայ լինում Սէլամլըքի հանդէսին եւ տեղն ու տեղը ուսումնասիրելով բոլոր պայմանները, նպատակայարմար է գտնում մահափորձի ծրագիրը: Մի դժբախտ պատահար, սակայն, թոյլ չի տալիս, որ այդ ծրագիրը իրագործուի: Ռումբի փորձի ժամանակ, Սոֆիայի մօտ, Վիտոշի լանջին, սպաննւում է Քրստափորը:

Քրիստափորի գործը շարունակում է Սաֆոն: Վիեննայից Պոլիս է փոխադրւում մի թանկարժէք կառք: Մակեդոնացի բարեկամ յեղափոխականների միջոցով ձեռք է բերում անհրաժեշտ քանակութեամբ ուժանակ: Ուսումնասիրում են Սէլամլըքի պայմանները: Երկար դիտողութիւնները հաստատում են, որ Սուլթանը ամէն Ուրբաթ գալիս է մզկիթ եւ ճիշդ միեւնոյն ժամին դուրս է գալիս մզկիթից: Այս փաստի վրայ հիմնուած, Սաֆոն փոխում է նախկին որոշումը. փոխանակ Ռուբինային վստահելու ռումբի պայթումը, որոշում է կառքի մէջ դնել ժամացոյցով դժոխային մեքենայ, որ ճիշդ պայթէր Սուլթանի մզկիթից դուրս գալու վայրկեանին:

Մահափորձի համար որոշուած Ուրբաթ օրը Ռուբինայի կառքը կանգ է առնում մզկիթի մօտ, Սէլամլըքի ուրիշ հանդիսատեսների շարքին՝ լարուած դժոխային մեքենայով նստարանի տակ: Սուլթանը հանդիսաւոր կերպով մուտք է գործում մզկիթ: Երբ բախտո-

Aram webaram.com

բոշ վայրկեանը մօտենում է, կառքում, դժոխային մեքենայի վրայ նստած Ռուբինան անհետանում է: Կառքը ահաւոր որոտով պայթում է, աւեր ու մահ եւ սարսափ տարածելով չուրջը, բայց Սուլթանը խօսքի բռնուելով մղկիթից ներս՝ ազատւում է մահից...

Կուսակցութիւնը յանցաւոր էր նկատում Սաֆոյին, կախակայել էր նրան եւ այժմ ահա Ընդհանուր ժողովը, իբրեւ դատական մարմին, դատում էր նրան:

Դժուար է այսօր հարազատութեամբ պատկերացնել ամբողջ դործը, բայց մտքումս լաւ են մնացել ամբաստանութեան կէտերը եւ Սաֆոյի տուած պատասխանը:

Ամբաստանագիրը եւ ամբաստանող ճառախօսները ծանրանում էին գլխաւորապէս հետեւեալ երկու կէտերի վրայ.

1. Սաֆոն հաշտ չէր Քրիստափորի հետ, խնդիրներ էր ունեցել նրա հետ, նախանձում էր նրան:

2. Նախանձից դրդուած՝ Սաֆոն փոխել էր Քրիստափորի կազմած մահափորձի ծրագիրը, որի հետեւանքով մահափորձը վիժել էր:

Այս իմաստով խօսւում էին բուռն ճառեր. Ռուբինան ջղային ցնցումներ էր ունենում կամ ուշաթափւում էր Քրիստափորի անունը լսելիս. բայց մեղադրանքի չօշափելի փաստեր քիչ էին տրւում: Աւելի անփոխարինելին՝ Քրիստափորի կորուստն եւ մահափորձի անյաջողութեան ցաւն էր խօսում մարդկանց մէջ: Մտքերի վրայ զգացումն էր իշխում:

Սաֆոն, երեւութապէս անյոյզ՝ համբերութեամբ լսում էր ամենազառն խօսքերը: Ես ուշադրութեամբ հետեւում էի նրա դէմքի արտայայտութեան. նա, կարծես, ուրիշի մասին խօսուած ճառերն էր լսում: Մէկ անգամ միայն ցնցուեց ու բացագանչեց, երբ մի պատգամաւոր նրա հասցէին նետեց դաւաճան բառը:

Երբ նախագահը խօսքը տուեց Սաֆոյին, նա դանդաղ ոտքի ելաւ եւ ամբողջ սրահը ականջ կտրեց: Նա յայտնապէս ազդուած էր, բայց աշխատում էր ցոյց չտալ ներքին յուզումը:

— Հիմա հերթը դաւաճանինն է. սկսեց նա. ես համբերութեամբ լսեցի ձեզ, դուք էլ համբերութեամբ լսեցէք ինձ:

Եւ ապա անցաւ Քրիստափորի եւ իր յարաբերութիւններին: Ի՞նչ հիմք ունէին պատգամաւորները ասելու, թէ ինքը անձնական խնդիր է ունեցել, նախանձել է Քրիստափորին: Այդպիսի փաստ դոյութիւն չունի: Նա ընդունում է Քրիստափորի մեծութիւնը, բայց մեծ մարդիկ էլ կարող են սխալուել: Ինքը երբեմն քննադատել է

Aram webaram.com

Քրիստափորի սխալները, բայց այդ երբեք չի ազդել նրանց ընկերական փոխյարաբերութիւնների վրայ: Արեւի վրայ էլ բիծեր կան, բայց մի՞թէ այդ իրաւունք է տալիս մեզ չընդունելու արեւի զօրութիւնը:

Նախանձի մասին են խօսում: Ի՞նչ պատճառ ունէր նա նախանձելու Քրիստափորին: Նրանց գործունէութեան ասպարէզները տարբեր էին: Եւ ինքը ինչո՞ւ նախանձից դրդուած պիտի փոխէր մահափորձի ծրագիրը:

Ծրագիրը փոխել էր, որովհետեւ նա համոզուած էր, որ մեքենան աւելի վստահելի էր, քան մարդկային նեարդները, մանաւանդ այս տակաւ աղջկայ ջղերը: Դժբախտ պատահարը փրկեց Սուլթանին: Դժբախտութիւն ամէն գործում էլ պատահում է: Դուք քաւութեան նոխազ էք փնտռում. թող ես լինեմ քաւութեան նոխազ, միայն թող կուռ եւ համերաշխ մնայ Դաշնակցութիւնը:

Պէտք է ասել, թէ Սաֆոյի ուժեղ տրամաբանութեամբ եւ անկեղծ չեչոտով արտասանած ճառը զգալի ապաւորութիւն գործեց ժողովի վրայ, բայց իրերի ընթացքը չէր կարող փոխել. մահափորձի անյաջողութեան առաջ բերած ցաւն ու վրդովումը այնքան սաստիկ էին, որ իրօք քաւութեան նոխազը անհրաժեշտ էր:

Սաֆոյի պաշտպանողականից յետոյ տեղի ունեցաւ բանաձեւի քուէարկութիւնը: Միայն մէկ առաջարկ կար. Սաֆոյին արտաքսել Դաշնակցութեան շարքերից: Բանաձեւը անցաւ: Ես հակառակ քուէարկեցի:

Ռոստոմը այդ նկատել էր: Մի օր նա հարցրեց ինձ:

— Դու Սաֆոյի բանաձեւին հակառակ քուէ տուիր, ինչո՞ւ:

— Ինձ թւում է, պատասխանեցի ես, ժողովը արդար չեղաւ Սաֆոյի վերաբերմամբ:

— Ինչպէ՞ս թէ, բայց չէ՞ որ մահափորձը ձախողեց. պատասխանատու ղեկավարները չպիտի՞ պատժուէին:

— Այդ տրամաբանութեամբ Անդրանիկ չպիտի նստէր այս Ընդհանուր ժողովում. չէ՞ որ նա պատասխանատու ղեկավար էր Սասունի ապստամբութեան, որ նոյնպէս ձախողեց:

Ռոստոմը լռեց եւ ուրիշ նիւթի անցաւ: Ինձ թուաց՝ թէ նա փորձում էր ինձ:

Հետագային, ամէն անգամ, երբ Ռոստոմի ներկայութեամբ խօսք էր լինում Սաֆոյի գործի մասին, Ռոստոմը լսում էր եւ խօսքը դարձնում ուրիշ նիւթի:

Այդ դատավճռից յետոյ Սաֆոն հեռացաւ հասարակական աս-

Aram webaram.com

պարէզից եւ երբեք դուրս չեկաւ Դաշնակցութեան դէմ:

Հ. Յ. Դ. 9րդ Ընդհանուր ժողովը Երեւանում, 1919ին, բաւ համարեց Սաֆոյի պատիժը եւ իրաւունք տուեց նրան վերադառնալու կուսակցութեան շարքերը, բայց նա չվերադարձաւ:

Բոլոր հարցերի հարցը, սակայն, Վիեննայի Ընդհանուր ժողովում — ամենէն կենսական ու հրատապ խնդիրը — կապուած էր ընկերվարութեան հետ: Այս հարցի վրայ ամէնից հեշտ կարող էր սայթաքել Ընդհանուր ժողովը, այդ պատճառով էլ նա ամէնից ուշ դրուեց քննութեան, ժողովի առջեւ:

Այսօրուայ մտայնութեամբ դժուար հասկնալի է ընկերվարութեան առաջ բերած վախը: Չէ՞ որ Դաշնակցութիւնը հէնց առաջին օրից ընկերվարական էր: Նրա ամենէն ականաւոր հիմնադիրներն ու պատասխանատու գործիչները՝ Քրիստափոր, Զաւարեան, Ռոստոմ, Ցոլնան Դաւթեան եւ շատեր համոզուած ընկերվարականներ էին: Ծրագիրը ընկերվարական էր, նոյնիսկ մարքսիստական հոտով: Նրա կենտրոնական օրգան՝ «Դրօշակ»ի խմբագիրները՝ Ռոստոմ, Քրիստափոր, Զաւարեան, Վարանդեան ընկերվարականներ էին: Ուր պայմանները ներում էին, Դաշնակցականները մասնակցում էին ընկերվարական շարժման ու դասակարգային պայքարին: Իսկ այժմ... Կովկասեան նախագծի որդեգրումով Դաշնակցութիւնը դառնում էր զործօն ընկերվարական կուսակցութիւն Ռուսաստանում:

Խնդիրը, սակայն, այնքան էլ պարզ եւ դիւրին լուծուելիք չէր: Ռուսաստանի յեղափոխութիւնը նոր կացութիւն էր ստեղծել Կովկասում, ուր մուտք էին գործել համառուսական Սոցիալ-Դեմոկրատ եւ Սոցիալիստ-Յեղափոխական կուսակցութիւնները, որոնք արագ թափանցում էին հայ երիտասարդութեան մէջ: Միայն ծրագրով ընկերվարութիւն ընդունելը բաւական չէր, անհրաժեշտ էր կենդանի գործ. եւ երիտասարդութիւնը ընկերվարական գործունէութիւն էր պահանջում: Անհանդստութիւն էին պատճառում, մանաւանդ, ուսանողութիւնը եւ բազուկ նաւթահանքերի աշխատաւորութիւնը, որոնք սպառնում էին անջատուել, եթէ Դաշնակցութիւնը ընկերվարական գործօն կուսակցութեան չվերածուի:

Ընկերվարութեան հարցում Ընդհանուր ժողովը, ի վերջոյ, երեք մասի բաժանուեց: Ակկոդմեանները՝ Ռ. Զարդարեան, Աւ. Իսահակեան, Սարգիս Մինասեան, Թ. Ճէլալեան, Անդրանիկ, Մուրատ, եւայլն. լսել անգամ չէին ուզում ընկերվարութեան մասին: Զախակողմեանները՝ Աւ. Շահխաթունեան, Ա. Ջամալեան, Մա-

Aram webaram.com

չուրեան եւ ես մոլեռանդ ընկերվարականներ էինք: Շահխաթունեանը նոյնիսկ մանդատ ունէր Ռուսաստանի ուսանողութիւնից, որ եթէ ընկերվարութիւնը մերժուի, ձգել ժողովը եւ հեռանալ:

Ընդհանուր ժողովի ճնշիչ մեծամասնութիւնը կողմ էր կենտրոնին, որ ընկերվարութեան հակառակ չէր, բայց աշխատում էր ընկերվարութիւնը հաշտեցնել Թրքահայ դատի հետ: Կենտրոնում էին Զաւարեանը, Ռոստոմը, Ակնունին, Ահարոնեանը, Վարանդեանը, Արամը, Իշխանը, Զաքարեանը, Բալաջանը, Վարդանը, Մեւքարեցի Սաքօն, Սեպուհը, բժ. Զաւրեանը, որ երեւութապէս ձախակողմեանների հետն էլ էր: Վռամեանը, որ առաջ անհաշտ հակառակորդ էր ընկերվարութեան, բայց, ի վերջոյ, հաշտուեց: Նա ամբողջ ժամանակ դրպանում կրում էր Շարլ Ժիդի քաղաքատնտեսութեան հատորը, ծանօթանում էր ընկերային չարժումների պատմութեան ու ձեւերին:

Ընկերվարութեան քննութիւնը տեւեց օրեր: Արտայայտուեցին գրեթէ բոլոր պատգամաւորները, ոմանք մի քանի անգամ: Իմ վրայ ամէնից ուժեղ տպաւորութիւն գործեցին Զաւարեանի, Արամ Աչոտի եւ Ա. Իսահակեանի ճառերը: Զաւարեանը հմուտ եւ համոզուած տեսաբան էր ընկերվարութեան, կատարելապէս տիրում էր նիւթին եւ դիտէր ունկնդիրների վրայ ազդելու միջոցները: Մտաւորական մարդու համար հաճոյք էր լսել նրա առաջ բերած փաստերն ու դրաւիչ բանավարութիւնները:

Արամ Աչոտը (Սարգիս Մինասեան) շատ կարդացած, համոզուած սկզբունքային հակառակորդ էր ընկերվարութեան. խօսում էր հանդարտ եւ անյոյզ, բայց հիանալի կերպով ուսումնասիրել էր քաղքենի նշանաւոր հակաընկերվարականների տեսութիւնները:

Ա. Իսահակեանը բոլորովին հռետոր չէր. խօսում էր կակազելով, բայց այս անգամ այնպէս փայլուն կերպով ներկայացրեց իր հակաընկերվարական, նիցչէական, անիշխանական փիլիսոփայութիւնը, որ ամբողջ ժողովը բուռն կերպով ծափահարեց: Տեղը նստելուց առաջ նա ասաց.

— Շատ տղերք, ծափահարում էք, բայց քուէ չպիտի տաք:

Ես անհամբեր սպասում էի Վարանդեանի խօսքին: «Դրօշակի» խմբագիրը այն օրերին, կարելի է ասել, դաշնակցական երիտասարդութեան կուռքն էր, եւ ես սիրում էի շքեղ արձակով գրուած նրա յօդուածները: Մեծ եղաւ հիասթափութիւնս. Վարանդեանը արտասանեց մի շատ թոյլ ճառ: Աւելի լաւ է միայն գրէ եւ բնաւ ճառ չխօսէ, մտածեցի ես:

Aram webaram.com

Պէտք է ասել, որ պերճախօս հռետորներ շատ չկային Ընդհանուր ժողովում: Ահարոնեանը հիանալի հռետոր էր, բայց կուտ քիչ կար նրա ճառերում: Թոստոմը ասում էր Ահարոնեանի ճառերի մասին.— «Լիմոնատ լինի կարծես, հաճոյքով կը խմես, բայց անունդ չկայ մէջը»:

Աւելի բովանդակալից ճառախօս էր Ակնունին, որ, սակայն, Ահարոնեանի պերճանքը չունէր: Մի տարի վերջը նա պիտի դառնար Պոլսի բեմերի զարդը:

Զաւարեանը հռետոր չէր, թէեւ իր ճառերը լեցուն էին եւ տպաւորիչ:

Բոլորովին ճառախօս չէր Թոստոմը. նա խօսում էր բառեր փնտռելով. յաճախ ձեռքի օգնութեամբ, բայց զարմանալի կերպով հաճելի էր նրան լսելը:

Վիճաբանութիւնները ընկերվարութեան շուրջ տեւեցին շատ երկար եւ եղան խիստ բուռն ու աղմկալից: Մասնաւորապէս անհաշտ էր ու կրքոտ աջակողմից Թումաս Ճէլալեանը: Նա տեղի-անտեղի աղմուկ էր հանում, բռունցք էր ցոյց տալիս հակառակորդներին, ոչ-ժողովական բառեր էր գործածում: Մենք նրան «խուլիգան» էինք կոչում:



ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Պակաս անզուսպ չէր ձախից Աւետիք Շահխաթունեանը, թէեւ

Aram webaram.com

աւելի բարեկիրթ ժողովական էր: Նա իր փոքրիկ բռունցքը զարնում էր սեղանին, սպառնում էր ժողովից հեռանալ, եթէ ընկերվարութիւնը չընդունուի:

Ջամալեանը եւս բուռն էր, ծայրայեղ ընկերվարական, բայց Աւետիքի անհաչտութիւնը չունէր: Առհասարակ, նկատելի էր եւրոպական ուսանողների տարբերութիւնը. Ռուսաստանցիները մաքսիմալիստ էին, խստապահանջ, կամ ամէն ինչ, կամ ոչինչ: Շահխաթունեանը դեռ մեղմերից էր, բայց իր դրպանում ունէր իրեն ուղարկողների մանդատը, եթէ ընկերվարութիւնը մերժուի, ձգել Ընդհանուր ժողովը եւ հեռանալ:

Եւրոպայի ուսանողները աւելի չափաւոր էին եւ առարկայական պայմանները հաշուի առնող: Մենք նրանց արհամարհանքով կոչում էինք օպորտիւնիստ՝ պատեհապաշտներ: Ջամալեանը անխոցելի էր, որպէս ընկերվարական. բայց եւ երբեք բերան չէր առնում «հեռանալ» բառը: Ընդհակառակը, նա անվերապահ դատապարտում էր անջատականներին:

Մինչ մենք Վիեննայում վիճում էինք, Կովկասում հող էր դրաւում անջատական շարժումը, գլխաւորութեամբ բժիշկ Լեւոն Աֆաբէգեանի: Մեր լաւագոյն երիտասարդ ընկերները անցնում էին անջատականների կողմը: Վիեննա խիստ մռայլ լուրեր էին հասնում Թիֆլիսից ու Բագուից. անջատականները աջից ու ձախից, Մխրանի եւ Աֆաբէգեանի կողմնակիցները, լուրջ կերպով սպառնում էին Դաշնակցութեան միասնականութեան:

Անհրաժեշտ էր չտապել, չուտով վերջացնել խօսարան դարձած Ընդհանուր ժողովը, բայց ճառերի հեղեղը ներսը եւ դուրսը, չէր վերջանում: Ամէնքը ուզում էին խօսել, իրենց կարծիքը յայտնել: Ինձ նման սակաւախօսները չղայնանում էին:

Մի օր ի պաշտպանութիւն ընկերվարութեան երկար ճառ խօսեց Սեպուհը: Ժողովականները ակնյայտ կերպով չղայնանում էին. երբ անդին Զաւարեանի եւ Վարանդեանի նման մարդիկ էին նստած, ընկերվարութեան մասին ի՞նչ կարող էր ասել մի պարզ խմբապետ: Ես չդիմացայ ու պոռացի.

— Բաւական է, դու ի՞նչ գիտես սոցիալիզմի մասին...

Պոռացի եւ ղջացի. բայց այլեւս ուշ էր: Սեպուհը կեցաւ՝ մինչեւ ականջները կարմրած: Յանդիմով նայեց ինձ եւ բռունցքները ճօճելով խոյացաւ իմ կողմը: Ես էլ ցատկեցի տեղիցս եւ նոյնպէս բռունցքներս շարժելով՝ յարձակուեցի նրա վրայ: Գիտեմ, ինչ

Aram webaram.com

պիտի լինէր վերջը, եթէ արագ մէջ չմտնէր Թոստոմը եւ չբաժնէր մեզ։

Սեպուհն էլ մեր այն խմբապետներից էր, որոնք չափազանց ջղայնանում էին, եթէ մէկը կասկածի ենթարկէր իրենց մտաւորականութիւնը։ Եթէ ասէիր, թէ ղէնք բանեցնել չգիտես, Սեպուհը ներողամիտ ժպիտով կը պատասխանէր, բայց եթէ ասէիր յօդուած գրել չգիտես, վայն էր եկել գլխիդ։

Միջադէպը, սակայն, լուրջ հետեւանքներ չունեցաւ։ Մենք նոյն օրն իսկ միասին ճաշեցինք Սեպուհի եւ ուրիշ ընկերների հետ։

Վիեննայի այդ ճաշերն էլ չեմ կարողանում մոռանալ։ Պատդամաւորների «արիստոկրատ» մասը — Ահարոնեան, Ակնունի, Վարանդեան — ճաշում էր առանձին, մեծ մասամբ վաչեանի հետ, իրենց պանդոկի ճաշարանում։ Մենք ձախակողմեաններս, սովորաբար, մանաւոր տան ճաշ էինք ուտում աւստրիացի մի ընտանիքում։ Բժ. Տէր Դաւթեան, Պապաշա, Վարդան, Սաքօ, Սեպուհ, Բալաջան եւ մի քանի ուրիշներ ճաշում էին մի ճաշարանում, Մարիահելֆէ սրճարանի մօտ։ Ես երբեմն միանում էի սրանց։

Ի գարմանս վիեննացի ճաշողների, մենք աղմուկով ներս էինք մտնում, գրաւում էինք մեզ վերապահուած անկիւնի կլոր մեծ սեղանը եւ մինչեւ ապսպրուած կերակուրը բերէին, սեղանի վրայի հացը ուտում-վերջացնում էինք։ Ընդհանրապէս, իւրաքանչիւր ճաշողին մէկ կամ երկու հացիկ էր արւում — զէմելխէն — եւ առանձին էին հաշւում։ Սպասեակը նորից էր բերում մի քանի հացիկ, որ նոյնպէս անհետանում էր անմիջապէս։ Վերջը սպասաւորը մեր սեղանի վրայ դնում էր մեծ զամբիւղով 40–50 հացիկ, որից ճաշի վերջը քան չէր մնում։ Սպասաւորները եւ օտար ճաշողները ծիծաղով դիտում էին մեզ։ Երեւի ասում էին.— Այս ի՞նչ վայրենի մարդիկ են։

Ճաշի վրայ չարունակւում էր օրակարգի հարցերի քննութիւնը, կամ Բալաջանը զուարճալի պատմութիւններով խնդացնում էր մեզ։

Ընկերվարութեան հարցի քննութիւնը, վերջապէս, հասաւ իր վախճանին. բոլոր ճառերը խօսուած էին, եւ ժամանակն էր բանաձեւելու.— Մերժել կամ ընդունել ընկերվարութիւնը։ Ժողովը, համարեա միաձայն, ընդունեց ընկերվարութիւնը։ Մի քանի հոգի միայն հակառակ քուէ տուին — Ճէլալեանը, Արամ Աչոտը, Ա. Իսահակեանը։ Եւ, կարծեմ, Ջամալեանն էր, որ պոռաց Իսահակեանի հասցէին.

— Աւետի՛ք, քանի որ ընկերվարութեան հակառակ քուէարկ-

Aram webaram.com

կեցիր, դու այժմ պէտք է հեռանաս Դաշնակցութիւնից:

— Ա՛յ, չան տղայ, բոլոր լաւ տղերքը Դաշնակցութեան մէջ են, ես ո՞նց հեռանամ:

Ընդհանուր ժողովի որոշումը անմիջապէս հեռագրուեց Թիֆլիսի մեր թերթին՝ ի ցնծութիւն բոլոր դաշնակցականների եւ համակիրների: Դաշնակցութիւնը մնում էր մէկ եւ անբաժան, միասնական եւ զօրաւոր:

Մխրանական չարժումը չուտով այլասերուեց ու փոշիացաւ: Անջատականները բոլորովին անջատուեցան եւ, ի վերջոյ, միացան ուս Սոցիալիստ Յեղափոխականներին: Մի մասն էլ դերազատեց մնալ Դաշնակցութեան չարքերում:

Ընդհանուր ժողովը ընտրեց մի յանձնախումբ նոր ծրագիր կազմելու համար — Ռոստոմ, Զաւարեան, Վարանդեան, Ակնունի եւ Արաբատսկի: Ընտրեց Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրօները եւ երկրի ատաձանատու մարմինները. վերջացրեց բոլոր գործերը եւ փակուեց մօտ չորս ամսուայ յուզումնալից աշխատանքից յետոյ:

Ի պատիւ Դաշնակցութեան Ընդհանուր ժողովի, ճաշկերոյթ տուեց Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը վանքի սրահում:

Յիշատակութեան արժանի է եւ Մայիս մէկի տօնակատարութիւնը Վիեննայի արուարձան Քալենբերգի անտառներում:

Աւստրիական Սոցիալ-Դէմոկրատ կուսակցութեան կենտր. կոմիտէն հրաւէր էր ուղղել Ընդհանուր ժողովին մասնակցելու Մայիսեան հանդիսութիւններին: Մայիս մէկին տեղի պիտի ունենային բանուորական չքերթներ մայրաքաղաքի փողոցներում, հրապարակային ժողովներ եւ հանդէսներ քաղաքում եւ արուարձաններում: Ընդհանուր ժողովը պատուիրակութիւն ուղարկեց Սոցիալ-Դէմոկրատ կենտր. կոմիտէի մօտ, չնորհաւորելու աշխատաւորական տօնը եւ որոշեց դաշտահանդէս ունենալ Քալենբերգի անտառում:

Արդէն իսկ սիրուն եւ զուարթ Վիեննան այդ օրը աւելի գեղեցիկ էր եւ ուրախ: Փողոցները զարդարուած էին դրօշակներով: Աշխատաւորական չքերթները արհեստակցական միութիւնների դրօշակներով թնդացնում էին պողոտաները: Ամէն կողմ տիրում էր արտակարգ եռուզեռ:

Կէսօրից առաջ, քաղաքի կենտրոնական մասի չքերթները դիտելուց յետոյ, մենք մի քանի ընկերներով, Ռոստոմի հետ, ելանք տրաքարշ առինք երկաթուղու կայարանից՝ դնացքով Քալենբերգ երթալու համար: Ճիշտ այդ օրերին քննւում էր պարսկական յեղափոխութեան մասնակցելու առաջարկը ,որին ես համամիտ չէի:

Aram webaram.com

Ելեքտրաքարշի յետեւի մասում, ուրկէ, Ռոստոմը հարցրեց ինձ.

— Դու ինչո՞ւ հակառակ ես, որ Դաշնակցութիւնը մասնակցի պարսկական յեղափոխութեան:

Ինձ համար անակնկալ էր այս հարցումը. ես ո՞վ, որ Ռոստոմը հետաքրքրուի իմ կարծիքով:

— Ինձ թւում է, որ Հայերը շահ չունին պարսկական յեղափոխութիւնից, պատասխանեցի ես, մենք ինչո՞ւ զոհեր պիտի տանք Պարսիկների համար:

— Ի՞նչ զոհեր, խնդաց Ռոստոմը: Տուէք ինձ 500 դաշնակցական ֆեդայիներ, եւ ես կը գրաւեմ ամբողջ Ատրպատականը:

Ճաճախ դժուար էր լինում հասկանալ՝ լո՞ւրջ էր խօսում Ռոստոմը, թէ հանաք էր անում:

Բալաջանը, որ լսում էր մեզ, հաստատեց Ռոստոմի խօսքերը.

— Հինգ հարիւր ֆէդային նոյնիսկ շատ է:

Հետագայ դէպքերը — Եփրեմ, Քեռի — ցոյց տուին, որ Ռոստոմի ու Բալաջանի խօսքերը չափազանցութիւն չէին, բայց եւ այնպէս, ես այսօր էլ նոյն կարծիքի եմ. մենք զորձ չունէինք Պարսկաստանում: Հայ ժողովրդին ի՞նչ շահ այն օրերի պարսկական յեղափոխութիւնից:

Քալենբերգում մեզ սպասում էր անակնկալ. Ընդհանուր ժողովին հիւր էր եկել մակեդոնացի նշանաւոր յեղափոխական Բորիս Սարաֆովը եւ այժմ մեզ մօտ էր, դաշտահանդէսում:

Բարձրահասակ ու բարեեռնիլ, կապուտաչեայ, կոկիկ հագնուած՝ համակրելի տեսք ունէր Սարաֆովը: Նա ուրախ էր, որ գտնւում էր հայ բարեկամների շրջանում:

Համեստ հիւրասիրութիւնից, գրական–գեղարուեստական կարճ հանդէսից յետոյ, Ա.Հարոնեանը ֆրանսերէն ճառ խօսեց Հայ–Մակեդոնական բարեկամութեան մասին: Սարաֆովը պատասխանեց նոյնպէս ֆրանսերէն: Նա ջերմ խօսքերով չնորհաւորեց Դաշնակցութեան Ընդհանուր ժողովը եւ ասաց, թէ այժմ Օսմանեան կայսրութեան սահմաններում դերի մնացել են միայն Հայերը եւ Մակեդոնացիները: Հեռու չէ ժամը, երբ Հայաստանն ու Մակեդոնիան էլ կը լինեն ազատ: Կեցցէ՛ Հայ–Մակեդոնական եղբայրութիւնը:

Պրոգրամային բնոյթ կրող այս երկու ճառերը բուռն կերպով ծափահարուեցան Ընդհանուր ժողովի անդամների եւ ամէն կողմից հաւաքուած աւստրիական բազմութեան կողմից:

Aram webaram.com

Ինչ առաքելութեամբ էր եկել Բորիս Սարաֆովը — ես չիմացայ: Նա մի քանի օր միայն մնաց մեզ հետ:

Ընդհանուր ժողովի փակումից յետոյ, ես մօտ մի շաբաթ էլ մնացի, տեսնելու համար Վիեննայի հետաքրքրական վայրերը: Մինչեւ այդ, հազիւ ժամանակ էի ունեցել տեսնելու Մարիա Թերեզա հարուստ թանգարանը եւ Շէոնբրունի պալատը, ինչպէս եւ Փրաթէրի ժողովրդական զբօսատեղին իր հռչակաւոր վերասլաց «անիւ»ով:

Բժ. Զաւրեանը Շահխաթունեանին եւ ինձ տարել էր Վիեննայի հռչակաւոր Օփերան, «Վալկիրի»ի ներկայացման: Ինձ զարմացրեց հասարակութիւնը թատրոնում. ամէն մէկի ձեռքին խաղի լիբրետօն՝ հետեւում էին ներկայացման, կարծես աղօթելիս լինէին եկեղեցում: Վաղնէրի հիանալի դործը, սակայն, ինձ վրայ ազաւրութիւն չդործեց:

Այժմ, երբ Ընդհանուր ժողովը վերջացել էր, ես օր ու գիշեր շրջում էի քաղաքում, տեսնելու եւ լսելու համար ինչ որ պէտք էր տեսնել եւ լսել, թէ ինչո՞վ նշանաւոր էր Վիեննան:

Մեկնելուց մի քանի օր առաջ Ռոստոմը հարցրեց ինձ.

— Անցագիրդ մօ՞տդ է, կարո՞ղ եմ տեսնել:

Ես ցոյց տուի: Այն ժամանակ անցագրի վրայ նկար չկար: Դէմքիս արտաքին նշանները էլ չէին դրուած, ոչ էլ ծննդեան թուականը նշանակուած:

— Այս անցագիրը հարկաւոր է ինձ, ասաց Ռոստոմը, եւ դրեց գրպանը: Պատշաճն քեզ մի ուրիշ անցագիր կը տայ:

Պատշաճն ինձ մի նոր անցագիր տուեց, որով ես հասայ տուն, բայց իմ անցագիրս Ռոստոմին բարիք չբերեց: Բուքրէշում ոստիկանութիւնը կասկածել էր, որ ներկայացրած անցագիրը իրենը չէ. անցագիրը առել էին ձեռքից եւ իրեն էլ արտաքսել երկրից:

Հետաքրքրական մանրամասնութիւն. տարիներ վերջ, 1914ին, Հայոց Ազգային Բիւրօն ուզում էր Թիֆլիսից ինձ ուղարկել Ռումանիա, կամաւորական գործով: Ռումէն կառավարութիւնը մերժեց ինձ վիզա տալ, պատճառաբանելով, թէ ես կեղծ անցագրով մտել եմ Բուքրէշ եւ ոստիկանութիւնը ինձ արտաքսել է երկրից:

Ռոստոմը խնդրեց նաեւ, որ ես Սեւքարեցի Սաքոյի հետ մեկնեմ Վիեննայից, օգնելու նրան ճանապարհին:

Եւ մի գեղեցիկ երեկոյ, Սաքօն ու ես գնացք առինք Վիեննայի Հիւսիսային կայարանից՝ նա մի «մափրաշ» եւ մի սազ առած, իսկ ես մի վոխտ պայուսակ ձեռքիս. Ռոստոմը խիստ պատուիրել էր, երբորդ կարգով չճամբորդել, ուստ ոստիկանութեան աչքին

Aram webaram.com

կասկածելի չերեւալու համար, եւ ես համարեա իմ ունեցած ամբողջ դրամը վճարել էի երկրորդ կարգի տոմսակի:

Մինչեւ Վոլոչիսկ հասանք հանգիստ: Ուտելու պաշար ունէինք մեզ հետ: Գարեջուրի էլ դրամ կար: Սաքօն զուարթ իր սազով զուարճացնում էր աւստրիացի ճամբորդներին, որոնք զարմանում էին նրա ձեռքի տարօրինակ դործիքի վրայ:

Այստեղ հանգիստ սրտով կարելի էր Վիեննայի Ընդհանուր ժողովի պատմութիւնը վերջացնել, բայց դեռ ասելիք կայ, թէեւ այդ անմիջապէս կապ չունի Ընդհանուր ժողովի հետ:

Վոլոչիսկից կացութիւնը փոխուեց: Մեր դրաւած երկրորդ կարգի յարկաբաժնում նստեց մի ռուս պարոն. ծանօթացանք: Մի փաստաբան էր Եկատերինոսլաւից:

Կայարաններից մէկում պիտի ճաշէինք:

— Ես փող չունեմ, ասաց Սաքօն, վերջին կոպէկը ծախսեցի Վոլոչիսկում:

— Ես էլ չունեմ, պատասխանեցի: Կարծում էի, որ դու փող կ'ունենաս...

— Վա՛հ, քո տունը շինուի, ծաղր դարձանք հաւերի, բացականչեց Սաքօն՝ բարձր ծիծաղով: Եւ մնաց նստած:

— Չէ՞ք դալիս ճաշելու, հարցրեց ռուսը:

— Դէնգի նէտ (դրամ չկայ), պատասխանեց Սաքօն իր ծիծաղելի ռուսերէնով:

Մարդը զարմացած դուրս գնաց: Երեւի չհաւատաց. Վիեննայից Ռուսով, երկրորդ կարգով ճամբորդողը դրա՞մ չունենա՛ր...

Յաջորդ կայարանում մենք նորից դուրս չեկանք: Սաքօն կըշտացնում էր ինձ իր սազով:

Մարդը չդիմացաւ եւ հարցրեց.

— Պարոններ, անօթի չէ՞ք:

— Դէնգի նէտ, ասաց Սաքօն խնդալով եւ շարունակեց զընգըզընգացնել սազը:

— Ընկերս կարծել է, թէ ես փող ունեմ: Ես էլ կարծում էի, թէ նա ունի, եւ ահա երկուսս էլ չունենք, բացատրեցի ես:

Մարդը դրպանից հանեց դրամապանակը:

— Առէք, ինչքան պէտք ունիք: Վերջը կը վերադարձնէք:

— Մենք կովկասցի ենք, ասաց Սաքօն: Ուզում էր ասել, թէ կովկասցիները հպարտ են, անծանօթ մարդուց դրամ չեն առնում:

Բայց ռուսը պնդեց.

Aram webaram.com

— Աղաչում եմ. առէք: Հասցէս կը տամ, երբ տեղ հասնէք, կը վերադարձնէք:

Այլեւս նազ անելը աւելորդ էր: Մարդը տուեց մեզ 25 ռուբլի, ես տուի նրան իմ հասցէն ու առի իր հասցէն:

Այնուհետեւ այնքան բարեկամացանք, որ խնդրեց մեզ հիւր լինել իրեն Եկատերինոսլաւում: Մանաւանդ, շատ մտերմացաւ Սաքոյի հետ, որ իր կոտրտած ռուսերէնով զուարճալի պատմութիւններ էր անում եւ սազով ուրախութիւն էր պատճառում նրան: Ըստ երեւոյթին, աննշան մէկը չէր եւ իր քաղաքում յարգուած անձ էր: Վերադառնում էր Եւրոպայի ճամբորդութիւնից: Լաւ ծանօթ էր Վիեննային:

Մենք հիւր մնալու ժամանակ չունէինք: Մեր բարեկամը իջաւ Եկատերինոսլաւում, իսկ Սաքօն եւ ես շարունակեցինք մեր ճանապարհը՝ Սաքօն ուղղակի Կովկաս, իսկ ես մնացի Ռոստով-Նախիջեւանում:

Տուն հասնելով անմիջապէս փոխադրեցի Եկատերինոսլաւ մեր պարտքը: Հետզհետէ իմ կեանքը տարօրինակ ընթացք առաւ. ուսանողութիւն, փախուստ Ռուսաստանից, Թուրքիա, Ամերիկա, կամաւորական չարժում... Յեղափոխական չարժում. Ռուսաստանում ու Կովկասեան ռազմաճակատի փլուզում... Բաթումի խորհրդաժողով ու Հայաստանի Հանրապետութիւն... Պատահական հանդիպումը Վոլոշինով-Ռոստով ճանապարհի վրայ, բոլորովին մոռացել էի: Ինչ են պատահում նման դէպքեր...

Այստեղ արդէն կարելի էր դնել վերջակէտ եւ փակել մեր պատմութեան էջը, բայց կեանքը զարմանալի է, միշտ նոր անակնկալներ է հրամցնում:

1918 թուի ամառը, Հայաստանի անկախութեան հռչակումից մի քանի օր անցած, Հայոց Ազգային Խորհուրդը, Թիֆլիսից, որոշ յանձնարարութեամբ ուղարկեց ինձ Կամաւորական Բանակի մօտ: Յարաբերութիւնները Ռուսաստանի հետ համարեա կտրուած էին: Մեծ դժուարութեամբ, ծովով ու ցամաքով, ես ինձ ձգեցի Եկատերինոդար, Կուբանի կազակների մայրաքաղաքը, որ Կամաւորական Բանակի գլխաւոր կայաններից մէկն էր: Այնտեղ պիտի իմանայի Կամաւորական Բանակի հրամանատար Զօր. Ալեքսէեւի չտարբի տեղը:

Եկատերինոդարում իմ ընկեր ու բարեկամ փաստաբան Նիկողայոս Մաթունեանը, որ հայկական կոմիտէի ներկայացուցիչն էր

Aram webaram.com

տեղական իշխանութեան մօտ, եւ մարդ չկար, որի հետ ծանօթ չլինէր, տարաւ ինձ ընթրիքի Սպայական Միութեան ճաշարանը:

Նոր էինք տեղ գրաւել, երբ մեր սեղանին մօտեցաւ լեցուն մարմնով եւ ժպտուն աչքերով մի պինուորական: Մաթունեանը մեզ ծանօթացրեց եւ հրաւիրեց նորեկին ընթրելու մեզ հետ:

Նորեկի դէմքը ինձ ծանօթ թուաց: Տէ՛ր Աստուած, ո՞ւր էի տեսել ես այս մարդուն: Միտքս չարչարում էի, բայց չէի կարողանում յիշել: Մարդն էլ, կարծես, ուշադրութեամբ զննում էր ինձ: Ինչ որ պատմում էր Սաթունեանին, բայց ուշքը իմ վրայ էր: Վերջապէս, չդիմացաւ ու հարցրեց.

— Ինձ ծանօթ է թուում ձեր դէմքը: Ասացէք, խնդրեմ, ո՞ւր եմ պատիւ ունեցել տեսնելու ձեզ:

— Նոյն բանը կարող եմ ասել ես ձեզ, պատասխանեցի ես. ինձ ծանօթ է թուում ձեր դէմքը. ո՞ւր եմ տեսել ձեզ:

Երկուսս էլ չէինք յիշում եւ շարունակեցինք ընթրիքը:

Մէկ էլ մարդը սեղանի վրայ նետեց ձեռքի պատառաքաղը եւ բացագանչեց.

— Դուք Եկատերինոսլաւում եղե՞լ էք:

— Ոչ, ես Եկատերինոսլաւում չեմ եղել:

— Դուք Եկատերինոսլաւում ծանօթ ունեցե՞լ էք:

Ես այդ էլ չէի յիշում:

— Դուք Վիեննայում եղե՞լ էք, Վոլոչիսկ...

— Ա՛հ, յանկարծ յիշեցի ես. դուք Եկատերինոսլաւցի փաստաբա՞նն էք:

Մարդը ուրախութիւնից չդիտէր ինչ ասել: Ինդալով պատմեց Սաթունեանին մեր ճամբորդութեան բոլոր մանրամասնութիւնները:

— Իսկ ի՞նչ եղաւ այն տարօրինակ գործիքով երաժիշտը, հարցրեց նա Սեւքարեցի Սաքոյի մասին:

— Դժբախտաբար, նա մեռաւ Երեւանում, քոլերայից. մեր նշանաւոր հայդուկներից էր:

— Ես այդպէս էլ կարծում էի, յայտնի մարդ պիտի լինէր, հաստատեց նա:

Պարզուեց որ մեր բարեկամը նշանաւոր փաստաբան էր եւ հասարակական գործիչ Հարաւային Ռուսաստանում. ինչքան յաւում եմ որ անունը մոռացել եմ: Պահեստի սպայ էր եղել եւ պատերազմի սկիզբին զօրակոչի էր ենթարկուել: Այժմ զնդապետի աս-

Aram webaram.com

տիճան ունէր, ազդեցիկ պաշտօնեայ էր կամաւորական Բանակում, Թոստովում, ուր պիտի մեկնէր մի քանի օրից:

Աղ ու հաց կեր եւ բարեկամութիւնը պահիր, ասում է ռուսական առածը: Ինձ անդնահատելի ծառայութիւն պիտի մատուցաներ իմ այս բարեկամը, որի հետ միասին, մի քանի օրից, ես մեկնեցի կամաւորական Բանակի կենտրոնավայրը:

Հաղար ափսոս, որ չեմ յիշում այս համակրելի, Հայերիս անկեղծ բարեկամ ռուս մարդու անունը: Նրա աջակցութեամբ մեզ յաջողուեց կամաւորական Բանակից ստանալ երեք միլիոն փամփուշտ եւ խոստում՝ մեծաքանակ զէնք, ռազմամթերք եւ պինուրական օգնութիւն հասցնելու Հայաստանին: Եթէ Վրացիները չկըտրէին մեր ճանապարհը, ես հաւատում եմ, որ Զօր. Ալեքսէյեվը իր խոստումը կը կատարէր: Ի միջի այլոց, ես յանձնարարութիւն ունէի եւ դրամական օժանդակութիւն ստանալ կամաւորական Բանակից: Իմ բարեկամը ծանօթացրեց ինձ ելեմտական շրջանակների հետ: Ես ներկայ եղայ ելեմտական խորհրդի ժողովներից մէկին, ուր տեղեկութիւններ տուի Անդր-Կովկասի վերջին դէպքերի եւ նորակազմ հանրապետութիւնների, մասնաւորապէս Հայաստանի տնտեսական վիճակի մասին: Բնականաբար, մեզ մօտ դեռ հայկական չէքերը դոյութիւն չունէին եւ շրջանառութեան մէջ էին Անդր-Կովկասեան բոները, որոնք դրեթէ ամբողջապէս Վրացիների ձեռքն էին անցել՝ բուռն դժգոհութիւն առաջ բերելով Հայերի մէջ:

Բանկային խորհրդում էլ համակրանքը մեծ էր Հայերի հանդէպ, բայց տպաւորութիւնս այն եղաւ, որ դրամական չօշափելի օգնութիւն Հայաստան չէր կարող ունենալ: Առհասարակ, խորհրդի մարդիկ իրենք էլ վատահ չէին երեւում կամաւորական Բանակի ելեմտական կայուն ապագայի մասին:

Որտեղի՛ց որտեղ. Վիեննայի Ընդհանուր ժողով եւ կամաւորական Բանակ: Զարմանալի բաներ են տեղի ունենում այս մոլորակի վրայ, պարոննե՛ր...

1959, Յուլիս

Բուա Դը Բուլոն, Լիբանան

Aram webaram.com

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Վիեննայի Ընդհանուր ժողովից յետոյ, ես նորից դուրս եկայ շրջանները։ Այս անգամ, իբրեւ պեկուցարեր Ընդհանուր ժողովի։ Նայբանդի համարեա բոլոր հայաբնակ վայրերը, Եկատերինոդար, Արմաւիր, Սաւրոպոլ, Լուգանսկ, Իւզովկա եւայլն, պեկուցում տուի Ընդհանուր ժողովի մասին եւ զբաղուեցի տեղական կազմակերպչական գործերով։

Ընդհանուր ժողովից յետոյ, կուսակցութեան ներսը ամէն տեղ, արամադրութիւնները զգալապէս փոխուած էին։ Երիտասարդութիւնը, որ առաջ տարուած էր անջատական գաղափարներով, գոհ էր Ընդհանուր ժողովի որոշումներից. ռուսահայ–թրքահայ հարցը այլեւս կորցրել էր իր սրութիւնը։ Նոր վերելքի շրջան էր սկսւում Դաշնակցութեան կեանքում, որ, սակայն, պիտի վրդովուէր չուտով, Լժինեան արկածախնդրութեամբ։

Արագ կերպով շրջանները այցելելուց յետոյ, ես կենտր. կոմիտէի հրահանգով, վերադարձայ Ռոստով–Նոր Նախիջեւան։ Այստեղ կենտր. կոմիտէն դժուարութեան առջեւ էր։ «Նոր կեանք» շաբաթաթերթի շուրջ, որ հետեւում էր Դաշնակցութեան ուղղութեան, բայց կուսակցական չէր, առաջ էին եկել դժգոհութիւններ։ Կուսակցութիւնը պահանջում էր, որ թերթը դրուի աւելի խիստ հսկողութեան տակ, խմբագրութեան անդամները — Ց. Գարակէօզեան, Գ. Բէդէլեան եւ Գ. Անուխեան — չէին համաձայնւում, առարկելով, թէ թերթի նիւթական վիճակը կը վատանայ, մանաւանդ որ արդէն իսկ պարտքի տակ էր։ Անախորժ բանակցութիւններից յետոյ, կենտր. կոմիտէն եւ խմբագրութիւնը համաձայնութեան էին եկել, որ կենտր. կոմիտէն դրամական աջակցութիւն ցոյց կը տայ եւ իր կող–

Aram webaram.com

մէջ խմբագրութեան անդամ կը նշանակէ: Ուրեմն, ես դարձայ չրջիկ-խմբագիր:

Խմբագրութեան մէջ իմ մտնելուց յետոյ, «Նոր կեանք»ը դարձաւ «մարտական» թերթ: Պահպանողական բաժանորդները քաշուեցին, եւ թերթի նիւթական վիճակը սկսեց աւելի ծանրանալ: Գ. Բէդէլեանը քաշուեց խմբագրութիւնից: Կենտր. Կոմիտէն առիպուեցաւ նոր գումարներ յատկացնել թերթին: Ընդհանուր օժանդակութիւնը հասաւ մինչեւ 3000 ռուբլիի, որ փոխ էր առնուած «Փոթորիկ»ի հանգանակած գումարներից:

Շրջանի նիւթական կարողութիւնը ի նկատի ունենալով՝ մեծ բան չէր եղածը. ի վիճակի էինք դիւրութեամբ դոյել պարտքը, բայց չափազանցուած ձեւով Բիւրոյի ականջը հասել էին Նալբանդի կենտր. կոմիտէի մսխումները: Եւ մի օր էլ հեռագիր ստացուեց Թիֆլիսից, թէ Սիմոն Զաւարեանն է գալիս:

Զաւարեանին ես դիմաւորեցի կայարանում եւ առաջնորդեցի պանդոկ: Նա պահանջեց կենտր. կոմիտէի նիստերի արձանագրութիւնները ու հաշուական տոմարները եւ մի օր անհետացրից դուրս չեկաւ: Միայն ինձ եւ կենտր. կոմիտէի դանձապահ Նաւասարդին կանչեց բացատրութիւնների համար:

Պարզուեց, որ Բիւրօն նամակներ է ստացել, ծանօթ ընկերներից, որոնք հաղորդել էին Նալբանդի կենտր. կոմիտէի ապօրինի գործերի եւ դրամական գեղծումների մասին: Բիւրօն Զաւարեանին ուղարկել էր խրթեւ քննիչ, լիազօր իրաւունքներով: Արձանագրութեան եւ հաշուական տոմարներում Զաւարեանը ոչ մէկ անկանոն բան չէր գտել, բացի «Նոր կեանք» շաբաթաթերթին տրուած 3000 ռուբլի գումարից, որ պարտաւոր էինք կարճ ժամանակում վերադարձնել:

Կենտրոնական կոմիտէի նիստում Զաւարեանը, առանց քաշուելու յայտնեց, որ թիւրիմացութիւն է տեղի ունեցել, իր գալուն պէտք չկար, բայց քանի որ եկել էր, պատրաստ էր կուսակցական ընկերների եւ դրսի հասարակութեան համար դասախօսութիւն կարդալ: Ներքին ժողովների դասախօսութեան նիւթը մտքից ելել է, բայց հրապարակային դասախօսութիւնը մնացել է յիշողութեան մէջ:

Որոշել էինք, որ Զաւարեանը դասախօսէ ռուսերէն՝ Աւետարանական Ակումբի մեծ դահլիճում, «Հողային Հարցը Անդրկովկասում» նիւթի մասին եւ լայնօրէն յայտարարել էինք Թոմասովի ռուսերէն թերթերում:

Aram webaram.com

Պարզուեց, որ նոյն օրը Նախիջեւանի թատրոնում կար Մոսկուայից եկած նշանաւոր եւ հասարակութեան սիրելի դերասանուհի Ժառովայի վերջին ներկայացումը:

Դասախօսութեան ժամը արդէն հասնելու վրայ էր, բայց ամբոխի ընդարձակ սրահը դեռ պարապ էր: Ներկայ էին թաղային ոստիկանապետը, որ ի պաշտօնէ պարտաւոր էր ներկայ գտնուել դասախօսութիւններին, Զաւարեանը մի քանի ընկերների հետ, Ռոստովի երկու օրաթերթերի թղթակիցները եւ 10–15 հոգի հասարակութիւն: Թղթակիցները շտապում էին թատրոն երթալ եւ մի քանի վայրկեան դասախօսի հետ խօսելուց յետոյ անհետացան: Ոստիկանապետը դժգոհութիւն էր յայտնում, որ Ժառովայի վերջին ներկայացումից պիտի զրկուի: Դժգոհ էինք եւ Զաւարեանն ու մենք՝ կազմակերպողներս՝ անդիտակից հասարակութիւնից:

Անցաւ կէս ժամ, բայց սրահը պարապ էր: Ոստիկանապետը դիմեց մեզ.

— Պարոններ, ի՞նչ էք ասում, չյետաձգէ՞ք դասախօսութիւնը. ամէն անգամ Ժառովան Նախիջեւան չի գայ...

Ամէն անգամ Սիմոն Զաւարեանն էլ Նախիջեւան չէր գալիս, բայց ստիպուած եղանք յայտարարել «յարգոյ հասարակութեան», թէ մի շատ ցաւալի թիւրիմացութեան հետեւանքով, դասախօսութիւնը ստիպուած ենք յետաձգել: Զաւարեանը յայտնապէս սրտնեղած էր, իսկ մենք ուղղակի ամօթահար էինք. վաղը ի՞նչ պիտի ասէին մեր հակառակորդները: Իսկ վաղը՝ աւելի մեծ խայտառակութիւն:

«Իւժնի Տելեգրաֆ» օրաթերթի թղթակիցը, որ մեզ համակիր երիտասարդ էր եւ Զաւարեանի հետ տեսակցութիւն էր ունեցել, մանրամասնօրէն պատրաստել էր դասախօսութիւնը եւ վստահ, թէ դասախօսութիւնը յաջող պիտի անցնի՝ հանգիստ սրտով գնացել էր Ժառովայի ներկայացման:

Յաջորդ առաւօտ «Իւժնի Տելեգրաֆ»ի ընթերցողները կարդացին երկար տեղեկատուութիւն Թիֆլիսից Նախիջեւան ժամանած հռչակաւոր տնտեսագէտ Ս. Զաւարեանի «Հողային Հարցը Անդրկովկասում» խիստ հետաքրքրական նիւթի մասին: Տրուած էր ծանօթութիւն Զաւարեանի մասին, որին դահլիճի հոծ բազմութիւնը բուռն կերպով ծափահարել էր. առաջ էր բերուած դասախօսութեան բովանդակութիւնը...:

Այդ նշանաւոր դասախօսութիւնից յետոյ, Զաւարեանը եր-

Aram webaram.com

կար չմնաց մեզ մօտ եւ վերադարձաւ Թիֆլիս: Ես նրան ճանապարհ դրի:

— Երրորդ կարգի տոմսակ կ'առնես, պատուիրեց նա:

Մարդիկ այդպէս էին այն ժամանակ...:

Կարելի է ասել՝ Զաւարեաններէ ժամանակ յեղափոխականները Վասպուրականում ու Տարօնում տրեխներ էին հագնում եւ չամախալի հրացաններով էին կռւում, իսկ այժմ հիւլէական բարքեր են ստեղծուել... Շատ բան կարելի է ասել:

Այո՛, դժբախտաբար, հիւլէական դարում ենք ապրում, եւ մենք էլ որդեգրել ենք հիւլէական բարքերն ու հիւլէական բարոյական փիլիսոփայութիւնը...:

Զաւարեանի մեկնումից յետոյ, շատ չանցած, ես էլ վերջ տուի իմ հրջիկ-խմբագրական գործունէութեան եւ մեկնեցի Պետերբուրգ ուսանելու: Թէեւ նիւթական պայմաններս այնքան էլ փայլուն չէին, բայց ընկերներս օգնութեան հասան: Համոզուցայի իմ մէկ ընկերը՝ Մորեվբէ Տիրացուեանը ուրիշների հետ միասին, խոստացաւ ապահովել 25 ռուբլի եւ մինչեւ վերջ հաւատարիմ մնաց խոստումին: Սերովբէն ինձ հետ միասին մտել էր Թեմական դըպրոց, ինձ հետ միասին եղաւ Նոր Նախիջեւանի աշակերտական Դաշնակցական առաջին խմբի անդամ, հաւատաւոր դաշնակցական էր եւ ինձ մտերիմ ընկեր: Նրա յիշատակը միշտ կենդանի է իմ սրտում:


Արդէն Պետերբուրգում, համալսարանի իրաւաբանական բաժնում էր Նալբանդի կենտր. կոմիտէի անդամ եւ իմ մօտիկ ընկեր Համբարձում Տէրտէրեանը, որ նոյնպէս նիւթական լաւ վիճակ չունէր: Նրա հետ միասին վարձեցինք մի համեստ սենեակ համալսարանից ոչ հեռու: Համբարձումը գործնական, հաշիւ պիտցող, խնայասէր, կարելի է ասել ժլատ տղայ էր: Նա հէնց սկիզբից մեր տնտեսութիւնը իր ձեռքը առաւ: Պայման դրեց, որ ամսէ-ամիս իմ ստացած դրամը իրեն յանձնեմ, եւ ամէն երեկոյ հաշիւ էր ներկայացնում իր արած ծախսերի մասին. օրինակ՝ հացի 5 կոպէկ, պանրի 7 կոպէկ, օրաթերթ՝ մէկ կոպէկ, մէկ նամակադրոշմ 5 կոպէկ եւայլն: Ես բարկանում, քշում էի նրան իմ մօտից, բայց նա չէր հանգստանում, մինչեւ որ ամբողջ հաշիւը չներկայացնէր:

Պետերբուրգում ես արձանագրուեցի համալսարանի իրաւաբանական բաժինը եւ բարձրագոյն մանկավարժարան ճեմարանը, ուր դասախօսութիւնները երեկոյեան էին: Ազատ ժամերին լսում էի պատմութեան եւ ընկերաբան փրօֆէսորներին. ինչպէս կարէյեւ,

Aram webaram.com

Մաքսիմ Կովալեւսկի եւայլն: Բայց դվխաւոր աշխատանքս, բնականաբար, համալսարանում էր:

1905 թ. յեղափոխութիւնից յետոյ, երբ ցարական միահեծան վարչաձեւը, մի պահ խուճապի մատնուեց, կառավարութիւնը սկսել էր հետզհետէ վերապրաւել կորցրած դիրքերը: Ընդդիմադիր տարրերը, աղատամիտ եւ ընկերվարական կուսակցութիւնները չէին ուզում հաշտուել յեղափոխութեան պարտութեան հետ, եւ բարձրագոյն դպրոցներում մտքերը հանդարտ չէին: Մեր համալսարանում էլ տեղի էին ունենում «թռուցիկ միտինգներ» ու բողոքի ցոյցեր: Համալսարանի ճաշարանում էլ անպակաս էին ժողովներն ու վէճերը մի կողմից սոցիալ-դեմոկրատ ու սոցիալիստ – յեղափոխական – կանների, եւ միւս կողմից պահպանողական ու սեւ հարիւրակային հակայեղափոխականների միջեւ:



ՈՒՍԱՆՈՂ՝ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Աղմկոտ վէճողների մէջ յատկապէս, աչքի էր ընկնում մի պոռոտախօս հրեայ ուսանող, որը վերջը, Հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ, եղաւ յեղափոխական Ռուսաստանի բանակի ընդհանուր հրամանատար — Կրիլենկօ:

Քաղաքական չարժումներին զուգընթաց երիտասարդութեան մտքերը զբաւում էին եւ զրական երեւոյթները: Տեղի էին ունենում զրական բազմաթիւ դասախօսութիւններ ու հանդէսներ, աղմկալից

Aram webaram.com

վէճեր մամուլում եւ բեմերի վրայ: Երեւում էին նոր հեղինակներ՝ դրական–գեղարուեստական ուրոյն փիլիսոփայութիւններով: Մերուն էր Տոլստոյը դեռ ողջ էր՝ ցարիզմի դէմ անընկճելի կեցուածքով: Մաքսիմ Գորկին դեռ պահում էր իր յեղափոխական համբաւը, բայց նրա «Զելկաշ»ների ու «Մրրկահաւ»երի տեղ երիտասարդութեան սրտում սկսել էին տեղ գրաւել Արցիբաշեւի, Անդրէյեւի եւ Կուպրինի անկումային տրամադրութիւնները: Գրական բեմերի վրայ երեւում էին աղմկոտ դեկադենտները՝ ներկուած երեսներով եւ վարդի փոխարէն, կրծքին կարմիր բողկերով:

Պետական Դումայում, Ռուսաստանի, ամօթ է ասել, խորհրդարանում, սեւ հարիւրակային ճառեր էին խօսում Պուրիշկեւիչները եւ Մարկով Երկրորդները՝ սպառնալով ձախակողմեան պատգամաւորներին: Սրանց կողմից էլ Միլիւկովներն ու Կերենսկիները մեծաղմուկ ճառերով աշխատում էին խախտել ցարական դահը: Ցեւտաչրջական ալիքը աւելի եւ աւելի ուժեղանում էր յեղափոխութեան եւ հակայեղափոխութեան միջեւ տատանուող Ռուսաստանում: Ընկերվարական կուսակցութիւնները անխնայ հալածանքի էին ենթարկւում: Շուտով հերթը պիտի գար եւ Հ. Ց. Դաշնակցութեան:

Այս ամէնը, բնականաբար, պէտք է ազդէր եւ հայ ուսանողութեան հոգեվիճակի վրայ:

Կովկասում համալսարան չկար, կառավարութիւնը թոյլ չէր տալիս բանալու: Բարձրագոյն կրթութեան ձգտող հայ երիտասարդները ստիպուած էին գնալ Ռուսաստան կամ արտասահման: Աչխատում էին, ամէնից առաջ, տեղ գտնել Պետերբուրգի համալսարանում, որ իր կրթական մակարդակով առաջին դիր վրայ էր: Երկրորդ տեղը գրաւում էր Մոսկուայի համալսարանը:

Թիւերը չեմ կարող տալ, բայց, իմ ժամանակ, Պետերբուրգի համալսարանում եւ միւս բարձրագոյն դպրոցներում մի քանի հարիւր հայ ուսանող–ուսանողուհիներ կային: Ուսանողութեան մեծ մասը համալսարանում էր, ապա՝ Բազմարուեստեան եւ ուրիշ մասնագիտական վարժարաններում: Հայ ուսանողներ կային Զինուորաբժշկական դպրոցում, Հողե–Նեարդաբանական Ինստիտուտում, Երաժշտանոցում, եւայլն: Աղջիկները ուսանում էին, գլխաւորապէս, Բեստուժեւսկի բարձրագոյն կանանց դասընթացքներում:

Քաղաքական հայեացքի տեսակէտից Պետերբուրգի հայ ուսանողութիւնը բաժանւում էր մի քանի մասերի. մի քանի հոգի ձախակողմեան–պահպանողականները, որոնք հետեւում էին «արտաքոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ չիք Հայութիւն» դաւանանքին եւ հա-

Aram webaram.com

բուստների ու եկեղեցու շրջանակից դուրս նրանց գոյութիւնը զգալի չէր:

Սոցիալ-Դէմոկրատների խմբակ, որոնց մէջ կային զարգացած եւ հասարակական տեսակէտից գործօն ուժեր, ինչպէս Սարգիս Սըրապիոնեանը կամ Արտաշէս Կարինեանը:

Հ. Ց. Դաշնակցութեան անդամներն ու համակիրները, կազմում էին ազգային հարցերով հետաքրքրուող հայ ուսանողների ճնշիչ մեծամասնութիւնը: Սրանց մէջ, իրենց մտաւոր պաշարով եւ գործունէութեամբ, աչքի էին ընկնում Յակոբ Կարճիկեանն ու Համբարձում Տէրտէրեանը, երկուսն էլ իրաւաբան, ապագայի Հայաստանի Հանրապետութեան նախարարներ: Օր. Մանիա Ինկէեանը նշանաւոր էր ուսանողուհիների մէջ:



Հ. ՏԷՐՏԷՐԵԱՆ ԵՒ Ե. ՊԱՀԼԱՒՈՒՆԻ

Պէտք է յիշել եւ Միշա Արզումանեանին, մեր շրջանում յայտնի Խուլիգան Միշա անունով, իր ժամանակը վատնում էր քէֆերի եւ զուարճութիւնների վրայ:

Իրաւաբանութեան ուսանող էր եւ Աչուղ Ջիւանիի տղան՝ Պարոյր Լեւոնեանը, որ կարողանում էր ուսման հետ հաշտեցնել եւ քէֆն ու զուարճութիւնը՝ հարուստների շրջանակում:

Եւ, վերջապէս, ուսանողութեան այն մասը, որ հեռու էր ազգային կեանքից եւ ոչ մի հայկական հոսանքի կամ կուսակցութեան չէր պատկանում: Սրանց մեծ մասը սպիտակ աստառաւորներ էին, այսինքն՝ սպիտակ աստառով համազգեստ հագնող տղաներ,

Aram webaram.com

որոնք իրենց դասերից եւ անձնական հաճոյքներից դուրս ուրիշ ոչ մեկ բանով չէին հետաքրքրւում:

Պետերբուրգի հայ ուսանողութիւնը համախմբուած էր տնտեսական գետնի վրայ, այսպէս կոչուած, «Ժողով» միութեան մէջ: «Ժողով»ի կենտրոնը եկեղեցու շէնքում էր, հոգաբարձութեան կից: «Ժողով»ը ունէր եօթը հոգուց բաղկացած վարչութիւն, որ ընտրւում էր միութեան անդամների ընդհանուր ժողովում: «Ժողով»ում բոլոր հոսանքները ապրում էին հաչտ եւ համերաշխ: «Ժողով»ի վարչութեան գործն էր նիւթական օգնութիւն հասցնել կարիքաւոր ուսանողներին եւ, առհասարակ, զբաղուել ուսանողական հարցերով:

«Ժողով»ի նիւթական միջոցները գոյանում էին անդամավճարներից, տարեկան մեծ պարահանդէսից եւ ուրիշ ձեռնարկներից, այլեւ եկեղեցական հոգաբարձութեան յատկացումներից: «Ժողով»ի վարչութիւն եւ հոգաբարձութիւն, որի մէջ կային Փրօֆ. Ադոնցի, Փրօֆ. Վարդանեանի, իրաւաբան Ասրիբէգեանի նման ականաւոր դէմքեր, գործում էին հաչտ եւ համերաշխ, փոխադարձ վստահութեամբ: Հաչտ եւ համերաշխ էին իրար մէջ եւ «Ժողով»ի անդամները: Տարակարծութիւնները, վէճերն ու պայքարները տեղի էին ունենում «Ժողով»ից դուրս, շատ բուռն կերպով, Դաշնակցականների եւ Սոցիալ-Դէմոկրատների միջեւ, որ, զարմանալի կերպով, ընկերական յարաբերութիւնների վրայ չէր անդրադառնում: Մասնաւորապէս մտերիմ էր յարաբերութիւնը Սարգիս Սրապիոնեանի, Համբարձում Տէրտէրեանի եւ իմ միջեւ:

Սարգիս Սրապիոնեանի հետ մենք ազգական էինք, իսկ Համբարձումի հետ համապիւղացի էին: Սարգիսի հայրը՝ Լուկաչը նշանաւոր կուլակ էր Թոփսի գիւղում: Լուկաչ աղան, ասում էին, ծանօթ էր եւ բարեկամ չրջանի բոլոր ձիու գողերի հետ: Իր հօր՝ Լուկաչի անունով, Սարգիսը հետագային գարձաւ Խորհրդային Հայաստանի նշանաւոր վարչապետ Սարգիս Լուկաչինը, որ սպանուեց Երեւանի բանտում, իր բոլշեւիկ ընկերների ձեռքով:

Սարգիսը իր ուսումը առել էր Նոր Նախիջեւանի թեմական դպրոցում, ապա աւարտել էր Բագուի գիմնազիան, ուր եւ գարձել էր սոցիալ-դեմոկրատ՝ Մուշեղ Շահումեանի ազդեցութեամբ: Ամուսնացել էր Բագուեցի մի համակրելի օրիորդի հետ եւ այժմ երկուսով ուսանում էին Պետերբուրգում:

Ես շատ էի ծանրաբեռնուած աշխատանքով: Համալսարանը ինձանից շատ ժամանակ էր խլում: Այնքան հետաքրքրական դասա-

Aram webaram.com

խօսութիւններ եւ դասախօսներ կային: Այն օրերին առանձնապէս նշանաւոր էր Փրօֆ. Պետրաժեցկին իր իրաւունքի նոր փիլիսոփայութեամբ, որ դասախօսում էր համասարանի ամենամեծ սրահում, եւ, եթէ ուշանայիր, տեղ չէիր կարող գտնել: Լրջօրէն հետեւում էի նաեւ Տուգան-Բարանովսկիի քաղաքատնտեսութեան ու Օզերովի ելեմտական իրաւունքի դասախօսութիւններին, եւ տանը կարդում էի դիտնականների հատ հատորները: Երեկոյեան գնում էի Մանկավարժական ճեմարանը, ուր նոյնպէս նշանաւոր փրօֆէսօրներ կային: Այստեղ մանկավարժական առողջապահութեան դասախօսն էր Ռազմա-բժշկական ճեմարանի յայտնի ուսուցիչներից մէկը: Նրա առաջին դասախօսութիւնը նուիրուած էր հիւանդութիւնների ախտաճանաչութեան: Նա այնպիսի մեծ տաղանդով, պատկերալից կերպով ներկայացրեց նիւթը, որ ինձ թուաց, թէ ես բոլոր հիւանդութիւնները ունեմ իմ մէջ՝ է՛ւ թոքախտ, է՛ւ արեան ճնշում, է՛ւ քաղցկեղ եւ ամէն ինչ: Մի քանի օր մահ էի դալիս չշմած. դիշերները չէի քնում: Համբարձումը մերթ խղճում էր ինձ, մերթ հայհոյում:

Վերջապէս, չդիմացայ եւ դնացի նոյն փրոֆէսորի մօտ, ներկայացրի իմ վիճակը: Նա խնդաց եւ ասաց, թէ ես առաջինը չէի: Ուշադրութեամբ քննեց, կամ ցոյց տուեց, թէ քննում է եւ յայտարարեց, որ ես բոլորովին առողջ եմ, որ կեղծ ռեֆլէկսները ազդել են նեարդներիս վրայ: Որպէսզի նեարդներս հանդստանան, փոքրիկ չիշով թափանցիկ հեղուկ տուեց, որ մի քանի օր ըմպեմ, աճպատուտ ճաշից առաջ:

Եւ իսկապէս, մի քանի օրից բոլոր ցաւերս անցան: Իսկ փրոֆէսորի տուած դեղը պարզ ջուր էր — Aqua Distilata:

Մանկավարժական ճեմարանը մի նոր հաստատութիւն էր, ուր միայն բարձրագոյն կրթութեան վկայական ունեցողներն էին ընդունւում (Գէորգեան ճամարանը նկատում էին բարձրագոյն վարժարան): Տնօրէնն էր յայտնի հոգեբան-մանկավարժ Ա. Նեչայեւը: Մանկավարժական ճեմարանը եւս ինձանից շատ ժամանակ էր առնում, մասնաւորապէս սեմինարի աշխատանքները եւ փորձնական դասերը:

Համալսարանի եւ ճեմարանի պարապմունքներից դուրս, ես յաճախում էի եւ գրական դասախօսութիւնների, հետեւում էի գրական նորութիւններին, կարդում էի շատ: Օր. Մանիա Էնկէեանի եւ իմ նախաձեռնութեամբ կազմուեց գրական-գեղարուեստական մի խմբակ, 15–20 ուսանող-ուսանողուհիների մասնակցութեամբ: Խմբակը պարբերական հաւաքոյթներ էր ունենում, կարդում եւ քըն-

Aram webaram.com

նում էր նոր լոյս տեսած գրքերը, երբեմն ամբողջ խմբով թանգարաններ էր այցելում կամ գրական դասախօսութիւններ ու թատրոններ էր գնում: Պատահում էր, որ երեկոյից մինչեւ առաւօտ, ամբողջ գիշերը, հերթի էինք կանգնում Շալեապինի կամ արտասահմանից եկած նշանաւոր դերասանի ներկայացման տոմսակ ճարելու համար:

Միաժամանակ, գրական երեւոյթների մասին գրում էի Թիֆլիսի մեր օրաթերթում, որին աշխատակցում էի եւ իբրեւ Պետական Դումայի թղթակից: Լէոնիդ Անդրէյեւի նոր լոյս տեսած «Անաթեմա»յի մասին մի ընդարձակ յօդուածիս առթիւ, Լէոյից ստացայ մի երկար ու ջերմ նամակ, որով համոզում էր ինձ, որ թողնեմ ամէն բան եւ ամբողջութեամբ նուիրուեմ գրականութեան: Լէոյի գրական հասկացողութեան եւ ճաշակի մասին ես բարձր կարծիք չունէի, բայց այսօր անկեղծօրէն ցաւում եմ, որ ականջ չդրի նրա խորհրդին...

Համալսարանական դէպքերից առանձնապէս յիշում եմ Նիկ. Ադոնցի առաջին դասախօսութիւնը: Նա հրաւիրուած էր դասախօսելու հայագիտական բաժնում, իբրեւ Նիկ. Մառի օգնական, պայմանով, որ — եթէ չեմ սխալւում — առնուազն 10–15 մնայուն լսողներ ունենար:

Առաջին դասախօսութեան ներկայ էին բազմաթիւ ուսանողներ, մեծ մասամբ հայեր, այլեւ փրօֆէսորներից շատերը: Դասախօսութեան նիւթը, նոյնիսկ ինձ, ճեմարանականիս համար անծանօթ, Ծաթ ժողովրդի մասին էր: Ադոնցը պերճախօս չէր, նիւթն էլ չոր ու անհետաքրքրական: Դասախօսի հետ միասին մենք էլ բաւական քրտնեցինք: «Աստուած տանի, մեր ի՞նչ գործն է ինչ որ այդ Ծաթ ժողովուրդը», լսում էի շուրջս:

Ճաշօրդ դասախօսութեան հաղիւ 10–15 հոգի ներկայ էր: կարող էր Ադոնցի պաշտօնն իսկ վտանգուել, որ կը լինէր խայտառակութիւն Հայ ազգի համար: Մեր կոմիտէն պարտադիր հերթապահութիւն նշանակեց բոլոր հայ ուսանողների համար, եւ Ադոնցի դասախօսութիւնները ունեցան ունկնդիրների օրինական թիւը: Եւ Ադոնցը այնուհետեւ մտերմացաւ ուսանողութեան հետ:

Իբրեւ թղթակից, ես երբեմն ներկայ էի լինում Պետական Դումայի նիստերին: Եկատէրինէ Բ. կայսրուհու սիրականներից Կոմս Տաւրիչեւսկիի փառահեղ պալատը այժմ վերածուած էր Ռուսաստանի խորհրդարանի: Սահմանափակ իրաւունքներով եւ, մեծ մասամբ, ժժգոյն պատգամաւորներով մի հիմնարկութիւն, որ օ-

Aram webaram.com

բէնադրական ժողովի ծաղրանկար էր: Ես հաճոյքով լսում էի պատգամաւորներ Միլիւկովին եւ Պուրիշկեւիչին: Առաջինը ուշադրաւ դէմք էր, դիտնականի պատրաստուածեամբ պետական գործիչ, Սահմանադիր ռամկավար ազատական կուսակցութեան պարագլուխ, հմուտ քաղաքական գործիչ եւ ուժեղ ճառախօս էր: Ներա երկար եւ հատու ճառերը տիրող իրաւակարգի կամ արտաքին քաղաքականութեան մասին, լսւում կամ կարդացւում էին մեծ ուշադրու թ ե ա մ բ: Լուրջ եւ հաւասարակշռուած մարդ էր:



ՓՐՕՖ· Ն· ԱԴՈՆՑ

Միլիւկովի հակապատկերն էր սեւհարիւրակային աջակողմին պատկանող Պուրիշկեւիչը, ջղային եւ անսանձ, օտարատեաց պատգամաւորը: Իրրեւ չրջանային կրթական տեսուչ, նա բաւական զարգացած էր եւ խօսելու էլ ընդունակութիւն ունէր: Սրամիտ, սրբախօս, հայհոյաբան, յարաշարժ՝ նա հրապիսի դեր էր կատարում: Խօսելիս բեմից կամ անդուսպ բացատանչութիւններից ես ինձ զգում էի կրկէսում: Դումայում խայտառակ ելոյթներով Պուրիշկեւիչի հետ կարող էր մրցել միայն Մարկով երկրորդը՝ անասունի նման մի կալուածատէր:

Պուրիշկեւիչի հետ ինձ ծանօթացրեց պատգամաւոր Սաղաթել-

Aram webaram.com

եանը. նա էլ հետաքրքրական մարդ էր — վաստաբան էր: Անցեալում եղել էր գործօն դաշնակցական: Վարել էր Գէորգեան ճեմարանի տեսչի պաշտօնը: Իրեն համարում էր հեղինակութիւն կովկասեան եւ հայկական գործերում: Դումայի անդամ էր ընտրուել որպէս Դաշնակցութեան թեկնածու, բայց ոչ Դաշնակցութիւնը գոհ էր նրանից, ոչ ինքը գոհ էր Դաշնակցութիւնից: Իր գլխաւոր յատկութիւնը ծուլութիւնն էր: Վերջը եղաւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ Կամաւորական Բանակի մօտ:

Օր օրի վրայ Կովկասից մռայլ լուրեր էին հասնում. հալածանքները Դաշնակցութեան դէմ սաստկանում էին: Խուզարկութիւնների ժամանակ շատ թղթեր էին բռնուած. իմ անունն էլ վտանգուած էր: Կարող էին ինձ էլ ձերբակալել Պետերբուրգում: Պէտք էր նոր անուն, նոր անցագիր, նոր հասցէ ճարել:

Անունի խնդիրը դժուար չէր լուծել — կեղծ անցագրների «մասնագէտ» Պապաշայի՝ Լեւոն Թադէոսեանի միջոցով: Շուտով նրանից ես ստացայ մի նոր անցագիր եւ հրահանգ. անմիջապէս փոխել սեռեակս, աստիկանութեան մօտ արձանագրուել եւ հին անցագիրս ոչնչացնել: Պապաշան յայտնում էր նաեւ, որ մի քանի ամսից ինքը կ'ուղարկէ մի ուրիշ անցագիր, որպէսզի նորից սեռեակս փոխեմ նոր անունով արձանագրուելու համար: Եւ այսպէս, տարեկան մի քանի սեռեակ պիտի փոխէի տարբեր թաղամասերում, նոր անունով արձանագրուելու համար: Չեմ յիշում քանի անցագիր եւ անուն ունեցայ եւ քանի սեռեակ փոխեցինք Համբարձումի հետ: Մեր վերջին սեռեակը Սադովի պողոտայի վրայ էր եւ անունս՝ Լեւոն Մելիք Ղարապէօղեան, Զանգեզուրի Գորիս քաղաքի բնակիչ:

Աւելի դժուար էր ամառուայ արձակուրդների հարցը: Երեք ամիս անզործ ես չէի կարող մնալ Պետերբուրգում, թէ՛ նիւթական եւ թէ՛ քաղաքական պատճառներով: Ռոստով–Նախիջեւանում էլ աւելի քան վտանգաւոր էր մնալ. Լբժենի որսկան շները փնտռում էին հետքս: Ուսումնական տարին վերջանալու վրայ էր. անհրաժեշտ էր որոշել անելիքս: Եւ ահա վրայ հասաւ փրկութեան լուսը:

Կովկասում կուսակցութիւնը կիսակազմալոյծ վիճակի մէջ էր: Պատասխանատու ղեկավար ընկերների մեծ մասը, ինչպէս եւ Բիւրոյի անդամները կամ բանտարկուած էին, կամ փախած արտասահման, կամ քաշուել էին գործերից, եւ պահուել: Ընդհանուր ղեկավարութիւնը փաստօրէն անցել էր Ոսկանապատի (Բագուի) կենտր. կոմիտէի ձեռքը, որի անդամ էր Պապաշան: Եւ մի օր Պապաշայից ստացայ հրահանգ.

Aram webaram.com

— Արձակուրդին ուղղակի կը դաս Բագու, կազմակերպչական աշխատանքների համար:

Ելքը դռնուած էր: Այնուհետեւ ամառը անցընում էի Կովկասում. Բագու, Թիֆլիս, Երեւան, Ալեքսանդրապոլ եւայլն, եւ Սեպտեմբերին վերադառնում Պետերբուրգ, մի քանի օրով՝ դաշնի հանդիպելով Ռոստով ու Նախիջեւան:



ԵՂԻՇԷ ԹՈՓՉԵԱՆ

1909 Թուի ամառը, Պոլսից վերադառնալիս, Տրապիզոն – Կարին ճանապարհին, դաւադիր դնդակով սպաննուեց Դաշնակցութեան ականաւոր գործիչներից մէկը՝ Եղիշէ Թոփչեանը, որ խմբագիր էր Կովկասի մեր «Ճառագ» եւ սրան յաջորդող Թերթերի եւ բանասարկութիւնից խուսափելու համար անցել էր ահմանը եւ սկսել էր հիմք դնել Կարինի «Ճառագ» Թերթի: Թոփչեանը սիրուած էր, մասնաւորապէս, ուսանողութեան կողմից եւ աշխատաւորական շրջաններում:

1910 Թուի ընկերները, մենք կազմակերպեցինք գաղտնի սգահանդէս ի յիշատակ Եղիշէ Թոփչեանի, որ անցաւ շատ յաջող: Մասնակցում էին եւ սոցիալ–դէմոկրատ ու սոցիալ–յեղափոխականները, ինչպէս եւ յատուկ հրաւէրով, առանձին անհատներ հայ Թէ ռուս: Սգահանդէսին նախագահում էր մեր աւագ ընկեր Յաչիկ Կարճիկեանը: Յաչիկը, Գէորգեան ճեմարանը աւարտելուց յետոյ, մի քանի տարի ուսուցչութիւն էր արել, ամուսնացել եւ ըն-

Aram webaram.com

տաճեօf եկել էր ուսանելու. մենք նրան կատակով «աւագ ընկեր» էինք կոչում:

Սպահանդէսում միտք յայտնուեց հրատարակելու Թումչեանի յիշատակին մի ժողովածու: Կոմիտէն վերջը ընտրեց յատուկ մի խմբագրական մարմին հինգ հոգուց բաղկացած. մարմնի մէջ, որքան յիշում եմ, մտնում էին Ա. Կարճիկեանը, Հ. Տէրտէրեանը, Մ. Աբղումանեանը, Հայկ Թորոսեանը եւ նուաստս: Ժողովածուն պիտի կոչուէր «Պսակ»:

Խմբագրական մարմնի պարտականութիւնը պիտի լինէր հաւաքել եւ խմբագրել նիւթերը, ապահովել ծախսը եւ հոգալ ժողովածուի տպագրութեան բոլոր կարիքները:

Խմբագրական մարմնում աշխատանքները բաժանուեցան այսպէս. Կարճիկեանն ու Աբղումանեանը պէտք է գրամ հաւաքէին, Տէրտէրեանն ու ես պէտք է նիւթ հաւաքէինք եւ կազմէինք հատորը. Թորոսեանը պիտի «դամ» պահէր:

Բայց որոշումը մի բան, գործադրութիւնը տարբեր բան: Զանազան պատճառներով գործը մնաց, դլխաւորապէս իմ վրայ:

Ես գրեցի բազմաթիւ նամակներ՝ խնդրելով, որ ժողովածուին նիւթ հասցնեն, եւ բաւական պատասխանողներ եղան: Ա. Ահարոնեանը Բագուի բանտից ուղարկեց երկու գրութիւն, Ռ. Զարդարեանը Պոլսից ուղարկեց «Բարձունքի Փառաբանութիւնը», Վահան Փափազեանից ստացայ մի ուսումնասիրութիւն Թուրքիայի Ազգային եւ քաղաքական կազմի մասին, Ց. Շահրիկեանը ուղարկել էր մի յօդուած Պեռոր Կրոպոտկինի անիշխանական տեսութեան մասին, որ, սակայն, չտպուեց գրաքննութեան երկիւղի պատճառով: Մի շարք ուսումնասիրութիւններ եւ գրական կտորներ կային եւ ուրիշներից: Մի քանի կարեւոր նիւթեր դուրս մնացին հատորից, ինչպէս Խաչատուր Կարճիկեանի ընդարձակ ուսումնասիրութիւնը հայկական իրականութեան մասին կամ Ե. Թումչեանի կեանքն ու գործունէութիւնը՝ երկուսն էլ գրաքննութեան պատճառով: Իմ մէկ յօդուածն էլ՝ «Նալբանդեանի Առեղծուածը», դոհ գնաց նոյն գրաքննիչի մողքին:

Թէեւ դժուարութեամբ, ժողովածուի բովանդակութիւնը ի վերջոյ կազմուեց, բայց նիւթական տեսակէտից քիչ բան էր արուած. Խաչիկը զբաղուած էր աւարտական քննութիւններով, իսկ Միշան բազմագրաղ էր: Հազիւ մի քանի հարիւր ռուբլի էին հաւաքել, որ ամուր պահուած էր դանձապահ Հնամբարձումի մօտ:

Aram webaram.com

Ստիպուած եղայ, Խաչիկի փոխարէն, ես անցնելու հանդանակութեան ձեռնարկին՝ Միշայի հետ միասին:

Առաջին այցելութիւնը տուինք «Հիւսիսային Դրամատուն» տնօրէնին (որ Պոլսեցի հայ էր) Օքիւզեր անունով: Վերելակով բարձրացանք իր չքեղ գրասենեակը: Նա սիրալիր ընդունելութեան արժանացրեց մեզ եւ ուշադրութեամբ ու համակրանքով լսելով՝ շատ ջերմ խօսքերով արտայայտուեց աղգային մշակոյթի եւ երիտասարդութեան մասին: Ի հարկէ, սիրով պիտի օգնէր մեր աղգօգուտ ձեռնարկին: Մտաւ կողքի սենեակը եւ վերադառնալով՝ Միշային յանձնեց մի գոց ծրար ու մինչեւ վերելակը ճամբու դրեց մեզ: Փողոցում բացինք ծրարը. մէջից հինգ ոսկի ռուբլինոց դուրս եկաւ...

Մեր յաջորդ այցելութիւնը եղաւ բազմամիլիոնատէր նաւթարդիւնաբերող Ղարաբաղի Առաֆելովին: Սա եւս մեզ ընդունեց շատ սիրալիր, իր հոյակապ ապարանքում: Ղարաբաղի բարբառով խօսեց Միշայի հետ, կատակներ արաւ: Հիւրասիրեց թէյով, անուշով ու գաթայով: Մեծ համակրանքով խօսեց երիտասարդութեան եւ մեր ձեռնարկի մասին: Եւ մեզ ճանապարհ դնելիս հանդիսաւոր կերպով Միշային պարգեց 25 ռուբլիանոց մի թղթադրամ...

Մօտաւորապէս նոյն արդիւնքը ունեցան եւ մեր միւս այցելութիւնները. քաղցր խօսքեր շատ լսեցինք, բայց դրամ քիչ ստացանք. դրամ էր, հոգի հո չէր մեր ուղածը...

Aram webaram.com

ՄՈՍԿՈՒԱՑՈՒՄ - «ՊՍԱԿ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

1910ի ուսումնական տարին մօտենում էր իր վախճանին: Ես արդէն աւարտել էի Մանկավարժական ճեմարանը եւ զբաղուած էի համալսարանական քննութիւններով: Մի օր Միշա Աբգումանեանը, աղաչական տեսքով, մօտեցաւ ինձ.

— Մաճ օղում, օգնիր ինձ:

— Ի՞նչ կայ, հետաքրքրուեցի ես: Նորից ի՞նչ է պատահել:

— Ի՞նչ պիտի լինի. հռոմէական իրաւունքի դոգմայից քննութիւն պէտք է տամ, բայց պատրաստ չեմ: Վախենում եմ, որ կտրուեմ...

Կարծես, միւս առարկաներից պատրաստ էր. քէֆերից աչք բացե՞լ էր որ:

— Է, ես ի՞նչ կարող եմ անել, պատասխանեցի ես:

— Մաճ օղում, իմ տեղս քննութիւն տուր:

Այդպիսի բաներ ընդունուած էին մեր օրերում: Ուսանողների թիւը մեծ էր, եւ փրօֆէսորները բոլորին չէին ճանաչում: Մատրիկուլների վրայ նկար չկար, եւ քննութիւններով իրար օգնելը սովորական բան էր:

Ես չազատուեցի Միշայի ձեռքից, դնացի քննութեան նրա փոխարէն: Հռոմէական իրաւունքի դոգման դժուար առարկայ էր, բայց քննութիւնը անցաւ շատ յաջող՝ գերազանց, մինչդեռ իմ քննութեան նիշը միայն լաւ ստացած...:

Մայիսի կէսերին էր կարծեմ, ես ստիպուած էի հեռանալ Պետերբուրգից՝ ոստիկանութեան ճանկը չընկնելու համար: Առնելով ժողովածուի նիւթերը՝ Միշան եւ ես չտապով մեկնեցինք Մոսկուա,

Aram webaram.com

ուր հայկական տպարան կար եւ ուր պիտի տպէինք մեր ժողովածուն:

Մոսկուայում վարձեցինք մի մեծ սենեակ եւ անցանք գործի: Առաջին գործը եղաւ մի փառաւոր խնջոյք, որ Միշան տուեց ի պատիւ Մոսկուայում գտնուող իր զարաբաղցի ընկերների: Գէֆը տեւեց ամբողջ գիշեր եւ երբ առաւօտեան հերթը եկաւ հաշիւը մաքրելու, պարզուեց որ ոչ մէկիս մօտ դրամ չկար: Ճաշարանի տէրը սպառնաց ոստիկանութեան լուր տալ: Խնդիրը կարգադրուեց այնպէս, որ Միշան իր բարեկամներով իբր գրաւ պահուեց. եւ ես ոտքով գնացի սենեակից դրամ բերելու...

Երբ գանձապահը Համբարձումն էր, ես վստահ էի, որ մեր դրամը ապահով է, բայց այժմ, չնորհիւ Միշայի «տնտեսութեան», մեր առանց այն էլ նիհար գանձը կարող էր արագ գոլորշիանալ: Ես յորդորում էի Միշային անյապաղ տպագրութեան սկսելու, բայց նա, ինձ համար անհասկանալի հաշիւներով, ձգձգում էր:

Վերջապէս ժողովածուի նիւթերի կապոցը առած՝ գնացինք տպարան: «Դու մի խօսիր, ձգիր որ ես խօսեմ», ասաց ճանապարհին Միշան:

Տպարանատէր Աւետիքեանը համակրելի մարդ դուրս եկաւ: Նա ուշադրութեամբ լսեց Միշայի պատմութիւնը, հաշուեց թերթերը, մատիտով թղթի վրայ հաշիւ արաւ եւ յայտնեց ժողովածուի տպագրութեան գինը: Մեր կարողութիւնից վեր դումար էր:

Միշան, խօսակցութեան ընթացքին, մի քանի անգամ չեչտելով արտասանել էր իր ազգանունը՝ Արզումանեան: Տպարանատէրը հարցրեց.

— Ասացէք, խնդրեմ, ձեր ի՞նչն են Մոսկուայի Արզումանեանները (շատ հարուստ):

— Իմ հօրեղբօր որդիները, պատասխանեց Միշան, այն ձեւով, որ կարելի էր հասկանալ, թէ իրեն շատ մտերիմ մարդիկ էին:

Սակարկութիւնը երկար չտեւեց: Աւետիքեանը յանձն առաւ տպագրութեան սկսել փոքրիկ կանխավճարով: Մնացեալ դումարը պիտի վճարէինք ժողովածուի լոյս տեսնելուց յետոյ:

Ես այն տպաւորութիւնը ունեցայ, որ արագ եւ մեզ համար շատ նպաստաւոր պայմաններով տպելու համաձայնութիւնը արդիւնք էր առաւելապէս Միշայի Արզումանեան ազգանունին: Իրապէս նրանց ազգականութեան մասին կարելի էր ասել, թէ Մոսկուայի Արզումանեանների մայրը եւ Միշայի մայրը միեւնոյն արեւի տակ լուացք են չորցրել...:

Aram webaram.com

Աւետիքեանը իր դործը գիտցող տպարանատէր էր եւ ունէր արագաշարժ դրաշարներ: Մեր ժողովածուի տպադրութիւնը անարդել առաջ գնաց. ես հազիւ հասցնում էի սրբադրութիւնը: Միշան գոհ էր դործերի ընթացքից եւ չարունակում էր ժամանակ անցնել իր զարարաղցի ընկերների հետ:

Մի օր էլ մեր սենեակի դուռը ծեծեցին եւ ներս մտաւ մի ոստիկան. անխօս դիտեց սենեակը եւ ներողութիւն խնդրելով դուրս ելաւ. Միշան տակնուվրայ եղաւ, մանաւանդ որ Պապաշայից նամակ էինք ստացել, թէ խստութիւնները սաստկացել էին. լաւ է, որ Սիպի ճամբորդութիւնը չուշանայ: Միշան համոզում էր, պնդում էր, հայհոյում էր, որ անմիջապէս հեռանամ Մոսկուայից: Հաւատացնում էր, պատուոյ խօսք տալիս, որ ինքը կը վերջացնէ ժողովածուի տպադրութիւնը: Եթէ ինձ բռնէին, ժողովածուի վրայ էլ խաչ պէտք է քաշէինք: Եթէ ես իմ մասին չէի մտածում, պարտաւոր էի դործի եւ կուսակցութեան մասին մտածել...

Ճար չկար: Առանց սրբադրութիւնները լրացնելու, հաւաքեցի ինչ որ ունէի եւ ճանապարհ ընկայ ուղիղ դէպի Ռոստով–Նախիջեւան՝ մի քանի օր ծնողներիս հետ անցընելու համար եւ այնտեղ որոշելու անելիքս:

Նոր էի դուրս եկել Ռոստովի կայարանից, փողոցում դիմացս ելաւ պաղալաճառ Քթոյեանը իր փառաւոր մօրուքով: Ինձ որ տեսաւ, սարսափեց:

— Ի՞նչ ես անում այստեղ, այ տղայ՛, ասաց նա, չուտով հեռացիր...

Փորձեցի մի բան իմանալ նրանից, բայց նա, կրկնեց վճռական կերպով:

— Հեռացիր ասում եմ քեզ: Փորձանք կը բերես մեզ...

Եւ վախով չուրջը նայելով՝ հեռացաւ:

Ուրեմն, իսկապէս որ կացութիւնը լուրջ էր: Հազիւ մի օր մնացի հարազատներիս հետ եւ յաջորդ գիշերուայ գնացքով մեկնեցի Ղրիմ: Ապա՝ Ղրիմից Բաթում: Եւ Բաթումից Պոլիս: Եւ Պոլսից՝ Կարին:

Կարինում ստացայ «Պսակ» ժողովածուի՝ մամուլի տակից լոյս տեսած առաջին թիւը տպարանատէր Աւետիքեանի նամակի հետ միասին: Ժողովածուն հաճելի տպաւորութիւն էր թողնում, բայց նամակը այնքան էլ հաճելի չէր: Տպարանատէրը յայտնում էր, որ ժողովածուն, 3000 օրինակ, տպուած պատրաստ է եւ հրապարակ կը հանուի դրաքննիչից արտօնութիւն եւ տպադրութեան ծախսը

Aram webaram.com

ստանալուց յետոյ. Աբդուռահմանեանը մէջտեղը չէր երեւում: Ես պէտք է կարգադրութիւն անէի տպարանի պարտքը վճարելու մասին:

Ես ի՛նչ կարգադրութիւն կարող էի անել:

Բաւական ժամանակ վերջը իմացայ, որ ժողովածուի տպագրութիւնը վերջացնելուց յետոյ, Միշան լռիկ-մնջիկ թողել էր Մոսկուան եւ հեռացել: Աւետիքեանը հասկացել էր, որ Միշայի ազդականութիւնը մեծահարուստ Աբդուռահմանեանների հետ փչոց էր եւ հասցէս ճարելով՝ դրել էր ինձ:

Այսքանը բաւական չէր: Գրաքննիչը, որ Թեմականի մեր նախկին տեսուչ, «պետական խորհրդական եւ ասպետ» Գալուստ Կարապովիչ Զարբխեանն էր, արգելք էր դրել մեր ժողովածուի վրայ, եւ ժանդարմական վարչութիւնը «Պատկ»ի բոլոր օրինակները դրաւել եւ այրել էր ժանդարմական վարչութեան բակում: Որով, ուրեմն, ամբողջ տիեզերքում «Պատկ»ի 3000 հատորից այժմ մնացել է մէկ օրինակ, որ, կարինում կազմուած՝ գտնւում է Էջմիածնում, Հայոց Ազգային Մարտիկեան Թանգարանի մէջ...

Ուսանողութեան տարիները փորձառութեան մի նոր շրջան եղան ինձ համար, մայրաքաղաքի մտաւոր եւ հասարակական հետաքրքրական միջավայրում: Ռուսաստանի ամենանշանաւոր ուսուցչապետների դասախօսութիւնները, գրական եւ այլ կարգի ժողովները, թատրոնն ու թանգարանները, յարատեւ ընթերցանութիւնը եւ շփումը մտաւորական շրջանակների եւ անհատների հետ՝ լայն հորիզոններ բացին իմ մտքի առջեւ. Պետերբուրգը լրացրեց էջմիածնի ճեմարանի թերիները: Իրաւաբանական եւ մանկավարժական դիտութեամբ զինուած, բազմապիսի հրապուրիչ ծրագիրներ գլխումս՝ ես կանգնած էի նոր կեանքի դռների առջեւ: Ի՞նչ էր շնորհելու ինձ կեանքը:

Aram webaram.com

ԱՐՄԱՇԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ

«Պահակ» ժողովածուի սրբագրութիւնը չէի աւարտած, երբ առիպուած եղայ Մոսկուան թողնել: Միշտ առանձնապէս պնդում էր, որ չուտով հեռանամ: Վախենում էր, որ ոստիկանութեան ձե՞ռքը կընկնեմ, թէ ուրի՞շ հաշիւ ունէր: Կրկին ու կրկին խոստացաւ, որ ինքը կը լրացնէ գրքի տպագրութիւնը եւ ինձ ճամբու դրեց:

Հաղիւ մի գիշեր կարողացայ անցընել մեր տանը: Նոր Նախիջեւանում ոստիկանութիւնը խիստ հետապնդում էր կասկածելիներին. աւելի երկար մնալը վտանգաւոր էր:

Նոր Նախիջեւանից անցայ Ղրիմ, Սիմֆերոպոլ քաղաքը: Այնտեղից Բաթում: Բաթումից՝ Տրապիզոն ու Պոլիս(*):

Տրապիզոնում ընկերները համոզում էին ինձ մնալ իրենց մօտ:

— Ի՞նչ կայ Պոլսում, այդ Սոդոմ-Գոմորռում: Մնա՛ մեզ մօտ, միասին աշխատենք:

Բայց ես չմնացի: Շտապում էի Պոլիս հասնել, ուր — կարծում էի — գրական եւ հասարակական գործունէութեան լայն պատեհութիւններ կային:

Պոլիսը, սակայն, ինչպէս ասում էր Ռոստոմը, «հեռուից Պոլիս էր»: Երկար ժամանակի պէտք չեղաւ հիասթափուելու համար:

Սկզբի շրջանում նիւթական դժուարութեան մատնուեցայ, բայց ինձանով լուրջ հետաքրքրուող չգտայ: Ամէն ոք իր մասին էր մտածում, իր գործը կամ պաշտօնը չվտանգելու մտահոգութեամբ: Բացի Արմէն Գարոյից, ոչ մէկի ուշադրութիւնը չգրաւեց, օրինակ, թէ ինչո՞ւ ճաշարանում ես ամէն օր մախաւնա էի ուտում:

(*) Տե՛ս «կեանքի ուղիներով», Ա. հատ. «Ուղեւորութիւն ի Կ. Պոլիս», էջ 135:

Aram webaram.com

Դրամս վերջանալու վրայ էր, եւ ես խնայողութիւն էի անում, մինչեւ նոից դրամ ստանալը: Կէսօրին ճաշում էի Թոքաթլեանի կողքի ճաշարանում, «Ազատամարտ»ի ընկերների հետ եւ ամէն անգամ մի պնակ մախսառնա էի ապսպրում, որ ճաշացուցակի ամենաժան կերակուրն էր: Սեղանակիցներից ո՛չ ոք ուշադրութիւն չէր դարձնում: Արմէն Գարօն էլ երբեմն ճաշում էր նոյն տեղը: Նրա ուշադրութիւնը դրաւեց իմ մախսառնաւն .հետաքրքրուեց, թէ ինչո՞ւ ուրիշ բան չեմ ուտում: Ասացի՝ շատ եմ սիրում մախսառնաւն:

— Մէկ բրձոլա, հրամայեց նա սպասաւորին եւ հրամայեց, որ ուտեմ...

Մարդ էր Արմէն Գարօն:

Հարցը, սակայն, մախսառնաւն չէր: Հեռաւոր Պետերբուրգից եկել էր համալսարանական մի ընկեր, որ փախել էր ռուս իշխանութիւնից, չարաթներով մաշում էր «Ազատամարտ»ի շեմքերը, բնական չէ՞ր հետաքրքրուել, թէ այս տղան ինչո՞ւ է եկել, ի՞նչ է անում Պոլսում, ի՞նչ է մտածում:

Ճիշդ էր ասում Մելոյեանը. «Ըռեւխիդ նայող չի լինի»: Ոչ դրականութեամբ հետաքրքրուող դտնուեց, ոչ իմ մանկավարժութիւնը գնահատող եղաւ: Լեւոն Շանթը միայն մի անգամ հարցրեց, թէ մանկավարժական ի՞նչ նոր հրատարակութիւններ կային Ռուսաստանում: Ես տուի նրան Ա. Նեչայեւի հոգեբանութեան նոր լոյս տեսած հատորը. մի քանի օրից վերադարձրեց, թէ՝ «վատ չէ»:

— Մտածում եմ թարգմանել, ասացի ես:

— Ո՞վ պիտի կարդայ, պատասխանեց նա. Շերլոկ Հոլմսը թարգմանես, աւելի լաւ կ'անես...

Կատակ էր, ի հարկէ, բայց Շանթի այսպիսի վերաբերումը ցաւ պատճառեց ինձ: Ամէնից շատ ես նրանից էի սպասում հետաքրքրութիւն դէպի իմ մանկավարժութիւնը եւ ուսուցչութիւնը:

Իմ ուսուցչական խնդրով անկեղծ կերպով զբաղուեց միայն Մելքոն Կիւրջեանը, որ կոչումով ուսուցիչ եւ արտի տէր մարդ էր: Նա աշխատեց ինձ համար դասատուի տեղ դտնել Պոլսի հայ դըպրոցներից մէկում, բայց վերջը յուսահատ՝ յայտնեց.

— Կարելի չեղաւ: Արծիւներու բերնէն անհնար է պատառ խլել... Տղաս, քեզի խորհուրդ կու տամ՝ դաւառ գնա՛: Հոն է իսկական հայ կեանքը: Պոլիսը Սոդոմ-Գոմոռ է...

Երկրորդ անգամն էի լսում Պոլսի մասին Սոդոմ-Գոմոռ բառերը, եւ կարծես թէ սխալ չէր:

Aram webaram.com

Իմ վիճակում էր եւ Ղեւոնդ Մելոյեանը: Նա էլ յոյզեր եւ յոյսեր ունէր եւ ինձ պէս որոնումների մէջ էր. չէր բաւականանում ճնճղուկներ որսալով եւ երկնքի արծիւների յետեւից էր. ուսուցչութեան տեղ էր փնտռում Պոլսում, ուր, իբրեւ դրող, յոյս ունէր հանճարեղ երկեր արտադրել: Նրան էլ չէր յաջողւում արծիւների բերնից պատառ խլել: Եւ ահա միասին մախսառնա ուտելով՝ անդորձ մանէինք դալիս Պոլսում, օդային ամրոցներ կառուցանելով:

Մի օր Մելոյեանը եկաւ, թէ՝

— Վռամեանը վաղը Արմաշ կ'երթայ, կ'ուզե՞ս մենք ալ երթանք հետը:

Արմաշի մասին ես դեռ աղօտ պատկեր ունէի, հարցրի.

— Ի՞նչ կայ Արմաշում. ի՞նչ պիտի անենք այնտեղ:

— Զարխափան Աստուածածնի տօնն է: Շատ ուխտաւորներ կ'ըլլան: Վռամեանը ճառ կը խօսի, մենք ալ մտիկ կ'ընենք:

Ճառ Պոլսում էլ շատ էին խօսում: Բայց Արմաշի ճառերը, երեւի, աւելի հետաքրքրական կը լինէին: Մի քանի օր առաջ ծանօթացել էի երիտասարդ Մինաս Գասապեանի հետ — վերածին —, որ Նիկոմիդիայի հայերի մասին դիրք էր պատրաստում. հետաքրքրական բաներ պատմեց այդ շրջանի մասին, իմ առաջ նոր աշխարհ պիտի բացուէր:

— Փոխանակ Պոլսում ճանճ որսալու եւ սրան-նրան բամբասելու, ինչո՞ւ չէ, երթանք Արմաշ Վռամեանի ճառը լսելու, պատասխանեցի ես, Ղեւոնդին: Ջէօն եա բուրդա, եա Բաղդադտա, հաշիւը մէկ է:

Եւ յաջորդ առաւօտ նաւ առինք չորս հոգիով՝ Վռամեանը, Բարթող Զօրեանը, Ղեւոնդ Մելոյեանը եւ ես. մի դաշնակցական խմբապետ երեք հայդուկների հետ: Մանաւանդ, Ղեւոնդը եւ ես արտաքինով իսկական հայդուկներ էինք. պակաս էր միայն զօսինեբիցս կախուած մաուզերը...

Նաւով պիտի երթայինք Իզմիտ կամ Պարտիզակ, այնտեղից կառքով Արմաշ: Բայց նաւը, փոխանակ Մարմարա յառաջանալու, մեզ տարաւ յետ՝ Պողազը: Ջուլերայի օրեր էին. պէտք էր ինչ որ դործողութիւններ կատարէինք այստեղ ու բաւական սպասէինք: Վռամեանը չդայնացաւ: Մենք չդայնացանք: Նաւ նստելուց առաջ պարտաւոր էին մեզ յայտնել բոլոր այս ձեւակերպութիւնների մասին: Զդայնութիւնը փոխուեց բանավէճի Վռամեանի եւ նաւապետի միջեւ: Վէճը կարող էր վերածուել կռուի. ֆեդայիներս սպառնական կանդնած էինք իրենց խմբապետի յետեւը: Նաւապետը մեղմացաւ:

Aram webaram.com

Առաջարկեց մեր դրամը վերադարձնել եւ ազատուել մեզանից: Պոլսում դրամը առինք եւ դուրս եկանք նաւից: Վռամեանը առաջարկեց երկաթուղով ճամբորդել: Պէտք է երթայինք Գաստը Քէոյ, դիւրէինք ընկերներից մէկի տունը եւ յաջորդ առաւօտ երկաթուղիով մեկնէինք Իզմիտ, այնտեղից էլ կառքով Արմաշ:

Ղալաթայից բացւում էր սքանչելի տեսարան դէպի Մարմարա եւ ասիական ափերը: Պոլսի բնութիւնը առհասարակ դեղեցիկ է, բայց այս մասը զմայլելի է. չնկատեցինք, կարծես մէկ ակնթարթում նաւը մեզ հասցրեց Գաստը Քէոյ: Եւ նոր էինք մեր ոտքը ափ դրել, երբ մեր առջեւը ելան երկու նշանաւոր տիպեր, որոնց երեւումը մեծ հաճոյք պատճառեց Վռամեանին: Մէկը բարձրահասակ, վառվռուն, լայնեզր գլխարկով, միւսը կարճ:

— Ծանօթացնեմ քեզ, ներկայացրեց ինձ Վռամեանը, — միւսները արդէն ծանօթ էին. հռչակաւոր գերասանապետ ու սոփուճի Գրիգոր Անդուքի եւ նշանաւոր բանաստեղծ ու սոցիոլոգ Եդուարդ Գոլանճեանը:

Վռամեանը յայտնապէս ծաղրում էր նրանց, բայց երկուսն էլ լուրջ էին ընդունում նրա խօսքերը: Ես առանձնապէս հետաքրքրուեցի սոցիոլոգ բանաստեղծով:

Վռամեանը, Բարթողն ու Մելոյեանը, Անդուքի առաջնորդութեամբ, ծիծաղով եւ աղմուկով անցան առաջ: Ես եւ սոցիոլոգը հետեւում էինք նրանց: Իմ միտքն էլ, այն օրերին, կլանուած էր ընկերային հարցերով: Մանաւորապէս ինձ հետաքրքրում էր Մպենաերը իր, ինչպէս ասում էինք, «օրգանական կոլեկտիւ ինդիվիդուում»ի տեսութեամբ:

— Սոցիոլոգիայից ի՞նչն է ձեզ հետաքրքրում, հարցրի ես նոր ծանօթիս:

— Ամէն բան, եղաւ պատասխանը. — սոսիոլոժի ժեներալ...

— Բայց որեւէ հարց կամ հեղինակ, մասնաւոր նախասիրութիւն չունի՞ք: Սպենսերը՝ օրինակ...

— Այո՛, այո՛, շատ կը սիրեմ. Սպենսերի մասին հատոր մը կը պատրաստեմ:

— Հատո՞ր մը...

— Այո՛, հատոր մը... 400 էջ կ'ըլլայ:

Այս արդէն շատ հետաքրքրական էր. Սպենսերի մասին 400 էջնոց հատոր մը հայերէն...

— Սպենսերի ո՞ր գործը մասնաւորապէս հաւանում էք, ի՞նչ

Aram webaram.com

է ձեր վերաբերումը դէպի նրա օրգանական կոլեկտիւ տեսութիւնը, հարցրի ես:

Մարդը մի վայրկեան երես նայեց եւ պատասխանեց անվրդով.

— Ես Սպենսերէն որեւէ գործ չեմ կարդացած... տակաւին: Կ'ուզեմ օրիժինալ ըլլալ: Չեմ ուզեր անոր ազդեցութեան տակ իյնալ: Հատորը գրելէս վերջ պիտի կարդամ...

Այս իսկապէս որ օրիժինալ էր: Հեղինակի մասին մի հատոր գրել առանց նրա գործերը կարդացած լինելու...

Բառեր էի փնտռում պատասխանելու համար, մէկ էլ առջեւից լսուեց Վռամեանի ծիծաղը: Նա մէկ ականջով հետեւում էր մեր խօսակցութեան: Գրիգոր Անգուրը պոռաց օրիժինալ սոցիոլոգի հասցէին.

— Բաւակա՛ն է, ախփա՛ր, ձգէ՛ ազ մարդու օձիքը:

Բայց ես չձգեցի նրա օձիքը: Մինչեւ Դաշնակցութեան ակումբը հասնելս չարունակեցի հարցումներ տալ բանաստեղծ սոցիոլոգին, որ շատ լուրջ պատասխաններ էր տալիս: Դուրս եկաւ, որ միայն Սպենսերի մասին հատոր պատրաստելով զբաղուած չէր: Փիլիսոփայական բառարան էլ էր կազմում, երկու հատորով: Հայերէն տաղաչափութեան մասին էլ ուսումնասիրութեան վրայ էր:

Այս վերջինը, թերեւս, իրեն աւելի վայել էր: Կարդացել էի նրա ոտանաւորները, որոնց դլխաւոր արժանիքը չափն ու յանգն էր՝ մեր Ռնուիրիոս Անուիեանի ոտանաւորների պէս:

Դաշնակցութեան ակումբը հետզհետէ լեցուեց ընկերներով: Այստեղ կենտրոնական դէմք էր Գրիգոր Անգուրը իր քաջագործութիւններով: Սոցիոլոգ բանաստեղծը դաշնակցական չէր եւ չուտով մեկնեց:

— Հաւնեցա՞ր այդ հոսհոսին, ասաց Մելոյեանը. այս է ահա իսկական պոլսահայ մտաւորականի տիպը...

Ճաշերդ առաւօտ, վաղ լուսաբացին, դնացք առինք Գատը Քէօյի կայարանից:

Արուարձաններից մէկում, մեր վագոնը մտան կովիկ հագնուած երկու պարոններ եւ առանց մեզ նայելու, տեղ գրաւեցին առջեւի նստարանի վրայ, մեր դիմաց: Մէկը բարձրահասակ, խոժոռ դէմքով, աչքերին սեւ ակնոց: Միւսը՝ մաքուր ածիլուած, անշուշան երեւոյթով, յարաչարժ մէկը: Վռամեանը եւ միւս ընկերները, նրանց երեւումով, յանկարծ լռեցին եւ հետաքրքրութեամբ դիտում էին նորեկներին, որոնք ցած ձայնով զրուցում էին իրարու հետ:

Aram webaram.com

Մէկ էլ սեւ ակնոցաւորը նայեց մեր կողմը, մռայլ դէմքը աւելի եւս մռայլուեց, ելաւ տեղից եւ արագ շարժուեց դէպի դուռը. միւսը հետեւեց նրան: Մեր յարկաբաժնում բարձրացաւ հոհոռոց:

— Վահան Թէքէեանն է եւ Զիֆտէ Սարաֆը, յայտնեց ինձ Բարթողը, երեւի, նոյնպէս Արմաշ կ'երթան...

Չէր սխալուած: Երբ մենք Իզմիթից, եայլիով հասանք Արմաշ, վանքում արդէն ամէնքը սպասում էին վոամեանին՝ երեք գինուած հայդուկների ընկերակցութեամբ որոնք պէտք է Զարխափանը վար առնէին: Բաց ու գոցի օրեր էին, եւ ամէն զրպարտութիւն նեթելի էր դաշնակցականների մասին:



Ա. ՎՌԱՄԵԱՆ

Վանքի բակը եւ յարակից տեղերը բռնուած էին ամէն սեռի ու հասակի բազմահազար ուխտաւորներով: Կեր ու խում, երգ ու պար, ուրախութիւն... Աղօթողը աղօթում էր եկեղեցում, որտեղից հասնում էին պատարագի մեղեդիները: Դուրսը, սակայն, բաց երկնքի տակ՝ ժողովուրդը խրախճանքի մէջ էր: Եւ Զարխափան Աստուածածինը հանդիստ կեցած էր իր տեղը: Մենք՝ հայդուկներս նրան ձեռք չտուինք...

Եկեղեցական արարողութիւնից յետոյ, վանքի բակում, տեղի ունեցաւ հրապարակային ժողով բազմահազար բազմութեան ներ-

Aram webaram.com

կայութեամբ: Օրուայ բանախօսն էր Վռամեանը:

Օսմանեան Սահմանադրութեան օրերին, Պոլսում, Ակնունիից յետոյ, ամենաժողովրդական բեմախօսը, կարելի է ասել, Վռամեանն էր: Դասական խմաստով հռետորական պերճախօսութիւն չունէր նա, ձայնը բեմական չէր, ոչ էլ շարժումները: Խօսում էր խիստ արագ, գնդացիրի պէս: Խօսելիք նիւթը առաջուց պատրաստում էր: Մերթ ընդ մերթ ձեռքի թղթին նայելով՝ նա առաջ էր բերում ունկնդրի վրայ տպաւորութիւն գործող ուժեղ փաստեր, տրամաբանական վերլուծութեան էր ենթարկում եւ ջախջախիչ հարուածներ հասցնում հակառակորդին: Խօսում էր յուզումով ու վրակիչ խանդավառութեամբ, սուր ու ուժեղ բանավիճող էր՝ սուր ու կծու հեղնանքով: Իր ճառը յաճախ ընդմիջւում էր բուռն ծափերով եւ հոմերական ծիծաղով...

Այդ օր Վռամեանը սովորականից աւելի պերճախօս էր: Նա խօսեց ազգային հարցերի եւ հակառակորդ կուսակցութիւնների, մասնաւորապէս չէրիթչի սահմանադիր ռամկավարների Հ. Ց. Դաշնակցութեան դէմ բացած անղուսպ պայքարի մասին: Եւ, իբրեւ օրինակ յիշեց Զարխափանի պարագան, տալով նաեւ այդ պահուն վանքի բակում գտնուող Վահան Թէքէեանի անունը: Ժողովուրդը խելայեղ թափով ծափահարում եւ բարձրաձոչ աղմուկով ու սուլոցով հաւանութիւն էր տալիս Վռամեանի խօսքերին:

Ժողովից յետոյ ընկերները յայտնեցին, որ Թէքէեանն ու Զիֆթէ Սարաֆը արագ հեռացել են Արմաշից:

Շատ տարիներ վերջը, Փարիզում, ուր երբեմն տեսնւում էինք Վահան Թէքէեանի հետ, ես նրան յիշեցրի Արմաշի դէպքը: Նա խընդաց եւ պատասխանեց:

— Կը յիշեմ, բայց ճիշդ չէ, թէ մենք ըսած ենք, որ Վռամեանը եկած է Զարխափանը վար առնելու համար: Հաւանական է ըսած եմ, թէ եկած է զինուած հայդուկների հետ...

— Բայց այդ հայդուկներից մէկը ես էի, միւսը ձեզ ծանօթ Ղեւոնդ Մելոյեանը: Ոչ զէնք ունէինք, ոչ զրահ...

— Ի՞նչ կ'ըսէք... կրնայ ըլլալ... ճիշդ է, որ մենք փախանք Արմաշէն: Վռամեանի ճառէն յետոյ մեզ կրնային լինչի դատաստանի ենթարկել...

Ինչ մեղքս պահեմ, այսօր ալ ես համոզուած եմ, որ Թէքէեանն ու Զիֆթէ Սարաֆը անմասն չէին Զարխափան Աստուածածնի պատկերը Վռամեանի եւ իր հայդուկների ձեռքով Արմաշից յափըշտակելու ձեռնարկին: Երբ մի քանի օր վերջը մենք հասանք Աղա-

Aram webaram.com

բազար, որտեղից անցել էին Թէքէեանը եւ Զիֆթէ Սարաֆը, առաջին հարցումը, որ արաւ մեզ պանդոկապետ ընկ. Գայեաեանը, եղաւ.

— Ո՞ւր է Զարխափանի պատկերը, ո՞ւրտեղ դրիք...

Աղաբաղարում արդէն խօսւում էր իրրեւ կատարուած փաստ...

Զարմանալի՞ է: Այժմ ինչե՞ր են խօսում հակառակորդները Դաշնակցութեան մասին:

Մարդկային է. ատրուկը չի սիրում ազատ մարդկանց:

Արմաշում մնացինք մի քանի օր՝ ընկերների եւ ամբողջ ժողովրդի դուրգուրանքի առարկայ: Վռամեանը օրուայ մարդն էր՝ յարգուած ամէնքի կողմից. ամէն ոք աշխատում էր ծանօթանալ նրա հետ եւ հիւրասիրել: Մենք էլ օգտւում էինք նրա ժողովրդա-

Դպրեվանքում Մելոյեանին եւ ինձ հրաւիրեցին խօսելու աշակերտներին: Չեմ կարծում, որ տեսչութիւնը դոհ մնաց մեզանից. մենք երկուսս էլ վանականներին ոչ յարմար մտքեր յայտնեցինք եւ յորդորեցինք աշակերտներին հետաքրքրուել դրսի կեանքով եւ ընկերային աշխարհիկ հարցերով: Չհրաւիրեցինք դաշնակցական լինելու, բայց մեր ասածի մէջ բանին այդ էր — Դաշնակցական եղէք...

Արմաշից՝ Աղաբաղար:

Աղաբաղարում արդէն սպասում էին ընկերները, որոնք մեզ ընդունեցին դրկաբաց: Պանդոկապետ ընկ. Գայեաեանը մեզ տրամադրեց իր պանդոկի ամէնալաւ սենեակները եւ երբ մեկնում էինք, հրաժարուեց մեզանից դրամ առնել: Ասենք առանձին կորուստ էլ չունեցաւ, որովհետեւ մեզանից բացի պանդոկում ուրիշ մարդ չկար եւ մեր պատճառով ուտելիքի եւ խմիչքի բաւական դործ արաւ:

Ուշադրաւ մարդ էր պանդոկապետ մեր ընկերը: Ցիսունի չուրջ լաւ ճեւուած եւ ամուր կարուած միջահասակ մի տղամարդ էր: Գունքերի վրայ արդէն սպիտակ կար, բայց դլխի մազերը եւ պեխ ու մօրուքը դեռ սեւ էին: Ցարաշարժ, խօսուն, զուարթ, հիւրասէր մարդ էր: Նախկին հնչակեան, Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ, չատերի պէս, մտել էր Դաշնակցութեան շարքերը: Այժմ քաղաքում յարգուած դաշնակցականներից էր:

Աղաբաղարը, կարելի է ասել, դաշնակցական քաղաք էր: Ժօսքը, բնականաբար, Աղաբաղարի հայերի մասին է: Ամերիկեան

Aram webaram.com

դպրոցի եւ չրջանակի ազդեցութեան շնորհիւ, պատուելիական հոգեբանութիւնն էլ աննշան չէր:

Մէկ–երկու օր պաշտօնական այցելութիւններից, տեսակցութիւններից եւ կուսակցական ժողովներից, ճաշկերոյթներից ու հիւրասիրութիւններից յետոյ, տեղի ունեցաւ Վռամեանի դասախօսութիւնը օրուայ հրատապ հարցերի մասին: Նիւթը նոյնն էր ինչ որ եւ Սրմաշում, բայց այս անգամ Վռամեանը աւելի գուսպ էր, թէեւ անողոք կերպով քննադատեց չէրիաթճիներին: Դասախօսութեան ներկայ էին եւ ամերիկեան չրջանակից մարդիկ, որոնք չէին սիրում խուժանավարութիւն...

Վռամեանը մեր կուսակցութեան մէջ ամէնէն կռուազան գործիչի համբաւ ունէր: Ամերիկայում նաեւ նրա անողոք հարուածների տակ փուլ եկաւ Հնչակեան կուսակցութիւնը: Վռամեանի գնդացրային ճառերը ծանօթ էին Կովկասում եւ Պոլսում: Բայց նա զարմանալի սուր հոտառութեամբ չուտ էր ճանաչում իր լսարանը եւ արագ դիրքաւորումով յարմարւում էր միջավայրին: Ինչո՞ւ զրդռել սաղերին ճիպոտի հարուածներով, երբ կարելի էր անուշ խօսքերով էլ վարել ուզած տեղդ...

Մեր արշաւը դէպի Սրմաշ եւ Սզաբազար 8–10 օր տեւեց: Ամէն տեղ եւ ամէնքը մեծ ուշադրութեամբ ու յարգանքով էին ընդունում Վռամեանին. մենք էլ օգտւում էինք նրա չուքից:

Վռամեանը չէր կարող Պոլսից երկար բացակայել. Բիւրոյի գործավարութիւնը նրա ձեռքին էր, ուստի Բարթողի հետ վերադարձաւ Պոլիս: Մենք՝ Մելոյեանը եւ ես, պատճառ չունէինք աճապարելու. ի՞նչ պիտի անէինք Պոլսում: Մանաւանդ որ ընկերներն էլ խնդրում էին մնալ Սզաբազարում, մի շարք դասախօսութիւններ տալ երիտասարդութեան եւ հասարակութեան համար:

Առաջին դասախօսութիւնը Մելոյեանը տուեց Հ. Ց. Դաշնակցութեան ակումբում, օրիորդների համար: Նիւթը կանանց հարցն էր: Եւրոպական երկրների օրինակներով եւ սոցիոլոգիական փաստերով Ղեւոնդը ապացուցեց, որ կինն էլ մարդ է, հետեւաբար չպէտք է տարբերութիւն դնել տղամարդու եւ կնոջ միջեւ:

Հայ կինը արդէն հասել է քաղաքակրթութեան բարձր աստիճանի, հետեւաբար նա պէտք է մասնակցի ազգային գործերին համահաւասար տղամարդու հետ, մանաւանդ որ Ֆրիմեան Հայրիկն էլ կաթողիկոսական կոնդակով հայ իգական սեռին շնորհել էր ընտրելու եւ ընտրուելու իրաւունք:

Aram webaram.com

Ղեւոնդի դասախօսութիւնը մեծ ոգեւորութիւն առաջ բերեց կանանց շրջաններում: Եւ երբ յաջորդ օր մենք այցելեցինք մետաքսի գործարանները, բանուոր աղջիկները դլխաւորապէս նրանով էին հետաքրքրւում, եւ Ղեւոնդը յայտնապէս ախորժում էր այդ հետաքրքրութիւնից:

Ադաբազարում ամէնահետաքրքրական վայրը ինճ համար, մետաքսի գործարաններն էին: Ես նոր էի քննութիւն տուել քաղաքատնտեսութիւնից, եւ բանուորական հարցը արտիս մօտ էր: Մեծ լոյեանն էլ ջատագով էր արհեստակցական շարժման: Մենք մի քանի օր իրար յետեւից այցելեցինք քաղաքի ծայրում գտնուղ մետաքսի գործարանները, ուր աշխատում էին բազմաթիւ հայ աղջիկներ, 7–8 տարեկանից սկսած:



ՂԵՒՈՆԴ ՄԵԼՈՅԵԱՆ

Գործարանի ներքին կարգերը եւ աշխատանքի պայմանները խիստ աննպաստ էին: Աշխատանքի ժամանակը՝ երկար — արեւածագից արեւմուտ —, վարձատրութիւնը՝ չնչին, հազիւ չոր հացի դինը: Առողջապահական ոչ մի հոգածողութիւն: Բանուորուհիների տեսքը ժժգոյն էր, նիհար: Տեղական հազուստը, մանաւանդ լայն շալուարները աւելի եւս տգեղացնում էին նրանց:

Մենք հարց ու փորձ էինք անում բանուորուհիներին, աշխա-

Aram webaram.com

տում էինք պարզել դործարանների իրական վիճակը: Վերակացուները հաշտ աչքով չէին նայում մեզ, բայց եւ չէին համարձակւում արդելք հանդիսանալ Պոլսից եկած այցելուներին. ո՞վ էր իմանում՝ ինչ մարդիկ էին...

— Ի՞նչ ես ասում, Ղեւոնդ, դիմեցի ես Մելոյեանին կատակով, չմնա՞նք այստեղ եւ արհեստակցական միութեան դործադուլ չկազմակերպե՞նք...

Բայց Ղեւոնդը արդէն տեսել էր դործադուլների համը վանում...

Մի դասախօսութիւն էլ ես տուի հասարակութեան Ֆրանսական Սինդիկալիզմի մասին... Աղաբաղա՛ր եւ Ֆրանսական Սինդիկալիզմ: Եթէ ինձանից դատ մէկը մի բան հասկացաւ, կարող էի չնորհաւորել: Ճամենայն դէպս, բուռն ծափերի արժանացայ, թէեւ ոչ այնքան խանդավառ, որքան Ղեւոնդը:

Երկուսս էլ երիտասարդ էինք եւ երկուսս էլ տաքկլուխ, չասելու համար խելքից պակաս. ի՞նչ դործ ունէին կանանց հաւասարութիւնը կամ Ֆրանսական Սինդիկալիզմը Աղաբաղարում: Ինձ համար միակ արդարացում կարող էր համարուել այն, որ ես նոր էի խմբագրել «Պահակ» ժողովածուն, որի մէջ մի ընդարձակ յօդուած էի գետեղել Ֆրանսական Սինդիկալիզմի մասին: Մելոյեանն էլ, կարծեմ, այդ օրերին երկնում էր իր այնքան աղմուկ հանած «Մայր» վէպը...

Երբ Պոլիս վերադարձանք, «Ազատամարտ»ի խմբագրատանը ինձ սպասում էին երկու հաճելի անակնկալ. հայրս ուղարկել էր տասը դեղին ոսկի, որ ահագին հարստութիւն էր Ղեւոնդի եւ ինձ նման անկուտիների համար: Երկրորդ՝ Զմիւռնիայի ընկերների հեռադիրը Բիւրոյին — ինձ հրաւիրում էին ազդային վարժարանի տնօրէնի եւ «Աչխատանք» թերթի խմբագրի պաշտօնով, ամսական 12 ոսկի ռոճիկով:

Ուրախ էի, որ, վերջապէս, պիտի ազատուէի Պոլսի անհիւրընկալ միջավայրից եւ անդործունէութիւնից: Ուրախ էի, մանաւանդ, որ Զմիւռնիայի մասին լաւ բաներ էի լսել: «Եթէ Եւրոպա չէ, Ասիա ալ չէ», արտայայտուեց Զմիւռնիայի մասին Ռուբէն Զարդարեանը: Եւրոպան ու Ասիան ինձ այլեւս չէին չահադրդռում, միայն թէ Պոլիս չլինէր, այնքան հիասթափուել էի այդ չողչողուն, բայց պարապ քաղաքից:

Սկսայ արագ պատրաստութիւններ տեսնել մեկնելու: Պէտք էր արտաքինս կարգի դնել. հայ-լայֆ Զմիւռնիայում՝ վայելուչ ե-

Aram webaram.com

բեւոյթով ներկայանալու համար: Ես դեռ Պետերբուրգի ուսանողական հաղուստով էի. ծրագիրներ էի կազմում իմ աշխատանքների համար Ջմիւռնիայում:

Բայց, ասուած է, թէ մարդ ենթադրում է, իսկ Աստուած կարգադրում: Երբ արդէն պատրաստ էի մեկնելու Ջմիւռնիա, Ռոստոմից, Բիւրոյի միջոցով, հեռագիր ստացուեց Կարինից. «Թող Վրացեանը անմիջապէս մեկնի Տրապիզոն եւ սպասէ մեր կարգադրութեան»:

Ռոստոմն էր հեռագրողը, կարո՞ղ էի մերժել: Անմիջապէս հեռագրեցի Ջմիւռնիա, թէ չպիտի գամ, եւ ճանապարհ ընկայ դէպի Տրապիզոն:

Aram webaram.com

ՍԻՆՆԻ ԳՈՐԾԸ

Տրապիզոնում ինձ սպասում էր Բժ. Յովսէփ Տէր Դաւթեանի նամակը. Հայաստանի Բիւրոյի կողմից, ինձ նշանակել էին կարինի «Ցառաջ»ի խմբագիրը, հրահանգում էին քննել Գրիգոր Սիւնիի եւ Եոմուրայի չրջանի սպանութեան գործերը եւ Բիւրոյին զեկուցում բերել: Սիւնիի գործը պէտք է քննէի Օսմանեան Ժողովրդարանի եւ բեսփոխանները Վարդգէս Սէրէնդիւլեանի եւ Վահան Փափազեանի հետ միասին, որոնք Տրապիզոնի վրայով պիտի անցնէին Պոլիս: Երկուսն էլ, սակայն, զանազան պատրուակներով, խուսափեցին այդ ոչ հաճելի պարտականութիւնից:

Երաժշտագէտ Գրիգոր Սիւնին իմ մտերիմ ընկերներից էր: Գոնէ ինքը այդպէս էր ցոյց տալիս: Եւ արդէն ո՞ւմ հետ մտերիմ չէր Սիւնին:

Ղարաբաղցի էր, ղարաբաղցիական չեչոտած յատկութիւններով: Արտաքինով կոպիտ եւ առաջին հայեացքից անհամակրելի: Կոշտ խօսելակերպ եւ չողոքորթ լեզու ունէր: Այդ կառապանի տեսքով մարդը օժտուած էր երաժշտական անվիճելի տաղանդով: Պատանի տարիքին թառ էր նուագում, Թրքական չայխանաներում: Ապա յաջողել էր երաժշտութիւն ուսանել Պետերբուրգում՝ միաժամանակ կատարելով դպրապետի պաշտօն Հայոց եկեղեցում:

Կատաղի դաշնակցական էր Գրիգոր Սիւնին՝ ձախ հակումներով: Նրա հեղինակութիւնն է Դաշնակցութեան քայլերգը՝ «Մշակ, բանուոր»: Թէ եղանակը եւ թէ բառերը ինքն է յօրինել:

Արդէն հասարակութեան մէջ ճանաչուած երաժշտագէտ էր, երբ ես ծանօթացայ Սիւնիի հետ, Հ. Ց. Դ. Կովկասեան Բայռնական Ժողովում, Թիֆլիսում, 1908 թ. Ծննդեան տօներին: Մեր «ձախա-

Aram webaram.com

կողմեան» թեւի մէջ էր, եւ յաճախ, պարապ խնդիրներով զբաղեցնում էր ժողովը:

Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ, վախենալով ձերբակալուելուց, փախել էր Թուրքիա, ուր փոխադրել էր եւ ընտանիքը՝ մայր, կին եւ երեք երախաներ. կինը աւարտել էր Պետերբուրգի նշանաւոր Բեստաժեւսկի կանանց բարձրագոյն վարժարանը եւ զնահատուած ուսուցչուհի էր Հայոց դպրոցներում: Համեստ, լռակեաց, յարգուած ամէնքից՝ բայց ճշմարիտ նահատակ էր ամուսնու ձեռքին:

Իր երաժշտական, նաեւ կուսակցական — վերջը կը տեսնենք, եւ այլ կարգի — գործունէութեան վայր Սիւնին ընտրել էր Տրապիզոնը յարակից չրջաններով: Ազգակցարոյց համերգներ էր կազմակերպում Տրապիզոնում, Կիրասոնում, Երզնկայում: Դաշնակցական ժողովներում յախուռն ճառեր էր խօսում: Հասարակութիւնը զնահատում էր նրա երաժշտական տաղանդը: Երիտասարդութեան մէջ, մանաւանդ աղջիկների կողմից, Սիւնին սիրուած էր առանձնապէս:



ՓԻԼՈՍ, Գ. ՍԻՒՆԻ, ՍԱՀԱՐԱՆԴ, Ս. ՎՐԱԶԵԱՆ

Տրապիզոնում հաւաքուած էին Ռուսաստանից փախած մի շարք մտաւորական երիտասարդներ, դաշնակցական խմբապետներ

Aram webaram.com

ու հայդուկները՝ Սահրանդ, Զուլալ, սկանակ բանաստեղծ Գառնիկ Քեալաչեանը եւ ուրիշներ, որոնց հետ Սիւնին մտերմութիւն էր ա-նում: Նրա տունը միշտ լիքն էր լինում աղջիկներով եւ տղաներով, որոնց մասին քաղաքում սկսել էին աննպաստ չշուկներ տարածուել:

Եւ մի օր, ամէնքի համար անսպասելի կերպով, Սիւնին լեց-նում է իր ընտանիքի անդամներին փուրգոն եւ մեկնում է Կարին: Իսկ քիչ վերջը Հայաստանի Բիւրոն առանում է Նաւահանդստի կենտր. Կոմիտէից ընդարձակ մի բողոքագիր Գրիգոր Սիւնիի դէմ: Առաջ բերուած փաստերը այնքան ազազակող էին, որ Բիւրօն որո-շում է անմիջապէս կախակայել Սիւնիին եւ քննութիւն ու դատ նշա-նակել: Եւ քննութիւնը ինձ է վիճակւում:

Ինչո՞ւ յատկապէս ինձ: Տրապիզոնում կամ Կարինում չկայի՞ն աւելի յարմար մարդիկ: Վերջը իմացայ, որ Բժ. Տէր Դաւթեանն էր պնդել, որ ես նշանակուեմ քննիչ՝ իմ կուսակցական վստահելու-թիւնը փորձելու համար: Ռոստոմը համաձայնուել էր, որովհետեւ ցանկանում էր ինձ Կարին քաշել Պոլսից: Պոլսի մասին նա լաւ հա-մարում չունէր:


Այսպէս թէ այնպէս, ես պէտք է դառնայի իմ մտերիմ ընկեր Գրիգոր Սիւնիի դատական գործի քննիչ: Երբ ծանօթացայ թղթա-ծրարին, սարսափեցի. այնքա՜ն ահաւոր փաստեր էին արձանա-գրուած: Սիւնին մեղադրւում էր բազմաթիւ անբարոյական արարք-ների մէջ իր երդչախումբի անդամ աղջիկների վերաբերմամբ:

Առաջին մտածումս եղաւ՝ անմիջապէս հեռագրել Կարին իմ հրաժարականը, բայց այդ պիտի նշանակէր կորցնել կուսակցու-թեան, մանաւանդ, Ռոստոմի իմ վրայ ունեցած վստահութիւնը: Հոգուս խորքում զոհ էի, որ այդպիսի մի փափուկ գործի քննու-թիւնը ինձ էր վստահուել: Միւս կողմից, հաւանական է, որ որոշ դեր էր կատարում եւ ենթագիտակցական հետաքրքրութիւնը ծանօ-թանալու Սիւնիի եւ նրան ընկերացող մի քանի անհատների արարք-ներին. Քեալաչեան, որ այդ պահուն Տրապիզոնում էր, Զուլալ եւ Սահրանդ նոյնպէս մեղադրւում էին կեանք. կոմիտէի բողոքագրում:

Երկար մտածումներից ու վարանումներից յետոյ, որոշեցի ձեռնարկել քննութեան: Իրար յետեւից, առանձին-առանձին, եկան եւ անցան երեսփոխաններ Վահան Փափազեանն ու նոր ամուսնացած Վարդգէս Սէրէնկիւլեանը իր կնոջ հետ: Տեսնուեցի նրանց հետ, ցոյց տուի Բիւրոյի նամակը, խնդրեցի որ օգնեն ինձ: Երկուսն էլ շտապում էին Պոլիս հասնել. ո՞վ ժամանակ ունէր Տրապիզոնում Սիւ-նիի չհատատակութիւններով զբաղուելու:

Aram webaram.com

Զեռնարկեցի մենակ քննութեան։ Իմ կազմած քննութեան արձանագրութիւնները, եւ, առհասարակ, Սիւնիի գործի ամբողջ թղթածրարը մնացել է Դաշնակցութեան արխիւում. ահաւոր բաներ են արձանագրուած այնտեղ, որոնց մասին կարելի չէ խօսել հրապարակով։ Եւ կարիք էլ չկայ. ոճրագործն ու զոհերը այլեւս գոյութիւն



Վ. ՓԱՓԱԶԵԱՆ (ԿՈՄՍ)

չունեն։ Բայց անձնական յուշերի տեսակէտից եւ Սիւնիի գործի իրական բնոյթը ներկայացնելու համար պատմեմ եղելութիւնը ընդհանուր գծերով։

Քննութեան սկսելուց առաջ, ես խորհրդակցութիւն ունեցայ Մեդրաք Եսայեանի եւ Վբէն Գասպարեանի հետ։ Երկուսն էլ հին ու

Aram webaram.com

փորձուած դաշնակցականները, հասարակութեան մէջ բարձր դիրքի եւ հեղինակութեան տէր: Ներանց խորհուրդը թանկագին պիտի լինէր ինձ համար:

Սեդրաքն ու Վրէյնը միաձայն խորհուրդ տուին՝ չվախենալ եւ չաղդուել ոչ ոքից. լինել անողոք եւ անխնայ. մերկացնել ամբողջ աղտոտութիւնը եւ խիստ պատիժներ տալ յանցաւորներին:

— Միայն, աւելացրեց Վրէյնը, զգոյշ եղիր, հոս Թուրքիա է, ամէն բան կրնայ պատահիլ...

— Անձիդ բան չի պատահիր, ճչդեց Սեդրաքը. զգոյշ եղիր, որ Դաշնակցութեան պատիւը չարատաւորուի:

Զգոյշ թէ անզգոյշ՝ ես ձեռնարկեցի քննութեան: Իրար յետեւից հարցաքննեցի քսանի մօտ աղջիկներ Տրապիզոնի խոնարհ դասից եւ անուանի ընտանիքներից: Հարցաքննեցի մի շարք երիտասարդներ՝ որոնք ամբաստանութեան տակ էին: Տեսնուեցի քահանաների, բժիշկների, ու անհատ քաղաքացիների հետ: Պարզուած պատկերը ցնցող էր, սահմռկեցուցիչ — այս բառը նոր էի սովորել Պոլսում:

Հարցաքննութիւնը երեւան հանեց ահաւոր փաստեր, որոնք կարելի չէ գրով ներկայացնել:

Սիւնիի յանցանքը բացայայտ էր: Զուլալին եղած վերագրումները չհաստատուեցին: Բայց Զուլալը բաց խօսող եւ բաց ապրող երիտասարդ էր, ներելի էր կասկածել նրա բարոյականի մասին էլ. որեւէ չօշափելի փաստ չկար: Սահրանդի եւ Գառնիկ Քեալաչեանի մասին խօսուածները պարզ ըրպարտութիւն էին:

Դժուարանում էի քննութեան տեղեկագիրը կազմել: Շշմել էի հայ նահապետական համարուած ընտանիքներում պարզուած բարոյական պատկերից: Միայն Սիւնիի հարց չէր. Սիւնիին կարելի էր նկատել հիւանդ: Ընդհանուր վիճակը մռայլ էր: Կարո՞ղ էի երեւակայել մի հայ աղջիկ, որ երիտասարդ քննիչի առջեւ, առանց քաշուելու, բաց ու համարձակ խօսէր սեռական ամենաինտիմ բաների մասին...

Թոռլաքեան քահանան, տեսնելով իմ հոգեկան վիճակը, առաջարկեց միասին երթալ Եոմուրա, այնտեղի սպանութեան գործը քննելու: Եթէ յիշողութիւնս ինձ չի դաւաճանում — մօտ կէս դար է անցել — Աբշակ Թոռլաքեանի սպանութեան գործն էր: Մպանիչը փախել էր Սոխումի կողմերը. իմ քննութիւնը ձեւական նշանակութիւն պիտի ունենար:

Հարց ու փորձերից յետոյ մի տեղեկագիր պատրաստեցի, չեմ

Aram webaram.com



ՎԱՐԴԳԷՍ ՍԷՐԷՆԿԻՒԼԵԱՆ ԵՒ ՋԱԻԱԿԸ

Aram webaram.com

յիշում ինչ բովանդակութեամբ: Բայց Եոմուրայի ճամբորդութիւնը որոշ չափով հանդստացրեց իր նեարդերը:

Արդէն բաւական ճամբորդած մարդ էի, բայց Եոմուրայի նըման վայրենի պեղեցկութիւն չէի տեսել: Տրապիզոնից մի քանի ժամ անդին, Ռիզէի ուղղութեամբ, դանւում էր խիտ ու բարձր անտառներով լեռնային մի տարածութիւն, ուր հնուց ի վեր ապրում էր մի բուռը հայութիւն, լեռներում ու ձորերում ընկած գիւղերի մէջ, նահապետական կեանքով: Հացի տեղ լազուք էին ուտում — եգիպտացորեն: Մսի երես քիչ էին տեսնում: Անտառները հարուստ էին պտուղով եւ մառաններդը օղիով...

Գիւղերը — Ապիոն, Գալաֆիկա, Գիւչանա, եւայլն — եւ մօտ էին իրար եւ շատ հեռու: Անդնդախոր ձորի մի կողմի գիւղից խօսում էին միւս կողմի գիւղի հետ «անթել հեռախօսով» — բարձր պոռալով — բայց նոյն գիւղից միւս գիւղը երթալու համար, ձորը իջնելով եւ ելնելով, ժամեր էին պէտք:

Ինչո՞վ էր ապրում այդ ժողովուրդը: Շրջանը հետզհետէ դատարկւում էր. գաղթում էին Սոչիի եւ Սոխումի շրջանները՝ ոմանք դրամ վաստակելու համար, ոմանք էլ Թուրքերի կամ արդարադատութեան ձեռքից: Լեռնային բարքերը խիստ էին: Արիւնը մաքրւում էր արիւնով: Փախվրէժը օրինական էր, եւ ամէն տղամարդ զէնք ունէր: Թոռլաքեան քահանան, որ մի շատ համակրելի եւ խմաստուն մարդ էր, զարմանազան պատմութիւններ էր անում Եոմուրայի բարքերի մասին՝ խարոյկի շուրջ, աստղազարդ երկնքի տակ: Աքանչելի, անմոռանալի էին Եոմուրայի գիշերները, երբ ոգիները արթնանում էին անտառներում եւ գեփիւռը հէքեաթ էր պատմում ականջիդ:

Եոմուրայից Տրապիզոն իջայ հանդստացած ջղերով եւ պատրաստեցի Սիւնիի գործի տեղեկագիրը: Իրրեւ եղրակացութիւն ի՞նչ կարող էի առաջարկել Բիւրոյին. Սիւնիի նման ախտաւոր բարքերի տէր մարդիկ չէին կարող մնալ Դաշնակցութեան շարքերում. Բիւրօն պէտք է արտաքսէր նրան կուսակցութիւնից...

Երբ վերջը, իմ ներկայութեամբ, կարդացուեց իմ տեղեկագիրը, Բժ. Տէր-Դաւթեանը խորհրդաւոր կերպով ասաց Ռոստոմին.

— Տեսա՞ր...

Ռոստոմը գոհ էր, որ ես պատուով դուրս եկայ փորձութիւնից. բայց սաստիկ ազդուել էր Սիւնիի արածներից: Նա մանաւանդ հոգածութիւն էր ցոյց տալիս Սիւնիի ընտանիքի հանդէպ եւ տխուր էր, որ կուսակցութիւնը կորցնում էր տաղանդաւոր մի երաժիշտ:

Aram webaram.com

— Ամէն դիրքիլ կարող է օգտակար լինել կուսակցութեան:

Բայց կուսակցութիւնից արտաքսուած Սիւնին չարունակեց մնալ մեր ընկերական շրջանակում եւ իր երաժշտական շնորհքով օգտակար լինել, թէեւ կարինի ընտանիքներում նա դրեթէ մուտք չունէր — երես չէին տալիս նրան —: Ռոստոմը չարունակում էր օգնել նրա ընտանիքին, բայց դլխաւոր ծանրութիւնը ընկաւ իմ վրայ: Սիւնիի կնոջ դպրոցից ստացած ռոճիկը չէր բաւականանում տան կարիքները հոգալու, եւ ես իմ ռոճիկի մի մասը, ամէն ամիս, տալիս էի Սիւնիի մօրը, որ վարում էր տնտեսութիւնը: Լեզուանի, ճաշակով կնիկ էր, մի քիչ որդու բնաւորութեամբ: Ընդհակառակը, կինը խեղճ, ընկճուած, ստուերի նման էր տան մէջ:

Ցաճախ, երբ ազատ էի լինում, ես գնում էի Սիւնիենց տունը: Հաճելի էր լսել շատախօս մօր սրամիտ պատմութիւնները, բայց մանաւանդ, սիրելի էին երեխաները: Զարմանալի էր, թէ ինչպէս այդ բոշա ընտանիքում այդպիսի լաւ երեխաներ... Փոքրիկ տղան սիրում էր խաղալ իմ ծնկների վրայ: Տարիներ վերջը նա հօր եւ սեւամորթների հետ բոլշեւիկեան թռուցիկներ պիտի ցրուէր իմ դէմ... Իսկ աղջիկնե՞րը — աղջիկները անմեղ թռչունների պէս, ճռուողում էին չուրջս: Ես ժամերով խաղում էի նրանց հետ:

Սիւնիի մօտ լինում էին Գառնիկ Ֆեալաշեանը, երբ դեռ կարինում էր, եւ Երիտասարդաց Միութեան վարիչներից Լեւոն Մազմանեանը, մի քանի ուսուցիչներ: Տրապիզոնի համեմատութեամբ շատ նեղ էր նրա շրջանակը կարինում:

Ամերիկա մեկնելուս իմ յարաբերութիւնները Սիւնիի հետ դրեթէ կտրուեցին: Նորից իրար հանդիպեցինք 1914ի ամառը, երբ կարին էի վերադարձել Ընդհանուր ժողովի առթիւ: Մեր առաջին իսկ տեսակցութիւնից յետոյ, Փիլոսը զգուշացրեց.

— Զեռք քաշէ այդ չունէն: Ամէն օր ռուս հիւպատոսի մօտ է...

Արդար թէ անարդար՝ կարինում կարծիք էր ստեղծուել, որ Սիւնին ռուսական գործակալ էր: Ատրունին ասում էր, թէ Թուրքերի մօտ էլ նա ճանաչուած էր, իբրեւ ռուսական դաղտնի գործակալ:

Երեւի այս կասկածը անհիմն չէր, որովհետեւ հէնց որ եւրոպական պատերազմը սկսուեց, դեռ սէֆէր-բէրլիկը չյայտարարուած, Սիւնին հաւաքեց իր ընտանիքը եւ, ռուս հիւպատոսի արտօնութեամբ, մեկնեց Կովկաս: Մեկնելիս ասել էր, թէ ընտանիքը պիտի հասցնի Թիֆլիս եւ վերադառնայ: Տունը մէջի իրերով թողել էր դաց:

Aram webaram.com

Սիւնիի մեկնելուց մի քանի օր անցած մօտս եկան Լեւոն Մազմանեանը եւ Ախալցխացի դաշնակցական մարտիկ Նիկոլը, որ վերջը վաշտապետ եղաւ Անդրանիկի խմբում: Նրանք արին հետեւեալ պատմութիւնը.

Սիւնին, Լեւոնը, Նիկոլը եւ Զուլալը կազմել էին ընկերութիւն, որ պէնք էր բերում արտասահմանից եւ ծախում հայերին՝ իբրեւ աջակցութիւն կուսակցութեան ժողովրդական ինքնապաշտպանութեան կազմակերպութեան գործում: Զուլալը մնում էր Տրապիզոնում, Կիրասոնում եւ Եւրոպայից պէնքեր առանալով՝ ջրեպանների միջոցով ուղարկում էր կարին: Կարինում ջրեպանները անտուկները յանձնում էին Սիւնիին: Լեւոնը եւ Նիկոլը Սիւնիի հետ բաց էին անում անտուկները, առուգում էին մէջի պէնքերը եւ տեղաւորում նախօրօք պատրաստուած պահարաններում:

Վերջին անգամ ջրեպանները սովորական ձեւով, դիշերով, անտուկները հասցնում են Սիւնիին: Յաջորդ օր Լեւոնն ու Նիկոլը Սիւնիի հետ բաց են անում անտուկները, որոնք լեցուած են լինում ...քարերով: Սիւնին երդում-պատառ է լինում, թէ ինքը ձեռք չի տուել անտուկներին, թէ Տրապիզոնում կամ ճանապարհին ջրեպանները կարող էին պէնքերը հանել ու տեղը քար լեցնել:

Լեւոնն ու Նիկոլը աշխատել են զղուշեան հետքը գտնել, բայց անհետեւանք: Զեն կասկածել Սիւնիի վրայ, բայց վերջինիս շռայլ ծախսերի եւ անակնկալ փախուստի վրայ, սկսել են տատանուել: Մտել են Սիւնիի բնակարանը, նայել վեր ու վար, ոչ մի հետք չեն գտել: Հիմա ծանր կասկածի մէջ են...

Պատմութիւնը իմ վրայ էլ ցնցող տպաւորութիւն թողեց:

— Ռոստոմը գիտէ՞, հարցրի ես:

Գիտէր: Ոչ ոքի չէին յայտնել:

Առաջին հերթին, նախքան ուրիշ բանի մասին մտածելը, անհրաժեշտ էր մի անգամ էլ բնակարանը խուզարկել:

Երեքով ելանք-գնացինք Սիւնիի բնակարանը: Նիկոլը դուռը բանալու ձեւը գիտէր: Պտտեցինք բոլոր սենեակները, վարի յարկի մառանը, ամէն ծակուծուկ մտանք եւ աչքէ անցրինք: Բոլոր պատերը մէկ-մէկ բռունցքով ծեծեցինք, ո՛չ մի բան չթողինք առանց նայելու — պէնքի ոչ մի հետք չգտանք:

Զղայնացած ու յոգնած պատրաստւում էինք դուրս գալ: Մի անգամ էլ նայեցի հիւրասրահի առաստաղին. դաշնամուրի վերեւի անկիւնը կասկածելի երեւաց աչքիս: Նիկոլը բարձրահասակ տղամարդ էր. ելաւ նստարանի վրայ եւ բռունցքով զարկեց առաստա-

Aram webaram.com

ղին: Ցանկարծ, ծեփը փուլ եկաւ եւ բացուած ճեղքից վար ընկաւ մի մաուզէր ատրճանակ ... Ճեղքը աւելի եւս լայնացրինք ու մէջից դուրս եկան ուրիշ մաուզէրներ եւ էլ ուրիշ չափլի հրացաններ: Ջեմ յիշում թիւը, բայց փոքր չէր քանակը:

Լեւոն Մազմանեանը չշմած էր: Նիկոլը հայհոյում էր: Վըրդովուած էի եւ ես:

Գողացած զէնքերի մի մասը Սիւնին ծախել էր, հաւանաբար, թուրքերին, մեւս մասը պահել էր Թաքստոցում, ի հարկէ, վերջը ծախելու նպատակով: Ասում եմ թուրքերին, որովհետեւ եթէ հայերին ծախած լինէր, անկարելի էր, որ լուրը Լեւոնի կամ Նիկոլի ականջը հասած չլինէր...

Նիկոլը հայհոյանքով ու սպառնական խօսքերով նստեց դաշնամուրի առջեւ, բացեց կափարիչը եւ իր ամեհի բռունցքը ուժով իջեցրեց ստեղնաշարի վրայ: Լարերը խժալուր ոռնացին եւ, յանկարծ, դաշնամուրի տակից թափուեցին ինչ որ բաներ: Փամփուշտներ էին, որ Սիւնին պահել էր դաշնամուրի մէջ...:

Լեւոնն ու Նիկոլը արագ միջոցներ ձեռք առին գողօնը ապահով տեղ փոխադրելու:

Իմ Թիֆլիս հասնելուց առաջ Նիկոլը արդէն Թիֆլիսում էր. իբրեւ ռուսահպատակ յաջողել էր վիզայով անցնել Կովկաս: Անուանի խմբապետ էր, եւ Անդրանիկը սիրով վաշտապետի պաշտօն տուեց նրան իր կամաւորական խմբում:

Սիւնին էլ Կովկաս անցնելուց յետոյ ինչ որ մութ տիպերի հետ միացած՝ կամաւորական շարժում էր քարոզում: Նիկոլը նրան լուր էր ուղարկել:

— Բացուել է քո դաւաճանութիւնը: Աչքիս չերեւաս, թէ չէ չանաստակ կ'անեմ...

Մի օր Նիկոլի հետ միասին բարձրանում էինք Մողնիի վերելքով: Մէկ էլ մեր առջեւը ելաւ Սիւնին ու չանթահար կեցաւ: Նիկոլը յարձակուեց վրան հայհոյելով ու ձեռքը դրպանը տարաւ ատրճանակ հանելու ձեւով: Սիւնին սարսափահար՝ սկսեց աղաչել.

— Նիկոլ ջան, ես քեզ մատաղ, ուզդ պատճեմ, յանցաւոր եմ... եմ կերել, ներիր, խնայիր զաւակներիս...

Եւ թպրտում էր Նիկոլի ոտների տակ, աշխատում էր նրա ձեռքը համբուրել:

Տեսարանը գարշելի էր:

— Թուհ, ստոր արարած, օձ, զայրացած ասաց Նիկոլը, գնա, հեռացիր աչքիցս, դաւաճան: Ջեմ ուզում կեղտոտել ձեռքերս քո պիղծ արիւնով...

Aram webaram.com

Սիւնին հեռացաւ, ու այնուհետեւ ես նրա անունը չլսեցի:

Մէկ էլ, չեմ յիշում ո՞ր թուին, նամակ ստացայ նրանից Փարիզում: Կովկասից ընտանիքով Պոլիս էր փախել բոլշեւիկների վախից: Արսէն Միքայէլեանի եւ Վահան Նաւասարդեանի աջակցութեամբ, ընտանիքով, անցել էր Ամերիկա: Ինձանից խնդրում էր, որ դրեմ կենտր. Կոմիտէին, որպէսզի իրեն ընդունեն Ամերիկայի կազմակերպութեան շարքերը: Բոլոր պատահած խայտառակութիւններից յետոյ միայն Սիւնին կարող էր նման դիմում անել...

Չպատասխանեցի: Ամիսներ վերջը նոյն խմբաստով նամակ առի Արսէնից, յայտնապէս Սիւնիի խնդրանքով. խեղճ է, ուզում է մեռնել իրրեւ դաշնակցական. եթէ կարելի է ընդունենք մեր մէջ:

Չպատասխանեցի: Ամիսներ վերջը նամակ առի կենտր. Կոմիտէից. Սիւնին թախանձագին խնդրում էր, որ ընդունենք կուսակցութեան մէջ. ի՞նչ է իմ կարծիքը:

Պատասխանեցի՝ ներկայացնելով Սիւնիի ամբողջ գործը. ինչպէ՞ս կարելի էր այդպիսի մի մարդ մացնել Դաշնակցութիւնից ներս:

Նոր Աշխարհում Սիւնին հետզհետէ նոր դիրքաւորում ընդունեց. Դաշնակցութեան հակառակորդները սիրով առին նրան իրենց մէջ: Պատուկը դլորուեց գտաւ իր խումբը...:

Վերջին անգամ ես Սիւնիին հանդիպեցի Փիլադելֆիայում, 1930ին:

Փիլադելֆիայի Հ. Ց. Դ. Կոմիտէն, իմ այցելութեան առթիւ, հրապարակային մեծ ճաշկերոյթ էր կազմակերպել քաղաքի նշանաւոր պանդոկներից մէկում, Հայկ Բազրատունիի նախագահութեամբ: Խուռներամ բազմութիւն լեցուած էր սրահը: Երբ ես մօտեցայ պանդոկի սրահին ընկերների ուղեկցութեամբ, իմ նախկին «մտերիմ ընկեր» Գրիգոր Սիւնին եւ իմ ծունկերի վրայ հասակ նետած նրա որդին, միացած մի խումբ սեւամորթ ստահակների հետ, բոլշեւիկեան թռուցիկներ էին ցրւում: Մի հատ էլ ինձ տուին: «Ո՞վ է Վրացեանը» վերնագրով, Ամերիկահայ հասարակութեան ներկայացնում էին «Փետրուարեան Ապստամբութեան հերոսը», «Հայաստանի դանճը փախցնող», «Հիթլէրի գործակալ» Վրացեանին...

Այնուհետեւ ինչ որ արաւ իր կեանքում Սիւնին, բնական էր եւ սրամաբանական...

Aram webaram.com

ԿԱՐԻՆՈՒՄ

Եոմուբայի եւ Սիւնիի զորձերի քննութիւնը ինձանից այնքան ժամանակ առաւ, որ մեկնումս Տրապիզոնից շատ ուշացաւ: Արդէն Նոյեմբեր էր, ուսումնական տարին վաղուց սկսուած էր, «Ցառաջ»ը մնացել էր անտէր, ընկերները կարինից, նամակ նամակի վրայ, խնդրում էին, որ չուտով հասնեմ:

Պիտի մեկնէի Գառնիկ Քեալաչեանի հետ միասին: Կառք վարձել էի երկու հոգու համար: Վերջին վայրկեաններին իմ թիֆիհատաման երկու սպաներ աղաչեցին, որ նրանց էլ տեղ տանք կառքում: Նեղութիւն էր, բայց յանուն հուրիէթի համաձայնուեցանք:

Երբ ճէվիզլիկից հրաժեշտ տուինք Տրապիզոնի ընկերներին, եւ կառքը սուրաց Զղանայի ուղղութեամբ, սրտի թեթեւութիւն զգացի. Սիւնիի մղձաւանջը ետեւը մնաց, իսկ առջեւը՝ Պոնտոսի աքանչելի լեռնաշղթան: Մեր Բարթողեան լեռները լինէին կարծես, միայն մերոնք մերկ են ու չոր: Պոնտոսը չունի հոյակապ Մասիսը, բայց նրա փոխարէն կայ զմրուխտեայ ծովի աննման տեսարանը: Ի զուր չէ, որ Վենիզելոսը այնքան դժուարութեամբ համաձայնուեց զիջել Պոնտոսը Հայաստանին...

Ճէվիզլիկից արդէն սկսում էր վերելքը՝ սկիզբը դրեթէ անկատելի, ապա հետզհետէ աւելի ու աւելի զգալի: Ձիերը ծածկւում են սպիտակ օճառի նման քրտինքով, թուրք կառապանի փաղաքշանքներն ու հայհոյանքները եւ մտրակի չառաչը սաստկանում են: Մեր առջեւը նստած թուրք սպաները անհանգիստ հայեացքով դիտում են ճանապարհի երկու կողմերին բարձրացող ամեհի ծառերը:

Տրապիզոնում, բաց երկնքի տակ, լիմոնն էր ծաղկում եւ վերարկուն նեղիչ էր, այստեղ արդէն ցուրտ է, մրսում ենք: Սկսում

Aram webaram.com

է ձիւնել՝ խոշոր փաթիլներով: Անտառը ստանում է տօնածառի կերպարանք, հէքեաթում լինի կարծես. հիմա ձիւնապատ անտառի մէջից դուրս կը գան թզուկները խայտաբղէտ հագուստներով, իսկ նրանց յետեւից կ'երեւայ կաղանդ պապայի փառաւոր մօրուքը: Գառնիկը կաղանդի արտասանութիւններ է անում ռուսերէնով: Սպաներից մէկը պատասխանում է նրան թուրքերէն...

Սելանիկցի է այս սպան: Իր ընկերոջ հետ ուղարկուում էին Կարին, իրենք էլ չգիտէին՝ աւելի բարձր պաշտօնո՞վ, թէ աքսորի: Երկուսն էլ լռակեաց, ինքնամփոփ եւ ծայր աստիճանի քաղաքավարի:

Մեծ դժուարութեամբ հասնում ենք Զղանա՝ ճեղքելով ճանապարհի անանցանելի ձիւնը: Պանդոկում մեզ ողջունում է յոյն պանդոկապետը.

— Բարի եկաք, բարի եկաք, մէկ շաբաթ հիւր կը մնաք մեզ մօտ:

Պարզուում է, որ ճանապարհը ծածկուած է խորունկ ձիւնով. պէտք էր սպասել, մինչեւ որ մաքրուէր:

Ի զարմանս մեր, պանդոկի սենեակը մաքուր է՝ անտառի վրայ նայող խոշոր պատուհաններով եւ անկողինները սպիտակ սաւաններով: Շուտով թխթխէ վառարանում երեւում է կրակը, եւ սեղանի վրայ յայտնուում է ինքնաեռը: Պատրաստակամ յոյն սպասաւորը ամաններ է դասաւորում սեղանի վրայ, իսկ Գառնիկը մափրաշից հանում է Տրապիզոնի ընկերների տուած ուտելիքները:

— Ինչո՞ւ չէ, այսպէս կարելի է մի շաբաթ էլ հիւր մնալ Զղանայում, աւելի էլ...

Յաջորդ առաւօտ, սակայն, ճանապարհը բացուում է ի մեծ ցաւ պանդոկապետ յոյնի, եւ մեր կառքը շարունակում է վերելքը: Ճանապարհի ամենաբարձր կէտից բացուում է զմայլելի տեսարան դէպի Սեւ ծովը: Այստեղից էր անշուշտ, որ Քսենոփոնի հայրենաբաղձ զինուորները հիացումով պոռացին՝ Թալասա՛, ծո՛վ... Ծովապաշտ յոյնի համար, մանաւանդ չոր ու ցամաք Հայաստանը կտրելուց յետոյ, ի՛նչ երանութիւն պիտի լինէր ծովի տեսարանը...

Այլ է Պոնդոսի հարաւային փէշերի պատկերը: Լեռնաշղթայի դագաթը դեռ ծածկուած է խիտ անտառով, բայց ծառերը հետզհետէ նօսրանում ու մանրանում են: Աւելի վար այլեւս ծառ չկայ, եւ մեր առջեւ բացուում են հայկական մերկ լեռնադաշտերը: Որքան հեռանում ենք Պոնդոսից, այնքան բնութիւնը չոր ու անհրապոյր է,

Aram webaram.com

պարզ ու միապաղաղ հայ գիւղացու բնաւորութեան պէս: Վեր ու վար ոլորուն, ճանապարհը քուն է բերում մարդուս վրայ:

Գիւմուշխանէից դուրս, վարը, խանում, մեզ դիմաւորում են մի խումբ ընկերներ: Մեր սիրելի Աւօն Տրապիզոնից հեռագրել է մեր մասին, եւ ահա ընկերները ժամերով սպասել են խանում՝ մեզ չփախցնելու համար: Հրաւիրում են բարձրանալ քաղաք: Իմ ծրագիրը, հանգիստ տալ ձիերին եւ գիշերը շարունակել ճանապարհը, չի յաջողւում. այնքան անկեղծ է ընկերների հրաւէրը:

Յորդ ու բորդ ճամբաներով, մթութեան մէջ, բարձրանում ենք Գիւմուշխանէ, տանձերով նշանաւոր քաղաքը: Դաշնակցութեան ակումբը լուսաւորուած՝ լեցուած է երկաեռ խանդավառ բազմութեամբ: Դասախօսութիւն է յայտարարուած:

Մեզ համար ընթրիք է պատրաստուած: Շտապով մի պատառ ուտում ենք եւ անցնում գործի: Ցիչելով Ազարագարը՝ այլեւս չեմ խօսում Ֆրանսական Սինդիկալիզմի մասին: «Օրուայ հարցեր», որոնից աւելի յարմար եւ անպատասխանատու նիւթ կարելի՞ է ճարել: Խօսիր, ինչ ուզում ես, ինչպէս ուզում ես, ինչքան ուզում ես... Ունկնդիրները ծափահարում են խանդավառ: Հուրիէթի մեղրամիսը չի անցել դեռ. բաւական է դոչել կեցցէ յեղափոխութիւնը, եւ սրահը կը թնդայ կեցցէներից ու ծափահարութիւնից:

Դասախօսութիւնից յետոյ՝ անհաշիւ հարցումներ: Մարդիկ ծարաւ են հոգեպէս: Գանգատւում են. մեծ ընկերները անցնում են Տրապիզոնից կամ Կարինից եւ նեղութիւն չեն քաշում իրենց այցելելու...

Ուշ գիշեր է արդէն: Երիտասարդների աղմկոտ բազմութիւնը մեզ ճանապարհ է դնում մինչեւ խան, ուր կառք պիտի առնենք: Քաղաքը իրարանցումի մէջ է: Ամէն կողմից աւրճանակի ու հրացանի ճայթիւններ են լսւում, աղաղակ, թմբուկի ու թիթեղի որոտ, մինարէի բարձունքից զիլ մեղեդի... ինչ է պատահել: Սարսուռ է զալիս մարդու վրայ անթափանց մթութեան մէջ...


Լուսինն է խաւարել: Զար ոգիները կուլ են տուել գիշերուայ լուսատուն: Սնոտիապաշտ թուրքերը աղմուկով, աղաչանքով, կամ ապառնալիքով, աշխատում են ազատել Լուսինը չար ոգիների ճիրաններից...

Եւ այնուհետեւ միապաղաղ ու տաղտկալի ճանապարհը մինչեւ Կարին: Վարդահան գիւղում միայն, Բաբերդի մօտ, անակնկալ հանդիպում Սեպուհի հետ:

Aram webaram.com

Սեպուհին ես տեսել էի Վիեննայի Ընդհ. Ժողովում, ուր նա մեկն էր խմբապետներից, որ ընկերվարութեան ի նպաստ արտայայտուեց. Անդրանիկը, Մուրատը հակառակ էին. Վարդանը եւ Մեւ Քարեցի Սապօն՝ անտարբեր:

Ընկերվարութեան շուրջ եղած վիճաբանութեան միջոցին Սեպուհի եւ իմ միջեւ տեղի ունեցաւ ծանր միջադէպ, որ հարթուեց Ռոստոմի միջամտութեան շնորհիւ: Ցանցառորը ես էի, թէեւ նեղողութիւն էլ քաղեցի, բայց բաժանուեցինք խոով: Այժմ հանդիպեցինք համբոյրներով, կարծես մեր միջեւ ոչինչ չէր պատահել: Սեպուհի դէմ ինչ որ կառավարական հետապնդում կար, բայց նա հանդիստ ապրում էր դիւղում եւ զբաղուած էր վարպահանի դպրոցական շէնքի կառուցումով:




ՍԵՊՈՒՀ

Մինչ տնեցիները զբաղուած էին ճաշի պատրաստութեամբ, Սեպուհը տարաւ մեզ գոյց տալու մօտակայ աւերակ եկեղեցիների աքանչելի ճարտարապետութիւնը, ապա իր դուրգուրանքի առարկայ դպրոցի նոր շէնքը, որի պատերը միայն բարձրացած էին դեռ: Ճարտարապետը ինքն էր: Ռուսաստանում տեսած դպրոցների ձեւով, գեղեցիկ յատակագիծ էր պատրաստել. մեծ, լուսաւոր դասարաններով. դիւղատնտեսական կենտրոնական վարժարան պիտի լինէր, ըստ Սեպուհի ծրագրի. դժբախտաբար, նիւթական միջոցները անբաւարար էին եւ շինութիւնը դանդաղում էր: Սեպուհի յոյսը Կովկասի հայ

Aram webaram.com

հարուստների օգնության վրայ էր: Նկատեցի, որ Պոլսի եւ Պոլսեցիների համար ջերմ զգացումներ չունէր եւ Սահմանադրութեամբ շատ ոգեւորուած չէր: Իր մէկ խօսքը մեխուեց իմ ուղեղում. «Շատ հետ բարեկամացիր, բայց փայտը ձեռքիդ մի ձգիր»:

Ճաշից յետոյ Սեպուհը բաւական տեղ մեզ ուղեկցեց: Հեծած էր Թրվռան նժոյգը, սպիտակ, բարձր փափախը գլխին, մաուզէրի տարճանակը կողքից կախ՝ նա առաջ էր շարժւում մեր կառքի մօտ: Ձին թռչում էր նրա տակ, ոստոստում եւ աչխատում էր ձերբազատուել սանձից: Սեպուհը երբեմն բաց էր թողնում սանձը, այն ժա-



ԿԱՐԻՆ

մանակ նժոյգը փոթորիկի պէս սլանում էր առաջ՝ իր մէջքի վրայ տանելով հուժկու ձիաւորին: Հիանալի տեսարան էր Սեպուհի արշաւը իր խենթ ձիու վրայ:

Սեպուհը մեզ հետ եկաւ դրեթէ մինչեւ Բաբերդ, բայց քաղաք չմտաւ: Նորից պիտի կարինում տեսնուէինք, բայց Կարին էլ չեկաւ: Ջեմ յիշում մանրամասնութիւնները. կառավարութիւնը նրան հետապնդում էր ինչ որ մի սպանութեան գործով, որին նա մասնակից չէր. Բաբերդի թուրք աղաները պրպտրտել էին նրան:

Aram webaram.com

Բաբերդ քաղաքը իմ վրայ լաւ տպաւորութիւն չթողեց: Հայերը այստեղ ճնշուած էին զգում իրենց: Դաշնակցութեան ակումբում անվերջ դանդաւում էին, որ Հուրիէթը միայն թուրք աղաների համար էր...

Կարին հասանք Նոյեմբերի չեմ յիշում ո՞ր թուին, երեկոյեան ղէմ:

Սարսափելի ցուրտ երեկոյ էր: Փողոց ու տանիք ծածկուած էին ձեան հաստ շերտով. լեռներից փչում էր պաղ, մինչեւ ոսկորդ թափանցող քամի: «Ձայնը հնչեց Էրզրումի Հայոց լեռներից» երգում էր քթի տակ Քեալաչեանը, երբ կառքը, անցնելով եկեղեցու առջեւից, կանգ առաւ Սանասարեան վարժարանի դիմաց, Ռոստոմի եւ Բժ. Յովսէփ Տէր-Դաւթեանի ապրած տան առջեւ:

Առաջին տպաւորութիւնը Բարձր Հայոց մայրաքաղաքից վհատեցուցիչ էր: Ա՛յս էր այն ոստանը, որի մասին հիացումով խօսում էր Բանկ Օթոմանի հերոսը: Իմ մտքում կարին եւ Արմէն Գարօ նոյնացել էին:

Ներսը՝ կարծես ժողով կար. լիքը մարդիկ: Ռոստոմից ու բժիշկից զատ՝ յիշում եմ Օր. Սաթենիկ Պարտիզպանեանին, որ վարժուհի էր եւ վերջը եղաւ Տիկ. Տէր-Դաւթեան, Փիլասին, Երիտասարդաց Միութեան նախագահ Լեւոն Մազմանեանին, որոնց հետ նոր պիտի ծանօթանայի, չուտով մտերիմներ դառնալու համար:

Ընթրիքից յետոյ հիւրերը ցրուեցին, Քեալաչեանը գնաց իր մի ընկերոջ մօտ, Ռոստոմն ու Տէր-Դաւթեանը ինձ պահեցին իրենց մօտ եւ մինչեւ ուշ գիշեր լսեցին իմ զեկուցումն ու դրսից բերած տեղեկութիւնները: Անհամբեր էի լսելու Ռոստոմի կարծիքը, բայց նա բաւականացաւ կէս-լուրջ, կէս-կատակ խօսքերով: Ըստ երեւոյթին դոհ էր իմ կատարած քննութիւնից, բայց իմ առաջարկը Սիւնիին արտաքսելու կուսակցութիւնից, յայտնապէս ցաւ պատճառեց նրան: Պատիժը խիստ չէր դտնում, Սիւնին խիստ յանցաւոր էր, բայց ինչո՞ւ այսպիսի բաներ պիտի անէր, որ ստիպուած լինէինք այդպիսի խիստ պատիժ տալու...


Բժ. Տէր-Դաւթեանը առանձին սենեակ ունէր: Ռոստոմը քընում էր ճաշարանում, որ միեւնոյն ժամանակ եւ ընդունարան էր: Անկիւնում դրած էր մի երկաթէ մահճակալ երեսուն ոտներով ու համեստ ծածկոցով — Ռոստոմի ննջարանը...

Երբ մեր խօսելիք նիւթը սպառեց, ուշ գիշերին, Ռոստոմը մի կողմ քաշեց մահճակալի վրայից ծածկոցը, վերցրեց մահիճը, խնամքով մի կողմ դրեց արդուկուելու համար մահիճի տակ փռուած

Aram webaram.com

իր ոճնական հագուստը, մահիճը փոեց յատակին, բարձի նման մի բան դրեց վրան, ինքը պիտի պառկէր այդտեղ, իսկ ինձ առաջարկեց մահճակալը...

Անկարելի բան էր: Ես պատրաստ էի ամբողջ գիշերը անքուն անցընել, բայց համաձայն չէի, որ Ռոստոմը գետինը պառկի, իսկ ես՝ նրա անկողնում: Ինչքան պնդեց, ես մերժեցի: Վերջը, Բժ. Տէր-Դաւթեանի իրաւաբարուքեամբ, միջին ճամբայ գտնուեց, այսինքն՝ Ռոստոմը պառկեց մահճակալի վրայ, իսկ ես՝ գետինը:



ԱՐՄԷՆ ԳԱՐՕ

Մի քանի օրից ես դուրսը սենեակ ճարեցի, եւ սկսեց իմ կարինի կեանքը:

Երեք պաշտօն էր սպասում ինձ կարինում. «Ցառաջ»ի խմբագրութիւնը, Սանասարեանի վարժապետանոցի քաղաքական տնտեսութեան ու մանկավարժական հոգեբանութեան դասախօսութիւնը եւ Հրոիփսիմեան Օրիորդաց վարժարանի աւարտական դասարանի Հայոց պատմութեան դասը: Վճարումը միայն «Ցառաջ»ի համար էր՝ 6 ոսկի ամսական: Մի-ւսները՝ «վասն հոգւոյն անդորրութեան». տարուայ վերջը միայն՝ չնորհակալութեան թուղթ...

«Ցառաջ»ը կուսակցական թերթ էր, բայց հրատարակւում էր Երիտասարդաց Միութեան անունով: Հիմնադիրը եղիշէ Թումչեանն էր, որ փախստական էր Լիժինի ձեռքից եւ Կովկասից բերել էր տը-

Aram webaram.com

ւել Գուտենբերգի ժամանակներից մնացած մի տպարան: Հէնց առաջին օրից թերթը մեծ յաջողութիւն գտաւ ընթերցասէր կարնեցիների կողմից:

Խմբագրութիւնը եւ տպարանը գտնւում էին Զամուր փողոցի չրջանում, առաջնորդարանից ոչ շատ հեռու: Բակում, մի մռայլ խուցում, տեղաւորուած էր թերթի խմբագրատունը, կողքին, աւելի մեծ սենեակում՝ տպարանը: Մի հնամաշ մամուլ ,մի քանի արկղ տառեր եւ մի ժանգոտած գլան փորձեր հանելու համար. շաբաթը մի անգամ ընկեր Անդրանիկը իր հուժկու բազուկով դարձնում էր մեքենան, եւ մամուլի տակից դուրս էին գալիս «Ճառաջ»ի հա-



ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԿԱԶՄԸ

մարները, որոնց անհամբեր սպասում էր ընթերցող հասարակութիւնը: Թերթի վարչական մասը վարում էր Միսաք Կոլոթեանը, Լեւոն Մազմանեանի աջակցութեամբ: Թումչեանի մահից յետոյ «Ճառաջ»ը խմբագրւում էր ինքնիրեն, Փիլոսի խմբագրապետութեամբ. հիմա ես պէտք է լինէի խմբագիրը: Ինձանից յետոյ էլ, մի տարի, խմբագրեց Շաւարշ Միսաքեանը:


Ինձ համար հետաքրքրական էր եւ Սանասարեան դպրոցի վարժապետանոցը, որ նոր էր հիմնուել Ռոստոմի խորհրդով՝ ուսուցիչներ պատրաստելու համար: 10–12 տղաներ էին արձանագրուած Սա-

Aram webaram.com

նասարեանի չրջանաւարտներից եւ երիտասարդ ուսուցիչներից: Ես պէտք է այստեղ նրանց գլխին փորձէի Մանկավարժական ճեմարանում ձեռք բերած իմ հմտութիւնը:

Եւ, վերջապէս, Հայոց պատմութիւն պիտի դասաւանդէի Հռիփսիմեան դպրոցում: Այստեղ է ահա, որ իմ մանկավարժի խոփը կպաւ քարի:

Դեռ պաշտօնս չստանձնած, դպրոցները այցելելիս, ես նկատեցի, որ ուսուցիչները, բայց, մանաւանդ, ուսուցչուհիները, ծեծում էին աշակերտներին: Ճաշի ժամանակ ես այս պարագան յանձնեցի Թոստոմի ուշադրութեան, որ աղգային վարժարանների ընդհանուր տեսուչն էր: «Վայրենութիւն է, ասացի ես, բարբարոս ժամանակներից մնացած սովորութիւն ծեծը, իբրեւ դաստիարակչա կ ա ն սկզբունք: Արդի մանկավարժութիւնը դատապարտում է այդ սկզբունքը»:



ՈՏՔԻ ՁԱԽԻՆ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ
ՆՍՏԱԾ՝ ՏԻԳՐԱՆ ԾԱՄՀՈՒՐ

Թոստոմը ժպտաց, բայց բան չասաց: Օրիորդ Պարտիզպանեանը, որ, ըստ երեւոյթին, արդարացնում էր մանկավարժական այդ սկզբունքը, կարեկցութեամբ նայեց վրաս եւ ասաց.

— Այդ մասին վերջը կը խօսինք ձեզ հետ...

Եւ երկար սպասելու պէտք չեղաւ:

Հռիփսիմեան դպրոցի աւարտական դասարանը բաղկացած էր հիմնական եւ զուգընթաց մասերից: Զուգընթաց դասարանում հաւաքուած էին բոլոր անյոյս ծոյլերը, անընդունակները, որոնք ամէն

Aram webaram.com

դասարան հրկնելով՝ հասել էին վերջին կայանին: Աշակերտուհին դպրոցից դուրս անելը անընդունակութեան կամ ծուլութեան պատճառով, անպատուութիւն էր համարւում, Տնօրէնութիւնը հանդուրժում էր նրանց ներկայութիւնը:

Առաջին դասս էր զուգընթաց դասարանում: Իմ առջեւ նստած էին քանից աւելի մեծ աղջիկներ, որոնց ուշադրութիւնը աւելի ևրիտասարդ ուսուցչի վրայ էր, քան նրա աւանդելիք Հայոց պատմութեան:

Խորունկ լռութեան մէջ, անցայ դասի:

— Հայոց պատմութիւնը առարկայ մըն է, որ կ'ուսուցանէ Հայ ազգի անցեալը...

Հազիւ այս խօսքերը արտասանել էի, մէկ էլ անասելի աղմուկ ու ծիծաղ բարձրացաւ դասարանում:

— Վարժապետին կ'ըսեմ... Սուս... Աղջիկ, ամօթ է... Սո՛ւս, լսում էր ամէն կողմից:

— Լռութի՛ւն... ի՞նչ է պատահել, նկատեցի ես հանդարտ: Լռեցին:

— Հայոց պատմութիւնը առարկայ մըն է, ծայրէն սկսեցի ես, որ կ'ուսուցանէ...

Նորից աղմուկը կտրեց խօսքս:

— Ո՛վ է խանգարողը, պոռացի ես ապառնական, լռութի՛ւն...

Լռեցին: Պարզ էր, որ ուզում էին փորձել նոր ուսուցչին: Բաւական էր, որ ես տկարանայի եւ չկարողանայի զսպել, տարին կորած կը լինէր ինձ համար: Բայց ինչպէ՞ս զսպել: Մի քանի անգամ վերսկսեցի պատմութիւնը եւ ամէն անգամ խանգարում էին: Անշուշտ, նախամտածուած եւ կազմակերպուած գործ էր...

Նկատեցի, որ մէկը աննկատելի կերպով ղեկավարում էր ցոյցը: Դիմացը, յետեւի նստարանի վրայ, մէջքը պատին տուած, նստած էր կոյս Աստուածածնի պէս անմեղ, փառաւոր, կարմիր թուշերով, հաստամարմին մի աղջիկ: Առանց անմիջապէս մասնակցելու աղմուկին, երկու ձեռքը դրած սեղանի վրայ, մատներով նշան էր տալիս. մի մատը շարժում էր, դասարանի մի կողմն էր հռհռոց բարձրացնում, միւս մատն էր շարժում՝ ուրիշ կողմն էր աղմուկ հանում:

— Անունդ ի՞նչ է, հարցրի նրան զուսպ բարկութեամբ:

— Ո՞վ, ե՞ս, պատասխանեց աղջիկը անմեղ ձայնով:

— Հա, դու, անունդ ի՞նչ է:

Aram webaram.com

— Տիգրանուհի:

— Տիգրանուհի, խելօք կեցիր, ու կամաց սկսեցի մօտենալ նրան: Դողում էի յուզումից, բայց աշխատում էի զսպել ինձ:

— Տիգրանուհի, խելօք կեցիր...

— Ես ի՞նչ եմ ըրեր որ, պոռաց երեսիս աղջիկը:

— Ի՞նչ ես ըրեր... Ահա ինչ... Եւ մի չառաչիւն ապտակ կարմիր թուչին...

— Ինչպէ՞ս կը համարձակիս ինձ ծեծել... ես քեզ ցոյց կու-



ՀՈՒՓՍԻՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԻՄ ԴԱՍԱՐԱՆԸ

տամ, պոռաց աղջիկը եւ աղմուկով ու լալով դուրս նետուեց դասարանից: Դասարանը իրար անցաւ: Այլեւս կարելի չէր պարապել:

Աղջկայ ճուռոցի վրայ միւս դասարաններից ուսուցիչ եւ աշակերտ դուրս թափուեցին մի ջանցքը: Վրայ հասաւ դպրոցի տնօրէնը Պր. Գառնիկ Լուսպարոնեանը:

— Ի՞նչ է պատահեր, ի՞նչ կայ, հարցրեց վախկոտ ձայնով տնօրէնը:

— Տիգրանուհին ծեծեցի, պատասխանեցի ես ջղայնացած:

Aram webaram.com

— Ի՛նչ կ'ըսէք, Անդրանիկ Էֆէնդիի աղջի՛կը, ասաց նա սարսափած:

Ուսուցիչ–ուսուցչուհիները ինձ չըՀապատած՝ տարին ուսուցչանոց: Ինչ վերջը, հասա գաւազանը ձեռքին, ներս մտաւ Թոստոմը եւ իրարանցումը տեսնելով՝ հարցրեց.

— Ի՞նչ է պատահել:

— Աչակերտուհի ծեծեցի, պատասխանեցի ես ծովում խեղդուղի ձայնով, որ այլեւս յոյս չունի ազատելու: Այն զգացումը ունէի, որ այլեւս իմ ուսուցչական ասպարէզը խորտակուած էր:

Թոստոմը ժպտալով նայեց երեսիս, բայց այդ պահուն աղմուկով, իր աղջկայ ձեռքը բռնած, ներս ընկաւ Անդրանիկ Էֆէնդին, բարկութիւնից կարմրած:

— Ո՞վ է, որ կը համարձակի իմ աղջիկը ծեծել, պոռաց նա:

— Ե՛ս, առաջ անցայ ես:

Ցանկարծակիի եկած՝ նա պոռաց իմ երեսին՝ ճօճելով բռունցքը.

— Դո՞ւն... ի՞նչ իրաւունքով կը ծեծես իմ աղջիկը... Այստեղ զպրո՞ց է, թէ...

— Եթէ դուք էլ այնտեղ լինէիք, ձեզ էլ կը ծեծէի, պոռացի ես նրա երեսին:

Պակաս էր իրար ծեծ քաշելը:

Թոստոմը եւ մեւս ուսուցիչները միջամտեցին: Աղջկան դուրս հանեցին: Անդրանիկ Էֆէնդիին նստեցրին սեղանի գլուխը: Տնտեսը նրան սուրճ բերեց: Իմ ջղերն էլ զսպուեցին:

— Պատմեցէք, տեսնենք, ի՞նչ է պատահել, ասաց Թոստոմը:

Ես պատմեցի: Եւ աւելացրի.

— Ես չգիտէի, որ Տիգրանուհին մեծապատիւ Անդրանիկ Էֆէնդիի աղջիկն է. բայց եթէ գիտնայի էլ, հետեւանքը նոյնը կը լինէր:

Անդրանիկ Էֆէնդին հարուստ եւ ազդեցիկ, Առաջնորդարանում ձայն ունեցող քաղաքացիներից էր: Կարծում էի, որ վերջին իմ յայտարարութիւնը նորից նրա գայրոյթը պիտի գրգռէ: Բայց նա, անսպասելի կերպով, ելաւ տեղից, մօտեցաւ ինձ եւ պինդ սեղմեց ձեռքս:

— Շնորհակալ եմ ձեզ, ասաց նա յուզուած, ես ալ ըլլայի ձեր տեղը, նոյնպէս կը վարուէի... ներողութիւն, ես սխալած եմ...

Այնուհետեւ Անդրանիկ Էֆէնդին, որ հեղաբարոյ եւ հիւրասէր մարդ էր, դարձաւ իմ խաս բարեկամը:

Aram webaram.com

Ու Ռոստոմը, ամէն անգամ, երբ ճաշի վրայ խօսք էր բացւում մանկավարժութեան մասին, քթի ու պռունկ տրորելով՝ ասում էր անուշ ժպիտով.

— Ծեծը բարբարոս ժամանակներից մնացած սովորութիւն է...

Երկար ծանրացայ այս միջադէպի վրայ, որովհետեւ այդ դէպքը վճռական նշանակութիւն ունեցաւ իմ մանկավարժական ապարէզի համար: Ես համոզուեցի, որ ուսուցչութեան համար ստեղծուած մարդ չէի եւ վճռեցի վերջ տալ իմ ուսուցչական պարծունէութեան: Տարիներով Գէորգեան եւ Մանկավարժական ճեմարաններում ձեռք բերուած մանկավարժական դիտութիւնը մի ժամում խորտակուեց Կարնեցի Տիգրանուհի չարաճճիութեան պատճառով:

Ո՞վ կարող էր ենթադրել, որ քառասուն տարի անցած, ես պիտի վերադառնայի ի վարչապետութենէ ի վարժապետութիւն...



ԳԱՌՆԻԿ ԼՈՒՍՊԱՐՈՆԵԱՆ

Իմ դլխաւոր զբաղումը կարինում, ի հարկէ, «Յառաջ»ի խմբագրութիւնն էր:

Եւ առաջին քայլերից մէկը եղաւ խմբագրութեան ու տպարանի փոխադրութիւնը նոր, աւելի յարմար եւ ներկայանալի մի տեղ: Եւ բիտասարդաց Միութեան վարչութեան անձնուէր նախագահ Լեւոն Մազմանեանի ջանքերով մի մեծ չէնք վարձեցինք կանայ ճամբու վրայ: Վարի յարկում տեղաւորեցինք տպարանն ու խմբագրութիւնը:

Aram webaram.com

Վերը՝ Երիտասարդաց Միութեան սրահը եւ գրասենեակը: Այլեւս չէինք ամաչում պատուաւոր հիւրեր հիւրասիրելու: Արամ Ատրունին երբեմն բերում էր Իթթիհատական գործիչներին: Վալին այստեղ եկաւ Ռոստոմին փախայցելութիւն տալու: Նոյնիսկ ելեմտական նախարար Ճավիդ բէյին հիւրասիրեցինք «Ցառաջ»ի սրահում, երբ նա քննական ճամբորդութիւն էր կատարում հայկական նահանգներում:

Նոր չէնքում «Ցառաջ»ը արտաքինով բարեփոխուեց. աւելի մաքուր եւ ներկայանալի էր դուրս գալիս մամուլի տակից: Ծրագրում էինք նաեւ շաբաթաթերթը վերածել երկօրեայի:

Բայց գլխաւորը, ի հարկէ, բովանդակութիւնն էր: Կարծում եմ՝ այս տեսակէտից էլ «Ցառաջ»ը զգալի չափով բարեփոխուեց չնորհիւ այն բանի, որ կարելի եղաւ նոր աշխատակիցներ ու թղթակիցներ ապահովել, ոչ միայն Կարինի գաղութում մտաւորականներից, այլեւ հայկական միւս նահանգներից ու Կովկասից: Մասնաւորապէս լայն տեղ էր տրւում տեղական լուրերին եւ արծարծւում էին տեղական հարցեր:

Այս կապակցութեամբ յիշեմ մի դէպք: Կարինում, զօրամասերի մէջ, կային բազմաթիւ հայ զինուորներ զանազան գաւառներից: Մի քանի անգամ հարց էր յարուցուել նրանց Ծնունդի եւ Զատկի տօներին ճաշ կազմակերպել, բայց Առաջնորդարանը միշտ առարկել էր՝ պատրուակելով նիւթական միջոցների չգոյութիւնը: Խորհրդակցելով մի քանի ընկերների հետ, ես, Ծնունդից առաջ, «Ցառաջ»ում լուր զետեղեցի, թէ Կարինի հայութիւնը, Առաջնորդ Հօր նախաձեռնութեամբ, որոշել է Խթումի ընթրիք տալ Կարինում գտնուող հայ զինուորներին: Առաջնորդ Սմբատ Եպ. Սաատչեանը, մի ազնիւ հոգեւորական, որի հետ արդէն լաւ բարեկամ էի Ռոստոմի չնորհիւ, զարմանքով կարդացել էր այդ լուրը, իր մտքովն իսկ չէր անցել այդպիսի բազմածախս մի ձեռնարկ: Բայց, ի վերջոյ, հանրային կարծիքի առջեւ տեղի տուեց, եւ մենք Խթումի ճաշ վայելեցինք մի քանի հարիւր հայ զինուորների հետ:

Կարինում ուրիշ թերթ չկար: Թէեւ կուսակցական, «Ցառաջ»ը ընթերցողների լայն շրջանակ ունէր եւ չինարար դեր էր կատարում կեանքում: Ճիշդ է որ անողոք կերպով քննադատում էր ազգային հիմնարկութիւնների գործունէութիւնը եւ ընկերային կարգերն ու բարքերը, բայց իր վերաբերումը դրական էր ու բարեացակամ, այդ պատճառով էլ սիրուած էր հասարակութիւնից:

Aram webaram.com

«Ցառաջ»ի պատասխանատուն կառավարութեան առջեւ Արամ Ատրունին էր: Նա ասում էր, որ թէ՛ կառավարական եւ թէ՛ Իթթիհատական ղեկավար շրջանակները ուշադրութեամբ հետեւում էին «Ցառաջ»ին եւ հաշուի առնում նրա արծարծած կարծիքները: Ատրունիի միջոցով մի քանի անգամ էլ նկատողութիւն ստացանք Վալիի կողմից, «Ցառաջ»ում տպուած նիւթերի առթիւ:

«Ցառաջ»ից զատ իմ ժամանակի մեծ մասը խլում էր կուսակցական աշխատանքը՝ Ռոստոմի անմիջական ղեկավարութեան տակ: Ռոստոմը ոչ միայն կուսակցական, այլեւ ազգային կեանքում կենտրոնական համադրող ու ղեկավարող դէմք էր՝ նոյնքան հեղինակաւոր Ազատնորդարանում ու կուսակցութեան առջեւ, որքան եւ համապարակական ու կուսակցական շրջաններում: Եւ ոչ մի գործից չէր խուսափում. հաւասար եռանդով արհեստաւոր տղաներից երդչախումբ էր կազմում եւ ուսուցչական ժողովներ էր գումարում կամ դասախօսութիւններ էր կարդում ընկերներին:

Նոր էի հասել Կարին, երբ Արծնեան դպրոցի սրահում սկսուեցին Ռոստոմի դիչերային դասախօսութիւնները ընկերների համար: Ամէն չաբաթ երեկոյ Արծնեան սրահը բերնէ բերան լեցւում էր, մեծ մասամբ արհեստաւոր երիտասարդութեամբ, որոնց Ռոստոմը դասախօսում էր Հ. Յ. Դաշնակցութեան ծագման եւ զարգացման մասին: Խօսելու շնորհքով օժտուած չէր: Խօսում էր հանդարտ, բառերը՝ փնտռելով, պարզ ու հանրամատչելի լեզուով, բայց ունկընդիրները պակ չէին գալիս նրա բերանից:

Գրեթէ չորս-հինգ ամիս նա խօսեց Դաշնակցութեան մասին: Ես համարեա բառացի արձանագրում էի նրա խօսքերը: Իրրեւ ատաղձ, անգնահատելի դանձ էր Դաշնակցութեան պատմութեան համար: Երեք-չորս հարիւր էջնոց հատոր կը լինէր: Ռոստոմից խնդրեցի, որ աչքէ անցընէ ձեռագիրը եւ սրբագրէ սխալները: Առաւ եւ մինչեւ իմ հեռանալը Կարինից, ժամանակ չունեցաւ կարդալու: Խոստացաւ վերջը աչքէ անցընել եւ ուղարկել ինձ, չստացայ: Վերջը ի՞նչ եղաւ այդ թանկագին ձեռագիրը, չիմացայ: Ռոստոմը մէկին յանձնել էր, բայց չէր յիշում ում:

Եւ զարմանալի էլ չէր: Ռոստոմը մի ժամ հանգիստ չէր մնում Կարինում, միշտ գործի վրայ էր՝ ամէն տեղ, ամէնքի հետ, եւ ամէն բանի մէջ: Մեծ ու փոքր գործեր դոյութիւն չունէին Ռոստոմի համար: Եւ նրա օրինակին հետեւում էինք եւ մենք, իր համհարզները Կարինում՝ Փիլոսը եւ ես: Կուսակցական ներքին աշխատանքը

Aram webaram.com

եւ արտաքին պայքարը հակառակորդների հետ մեր վրայ էր ծանրացած:

Չեմ յիշում, ո՞ր ամսին, Կովկասում սոցիալ-դէմոկրատ եւ Թուրքիայում Հնչակեան Եսայէմը — Գ. Կոզիկեան — եկել էր Կարին, հնչակեան քարոզչութեան համար: Դիմել էր մերոնց, որ իրեն հնարաւորութիւն տրուի հրապարակային դասախօսութիւն կարդալու Արծնեան դպրոցի սրահում: Փիլոսը եկաւ, թէ հնարաւորութիւն տանք: Ես որեւէ առարկութիւն չունէի: Եւ մեր երիտասարդ ընկերները անցան գործի: Ռոստոմը զգուշացրեց. տեսէք, խայտառակութիւն չհանէք:

Պէտք է ասել, որ Եսայէմը բաւական կարդացած, խօսելու որոշ ձիրք ունեցող, պարկեշտ գործիչներից էր: Կովկասում անդամ էր Դաւիթ Անանունի եւ Բախչի Իշխանեանի սոցիալ-դէմոկրատական հատուածին՝ ազգային հակումներով: Արծնեան սրահում լաւ բազմութիւն կար եւ դասախօսութիւնը անցաւ չատ հարթ, միայն դասախօսը իր խօսքի վերջում անխոհեմութիւնն ունեցաւ քննադատական մի քանի սուր բառեր արտասանելու Դաշնակցութեան հասցէին:

Սրահը ալեկոծուեց: Ամէն կողմից լսուեցին բողոքի ձայներ: Կծու խօսքեր դասախօս Եսայէմի հասցէին. բռունցքներ...

Ի՞նչպէս եղաւ: Ի՞նչ պատահեց: Մէկ էլ՝ Եսայէմը անհետացել էր բեմից. ամբիոնը անցել էր մեր ընկերների ձեռքը եւ մեր երիտասարդ ընկերները ձեռքերի վրայ ինձ բարձրացնում են բեմ... Սրահի որոնդոստ պահանջի վրայ դրաւում եմ ամբիոնը եւ սկսում նոր դասախօսութեան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մասին: Եսայէմը սարսափահար փախել էր յետեւի դռնից...

Երբ, դասախօսութիւնից յետոյ, Փիլոսի հետ յաղթական մբտանք Ռոստոմի մօտ, նա սեւ ամպի պէս մռայլ՝ յանդիմանեց մեզ.

— Չէ՞ք ամաչում, խայտառակեցիք մեզ...

Առանձին խայտառակութիւն չկար մեր կարծիքով, բայց Ռոստոմի կուսակցական պարկեշտութիւնը չէր հաշտւում անհատատարմութեան հետ. մենք խօսք էինք տուել Եսայէմին օգնելու դասախօսութեան կազմակերպութեան, պարտաւոր էինք հաւատարիմ մնալ տրուած խօսքին:

Բայց նման դէպքեր յաճախ չէին պատահում. Կարինը դաշնակցական քաղաք էր եւ կուսակցական բախումների առիթներ չէին լինում: Ազգային իշխանութիւնը կազմուած էր անկուսակցական դեմքի վրայ: Առաջնորդ Սմբատ Եպիսկոպոսը իմաստուն եւ չրջա-

Aram webaram.com

հայեաց մարդ էր: Դպրոցական գործի ղեկավարը ընդհանուր տեսուչ Ռոստոմն էր, որին ամէնքը յարգում էին: Մանասարեան վարժարանի տնօրէնն էր Փրոֆ. Ա. Խաչատուրեանը, թէեւ դաշնակցական, բայց նոյնպէս չափաւոր հայեացքների տէր մարդ: Հին ռէժիմից մնացած ուսուցիչները, Փրոֆ. Սողիկեան, Աբուլեան գործակցում էին սրտանց կամ ստիպուած: Դուրսը, հանրային կեանքը դռնում էր երիտասարդաց Միութեան ազդեցութեան տակ: Եւ բոլորի վրայ, աննկատելի կերպով՝ Ռոստոմի չունչը: Գործերը ընթանում էին սահուն եւ հաճելի: Կարինի ազգային կեանքը փոթորկուեց վերջը,



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՄԲԱՏ ԵՊԻՍ. ԵՒ ԱԶԳ. ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

երբ խնամակալութիւնը որոշեց Մանասարեան վարժարանը փոխադրել Սըվազ՝ հակառակ ժողովրդի բուռն բողոքի եւ ընդդիմութեան: Ի՞նչ հաշիւ էր այդ, ինչի՞ էին ձգտում Պոլսի աղաները, որոնք, հաւանական է, տեղեակ էլ չէին դպրոցի իրական կացութեան: Հետեւանքը եղաւ՝ հին ու նոր Մանասարեան վարժարանները, որոնց շուրջը փրթաւ կրքոտ պայքար:

Ինչպէս ամէն տեղ, Կարինում էլ ազգային վարժարանների նիւթական վիճակը խեղճ էր: Շնորհիւ Մանասարեանի, դպրոցները,

Aram webaram.com

ընդհանրապէս, ունէին պատրաստուած եւ իրենց գործին գիտակից ուսուցիչներ: Ռոստոմի ջանքը եղաւ, առաջին հերթին, բարելաւել ուսուցչական կազմի նիւթական դրութիւնը: Կային ուսուցչուհիներ, որոնց ռոճիկն էր ամսական մէկ մէճիտ: Ես յիշում եմ սրանց ուրախութիւնը, երբ Ռոստոմի առաջարկով, հոգաբարձութիւնը բարձրացրեց երկու արծաթի: Ճիշդ է, ապրուստը աժան էր եւ մէկ արծաթով էլ կարելի չէր սովամահ լինել, բայց հասարակութեան հոգեբանութիւնը ամէն տեղ էլ նոյնն էր. վարժապետը ազգի ծառան է եւ փողի մասին մտածելու չէ... Ունէինք նուիրուած ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ հներից եւ նորերից, որոնց գաղափարական չունչով դաստիարակւում էր կարինի մատաղ սերունդը եւ որոնց շատերի անունն անգամ, աւա՛ղ, չէ յիշւում այլեւս:

Իմ ընկերային միջավայրը կարինում, մեծ մասամբ, արհեստաւոր դասակարգն էր եւ երիտասարդութիւնը: Հարուստների որդիները չէի սիրում այցելել, թէեւ նրանց մէջ էլ ունէի լաւ բարեկամներ: Ազնիւ բարքերի տէր, աշխատասէր, ընտանեբին եւ ազգին անկեղծօրէն նուիրուած, պարզ եւ պարկեշտ մարդիկ էին կարինեցի արհեստաւորները՝ ազգային գործերում անձնուէր, բարեկամութեան մէջ անդաւաճան, համեստ ապրելակերպով, սրտով զոհ եւ ուրախ: Նրանց մէջ ունէի շատ մտերիմներ, ժամագործ Պետրոսը, դերձակ Անդրանիկը, կօշկակար Վարդանը, շատերը, որոնց տունը իմ տունն էր եւ որոնց համեստ սեղանը՝ իմ սեղանը: Ամէն անգամ, երբ որեւէ հաւաքոյթ էր լինում, մանաւանդ, երբ «fեալլա» էին ուտում, Փիլոսն ու ես նրանց հետ էինք սեղանի շուրջ: Մէկ տարուայ մէջ առնուազն մէկ տասնեակ երեխայ եմ մկրտել արհեստաւորների...

Բայց ի հարկէ, իմ ամենահարազատ միջավայրը երիտասարդութիւնն էր՝ կարինի երիտասարդութիւնը՝ այնքան ուշիմ ու վառվռուն, այնքան կենսուրախ, այնքան մաքուր ու հաւատարիմ եւ անկեղծ՝ ղազաումների մէջ, այնքան պարզ ու մարդկային... Ես ամբողջ հոգիով սիրեցի այդ երիտասարդութիւնը, որոնց մէջ ունէի շատ մտերիմներ: Եւ պէտք է ասեմ, որ ղազաումը փոխադարձ էր:

Ափսո՛ս, չարդարար թուրքը չթնայեց այդ աքանչելի սերունդը: Ջլերը մնացին ողջ: Համաշխարհային պատերազմը, տեղահանութիւնը, տարագրութիւնը, բոլշեւիզմը սրանց հոգին էլ պղծեց, ինչպէս ամբողջ մարդկութեան հոգին պատերազմների եւ յեղափոխութիւնների հետեւանքով:

Aram webaram.com

Իմ նախաձեռնութեամբ երիտասարդ մտաւորականներից կազմըւեց Գեղարուեստասիրաց միութիւն՝ գրականութեան եւ արուեստի գործերը ուսումնասիրելու համար: Մեծ մասը ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ էին, 30–40 հոգի, որոնք պարբերաբար հաւաքոյթներ էին ունենում որեւէ գրական կամ արուեստի գործով զբաղուելու համար: Անդամներ ունէինք, որոնք չատ հեռու էին գրականութիւնից կամ արուեստից, բայց հաւաքոյթներին գալիս էին, որովհետեւ միութիւնը երկսեռ էր: Միութեան մէջ մասնաւորապէս գործօն անդամներ էին Մկրտիչ Պարսամեանը, Արտաշէս Գաւաֆեանը, Օր. Սաթ. Պարտիզպանեանը, Փիլոսը: Ռոստոմը հեղնանքով էր վերաբերւում եւ չատ չէր քաջալերում:

Միութեան կազմակերպած մի չարք ասուլիսներից առանձնապէս յաջողութիւն ունեցաւ Լ. Շանթի «Դարձ»ին նուիրուած վիճաբանական երեկոն: Շանթի այս գործից մէկ պիրք միայն գոնուեց կարինում, այն էլ վերջին էջը պատռուած էր եւ գրուածքի վերջաւորութիւնը յայտնի չէր. դարձի եկա՞ւ արեղան, թէ ոչ: Այդ պատճառով տաք վիճաբանութիւններ տեղի ունեցան. արուայայուղների մեծ մասը ուզում էր, որ սիրահարուած արեղան ձգէր սքեմը եւ երթար «գնում կնոջ իւրոյ»...


Որքան յիշում եմ, գրական դատավարութիւն էլ ունեցանք — նորութիւն կարինում: Դատեցինք, եթէ չեմ սխալւում, Բաֆֆիի «Թովմաս Էֆէնդին»: «Անչուչո, Քաւոր Պետրոսին էլ պիտի դատէք», ձեռք էր առնում մեզ Ռոստոմը: Բայց մեր Գեղարուեստասէրների գործունէութիւնը երկար չտեւեց: Առաջ եկան ինչ որ ներքին եւ արտաքին անախորժութիւններ, եւ կարինը զրկուեց «գեղարուեստի պայծառ փարոսից», ինչպէս հեղնում էր Ռոստոմը խնդալով: Կարծեմ, նա վախենում էր, որ Սիւնիի պատմութիւնը այստեղ էլ կրկնուէր, բայց վախը անտեղի էր, որովհետեւ կարինը Տրապիզոն չէր:

Համեմատաբար, նահապետական բարքերով ապրող քաղաք էր կարինը, ուր եւրոպական «քաղաքակրթութիւնը» դեռ տիրական չէր, ինչպէս ծովեզերեայ քաղաքներում: Սուրբ Տաճարի հեղինակութիւնը դեռ տիրապետող էր մարդկանց հոգիների վրայ...

Կարինը կենտրոնական բանուկ կայան էր մեծ ճանապարհի վրայ, Տրապիզոնից դէպի Թաւրիզ, դէպի Տարօն, Վասպուրական ու Բաղէշ եւ կենդանի յարաբերութեան մէջ էր Կովկասի հետ, Սարըղամիշի ու Կարսի վրայով: Հետեւաբար, առեւտուրն ու արհեստները բաւական զարգացած էին կարինում եւ բնակչութեան նիւ-

Aram webaram.com

թական բարեկեցութիւնը համեմատաբար բարձր էր: Այդ էր պատճառը, որ կարինը շատ քիչ պանդուխտներ ունէր: Եթէ մի ժողովրդի տունը չէն էր եւ փորը կուշտ, ինչո՞ւ պիտի գաղթէր: Այդ է պատճառը, որ Մեծ Եղեռնից քիչ կարնեցիներ վերապրեցին: Գէղերը, եւ, դժբախտաբար, լաւագոյնները չազատուեցին: Մարմնով ու հոգիով իւրաքանչիւր առողջ ու կենսունակ հայութիւն ոչնչացաւ, իւրաքանչիւր երիտասարդութիւն...



Ս. ՏԱՃԱՐ

Մօտ մի տարի միայն մնացի Կարինում: Այնուհետեւ շատ երկիրներ այցելեցի, շատ ժողովուրդներ տեսայ, բայց զմայլելի Ռիոյում էլ երազում էի Կարինի աննման վերջալոյսը, Նիագարայի ժխորի առջեւ էլ աչքերիս պատկերանում էին Մրատաճորի եւ Մաշափայտի ղուլալ ջրերը, եւ արտաքին չէնութիւնը Կարինի անմոռանալի հայութեան...

Բայց ամէնից աւելի անմոռանալի է մնում մտերմութիւնը Ռոստոմի հետ: Իր կեանքի եւ գործի օրինակով նա ամբողջ իմ մէջ այն գաղափարները ու ոգին, որոնցով ապրում ու ոգեւորւում էր մեր ժամանակի երիտասարդութիւնը: Առանց չափազանցութեան կարող եմ ասել, որ Ռոստոմը եղաւ իմ ուսուցիչը եւ կեանքի ուղեցոյց աստղը: Ամէն անգամ, երբ ես մատնւում եմ դժուարութեան, երբ անլուծելի հարցեր մաշում են միտքս, ես ինձ հարց եմ տալիս՝ իմ տեղը ի՞նչ կ'անէր Ռոստոմը այս պայմաններ-

Aram webaram.com

րում: Եւ ինչ որ, իմ կարծիքով, պիտի անէր Ռոստոմը՝ անում եմ ես:

Մի յատկանշական դրուագով փակեմ այս գլուխը:

Կարինում ես մօտիկ եւ աւելի լաւ ճանաչեցի Ռոստոմին: Ճանաչեցի եւ աւելի մտերմացայ:

Իր արտաքին երեւոյթը, իր ապրելակերպն ու մտածելակերպը սիրելի դարձան ինձ: Սոկրատի խմաստուն գլուխը՝ լայն եւ ամուր ուսերի վրայ, խորունկ, բայց պարզ միտքն ու վճիտ հոգին, եւ իր անանձնական անհատականութիւնը անսահման ապաւորութիւն էին գործել իմ վրայ:



ՌՈՍՏՈՄԸ, ՔՈՑՐԸ ՀԱՄԱՍԸ, ԵՒ ՄԱՑՐԸ

Մի օր Փիլոսն ու ես ասացինք Ռոստոմին.

— Բացատրիր մեզ, ի՞նչ է Հայ Ցեղասպանական Դաշնակցութիւնը:

Նա ժպտաց Ռոստոմի ժպիտով: Տրտրեց ճակատը եւ պատասխանեց.

— Թէ Աստուած սիրէք, ինձ այդպիսի դժուար հարցեր մի տաք: Ես ի՞նչպէս բացատրեմ անբացատրելի մի բան: Դաշնակցութիւնը կարելի չէ բացատրել. բացատրելու ամէն փորձ վտքրացնում է Դաշնակցութիւնը: Դաշնակցութիւնը կարելի է եւ պէտք է զգալ միայն: Զգալ, ապրել եւ հաւատալ: Մարդ հաւատում է Աստծու, բայց չի կարողանում ասել, թէ ի՞նչ է Աստուած:

— Այնուամենայնիւ, ի՞նչ է քո կարծիքը Դաշնակցութեան մասին:

Aram webaram.com

— Դաշնակցութիւնը, իմ կարծիքով, ամէնից առաջ ապրում է եւ գործ: Ասուած է՝ ի սկզբանէ էր բանն. ես ասում եմ՝ ի սկզբանէ էր գործն:

— Մեծ գործ, վրայ բերեց Փիլոսը:

— Ոչ, մեծ ու փոքր գործեր չկան. կան միայն պատուաւոր եւ անպատիւ գործեր, ինչպէս կան պատուաւոր եւ անպատիւ մարդիկ:

— Ուրեմն, ի՞նչ է Դաշնակցութիւնը, յամառեց Փիլոսը:

Բժ. Յովսէփ Տէր-Դաւթեանը, որ ուշադրութեամբ հետեւում էր մեր խօսակցութեան, չդիմացաւ եւ ջղայնացած ասաց Փիլոսին.

— Ի՞նչ ես թուրքակի նման կրկնում՝ ի՞նչ է, ի՞նչ է: Դաշնակցութիւնը Դաշնակցութիւն է, պարզ չէ՞ միթէ: Իսկ եթէ քեզ համար պարզ չէ, դիմիր Վարանդեանին, նա կը բացատրի...

Աւելի հետաքրքրուելը իմաստ չունէր. բժիշկը շատ յստակ բացատրեց ամէն ինչ. բանը որ Վարանդեանին հասաւ, նշանակում է, որ մենք անյոյս ոչխար էինք:

Հակառակ իր մարքսիստական համբաւին, Ռոստոմը բացառիկ անհատականութիւն էր: Նա, այսպէս ասած, ներքին դիտակցութեամբ էր ըմբռնում եւ արտայայտում երեւոյթները, կարելի է ասել՝ բնազդով: Ռոստոմի բնազդը զարմանալի էր. Բժ. Տէր-Դաւթեանը ասում էր ձիու բնազդ: Դաշնակցութիւնն էլ նրա համար աւելի բնազդական ապրում էր. դաշնակցական էր, որովհետեւ բնութիւնը նրան այդպէս էր ստեղծել: Միտքը, նրա համար դիտակցութիւնը, հարկաւ, անհրաժեշտ էին, որպէսզի մէկը դաշնակցական, այսինքն դիտակից անհատ լինի, բայց դրանից առաջ եւ դրանից աւելի կարեւոր էր անհատի բնական հակումը, տարերքը:

«Մեծ եւ փոքր գործեր չկան, կան պատուաւոր եւ անպատիւ գործեր, ինչպէս կան պատուաւոր եւ անպատիւ մարդիկ» — մի ամբողջ բարոյական փիլիսոփայութիւն, մի ուրոյն աշխարհահայեացք, որ ամէն մարդու տրուած չէ:

Բժ. Տէր-Դաւթեանը աւելի կարճ էր բանաձեւում.

— Մարդը մարդ է եւ գործը՝ գործ, եւ Դաշնակցութիւնը՝ Դաշնակցութիւն:

Մի օր, երբ ես վրդովուած՝ գանգատւում էի հայ մարդու տգիտութեան, ընչաքաղցութեան, խորամանկութեան եւ ուրիշ վատ յատկութիւնների մասին, Ռոստոմը հարցրեց անվրդով.

— Դու Անին տեսե՞լ ես:

— Անշուշտ, պատասխանեցի ես զարմացած:

Aram webaram.com

— Անին հայ մարդն է կառուցել: Դու «Նարեկ» կարդացե՞լ ես:

— Ի հարկէ, կարդացել եմ:

— «Նարեկ»ը հայ մարդն է յօրինել: Դու Սասունցի Դաւիթը դիտե՞ս:

— Գիտեմ. ի՞նչ խօսք:

— Սասունցի Դաւիթը Հայ ժողովուրդն է ստեղծել...

— Աա, խնդրեմ, դու ինչո՞ւ համար դաշնակցական ես:

Եւ ծակող հայեացքը ուղղեց աչքերիս՝ հազիւ նկատելի հեգնական ժպիտը շրթունքին:

Այդ անսպասելի հարցումը ինձ չփոթութեան մատնեց: Ի՞նչ կապ ունէր իմ դաշնակցականութիւնը Գէղ Բաշխի մանրավաճառի հետ, որ երեք ղրուշնոց բրդէ ձեռնոցը ինձ տասը ղրուշով ծախեց:

— Հայ մարդու մեծութիւնը հէնց դրա մէջ է, վրայ բերեց Բժ. Տէր-Դաւթեանը, որ քեզ պէս տասը համալսարան աւարտած փիլիսոփաներին երեք ղրուշնոց ապրանքը տասը ղրուշով է ծախում: Պէտք է հիանաս հայ մարդու հնարամտութեան վրայ եւ ոչ թէ դանդաղես: Հայը ապրելով դայլերի հետ՝ սովորել է դայլերի պէս ոռնալ...

Ռոստոմը, որ զարմանքով լսում էր բժիշկի երկար ճառը, նորից դարձաւ ինձ.

— Այնուամենայնիւ, դու չասացիր, թէ ի՞նչու ես դաշնակցական եղել:

Եւ իսկապէս, ինչո՞ւ էի ես դաշնակցական: Ասել թէ Դաշնակցութիւնը մեծ կուսակցութիւն է եւ դրա համար ես դաշնակցական եմ եղել, այդ պատիւ չէր բերի ինձ. ուրեմն, դիրքի կամ փառքի համար եմ եղել դաշնակցական: Պատմել, թէ հանդամանքները այնպէս դասաւորուեցին, որ ես փոխանակ հնչակեան դառնալու, եղայ դաշնակցական, ծիծաղելի պիտի դարձնէր ինձ: Իսկապէս, ես ի՞նչից դրդուած, դաշնակցական էի:

— Դժուարանում եմ բացատրել, պատասխանեցի ես:

— Տեսա՞ր, չոտպով վրայ բերեց Ռոստոմը. ես էլ հէնց այդ եմ ասում. Դաշնակցութիւնը կարելի չէ բացատրել. պէտք է զգալ, ապրել եւ հաւատալ:

— կարո՞ղ ես բացատրել, ինչո՞ւ դու Իզմիր չղնացիր, այլ եկար այստեղ:

— Ձեմ կարող, ասացի ես, թէեւ կարող էի պատասխանել՝ «որովհետեւ դու հեռագրեցիր»:

Aram webaram.com

— Ինչո՞ւ Փլլոսը քանի տարի է այստեղ է, այս ցուրտին, փոխանակ ապրելու Բազուում՝ անհամեմատ աւելի լաւ պայմաններում: Ինչո՞ւ Բժ. Ցովսէփ Տէր-Դաւթեանը, Սաթենիկը այստեղ են: Վերջապէս, ե՞ս ինչ գործ ունեմ այստեղ, այս ժողովրդի մէջ, որից դու այնպէս դառն դանդատւում ես: Այստեղ ենք, որովհետեւ ոչիլը մեզ աւելի հարազատ է, քան Բազուի ոսկին կամ Ամերիկայի դոլարը: Այստեղ ենք, որովհետեւ դաշնակցական ենք: Իսկ թէ ինչպէ՞ս բացատրել Դաշնակցութիւնը, այդ պարապ բան է: Բժիշկը բացատրեց. Դաշնակցութիւնը Դաշնակցութիւն է...

Սրտով ես Ռոստոմի հետ էի. եթէ հաւատում ես, բացատրութիւնը աւելորդ է, բայց մտքով բաւարարուած չէի. ամէն բան պէտք ունի բացատրութեան, որպէսզի հասկանաս, սիրես ու հաւատաս...

Կեանքը, սակայն, հաստատեց, որ Ռոստոմի փիլիսոփայութիւնն էր ճշմարիտը: Ինչքան անհերքելի համարուած տեսութիւններ հիմնայատակ խորտակուեցան, փուչիացան եւ որքա՛ն անհեթեթութիւն կարծուած ցնորքներ իրականութիւն դարձան:

Իրաւունք ունէր Ռոստոմը, երբ ասում էր.

— Դաշնակցութիւնը ապրում է, հաւատ է, գործ է:

Թերեւս պէտք է աւելացնել.

— Եւ անձնազոհութիւն:

Aram webaram.com

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՄԵԾ ՃԱՄԲՈՒ ՎՐԱՑ

Կարինը մեծ ճամբու վրայ բանուկ ու չէն կայան էր: Առեւտրի եւ հաղորդակցութեան կենտրոնական հանգոյց Առաջաւոր Ասիայում, Հայկական Բարձրաւանդակի վրայ: Եւրոպական կամ ասիական ապրանքներով բեռնաւորուած խոհուն ուղտերի կարաւաններ, Կարինի վրայով անցնում էին Տրապիզոնից Թաւրիզ ու Թաւրիզից Տրապիզոն: Կարինը կենդանի յարաբերութեան մէջ էր նաեւ Կովկասի հետ, ինչպէս եւ Տարօնի, Վասպուրականի ու Բաղէշի: Կարինի փողոցներում եւ խաներում ամէն օր կարելի էր տեսնել նոր դէմքեր՝ այլազան տարազներով ու լեզուներով: Ճաճախ երեւում, գալիս մի պահ մնում եւ անցնում էին նաեւ հայ անուանի մտաւորականներ եւ յեղափոխական գործիչներ: Նրանց երեւումը ոգեւորութիւն էր առաջ բերում երիտասարդութեան մէջ: Հիւրասէր կարնեցիների դռները լայնօրէն բացւում էին նրանց առջեւ:

Ես էլ, Կարինում բախտը ունեցայ հանդիպելու մեծ ճանապարհով անցնող այն օրերի երիտասարդութեան մտքերը յուզող եւ այժմ անձեռակերտ Պանթէոնում հանգչող նշանաւոր դէմքերի, որոնց յիշատակը անջինջ ապրում է իմ սրտում եւ որոնց կեանքն ու գործը կենդանի օրինակ է ծառայել ինձ իմ կեանքում:

Ահա նրանցից մէկը, Բժ. Յակոբ Զաւրեան: Ես նրա հետ ծանօթացել էի երեք տարի առաջ, Հ. Ց. Դաշնակցութեան Վիեննայի Ընդհանուր Ժողովում, բայց մօտից չէի ճանաչել: Նա իրեն մօտ էր պղում երիտասարդութեան, երբեմն մասնակցում էր մեր «ֆրակցիա»ի մասնաւոր խորհրդակցութիւններին, բայց առանձնապէս մտերիմ էր Աւետիք Շահխաթունեանի հետ: Գրաւիչ արտաքինով,

Aram webaram.com

լայնօրէն զարգացած, քաղցրաբարոյ, հեզ ու խոնարհ մարդ էր՝ վերին աստիճանի բարեկիրթ ու քաղաքավարի:

Տարօրինակ են ճակատագրի քմահաճոյքները. Զաւրեանը համալսարանում ուսուցչապետ լինելու մարդ էր, ինչո՞ւ էր դարձել յեղափոխական, այն էլ հայ յեղափոխական: Հայերէնը սովորել էր յեղափոխութեան մէջ: Սիրում էր Հայ ժողովրդին, մանաւանդ, չարքաշ գիւղացիութիւնը, որի նկարագրի արատաւոր կողմերը նրան մեծ վիշտ ու դառնութիւն էին պատճառում:

Օսմանեան Սահմանադրութիւնից առաջ, Բժ. Զաւրեանը յատուկ առաքելութեամբ, մի քանի դաշնակցական երիտասարդների հետ, անցել էր Տարօն, այնտեղ հիւանդանոց հիմնելու ծրագրով: Թուրք կառավարութիւնը, ի հարկէ, չհանդուրժեց «ռուսական դրծակալի» ներկայութիւնը Մուշում, եւ նա ստիպուած եղաւ հեռանալ: Այժմ, Հուրիէթի շնորհիւ, նորից Տարօնում էր, որի ժողովրդի հանդէպ մասնաւոր սէր ունէր իր սրտում: Տարօնում էր եւ Միմոն Զաւարեանը՝ ազգային դպրոցների ընդհանուր տեսչի պաշտօնով: Երկու իսկական առաքեալներ, որոնք անհնարին պայմաններում եկել էին բուժելու թուրք տիրապետութեան տակ ճնշուած հայ գիւղացիութեան մարմինն ու հոգին: Երբ կեանքը շատ էր ծանրանում Մուշում, Զաւրեանը գալիս էր կարին՝ Ռոստոմի մօտ, մի քիչ շունչ առնելու:

Կարինում Ռոստոմը, Բժ. Յովսէփ Տէր-Դաւթեանը, ուսուցչուհի Օր. Սաթենիկ Պարտիզպանեանը — ապագայ Տիկ. Տէր-Դաւթեանը — ապրում էինք միասին, համայնական կեանքով: Աւելի ճիշդ՝ ուտում էինք միասին, ճաշում եւ ընթրում էինք մի սեղանի շուրջ, Ռոստոմի եւ Բժ. Տէր-Դաւթեանի բնակարանում:

Մի ցուրտ երեկոյ, մեր խոհարարուհին ընթրիք էր պատրաստում: Ի դէպ՝ արժէ ծանօթացնել այդ սքանչելի խոհարարուհին: Ճիսուն տարեկանի մօտ, լեցուն մարմնով եւ երկար լեզուով, մի քիչ միամիտ կին էր Տուրունը: Զգիտեմ, ո՞րտեղից էր ճարել նրան Ռոստոմը, իբրեւ խոհարարուհի, թէեւ խոհարարութիւնից ոչինչ չէր հասկանում: Մի կերակուր միայն գիտէր եփել՝ միսով կաղամբ:

— Տուրուն, խնդրում էինք աղերսագին, մեռանք լահանա ուտելով, ուրիշ բան չե՞ս կարող եփել:


— Ինչո՞ւ չէ, կարող եմ, ի՞նչ կ'ուզէք. կ'ուզէ՞ք պորչ եփեմ:

— Կ'ուզենք, կ'ուզենք: Ինչ կ'ուզես պատրաստիր, միայն ոչ լահանա:

Aram webaram.com

Յաջորդ ճաշին սեղանի վրայ նորից կաղամբով միս էր երեւում...

Այն օրերին Թերթերում հնդկահայ Ամիրխանեանի թողած միլիոնների մասին էր դրւում: Տուրունն էլ իրեն համարում էր Ամիրխանեանի ժառանգ եւ երազում էր միլիոններից իր բաժինը ստանալով՝ ամուսնանալ: Սեղանից ստացած ռոճիկի մեծ մասը տալիս էր ապուէաքներին, որոնք պիտի պաշտպանէին իր իրաւունքը Հնդկաստանի դատարաններում: Այդ պիտի պայմաններում կարելի՞ էր պորչի մասին մտածել...



ԲԺ. ՅԱԿՈԲ ՋԱՒՐԵԱՆ

Հա, ուրեմն, մի ցուրտ երեկոյ, երբ Տուրունը զբաղուած էր լահանայով, մեր տան դուռը ծեծեցին եւ ներս մտաւ մուշտակի եւ բաշլըղի մէջ կորած մէկը: Երբ բաշլըղը քակուեց, երեւաց Բժ. Զաւրեանի ցրտահար դէմքը: Բեղերից կախուած էին սառոյցի կտորները: Հազիւ կարողանում էր խօսել, այնքա՛ն մրսած էր:

Բժ. Զաւրեանի երեւումը անկեղծ ուրախութիւն պատճառեց բոլորիս, բայց, մանաւանդ, Տուրունին, որ ծանօթ էր նրա առատաձեռնութեան: Կասկած չկար, որ յաջորդ օրը պիտի գար Զարդար տուտուն օգնելու Տուրունին, եւ մենք պիտի ուտէինք իսկական կարնեցիական ճաշ՝ անմահական խմորեղէն, սուլու ֆուփտա, փիլաւ: Զարդար տուտուն նշանաւոր կերակուր եփող էր կարինում:

Aram webaram.com

Զաքարեանց յոգնած էր Զաւրեանը: Ընթրիքի վրայ, ընդհանուր զրոյցից յետոյ, նա ուզեց հանգստանալ: Երբ մենք, Փիլոսի հետ, դուրս եկանք փողոց, դիմացը, Սանասարեանի պատի տակ կանդնած մարդիկ լուռ նայում էին Ռոստոմի բնակարանին. մեր ճաշարանի պատուհանում երեւում էր լուսաւոր մի խաչ:

— Սուրբ մարդն է եկեր... լոյս է իջեր...

Բժ. Զաւրեանը, ջերմ հաւատացեալ, առիթ ունէր ճամբորդութեան ընթացքին իր ծոցում պահելու վրան փոսփոր քաշած մի խաչ, որ մթութեան մէջ լոյս էր տալիս: Այժմ այդ խաչը կախել էր պատուհանից...

Մի օր Առաջնորդարան եւ բարեկամներին այցելելուց յետոյ, Բժ. Զաւրեանը ձեռնարկեց հիւանդների ընդունելութեան Խաչիկ Փաստրմաճեանի դեղարանում: Ջունեւորներին նայում էր ձրի, իսկ հարուստներից առնում էր համեստ մի դումար, որով ձրի դեղ էր տալիս աղքատներին: Հմուտ բժիշկ էր, եւ հիւանդները վինտում էին նրան: Երբեմն տուն էր դալիս վրդոված:

— Երեւակայեցէք, դանդատում էր դառնօրէն, այսինչեան էֆէնդին հին, պատուած հագուստ էր հագել եւ աղքատ հիւանդների շարքին կանդնել, որպէսզի ձրի ընդունեմ: Ասացի նրան, «Սիրելի սրիկայ, ես քեզ ճանաչում եմ, դու կարող ես վճարել, որպէսզի քո դրամով չունեցողներին դեղ տամ...» Եւ ի՞նչ էք կարծում, խնդաց երեսիս... իսկ տունը դնա, մի քանի ոսկի կը ծախսէ, որպէսզի քեզ լաւ ճաշով հիւրասիրէ...

Բացի բժշկութիւնից Զաւրեանի միտքը զբաղուած էր եւ դիւղատնտեսական հարցերով:

— Մինչեւ որ հայ դիւղացու տնտեսական վիճակը չբարելաւուի, նրա բարօյականը միշտ էլ կը մնայ ցած, ասում էր նա դառնութեամբ:

Մուշից հետը բերել էր թիթեղէ տուփերով մեղր. մի մասը ուղարկեց Պոլիս. մնացածը բաժանեց Կարինի բարեկամներին. մի մասն էլ մենք կերանք: Հիանալի մեղր էր՝ Սասունի լեռներից: Զաւարեանի եւ իր թափած ջանքերով՝ մեղուաբուծութիւնը սկսում էր արագ զարգանալ Տարօնում:

Այժմ մի ուրիշ ծրագիր պաշարել էր Զաւրեանի միտքը՝ հաւաբուծութիւն: Մտածում էր եւրոպական ձեւի հաւաբուծութիւն մտցնել Տարօնի դիւղերում: Կարինում մի վարպետ ատաղձագործ չինել տուեց մի ինկուբատոր — արհեստական ճուտեր հանող մեքենայ — եւ տեղաւորեց Ղենէվիզեան քոյրերի բնակարանում: Մէջը

Aram webaram.com

զեռեղեց մի քանի տասնեակ հաւկիթ։ Ջերմութիւնը որոշ տատիճանի վրայ պահուում էր քարիւղի ճրագով։ Եւ օրական մի քանի անգամ գնում էր Ղենէվիղեան քոյրերի՝ Զապէլի եւ Նուարդի հետ միասին հետեւելու արհեստական թուխսի վիճակին։ Ու մի առաւօտ էլ եկաւ յուսահատ դէմքով։

Գիշերը քարիւղի ճրագը մարել էր։ Սաստիկ ցրտից հաւկիթները սառել էին։ Սառել էին եւ մէջի ճապերը, որոնք չուտով լոյս աշխարհ պիտի գային։

— Սիրելի սրիկայ, բարկանում էր Զաւրեանը Զապէլի եւ Նուարդի եղբօր՝ Սրիսի վրայ, չէի՞ր կարող հսկել ճրագին։

Բժ. Զաւրեանի նման ոչ այս աշխարհից մարդիկ կարող էին մտածել ինկուբատորի մասին կարինում, ուր ոչ էլեքտրականութիւն կար, ոչ գազ եւ ուր ձմեռը թուքը բերանից դեռին չհասած՝ սառում էր։

Երեկոները երբ ուրիշ տեղ չէր հրաւիրուած, Բժ. Զաւրեանը սովորաբար մեզ հետ էր լինում։ Առանձնապէս հետաքրքրական էին նրա զրոյցները Ռոստոմի հետ։ Ամէն տեսակէտից, եւ արտաքինով եւ հոգեկան կառոյցով, հակապատկերներ էին նրանք։ Ռոստոմը՝ հողեղէն, միշտ գործնական, Զաւրեանը՝ ոչ այս աշխարհից։ Նրա անբաժան ընկերներն էին ճամբորդութեան ընթացքին Աւետարանը եւ Լոնգֆելլոյի «Հայաւատի երգը», Բունինի ոտանաւորէն սքանչելի թարգմանութեամբ, որ գրեթէ ամբողջը գոց գիտէր։ Ռոստոմին եւ Զաւրեանին միացնողը Հայ ժողովուրդն էր եւ Հ. Յ. Դաշնակցութիւնը։

Մուշում Զաւրեանը երկար չմնաց։ Անցաւ Պոլիս։ Ապա ամբողջապէս կլանուեց բարեներոգումների գիւանագիտական աշխատանքով։

1911 թ. աշնան, երբ Պոլսից նաւով մեկնում էի Ամերիկա, Բժ. Զաւրեանը, մի ծրար ձեռքին, երեւաց Ղալաթիայի քարափին. պատուղ էր բերել ինձ ճանապարհի համար։ Բայց պատուղից աւելի քաղցր, անմոռանալի էր այն մէկ ժամուայ տեսակցութիւնը, որ մենք ունեցանք քարափի մի համեստ սրճարանում, ազօտ լոյսի ներքեւ։ Մոռացել եմ նրա խօսքերը, բայց նիւթը միշտ նոյնն էր՝ Հայ ժողովուրդը եւ մարդկային բարոյական սկզբունքները։ Անհունօրէն երջանիկ եմ, որ ճակատագիրը չնորհեց ինձ բախտը վայելելու Բժ. Զաւրեանի նման գաղափարապաշտ անհատների հոգեկան ջերմութիւնը։

Aram webaram.com

Ժամանակին իմ վրայ խորունկ տպաւորութիւն գործեց Զաւրեանի մէկ նամակը, որ նա գրել էր ինձ Մուշից, 1912 թ. Հոկտ. 4–17ին, ի պատասխան իմ նամակի: Առաջ բերեմ այդ խօսուն մարդկային վաւերագիրը, որ աւելի քան որեւէ պերճախօս գրութիւն, հարազատ կերպով ներկայացնում է Բժ. Զաւրեանի հոգեկան աշխարհը:

Մուշ, 4–17 Հոկտ., 1912 թ.

«Իմ սիրելի ընկեր,

«Ես անսահման երջանիկ էի, չորս օր առաջ, վերջին թղթատարով ստանալով ձեր նամակը: Շտապում եմ պատասխանել ձեզ այսօր, որովհետեւ այսօր գնում է փոստը: Սակայն, դուք պէտք է գիտնայիք, որ մեր փոստը այստեղ ստացւում է երկուշաբթի օրերը եւ գնում հինգշաբթիները:

«Սիրելի ընկեր, վերջապէս ես լուր առի ձեր մասին: Դուք չէք մոռացել ինձ, եւ ես անհունօրէն ուրախ եմ այդ բանի համար: Երջանիկ եմ, որ դուք ժամանակ էք գտնում մտածելու նաեւ մեր չարաբախտ աշխարհի մասին:

«Միայն դուք չէ, որ շատ պատճառներ ունէք յուսահատուելու, երբ գործ էք ունենում ժողովրդի հետ: Եթէ դուք իմանայիք, թէ մենք ինչ ենք զգում այստեղ աշխատելով, պիտի խղճայիք եւ մեզ, եւ մեր ժողովուրդը: Ես գիտէի, թէ տարկուբիւնը, աղքատութիւնը եւ տանջանքները այնպիսի կնիք են դրել մեր ժողովրդի հոգեկան կողմի վրայ, որ դժուար է նրանցից ապասել որեւէ բարձր կամ ազնուացնող բան, բայց բնաւ չէի սպասում, որ նրա բովանդակ ոգեկանութիւնը այս աստիճանի այլասերուած ու խեղաթիւրուած է:

«Մեր ժողովուրդի մէջ ոչ մի հասկացողութիւն չի մնացել Աստծոյ Քրիստոսի մասին: Ժողովուրդը քրիստոնեայ է միայն պատերի, մկրտութեան, պսակի, թաղումի համար: Ոչ մէկ գաղափար աստուածային բարոյականութեան եւ քրիստոնէական վարդապետութեան պահանջների գոյութեան մասին: Այսինքն՝ այս ժողովուրդը ոչ մի բարոյական դեկավար սկզբունք չունի իր երկրաւոր կեանքում:

«Ժողովուրդը չունի որեւէ գաղափար մեղքի մասին:

«Ես յաճախ լսել եմ ռուս գիւղացիներից, մեղք է գողանալը, մեղք է մարդ սպաննելը, մեղք է սուտ խօսիլը, մեղք է թշուառին չգթալը, եւայլն: Այստեղի գիւղացիներից ես դրեթէ չեմ լսել «մեղք» բառը:

Aram webaram.com

«Ներա համար ամէն ինչ թոյլատրելի է, միայն թէ չբռնուի եւ այդ պատճառով բանտ չընկնի կամ տուգանքի չենթարկուի: Այստեղ անընդհատ սուտ են խօսում: Ես այժմ վճռական կերպով չեմ հաւատում եւ ոչ մէկ խօսքի, երբ ինձ պատմում են որեւէ բանի մասին, եթէ չատ անգամ չստուգեմ: Նոյնիսկ ինձ՝ բժիշկիս սուտ են խօսում, երբ պատմում են իրենց հիւանդութեան կամ տրուած դեղի արած ազդեցութեան մասին: Երբ նրանց սուտը բռնում ես, քնաւ չեն ամաչում, այլ՝ կամ անմիջապէս պատասխանում են՝ «իրաւունք ունես» ասելու, կամ պնդում են իրենց ասածի վրայ: Բայց այդ ամենին չի երաշխաւորում, որ նրանք սուտ չպիտի խօսեն յաջորդ անգամ էլ:

«Մարի պատճառով անհնար է որեւէ ստոյգ տեղեկութիւն ունենալ ոչ թուի մասին, ոչ տնտեսական վիճակի, ոչ կարիքների, ոչ դատական գործերի. մի խօսքով՝ ամէն բան ինքդ պէտք է անես, առանց որեւէ մէկին վստահելու:

«Բացարձակապէս դոյութիւն չունի պարտականութեան զգացումը: Նոյնիսկ այստեղի ընկերների մէջ երբեք չէք դանի պարտականութեան հասկացողութիւն: Խօսք են տալիս որեւէ բան անելու, պարտականութիւններ են յանձն առնում եւ ... չեն կատարում, առանց ամաչելու իրենց վարմունքի համար եւ առանց ամօթի, արդարանում կամ խաբում են:

«Թուրքիայում չկայ համայնական հողատիրութիւն: Ամէն բան մասնաւոր սեփականութիւն է: Այդ պատճառով ժողովրդի մէջ քնաւ դոյութիւն չունի համայնքի համար որեւէ բան անելու պարտականութեան դիտակցութիւն: Ամէն բան՝ միայն իրեն համար: Ուստի եւ դրեթէ անկարելիութիւն է որեւէ հանրային ձեռնարկ:

«Ձեռնարկները անհնար են նաեւ այն պատճառով, որ ոչ ոք վստահութիւն չունի մէկը միւսի վրայ, եւ ամէն ոք նախանձում է, երբ մէկը որեւէ աչքի զարնող դիրք գրաւէ:

«Ոչ ոք, ամենաազնիւ մարդն անգամ — այստեղի հասկացողութեամբ — չի կարող դիմանալ դրամական հրապոյրի առջեւ: Ես չեմ ճանաչում դրեթէ ոչ մէկին, նոյնիսկ մեր հին ընկերներից — աւելի լաւ է ասել՝ մանաւանդ, մեր հին ընկերներից, — որի անունը այս կամ այն ձեւով խառնուած չլինի դրամական գործերի կամ կուսակցական գոյքի իւրացման մէջ: Այն ինչ, խղճի մտօք, նրանք լաւագոյն մարդիկն են: Իսկ ի՞նչ են ներկայացնում, ուրեմն, միւսները:

Aram webaram.com

«Եթէ հայերը այսպէս են, կարող էք երեւակայել, թէ ի՛նչ են հապա այստեղի թուրքերը:

«Բայց ի հարկէ, բոլոր այս ճղճիմութեան ու ցեխի մէջ պատահում են, թէեւ շատ սակաւ, է՛ւ այնպիսի հիանալի տիպարներ, որ ամէն բան ներում ես մնացածներին եւ սիրտդ հրճւում է ու լեցւում յուսով, թէ նպաստաւոր պայմաններում ամէնքը եւ ամէն բան կը բարեփոխուի: Ամբողջ յոյսը դպրոցի վրայ է:

«Սակայն այստեղ էլ կայ մի երեւոյթ որ յուսահատութիւն է պատճառում: Դպրոցները գտնւում են հայ աղաների ձեռքում, դրամն էլ նրանց ձեռքին է: Այդ պատճառով սարսափելի հալածանք կայ մեր ուսուցիչների դէմ: Դպրոցները լեցուած են անտաղանդ, յետադիմական եւ հլու կամակատար մարդկանցով: Այդպիսի ուսուցիչներից օգուտ չկայ: Ուսուցման եղանակները նախաջրհեղեղեան են:

«Այդ պատճառով անհրաժեշտ է նոր դպրոց ստեղծել՝ բոլորովին անկախ մեր հարուստ աղաներից եւ նրանց պնակալէզներից: Տարուէ տարի դպրոցները աւելի եւ աւելի ենթարկւում են նրանց: Նոյնիսկ Մշում, Դաշնակցութեան նախկին թագաւորութեան մէջ, դպրոցների բոլոր տեսուչները՝ կամ ամբողջովին են, կամ հնչակեան: Նրանք պաշտօնից հեռացնում են բոլոր դաշնակցականներին:

«Այս ամէնը ի նկատի ունենալով՝ իմ մէջ ծագել է հետեւեալ միտքը.

«1. Ժողովրդի հոգին վերաստեղծելու համար անհրաժեշտ է ունենալ նոր, ըստ ամենայնի բարեզարդուած դպրոց:

«2. Մեր հին դպրոցները բոլորը առաջնորդների եւ աղաների ձեռքն են: Մեզ դուրս են քշում այնտեղից:

«3. Անհրաժեշտ է, որ մենք ստեղծենք մեր սեփական դպրոցները, որոնք միայն մեր ձեռքը գտնուին եւ միայն մեզանից կախուած լինեն:

«4. Դրա համար մենք պէտք է հանգանակենք գուտ Դաշնակցական մի ֆոնտ: Մեզ պէտք է լինի այդ ֆոնտը: Բայց մենք պէտք չէ վախենանք դրանից:

«Այդ դէպքում մենք կ'ունենանք օրինակելի դպրոցներ եւ ինքը ժողովուրդը կը դայ մեզ եւ կը բերէ իր լուման, երբ երկուքից երեք տարուց տեսնի, թէ ինչ յաջողութիւն են ցոյց տալիս աշակերտները: Այդ դէպքում վերջ կը գտնի է՛ւ այն պայքարը դպրոցների տիրապետութեան համար, որ այնքան ջլատում է ուսուցչական կազմի ուժերը, քաղաքականութիւն է մտցնում դպրոցների մէջ

Aram webaram.com

եւ հիմքից փչացնում է նրանց: Այսպիսի մտքեր ունենալով՝ ես այնչափ ուրախացայ, երբ առացայ ձեր հարցումը հաղար տոլարի մասին, հրատարակելիք Թերթի մասին եւ կարելի չէ՞ արդեօք այդ դործը կապել երիտասարդական միութեան հետ: Այդ միշտ եղել է իմ երազը՝ որի մասին մտածել անդամ չէի համարձակւում՝ կարծելով, թէ այդ անիրագործելի բան է:

«Երբ ես այստեղ եկայ, շուտով համոզուայ, որ ժողովուրդը չի կարդում մեր Թերթերը, որովհետեւ հասկնալի չեն իրեն, եւ որ անհրաժեշտ է ունենալ ժողովուրդին մատչելի Թերթ: Ուստի եւ երազում էի ամէնօրեայ Թերթիկի մասին, որի մէջ տրուէին կարճ, դործնական տեղեկութիւններ ժողովուրդին հարկաւոր խնդիրների մասին, քննուէին զուտ տեղական դիւղացիական հարցեր — թայֆաների ներքին պայքարը ոչխարի, միւլթէզիմների չահատակութիւնները, դիւղական մանր դէպքերը, եւայլն —, տրուէր քաղաքական իրադարձութիւնների չարաթական հակիրճ տեսութիւն եւայլն: Եւ դեռեղուէին նաեւ դեղեցիկ պատմուածքներ — ինքնուրոյն ու թարդմանական — ժողովուրդը ընթերցանութեան վարժեցնելու համար:

«Այդպիսի մի Թերթիկ անկասկած յաջողութիւն կ'ունենար եւ ժողովուրդը կը սկսէր մի քիչ հետաքրքրուիլ իրենով եւ իր կեանքով: Այդ կը կենդանացնէր եւ Մուշի պատանեկութիւնը, որ ամբողջապէս կիսադրագէտ է եւ որին ոչինչով կարելի չէ հետաքրքրել: Եւ այդ դէպքում կ'ունենայինք կենդանի դործ:

«Այս պահուս առաջնորդը այստեղ չէ, այդ պատճառով չեմ կարող տեղեկութիւն հաղորդել մամուլի ու տառերի վիճակի մասին եւ Թէ կը տա՞ն արդեօք մեզ: Կը պատասխանեմ յաջորդ հինդշաբթի: Մի բան միայն խնդրում եմ ուժդնօրէն — մեզ կախման մէջ չդնէք առաջնորդից: Այժմ մենք հաշտ ենք նրա հետ, բայց այս հաշտութիւնը տեւական կը լինի մինչեւ առաջին ոսկորը: Ի հարկէ, դրամը կարելի է փոխադրել առաջնորդի միջոցով, բայց պէտք է խնդրել նրան, որ յանձնէ մեզ — կամ՝ անձնապէս ինձ — եւ ասել, Թէ ինձ պիտի ուղարկուին հրահանգներ: Այս ձեւով մենք ազատ կը լիննենք նրա միջամտութիւններից:

«Սուրբ Կարապետի որբերի մասին տեղեկութիւններ կը հաւաքեմ: Մինչեւ այժմ ես այդպիսի բան չեմ լսել եւ չդիտեմ, Թէ ամերիկացիների հոգածութեան տակ գտնուող տներ կան: Ինչ որ իմանամ՝ հարազատ կերպով կը հաղորդեմ:

«Հայրենիք» Թերթի Սասունին նուիրուած բացառիկ Թուի հասոյթը ուղարկեցէք ինձ՝ առաջնորդի միջոցով: Մենք կը մտա-

Aram webaram.com

ծենք, թէ ի՞նչ անել օգտակար կերպով ծախսելու համար: Որոշումը կը հաղորդենք ձեզ:

«Ջերմօրէն գրկում եմ ձեզ, իմ թանկագին, լաւ ընկեր: Երբ մարդ հեռու է ձեզանից, այդ ժամանակ աւելի է գգում, թէ ինչքան շատ աշխատում էք անել եւ անում էք: Աստուած թող օրհնէ ձեզ եւ յաջողութիւն տայ ձեզ: Ձեզ նուիրուած՝

ԵԱՇԱ–ՎԻԳԻՆ»

(Եաչա՝ Բժ. Զաւրեանի անուան՝ Ցակոբի ռուսերէն փաղաքշական ձեւն է: Վիգէն՝ նրա կուսակցական ծածկանունը):

Նամակում յիշուած 1000 դօլարի խնդիրը հետեւեալն է: Ամերիկայի տարօնցի հայրենակիցները այդ դրամարը յատկացրել էին Մուշում թերթ հիմնելու համար: Ծորհրդակցելով այդ մասին՝ յարմար նկատեցինք, կարինի «Ճառագ»ի ձեւով թերթ հրատարակել Բիւրատարդական Միութեան անունով՝ օգտուելով Առաջնորդարանի տրամադրութեան տակ գտնուած մամուլից: Բժ. Զաւրեանը, դեռ երբ ես կարինում էի, մի քանի անգամ խօսել էր ժողովրդական թերթի անհրաժեշտութեան մասին եւ, առհասարակ, շատ ոգեւորուած էր այդ հարցով: Դժբախտաբար, ինքը ստիպուեցաւ հեռանալ Մուշից, եւ այդ խնդիրը հետապնդող չեղաւ. Տարօնում գտնուող գեկավար ընկերների մէջ չկար մէկը, որ գիտակցէր նման գործերի արժէքը:

Մուրբ Կարապետի որբերը Հ. Ց. Դ. Ամերիկայի կենտ. կոմիտէի եւ տարօնցի ընկերների նիւթական աջակցութեամբ պահւում էին Ս. Կարապետի վանքում. որքան յիշում եմ, 5–6 որբեր՝ զաւակները Տարօնի չրջանի անուանի հայդուկների: Մեր ականջներին հասել էին աննպաստ լուրեր նրանց վիճակի մասին, իրր թէ նրանք անօթի եւ մերկ են պահւում, եւայլն: Բժ. Զաւրեանից ուզում էինք ունենալ ստոյգ տեղեկութիւններ:

1910ին, Ռուսների ձեռքով, հաշուեյարդարի ենթարկուեց պարսկական յեղափոխութիւնը եւ Ատրպատականում: Հայ կամաւորները, որոնք կռւում էին Թաւրիզում Սաթթար խանի հետ՝ Ռահիմ խանի հակայեղափոխական ուժերի դէմ, ցրուեցին զանազան կողմեր: Մի մասը անցաւ Թուրքիա: Սրանց մէջ էր եւ Նիկոլ Դումանը, որ հայկական խմբերի հրամանատարն էր Թաւրիզում: Վանում կարճ ժամանակ մնալուց յետոյ, նա եկաւ Կարին՝ Պոլիս ու Եւրոպա անցնելու համար, բայց Բարձր Հայքի մայրաքաղաքը,

Aram webaram.com

մանաւանդ, Ռոստոմի ընկերակցութիւնը այնքան սիրեց, որ մնաց մի քանի ամիս: Առաջին իսկ օրից նա միացաւ մեր համայնքին եւ մինչեւ մեկնումը մնաց մեզ հետ՝ Տուրունի հոգատարութեան ներքեւ:

Նիկոլ Դումանին ես տեսել էի մի տարի առաջ, Բազում, երբ նա պատրաստւում էր Պարսկաստան մեկնելու: Հազիւ մէկ–երկու անգամ հանդիպել էի եւ առանձնապէս տպաւորուած չէի նրանից: Նա հիւանդոտ երեւոյթ ունէր, ամէն բան քննադատում էր եւ սիրով չէ, որ պատրաստւում էր Պարսկաստան երթալու: «Համշարիների յեղափոխութեան» շատ էլ չէր հաւատում եւ չէր հաւանում: Գնում էր, որովհետեւ Ռոստոմն էր կանչում: Ռոստոմի հետ հնուց սրտակից ընկերներ էին:

Դումանի անունը ես շատ էի լսել: Նրա մասին առասպելներ էին պատմում: Գիտէի որ նրա բուն անունը Նիկողայոս Տէր–Յովհաննիսեան էր, աւարտել էր Շուշիի թեմական դպրոցը, եւ Շուշիի հոգեւոր Կոնսիստորիայի քարտուղար է եղել: Դաշնակցութեան հիմնադրութիւնից յետոյ գործել է Ատրպատականում, իբրեւ ուսուցիչ եւ յեղափոխական: Մասնակցել է հայդուկային արշաւանքին, իբրեւ խմբապետ: Ջանասրի արշաւանքին յիսնապետի պաշտօն է ունեցել, թէեւ, ասում էին, արժանի էր ընդհանուր հրամանատար լինելու: Բայց Դումանի անունը լայն համբաւ ստացաւ ժողովրդի մէջ 1905–6 թուականներին, իբրեւ Բազուի, բայց, մանաւանդ, Երեւանի ինքնապաշտպանութեան վարիչ, հայ–թաթարական բախումների ժամանակ: Պարսկական յեղափոխութեան մէջ նա ժամանակ ու հնարաւորութիւն չունեցաւ իր պինուորական արտակարգ տաղանդը երեւան բերելու: Եւ ահա այժմ մեր մէջ էր, կարինում, ընդհանուր հետաքրքրութեան եւ դուրդուրանքի առարկայ:

Արտաքինով նոյն Նիկոլ Դումանն էր ինչ որ եւ Բազում, միայն աւելի նիհար եւ յոգնած էր երեւում: Միջահասակից բարձր, ոսկրուտ, ջղուտ, դլխին սեւ մազեր, թուխ դէմքին՝ սեւ մօրուք, լոշ–լոշ ականջներ ու հրացայտ, սուր աչքեր. յօդացաւից մի քիչ կռացած, դուրսը թէ ներսը՝ սեւ վերարկուն ուսին ձգած, երբ նստած էր՝ բուրդէ շալը ծունկին եւ մի փոքրիկ համբիչ ջղային մատների մէջ — այսպէս է պատկերանում ինձ կարինի Նիկոլ Դումանը: Ոչ մէկ հերոսական երեւոյթ: Ինչո՞ւ Նիկոլ Դուման եւ ոչ Նիկոլ վարժապետ...

Բայց իսկական Դումանը երեւան եկաւ, երբ մի քանի շաբաթ անցած՝ մի խմբով որսի գնացինք Եփրատի շամբուտները:

Aram webaram.com

Նախաճեռնութիւնը իրենն էր՝ Դումանին։ Բաւական հանդըստանալուց եւ Տուրունի լահանայից բաւական կշտանալուց յետոյ, մի օր հարցրեց.

— Որսի տեղ չկա՞յ, երթանք մի քիչ մսեղէն բերենք։

Որսի տեղ կար՝ Եփրատի շամբուտները անհաչիւ թռչուններով։ Որսորդները էլ գտնուեցին, եւ շուտով կազմակերպուեց որսորդական արշաւախումբը, — ամէն տեսակ դէնքերով սպառազինուած Փրօֆ. Ա. Խաչատուրեանը, Սանասարեանի ուսուցիչ Դ. Ումիկեանը, Փիլոսը, մի քանի գիւղացի որսորդներ, յատուկ հրաւէրով։ Ամենից քիչ ռազմական տեսք ունէր Նիկոլ Դումանը — միայն հրացանը ձեռքին եւ փամփուշտների պայուսակը ուսից կախ։ Նոյնիսկ եա աւելի քաջ որսորդի երեւոյթ ունէի, հակառակ որ կանքումս մէկ հատիկ թռչուն չէի սպաննել...

Առաւօտ կանուխ մեր կարաւանը, դողալով ցրտից, հետեւեց ուտելիքներով բեռնաւորուած սայլին՝ Եփրատի կամուրջի ուղղութեամբ։ Այնտեղից պիտի դառնայինք դէպի աջ, ուր սկսւում էին Եփրատի նշանաւոր շամբուտները ամէն տեսակ թռչուններով։ Ով կամենար՝ լոր ու կաքաւ կ'որսար մօտակայ ժայռերում ու ձորերում, ով կամենար՝ վայրի սագի ու բադի յետեւից կ'երթար ճախճախուտներում։

Փրօֆ. Խաչատուրեանը եւ Ումիկեանը, իրրեւ «դիտակից» որսորդներ, արհամարհանքով էին նայում Եփրատի ճահիճների ու սրանց բնակիչ թռչունների վրայ եւ ընկան դաշտ ու ձոր, աւելի նուրբ ու դժուար որսալիք թռչուններ գտնելու համար եւ մինչեւ ճաշ թափառելուց յետոյ, յոգնած եւ ամօթահար, վերադարձան ձեռնունայն. մի ճնճղուկ անգամ չէին սպաննել։

Իսկական ճակատամարտը տեղի ունեցաւ Եփրատի եղէգների մէջ։ Գիւղացիները առաջ քաշեցին մի քանի տափակ յատակով նաւակներ։ Մէկի մէջ կանգնեց Դումանը՝ հրացանը ձեռքին, պատրաստ, միւսները պարապ հետեւեցին նրան։ Հրացանի առաջին իսկ պայթիւնից օդը լեցուեց հարիւրաւոր սպիտակ սագերով, որոնք իրար յետեւից, ճչալով ու թեւերը թափահարելով՝ ընկնում էին ջրի մէջ։ Դումանին հետեւող նաւակները հաւաքում էին չաղ ու մսալի թռչունները։

Հիանալի էր տեսարանը։ Ամուր կանգնած երերուն նաւակի մէջ՝ Նիկոլը անվրէպ, աջ ու ձախ, հարուածում էր թռչուններին՝ աւելի եւ աւելի խորանալով եղէգնուտների մէջ։ Ես եղերքից դի-

Aram webaram.com

տում էի նրա ճարտար չարժումները. գոնէ մէկ անգամ նրա գլխարկը վրիպէր...

Հազիւ մէկ ժամ տեւեց կոտորածը: Դումանը վերադարձաւ ափ գոհ, աչքերը փայլում էին ուրախութիւնից. 28 սպ էր սպաննել: Սայլը հազիւ էր շարժւում ծանր բեռան տակ:

Սպերը բաժանուեցին որսորդների բարեկամների միջեւ, եւ այնուհետեւ ամբողջ շաբաթը սպի ճաշի էինք հրաւիրւում, Տուրունի լահանային կարօտելու աստիճան: Եւ Դումանի ու Ռոստոմի որսորդական ծիծաղելի պատմութիւնները էինք լսում: Երկուսն էլ սիրում էին երգիծական պատմութիւններ: Երկուսի գրական ճաշակը նոյնն էր — Սանչո Փանչօ, Պանտագրիւէլ, Տարասկոնցի Տարտարէն, Տարաս Բուլբա, Տուրկէնեւի որսորդական պատմուածքները: Ներանք ժամերով կարող էին պատմել եւ խնդալ ու խնդացնել՝ իրարից խօսք խլելով:

Երբեմն այցելութեան էր գալիս Դուբրաւկը, որ ժամի Դուռը սրճարան էր բանեցնում. հին յեղափոխական, գործակից Սրամ Աբրամեանի եւ հայդուկային արշաւանքների մասնակից: Իրրեւ չերքեզի մի քիչ Տարտարէն էր. արդէն ամէն չերքեզուհու մէջ կարելի է Տարտարէնից մի մասնիկ գտնել: Բարձր եւ համարձակ խօսող, Շերակի բարբառով, կատակաբան ու սրամիտ՝ շատ պատմութիւններ գիտէր յեղափոխական կեանքից եւ սիրում էր պատմել՝ առատօրէն զարդարելով. «փչում է, հա՛», ասում էին լսողները. բայց նա չէր նեղանում եւ աւելի եւս ուժ էր տալիս երեւակայութեան:

Դումանը սիրում էր Դուբրաւկի ներկայութիւնը եւ նրա պատմութիւնները, մանաւանդ, նրա խօսելու ձեւը: Որեւէ նիւթ մէջտեղ էր ձգում եւ ապա ուրախ լսում էր Դուբրաւկի զարդարուն պատմութիւնները: Իրրեւ հաւանութեան նշան՝ շարժելով գլուխը վերից վար եւ կրկնելով Դուբրաւկի յաճախ գործածած խօսքը.

— կեղնի կը, հապա, կեղնի կը...

Երբեմն էլ, երբ Դումանը չինծու կերպով հէքեաթ էր պատմում, այնպիսի չափազանցուած սուտերով, որ Դուբրաւկը կտրում էր նրա խօսքը, թէ՝

— Նիկոլ Ջան, փչում ես, հա՛...

Դումանի «փչելը» շուտ էր նկատւում, բայց Ռոստոմը երբեմն այնպէս ձեռք էր առնում մարդկանց, որ անհնար էր սուտն ու իրաւը իրարից զանազանել:

Բազուից կարին էր եկել մի երիտասարդ ինժիներ՝ քարածուխի հանքեր փնտռելու համար: Շատախօս եւ ունայնամիտ մէկն

Aram webaram.com

էր: «Սարսաղ է», — ասում էր նրա մասին Դումանը:

Մի օր «Սարսաղը» ճաշի էր մեզ մոտ: Խօսք բացուեց քարածուխի մասին: Ռոստոմն ու Դումանը ակնյայտնի կերպով ձեռք էին առնում երիտասարդ հանքաբանին, որ աշխատում էր դիտունի հռվեր առնել: Ջեմ յիշում ինչ կապակցութեամբ, ես հարցրի.

— Զարմանալի է, ալքոլը սեղանի վրայ այրուում է, բայց սեղանին չի վնասում:

— Ինչո՞ւ ես զարմանում, պատասխանեց Ռոստոմը՝ աչքի տակից նայելով ինժիներին. այրուող ալքոլը միայն լոյս է տալիս, տաքութիւն չունի մէջը:

Թէեւ Ռոստոմը բնագէտ էր, ես տարակոյս յայտնեցի՝ առանց նկատելու, որ նա ձեռք է առնում մեզ:

— Ջե՞ս հաւատում, հարցրու պարոն ինժիներին:

— Անշուշտ, չտապեց հաւանութիւն տալ հիւրը:

— Ուրեմն, եթէ ձեռքիդ վրայ ալքոլ վառես, ձեռքդ չի՞ այրուի:

— Ի հարկէ, չի այրուի:

Դումանն էլ հաստատեց Ռոստոմի ասածը՝ աչքի տակից նայելով ինժիներին:

— Անշուշտ, չի այրուի, հեգնեց ինձ վերջինը: Ուզո՞ւմ էք՝ փորձենք:

Ռոստոմը անմիջապէս բերել տուեց ալքոլի չիշը: Մեր հիւրը ցուցամատը թրջեց ալքոլով, վառեց լուցկին եւ ... ճիչով ցատկեց տեղից՝ ձեռքը շարժելով ցաւից...

— Եւ այս սարսաղը եկել է մեզ համար քարածուխ գտնելու, ծաղրեց Դումանը, երբ հիւրը արդէն մեկնել էր:

Արագ մարդ ճանաչող էր Դումանը: Մի հայեացք, մի երկու խօսք բաւական էին, որպէսզի նա դաղափար կազմէր՝ մարդու մասին՝ խելացի՞ է, թէ սարսաղ: Մեր չրջանակից դուրս քիչ բարեկամներ ունեցաւ Կարինում: Ռոստոմն էլ մարդաճանաչ էր, բայց այն կարծիքի էր, թէ «ամէն գիրքի օգտակար է մեծ տնտեսութեան մէջ», հետեւաբար, ամէն մարդ որոշ արժէք էր նրա համար: Դումանը այդքան լայնախոհ չէր, լաւը լաւ էր նրա աչքին, վատը՝ վատ եւ վերջիններին որակելու խօսք չէր խնայում:

Կարնեցիներից Դումանը մասնաւոր համակրանք էր ցոյց տալիս դէպի Սեդրաք Էֆէնդի Փաստրմաճեանին՝ Արմէն Գարոյի հօրեղբօր տղան: Աղա մարդ էր Սեդրաք Էֆէնդին բառի լայն իմաստով: Պատկառելի տեսքով, խելացի, կենցաղագէտ, սրամիտ ու հա-

Aram webaram.com

ճելի խօսակից, ազնուական հակումներով, եւ նախանձախնդիր դէպի ազգային գործերը, արդարամիտ դէպի չարն ու բարին եւ անողոք չար երեւոյթների հանդէպ. նա ունէր շատ բարեկամներ ու շատ հարակամներ աղայական շրջանակներում, բայց ընդհակառակն, ժողովուրդը, Էսնաֆ դասակարգը, յարգում էր նրան, մասնաւորապէս, նրա անշահասէր նախաձեռնութիւնը ազգային գործերում: Դաշնակցական չէր Սեդրաք էֆէնտին, այսօրուայ իմաստով համակիր էլ կարելի չէր նկատել, բայց շիտակ եւ անվախ մարդ էր: կարելի է ասել միակ կարնեցին էր, որի հետ Նիկոլ Դումանը ջերմ բարեկամութիւն հաստատեց, եւ համեմատաբար, յաճախ էր տեսնում հետը ու քաղցր զրուցում: Ցիշում եմ մի հրաւէր ի պատիւ Նիկոլ Դումանի՝ Սեդրաք էֆէնտիի կողմից՝ Փաստրմաճոնց բաղնիքում: Մեծագոյն պատիւը կարինում, որ կարելի էր տալ յարգուած բարեկամի: Ինձ համար բոլորովին նոր էր եւ օտարոտի յարգանք յայտնելու այս ձեւը...

Արդէն գարուն էր, երբ Դումանը մեկնեց կարինից Պոլիս: Այնտեղից՝ Եւրոպա, ուր վարանդեանի հետ մասնակցեց ընկերվարական կուսակցութիւնների միջազգային համագումարին Կոպենհագում, իբրեւ Հ. Ց. Դաշնակցութեան պատուիրակութեան անդամ:

Կարծեմ այս եղաւ Դումանի վերջին տուրքը հայ յեղափոխութեան: Յանասորից մինչեւ Կոպենհագ — բաւական տարածութիւն էր...:

Եւրոպայից, երբ ցարական հալածանքները Դաշնակցութեան դէմ մեղմացել էին, Նիկոլ Դումանը վերադարձաւ Բագու, բայց իր առողջութիւնը այլեւս լուրջ կերպով խանգարուեց. անողոք քաղցկեղը բոյն էր դրել նրա մարմնում:

1914ի ամառը Դումանը Հիւսիսային Կովկասի հանքային ջրերում էր: Երբ Սեպտեմբերին լուր է առնում, որ իր զինակից ընկերները հաւաքուել են Թիֆլիս կամաւորական խումբեր կազմելու, բայց ինքը անկարող էր միանալ նրանց, ատրճանակով վերջ է տալիս իր կեանքին:

Դումանի յուղարկաւորութիւնը կատարուեց Թիֆլիսում: Արտասովոր բազմութիւն հետեւում էր նրա դագաղին: Թաղեցինք Յոջիվանքի հայկական գերեզմանոցում, Սիմոն Զաւարեանի կողքին, ուր վերջը պիտի հանգչէր եւ Քեռին:

Այժմ բոլշեւիկները Յոջիվանքը հանրային պարտէզի են վերածել՝ մեռելների ճակունները չորս հովին տալով...

Aram webaram.com

Սաստիկ ցուրտ էր, Դեկտեմբերի վերջը կամ Յունուարի սկիզբը, լաւ չեմ յիշում: Փիլոսի հետ Դուրբախի արճարանում դոմինօ էինք խաղում: Մէկ էլ դրսից կանչեցին վար:

Վարը, արճարանի առջեւ, հրապարակի վրայ, մի կառքի կողքին, չուարած եւ դողալով, կանգնած էր ... Աւետիք Իսահակեանը: Մեր ուրախութեան սահման չկար:

Ողջագուրումից յետոյ, Աւետիքը ալ նայեց, ձախ նայեց, վեր ու վար նայեց եւ կակազելով ասաց.

— Է՞ս է ձեր երկիր դրախտավայրը ... ձեր դրախտի մէջը:

Սաստիկ մրսել էր, յոգնել ու ջղայնացել: Շիրակեցու հայհոյանքները անդուլ թռչում էին բանաստեղծի բերանից:

Առաջնորդեցինք մեր համայնական բնակարանը, Թոստոմի եւ Տէր-Դաւթեանի մօտ, ուր, տաքանալուց եւ մի քիչ հանգստանալուց յետոյ, արաւ իր պատմութիւնը:

Բանտարկուել էր Դաշնակցութեան գործով: Զանազան մի-ջամտութիւնների շնորհիւ, նրան, Ահարոնեանին ու Ժամակին ա-պատ էին արձակել երաշխաւորութեամբ, ազնիւ խօսք առնելով, թէ չպիտի հեռանան Թուսաստանից: Իրեն համար 3000 ռուբլի երաշ-խաւորութիւն էր տուել մեծահարուստ Ալեքսանդր Մելիք-Ազար-եանը, որի որդեգիր աղջկայ հետ ամուսնացել էր ինքը: Լըժինին եւ Մելիք-Ազարեանին պատուոյ խօսք էր տուել, թէ չպիտի փախչի ար-տասահման, եւ ահա ինքը այստեղ էր:

— Ուրիշ խօսքով՝ ճղեցիր, նկատեց Փիլոսը:

— Շան տղերք, հապա ուզում էք, որ նորից բանտ նստէի, իսկ դուք այստեղ քէ՞ֆ անէք, ծիծաղեց նա:

— Ճի՞շդ է, որ ամուսնացել ես, հարցրի ես: Ի՞նչ ժամանակը գտար ամուսնանալու:

— Ի՞նչ անէի հապա, եղաւ պատասխանը, վախեցայ, որ կը-նունքը պահկից առաջ կը պատահի...

Կարինում Իսահակեանը սիրուած բանաստեղծ էր. նրա եր-գերը ամենքի բերանում էին: Նրա գալու լուրը իսկոյն տարածուեց քաղաքում, եւ չուտով մեր տունը լեցուեց երիտասարդներով, ո-րոնք պահուկով ուրախութիւն էին յայտնում բանաստեղծին տես-նելու համար: Քիչ վերջը նրան տարին դուրս եւ մի քանի օր ձեռքից ձեռք էին խլում հիւրասիրելու համար:

Աւետիքին ես տեսել էի, թռուցիկ կերպով, էջմիածնում, կո-միտասի մօտ, երբ աշակերտ էի ճեմարանում, բայց մտերմացայ հետը Վիեննայում, Հ. Յ. Դաշնակցութեան Ընդհանուր ժողովում:

Aram webaram.com

Աւետիքը «Քարի» (Ալեքսանդրապոլի) շրջանի պատուամատուր էր եւ թունդ հակաընկերվարական: Հակառակ դրան, նա մտերիմ յարաբերութեան մէջ էր մեր երիտասարդական խմբակի հետ եւ սիրում էր մեզ հետ ժամանակ անցընել Մարիահիլֆէ արճաճանում՝ ուրախ եւ բաց պատմութիւններ պատմելով: Մի քիչ կակազ էր, եւ իր պատմութիւնները՝ միշտ զուարճալի էին: Ժողովների ժամանակ ինքնամփոփ էր եւ լուռ՝ երբեմն մելամաղձոտ լինելու աստիճան: Մակաւ էր խօսք առնում եւ երբ ելնում էր խօսելու, սրամիտ խօսքերով ծիծաղեցնում էր ունկնդիրներին:

Ես սիրում էի նրա ընկերակցութիւնը: Տպաւորութիւնս այն էր, որ նա էլ ջերմութեամբ էր վերաբերւում ինձ: Մի քանի անգամ ԲԺ. Զաւրեանի հրաւէրով միասին գնացինք օպերա. միասին այցելեցինք Մխիթարեան վանքը: Միասին պատեցինք Թանգարանները: Երբեմն մեզ միանում էին Երուանդ Ֆրանգեանը եւ Մարտիրոս Յարութիւնեանը: Անկեղծ զգացումների տէր, բացսիրտ, ընկերական, հաճելի մարդ էր Աւետիքը: Կարելի չէր նրան չսիրել:

Նրան առանձնապէս սիրում էին խմբապետներ՝ Անդրանիկը, Մուրատը, Սեպուհը, անշուշտ նախ եւ առաջ նրա խանդավառ հայրենասիրութեան եւ հայ դուսանի բոցավառ երգերի համար: Մասնաւորապէս նրա վրայ սիրահարուած էր Սեբաստացի Մուրատը:

Վիեննայի Ընդհ. Ժողովը երկար զբաղուեց ընկերվարութեան հարցով: Բուռն վէճեր տեղի ունեցան: Իսահակեանը անհաշտ հակառակորդ էր ընկերվարութեան: Նա մի բուռն ճառ խօսեց ընկերվարութեան դէմ, որը, նրա կարծիքով, մերժում էր անհատի ազատութիւնը եւ ձգտում ճորտութեան վերածել մարդկութիւնը: Ընկերային բոլոր վարդապետութիւններից ընկերվարութիւնը ամէնէն յեռադիմականն է, պնդում էր նա: Եւ երբ ընկերվարութեան հարցը դրուեց քուէարկութեան, Աւետիք Իսահակեանը եղաւ սակաւաթիւ պատգամաւորներից մէկը, որ հակառակ քուէարկեց:

Վիեննայի Ընդհ. Ժողովից Դաշնակցութիւնը դուրս եկաւ աւելի համերաշխ եւ զօրացած: Աւետիքը չարունակեց աշխատել Քարի կենտրոնական կոմիտէութեան մէջ, ի վերջոյ, ձերբակալուեց, եւ բաշխաւորութեամբ բաց թողնուեց բանտից եւ ահա այժմ մեր մէջ էր, կարինում:

Երբ ամենօրեայ հիւրասիրութիւններից ու քէֆերից ազատուեց, Աւետիքը այնուհետեւ գրեթէ միշտ մեզ հետ էր կամ Դուրբախի սրճարանում իր քնարի երկրպագուներով շրջապատուած կամ Սանասարեան դպրոցում, ուսուցիչների հետ: Առաւօտները ուշ էր

Aram webaram.com

դուրս գալիս տնից. ամենքս համոզուած էինք, որ քնած է լինում, յետոյ պարզուեց, որ աշխատում էր դեռ չհագուած: Հետը բերել էր մի ձեռագիր, որի վրայ մշակում էր, Սամսոյ Մոռերից մի հատուած, որ գաղափարով ու ոգիով հակապատկերն էր հետագային յօրինած «Աբու Լալա Մահարի»ին: Այդ քերթուածը առաջ կարդաց ինձ, ապա ընթերցանութեան եւ զրոյցի նիւթ եղաւ Փրօֆ. Ա. Խաչատուրեանի տանը:

Փրօֆ. Խաչատուրեանը դաշնակցական էր, Սանասարեան ղպրոցի տեսուչ: Ամուսնացել էր Եղիշէ Թումչեանի այրիի՝ Հրանուշի հետ, որ բաւական զարգացած, գրասէր, հայ գրականութեամբ եւ հասարակական հարցերով հետաքրքրուող կին էր եւ երբեմն գրում էր մեր թերթերում: Թումչեանի եղերական մահից յետոյ չատ չէր երեւում հասարակութեան մէջ. իր տունը, սակայն, բաց էր կարինի մտաւորականների առջեւ: Ալեքսանդրապոլցի էր, Աւետիքի հայրենակից ու նրա քնարի սիրահար: Բնական կերպով Աւետիքի գրական ընդունելութիւնը եղաւ Փրօֆ. Խաչատուրեանի մօտ:

Հաւաքուած էր կարինի մտաւորական ընտրանին: Ճաշից յետոյ հաւաքոյթը ինքնաբերաբար վերածուեց գրական երեկոյթի: Եղան ճառեր, արտասանութիւններ բանաստեղծի ստեղծագործութիւնից, երգեր: Աւետիքը չոյուած էր զգում իրեն եւ յայտնապէս յուզուած էր: Ինչքան խնդրեցինք, որ իր գործերից մի կտոր արտասանէր, մերժեց: Եւ արդէն արտասանելու չնորհք էլ չունէր. կակազութիւնը խանգարում էր խօսելու, մանաւանդ, երբ չատ էր յուզուում: Բայց իրրեւ խօսակից խիստ հաճելի էր. սիրում էր եւ գիտէր զուարճալի ու սրամիտ, երբեմն եւ բաց պատմութիւններ անել: Վերջին դէպքում խորութիւն չէր դնում՝ այր է լսողը, թէ կին: Այդ պատճառով կանայք սիրում էին նրա պատմութիւնները եւ ընկերութիւնը...

Աւետիքը բառի բուն իմաստով ժողովրդական մարդ էր: Ժողովուրդը նրա համար նոյնն էր՝ ինչ որ ծովը ձկան համար: Ժողովրդից էր ստանում նա իր կենսունակութիւնը եւ իր ստեղծագործութեան թափը: Սիրում էր հասարակ մարդկանց միջավայրը: Ուշադրութեամբ հետեւում էր նրանց խօսքին: Հէնց որ իրեն անծանօթ մի բառ կամ ասութիւն լսէր, անմիջապէս հանում էր գրպանից ծոցատետրը եւ արձանագրում: Երբեմն սրամիտ խօսքեր, առածներ կամ նոյնիսկ ժողովրդական պատմուածքներ էր գրի առնում: Սուր ականջ ունէր եւ լեզուի ու ոճի նուրբ ճաշակ: Արեւմտահայերը չէին հաւանում նրա հայերէնը, դաւառական եւ թուրքերէն

Aram webaram.com

բառերի առատ գործածութիւնը: Թերեւս եւ իրաւունք էլ ունէին: Բայց Իսահակեանի քնարի համը որոշ չափով նաեւ այդ ժողովրդականութեան մէջ էր:

Կարինից Աւետիքը մեկնեց Պոլիս: Տրապիզոնում էլ երիտասարդութիւնը խանդավառ ընդունելութիւն էր ցոյց տուել նրան: Նաւի վրայ դրած նամակից երեւում էր, որ նա զգացուած էր իրեն ցոյց տրուող ուշադրութիւնից ու համակրանքից:

Ամիսներ վերջը իրար հանդիպեցինք Պոլսում: Պոլիսն ու պոլսեցիներին նա չէր հաւանում: Եւ զարմանալի էլ չէր. յղկուած պոլսեցիների համար Աւետիքը շատ էր անտաշ...

Նա ծիծաղելով պատմեց իր առաջին այցելութեան մասին Զապէլ Եսայեանին: Վերջինիս մայրը վարդի օշարակ է հրամցնում հիւրերին:

— Բերին մի մատուցարանի վրայ մի քանի բաժակ ջուր, մի փոքրիկ ամանով էլ վարդի մուրաբա: Առաջինը ինձ հրամցրին. ես առի մի դգալ եւ ամբողջ մուրաբան բերանս դրի: Զգացի, որ մի սխալ բան եմ արել, բայց այլեւս ուշ էր: Պարոն Իսահակեան, ասաց fiածը, մեզ մօտ դգալով ապուր կ'ուտեն: Գետինը պիտի մըտնէի...

Պոլսից Աւետիքը անցաւ Եւրոպա: Բոստոնում նրանից նամակ առի Բերլինից: Գոհ էր երեւում իր վիճակից եւ գործերից: Գերմանհայասէրները Դոկտ. Լէպսիուսի գլխաւորութեամբ, պատրաստւում էին ինչ որ թերթ հրատարակել, որով հետաքրքրուած էր եւ Աւետիքը: Վերջը թերթը լոյս տեսաւ՝ «Մեսրոպ»՝ գերմաներէն եւ հայերէն: Հայերէնի խմբագիր դարձաւ Աւետիք Իսահակեանը:

Աւետիքի նամակին անմիջապէս պատասխանեցի, խնդրելով, որ աշխատակցի «Հայրենիք»ին, խոստանալով նաեւ աշխատավարձ, որին նա պէտք ունէր: Խոստացաւ եւ խոստումը կատարեց: Միեւնոյն ժամանակ մեր միջեւ սկսուեց կենդանի նամակագրութիւն, որ չարունակուեց մինչեւ...

Այդ «մինչեւ»ը պատահեց, եթէ չեմ սխալւում, 1937ին, Փարիզում: Աւետիքի մէկ ոտքը Սովետների մօտ էր, միւսը մեր մէջ: Դեռ իրեն դաշնակցական էր համարում, բայց եւ ՀՕԿ էր խաղում: Ակնյայտնի կերպով խուսափում էր մեզանից: Ես նամակով հարցրի նրան՝ ի՞նչ է իր իսկական դիրքը: Պատասխանեց, թէ նամակով դժուար է բացատրել, խնդրում էր տեսնուել, որ բացատրէ: Բայց բացատրելու պէտք այլեւս չէր մնում. ամէն բան պարզ էր — Հայ

Aram webaram.com

Գուսանը դարձել էր բոլշեւիկ: Մի երկտող նամակով ես խզեցի իմ ընկերական յարաբերութիւնները նրա հետ...

Աւետիքը, ի հարկէ, բոլշեւիկ չէր դարձել եւ հետագային էլ բոլշեւիկ չեղաւ, բայց աւելի վատ եղաւ: Այն ինչ որ նա գրեց Ստալինի մասին՝ միայն մէկ նախընթաց ունի — Արփիար Արփիարեանի ուղերձը Աբդուլ Համիդին:

Ոմանք արդարացնում են Իսահակեանի վարմունքը. — «Ինչ կայ որ, եթէ այդպէս չվարուէր, կարող էին Սիբիր աքսորել, նոյն իսկ գնդակահարել»...

Անշուշտ, կարող էին եւ աքսորել եւ գնդակահարել: Քաջազնունիին չաքսորեցի՞ն: Բաներ կան, սակայն, որոնք կեանքից էլ աւելի թանկագին են — բարոյականութիւնն ու պատիւը: Մեր նախնիքը պատասխանեցին իրենց ժամանակի Ստալինին. «Սուր քո եւ պարանոց մեր», բայց «մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»: Նահատակուեցին, բայց անմահացան՝ անմահացընելով նաեւ ազգը: Իսահակեանը չգիտէ՞ր, թէ ուր էր գնում եւ ինչ կարող էր պատահել, երբ բոլշեւիկների դիրքն էր ընկնում...

Առհասարակ, հետաքրքրական են Իսահակեանի մտավիճակը եւ հոգեկան ապրումները Իտալիայում եւ Փարիզում, երբ նա սկսել էր սիրաբանել բոլշեւիկների հետ: Նրա մահից անմիջապէս յետոյ հրատարակութեան տրուեցին դաշնակցական ականաւոր անձերի գրած նրա նամակները, որոնք այդ մտայնութիւնն ու հոգեկան վիճակն են երեւան բերում: Որքան եւ արժէքաւոր, ինձ թւում է, որ վաղաժամ էր եւ լաւ չէր այդ նամակների հրատարակութիւնը այն ժամանակ, երբ դեռ հանդուցեալի դերեզմանի հողը չէր չորացել: Իմ մօտ էլ կան նման նամակներ, ուրիշներ էլ ունին, անշուշտ — Աւետիքը սիրում էր նամակներ գրել եւ ստանալ —, բայց, ի հարկէ, նա չէր կարծում, որ իր ընկերները կարող են կուսակցական կամ անձնական պայքարի զէնք դարձնել իր մտերմօրէն յայտնած մըտքերը: Դրա ժամանակն էլ կը գայ, անտարակոյս, պէտք է գայ, որովհետեւ բոլոր մարդիկ, մանաւանդ, մեծ անհատները պատասխանատու են պատմութեան առջեւ իրենց գաղափարների եւ գործերի համար:


Մի օր էլ, տարբեր ճանապարհներով, բայց համարեա միաժամանակ, կարին հասան Աւետիս Ահարոնեանը եւ Գարեգին Խաժակը, առաջինը՝ Իզմիրից, Բայազէտի վրայով, երկրորդը՝ Սարըղամիշ-Քէօթակ ճանապարհով: Աւ. Իսահակեանի պէս՝ նրանք էլ

Aram webaram.com

երաշխաւորութեամբ արձակուել էին բանտից, միեւնոյն խոստումով, եւ փախել էին Ռուսաստանից:

Կարինում նրանց փառաւոր ընդունելութիւն տուին: Մանաւանդ, Ահարոնեանը երիտասարդութեան պաշտամունքի առարկայ էր եւ ինքը գիտակցում եւ սիրում էր այդ:

Ես երկուսին էլ ծանօթ էի արդէն: Ամժակին հանդիպել էի Թայոնական ժողովում երեք տարի առաջ: Ճախուռն բնաւորութեամբ, զարդացած, համարձակախօս, հասարակական բուռն խառնուածքի եւ ընկերվարական գաղափարների տէր մարդ էր: Պատմութեան ուսուցիչ էր Ներսիսեան դպրոցում, հմուտ հրապարակախօս ու հրապարակագիր, կըծու բանաւիճող, դասախօս, սիրելի էր դաշնակցական երիտասարդութեան: Շիրակեցի էր, Դուբախի հայրենակից, եւ, բնականաբար, մի քիչ Տարտարէն: Ոխերիմ հակառակորդ էր հայ սոցիալ-դէմոկրատների, մասնաւորապէս Բախչի Իշխանեանի, որի հետ աղմկալից վէճեր էր ունենում, ոչ միշտ յաղթական:



ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ծանօթ էր Ամժակի մէկ բանավէճը Իշխանեանի հետ դասախօսութեան ընթացքին, մարքսիզմի մասին: Իշխանեանը, որ Ամժակից պակաս խուժանասէր չէր, շմեծնում է լսարանը անհաշիւ վկայութիւններով Մարքսից, Էնգելսից, Լաւրովից, Միխայլովսկուց: Բազմութիւնը բուռն կերպով ծափահարում է նրան: Ամժակը զգալով, որ լսարանը ձեռքից դնում է, իր հերթին սկսում է գոյու-

Aram webaram.com

թիւն չունեցող հակառակ վկայութիւններ բերել նոյն հեղինակներից՝ թուելով դրքերի անունները եւ էջերը: Լսարանը նրան էլ բուռն կերպով ծափահարում է: Իշխանեանը չմած՝ փորձում է պատասխանել, բայց ծաժակը երկու ձեռքը իր երկու ականջներից վեր չարժելով — Իշխանեանը զարաբաղցի էր, որոնք էշի համբաւ ունէին — սկսում է պոռալ.

— Զո՛չ, չո՛չ, էշ զարաբաղցի...

Սրահը թնդում է ծիծաղից ու ծափերից: Ծաժակը դուրս է գալիս յաղթական...

Ահարոնեանի հետ ծանօթացել էի Վիեննայի Ընդհանուր ժողովում: Իմ վրայ թողել էր իր արժանապատուութեան դիտակից, լուրջ մարդու տպաւորութիւն: Նստում էր միշտ ժողովի վերի մասում, երիտասարդութեան հետ մօտիկ յարաբերութիւն չէր պահում. իր ճառերը իմաստալից էին ու դեղեցիկ, գաղափարով կենտրոնական տեղ էր գրաւում՝ ճախի եւ աջի միջեւ: Ամենքը նրան յարգում էին, բայց չեմ կարող ասել, թէ սիրում էին, ինչպէս, օրինակ, սիրում էին Թոմասմին կամ Ա. Իսահակեանին: Բայց խմբապետները, մանաւանդ, Անդրանիկը եւ Մուրատը, եւ յարգում, եւ սիրում էին նրան:

Ընկերվարութեան մասին խօսած նրա մեծ եւ յուզումնալից ճառը, մեր՝ երիտասարդութեան վրայ բացասական տպաւորութիւն գործեց: Ուզում էր հաշտեցնել Թոմսոս Ճէլալեանի նման անզուսպ հակաընկերվարական եւ Աւետիք Շահխաթունեանի պէս համոզուած ընկերվարականի գաղափարները — անյաջող: Շատ բռնազբօսիկ եւ անյաջող էր, մանաւանդ պէս Մարքսի «յաւելեալ արժէք» եւ Քրխտափորի «յաւելեալ արեան» տեսութեան համեմատութիւնը, այնքան, որ Շահխաթունեանը ոտքի ելած ու բռունցքը սեղանին զարնելով՝ սկսեց պոռալ եւ միայն Բժ. Զաւրեանի միջամտութեամբ հանգստացաւ:

Բայց Ահարոնեանի մի ուրիշ ճառը, կարող եմ ասել, ցնցող տպաւորութիւն թողեց բոլորի վրայ:

Մայիս մէկի առիթով դաշտահանդէս ունեցանք Վիեննայի արուարձան Քալենբերգի անտառում: Ներկայ էին Ընդհ. ժողովի բոլոր անդամները, Աւստրիական սոցիալ-դէմոկրատ կուսակցութեան ներկայացուցիչները, Բորիս Սարաֆովը, Մակեդոնիայից, որ եկել էր ողջունելու Դաշնակցութեան Ընդհ. ժողովը, եւ մի քանի հարիւր հոգի աւստրիացի մտաւորականներ ու բանուորներ անտառի զանա-

Aram webaram.com

զան կողմերից. անտառը լեցուած էր Մայիս մէկեան հանդիսականներով:

Մեր հրապարակային ժողովը բացեց Ակնունին՝ հայերէն եւ ֆրանսերէն ճառով: Ամենքս յոտնկայս, երգեցինք «Ինտերնացիոնալ»ը: Ապա խօսք առաւ Ահարոնեանը՝ հայերէն: Կէս դարուց աւելի է անցել, չեմ յիշում ճառի բովանդակութիւնը, բայց մինչեւ այժմ ականջիս հնչում է Ահարոնեանի պերճախօսութեան համանուագը: Եւ հայերէնից յետոյ, նոյնքան տպաւորիչ էր նրա ֆրանսերէն ճառը «Հայաստան եւ Մակեդոնիա երկու քոյրեր»ի մասին: Սարաֆովը, յայտնապէս յուզուած, ողջոյնի խօսք ասաց «Փոքր քրոջ» կողմից ուղղուած «Մեծ քրոջ»:



ԳԱՐԵԳԻՆ ՆԱԺԱԿ

Յիշեմ նաեւ, որ Սարաֆովի հետ եկած Մակեդոնացի մի լուսանկարիչ հանեց հրապարակային ժողովի պատկերը եւ առանձին՝ Սարաֆովին ու մեր խմբապետներին՝ Անդրանիկին, Վարդանին, Սաքոյին, Մուրատին, Սեպուհին: Ուր եւէ տեղ չեմ տեսել այդ նկարները տըպուած: Մանաւանդ վերջինը. ի՛նչ թանկագին նշխար կը լինէր, եթէ պահուէր:

Ահարոնեանը եւ Ժաժակը երկար չմնացին Կարինում. որքան յիշում եմ, հազիւ մէկ ամիս: Եղանակը արդէն տաք էր, նրանց տարբինք Լուսաւորչի վանքը ազգային դպրոցների աշակերտների հետ, Ռոստոմի գլխաւորութեամբ: Փիլոսը եւ ես ուղեկցեցինք նրանց Զի-

Aram webaram.com

թող եւ մի քանի ուրիշ փուչեր: Քաղաքում կազմակերպեցինք Ժաժակի դասախօսութիւն: Եւ, ի հարկէ, աւանդական ընդունելութիւն Փրօֆ. Ալչատուրեանի մօտ, որի կինը՝ Հրանուշը հայրենակից էր Ժաժակին եւ մօտ ծանօթ էր Թիֆլիսից: Հակառակ Ահարոնեանի անվիճելի ժողովրդականութեան, ամէն տեղ Ժաժակն էր առաջին դէմ վրայ, ընդհանուր ուշադրութեան առարկայ, եւ այդ պարագան Ահարոնեանին հաճելի չէր...

Ճեմ յիշում, կարինից Ահարոնեանն ու Ժաժակը միասի՞ն մեկնեցին, թէ առանձին–առանձին: Յիշում եմ միայն, որ չէին ցանկանում միասին ճամբորդել: Փիլոսը չարախօսում էր.

— Որպէսզի չբաժանեն միմեանց մէջ ընդունելութեան ժամանակ ժողովրդի ցոյց տուած յարգանքը...

Եւ, կարծեմ, իրաւունք ունէր. մէկ ամանում տեղաւորուելիք մարդիկ չէին:

Երբ մի քանի ամիս վերջը, ես հասայ Պոլիս, Ամերիկա անցնելու համար, Ահարոնեանը արդէն Եւրոպայում էր, իսկ Ժաժակը մնացել էր Պոլսում, ուսուցչական պաշտօնով: Նա տարաւ ինձ քաղաքը ցոյց տալու: Վեր ու վար չափեցինք Բերայի Շիտակը: Ինձ խրատ էր տալիս Ամերիկայում անելիքիս մասին: Ապա առաջնորդեց մի մեծ վաճառատուն. կարծեմ Թիրինդն էր: Նայեցինք աջ ու ձախ: Ես բան գնելու միտք չունէի: Շատ դրամ էլ չունէի մօտս:

Ժաժակը կանգնեց գեղեցիկ խոզանակներով եւ սանտրներով լեցուն մի դարակի դիմաց: Ցոյց տուեց մի խոզանակ. վրան դին նշանակուած էր մէկ ոսկի: Ես չօշափեցի գրպանս:

Մի քիչ էլ դարձանք խանութում եւ նորից կանգ առինք խոզանակների եւ սանտրների դարակի առջեւ:

Ժաժակը նորից փայփայեց նոյն խոզանակը, փորձեց իր նիհար մազերի վրայ, մի քիչ էլ սպասեց: Կարող էի մէկ ոսկի վճարել եւ նուիրել նրան:

Ամէն անգամ, երբ խօսք է լինում Ժաժակի մասին, իմ աչքի առջեւ պատկերանում է նրա բարձր հասակը, խոզանակը ձեռքին: Եւ չեմ կարողանում ներել ինձ, ինչո՞ւ չնուիրեցի նրան այդ խոզանակը, որ անկեղծ հաճոյք պիտի պատճառէր նրան...

Ուսումնական տարին արդէն վերջացել էր: Իմ մանկավարժական ասպարէզի վրայ խաչ քաշելով՝ բարձր Հայքի կենտր. կոմիտէի ցանկութեամբ, պատրաստւում էի Քղիի ճամբորդութեան:

Aram webaram.com

Մի արեւոտ, պայծառ օր, «Ցառաջ»ի առջեւ, կանայ ճամբուն վրայ, կանգ առին մի քանի բեռնաւորուած ջորիները: Ես վերի սրահի պատուհանից դիտում էի. ջորիների մէկի վրայից իջաւ գիւղական հագուստով երիտասարդ մի կին՝ երեխան գրկում: Գլուխը սպիտակով ծածկուած, կարճահասակ մի տղամարդ հոգածութեամբ օգնում էր նրան: Հեռուից եկող ճամբորդներ պիտի լինէին:

Շտապով իջայ: Վարը կանգնած էր Սիմոն Զաւարեանը՝ փոշոտ ու յոգնած: Մուշից էր գալիս: Հետինը կինն էր՝ Ազնիւը եւ երեխան, մի սիրուն մանչուկ: Զաւարեանի հետ լաւ ծանօթ էինք եւ սիրով ողջագուրուեց ի ն ք: Կարինում պիտի մնար միայն մի քանի օր. կնոջ եւ երեխային պիտի ուղարկէր Թիֆլիս՝ մօր ու քոյրերի մօտ, իսկ ինքը պիտի անցնէր Պոլիս:



Ս. ԶԱՒԱՐԵԱՆ, ԳՐԿՈՒՄ ՈՐԴԻՆ՝ ՎԻՓԷՆԸ

Զաւարեանին էլ ես առաջին անգամ հանդիպել էի Վիեննայի Ընդհ. ժողովում: Կարճահասակ, նիհար, թուխ դէմքով ու մօրուքով, կենդանի ու հոգեխիզ խորերը թափանցող խոշոր հրացայտ աչքերով, ջղային չարժումներով եւ դերվիշի երեւոյթով մարդ էր — հակապատկերը Ռոստոմի:

Ընդհանուր ժողովի բոլոր անդամները պատկառանքով էին վերաբերւում նրան: Դեռ քիչ ծանօթ՝ ես չէի հասկանում այդ վերաբերմունքի պատճառը: Երեւում էր, որ կուսակցական գործերին շատ տեղեակ եւ նուիրուած անձ էր, ուժեղ խառնուածքի եւ լայն

Aram webaram.com

զարդացման տէր, բայց իր խիստ հետաքրքրական եւ բուռն թափով արտասանուած ճառերը, մեծ մասամբ, չինարար չէին թուում ինձ: Երբեմն տաբօրինակ առաջարկներ էր անում, ինչպէս, օրինակ, ինքնապաշտպանութեան համար հանդամանակուած դումարի մնացորդը այրելու առաջարկը:

Ինձ տաբօրինակ էր թուում եւ Զաւարեանի ապրելակերպը: Մինչ պատգամաւորները խումբ-խումբ ճաշում էին Վիեննայի ճաշարաններում կամ ընտանեկան մասնաւոր ճաշ էին առնում, նա, սովորաբար, մի անկիւն էր քաշւում եւ հաց ու պանիրով անւում:

Ես զգում էի Զաւարեանի մեծութիւնը կուսակցութեան մէջ, յարգում էի նրան, բայց իմ սիրտը Ռոստոմի հետ էր: Ռոստոմին սիրեցի, Զաւարեանին յարգում էի միայն, մի քիչ էլ, թերեւս, վախենում: Ես երբեք չկարողացայ նրան «դու» ասել, ինչպէս եւ Բժ. Զաւրեանին կամ տիկինին...

Նոր Նախիջեւանում, ուր եկել էր Նալբանդի կենտր. կոմիտէի գործերը քննելու, ես աւելի մօտից ճանաչեցի նրան, աւելի յարգեցի, բայց չեմ ասի՝ աւելի սիրեցի: Ազգաբամիտ, քնքոյշ զգացումների տէր, պարզ եւ ընկերական մարդ էր, բայց եւ փչոտ: Ռոստոմ չէր:

Զաւարեանը կարինում երկար չմնաց: Իր կնոջ ու երեխային կառքով տարաւ ռուսական սահմանագլուխ՝ Քէօթակ, յանձնելու համար քրոջ: Մէկ-երկու տեսակցութիւններ ունեցաւ քաղաքում եւ ինչպէս եկաւ անշշուկ, այնպէս էլ աննկատելի մեկնեց Տրապիզոն ու Պոլիս:

Հա՛, Զաւարեանը դեռ չէր մեկնել, կարին եկաւ Թուրքիայի նշանաւոր ելեմտական նախարար Ճավիդ բէյը, որ քննական հրջադարձութեան էր ելել Անատոլիայում: Այցելեց եւ «Ճառաջ»ի խմբագրատունը, ուր նրան թէյասեղան տուինք Հայ Երիտասարդաց Միութեան սրահում: Զաւարեանը ներկայ էր ընդունելութեան, ինչպէս եւ Ռաժակը, որ դեռ կարինում էր: Զաւարեանը զրոյց ունեցաւ Ճավիդ բէյի հետ Թուրքիայի տնտեսական եւ, ի մասնաւորի, հողային հարցի մասին:

Ճավիդ բէյը աղդուած էր երեւում. Կարինի մի բուռն հայութիւնը ունէր չէն դպրոցներ, տպարան, թերթ, մինչդեռ անհամեմատ աւելի բազմամարդ թուրքերը ոչինչ չունէին...

Ատրունին թարգմանում էր մեր խօսակցութիւնը: Վերջը, երբ Ճավիդը եւ թուրք հիւրերը հեռացան, ասաց դառնութեամբ.

— Ճավիդը սաստիկ աղդուեցաւ եւ նախանձով ըսաւ իր հե-

Aram webaram.com

տիններուն. կ'ըսէք կեաւուր են ու կ'անցնիք: Տեսէք ասոնք ինչեր ունին, իսկ մենք ի՞նչ ունինք կարնոյ մէջ...

Զաւարեանը այլեւս Մուշ չվերադարձաւ: Մնաց Պոլսում, իբրեւ Բիւրոյի ազատ անդամ եւ ուսուցիչ:

Ամերիկա հասնելուց յետոյ ես նրան ուղարկեցի մի ընդարձակ տեղեկագիր ամերիկահայութեան մասին եւ խնդրեցի աշխատակցել «Հայրենիք»ին: Իր ցանկութեամբ հրատարակեցի «Հայրենիք»ի Սասունին նուիրուած մի բացառիկ թիւ, որի արդիւնքը՝ 500 դոլար, յատկացուեց Մասունին: Նոյնպէս իր ցանկութեամբ ձեռնարկեցի իր «Հայ Աշխատանք»ին նուիրուած ալբոմի հրատարակութեան, որ, դժբախտաբար, մնաց անկատար: Զաւարեանը ուղարկեց մեզ մի արկղ լուսանկարների ապակիներ, որ նկարել էր ինքը Տարօնում եւ Բալաջանը Վասպուրականում՝ հայ գիւղացիի եւ արհեստաւորի աշխատանքը ներկայացնող տեսարաններով:

Ամերիկայից մեկնելիս, 1914ին, ես այդ թանկագին դանձը թողել էի «Հայրենիք»ի խմբագրատունը, վերադարձիս օգտագործելու համար: 1930ին, երբ երկրորդ անգամ գնացի Ամերիկա, այդ արկղը գտայ «Հայրենիք»ի վերնատանը, փոշիների մէջ:

Սիմոն Զաւարեանի դուրգուրանքի առարկայ լուսանկարի բոլոր ապակիները կոտրտուած էին վանդալների ձեռքով...

Մոքիցս բոլորովին ջնջուել են մանրամասնութիւնները, բայց աղօտ կերպով յիշում եմ, որ Կարինում հանդիպել եմ եւ Կարապետ Պարունակեանին: Չեմ յիշում, թէ ո՞րտեղից էր գալիս, ո՞ւր էր գնում եւ ի՞նչ պայմաններում: Ենթադրում եմ միայն, որ նա էլ վիճաբանական էր Լըժինի ձեռքից, ինչպէս Ահարոնեանը, Իսահակեանը եւ Ալաժակը:

Մենակ չէր, կնոջ եւ զաւակների հետ էր: Շատ կարճ մնաց Կարինում: Եկան ու անցան աննկատելի ստուերի պէս, ինչպէս իր ամբողջ կեանքը անաղմուկ էր:

Աչքերիս առջեւ պատկերանում է Պարունակեան ընտանիքի մեկնումը՝ ջորիների կարաւանով: Երկու ջորիների վրայ, ալ ու ճախ, ձգուած էին ամբիւղաձեւ նստարաններ: Մէկի վրայ տեղաւորուեցին կարապետի կինը եւ մեծ աղջիկը՝ Էմման. միւս երկու ամբիւղների մէջ նստան միւս աղջիկը՝ Էմիլիան եւ տղան՝ Էմիլը: Կարապետը ինքը պիտի հետեւէր ջորիներին, ջորեպանի կողքին. տապանակ ուխտի...

Գնում էին, եթէ չեմ սխալւում, Տիգրանակերտ: Յամենայն

Aram webaram.com

դէպս, արդէն Ամերիկայում Դոկտ. Թերզեանից իմացայ, որ Տիգրանակերտի նորաբաց Ցառաջդիմական վարժարանի տնօրէն Գասպարեանը մեր կարապետ Պարունակեանն է: Բնականաբար, անմիջապէս կապուեցի հետը եւ մինչեւ Ամերիկայից հեռանալս թղթակցում էինք իրար հետ:

Ո՞վ է յիշում այսօր Պարունակեան–Գասպարեան անունը, ո՞վ ինչ գիտէ նրա մասին: Իր կարճատեւ մանկավարժական գործունէութեամբ՝ Տիգրանակերտում նա մտաւորական ընտիր սերունդ պատրաստեց: Մեծ Եղեռնից ազատուածները տակաւին ապրում են, գըլխաւորապէս, Ամերիկայում: Բարոյական պարտականութիւն է ընկնում նրանց վրայ մոռացումից փրկել իրենց սիրելի տնօրէն եւ ուսուցիչ Գասպարեանի անունը:

Իմ ծանօթութիւնը կարապետ Պարունակեանի հետ տեղի ունեցաւ մի քիչ դուարճալի պայմաններում:

Այն տարի մենք, Գէորգեան ճեմարանի աշակերտներից չորս հոգի՝ վանեցի Համազասպ Բաղէշցեանն ու Վարդան Պալտոշեանը, նուխեցի Ահարոնեանը եւ ես, ամառուայ արձակուրդը անցընելով Տաթեւի վանքում, ներսէս վրդ. Մելիք–Թանգեանի մօտ, Մեղրիի վրայով վերադառնում էինք էջմիածին, ոտքով: Օրդուբատի եւ Ազուլիսի միջեւ, երբ արդէն մութը ընկել էր, մեզ հանդիպեց մի պատրոն, որ գնում էր ծանր բեռնաւորուած փուրգոնի յետեւից: Բարեւ–Աստծոյ բարին՝ ծանօթացանք: Հետաքրքիր խօսակից դուրս եկաւ: Գնում էինք փուրգոնի յետեւից եւ զրուցում:

Մեր նոր ծանօթը, իմանալով, որ մենք ճեմարանցի ենք, նկատեց դժգոհ ձայնով.

— Ճեմարանը չեղուել է ուղիղ ճանապարհից. փոխանակ հոգեւորականներ պատրաստելու, անկրօն յեղափոխականներ է դաստիարակում:

Մենք տաքարիւն դաշնակցականներ էինք: Այդ օրերը մեր մտքերը զբաղած էին «Դրօշակի» «Ամբոխային տրամաբանութիւնը» խմբագրականներից, եւ մեր նոր ծանօթի նկատողութիւնը վրդովում պատճառեց մեզ: Համազասպը, որ մեր մէջ ամենէն հասունն էր, բարկացած, պատասխանեց.

— Հիմա է, որ ճեմարանը ուղիղ ճանապարհի վրայ է. մզլոտած հոգեւորականների դարը անցել է:

— Մզլոտած հոգեւորակա՞ն, զարմացաւ մեր ուղեկիցը, եթէ Աստուածաշունչի փոխարէն դուք «Դրօշակ» էք կարդում ճեմարանում:

Aram webaram.com

— Այո՛, ի՞նչ կայ որ, բացագանչեց Համազասպը. Աստուածաշունչ էլ ենք կարդում, «Դրօշակ» էլ... Ձեզ էլ խորհուրդ ենք տալիս կարդալ «Դրօշակ», փոխանակ բորբոսնած «Նոր-Դար»ի:

«Նոր-Դար»ը խաւարամիտների օրաթերթն էր:

— Դուք կարդացե՞լ էք «Դրօշակ»ի «Ամբոխային Տրամաբանութիւնը», չարունակեց յարճակողականը Համազասպը:

— Կարդացել եմ, անվրդով պատասխանեց մեր նոր ծանօթը, ի՞նչ կայ մէջը. միայն հայկական նոր կոտորածների պատճառ կը դառնայ... Ձէնքի քարոզ է, բայց չգիտէ՞ք, որ զէնք առնողը զէնքից կ'ընկնի...

Անյոյս խաւարամիտ յետադիմական էր, անօգուտ էր նրա հետ վիճելը: Բայց Համազասպը ջղայնացել էր եւ ամենակծու խօսքերով պատասխանում էր հակայեղափոխական պարոնին, որի անյոյզ խօսքերը աւելի եւս գրգռում էին նրան:

Կէս գիշերը անցել էր, երբ փուրգոնը մօտեցաւ Ազուլիսի այգիներին:

— Ո՞ւր էք գիշերելու, հարցրեց մեր նոր ծանօթը:

Իսկապէս, ո՞ւր էինք գիշերելու: Ցերեկը լինէր, պարզ էր. կ'երթայինք տէրտէրի դուռը կը ծեծէինք, բայց գիշե՞րը...

Վարանումը տեսնելով՝ մեր նոր ծանօթը առաջարկեց.

— Այս գիշեր մեր հիւրը եղէք:

Այդ արդէն չափազանց էր. հիւր լինել խաւարամիտ մի հակայեղափոխականի...

Բայց ուրիշ ելք էլ չունէինք. հո չէի՞նք կարող գիշերը փողոցում անցընել...:

Մի քիչ չեմ ու չում անելուց յետոյ, համաձայնուեցինք եւ հետեւեցինք փուրգոնին, մեր նոր բարեկամի տունը:

Մեծ, ընդարձակ տուն էր՝ ծառախիտ պարտէզով շրջապատուած, ուր մեզ սիրով ընդունեցին, համեղ ընթրիք տուին եւ կակուղ անկողիններում քնեցրին:

Վաղ առաւօտեան պիտի չարունակէինք ճանապարհը, բայց մեր բարեկամը եւ ընտանիքի անդամները պնդեցին, որ մի օր էլ հիւր մնանք իրենց: Երեկոյեան ինչ որ մի հաւաքոյթ կար, ուզում էին, որ մենք էլ ներկայ լինենք: Մնացինք, մանաւանդ որ հետաքրքրական տեղեր էլ կային տեսնելու զոկերի մայրաքաղաքում:

«Ինչ որ մի հաւաքոյթը» զաղտնի երեկոյթ-հանդէս էր մի ընդարձակ այգիում, կառավարութեան աչքից հեռու, որի նմանները շատ էին կատարւում այն օրերին, մանաւանդ Հ. Ց. Դաշնակցու-

Aram webaram.com

թեան կողմից: Երբ մենք, ընտանեօք հանդերձ, մտանք ներս, արդէն այդին լեցուած էր երկսեռ բազմութեամբ, որ աղօտ լոյսի տակ, անաղմուկ սպասում էր հանդէսի բացուելուն: Լայնաճիւղ չինարի տակ չինուած էր բեմ, որի առջեւ մեզ տեղ տուին: Մեր բարեկամը մի պահ աներեւութացաւ. ապա բարձրացաւ բեմ ու դուարթ ձայնով արտասանեց.

— Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հանդէսը յայտարարում եմ բացուած...

Դուրս եկաւ, որ մինչեւ այդ նա ձեռք էր առնում մեզ. դաշնակցական էր, ճեմարանական, ուսուցիչ Ազուլիսի դպրոցում, տեղական կոմիտէի նախագահ, անունը՝ Կարապետ Պարունակեան...

Ահա այս Կարապետ Պարունակեանն էր, որին, տարիներ անցած, ես հանդիպեցի Կարինում եւ որ վերջը դարձաւ Տիգրանակերտի Յառաջդիմական ճեմարանի տնօրէն, Գասպարեան անունով:

Համաշխարհային պատերազմից առաջ նրան յաջողուել էր ընտանիքով դառնալ Կովկաս, այլապէս պիտի դառնար Մեծ Եղեռնի զոհ: Կովկասում Պարունակեանը, միշտ անաղմուկ ու համեստ, նուիրուեց հանրային գործունէութեան, իսկ Հանրապետութեան տարիներին ոգեւորութեամբ աշխատում էր, իբրեւ պետական կարեւոր պաշտօնեայ, եթէ չեմ սխալւում, Շիրակի շրջանում: Խորհրդայնացումից յետոյ մնաց Հայաստանում: Ինչ եղաւ վերջը, լուր չունեմ: Գիտեմ միայն, որ այլեւս ողջ չէ:

Իր գաւակները շարունակեցին հօր գործը: Ազջիկը, Էմիլիան, ամուսնացաւ մեծ ապագայ խոստացող երիտասարդ դաշնակցական Տիգրան Աւետիսեանի հետ, եւ ամուսնու հետ միասին գործօն տեղ գրաւեց Դաշնակցութեան մէջ, միասին աքսորուեցին Սիբիր եւ միասին էլ զոհ գնացին բոլշեւիկեան մողոքին: Տղան՝ Էմիլը նոյնպէս փայլուն դիրք գրաւեց դաշնակցական երիտասարդութեան շարքերում եւ նոյնպէս զոհուեցաւ նոյն մողոքին՝ Սիբիրում...

... Մեծ ճանապարհի վրայ, Կարինում, հազիւ մէկ տարուայ ընթացքում, ուրիշ հանդիպումներ եւս ունեցայ: Շատերը այլեւս չկան. ոմանք էլ հեռու են: Հեռու են ոչ միայն աշխարհագրութեամբ, այլ, աւա՛ղ, նաեւ հոգեկան տարածութեամբ:

Տարիները սահում-անցնում են: Նեղանում է կեանքի հորիզոնը: Փոխւում են դաղափարները, այլակերպւում են կարգերն ու բարքերը: Եւ անորոշ ապագայի առջեւ այնպէ՛ս քաղցր եւ անհունօրէն սիրելի են անցեալի դէպքերն ու դէմքերը, որոնք այլեւս չկան, բայց որոնց յիշատակը կենդանի է, անջինջ սրտումդ...

Սեպտեմբեր 1960, Պէյրութ

Aram webaram.com

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՓՂԻ

Ի. ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Արեւոտ, կիզիչ օր էր, 1911 թ. ամառը, երբ մի խումբ օսնակցի դիւղացիների հետ, կարինից ուղեւորուեցի դէպի Փղի:

Ընկերները եկել էին ճանապարհ դնելու: Լեւոն Մազմանեանը, ժամադործ Պետրոսը, Միսակ Կոլոթեանը, եւ ուրիշներ բերել էին նաեւ ճամբու պաշար, որ օսնակցի ուղեկիցներիս մասնաւոր հաճոյք պատճառեց:

Մեր կարաւանը — ես ձի ունէի, իսկ օսնակցիները՝ ջորիներ — հանդիսաւոր թափօրով շարժուեց Փաստրմաճոնց քարւանսարայի առջեւից:

— Բարի ճանապարհ, յաջողութիւն... — բարեմաղթում էին ընկերները ամէն կողմից:

Մօտ 10 հոգի էինք: Աղօտ յիշում եմ ուղեկիցներիս, բայց ամէնքն էլ համակրելի մարդիկ էին — պարզ, զուարթ, կատակախօս հայ դիւղացիներ: Շուտով մոերմացանք, եւ ճանապարհը անցաւ հաճելի:

Ընկերների բերած պաշարը բաւական առատ էր — լաւաշ հաց, փուռը դրած միս, փաստրմա, պանիր եւ ուրիշ համով բաներ: Եւ ինչ որ առանձնապէս բարձրացրեց օսնակցիների տրամադրութիւնը, կար եւ կոնեակ: Ես գրեթէ չէի խմում — կոնեակը, ուրեմն, նրանց բաժինն էր մեծ մասով:

Առաջին գիշերը անցկացրինք Փալան Թոքեանի լանջին: Սարսափելի ցուրտ էր: Ծարոյկ վառել վախենում էինք: Ընկերներս հա-

Aram webaram.com

ատացնում էին, թէ այդ կողմերը աւազակներ կային, որոնք կարող էին նկատել մեր կրակը: Ես ոտքով-գլխով փաթաթուած ետիւնջիս մէջ՝ աշխատում էի քնել, բայց ցուրտը այնքան սաստիկ էր, որ քունը հազար մղոն հեռու էր փախչում աչքերիցս:

Ձիին քնում եւ օսնակցիները: Գուցէ աւազակներից էին վախենում: Գուցէ նրանց քունն էլ ցուրտն էր փախցնում: Բայց անհաւանական չէր, որ կենեակն էլ դեր ունէր նրանց արթնութեան մէջ:

Ամբուած ջորիների սէմէրների կոյտի մօտ, նրանք անդադար զրոյց էին անում, մերթ ընդ մերթ շրթունքներով պաշտամունք էին մատուցանում կոնեակի շիշին — դատարկ չկար — կամ երգում էին ազգային ու յեղափոխական երգեր: Գիտէին իմ ով լինելը եւ աշխատում էին ընտրել դաշնակցական երգեր:

Ես ձեւացրի թէ քնած եմ, որպէսզի ազատ թողնեմ նրանց խօսելու ինչ որ ուզէին: Մի քանի անգամ կտրել էին խօսքը, երեւի, չուզելով, որ ես լսեմ: Ճաճախ էլ հայերէնը փոխում էին անգլերէնի, ո՞վ գիտէ ինչպէս աղաւաղելով չէքսպիրեան բարբառը:

Տարօրինակ էր լսել օսնակցի այդ գեղջուկների բերանին, Հայաստանի խուլ լեռներում, անգլերէն խօսակցութիւն, թէկուզ եւ օսնակեան անգլերէն...

Մի պահ հեռուում լսուեց ինչ որ սուլոց: Թուչունի ձա՞յն էր արդեօք, թէ՞ աւազակների պայմանական ազդանշան: Ուղեկիցներս մէկէն լռեցին եւ սկսեցին ուշադրութեամբ ականջ դնել: Բայց ձայնը չկրկնուեց: Հաւանաբար, անծանօթ մի թուչունի կանչ էր այդ, որ գիշերային մթութեան մէջ չարագուշակ խորհրդաւորութիւն էր ստանում:

— Հապա որ աւազակները յարձակուեն մեր վրա՞յ — անհանգըստացաւ ուղեկիցներիցս մէկը:

— Կը պաշտպանուենք, պատասխանեց մի ուրիշը ու մի թունդ հայհոյանք ուղղեց աւազակների հասցէին:

— Կը պաշտպանուենք... բայց ինչո՞վ:

Գարզուեց, որ ոչ ոքի մօտ զէնք չկայ:

Նրանց յոյսը ես էի:

— Մի տեսնես՝ ի՞նչ զէնք ունի մօտը...

Ակնարկը ինձ էր:

— Մաւիզէր կը լինի, անշուշտ:

— Մաւիզէր ալ, բրաւունինգ ալ:

Aram webaram.com

Որոշեցին, որ մօտս մի քանի տեսակ զէնք կայ։ Դաշնակցականն զործիչ էի — կարո՞ղ էի առանց զէնքի մանգալ։

Ինդալս էր գալիս։ Միակ զէնքը, որ ունէի մօտս, մի փոքրիկ գմելի էր, որ Ռոստոմը զոռով դրել էր գրպանս։

Ի՞նչ փոյթ, թող օսնակցի բարեկամներս համոզուած մնան, որ իմ եափունջու տակը ու գրպաններումս ամբողջ մի զինապահեստ կայ։ Այսպէս աւելի լաւ է. աւազակները կը վախնան, չեն յարձակուի։

Այդ համոզումով էլ մնացին մինչեւ վերջ։

Ճանապարհը անցնում էր խիստ հաճելի, թէեւ ցերեկները աստիկ տօթ էր անում հովիտներում, իսկ գիշերները՝ անտանելի ցուրտ սարերի լանջերին։

Այդ գիշերնե՛րը՝ հրաշք։ Հայաստանի պայծառ երկինքը՝ անհամար աղամանդէ աստղերով։ Ինայթող, բայց կենարար հովը լեռների։ Ջրի աղմուկը ձորի խորքում։ Եւ մացառների ու քարերի խորհրդաւոր ստուերները չորս բոլորդ։ Ականջիդ մեղմ հնչում է առաջապահ ջորիի մելամաղձոտ զանգակը, հանդարտ օրօրում ես թամբի վրայ ու մտքով սաւառնում երազների աշխարհում...

Հապա կայանները՞ը։ Անասունները փռնչալով արածում են շուրջդ։ Գլուխդ դրած թամբին՝ հետեւում ես երկնքում սլացող ճերմակ ամպերի քուլաներին ու ինքդ էլ, մի ամպի պատառ՝ հալւում ես սիեզերական անհունութեան մէջ։

Կողքիս օսնակցիները սրախօսում են, իրար հրմշտկում, հոգածու խնամքով ուտելիքի պատրաստութիւն տեսնում։

Կամ ի՛նչ զուարճալի անակնկալներ։

Չեմ յիշում, ո՞ր օրը, Հէրլանք գիւղի ծայրը իջել էինք հանգըստանալու։ Աղքատ ու խեղճ գիւղ էր, կարծեմ, յունաբնակ, Առածուց մոռացուած։

Մեղանից ոչ հեռու, քոյր ու եղբայր պատանիներ գարի էին հնձում։ Մի վտիտ արտ, հազիւ մի քանի քայլ լայնութեամբ ու երկարութեամբ։ Գորշ–դեղին, վատուժ հասկեր՝ կորած մոլախոտի մէջ։

Մի փոքրիկ հարց ու փորձ բաւական եղաւ պարզելու գիւղի վիճակը — համատարած աղքատութիւն ու թշուառութիւն եւ մալարիա։ Գիւղի բոլոր բնակիչները բռնուած էին այդ ախտով։

Մեր հացը վերջանալու վրայ էր, բայց գիւղում հաց կարելի չեղաւ ճարել։ Օսնակցիները ո՞ր դուռը բախել էին, պարապ էր ելել, հաց չկար։ Հազիւ մի աման մածուն էին գտել մեծ դժուարութեամբ,

Aram webaram.com

այն էլ օսնակցիների հնարամտութեան չնորհիւ։ Ասել էին, թէ իրենց հետ բժիշկ է ճամբորդում, հարուստ մարդ է, լաւ կը վճարէ։

Բայց, դրամից աւելի, երեւի, հէոլանքցիների ուշադրութիւնը դրաւել էր բժիշկը։ Նոր էինք նստել հացի, երբ դիւղից իրար յետեւից սկսեցին գալ ծերեր, երեխաներ, կիներ ու տղամարդիկ։ Եկան խռնուեցին մեր շուրջը։ Ամէնքը հիւանդներ՝ ժժգոյն դէմքերով մտամոլոր, հազիւ ոտքի վրայ էին մնում։

— Ամա՛ն, բժիշկ, մի ճար...

Բժիշկը ես էի։ Կարելի՞ էր համոզել, թէ բժիշկ չեմ։ Ամէն կողմից տրտունջ, բողոք, գայրոյթ, բժիշկ եմ ու չեմ ուզում բժշկել, որովհետեւ իրենք աղքատ դիւղացիներ են։ Եթէ հարուստ լինէին, ինձ դրամ տային, ի հարկէ, կը բժշկէի...

Աղաչանք—պաղատանք։

— Բժի՛շկ, մի ճա՛ր...

Օսնակցիները ծիծաղում էին քթի տակից։

Ես որ ահագին պինապահեստ էի կրում վրաս, ինչո՞ւ չպիտի ունենայի եւ այս ողորմելիների համար դեղ ու դարման։

Է՛հ, որ խնդրում են, ի՞նչպէս մերժել. բժիշկ ենք։ Դաշնակցական գործիչը պարտաւոր է ամէն բան գիտնալ...

Կարինի ընկերները, ուտելիք պաշարի հետ առատ չաքարեղէն էլ էին դրել կոնեակի հետ գործածելու համար։ Կոնեակից բան չէր մնացել, բայց չաքար դեռ կար։ Ամէն հիւանդի տուի երկուական չաքար եւ խիստ պատուիրեցի.

— Մէկը կ'ընդունես այս երեկոյ, ճիշդ արեւը մայր մտնելու ժամանակ, հասկացա՞ր. մի ման ջրի հետ կ'ընդունես։ Միւսը կ'ուտես վաղը առաւօտ, ճիշդ արեւածագին, ու յետոյ ամբողջ օրը ծոմ կը պահես, ո՛չ հաց կ'ուտես, ո՛չ ջուր կը խմես, ո՛չ կը ծխես, հասկացա՞ր... Միւս օր արդէն բոլորովին առողջ կը լինես...

Օսնակցիներից մէկը թարգմանում էր բժշկական պատուէրները։ Առանձնապէս կարեւոր էր, որ չաքարը ուտուէր արեւամուտին եւ արեւածագին...

Պէտք էր տեսնել հէոլանքցիների ուրախութիւնը։

Վերադարձին Հէոլանք չմտայ։ Զիմացայ՝ ի՞նչ եղաւ իմ բուժական արուեստի հետեւանքը։ Օսնակցիները, սակայն, մինչեւ տեղ հասնելը, միշտ խօսում ու ծիծաղում էին տուած դեղերիս վրայ...։

⁂

Օսնակ հասանք առաւօտեան, երբ արեւն արդէն մի կանդուն

Aram webaram.com

բարձրացել էր հորիզոնից: Մինչեւ այսօր էլ յիշում եմ այդ առաւօտը: Գիւղի ծայրը կային դեղեցիկ, խնամուած բոստաններ: Արեւածաղիկ, եգիպտացորեն եւ այստեղ ու այնտեղ դունդ-դունդ ճմեռուկներ ու դդումներ:

Մի բոստանի ծայրում մեր կարաւանը կանգ առաւ: Բոստանջին մեզ հիւրասիրեց ու բարի ճանապարհ մաղթեց: Օսնակի աղանեղից էր:

Հաճելի էր եւ Օսնակի տեսքը: Դաշտի ու ճանապարհի գետնափոր, դորշ խրճիթներից յետոյ՝ այստեղ երկյարկանի, պատշգամբներով ու պատուհաններով չէնքեր, մաքուր ու խնամքով պահուած: Շուրջը՝ արեւ ու կանաչ: Կարծես, Ասիայից Եւրոպա էինք մտել:

Հաճելի էր ներսը, ուր ինձ առաջնորդեց օսնակցի ուղեկիցներից մէկը: Յատակին փռած մաքուր խալիչա, պատերին — Կղին ո՛ւր, Ամերիկան ուր — նախագահ Թէոդոր Ռուզվէլթի մեծադիր պատկերը, Սինգըրի կարի մեքենայի եւ Սընլայթ օճառի խոշոր, դունաւոր յայտարարութիւններ:

Իսկոյն տունը լեցուեց հիւրերով: Մեր օսնակցի ընկերներն էին: Բարեմաղթութիւններ, ուրախութիւն: Պահանջ, որ անպատճառ դիշերը մնամ իրենց մօտ եւ հրապարակային ժողով ունենանք: Բայց կարելիութիւն չկար: Պէտք էր շուտով հասնել քաղաք եւ այնտեղից սկսել աշխատանքի:

Մի քիչ հանգստանալուց ու նախաճաշից յետոյ, մի խումբ ընկերներով ճանապարհ ենք ընկնում դէպի քաղաք:

II · ԴԱՍԱՊԱՑՈՒՄ

Մեր ճանապարհը անցնում է Թեմրանի վրայով: Օսնակը բուն Կղիի նախադուռն է: Օսնակից հետզհետէ բարձրանում ենք Ապղնաքի լեռնանցքը, որտեղից համայնապատկեր սքանչելի տեսարան է բացւում Կղիի հովտի վրայ:

Հովիտ բառը պէտք է դնել չակերտների մէջ: Կղիում իսկապէս հովիտ չկայ, եթէ չհաշուենք Թեմրանի դաշտը: Լեռ ու ձոր, բարձր ու ցածր — ահա Կղին: Ի դուր չէ, որ նրա անունը դրել են Ծորաձոր, աւելի ճիշդ կը լինէր ասել՝ Սարուձոր: Ձօսք կարող է լինել աւելի բարձր կամ աւելի ցածրի մասին, բայց հովիտ, դաշտ — ուրիշ տեղ փնտռեցէք:

Ընկերներս բացատրում են ինձ: Ահա հեռուն Գասապան է,

Aram webaram.com

Քղխի մայրաքաղաքը, մի նեղ ու զեղատեսիլ ձորի մէջ։ Քաղաքը թիկն է տուել Սերդեխասում բարձրադիրքի լերան ու նայում է հանդարտ իր առջեւ փռուած տարածութեան։ Քաղաքի վերի ծայրը՝ հռչակաւոր Քարական ձորը, ուր քղեցիները զբօսնում եւ քէֆ էին անում յաճախ։ Աւելի վեր՝ արօտատեղիներ։ Դիմացը՝ Աստուածածնի վանքը, որտեղից հմայիչ տեսարան է բացւում դէպի Մուրը Լոյսը։ Վարը՝ Առէք, Հաղատուն, Ճալըդեղ...

Մեզանից դէպի աջ, բարձր ու բարձր, ծառերի մէջ՝ գեղեցկանիստ Ծերմակը ծառադարդ։ Աւելի արեւելք՝ Սուրբ Կիրակոսը։ Դէպի ձախ՝ Հերտիւը, աւելի հեռուն Զանախչին, Զանը, Քերբոսը։ Մեր առջեւ՝ Թեմրանը լայնատարած ու հացաչատ։ Անդին Խուփսը մեծ, Սերկեւիլ, Հողաս։

Շատ գիւղեր, մէկը միւսից ինքնատիպ, զեղեցիկ, գրաւիչ։

Առհասարակ, ամբողջ Քղին՝ մի հրաշալի անկիւն է։ Գեղարուեստական պատկեր։ Բնութիւնը ոչինչ չի խնայել նրա արտաքինը մարդկային աչքին հրապուրիչ դարձնելու համար։ Մանաւանդ, եթէ համեմատելու լինենք Արեւելեան Հայաստանի դորչ եւ չոր ու ցամաք դաշտերի ու լեռների հետ։ Առատ կանաչ, ամէն կողմ ծառ ու թուփ, երկինք նայող լեռներ, անդնդախոր ձորեր։ Արագահոս գետակներում, ժէռ քարերի մէջ, կարմրախայտն է խաղում։ Մութ անտառներում՝ որսի երէ։ Ամէն քայլափոխին՝ զուլալ աղբիւր՝ արցունքի նման վճիտ։ Գիշերը չէն եւ ուրախ։ Մարդկանց աչքերում՝ կեանք ու ժպիտ։ Հիանալի է Քղին։

Այսպէս ներկայացաւ ինձ Քղին, յամի Տեառն 1911ի ամառը, երբ Ծերմակի բարձունքից ընկերների հետ իջնում էինք դէպի Թեմրան կամ Դարման գիւղը։

Թեմրանում, բնականաբար, մեզ պիտի ընդունէր Պատուելի Կարապետ Մելքոնեանը — մեր դաշնակցական յարգուած ընկերը, իր մաքուր եւ հիւրասէր տան մէջ։ Մի քանի րոպէում, այստեղից ու այնտեղից, ներս թափուեցին գիւղի ընկերները, որոնց մէջ եւ մի քանի ուսանողներ ամերիկեան կոլէջներից։ Այստեղ էր, որ առաջին անգամ հանդիպեցի դրեթէ դեռ պատանի ուսանող Արմէն Պարտիզեանին։ Կարճ ժամանակում ստեղծուեց ընդհանուր ջերմ մթնոլորտ, մտերիմ զրոյց եւ ուրախութիւն։ Այդտեղ իմացայ, որ քաղաքի ընկերները երկրորդ օրն է 30–40 հոգինոց ճիւաւոր խմբով դիմաւորելու են դուրս գալիս եւ ճեռնունայն չեն գառնում։ Ներանք, սպասում էին մեզ Քղիի սովորական՝ Մելիքանի ճամբով, մինչդեռ մենք գալիս էինք Օանակի վրայով...

Aram webaram.com

Հրապարակային ժողովի պահանջը այստեղ էլ մերժելով՝ ես չուզեցի ճանապարհուել դէպի քաղաք: Մի ճիպ եւս. մի քանի ժամում կարեցինք Գասապա մազլցող ոլոր-մոլոր, քարքարոտ, ամօթ է ասել, ճանապարհը եւ երեկոյեան մութին հասանք քաղաք:

«Գրաղարանը» եղաւ մեր առաջին հանդրուանը: Սահմանադրութիւնից յետոյ բոլոր քաղաքներում կային այսպիսի Գրաղարաններ, այսինքն՝ սովորական սրճարանները, ուր թղթախաղից, թաւլուից ու դօմինոյից զատ՝ կային եւ Պոլսից, Ամերիկայից ու Կարինից ստացուող մի քանի թերթեր:

Դեռ շէֆէրլի սուրճի բաժակը չէր դատարկուել, երբ հեւ ի հեւ վրայ հասան ընկերները: Եւ պարզուեց «ազգային խայտառակութիւնը». Կարինից հեռագիր են ստացել իմ մեկնելու մասին, երկու օր է ապարդիւն ընդառաջ են գնում կարինի ճամբան: Պարզուեց եւ մի փոքրիկ մանրամասնութիւն. Քղի էր եկել հնչակեան գործիչ Կոզիկեանը (Եսայէմ), ժողովներ էր անում, ժողովուրդը գնում էր նրան լսելու. հարկաւոր էր հակազդել: Ձիաւոր խմբով շքեղ ընդունելութիւնն էլ, աւելի շատ ցոյց էր Կոզիկեանի դէմ, թէ՝ տեսէք, մենք ինչպէս ենք ընդունում մեր գործիչներին...

Կարճ հանգստից յետոյ, տեղափոխուեցինք նախօրօք ինձ համար պատրաստուած բնակարանը, մի ընկերոջ մօտ, Մ. Յակոբ եկեղեցու թաղում:

Ցիշում եմ՝ մութ գիշեր էր: Մառը աչքդ կոխէին՝ չէիր տեսնի: Ինչ որ նեղ եւ խորդ ու բորդ անցքերով, որոնք փողոց էին կոչւում, մազլցեցինք վեր ու լեցուեցինք բակի մէջ նայող ընդարձակ, քարիւղէ աղօտ ճրագով լուսաւորուած մի սենեակ:

Այսքան ընկերներ որտեղի՞ց էլ հաւաքուեցին: Հազիւ նստել էինք, եւ ահա ամէն կողմից ներս թափուեցին մարդիկ ու սենեակը վերածուեց մեղուների փեթակի: Քղիում հեռախօսի կամ անթել հեռագրի կարիք չկար. բաւական էր որ մի տեղ բան պատահէր, լուրը կտուրից-կտուր կայծակի արագութեամբ կը տարածուէր ամբողջ քաղաքում: Հաղորդակցութեան միջոցների այդպիսի կատարելագործութեամբ պէտք է բացատրել եւ այն, որ ճանապարհի փոշին դեռ վրայիցս չէի մաքրել, երբ սկսուեցին պաշտօնական այցելութիւնները:

Օրուայ արարողապետը Գեղամ Քալբերունին էր, Քղիի աքանչելի երիտասարդութեան հիանալի ներկայացուցիչներից մէկը: Նա ջանք չէր խնայում իմ ներկայութիւնը կուսակցութեան համար օգտագործել առաւելագոյն չափով: Ինչպէս յետոյ իմացայ, իմ Քղի

Aram webaram.com

դալու պատճառն էլ նա էր եղել: Կարինում եղած ժամանակ, նա դիմել էր Թոստոմին եւ համոզել, որ ինձ Քղի ուղարկէ:

Որպէսզի տպաւորութիւնն առանձնապէս լաւ լինի, Գեղամը ներկայ եղող ընկերներին ըստ աւագութեան աստիճանի երկկարգ շարեց երկար սեղանի շուրջ, վերի մասը պարապ թողնելով հիւրերի համար. ինձ էլ նստեցրեց սեղանի դլուխը: Ապա սկսուեց ընդունելութեան արարողութիւնը:

Առաջին այցելուն Քղիի առաջնորդ Պասակ վարդապետն էր, մեր ընկեր Բաղրատ քահանայի ուղեկցութեամբ: Պասակին ես արդէն ճնաչում էի. քաջակազմ ու կենսուրախ երիտասարդ էր, լաւ խօսակից, շարժուն մտքի տէր, հացասէր ու հարցասէր, ամէն բանով հետաքրքրուող: Ինչից ոչ պակաս վարժ էր ղէնքի գործածութեան եւ երբ երիտասարդների մէջ էր դտնւում, սիրում էր իրեն ներկայացնել որպէս դաշնակցական, թէեւ մեր կազմակերպութեան անդամ չէր: Քղեցիք, կարծեմ, սիրում էին նրան: Ցամենայն դէպս, նա քղեցիներին սիրում էր: Իր պարապոյ ժամերը նուիրել էր Քղիի ուսումնասիրութեան եւ ահագին նիւթ էր հաւաքել. մտածում էր հրատարակել առանձին հատորով: Դժբախտաբար, նրա այդ լուծը մնաց անկատար:

Պասակին յաջորդեց Քաջբերունի Էֆէնդին, Գեղամի հայրը, մի պատուական ծերունի, վաստակաւոր մշակութային գործիչ ու յարդելի անձնաւորութիւն, որի խօսքը ազդեցիկ էր եւ առաջնորդարանում, եւ հասարակութեան մէջ, եւ կուսակցութիւնների առջեւ, եւ կառավարութեան մօտ:

Ապա, իրար յետեւից, եկան ուրիշներ, Քղիի հասարակութեան երեւելի դէմքերը, եւ Գեղամի բաց թողած տարածութիւնը սեղանի շուրջ, շուտով լեցուեց: Պէտք եղաւ երիտասարդ ընկերներին հանել իրենց տեղերից ու հիւրերին տեղաւորել:

Եկողները, ըստ սովորութեան, դռնից մտնելով՝ խոնարհութիւն էին անում ալաթուրքա, ողջունում ու լուռ նստում ցոյց տրուած տեղը: Գեղամը հանդիսաւորապէս ծանօթացնում էր եկողի ինքնութիւնը: Երիտասարդ տանտէրը մատուցանում էր սուրճ ու ծխախոտ: Իմ պարտականութիւնն էր ժպտալ եւ անուշ խօսք ասել:

Ինչքան եկող երեւելիների թիւը չատանում էր, այնքան աւելանում էր Գեղամի եւ միւս ընկերների երեսի պայծառութիւնը: Նշանակում է Դաշնակցութիւնը այնքան համայք ունէր հասարակութեան աչքին:

Aram webaram.com

Երբ արդէն սենեակը լեցուել էր խեղդուելու աստիճան, դուռը բացուեց եւ ներս մտաւ կարճահասակ, թիկնեղ, դէմքի խոշոր գծերով մի մարդ. գլխին դունաւոր փաթթոցով կապուած ֆէս, ձեռքին՝ հաստ ու ամուր գաւազան:

— Տիկին Տալէրը, Քղիի կանանց ներկայացուցիչը, յայտարարեց Գեղամը ժպիտով:

Կանանց ներկայացուցի՞չ: Տիկի՞ն: Ո՞նց թէ...

Եւ իրօք, պարոն տիկինը խօսք առաւ ու մի սրամիտ, ամենքին խայթող ու խնդացնող ճառով ողջունեց նուաստս, Քղիի իգական սեռի կողմից: Ու նստելով տղամարդկանց չարքին՝ վառեց իրեն հրամցուած ծխախոտը:

Ընդունելութիւնը դուրս եկաւ փառաւոր: Մինչեւ կէս գիշեր խօսեցինք աշխարհի բաների մասին: Եւ Տալէրը գրեթէ միշտ ուշադրութեան կենտրոնում էր, իր կծու ու սուր դիտողութիւններով:

Երբ յաջորդ առաւօտ զարթնեցի, բակը արդէն լեցուած էր արեգակի կուրացնող ճառագայթներով:

Սենեակի դուռը կամաց բացուեց եւ վախվխելով ներս մտաւ 6–7 տարեկան մի աղջիկ, փոքրիկ մատուցարանը ձեռքին: Նախաճաշս էր — հաց, պանիր, թէյ: Տանտէրս արդէն չուկայ էր գնացել. կանայք չէին կարող օտար տղամարդու սենեակը մտնել. պզտիկին էր մնացել ինձ հիւրասիրելը: Սիրուն, կայտառ երեխայ էր. շուտով բարեկամացանք: Եւ երբ հեռանում էի Քղիից, միակ լացով ճանապարհ դնողը եղաւ: Զգիտեմ՝ ե՞ս էի պատճառը նրա արցունքի, թէ իմ նուիրած անուշեղէնները: Նոյնիսկ երեխայի հոգին անբացատրելի է...

Շուտով հաւաքուեցին ընկերները, եւ ունեցանք կոմիտէական առաջին ժողովը: Ընկերները ծանօթացրին ինձ Քղիի վիճակին. ես հաղորդեցի նրանց դրսի նորութիւնները: Ապա մշակեցինք իմ աշխատանքի ծրագիրը:

Ամէն բան լաւ էր, բայց սա Կոզիկեանը բաւական պղտորել էր մթնոլորտը: Քաշելիք ունէի: Անհրաժեշտ էր ցրել նրա թողած տպաւորութիւնը:

Քղին այդ օրերին ապրում էր հացի ծանր տագնապ: Սովի վախ կար, եւ Կոզիկեանը, հնչակեան ծանօթ ամբոխավարութեամբ, ժողովների մէջ խոստացել էր կազմակերպել ցորենի ներածում բալուից: Ահագին խոստումներ էր տուել, եւ այդ ձեւով իր կողմը գրաւել պարզամիտ մարդկանց: Հարկաւոր էր կամ մերկացնել նրա

Aram webaram.com

խոստումների անհիմն լինելը, կամ Դաշնակցութեան կողմից էլ կազմակերպել հացի ներածում Բալուից:

Գղեցիներին յուզում էր եւ մի ուրիշ կարեւոր խնդիր — ինքնապաշտպանութեան գործը: Շրջակայ աւազակաբարոյ քիւրդերը շատ էին նեղում: Ճանապարհները ապահով չէին: Վախ կար նոյն իսկ, որ գիւղերի վրայ էլ յարձակուեն: Մանաւանդ, կենտրոնից հեռու ընկած գիւղերը իրենց զգում էին խիստ անապահով եւ պաշտպանութիւն էին պահանջում: Ամենքը իրենց հայեացքը ուղղել էին դէպի Դաշնակցութիւնը:

Պակաս կարեւոր խնդիր չէր եւ արտագաղթի ցաւը: Գղին դատարկւում էր: Երիտասարդութիւնը գլուխը առած՝ Ամերիկա էր պանդխտում: Ամերիկայից եկած դոլարներն ու լուսանկարները շլացրել էին ամենքին: Մանաւանդ Գղիում էլ աշխատանք եւ ապրուստի միջոց դժուարութեամբ էր ճարւում: Հողը քիչ էր, առեւտուրը՝ թոյլ: Դաշնակցութիւնը պէտք է մտածէր եւ այս ցաւի մասին:

Հապա կրթական գո՞րծը: Դպրոցների քանակի կողմից Գղին պակասութիւն չատ չունէր: Ամերիկայի հայրենակցական միութիւնների աջակցութեամբ համարեա ամէն գիւղ ունէր իր ուսումնարանը: Կենտրոնում կար եւ Միացեալ վարժարանը Մ. Մինասեանի տեսչութեամբ: Բայց կրթական ծրագրի բարեկարգման եւ ձեռնհաս ուսուցիչների մեծ կարիք կար: Խիստ դժգոհ էին եւ տեսուչ Մինասեանից: Այս էլ մտնում էր Դաշնակցութեան անելիքների մէջ: Մերոնք աշխատում էին եւ արդէն յաջողել էին որակեալ ուսուցիչներ հրաւիրել Գղիի դպրոցների համար, եւ արդէն այնտեղ պաշտօնավարում էին Անդրանիկ Եսայեանը, Մշեցի Մմբատը եւ ուրիշներ:

Վերջապէս, մերոնց մէջ ցանկութիւն կար վերջ դնելու հնչակ-դաշնակցական պայքարին, որ խռովում էր շրջանի կեանքը: Մեր ընկերներից չատերը համակուած էին հաշտարար ոգով եւ այս հարցն էլ դրին օրակարգի վրայ:

Կային եւ ուրիշ խնդիրներ, որոնք չեն մնացել յիշողութեանս մէջ: Մի շարք նիստերում, որոնց հրաւիրեցինք եւ տեղի ձեռնհաս ընկերներից մի քանիսին, բոլոր հարցերի մասին ընդունուեցին բանաձեւեր: Որոշուեց նաեւ որ ես երկար չմնամ կենտրոնում եւ մի երկու հրապարակային ժողովներից ու դասախօսութիւններից յետոյ անցնեմ գիւղերը: Այդպէս էլ եղաւ:

Aram webaram.com

Իմ առաջին քայլը, բնականաբար, պէտք է լինէին փոխայցելութիւնները։ Կարգը այդպէս էր։ Ես հերթով այցելեցի առաջնորդին եւ միւս երեւելի անձանց, որոնք եկել էին բարի գալուստի։ Նոր Գղի հասել եւ առաջնորդարանում իջեւանել էր եւ Կարինի առաջնորդ Սմբատ եպ. Սաաակէթեանը, որի հետ բարեկամ էինք։ Ի պատիւ Թանկապին հիւրերի Քաջբերունի Էֆէնդիի տանը տրուեց հանդիսաւոր ընթրիք, որին հրաւիրուած էին քաղաքի համարեա բոլոր աչքի ընկնող մարդիկ։ Արժէր այդ հոմերոսեան խրախճանքը նկարագրել հանգամանօրէն. վախենում եմ, սակայն, որ դրիչը անզօր կը լինի։ Միայն ճաշացուցա՛կը — 18–20 տեսակ կերակուր էր պատրաստուած եւ ամաններըը իրար էին յաջորդում անվերջ։ Ընթրիքի մեխը խորոված մի ահագին դառ էր, որ առանց կտրուելու բերուեց սեղան, հսկայ սինիի վրայ։ «Սեղանը» այստեղ պէտք է հասկանալ բանաստեղծական իմաստով. իրապէս մենք նստած էինք ծալապատիկ, յատակին, անհաշիւ ուտելիքներով բեռնաւորուած սփռոցի առջեւ։ Իսկապէս հէքեաթի հսկաների ճաշ էր, որի առջեւ մեր խեղճ ստամոքսները յուսահատօրէն տեղի էին տալիս։ Եւ միայն քանակը չէր ուշագրաւը, հրաշալի էր եւ խոհարարական արուեստը։ Սմբատ Սրբազանը կարին վերադարձին էլ դեռ յիշում էր այդ պատուական ընթրիքը։

Չեմ յիշում ո՞ր օրը, այցելեցի մի երկու հնչակեան երեւելիների՝ համերաշխութեան հող պատրաստելու նպատակով։ Մէկի մօտ հանդիպում ունեցանք Կոզիկեանի հետ, որին ես ծանօթ էի դեռ Կովկասից, բայց Կարինում ընդհարուել էինք եւ չէինք խօսում իրար հետ։ Կովկասում նա թունդ սոցիալ-դէմոկրատ եւ հակա-հնչակեան էր. այժմ շրջում էր իբրեւ հնչակեան գործիչ։ Պարզեցի մեր տեսակէտը համերաշխութեան եւ ներքին վէճերին վերջ տալու մասին։ Ուրախութեամբ ընդունեցին, իմ բոլոր առաջարկներին հաւանութիւն տուին, բայց իրենց առաջին իսկ հրապարակային ժողովում Կոզիկեանը այնպիսի լուտանք թափեց Դաշնակցութեան գլխին, այն ձեւով արտայայտուեց, որ համերաշխութիւն չէ՝ մարդկային յարաբերութիւն էլ անհնար դարձաւ։

Հետաքրքրական էր այն ժամանակուայ բարքերի տեսակէտից եւ Կոզիկեանի հրաւիրած հասարակական մէկ ժողովը։ Գալրոցի մեծ դասարաններից մէկում հաւաքուած էին 50ի չափ գործի մարդիկ։ Օրակարգի հարցն էր ցորենի ներածման կազմակերպումը Բալուից։ Ես էլ ներկայ էի մի քանի ընկերների հետ, թէեւ մեզ հրաւէր չէր ուղարկուած։ Կոզիկեանը բանալով ժողովը՝ աւելի քան մէկ ժամ

Aram webaram.com

ճառեց... տնտեսական մատերիալիզմի, մարքսիզմի մասին: Մարքսի «Կապիտալ»ից վկայութիւններ բերեց, Հնչակեան կուսակցութեան պատմականը արաւ, գերմանական սոցիալ-դէմոկրատիայի մասին խօսեց, եւ այդ բոլորը նրա համար, որ ապացուցանէ, թէ ժողովուրդը հաւատ պէտք է ընծայէ Հնչակեան կուսակցութեան ձեռնարկին՝ ցորենի մատակարարման գործում: Այս հո իմ «Ֆրանսական սինդիկալիզմ»ի վրայ էլ լեմոն կը քամէր...

Ես չիմացայ, թէ ինչ արդիւնք ունեցաւ Կոզիկեանի ձեռնարկը, բայց մեր ընկերների չատերը լուրջ անհանգստութիւն էին ցոյց տալիս, թէ՝ ժողովուրդը կ'երթայ Հնչակեանների յետեւից, քանի որ նրանք հաց են բերում սովի ենթակայ գաւառին: կարծեմ, այդ ձեռնարկն էլ ունեցաւ նոյն հետեւանքը, ինչ որ հնչակեան բոլոր նախաձեռնութիւնները...:



ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԵԱՆ

Այդ օրերին էր, որ քիւրդ աւազակները վիրաւորել էին մի հնչակեան երիտասարդ: Ամէն կողմ տարածուել էր, թէ Դաշնակցականն է ր ն էին վիրաւորել: Վաղուցուայ դէպք է, բայց, որքան յիշում եմ, Կոզիկեանն էլ ձեռքի տակից ոյժ էր տալիս այդ լուրի տարածման: Մեր ընկերները չափազանց վրդովուած՝ պնդում էին, որ պաշտօնական պահանջ դրուի Հնչակեան կուսակցութեան՝ կամ հաստատել, կամ հերքել այդ զրպարտութիւնը:

Վիրաւոր երիտասարդին բերել էին քաղաք՝ բժշկելու: Ես էլ գնացի նրա մօտ այցելութեան: Իմ բնակած տնից հեռու չէր: Ճատակին, անկողնի վրայ պառկած էր մի քաջակազմ, համակրելի տր-

Aram webaram.com

տաքինով տղամարդ: Տիգրան էր անունը: Խեղճի կինը՝ երիտասարդ ու չնորհալի, անճաշակ տուների պէս, անկողնի մօտից չէր հեռանում:

Պատմեց գլխին եկածը: Ճանապարհին յարձակուել էին քրդերը: Ինքը մօտը դէնք չէր ունեցել: Թշնամու գնդակներից մէկը մտել էր ազդրը եւ դուրս չէր եկել: Հասարակ վիրաբուժական գործողութիւն եւ անշուշտ, փրկուած կը լինէր, բայց ո՞վ պիտի անէր. որտեղի՞ց վիրաբոյժ գտնել Քղիում, ուր, կարծեմ, հասարակ մի բժիշկ էլ գոյութիւն չունէր: Իսկ կարին տանելը անհնար էր. ոտքը արդէն սկսել էր ուռել եւ անտանելի ցաւ էր պատճառում:

Խեղճ Տիգրանը այլեւս անկողնից չելաւ: Ես գիւղերն էի շրջում, երբ լսեցի թէ մեռել էր: Իմ այցելութիւնը վիրաւորին, վերջ տուեց Դաշնակցութեան դէմ տարածուող ամբաստանութեան:

III. ՔՂԻԻ ԳԻՒՂԵՐՈՒՄ

Քաղաքում ես, համեմատաբար, երկար չմնացի: Մի քանի հրապարակային ժողով, դասախօսութիւններ, ընկերական հաւաքոյթներ, զբօսանք դէպի Քարական ձորը, դէպի Օրմանեանի քարը, որտեղից գեղեցիկ տեսարան է բացւում, այցելութիւններ, տեսակցութիւններ, հացկերոյթ — եւ Գեղամի հետ դուրս եկանք գիւղերը: Պէտք չկայ ասելու, որ մեր հրապարակային ժողովին ամբողջ Քղին ներկայ էր. դպրոցի ներսը, դուրսը, հարեւան տանիքները՝ ողջ բռնուած էին լինում հետաքրքիր բազմութեամբ: Հարկ չկայ նկարագրելու եւ ընկերների ուրախութիւնը. Կոզիկեանը պարտուած էր բոլոր ճակատների վրայ եւ վերջնականապէս:

Ջով ու լուսաշող առաւօտ էր, երբ Գեղամի հետ մեր ձիերը ուղղեցինք դէպի գիւղերը: Ոլորապտոյտ, զիգզագ ճանապարհով իջանք ձորը, անցանք կամուրջը, որի տակից կատաղօրէն շառաչում էր Քղիի գետը, եւ, առանց որեւէ տեղ կանգնելու, սկսեցինք բարձրանալ դէպի Մերմակ գիւղը:

Հարկ կա՞յ նկարագրելու ճանապարհի գեղեցկութիւնը. բնութիւնը իր՛նչ սքանչելիքներ էր շռայլել ամէն կողմ: Քղեցիները, առանց նկարագրելու էլ, կը հասկանան ինձ, իսկ դուրսինները, նկարագրես–չնկարագրես, միեւնոյնն է, բաւարար պատկերացում չեն ունենայ:

Մերմակի վերելքը անցնում է խիտ ու հանդարտ անտառներով: Մերթ ընդ մերթ հանդիպում են փոքրիկ բացատաններ, որ-

Aram webaram.com

տեղից բացում են չքեղ տեսարաններ դէպի հեռուները — լեռներ ու ձորեր, լեռներ ու ձորեր անվերջ, կարծես ալեծածան ովկիանոսի տարերքը լինի: Ամէն ինչ, սակայն, ծածկուած է ակնախտիղ պայծառ կանաչով, մեծ մասամբ, ցածլիկ թփեր — քղեցիների նշանաւոր դաղերը, որ ծառայում է անասունների կերի, ձմեռուայ երկար օրերին:

Ծերմակում երկար չմնացինք: Աչխատանքի օր էր. ժողովուրդը դիւղից դուրս էր. հրապարակային ժողով կարելի չէր դումարել. երեկոյեան էլ պէտք է լինէինք Թեմբանում: Մի քանի ժամուայ կարճ ու մտերմիկ տեսակցութիւն ընկերների հետ, զրոյց ամենքիս հետաքրքրող խնդիրների մասին — այս է մնացել Ծերմակից իմ յիշողութեան մէջ: Մէկ էլ դիւղի քահանայի այնքան համակրելի դէմքն ու ձայնը: կարծես աչքիս առջեւն է. ձեռքի մեղմ չարժումներով չոյում էր մօրուքը ու կրկնում անոյշ ժպիտով. «Այս անզգամներուն դէմ բան մը խորհելու է»... Խօսքը աւազակների մասին էր: Տէրտէրը համոզուած ջատագով էր ինքնապաշտպանութեան, որ Դաշնակցութեան գլխաւոր պարտականութիւնն էր համարում: Որպէսզի աւազակները սանձուէին, կարեւոր էր ոյժ ցոյց տալ: Իսկ ոյժ ցոյց տալու համար պէտք էր Հայ ժողովուրդն էլ լաւ զինուէր: Ամերիկայի մեր երիտասարդութիւնը ինքնապաշտպանութեան դործը պէտք է համարէ օրուայ դործ: Թէ չէ Քղիի ապագան... խէրը տես:

Այս այն քահանան էր, Տէր Աբիսաակէս Ղուկասեան, որ մի քանի տարի վերջը, Մեծ Եղեռնի զարհուրելի օրերին, հերոսի մահով պիտի մեռնէր Ծերմակի կամուրջին վրայ:

Զգիտեմ ինչո՞ւ, Ծերմակից էլքը շատ տխուր անցաւ: Գեղամի ձին միշտ փռնչում ու սայթաքում էր, որից Գեղամը սաստիկ ջղայնանում էր: Ես եւս մտախոհ էի: Բնութիւնն էլ, արեգակի վերջալոյսի ճառագայթների տակ, այնպէս տպաւորիչ էր, թախծով համակող...

Երեւի, Ծերմակի թողած ազդեցութեան տակ էր, որ երկար ժամանակ մտքիցս դուրս չէր գալիս պանդխտութեան դնացող Ծերմակցու ապրումները արտայայտող այս ոտանաւորը՝ պարզունակ, ինչպէս ինքը Ծերմակի մթնոլորտը.

Լեռները ամբողջ ծածկուեցան ձիւնով,
Փխրուն ու ճերմակ.
Աշնան առտու մը սրտի հծծիւնով
Ես թողի Ծերմակ —

Aram webaram.com

Ծերմակը սիրուն,
Շեխ, զարդարուն —
Ու ճամբայ ինկայ
Դէպ՝ Ամերիկա:

Թեմրանի դաշտը մշուշներ հագած՝
Կը նիրհէր անյոյզ: Արեւ չէր ծագած.
Միայն Սուրբ Լոյսը կէրոնի պէս վառ՝
Շուրջը կը դիտէր աչքերով պայծառ...

Ու վերջին անգամ նայեցայ տխուր՝
Մեր սէգ Քղիին՝ սրտիս սեւ մրմուռ.
Ահ, մնաս բարով, քաղցր հայրենիք —
Խորխորատ ձորեր, կապուտակ երկինք.
Գագաթներ հպարտ,

Անտառներ հանդարտ,
Գետերու կարկաչ,
Աղբիւրի հառաչ,
Ծղիկ ու տերեւ:
Դուք, մնաք բարեւ, դուք, մնաք բարեւ...

Քանի քանի ծերմակցիներ, եւ ինչո՞ւ միայն ծերմակցիներ, հազար ու հազար քղեցի երիտասարդներ սրտի հծծիւնով թողին իրենց սէգ Քղին եւ հեռացան օտարութիւն, այլեւս երբեք չվերադառնալու համար: Ներանցից չատերը այժմ չկան: Շատերին գլուխը արդէն ճերմակ է պատել եւ հոգու ներսը՝ աչուն ու թախիծ: Բայց Քղիի զեղեցիկ լեռների կարօտը չեմ կարծում թէ մեռած լինի նրանց մէջ:

Իրար յետեւից այցելեցինք Քղիի գրեթէ բոլոր գիւղերը: Թեմրանում նորից մեզ հիւրասիրեց Պատուելի Մելքոնեանը: Ալբումներով բոլորովին հակապատկերը Ծերմակի Տէր Արիստակէսի: Ծերմակցին չատ էր աշխարհիկ, թեմրանցու հոգում երկրի հետ տիրող էր եւ երկինքը: Նա էլ էր խօսում երկրաւոր գործերի մասին, բայց ինչ որ անկրկնելի չեշտով, որ առանձին գոյն էր տալիս նրա մտքին: Մի տեսակ, կարծես, դաշտեցու հոգեբանութիւն:

Եւ արդէն թեմրանցին դաշտեցի է, համեմատած, օրինակ, խուփսեցու կամ չանախչեցու հետ: Մինչ առաջինները մեղմ, կլորթ ձեւերով ու քաղքցու հովերով դիւղացիներ են, վերջիններս, յոխորտ

Aram webaram.com

ու կռուազան, աւելի լեռնականի տպաւորութիւն են թողնում. սա-
սունցի եւ դաշտաբնակ տաբօնցի: Զգիտեմ, դուցէ այս համեմատու-
թիւնը սխալ է. այն ժամանակուայ իմ տպաւորութիւնն է այդ:

Եւ մեր ժողովներն ու հանդիպումներն էլ հաստատում են այս տպաւորութիւնը: Թեմրանի հրապարակային ժողովը անցաւ բոլորո-վին խաղաղ եւ կարգ ու կանոնով: Ոչ մի ընդմիջում, կամ խանգա-բելու փորձ, թէեւ այստեղ էլ կային հնչակեաններ, որոնք առանձին հիմք չունէին ինձ յարձակելու:

Խուփսում արդէն ժողովականները բաւական բուռն էին, եւ բազմութիւնը, որ բերնէ բերան լեցրել էր դպրոցի սրահը, աղմկոտ նշաններով էր արտայայտում իր զգացումները, այնպէս որ մեր խեղճ վարդապետը հազիւ կարողանում էր դասել յաճախ պոռթկա-ցող եռանդը:

Ի դէպ՝ ինչ սքանչելի տիպ էր այդ մեր վարդապետը (իսկա-կան անունը Արամ Թորոսեան, Աւետիքեան), որ նոր էր վերա-դարձել Ամերիկայից, ուր Ուսարի մեր լաւագոյն ընկերներից էր: Աչքի տկարութիւն ունէր. դիշերները լաւ չէր տեսնում եւ նեղւում էր շատ: Բայց ինչքան հաւատ, ինչ խանդավառութիւն, դաշնակցա-կան ինչ անսահման եռանդ կար մէջը: Խուփսի մեր կազմակերպու-թեան հոգին էր: Հեղինակութիւն ու կշիռ ունէր նաեւ քաղաքում, ուր գալիս էր կարեւոր խորհրդակցութիւններին մասնակցելու:

Հրապարակային ժողովները բոլոր դիւղերում անում էին կամ դպրոցներում եւ կամ եկեղեցիներում: «Բաց ու դոց»ի խնդիր չէր հանւում ոչ մի տեղ: Ի՞նչ բաց ու դոց Գղիի լեռներում... Բայց Զա-նախչիում սոցիալ-դէմոկրատ մարքսիստ Հնչակեանները խնդիր հա-նեցին:

Արդէն առաջ էլ մեզ նախապատրաստում էին: Զանախչիում անպատճառ օգին կը սարքեն: Զանախչին Գղիի Հնչակեանների բոյնն էր. կարելի՞ բան էր, որ մի դաշնակցական գործիչ դար եւ ազատ-համարձակ խօսէր, այն էլ եկեղեցում:

Զանախչիի մեր ընկերները յայտարարել էին, որ հրապարա-կային ժողովը պիտի լինի եկեղեցում: Հնչակեանների պահանջով ոչ միայն եկեղեցին փակուեց մեր առջեւ, այլեւ դպրոցի բանալիները էլ «կորան»: Ուրեմն, ոչ եկեղեցում եւ ոչ էլ դպրոցում ժողով չպի-տի կարողանայինք գումարել: Կարելի՞ էր երեւակայել մեր ընկեր-ների զայրոյթը: Ես համոզում էի նրանց խնդիր չհանել եւ հրապա-րակային ժողովը անել բաց երկնքի տակ. աւելի մեծ բազմութիւն կ'ունենանք: Բայց մարսուելի՞ք բան էր Հնչակեանների արածը...

Aram webaram.com

Ու սկսուեց ահագին իրարանցում. վէճ, հայհոյանք, աղմուկ: Այսօրուայ պէս պատկերը աչքիս առջեւ է. գիւղի ամբողջ ժողովուրդը հաւաքուած է գիւղի ծայրին: Կազմուել է երկու բանակ. մի կողմ Հնչակեանները, միւս կողմ՝ Դաշնակցականները. մէջտեղը՝ պարապ՝ կալ: Շուրջը, տանիքները բռնուած են չէզոք բազմութեամբ, կանանցով ու երեխաներով: Եւ երկու բանակները, կարմրըած դէմքերով, ցասումը աչքերին, աղմուկ-ժխորով, որքան որ կոկորդի լարերը զօրում էին, գանչում էին, հայհոյում, սպառնում, բռունցք ճօճում օդի մէջ, մերթ յարձակւում էին իրար վրայ, մերթ յետ քաշւում: Իմ բոլոր ջանքերը հանգստացնելու եւ կռուին վերջ տալու՝ անցան ապարդիւն: Ընկերները համարեա ուժով ինձ հեռացրին պատերազմի դաշտից, իսկ աղմուկն ու հայհոյանքը դեռ չարունակուեց բաւական ժամանակ:

Ճիշդն ասած ,ես շատ էի մտահոգ, որ լուրջ կռիւ կը պատահի եւ արիւն կը հոսի: Այդ էր պակաս, որ ինչ որ մի ժողովի համար մեւնոյն գիւղի բնակիչները միմեանց արիւն թափեն: Եւ բաւական հանգստացայ, երբ աղմուկը կամաց-կամաց հանդարտուեց, եւ ընկերները լուր բերին, թէ ժողովը պէտք է տեղի ունենայ դպրոցում: Կռուող կողմերը Հայոց բառարանի բոլոր բառերը սպառելուց եւ ըեւակայելի բոլոր սպառնալիքներն անելուց յետոյ, իրենց պարտականութիւնը կատարած մարդկանց դիտակցութեամբ, տեղի էին տուել. կալի չէզոք գօտին չէր խանգարուել բնաւ...

Ցետոյ ինձ համար պարզուեց, որ չանախչեցի հնչակեանները վրէժ էին լուծում Կոզիկեանի դէմքին կարինում մեր ընկերների կողմից խաղացած խաղերի համար, Արծնեան դպրոցի սրահում:

Չանախչիից յետոյ Քարբոյի ժողովը անցաւ պատրիարքական պատարագի հանդիսաւորութեամբ. ո՛չ մի անհարթութիւն: Ժողովից առաջ երիտասարդ քահանան ժամ ասաց: Ինձ առօք-փառօք առաջնորդեցին եկեղեցու դասը: Ամբողջ գիւղը մեծով-պզտիկով լեցուած էր եկեղեցի: Քահանայի սրտառուչ քարոզից յետոյ, վարդապետը քաշեցին, եւ տեղական կոմիտէի ներկայացուցիչը խօսքը տուեց ինձ...

Հիմա էլ աչքիս առջեւ է մի պառաւ կնոջ պատկերը: Կանգնած մի կողմ, սիւնի տակ՝ յափշտակուած նայում էր բերանիս: Եւ երբ ես ուժեղացնում էի ձայնս, կամ առանձնապէս շեշտում էի որեւէ բառ, աչքերը երկիւղածութեամբ վեր էր բարձրացնում ու երեսը խաչակնքում՝ կրկնելով արագ.

— Մեղա՛յ քեզ, Աստուած, մեղա՛յ քեզ, Աստուած...

Aram webaram.com

Ժողովից յետոյ, քահանան ներկայացրեց նրան ինձ. տղան Ամերիկա էր գնում, ուզում էր իմանալ՝ արդեօք բան դիտե՞մ որդո՞ւ մասին....

Ինչքա՛ն այդպիսի մայրիկներ կային, որոնց զաւակները Ամերիկայում էին, եւ իրենց մայրական սիրտը տոչորւում էր կարօտի կսկիծից: Ինչքա՛ն լուռ ցաւեր կային այդ հէգ մայրերի հոգում եւ որքա՛ն արցունք՝ ցամքած աչքերում:

IV. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿ

Դեռ շատ կարելի է խօսել Ղրիի մասին — Ղրիի բնութեան, ժողովրդի նիստ ու կացի, հանրային-կրթական ձեռնարկների, շարժումների, տնտեսական դրութեան: Ես ոչինչ չդրեցի եւ կառավարութեան մասին, թէեւ այցելեցի եւ շատ սիրալիր ընդունելութիւն գտայ խորամանկ զաւառապետի մօտ: Ոչինչ չդրեցի Ամերիկայի քղեցիների կատարած դերի մասին: Եւ շատ քիչ խօսեցի Ղրիի սքանչելի երիտասարդութեան մասին: Բայց առանց դրան էլ երկար եղաւ եւ պէտք է վերջացնել: Իրրեւ վերջին խօսք, սակայն, չեմ կարող առաջ չբերել եւ ընդհանուր վիճակը պատկերացնող մի քանի տեղեկութիւններ ու վիճակագրական թիւեր: Բարեբախտաբար, ձեռքիս տակ է Հ. Ց. Դ. Խորճորի կոմիտէի 15 էջնոց մէկ տեղեկագիրը, որ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումից մի քանի ամիս վերջ, 1908 թ. Դեկտ. 18ին, տրուել է Օսմ. Երեսփոխանական Ժողովին: Տեղեկագրի տակ ստորագրուած է՝ Ատենապետ՝ Մ. Ս. Սրապեան, Փոխ-Ատենապետ՝ Գ. Ց. Գազլիկեան:

1908ին, ըստ այդ տեղեկագրի, Ղրի գաւառի բնակիչների թիւը հաշւում էին շուրջ 60·000 հոգի — հայ, քիւրդ, թուրք: Ժողովրդի ամենէն թարմ եւ ուժեղ տարրը, շուրջ 3000 հոգի՝ 20–40 տարեկան պանդխտութեան դիմած է միշտ:

Ղրի գաւառի տնտեսութեան հիմքը կազմում էր երկրագործութիւնը: Թէեւ Ղրին լեռնային երկիր է, բայց տեղեկագրի հեղինակների կարծիքով, եթէ բոլոր մշակելի հողերը ոռոգուէին եւ երկրագործական կատարելագործուած ձեւերով մշակուէին, բաւական կը լինէին ամբողջ ազգաբնակութիւնը կերակրելու համար: Սակայն մի կողմից ջրի պակասը, միւս կողմից՝ հողի մի կարեւոր մասի երկրագործական բանկայի եւ մալիէի կողմից գրաւուած լինելը, այլեւ աշխատող ձեռքերի սակաւութեան պատճառով հողերի մեծ

Aram webaram.com

մասը մնացել էր անմշակ եւ անօգուտ ժողովրդական տնտեսութեան համար:

Մշակուած հողերն էլ սպասուած հասոյթը չէին ապահովում, որովհետեւ նախ՝ երկրագործական կենդանիները, ոչխար եւ արջառ, էղնամի ծանր տուրքին պատճառաւ, վատնուելով, պայթաներու չդոյութենէն, հիւանդութեամբ, պանդխտութեան երեսէն խնամողներու պակասութենէն եւ քիւրտերու աւարառութենէն հետզհետէ կը նուազին, որով եւ կը պակսի պարարտացումի ամենէն նախնական միջոցը, որուն միայն ծանօթ է երկրագործը:

Ապա՝ Գղիին ձմեռը Նոյեմբեր 1էն Մայիս 1 կը տեւէ, իսկ շատ անգամ կը պատահի որ Նոյեմբերէն առաջ դեռ ձիւնը արտերը չծածկած, սաստիկ ցուրտ մը տեղի ունենայ եւ աշնանացանքը վնասէ: Մինչեւ որ ձիւնները հալին եւ երկրագործը գարնանացանը աւարտէ, արդէն անձրեւներու եղանակը անցած կ'ըլլայ, որով Գղին դատապարտուած է յաճախադէպ երաշտութեան: Թէեւ անձրեւին պակասը լրացնելու համար չեն պակսիր աղբիւրներ, առուներ եւ վտակներ, բայց Գղիի մշակելի հողերուն հազիւ մէկ տասներորդը կ'ոռոգուի, իննը տասներորդը անջրդի է:

Գղիի արմտիքը չի բաւեր իր ժողովուրդին, եւ պակասը կը լեցուի Բալուէն ու Դերջանէն ներածուած արմտիքով. այդ ալ տարուան մէջ քանի մ'ամիս միայն կարելի է, վասնզի ձմեռուան 7 ամիսներուն մէջ կը դադրին ջորիի եւ իշու երթեւեկութիւնը:

Ի միջի այլոց ,ասենք, որ Գղին անիւաւոր հաղորդակցութեան մասին դաղափար չունի: Ադամ–Եւայից սկսած մինչեւ այսօր Գղիի լեռներն ու ձորերը կառքի երես չեն տեսած: Ձի, ջորի, էշ ու եզ — ահա Գղիի օթոմոբիլն ու սաւառնակը:

Երկրագործների զբաղումի մէկ մասն էր համարւում եւ ձրէղի եւ քեթրէի հաւաքումը: Այս նիւթերով Գղին հարուստ է եւ որոշ քանակութեամբ արտահանում էր դրսի չուկաները:

Նիւթական չօշափելի օգուտ չէին տալիս եւ հարուստ անտառները, որոնք պահապանութեան չդոյութեան հետեւանքով, անխընայ փչացում եւ երթալով պակասում էին: Կառավարութիւնը մերթ ընդ մերթ նշանակում էր օրման մէմուրիներ, որոնք սակայն աստպէս երեւում եւ անցնում էին, առանց ծառերի կոտորածի առաջն առնելու: Անտառները օգտագործւում էին տեղական չինարարութեան, վառելիքի եւ ոչխարների ուտելիքի համար: Անտառները անուանապէս պետական սեփականութիւն էին. փաստօրէն խո–

Aram webaram.com

չոր մասը դառնում էր ազդեցիկ բէյերի եւ աղաների ձեռքը:

Քղիի ժողովրդական տնտեսութեան մէջ աւելի աննշան տեղ էին գրաւում հանքանիւթերը, որոնցից յայտնի էին Սերկեւիլ դիւղի մօտի աղը, Խորդուի եւ Կազի նահիէնների կաւիճը, Սաղաճորի, Խաչադուրի եւ Մուսրումի հանքածուխը, Գասապայի մօտի երկաթը, որ շահագործւում էր հարիւր տարի առաջ: Անշուշտ, Քղիի լեռների ծոցում կան եւ ուրիշ հանքեր, որոնց յայտնագործման համար որեւէ աշխատանք չէր կատարուած:

Ցեղամնաց վիճակում էին եւ Քղիի արհեստները: Իրրեւ արհեստաւոր կային մի քանի դերձակ, մի քանի կօշկակար, երկաթագործ, ատաղձագործ, թիթեղագործ, կլայեկող, եւայլն: Բայց պէտք է աւելցնել, որ Սահմանադրութիւնից յետոյ այս բնագաւառում կատարուեց զգալի յառաջդիմութիւն:

Նոյնը պէտք է ասել եւ վաճառականութեան մասին: Տնտեսական այս ճիւղի յետամնացութեան գլխաւոր պատճառներն էին վարկի չգոյութիւնը, փոստի եւ ճանապարհների անկանոնութիւնը: Սահմանադրութիւնից առաջ, տասը տարուայ ընթացքում 22·000 ռսկի էր ծախսուել Կարինից Քղի ճանապարհ անցկացնելու համար, բայց արդիւնքը եղել էր ողորմելի: Ձիով եւ էշով փոխադրուող ապրանքը, բնականաբար, սուղ էր նստում եւ ժողովրդին, յաճախ, անմատչելի էր: Փոստային հաղորդակցութիւնը չէր կարգաւորուած. ամեռ ժամանակ Կարինից Քղի փոստը հասնում էր 15–20 օրից: Էլ չենք խօսում ներքին անկանոնութիւնների մասին. նամակների եւ դրամի գողցուելը սովորական երեւոյթ էր: Միայն 1905–8 տարիների ընթացքին Ամերիկայից ուղարկուած 4000 ռսկիի չէքեր կորել էին փոստախանէում: Քղիում չկար ոչ մէկ հաստիք դրամատուն կամ վարկային ուրիշ հիմնարկութիւն. ասպարէզը մնացել էր վաշխառուներին:

Տեղեկագրում Քղիի բնակչութեան վճարած տարեկան տուրքը հաշուած էր հետեւեալ գումարներով.

Տասնորդի տուրք	1·396·293	դրուշ
Ոչխարի տուրք	488·498	»
Ձիննուորական տուրք	425·374	»
Հողային եւ կալուածական տուրք	262·910	»
Գումար՝	2·573·075	»

Aram webaram.com

Այս գումարի դիմաց կառավարութիւնը գաւառի վրայ հետեւեալ ծախսն էր անում.

Տախիլիէի պաշտօնէից ամսական՝ տարեկան	36·000	ղրուշ
Մալիէի »	16·920	»
Շերիէի »	21·756	»
Փոլիսի »	12·000	»
Թափուի »	5·400	»
Ատիլիէի »	73·920	»
Թէզախյէի »	14·400	»
Մէարիֆի 4 ամս. (8 ամս. բանկայից էին առնում)	6·000	»
Րէսիֆ Թաբուրին ամսական եւ ուտեստ	156·000	»
Համիտէի ալային ամսական եւ ուտեստ	60·000	»
Ժանտարմային ամսական եւ ուտեստ	150·000	»
Գումար՝	552·396	»

Հասոյթին ծախսը հանելով՝ կը ստացուի 2·015·940 ղրուշ, որ ամբողջութեամբ մտցւում էր կառավարական կենտրոնական դանձարանը:

Բացի այս, ժողովուրդը վճարում էր 15–20·000 ղրուշ Ադլիէի փուլերի տուրք եւ նոյնչափ էլ Հիճազի վերաբերեալ զանազան թղթերի համար:

Այս բոլորի փոխարէն կառավարութիւնը ժողովրդին ոչ մի օգտակար բան չէր տալիս — միայն կաշառակեր պաշտօնեաներ եւ անճարժակ ոստիկանութիւն: Ֆղիի քաղաքապետարանը դոյութիւն չունենալու չափ անուանական էր. նրա տարեկան ուղղակի եւ անուղղակի ամբողջ հասոյթը 3000 ղրուշից այն կողմ չէր անցնում, որից 7–800 ղրուշ մի դրապրի եւ մի չաւուշի ռոճիկ էր վճարւում, իսկ մնացեալը գործ էր ածւում բայրամների եւ սուլթանի ծննդի ժամանակ պաշտօնական ընդունելութեանց եւ լուսավառութեան վրայ: Այդ առթիւ տեղեկագրի մէջ կարդում ենք. «Փողոցները անմաքուր, առ ի չգոյէ սպանդանոցի՝ արեան ճապաղիք հրապարակի վրայ. բժշկի, դայեակի եւ դեղարանի պակասութենէն միչտ բաւական թուով անմեղ զոհեր, կամուրջները՝ չինուելու կամ նորոգուելու կարօտ. կառավարական չէնքը քայքայուած եւ վտանգաւոր. բանտը մանաւանդ մարդկային բնակութեան բոլորովին անյարմար... Անվճար քաղաքապետ մը եւ իր ժողովականք նստելու տեղ

Aram webaram.com

մ'իակ չունենալով՝ խանութներու, սրճարաններու կամ պարտէզներու մէջ պիտի խորհրդակցէին...»:

Ի հարկէ, Սահմանադրութիւնից յետոյ, բոլոր ասպարէզներում էլ կեանքը զգալի յառաջդիմութիւն ցոյց տուեց, բայց եւ այնպէս չրջանը հիմնական դարման չտեսաւ, որի հետեւանքով արտադրիչ ուժերի աճը դանդաղեց: Եւ Բուին չարունակեց ապրել Ամերիկա պանդխտած իր զաւակների դառն քրտինքի արդիւնքով: Այն ոճրագործ ձեռքը, որ թուրք կառավարութեան անունն է կրում, Սահմանադրութիւնից յետոյ էլ բարեկարգութեան հիմնական ճիգ չարաւ՝ վերացնելու համար տիրող չարիքները. Բուին ու քղեցին չարունակեցին մնալ նախնական վիճակում, իրենց գեղեցիկ լեռների ու ձորերի գրկում, մինչեւ որ Եղեռնի փոթորիկը եկաւ ու սրբեց-տարաւ ինչ որ կար կենդանի ու մարդկային:

Ի՞նչ պէտք է անել այժմ. բաւականանա՞լ միայն կարօտի յիշատակներով, ընկճուե՞լ, յուսահատուե՞լ: Ոչ, հազար անգամ ոչ: Արտագաղթի չարիքը եղաւ նաեւ բարիք. բազմահազար քղեցիներ ողջ մնացին Ամերիկայում եւ պանդխտութեան այլ չրջաններում: Նրանց պարտքն է մնալ հոգիով արի, մարմնով առոյգ, ամուր կապած ազգային ամբողջութեան, եւ անվհատ գործել ապագայի յոյսով — վաղը նոր Բուի կերտելու համար:

Բուիի «Տարեգիրք», 1937

Aram webaram.com

ՈՋԻԼԻ ՕՐԻԷՆՏԱՑԻԱ

ՄԻՀՐԱՆ ԹԷՐԼԷՄԷԶԵԱՆԻ
սիրելի յիշատակին

Հ. Ց. Դաշնակցութեան 8րդ Ընդհանուր ժողովի ամենահետաքրքրական մասերից մէկը Ռոստոմի զեկուցումն էր Իւրոյի Հայաստանի հատուածի գործունէութեան մասին: Ռոստոմը պերճախօս չէր, յաճախ ձեռքերն էին հանում լեզուին օգնութեան, բայց նրա մօտ երկու ժամ տեւող բերանացի զեկուցումը ժողովականների կողմից լսուեց լարուած ուշադրութեամբ:

Յատկապէս ուշադրաւ էր զեկուցման այն մասը, որ վերաբերում էր հայկական նահանգների մշակութային եւ տնտեսական վերելքին Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ: Ռոստոմը վիճակագրական տուեալներով ցոյց էր տալիս, թէ քանի դպրոց էր բացուել, ինչքան դրադարան-ընթերցարաններ էին հիմնուել, որքան համագործակցականներ հաստատուել, ինչքան տոկոսով աճել էր անաստունների քանակը, ինչ բարեշրջման էր ենթարկուել մարդկային անունդի եւ հագուստի քանակն ու որակը, ինչպէս էր բարեփոխուել ժողովրդական առողջապահութիւնը, եւայլն:

Առողջապահութեան մասին խօսելիս Ռոստոմը կէս-լուրջ, կէս-կատակ, ծանրացաւ եւ սապոնի գործածութեան աճման եւ ոջիլի քանակի պակասելու վրայ: Մէկ-մէկ թուեց ոջիլի տեսակները, եւ նրանց ազդեցութիւնը մարդու մարմնի վրայ՝ «Ոջիլը, ասաց նա, մեր երկրի կուլտուրայի չափանիշն է»:

Այնուհետեւ տեղի ունեցաւ մտքերի տաք փոխանակութիւն զեկուցման առթիւ, որի ընթացքին ոջիլը կենտրոնական տեղ էր դրա-

Aram webaram.com

ւում: Երկրի զանազան մասերից եկած պատգամաւորներն էլ հաստատեցին Ռուսաստի ոչխլային տեսութիւնը: Ես կարդացի հետս բերած ամերիկեան թերթի մի կտոր. ինչ որ դիտական աշխատանոց փորձերի համար ոչխլի պէտք ունէր եւ խոստանում էր որոշ վարձատրութիւն այդ միջատը բերողին:

Տարօնի ներկայացուցիչ խմբապետ Մճօն խիստ զարմացաւ ամերիկեան թերթի յայտարարութիւնը լսելով. իր շրջանի դիւղերը առանձնապէս հարուստ էին այդ ապրանքով:

Ընդհանուր ժողովի պաշտօնական նիստերից դուրս, հանգստի ժամերը, ժողովի անդամները ընդհանրապէս անցընում էին կամ Դուրբախի սրճարանում, ժամի Դուռը, կամ Սանասարեան դպրոցի պարտիզում: Այստեղ հաւաքւում էր ղլխաւորապէս երիտասարդութիւնը: Դիմացի տների պատշգամբներից ու բաց պատուհաններից կամ տանիքների վրայ երեւում էին կարնեցի դեղեցկուհիները. ոմանց այդ տեսարաններն էլ էին հրապուրում:

Ճաճախ այստեղ էլ ծեծւում էին օրուայ հրատապ հարցերը: Եթէ չեմ սխալւում, քաղաքական հարցի քննութեան առթիւ էր, որ Սանասարեանի պարտիզում նորից մէջտեղ եկաւ Ռուսաստի ոչխլը:

Ընդհ. ժողովում բուռն վէճեր էին տեղի ունեցել քաղաքական հակումի (օրիէնտացիա) մասին՝ ռուսական օրիէնտացիա, թէ՞...

Հետաքրքրական կը լինէր Ընդհ. ժողովի արձանագրութիւնները ունենալ այսօր, որոնք, դժբախտաբար, կորած են անհետ: Ցիշողութեամբ մանրամասնութիւնները անհնար է վերարտադրել: Ընդհանուր գծերով, սակայն, կարելի է պատկերը տալ:

Ընդհանուր ժողովում բաւէ ճշդրիտ իմաստով բրիական օրիէնտացիա պաշտպանող չկար. կոյրերն անգամ կարող էին տեսնել, որ այդ անկարելիութիւն էր: Ռուբէն Տէր-Մինասեանը մեայն առաջարկեց, պատերազմի դէպքում, Թուրքերի հետ միանալով՝ կամաւորական խումբեր կազմել Ռուսների դէմ: Ամէնքը խնդացին եւ առաջարկը վերադրեցին Ռուբէնի տարօրինակութիւններին: Ռուբէնը ինքն էլ չէր կարող չտեսնել այդ մտքի անմտութիւնը: Թրքական օրիէնտացիայի ներկայացուցիչ չկար ժողովում:

Եւրոպական օրիէնտացիա էին ջատագովում գրեթէ բոլոր «եւրոպացի»ները — Ակնունի, Զարդարեան, Հանըմեան եւ ուրիշներ: Բարենորոգումների ծրագիրը այս մտածողութեան յաղթանակն էր համարւում:

Ռուսական օրիէնտացիայի ամենաբուռն պաշտպանը Համազասպ Սրուանձտեանն էր, բայց նրա մէջ աւելի սիրտն էր խօսում, քան

Aram webaram.com

միտքը: Շեչտուած, ուժեղ ռուսասէրները չկային ժողովում: Պատմական փաստ կարելի է նկատել, որ քաղաքական իմաստով հայը եղած է ռուսասէր, որովհետեւ ուրիշ անելիք չէ ունեցած:

Հետաքրքրական էր այս հարցի քննութեան առթիւ Թոմասոմի դէրքը. նա կարծես համաձայն էր բոլորի հետ: Ում ուզում էք սիրեցէք, որի օրիէնտացիային ուզում էք հետեւեցէք, միայն թէ երկիրը մնայ խաղաղ, ժողովուրդը լինի ապահով ու կուշտ եւ ոչխարը պակասի մեր աշխարհում: Նրան սարսափեցնում էր պատերազմը. «Թէ Աստուած սիրէք, մի հինգ-տասը տարի խաղաղութիւն ունենանք եւ այլեւս վախ չկայ», կրկնում էր նա յաճախ: Ներա օրիէնտացիան, եթէ կարելի է այսպէս ասել, խաղաղութեան օրիէնտացիա էր. բայց ինչպէ՞ս կարելի էր դոնել այդ կապոյտ թռչունը, ինչպէ՞ս ապահովել խաղաղութիւնը — հարցի գաղտնիքը հէնց այդտեղ էր...

Քաղաքական օրիէնտացիայի քննութիւնը, ի վերջոյ, անցաւ Սանասարեան դպրոցի պարտէզը, վանի պատմամաւոր Միհրան Թէրլէմէզեանի նախաձեռնութեամբ:

Միհրանը իմ ճեմարանական ընկերներից էր, ինձանից մէկ դասարան ցած: Դասընկեր էր եւ մտերիմ վահան Խորէնիի հետ: Շիկահեր, կարմրաթուշ, կենսուրախ տղայ էր: Ծագումով վանեցի, բայց թէ՛ բնաւորութեամբ, թէ՛ լեզուի չեշտով չափաւոր վանեցիութիւն կար մէջը: Շատ կարդացող, լրջախոհ աշակերտ էր, բայց ճեմարանում Դաշնակցութեան անդամ չէր եւ մեր յեղափոխական գործունէութեան չէր մասնակցում:

1907ին աւարտելով Գէորգեան ճեմարանը, Միհրանը շարունակեց ուսումը Գերմանիայում եւ այստեղ, վահան Խորէնիի հետ միասին, մտաւ Դաշնակցական ուսանողութեան շարքերը: Եւ փիլիսոփայութեան դոկտորի վկայականով զինուած՝ վերադարձաւ վան, նուիրուելու համար ուսուցչութեան եւ հանրային գործունէութեան: Մտաւոր լայն զարգացման եւ քաղցր բնաւորութեան տէր, կենսուրախ, գործունեայ, լրջախոհ՝ Միհրանը շուտով ընդհանուր համակրանք ձեռք բերեց հասարակութեան ու կուսակցութեան մէջ եւ սիրուեց, յատկապէս, նոր սերունդի կողմից: Եւ զարմանալի չէ, որ նրան վստահուեց ամբողջ Վասպուրականը ներկայացնելու պատիւը կուսակցութեան գերագոյն ժողովում: Ոչ Արամն ու Իշխանը, ոչ էլ Վասպուրականի երեսփոխան Ա. Վռամեանը կամ Կոմսը ներկայ էին 8րդ Ընդհ. ժողովում:

Ճեմարանից ի վեր մենք չէինք տեսնուել Միհրանի հետ եւ դրեթէ որեւէ յարաբերութիւն չէինք ունեցել, բացի մի քանի պա-

Aram webaram.com

տահական նամակներից Գերմանիայից ու Վանից: Կարինում ամբողջ ժամանակ միասին էինք, եւ նկատելի էր, որ ուսանողական տարիները իր զուր չէին անցել նրա համար: Թոստոմը առանձնապէս մտերիմ վերաբերում էր ցոյց տալիս դէպի Միհրանը եւ հէնց միայն այդ բաւական էր, որ նա կարեւոր տեղ գրաւէր ժողովում, բայց անկախ դրանից, նա չուտով դարձաւ ամէնքի սիրելին:

Քաղաքական հարցի քննութեան ժամանակ, Միհրանը ոչ մէկ խօսք չարտասանեց: Նստած էր կողքիս լուռ, բայց նկատելի կերպով չզայնացած: Երբեմն փորձում էր խօսք ուղել, բայց հէնց որ նախագահ Ակնունին իր կողմն էր նայում, մատը արագ իջեցնում էր:

Ճաշից յետոյ, երբ հաւաքուել էինք մեր տեղը Սանասարեանի պարտիզում, Միհրանը յարձակուեց Ռուբէնի վրայ.

— Դու, ասաց նա, իրաւունք չունես պաշտպանելու Թուրքական օրիէնտացիաը: Շատ ուշացեր ես: Այդ մասին պէտք է մտածէիր, երբ Յրիմեան Հայրիկը Պերլին կը ղրկէիր, երբ Եւրոպայի դուռները կը մաշէիր, երբ մոսինը առած՝ Մասուն կը բարձրանայիր, երբ Պօղոս Նուպարը Եւրոպա կ'ուղարկէիր, հիմա ո՞ր Թուրքը կը հաւատայ քեզ...

Ռուբէնը, որ անվրդով ծխում էր, փորձեց պատասխանել, բայց Միհրանը լռեցրեց.

— Սպասիր, այս մէկ: Հիմա դու, սիրելի Վահան, դարձաւ նա Մինախորեանին, դու ի՞նչ ես սպասում ռուսական օրիէնտացիայից. շատ շատ վասպուրականը կը լինի Վանակի դուբեռնիա, կամ Բարձր Հայքը կը դառնայ Էրզրումակի Օբլաստ: Դրա համար արժէ՞ ամբողջ Հայութիւնը ոտքի հանել եւ ծովերով արիւն թափել:

Այս էլ երկու:

Երրորդ, համաձայն չեմ եւ քեզ, դարձաւ նա ինձ, ի՞նչ ըսել է ինքնաօրիէնտացիա: Այդ կը նշանակէ սեփական ուժի վրայ յենուիլ ուրիշ ուժի մը դէմ: Դու ի՞նչ ուժ ունես որ ... Անգլիա՞ ես, Ամերիկա՞ ես...

Անշուշտ, բառացի կերպով ասոնք չէին Միհրանի խօսքերը, բայց իմաստը այս էր, անկասկած:

— Շատ բարի, ուրեմն ի՞նչ պէտք է անել, հարցրեց Փիլոսը, ասա, ի՞նչ է քո քաղաքական օրիէնտացիան:

Միհրանը, կարծես, յանկարծակիի եկած, մի պահ մտածեց եւ պատասխանեց.

— Չգիտեմ:

Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ:

Aram webaram.com

— Խնդրեմ, մի ծիծաղէք, վրայ բերեց Մխիթարը, ես չդիտեմ: Ինձի այնպէս կու դայ, թէ դուք ալ չդիտէք: Օրիէնտացիա կը նշանակէ երկու կողմերու համաձայնութիւն: Բաւական չէ, որ մենք օրիէնտացիա ունենանք որեւէ ուժի հանդէպ. պէտք է, որ այդ ուժն ալ դրական վերաբերում ունենայ դէպի ձեր հակումը: Դուք կ'ըսէք՝ եւրոպական օրիէնտացիա, ռուսական օրիէնտացիա, եւ այլն, բայց Եւրոպան, Ռուսիան փոխադարձ հակումն ունի՞ն դէպի մեզ: Ոչ, չունին: Ուրեմն, ի՞նչ տարբերութիւն ձեր եւ իմ ըսածի միջեւ: Բայց եթէ կ'ուզէք անպատճառ որոշ պատասխան, մեր օրիէնտացիան պէտք է ըլլայ օրիէնտացիա չունենալ:



ՄԻՀՐԱՆ ԹԷՐԼԷՄԷԶԵԱՆ

Դարձեալ ամէնքը ծիծաղեցին:

— Այո՛, օրիէնտացիա չունենալ ... հանդիստ ձգենք Թուրքն ու Ռուսը, եւ մենք մեր դործին նայինք:

— Իսկ եթէ Ռուսն ու Թուրքը մեզ հանդիստ չեն չգե՞ր, հարցուց Փիլոսը...

— Կը ձգեն, եթէ մենք միայն մեր դործով զբաղուինք:

— Բայց ի՞նչ է միայն մեր դործը:

— Զլսեցի՞ք, զարմացաւ Մխիթարը. Ռոստոմի դեկուցումը չլսեցի՞ք...

Հայաստանը օճառի պէտք ունի, հայ գիւղացին տառապում է ոջիլից...

Aram webaram.com

— Ուրեմն, ոչիլի՞ օրիէնտացիա, կատակեց Տիգրան Խաչիկեանը:

— Հա, ճիշդ այդպէս, բառը գտնուած է... մեր օրիէնտացիան պէտք է լինի ոչիլի օրիէնտացիա, մինչեւ որ հայ թերթերու մէջ ծանուցում լոյս տեսնի, թէ՝ կը փնտռուի ոչիլ՝ դիտական փորձերու համար:

Այն ժամանակ կատակ էին թուում այս խօսքերը, այսօր կարող են նկատուել կեանքի փիլիսոփայութիւն: Ոչիլի օրիէնտացիա — այդպէս չեղա՞ն մեր բոլոր օրիէնտացիաները...

Մի ուրիշ անգամ, Փիլոսի հետ վէճի բռնուելով, Միհրանը պնդում էր, որ հայի քաղաքականութիւնը պէտք է լինի քաղաքականութիւն չունենալ — ոչիլի օրիէնտացիայի նման մի բան: Նա ասում էր. մենք ի՞նչ պէտք ունէինք Բերլին երթալու, Սան Ստեֆանոյէն եաքը, երբ այլեւս ակներեւ էր, որ երկու մեծ դաշնները, Անգլիան եւ Ռուսիան, վիճակ կը ձգէին Հայաստանի պատմուճանի համար:

— Շատ բարի, հարցնում էր Փիլոսը, դո՞ւ ինչ ես ասում, ի՞նչ պէտք է լինի մեր քաղաքականութիւնը:

— Ըսի արդէն. քաղաքականութիւն չունենալ...

— Այսի՞նքն:

— Այսինքն, չլսեցի՞ր Ռոստոմի զեկուցումը. հինգ–տասը տարի խաղաղութիւն... թող մեր ժողովուրդը հաւաքուի, ամրանայ, հարստանայ, վերջը քաղաքականութեան մասին խօսինք...

— Այդ արմենականութիւն է:

— Էհ, ի՞նչ ընենք, թող արմենականութիւն ըլլայ: Արդէն իսկական արմենականը եւ իսկական դաշնակցականը նոյն բաներն են:

Ընդհանուր ժողովում մէկը չկար, որ Միհրանի պէս մտածէր: Թերեւս այդ էր պատճառը, որ նա քիչ էր արտայայտւում ժողովներում: Րեւիզիոնիզմի հոտ էր գալիս նրա մտքերից, բայց եւ այնպէս անկեղծ, հաւատացեալ դաշնակցական էր հերոսական չրջանի դաշնակցականների նկարագրով՝ ազնիւ ու պարկեշտ ինքն իրեն հետ, իր խղճի առջեւ: Իմացեալ մահով նա հանդիսացաւ դաղափարական դաշնակցականութեան դերազոյն արտայայտիչը:

*
**

Մթնոլորտը ճնշիչ էր կարինում:

Յուլիս 21, Կիրակի երեկոյ էր: Սանասարեան դպրոցի պարտիզում մեռելային խաղաղութիւն էր տիրում: Հեռու, բերդից, խուլ

Aram webaram.com

ազմուկ էր հասնում: Փլոսը, Միհրանը, Արտաշէսը, Ջնդին եւ մի քանի ուրիշ ընկերներ, նստած էինք մեր սովորական տեղը, լուռ: Սիրտ չկար խօսակցութիւնը շարունակելու: Ամէն օր միշտ միեւնոյն իրականութիւնը, «Հաւատիս»ի (հեռագրական գործ.) միեւնոյն սուտ լուրերը պատերազմի ընթացքի մասին. միշտ միեւնոյն վախերը եւ դիւղերից հասնող սահմռկեցուցիչ տեղեկութիւնները չէթաների գործած վայրագութիւնների մասին: Սիրտ չկար խօսելու, եւ ամէն մէկս խորասուզուած էինք մեր մռայլ խոհերի մէջ:

Արեւը մօտենում էր մայրամուտին: Ցանկարծ, քաղաքի զանազան կողմերից լսուեց թմբկահարութիւն եւ անորոշ ձայներ, որոնք հետզհետէ մօտենում էին մեզ: Մունետիկները ի ձայն փողոյ եւ թմբուկի չարագուշակ յայտարարութիւն էին անում ժողովուրդին. ընդհանուր զօրակոչ 20–45 տարեկան մուիճլի թէ մուիճսիզ տղամարդիկ պէտք է հինգ օրուայ մէջ արձանագրուէին: Արձանագրութիւնից խուսափողները պէտք է ենթարկուէին խիստ պատիժի:

Ինչ որ օրերից ի վեր վախով սպասում էր, իրականանում էր ահա: Օսմանեան հայրենիքը պատրաստւում էր պատերազմի: Սեւ ճիւն էր թափւում քաղաքի հայութեան գլխին: Սրտաբեկ հեռացանք Սանասարեանից ամայի փողոցներով:

Կուսակցութիւնը որոշել էր իր դիրքը պատերազմի պարագային. անվերապահ օրինապահութիւն: Ազգի կամքն էլ նոյնն էր: Ցաջորդ օր առաջնորդարան թէ կուսակցութիւն յայտարարեցին ժողովրդին, թէ դինուորութիւնը հայրենասիրական պարտականութիւն է, եւ կարինի հայերը ամենքը անխտիր փութացին արձանագրուել: Արհեստանոցները եւ մանր խանութները փակուեցին տէրերի դինուոր առնուելու հետեւանքով ,հայ տիկիններն ու օրիորդները, իրենց տան գործերը ձգած, բանակի համար սպիտակեղէն, դուլպաներ եւ վիրակապեր էին պատրաստում: Սկսուեցին բռնագրաւումները: Թուրքիան արագ պատերազմի էր պատրաստւում:

Ընդհանուր ժողովի պատգամաւորները չտապեցին հեռանալ իրենց վայրերը: Հակառակ Արամի ստիպողական հեռագրի անմիջապէս վերադառնալ Վան, Միհրանը մնաց Կարինում եւ առաջին դինուորագրուողներից մէկը եղաւ: Ոչ ոք չպարտադրեց նրան այդ քայլը առնելու: Նա էլ, ինչպէս միւս պատգամաւորները, կարող էր զօրակոչի յայտարարութեան առաջին օրն իսկ հեռանալ Կարինից, եւ մէկը չէր դատապարտի: Եւ Վանում, հաւանաբար, ողջ մնար: Բայց նա չհեռացաւ: Ռոստոմը զարմանքով (եւ անշուշտ, ներքին

Aram webaram.com

հիացումով) լսեց նրա որոշումը մնալ Կարինում։

Հեռագրից յետոյ եկաւ Արամի նամակը, որ իր եւ կենտր. կոմիտէի կողմից պահանջում էր վերադառնալ՝ յայտնելով նոյնպէս, որ Վանի ինքնուրացական հրամանատարութիւնը կը դիւրացնէ նրա մեկնումը։ Միհրանը մնաց անդրդուելի իր որոշման վրայ, կարծես յեղաշրջուել էր նրա ներքին աշխարհը։ Դարձել էր մտածկոտ, սակաւախօս, ինքնամփոփ. ժպիտը անհետացել էր դէմքից։ Ամէն օր տեսնում էինք, Փիլոսի տանը... Առաջուայ կենսուրախ Միհրանը անհետացել էր։

— Ի՞նչ է պատահել քեզ, տղայ, հարցնում էինք Փիլոսն ու ես։

— Ոչինչ, պատասխանում էր նա կարճ։

— Ինչպէ՞ս թէ ոչինչ, ախինքս ես դարձել, ի՞նչ է պատահել քեզ։

— Ինձ ոչինչ չի պատահել, բայց չէ՞ք տեսնում, ինչ է պատահել աշխարհին։ Պատերազմի հրէշը արագ կը մօտենայ մեր երկրին, ի՞նչ պիտի ըլլայ մեր ժողովուրդի վիճակը...

Փիլոսը, որի ուշքն ու միտքը միշտ իր Վարսենիկի հետ էր, մի օր ասաց ինձ.

— Չե՞ս կարծում, թէ Միհրանի հոգեփոխութեան ուրիշ պատճառ կայ. երեւի սրտի խնդիր ունի... Ես հասկանում եմ նրան։

Ես թէեւ խնդացի Փիլոսի խօսքի վրայ, բայց մի օր հարցրի Միհրանին.

— Մեր տղայ, ի՞նչ ես քեթդ կախել, չլինի՞ Փիլոսի կասկածը ճիշդ է. սրտի խնդի՞ր ունիս...

Միհրանը ծիծաղեց առաջուայ ծիծաղով եւ պատասխանեց.

— Փիլոսը յիմար բաներ կը մտածէ. իմ սիրտը պարապ է, ինչպէս Փիլոսի դլուխը... բայց ի՞նչ զարմանալի բան կայ, որ ես տխուր եմ։ Զարմանալին այն է, որ դուք տխուր չէք... ներողութիւն՝ քիչ տխուր էք։ Չէ՞ք տեսնում, ինչեր տեղի կ'ունենան մեր շուրջը։

— Կոյր չենք, ի հարկէ, տեսնում ենք... ինձ թւում է, որ դու պէտք է վերադառնաս Վան։ Ռոստոմի կարծիքն էլ այդ է...

— Նախ, պատասխանեց նա վրդովուած, Ռոստոմը չի կարող այդպէս կարծել։ Երկրորդ՝ յիմար բաներ կը մտածես, Վան թէ կարին՝ ի՞նչ տարբերութիւն։ Միակ տարբերութիւնը այն է, որ Վան ինձի նմաններ շատ ունի, իսկ այստեղ՝ ո՞վ կայ այս տոպրակի մէջ։ Շուտով Ռոստոմը կը հեռանայ։ Արմէն Գարոյի գալէն յետոյ (եթէ

Aram webaram.com

գայ) դուն ալ կը հեռանաս: Տեղական ուժերը դատապարտուած են անգործութեան, ո՞վ պիտի վարէ այս կարեւոր կենտրոնի գործերը՝ թէկուզ միայն իբրեւ կապ արտաքին վայրերու հետ: Շնորհիւ իմ դերմաններէն լեզուի, ես յոյս ունիմ թարգմանի պաշտօն ստանձնել դերման սպաներու մօտ եւ սպահով կերպով կատարել իմ կուսակցական պարտականութիւնը: Կարծեմ, այլեւս Փիլոն ու դու անխելք բաներ չէք մտածեր իմ մասին...

Երբ մեր այս խօսակցութեան մասին պատմեցի Ռոստոմին, նրա ճակատի խիտ կնճիռները բացուեցին, եւ նա ժպտաց գոհունակութեամբ.

— Միհրանը իսկական դաշնակցական է, ասաց նա:

Միհրանը գիտակցում էր, թէ ինչ էր սպասում իրեն կարինում: Նա գիտակցում էր նոյնպէս, թէ Վան վերադառնալով կարող էր խուսափել մահուան վտանգից: Բայց մահուան վտանգի տակ էին Կարինի բոլոր ընկերները. Փիլոսը, Ասրունին, Արտաշէս Գաւաֆեանը, Ջնդին եւ ուրիշներ. մահուան վտանգի տակ էր Կարինի ամբողջ հայութիւնը: Իբրեւ իսկական դաշնակցական, նա իրաւունք չէր համարում իր անձը միւսներից դերադաս համարել: Պարտականութեան գիտակցութիւնը եւ պատասխանատուութիւնը իր խղճի առջեւ նրան թոյլ չտուին լքելու իրեն վստահուած դիրքերը: Մի առաքինութիւն, որ, աւա՛ղ, այսօր հասկանալի չէ ոչ միայն սովորական անհատներին, այլեւ շատերին:

Ռուս-Թրքական պատերազմի յայտարարութիւնից յետոյ, Վանի ընկերները մի անգամ էլ փորձեցին Միհրանին հանել Կարինի տոպրակից: Դեռ օրինական հնարաւորութիւն կար փոխադրուելու Վան: Նրան յորդորեցին, որ իր ներկայութիւնը, իբրեւ դերմանադէտ, խիստ անհրաժեշտ է Վանում, բայց Միհրանը վճռական կերպով մերժեց. նրա ներկայութիւնը Կարինում աւելի էր անհրաժեշտ: Ռոստոմը մեկնել էր արդէն: Արմէն Գարօն չէր կարողացել Կարին գալ: Տեղական բոլոր ուժերը զէնքի տակ էին: Միհրանը բուժակի պաշտօնով հիւանդանոցում համեմատաբար աւելի ազատ ժամանակ ունէր եւ շնորհիւ բարեկամութեան դերման սպաների հետ՝ իրեն աւելի ապահով էր զգում: Հետզհետէ նրա ձեռքում կենտրոնացան կուսակցական վերին մարմնի պարտականութիւնները, իբրեւ կապ Պոլսի եւ շրջանների մարմինների միջեւ: Եւ նա անվհատ ու համառճակ, առանց ընկրկելու, ամէն վտանգ յանձն առած՝ մինչեւ վերջին կաթիլ, ցմրուր քամեց իրեն բաժին ընկած դառնութեան բաժակը եւ դարձաւ Մեծ Եղեռնի առաջին զոհերից մէկը:

Aram webaram.com

Ե՞րբ, ո՞ւր եւ ի՞նչ պայմաններում Միհրանը գտաւ իր մահը, Կարինը Թուանների գրաւելուց յետոյ այլեւայլ լուրեր հասան մեզ Միհրանի, Փիլոսի եւ միւս ընկերների նահատակութեան մասին: Ի՞նչն էր իրաւ, ի՞նչն էր սուտ — ո՞վ կարող էր հաստատել: Իրաւը այն էր միայն, որ երիտասարդ, գաղափարապաշտ, կենսուրախ, իսկական դաշնակցական Միհրան Թէրլէմեզեանը այլեւս գոյութիւն չունէր:

Սեպտ. 1958
Բիւֆթայա

Aram webaram.com

ԿԱՐՍՈՒՄ Ա. ԲԱԲԱԼԵԱՆԻ ՀԵՏ

I. ՑՏԵՍՈՒԹԻՒՆ ԷՐԶՐՈՒՄՈՒՄ

Մի կարճ հեռագիր Թեհրանից, 1959ին.

— Օգոստոս մէկին, որպէս ցաւից յանկարծամահ է եղել Հայաստանի Հանրապետութեան նախարար Արտաշէս Բաբալեանը:

Արտաշէս Բաբալեան եւ որպէս ցա՛ւ — կարելի՞ բան է...

Մի քանի օր է մխոցս չի հանդստանում: Մարմնով Լիբանանի լեռներում՝ յուշերով այնտեղ եմ, Աւետեաց Երկրում, նրանց հետ, որոնք այլեւս չկան եւ որոնց յիշատակը ապրում է իմ հոգում:

Արտաշէս Բաբալեա՛ն... Կա՛րս... Հայաստա՛ն...

1920 թուականն էր, աշնան սկիզբը: Հայոց լեռների դաշտերը ծածկուել էին ձիւնով, բայց մայրաքաղաքում դեռ տաք էր, թէեւ այգիներն ու պարտէզները սկսել էին մերկանալ կանաչ պատմուճանից: Նորից թուրքը չարժուել էր Հայաստանի վրայ՝ կարմրած ռուսի հետ միասին: Մանգաղ ու դերանդի մի կողմ ձգած, հայը նորից ձեռք էր առել հրացանը, պաշտպանելու համար իր նորազատ Հայրենիքը արիւնարբու բորենիների դէմ:

Հայրենիքը վտանգի մէջ էր, եւ ընդհանուր զօրաշարժ էր յայտարարուած: Ամէն ոք դէպի ճակատ եւ ամէն ինչ ռազմաճակատի համար...

Որոշուած էր, որ կառավարութեան անդամներն էլ ցրուեն երկրում, Հայրենիքի պաշտպանութեան աջակցելու համար: Ինձ բաժին հասաւ Կարս—Սարըղամիշ չրջանը: Ինձ հետ պիտի մեկնէր եւ նախարարի օգնական Բժ. Արտաշէս Բաբալեանը:

Արշակ Ջամալեանը գնաց Շիրակ, Աբրահամ Գիւլխանդան-

Aram webaram.com

եանը՝ Իջեւանի չրջանը. Սարգիս Աբարատեանն ու Գէորգ Ղազարեանը՝ ուրիշ գաւառները: Մայրաքաղաքում մնացին վարչապետ եւ արտաքին գործոց նախարար Բժ. Համօ Օհանջանեանը եւ զինուորական նախարար Ռուբէն Տէր-Մինասեանը:

Ժողովրդարանը արձակուրդ ստացաւ, եւ անդամների մեծ մասը նոյնպէս մեկնեց ռազմաճակատ կամ գաւառները: Այսպիսով, պետական ընդհանուր գործերի եւ պատերազմի ղեկավարութիւնը իրենց վրայ առին վարչապետն ու զինուորական նախարարը՝ վերջինս սպարապետ Զօր. Թ. Նազարբէգեանի ակնկալութեամբ:

Երկիրը արդէն իսկ Բիւրօ-կառավարութեան դիկտատորութեան տակ էր: Հիմա ստեղծւում էր դեր-դիկտատորութիւն — լաւ նշան չէր:

Ինձ համար անձնապէս լաւ չէր թւում եւ այն փաստը, որ Արտաշէս Բաբալեանի ընկերակցութեամբ պէտք է աշխատէի Կարսում: Պարզ ասեմ՝ Արտաշէսի եւ իմ ջրերը չէին հոսում միեւնոյն հունով:

Արտաշէսը բժշկութեան ուսանող էր Ժընեւում եւ պատերազմի սկիզբին Հայ Կամաւորական Ջոկերի Կարգադրիչ Մարմնի կողմից իմ հեռագրով եկել էր Կովկաս կամաւորական խմբերում ծառայելու համար, սակայն, Թիֆլիսում, երբ իմացաւ, որ Բաղաքների Միութեան մէջ աւելի են վճարում, մերժեց կամաւոր դառնալ եւ մտաւ ծառայութեան Բաղաքների Միութեան մէջ: Այդ առթիւ մտքերի բուռն փոխանակութիւն ունեցանք նրա հետ Ազգային Բիւրոյի դրասենեակում:

Ես նրան չէի սիրում եւ Հայաստանի Ժողովրդի ցրումի դրծում կատարած դերի պատճառով: Առհասարակ, կոպիտ ու միջոցների մէջ խտրութիւն չդնող մարդ էր երեւոյթով: Ես նրա հետ մտերիմ չէի: Արդար լինելու համար պէտք է ասեմ, որ նա էլ ինձ շատ չէր համակրում: Մի խօսքով, այո՛, մեր ջուրը միեւնոյն հունով չէր հոսում, եւ հիմա պէտք է միասին աշխատէինք մի շատ կարեւոր առաքելութում...

Շտապեմ աւելացնել, որ Կարսում ես ծանօթացայ բոլորովին տարբեր Արտաշէս Բաբալեանի հետ: Հայրենասէր եւ ազնիւ մարդ, անձնուէր ընկեր, չափազանցուած արտաքին կոպտութեան տակ զգայուն սիրտ. մի ծիծաղէք, զգայուն սրտի տէր էր Արտաշէս Բաբալեանը...

***

Սեպտեմբերի վերջերը, կէսօրից յետոյ, Աբովեանի վրայ, Կուլտուրայի Տան սեւ տուֆէ շէնքի դիմաց, կանգնած էր «Սագօ»

Aram webaram.com

ընկերութեան մեծ ինքնաշարժը, որ մեզ տանելու էր Կարս: Շուրջը, մտախոհ դէմքերով կանայք եւ տղամարդիկ՝ եկել էին մեզ ճանապարհ ձգելու: Երբ ես եւ Արտաշէսը մօտեցանք, ամենքը լուռ ճանապարհ բացին ինքնաշարժի դրան առջեւ: Ինչ վերջը, հասաւ եւ զինուորական նախարար Ռուբէն Տէր-Մինասեանը, որ նոյնպէս եկել էր մեզ բարի երթ մաղթելու:

Բարալեանը եւ ես շատ ռազմական տեսք չունէինք: Հերոսական պատկերը լրացնում էր իտալական Մազօ ընկերութեան ներկայացուցիչ Ստեփան Մաչիկեանը, որ մեզ հետ միասին պիտի մեկնէր Շիրակ եւ որ վախճոտի համբաւ էր վայելում Երեւանում:

Զինուորական նախարարը մեզ ճանապարհ դրեց ռազմաշունչ մի ճառով, որ վերջացաւ «Յաւետութիւն էրզրումում» բացագանչութեամբ:

Եւ ինքնաշարժը աւրաց Աբովեանն ի վեր, դէպի Քանաքեռ, դէպի Սեւան, դէպի Դիլիջան ու Ղարաքիլիսա, դէպի Շիրակ ու Կարս...



ՌՈՒԲԷՆ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ

Դեռ այսօր էլ հնչում է իմ ականջում Ռուբէնի վերջին խօսքը.
— Արտաշէս, Սիմոն, յաւետութիւն էրզրումում...

Վարանում չկար նրա խօսքի մէջ: Առանց վարանումի ծափահարում էին եւ մեզ բարի երթ մաղթելու համար եկածները: Այդ պահուն առանձին վարանում ես էլ չէի զգում իմ մէջ: Էրզրումը,

Aram webaram.com

թերեւս, մի քիչ չափազանցութիւն էր, բայց աւելի քան չափազանցութիւն էր այն ամենը ինչ որ պատահեց վերջը:

Հետաքրքրական է, որ շատ յոռետես էր այդ օրերին Բաբալեանը, որ, ընդհանրապէս, բնաւորութեամբ լաւատես մարդ էր: Նա լաւ բան չէր տեսնում մեր ճամբորդութեան մէջ: — «Կառավարութիւնը պէտք է երկիրը կառավարէ եւ ոչ թէ ցրիւ գայ երկրում», ասում էր նա:

Պէտք է ասել, որ շատ ուրախ չէր մեր ճամբորդութիւնը: Ճանապարհին, ամէն տեղ, տեսնում էինք կեանքի խանգարում: Որոշ տեղեր առատ բերքը մնացել էր չհաւաքուած:

— Գոնէ հացը տուն բերէինք, պանդաուում էին գիւղացիները, երեխէքը ուտելու բան ունենային...

Բայց յուսահատութիւն չէինք տեսնում. ամբողջ երկիրը բռնուած էր հայրենասիրական ոգեղով:

Շիրակում գտնւում էր Կարսի ռազմաճակատի հրամանատարութեան սպայակոյտը: Զօր. Սիլիկեանի հետ խորհրդակցութիւն ունեցանք: Նա գոհ չէր Կարսի ներքին վիճակից, յատկապէս, բերդապետ Զօր. Դանիէլ Բէգ Փիրումեանից: «Սարդարապատի հերոսը թուլացել է. պէտք է նրան եռանդ ներշնչէք», ասաց նա:

Մի քանի օր առաջ Կարսում խուճապ էր առաջացել. իբր թէ Հարամ Վարդանից լուր էր ստացուել, որ թշնամին արագ շարժումով սպառնում է գրաւել Կարսը: Դանիէլ Բէգը քնած է եղել, եւ բնակչութիւնը խուճապահար՝ փախել էր Շիրակի ուղղութեամբ:

Մենք, ճանապարհին, տեսանք Կարսից փախած բազմութիւնը, որի մէջ էին եւ խորհրդարանի անդամներ Լեւոն Թադէոսեանը (Պապաշա) եւ Արտաշէս Աբեղեանը, ընտանիքներով: Նրանք քննիչ էին ուղարկուել Մայիսեան շարժումից յետոյ եւ իրենց գործը վերջացած ու տեղեկագիրը ներկայացրած՝ ամառը մնացել էին Կարսում: Փախուստի ժամանակ Պապաշան թեթեւ կերպով վնասել էր ոտքը: Նրանք եւս դժգոհութիւն յայտնեցին Դանիէլ Բէգի դէմ:

II. ԿԱՐՍՈՒՄ

Կարսում մեզ դրկաբաց ընդունեց իր ընդարձակ տան մէջ Բժ. Գազանջեանը՝ Հ. Յ. Դաշնակցութեան կենտր. կոմիտէի անդամ, հին հասարակական գործիչ, Կարսի պատուաւոր քաղաքացի եւ «Հոգի մարդ», ինչպէս ասում են Թուանները իրենց սիրած մէկի մասին:

Aram webaram.com

Ամբողջ օրը զբաղուած մարդ էր Բժ. Գազանջեանը — հիւանդանոց, քաղաքապետարան, ակումբ, կուսակցական ժողովներ, հիւանդների այցելութիւն, եւայլն: Գործի վրայ էին եւ նրա երկու զաւակները՝ ուսանող տղան եւ աղջիկը, որոնք տեղական երիտասարդական կազմակերպութիւնների եռանդուն անդամներն էին: Երեկոյեան, ընթրիքի սեղանի շուրջ իրար էին հանդիպում՝ կենդանի զրոյցով օրուայ դէպքերի մասին:



Բժ. ԱՐՏԱՇԷՍ ԲԱԲԱԼԵԱՆ

Բժ. Գազանջեանի տունը դարձաւ Բաբալեանի եւ իմ չտարբը: Մի քանի օր մենք անկապչինք այցելութիւններով եւ քաղաքի ու գինուորական պատմաններին ծանօթանալով: Բաբալեանի հետ միասին այցելեցինք նահանգապետարան, քաղաքապետարան, բերդապետարան, հիւանդանոցներ, հասարակական հիմնարկութիւններ, բերդի ամրոցներ, ռազմաճակատ, եւայլն: Մօրհղրակցութիւնն ունեցանք տեղական գործիչների եւ կուսակցական պատասխանատու ընկերների հետ:

Այո, մենք պատրաստ չէինք պատերազմի: Բոլշեւիկների Մայիսեան ապստամբութիւնը ծանր հետեւանքներ էր ունեցել Հայաստանի պետական կեանքի, մանաւանդ, երկրի պաշտպանութեան գործի համար: Կառավարական մեքենան խանգարուած էր: Բանակի ռազմունակութիւնը կորուած: Քաղաքացիական եւ զինուորական

Aram webaram.com

իշխանութիւնների փոխյարաբերութիւնը խանգարուած: Նահանգապետ Ստ. Ղորղանեանը դանդաղում էր, թէ բերդապետ Զօր. Փիրումեանը միջամտում էր իր գործերին: Բերդի ընդհանուր հրետանիի հրամանատարը (բուլղար) դժգոհ էր բոլշեւիկների հակապետական քարոզչութիւնից զօրքերի մէջ: Բոլշեւիկեան քայքայիչ ազդարարների մասին խօսում էին եւ ազդմաճակատում: Առանձնապէս մեր վրայ ցաւալի տպաւորութիւն թողեց Մարզարապատի հերոսը եւ այժմ կարսի բերդապետ Դանիէլ Բէգ Փիրումեանը, որ չար բախտով ոտքն էր կոտրել եւ բերդի գործերը «ինքնահոսի էր մատնել»:

Մի խօսքով՝ լաւ չէին գործերը եւ անհրաժեշտ էր շտապ եւ վճռական կարգադրութիւններ անել: Մի ընդարձակ հեռագրով Երեւան՝ մենք ներկայացրինք կացութեան ընդհանուր պատկերը եւ մեր եզրակացութիւնները:

Այսօր, 39 տարի վերջ, անկարելի է վերյիշել մեր տեղեկագրի ամբողջ բովանդակութիւնը, բայց հիմնական կէտերը մնացել են մտքումս:

Կարսի շրջանը, ճակատ եւ թիկունք, մեզ լաւ չերեւացին: Մայիսեան չարժումի հետեւանքները դեռ դարմանուած չէին: Իշխանութեան քաղաքացիական եւ պինուորական բաժինները իրար հետ ներդաշնակ չէին: Զօրամասերի հրամանատարական կազմը, ընդհանուր առմամբ, իր կոչման բարձրութեան վրայ չէր երեւում: Զինուորների մարտական ոգին ընկած էր: Նկատելի էր բոլշեւիկեան քարոզչութիւնը, որի հեղինակները մնում էին անպատիժ: Մեր համոզումով կարս բերդը ծանր բեռ էր հայկական փոքր բանակի համար: Հրամանատարութիւնը ստիպուած էր բերդում անշարժացնել բաւականաչափ զօրք, այն պահուն, երբ ճակատի մեր զօրամասերը օգնութիւն էին խնդրում եւ չէին կարողանում օգնական ոյժ ստանալ:

Մեր տեղեկագրում դրել էինք մի շարք պահանջներ, որոնցից յիշում եմ հետեւեալ կէտերը:

Արագ եւ կտրուկ միջոցներ ձեռք առնել՝ մաքրելու համար զօրամասերը անբաղձալի տարրերից, յատկապէս թաքուն բոլշեւիկներից:

Պաշտօնից հեռացնել Դանիէլ Բէգ Փիրումեան եւ Ցովսէփեան զօրավարներին եւ նրանց տեղերը նշանակել աւելի եռանդուն եւ հաւատաւոր հրամանատարներ:

Դրոյին Սուրմալուի ճակատից փոխադրել կարսի ճակատը: Սուրմալուի ուղղութեամբ դեռ սաք կուներ էին տեղի ունենում, բայց մեզ թւում էր, որ կարսի ճակատը աւելի էր վտանգուած: Մեր

Aram webaram.com

համոզումով թշնամին այստեղից պիտի հասցնէր վճռական հարուածը, հետեւաբար, անյետաձգելի անհրաժեշտութիւն էր ուժեղացնել ռազմաճակատը՝ Դրոյի նման բացառիկ ժողովրդականութիւն վայելող մարտական մի ուժով: Բաբալեանը առանձնապէս պնդում էր այս պահանջի վրայ: Հետաքրքրական է, որ Դանիէլ Բէգն էլ ցանկալի է համարում Դրոյի տեղափոխութիւնը:

Մեր տեղակապրի հետեւանքով, մի քանի օր անցած, կարս եկաւ ռազմաճակատի ընդհանուր հրամանատար՝ Զօր. Սիլիկեանը իր օգնականներով:

Հասուն տարիքի մէջ, առողջ մարմնով եւ առողջ մտքով, խիստ պարտաճանաչ զինուորական էր Զօր. Սիլիկեանը: Թէեւ հայերէն չէր խօսում, բայց կատարեալ հայ էր սրտով ու մտքով: Մարտական զինուորական էր, որ խորշում էր թիկունքային գործերից եւ գրասենեակներից:

Բոլոր պաշտօնական տեսակցութիւններից եւ արարողութիւններից յետոյ, Զօր. Սիլիկեանը, Բաբալեանը եւ ես, երեքով, ունեցանք մտերիմ խօսակցութիւն զօրավարի սալոն վագոնում: Ներկայ էր եւ զօրավարի շտաբի պետը:

Սիլիկեանը դրեց մեր առջեւ Երեւան ուղարկած մեր տեղեկագիրը, որ զինուորական նախարարութիւնը փոխադրել էր նրան հեռագրով եւ ասաց.

— Գոլուբչիկի (սիրելիներ), այս բոլորը, որ դուք հեռագրել էք, ինձ ծանօթ է, բայց ասացէք, խնդրեմ, ես ի՞նչ կարող եմ անել: Ի՞նչ կարող են անել զինուորական նախարարը կամ սպարապետը: Ուղում էք Դրոյին բերել այստեղ — ես էլ եմ ուզում — բայց ո՞վ պիտի բռնի նրա տեղը: Եթէ Երեւանը անցնի թշնամու ձեռքը, ի՞նչ արժէք կ'ունենայ Կարսի ճակատը:

Ասում էք պաշտօնից հեռացրէք Դանիէլ Բէգին կամ Ծովսէփեանին: Շատ բարի, նրանց տեղը ո՞ւմ դնենք: Մեր երիտասարդ ու գործօն ուժերը կապուած են ռազմաճակատի հետ, թիկունքում մնացել են կամ ծերունիները կամ յիմարները...(*):

Զինուորական նախարարը ինձ հրահանգում է լուրջ քննութիւն կատարել եւ համապատասխան կարգադրութիւններ անել: Շատ բարի: Կացութիւնը ինձ ծանօթ է, հիմա ես ձեզ եմ հարցնում, ի՞նչ կարգադրութիւններ անենք, ի՞նչպէս եւ ի՞նչ միջոցներով...

(*) Ռուսերէն «իլի ստարիկի, իլի դուրակի»:

Aram webaram.com

Աստուած մեզ պէտք է խնայէր եւ այս պատերազմից հեռու պահէր: Մեր ո՞ր մեղքերի համար Աստուած պատժում է մեզ: Աստուած օգնէ մեզ...

Իրատեսութիւնն ու խմաստութիւնն էր խօսում հայրենասէր զօրավարի բերանով, բայց այս վերջաբանը հաճելի չէր. Աստուած, ի՞նչով կարող էր արդեօք, օրինակ, զօրավար Յովսէփեանին զօրքերի եւ անասուններին մասին չմտածել եւ իր միտքն ու կարողութիւնը միայն ռազմաճակատի վրայ կենտրոնացնել: Աստծու վրայ յոյսդ դիր, ինչո՞ւ չէ, բայց ինքդ էլ խելացած՝ անզօրծ մի նստիր...

Մօտ երկու ժամ տեւեց մեր խորհրդակցութիւնը: Մի շարք որոշումներ տուինք, որոնք կարող էին գործադրուել տեղական միջոցներով: Խորհրդակցութեան վերջին ներկայ եղաւ եւ նահանգապետ Ղորղանեանը, որ նոյնպէս Աստծու վրայ յոյս դնող մարդ էր:

Զօր. Սիլիկեանից իմացանք նաեւ, որ վերին հրամանատարութիւնը որոշեր էր, բանակի մարտական կորովը բարձրացնելու նպատակով, Հոկտ. 14ին, ամբողջ ճակատի վրայ հակայարձակման դիմել, եւ այդ ուղղութեամբ նախապատրաստութիւններ էին տեսնում:

Զօր. Սիլիկեանի այցելութիւնը, ըստ էութեան ոչինչ չփոխեց կացութեան մէջ, բայց, կարծես, յոյսի նոր նշոյլ բերեց:

Զօր. Սիլիկեանը խորհրդակցութիւն ունեցաւ եւ ճակատի հրամանատարների հետ:


Այնուհետեւ Բաբալեանի եւ իմ դերը եղաւ աջակցել նահանգապետին եւ զինուորական իշխանութեան ամենօրեայ աշխատանքներում: Ընդհանուր առմամբ, Բաբալեանը զբաղուած էր քաղաքում, բերդապետի եւ նահանգապետի մօտ. ես շրջում էի ռազմաճակատում, զինուորների մէջ, դիրքերում: Ճեմոյ եկաւ եւ Գարեգին Եպ. Յովսէփեանցը (Կիլիկիոյ նախորդ Կաթողիկոսը), որ, յաճախ, ինձ հետ միասին այցելում էր դիրքերը եւ խաչը ձեռքին, Ղեւոնդ Երէցի պէս, ոգեւորիչ ճառեր էր խօսում զինուորներին:

Գարեգին Սրբազանը իմ ուսուցիչն էր Գէորգեան ճեմարանում. գաղափարներով կղերամիտ, հայապետական խորունկ համոզմունքի տէր, հայրենասէր, անձնուէր հոգեւորական էր Սարդարապատի Ղեւոնդ Երէցը: Նրան սոխպող չկար. իր յօժար կամքով թողել էր էջմիածնի հանդիստ կեանքը եւ եկել, չարքաշութեան մէջ՝ ծառայելու Հայրենիքին եւ ազգին: Զինուորները ամէն տեղ յար-

Aram webaram.com

դանքով ընդունում էին նրան եւ պատկառանքով լսում նրա կրօնահայրենաշունչ ճառերը:

Նահանգապետի առաջարկով Բաբալեան եւ ես այցելութիւն տուինք Շորոգեալի չրջանին, ուր գտնուող մեր զօրամասերը կասկած էին յայտնում ռուս եւ մահմեդական բնակչութեան օրինապահութեան մասին: Մեզ միացաւ եւ Գարեգին Սրբազանը: Երկու նախարարի, մէկ եպիսկոպոսի ու նահանգապետի եւ մեծ չքախումբի երեւումը չրջանում մեծ տպաւորութիւն գործեց տեղական բնակչութեան վրայ: Ամէն տեղ մեզ ընդունում էին աղուհացով, մատաղ էին մորթում մեր ոտների տակ եւ բարի գալուստի հայրենասիրական տաք ճառեր էին խօսում: Պէտք է ասել, որ առանց դրան էլ այդ չրջանը, ընդհանուր առմամբ, մինչեւ վերջը խաղաղ ու հաւատարիմ մնաց: Ճամանք այդ վերապրում էին նահանգապետ Ղորղանեանի իմաստուն վարչութեան: Թերեւս: Ես աւելի տրամադիր եմ կարծելու, որ չրջանում գտնուող հայկական զօրամասերի ներկայութիւնն էր պատճառը բնակչութեան խաղաղասիրութեան: Թուրք բանակը դեռ հեռու էր եւ խլամ բնակչութիւնը առիթ չունէր խաղաղասէրը չլինելու...



ԳԱՐԵԳԻՆ ԵՊ. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ

Մեր ցերեկուայ աշխատանքից յոգնած՝ խրճիկոնները միանում էինք Բժ. Գալանճեանի չէն սեղանի չուրջ: Բժիշկը բերում էր իր նո-

Aram webaram.com

բութիւններն ու տպաւորութիւնները: Նրա որդին եւ աղջիկը սրամիտ նրբութիւններով պատմում էին երիտասարդութեան եւ, առհասարակ, ժողովրդի մէջ հրջող լուրերը: Երբեմն մեզ միանում էին եւ Գարեգին Սրբազանը ու քաղաքապետ Նորհատեանը: Երբ դուրսը գործ չէինք ունենում, այս զրոյցները տեւում էին երկար: Գրեթէ ամէն երեկոյ ուղիղ հեռագրաթելով խօսում էինք Երեւանի հետ, որտեղից սովորաբար, ոգեւորիչ լուրեր չէինք առնում: Համարեա միշտ վարչապետ Օհանջանեանի կամ պինուորական նախարար Ռուբէն Տէր-Մինասեանի վերջին խօսքը լինում էր.

— Պինդ կացէք... Արթուն կացէք...

Մենք պինդ էինք եւ բաւական արթուն, բայց անիրաւ թշնամին մեր արթնութեան կարեւորութիւն չէր տալիս, եւ ամէն օր ռազմաճակատի այս կամ այն կէտում մեզ անհանգստացնում էր: Մեր ուժերը թուլանում էին: Օգնութիւն էինք աղաղակում, բայց դրսից օգնութիւն չէր հասնում:

Մի առաւօտ, հեռագիր ստացանք Սիլիկեանի չտարից. — «Անգլիական ներկայացուցիչ Գնդ. Ստոկսը կարսից անցնելու է այսինչ ժամին: Մի թացէք նրան»:

Նշանակուած ժամին, Բաբալեանի հետ կարսի կայարանում էինք, ուր արդէն սպասում էին բերդապետի ներկայացուցիչները եւ պատուոյ մի ջոկատ: Շուտով կայարանի առջեւ կանգնեց անգլիական գնացքը — մի վագրաշարժ եւ մի սալոն-վագոն:

Գնացքից դուրս եկաւ տարօրինակ երեւոյթով մի պարոն. ոչ բարձր էր, ոչ ցած, ոչ դէր էր, ոչ նիհար, ոչ ուրախ էր, ոչ տխուր: Դուրս ընկած կրծքին՝ դոյնզդոյն ժապաւէններ. կատարեալ հընդկահաւ...

Նայեց աջ ու ձախ եւ ինչ որ արտասանեց: Կարելի էր հասկանալ բարեւ ձեզ, բայց կարելի էր հասկանալ եւ հակառակը: Մեր ջոկատը գոչեց ուռռա՛:

Անգլիացին, հնդկահաւի քայլուածքով, իջաւ վար, բարեւեց մեզ բոլորիս, նայեց աջ, նայեց ձախ, ապա Բաբալեանի եւ իմ թեւը բռնելով՝ քաշեց վեր՝ հրամայելով, որ գնացքը չարժուի:

Բերդապետի ներկայացուցիչ սպան մնաց բերանը բաց՝ չարտասանած ողջոյնի ճառի թուղթը ձեռքին...

Ստոկսի հետ շատ մարդ չկար. մէկ երիտասարդ սպայ, որ համհարզ-թարգմանի դեր էր կատարում. մէկ-երկու անորոշ արտաքինով, բայց, երեւի, շատ որոշ ներքինով պինուորականներ: Ջօր. Սիլիկեանը ուղեցել էր իր ներկայացուցիչը դնել հետը, բայց անգ-

Aram webaram.com

վաճին մերժել էր, ի հարկէ, շատ սիրալիր: Մեզ հետ էլ սիրալիր էր, բայց կարո՞ղ ես ասել, թէ ինչ կայ անգլիացու սիրալիրութեան տակ:

Ստոկսը շատ խօսք սիրող մարդ չէր երեւում, ոչ էլ շատ շարժուող: Նստեց կաշեպատ բազկաթոռում ու մէկ էլ ոտքի չելաւ մինչեւ տեղ հասնելը: Շրջապատով չէր հետաքրքրւում, դուրս չէր նայում. այլ անում էին իր հետիններըը: Իր ոչ սահուն ֆրանսերէնով բացատրեց, թէ եկել է անձամբ ծանօթանալու ռազմաճակատի վիճակին:

— Տեսնում եմ, որ ձեր վիճակը ծանր է, ասաց նա: Աստուած պահէ ձեզ:

Անձամբ ծանօթանալու տարօրինակ ձեւ էր: Ի՞նչ էր արել Շեբակում, Զօր. Սիլիկեանի մօտ, յայտնի չէր, բայց կարսում պատուոյ ջոկատից բացի ուրիշ բան չտեսաւ: Հիմա էլ առանձին հետաքրքրութիւն ցոյց չէր տալիս:

Բէգլի Ահմէդում արդէն դիտէին անգլիացի հիւրի գալու մասին եւ պատրաստութիւն տեսել էին: Մեզ դիմաւորեցին զինուորական պատիւներով եւ փրոթոֆոլի բոլոր պահանջներով: Գնդ. Ստոկսը, իր հնդկահաւի կուրծքը դուրս ցցած, դիտեց զօրամասերը, ճառ խօսեց զինուորներին՝ չմոռանալով յիշել, որ Հայերը առաջին քրիստոնեայ ազգն են աշխարհիս երեսին, եւ կարճ տեսակցութիւնից յետոյ հրամանատարների հետ, հրաժեշտ տուեց: Պատրաստուած սեղանին չմօտեցաւ:

Վերադարձն էլ եղաւ նոյն ձեւով: Մեր հրաւէրը ճաշի, կարսում, նոյնպէս չհրապուրեց բարձրաստիճան այցելուին: Նա պատասխանեց, թէ պարտաւոր է չուտով վերադառնալ:

— Մի ուրիշ անգամ կը ճաշենք միասին:

Երբ սալոն-վագոնը հեռացաւ կարսի կայարանից, Բաբալեանը դարձաւ ինձ, չդիտեմ ինչու, ռուսերէն.

— Վոտ սուֆին սին··· Սվոլոչ···

Ապա փոխելով զարմացրէնի, խօսեց ցասումով բառերը, որ ես չեմ համարձակում թղթի յանձնել:

Եւ ուրիշ ինչպէ՞ս կարելի էր խօսել այս տարօրինակ արարածի մասին, որ Նորին Մեծութեան Բրիտանական Կայսրի ներկայացուցիչն էր Կովկասում: Այս պարոնին են պատկանում ծանօթ չնական խօսքերը՝ արտասանուած Հայաստանի ամենածանր օրերին.

— Անգլիան սխալ ձիու վրայ դրեց իր դրամը···

Aram webaram.com

— Ձեզ՝ հայերիդ ուրիշ ոչինչ չի մնում անել, բայց եթէ հաշտուել բոլշեւիկների հետ...

Հետաքրքրական է, որ Գնդ. Ստոկը նոյն ձեւով է վարուել եւ Վրացինների հետ՝ Վրաստանի մահացու տագնապի օրերին: Վրաստանի նախարար Նոյ Ժոմերիտին Բաթալեանի բառերով խօսեց ինձ Ստոկսի մասին Պոլսում.

— Էտըտ սվոլոչ... Անունը մի յիշէք այդ...

Այսպէս է օրէնքը բնական, երբ ոտքի ես եւ հարուստ, մարդիկ չորս թաթերի վրայ կը դառնան չուրջդ, երբ ընկար, երեսիդ նայող չի գտնուի:

III. ՀՈԿՏԵՄԲԵՐ 14

Այդ օրերին ի՞նչ էր կատարում Երեւանում, ի՞նչ էր տեղի ունենում ամբողջ երկրում, դուրսը, արտաքսահմանում — մենք անտեղեակ էինք: Մեզ ոչինչ յայտնի չէր, թէ ի՞նչ է կատարում աշխարհում: Մեր աշխարհը կարան էր: Մեր մտասեւեռումը՝ Հոկտեմբեր 14ը: Հեւ ի հեւ վազք: Անքուն դիշերներ: Ամէն ինչ Հոկտեմբեր 14ի համար: Սրտաւորոփ ապատում էինք վճռական ժամին, ինչպէս մահապարտը վերջին լուսաբացին:

Մեր յամառ պահանջները դրսից օգնական ուժեր հասցնելու՝ չատ քիչ արդիւնք տուին. տրամադրելի ատատ ոյժ չէր մնացել երկրում:

Մեր թախանձագին խնդրանքը, գոնէ Հոկտ. 14ի օրերին, Դրօյին ուղարկել կարսի ճակատը՝ մնաց անլսելի: Սուրմալուի ճակատը կայունացել էր, եւ Երեւանին անմիջական վտանգ չէր սպատնում. Դրօյի ներկայութիւնը Հոկտ. 14ի ընդհանուր յարձակման վրայ անկասկած բարերար դեր կը կատարէր:

Մեր խնդրանքը, որ գոնէ պինուորական նախարարը կամ նախարարապետը Հոկտ. 14ից առաջ այցելեն կարսի ճակատը, նոյնպէս դրական հետեւանք չունեցաւ: Երկուսի ներկայութիւնն էլ անհրաժեշտ էր մայրաքաղաքում:

Մայրաքաղաքից մեզ պատասխանում էին.

— Պինդ կացէք:

Եւ մենք աշխատում էինք պինդ կենալ: Գարեգին Մրբազանը, խաչը ձեռքին, չրջում էր դիրքից դիրք ու զօրանոցից զօրանոց,

Aram webaram.com

զրուցում էր զինուորների հետ, հաղորդություն էր տալիս, ոգի էր ներշնչում։

Բաթալեանը եւ ես կատարում էինք մեզ վիճակուած պարտականութիւնները։ Իմ աչքին Բաթալեանը հոգեփոխուել, ամբողջ հասակով մեծացել ու լրջացել, անճանաչելի էր դարձել։ Նախկին անհոգ, ամէն բանի վրայ մատների արանքից նայող մարդուց հետք չէր մնացել։

Երբ երեկոյեան, յոգնած ու ջղայնացած, հանդիպում էինք Բժ. Գալանջեանի տանը, ես, յաճախ հարցնում էի.

— Ադա, Բաթալ, ի՞նչ ես դարձել։

Նա պատասխանում էր ժպտալով.

— Բա, ի՞նչ ես կարծում, մենք այսպէս ենք։

Այո, բոլորովին տարբեր մարդ էր դարձել Բաթալը...

... Այդ օր, Հոկտ. 13ին, ամբողջ օր շարժման մէջ էինք։ Բաթալեանի հետ միասին այցելեցինք բերդապետութիւն, բարձրացանք ամրութիւնները, տեսնուեցինք նահանգապետի հետ, գնացինք առաջաւոր դիրքերը։ Ամէն ինչ լաւ էր երեւում։ Հրամանատարները առանձին ժժդոհութիւն յոյց չէին տալիս։ Զինուորները երեւում էին հանդիստ։ Գիտէ՞ր թշնամին, թէ ի՛նչ հարուած էր պատրաստւում իր դէմ...

Երեկոյեան ուղիղ հեռագրաթելով կապուեցինք Երեւանի հետ եւ վերջին անգամ լսեցինք.

— Պինդ կացէք։

Այդ դիշեր Բժ. Գալանջեանի տեղանը առանձնապէս ճոխ էր ու հրապուրիչ։ Ներկայ էին եւ կենտր. կոմիտէի անդամներից։ Ոչ մէկը քնելու մասին չմտածեց...

Ինձ այնպէս էր թւում, որ յաջորդ օր, Հոկտ. 14ին, պիտի որոշուէր Հայաստանի Հանրապետութեան բախտը։ Երեւի նոյն զգացումը ունէին այն հայերը, որոնք Վարդանի դլխաւորութեամբ կռուի էին պատրաստւում Տղմուտի ափին...

Կէս դիշերը անցած, Բաթալեանի հետ միասին մեկնեցինք ճակատ։ Նա պիտի անցնէր ձախ թեւը, ես պիտի մնայի կենտրոնում։ Գարեգին Սրբազանը արդէն առաջաւոր դիրքերում էր, զինուորների հետ։

Անլուսին, հանդարտ դիշեր էր։ Աստղերը այնքան պայծառ էին, կարծես էլեքտրական լապտերներ լինէին կախուած երկնքից։

Ճակատի անմիջական հրամանատարի շտաբում ամէնքը ոտքի վրայ էին. կեանքը եռում էր, հեռախօսը անդադար զործում էր.

Aram webaram.com

մարդիկ ելումուտ էին անում լուրջ ու մտախոհ: Թւում էր, թէ ամէն ինչ լաւ էր դնում, ըստ ծրագրի: Նոյնիսկ հրամանատարը, որ ջղային ու յոռետես մարդ էր, զոհ էր երեւում գործերի ընթացքից:

Լոյսը դեռ չէր բացուել, ճիշդ նշանակուած ժամին, ռազմաճակատի ամբողջ երկայնքի վրայ սկսուեց ընդհանուր յարձակումը: Որոտացին թնդանօթները: Հեռուից ու մօտից լսուեցին հրացանի համազարկերի եւ գնդացիրների տրաքտրաքոցը: Ուռա՛, կեցցէ՛...

Թշնամին, յանկարծակիի եկած, սկսեց յետ քաշուել: Լոյս էր արդէն: Օդում երեւացին մեր զոյգ սաւառնակները, որոնք հաւի ճապեր որոնող ուրուների պէս, բարձունքից հետախուզում էին թշնամուն:

Թւում էր, թէ ամէն ինչ անցնում է առանց խոչընդոտի, ըստ ծրագրի, ինչպէս ասում են: Մեր տրամադրութիւնը սկսում էր բարձրանալ, նաեւ երեւակայութիւնն էլ, միշտ յառաջ, վերապրուել կազդուանն ու Սարըղամիշը, եւ, ինչո՞ւ չէ, ցեխութիւն էրզրումում...:

Մէկ էլ ի՞նչ պատահեց ձախ թեւում: Ինչ որ անորոշ աղմուկ, հեռուից հեռագնահէ մօտեցող համազարկեր: Ճակատի հրամանատարի դէմքին ջղային անհանգստութիւն: Ի՞նչ է պատահել:

Եւ այնուհետեւ ոչինչ չեմ յիշում. որ սպանէք, ոչ մի բան չեմ յիշում:

Ցիշում եմ միայն հրամանատարի խռպոտ ձայնը, որ աշխատում էր կեցնել սարսափահար փախչող զինուորներին, որոնց ալիքը ինձ էլ քշեց տարաւ հետը...

. . . . . .

Երեկոյեան, երբ յոգնած ու ջարդուած հաւաքուել էինք Բժ. Գալանջեանի տանը, յայտնի եղաւ, որ մեր զօրքի յառաջխաղացման ընթացքում, ձախ թեւի թշնամու կողմից լսուել են հայերէն ձայներ. «Ընկերնե՛ր, մի՛ կրակէք մեր դէմ. մենք ձեր ընկերներն ենք... Անկո՛ղ դաշնակների իշխանութիւնը»:

Բոլշեւիկեան բացատրութիւններ լսուել են եւ մեր զինուորների մէջ, որոնք առաջ են բերել իրարանցում: Թշնամին կենտրոնացրել է կրակը այդ թեւի վրայ, որեղից սկսուել է փախուստը: Ձախ թեւի փլուզումը անդրադարձել է եւ ճակատի միւս մասերի վրայ:

Թշնամին ինքն էլ, երեւի, պատրաստ չի եղել: Ցամենայն դէպս, հետապնդումը ուժեղ չի եղել:

Aram webaram.com

Ի վերջոյ, մեր հրամանատարութիւնը կարողացել էր կեցնել նահանջը եւ դրաւել նոր դիրքեր: Թշնամին չէր հետապնդել:

Քաղաքում տիրում էր ջղային հանդարտութիւն:

Օրուայ դէպքից առանձնապէս ազդուած էր Բաբալեանը, որ ձախ թեւի վրայ էր:

Մեր փորձը ուղիղ հեռագրաթելով կապուելու Երեւանի հետ, յաջողութիւն չունեցաւ. ինչ որ բան խանգարուել էր: Կէս գիշերը անցել էր, երբ մեզ կանչեցին հեռագրաթելի մօտ: Վարչապետն էր եւ պինուորական նախարարը: Զօր. Սիլիկեանից արդէն ստացել էին տեղեկագիրը, ուղում էին մանրամասնութիւններ:

Հաղորդեցինք ինչ որ ուղում էին եւ, իրրեւ եզրակացութիւն.

— Ինչ որ պատահեց՝ անխուսափելի էր: Կացութիւնը դեռ կարելի է փրկել, եթէ անմիջապէս օգնական ուժեր ուղարկուեն: Նորից խնդրում ենք փոխադրել Դրոյին այս ճակատը:

Այս անգամ «Պինդ կացէք»ի խօսք չեղաւ.

— Կարսը ամէն գնով պէտք է պահել, եղաւ վերջին խօսքը:

Ցաջորդ երեկոյ խորհրդակցութիւն ունեցանք Բժ. Գազանջեանի տանը: Հրաւիրեցինք նահանգապետին, քաղաքապլխին, բերդի եւ ճակատի հրամանատարութեան ներկայացուցիչներին, կենտր. կոմիտէն, եւայլն: Ամբողջ օր տեսակցութիւններ ունեցանք կարեւոր անձանց եւ ժողովրդի ներկայացուցիչների հետ՝ պարզելու համար ընդհանուր վիճակը եւ տրամադրութիւնները:

Ամէն տեղ ես հարցնում էի.

— Ի՞նչ էք կարծում կացութեան մասին, ի՞նչ պէտք է անել:

Տարբեր բառերով, բայց մեծ մասի պատասխան նոյնն էր.

— Կացութիւնը լուրջ է. անելիքը կառավարութիւնը պէտք է որոշէ:

Նահանգապետ Ղորգանեանը դրութիւնը համարում էր անյոյս, բայց մինչեւ վերջ պէտք էր պաշտպանել կարսը՝ պայմանով, որ բնակչութիւնը անմիջապէս հեռացուի կարսից:

Քաղաքապլուխ Նորհատեանի կարծիքով կացութիւնը լուրջ էր, բայց ոչ անյոյս. անհրաժեշտ էր կռուել եւ բնակչութիւնից հեռացնել միայն վտանգուածներին:

Ո՞վ եւ ի՞նչպէս պիտի որոշէր, թէ ո՞վ է վտանգուածը եւ ի՞նչ ասել է վտանգուած:

Ամէնէն յստակը եւ որոշը բերդապետ Դանիէլ Բէգի կարծիքն էր.

— Ատծոյ կամքն է:

Aram webaram.com

Խորհրդակցական ժողովը, սակայն, որ տեւեց մինչեւ ուշ գիշեր, համաձայն չեղաւ բերդապետի հետ եւ մի շարք յուզումնալից ճառերից եւ քննադատութիւններից յետոյ, արաւ մի շարք գործնական առաջարկներ, որոնցից յիշում եմ.

Ուժեղացնել Կարսի ռազմաճակատը նոր զօրամասերով եւ նոր հրամանատարներով: Այստեղ էլ խօսք եղաւ Դրոյի մասին:

Առանց խուճապ առեղծելու Կարսից դուրս հանել քաղաքացիական բնակչութիւնը:

Վճռական միջոցներ ձեռք առնել ճակատի եւ թիկունքի թաքուն գործող բոլշեւիկների դէմ, եւայլն:

Խորհրդակցական ժողովի յայտնած այս բաղձանքներն էլ ուղարկուեցին Երեւան:

Թշնամին անշարժ մնաց իր դիրքերում: Հետզհետէ մեր նոր դիրքերն էլ կանոնաւորուեցին: Վերսկսուեց պատերազմական աոօրեան:

Փաստօրէն մեզ այլեւս բան չկար անելիք Կարսում:

Տեղական, ռուտին գործերի համար ուժերի պակասութիւն չէր զգացւում: Մեր առաջին օրերի հմայքը չէր մնացել. առաջ մարդիկ մտածում էին, թէ նախարարները մեր մէջ են, մեր պէտքերը կը դոհացուին: Բայց երբ մեր պահանջները Երեւանից չէին բաւարարում, հասարակութեան աչքին մեր հեղինակութիւնն էլ ընկաւ: Այլեւս ի՞նչ կարիք կար մեր ներկայութեան Կարսում:

— Գիտե՞ս ինչ, ասաց մի օր Բաբալեանը, եկ մի քանի օրով երթանք Երեւան, տեսնենք, ի՞նչ է կատարւում այդ քաղաքում:

— Այսինքն՝ եթէ սարը չի գալիս Մահմէտի մօտ, Մահմէ՞տը երթայ սարի մօտ:

— Այո, այդպէս, ի՞նչ կայ որ:

— Չէ, չի լինի: Մենք իրաւունք չունինք ինքնակամ թողնելու մեզ վստահուած դիրքերը:

— Հիանալի է, վստահուած դիրքերը: Բժ. Գազանջեանի տանը խորոված ուտե՞լն էլ դիրք է...

Ու մի օր էլ, Հոկտեմբերի վերջերը, վարչապետի ստորագրութեամբ հեռագիր ստացուեց իմ անունով. Անմիջապէս մեկնիր Երեւան:

Բաբալեանը չծածկեց իր դժգոհութիւնը: Իրրեւ Ղարաբաղցի, նոյնիսկ կասկածեց, թէ սրա տակը մի բան կայ:

Բայց խնդիրը պարզ էր. վարչապետը ժողովի էր հրաւիրում

Aram webaram.com

բիւրօ–կառավարութեան նախարարներին. Բաբալեանը նախարարի օգնական էր եւ բիւրոյի անդամ չէր:

Բաբալեանը, սակայն, իրաւունք ունէր վչտանալու, եւ նա այդ յայտնեց:

Իմ մեկնումի առթիւ բարի երթի ընթրիք էր կազմակերպուած ԲԺ. Գազանջեանի տանը: Շատ մարդ էր հրաւիրուած, շատ ճառեր խօսեցին: Բաբալեանը կէս–լուրջ, կէս–կատակ ասաց, ի միջի այլոց.

— Այսպէս, ուրեմն, դնում ես, մեզ մենակ ես թողնում: Հայերէն դրան ասում են՝ դասալիք...

Աստ Երեւանում, որ մենք այստեղ «պինդ» ենք... Աստ Երեւանում նոյնպէս, որ Հայաստանի հարցի լուծումը այսօր կարսում է: Ո՛չ Երեւանում, ո՛չ Փարիզում — կարսո՛ւմ է:

Դէ՛հ, բարի ճանապարհ քեզ... Յաեսութիւն էրզրումում...

Ես, ի հարկէ, դասալիք չէի. Բաբալեանն էլ, ի հարկէ, դիտէր այդ, բայց բառեր կան, որոնք խոցում են՝ արդար թէ անարդար: Սրտաբեկ մեկնեցի Կարսից...:

IV. ԱՆՈՒՐԱԽ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Անուրախ էր կեանքը մայրաքաղաքում: Կարսի չափ ձիւն ու ցուրտ չկար, բայց ցուրտ էր մարդկանց հոգիներում: Ամէն ինչ դորշ էր երեւում: Մարդիկ էլ ժժգոյն էին, կարծես: Ո՞ւր էր ամառուայ չէն ու գունարթ Երեւանը:

Տուն հասնելուց մի քանի ժամ վերջ, փութացի դէպի իմ նախարարութիւնը՝ դիւղատնտեսութեան ու պետական գոյքերի եւ աշխատանքի:

Դռնապան Իվանը լայնօրէն բացեց դուռը եւ արձանացաւ. չէր ապատում: Ապա, դառնալով յետ, պոռաց, որ ամէնքը լսեն.

— Բառին պրիեխալ... բա՛ռին. պարոնն է եկել, պարոնը:

Եւ դռնապան բացատրութիւններով թրեւ էր գալիս չուրջս, աշխատելով արտայայտել իր ուրախութիւնը:

Ցարական իշխանութիւնից ժառանգութիւն մնացած այս Իվանը անկեղծօրէն նուիրուած էր ինձ: Ես հաւատում էի նրա անկեղծութեան: Հետագային, մեր կեանքի աւելի սեւ օրերին, ես աւելի համոզուեցի նրա անկեղծութեան:

Նախասենեակը պարապ էր: Իվանը բաց արաւ ընդարձակ գրասենեակի դուռը: Կանաչ մահուդով ծածկուած երկար սեղանի

Aram webaram.com

դլխին, իմ տեղը, նստած էր աւագ դիւղատնտես Ստ. Կամսարականը՝ հակած ինչ որ թղթերի վրայ: Նրա կողքին, դարձեալ հակած թղթերի վրայ, դիւղատնտես Կանդուրալեանը: Երկուսն էլ ինձ մօտիկ մարդիկ: Փորձեցին իրենց մեծ ուրախութիւնը յայտնել, բայց բան դուրս չեկաւ: Սիրտերը ուրախ չէին:

Ամայութիւն էր տիրում ամբողջ շէնքում: Հատ ու կենտ պաշտօնեաներ, մեքենագրող աղջիկներ այս ու այն սենեակներում՝ փաթաթուած բուրդէ շալերի մէջ: Այս շէնքը լեցուն էր երկու ամիս առաջ եւ կեանքը մէջը եռում էր մեղուի փեթակի պէս:

Տանը արդէն տեսնուել էի մի քանի ընկերների հետ, որոնք կցկտուր բառերով որոշ տեղեկութիւններ տուել էին մայրաքաղաքում տիրող պայմանների եւ մտայնութեան մասին: Մումխա դարձած, սակաւախօս Կանտուրալեանից խօսք կարելի չէր քաշել, բայց Կամսարականը, լուրջ եւ բանիմաց մարդ՝ մռայլ գոյներով նկարագրեց մայրաքաղաքի եւ ողջ երկրի վիճակը:

Իվանը բերեց տաք թէյ:

— Ասա՛ տեսնենք, Իվան, հարցրի նրան, ի՞նչպէս են գնում գործերը:

— Պլոխօ, բարին. վատ է, պարոն, պատասխանեց նա: Աստուծոյ կամքն է:

Սա էլ Դանիէլ Բէգի կուսակից էր:

Քիչ վերջը, նախարարական խորհրդի նիստում, ես պիտի համոզուէի, որ միայն Իվանը չէր Երեւանում «Աստուծոյ կամքն է» օրիէնտացիային հաւատացողը: Նախարարական նիստից առաջ ես հանդիպել էի վարչապետի եւ պինուորական նախարարի հետ, կառավարական շէնքում:

Համօն մի քիչ ծերացել էր, կարծես, եւ երբ ինձ տեսաւ, խոշոր աչքերը լեցուեցին արցունքով: Ինչպէս միշտ, խնամքով հագնուած եւ մաքուրածիլուած՝ յոգնած ու տխուր երեւոյթ ունէր:

Ընդհակառակը, Թուրքինը, ըստ երեւոյթին, օրերով չէր ածիլուել ու հագուստ չէր փոխել, հին, ճմռթկուած կիսամուշտակը վրան: Թէեւ անընդհատ ծխում էր ազահութեամբ, բայց աչքերում քուն կար:

Ինձ որ տեսան, յարձակուեցին վրաս հարցումներով Կարսի դէպքերի մասին: Ես ի՛նչ կարող էի ասել նոր բան, որ ծանօթ չլինէր նրանց: Զգում էի նրանց հոգեկան անհանգստութիւնը, չէի ուզում աւելի խորացնել նրանց սրտի ցաւը, բայց ինչ որ ասէի, ցաւալի էր: Ես խօսում էի երկուսիս՝ Բաբալեանի եւ իմ անունից:

Aram webaram.com

Մանաւորապէս ծանրացայ Հոկտ. 14ի դէպքերի եւ վերջին խորհրդակցական ժողովում յայտնուած մտքերի վրայ:

Համօն լսում էր դլուխը կախ, լուռ: Մերթ ընդ մերթ նայում էր Ռուբէնին եւ ասում. «տեսա՞ր»: Ռուբէնը ջղայնոտ, սեղմում էր բռունցքը եւ ատամները հուժկամբ ներս քաշում ծխախոտի ծուխը: Եւ երբ ես մի պահ լռեցի, հարցրեց.

— Աստ, ի՞նչ պէտք է անել, ի՞նչ է քու եւ Արտաշէսի վերջնական կարծիքը:

— Մենք բոլորովին համաձայնենք ենք, պատասխանեցի ես, եւ մի քանի անգամ յայտնել ենք ձեզ: Այսօր էլ կրկնում եմ նոյնը իմ, Արտաշէսի եւ կարսի մեր բոլոր մարդկանց կողմից: Եթէ արագ եւ կտրուկ միջոցներ ձեռք չառնուին, թըշնամին կը գրաւէ կարսը: Վերջը ի՛նչ կը լինի, դուք կարող էք երեւակայել...



ԶՕՐ. ԹՈՎՄԱՍ ՆԱԶԱՐԲԷԳԵԱՆ

Ուշ էր եւ պէտք է սկսուէր նախարարական խորհրդի նիստը: Բոլոր նախարարները արդէն Երեւանում էին:

Որոշ կերպով յիշում եմ, որ ներկայ էին նախարարները, առանց օգնականների, այլեւ խորհրդարանի նախագահներ Ց. Քաջազնունին եւ Լ. Շանթը, սպարապետ Զօր. Թ. Նազարբէգեանը, Զօր.

Aram webaram.com

Յ. Հախվերդեանը եւ Դրօն, որ Երեւան հասաւ, երբ արդէն ժողովը սկսուած էր: Որքան յիշում եմ, ուրիշ մարդ չկար:

Ժողովի օրակարգն էր.

Ընդհանուր զեկուցում վարչապետի կողմից.

Գործերը կարսի ճակատում:

Յոստովանում եմ, որ ընդհանուր զեկուցումից քիչ բան է մնացել մտքումս: Երկրի ներքին պատկերը մռայլ էր: Հիւսիս-արեւելեան սահմանները մշտական սպառնալիքի տակ էին բոլշեւիկներից եւ պահանջում էին զինուորական աչալուրջ հսկողութիւն: Արտաքին յարաբերութիւնները դրեթէ խզուած էին: Ժողովրդական տնտեսութիւնը քայքայուած, արտաքին բոլոր դիմումները մնացել էին անհետեւանք:

Վարչապետի զեկուցումը շատ հարցեր էր յարուցանում, բայց օրուայ հարցերի հարցը Կարսի ճակատն էր: Հետեւաբար, խօսքը տրուեց ինձ.

Իմ զեկուցումը տեւեց մի ժամից աւելի: Թուերով ու փաստերով ես պատկերացրի Կարսի շրջանի ընդհանուր դրութիւնը, Մայիսեան բոլշեւիկեան խռովութիւնների պատճառած չարիքները, բանակի վիճակը, պատերազմի ընթացքը, բոլշեւիկեան դաւադրութիւնները, Հոկտ. 14ի անյաջողութեան հասցրած վնասները, քաղաքացիական եւ զինուորական իշխանութիւնների իրենց կոչման վրայ չդանուելը. մի խօսքով՝ ջանացի առարկայօրէն ներկայացնել Կարսի շրջանի գործերի իրական պատկերը: Եւ Բաբալեանի ու իմ կողմից արի մի շարք առաջարկներ, որոնք պէտք է անմիջապէս գործադրուէին.

Անյապաղ մաքրագործում բանակի, անկարող եւ վնասակար տարրերից:

Անմիջապէս փոխել Կարսի բերդապետ Զօր. Փիրումեանին եւ տեղը նշանակել կարող մի զինուորական:

Կարսի ճակատը ուժեղացնել նոր զօրամասերով:

Դրօյին փոխադրել Կարսի ճակատը:

Բնակչութեան ոչ-անհրաժեշտ մասը հեռացնել Կարսից:

Այս ամէնը, սակայն, աւելորդ կը դառնայ, եթէ արտաքին ազդու միջամտութիւն չլինի Թուրքերի դէմ, որովհետեւ տուեալ պայմաններում, մենք ի վիճակի չենք միայն մեր ուժերով պատերազմը շարունակելու:

Երբ զեկուցումս վերջացաւ, մի պահ տիրեց խորին լռութիւն: Ապա ամէն կողմից տեղացին հարցեր: Մանաւորապէս հետաքրը-

Aram webaram.com

քըրութեան առարկայ էր Հոկտ. 14ի, Քաջազնունիի խօսքով, «անփառունակ նահանջը»:

Վրդովեցուցիչ էին եւ Գնդ. Ստոկսի այցելութեան մանրամասնութիւնները, եւ բերդապետ Փիրումեանի պարագան:

Լրացուցիչ բացատրութիւններ տուին զինուորական նախարարը եւ սպարապետը, որոնք, սակայն, ոչնչով չմեղմացրին կացութեան ծանրութիւնը: Հարցը անցեալի քննադատութեան կամ պատասխանատուութեան մասին չէր, եղածը եղած էր: Վայրկեանի հարցը անմիջապէս անելիքին էր վերաբերում. ի՞նչ անել վերջնական փլուզումից փրկելու համար հայրենիքը: Ի՞նչպէս պաշտպանել Կարսը, որ նշանակում էր ամբողջ երկիրը:



ԼԵՒՈՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ — ՊԱՊԱՇԱ

Սեղանի վրայ էր եւ Կարսի ճակատի ընդհանուր հրամանատար Զօր. Սիլիկեանի ընդարձակ հեռագիրը՝ Կարսի ռազմաճակատի գործերի մասին, որ զինուորականի զուսպ բառերով նոյն հարցերն էր շօշափում միեւնոյն ճակատագրական եզրակացութիւններով եւ պահանջներով: Պահանջներ, որոնց զինուորական նախարարութիւնը ի վիճակի չէր դոհացուցիչ պատասխան տալու:

Կէս գիշերը անցել էր արդէն, բայց Կարսի փրկութեան դարմանը չէր գտնուում: Ամենքը յոգնած էին եւ ջղայնացած:

— Ուշ է, վերջացնենք, յայտարարեց վարչապետը, հարցի

Aram webaram.com

քննութիւնը յետաձգենք յաջորդ նիստին: Զեկուցումներից բխող գործնական հարցերը յանձնենք վինուորական նախարարութեան ուշադրութեան:

Ժողովը ցրուեց անորոշութեան մէջ: Կարսի ապագան, սակայն, որոշ էր: Ի՞նչ կարող էր անել վինուորական նախարարութիւնը տուեալ պայմաններում: Ի՞նչ կարող էր անել նախարարական խորհրդի յաջորդ նիստը...

Այս երեկոյ Բաթալեանը անձկութեամբ լուրի պիտի սպասէր Կարսի ուղիղ հեռագրաթելի մօտ: Ի՞նչ պիտի ասէ նրան Երեւանը, ի՞նչ կարող էր ասել:

— Պինդ կացէ՞ք...

Կամ սպարապետի բերանով, ռուսերէն.

— Սպասի վաս բոգ... Աստուած պահէ ձեզ...

Բայց անդին, նոյն ռուսերէնով, պատերազմ էր յայտարարուած Աստծու եւ Հայաստանի դէմ: Պատերազմ ամբողջ աշխարհին:

Մենք, ի սարսափ բոլոր բուրժույների,
Համաշխարհային հրդեհ կը վառենք...

Տրեխաւոր Հայաստանը բուրժույ էր, եւ պրոլետարացած Ռուսը պատիս էր Թուրքի ձեռքով արեան մէջ խեղդելու բուրժույ Հայաստանը...

Հոկտեմբեր 30... Այդ օր Երեւանը անսովոր կերպով մռայլ էր: Բնութիւնը, կարծես, սուգի մէջ էր: Իմ առանձնասենեակի մեծ պատուհանից, նոսր մշուշի մէջ, երեւում էր Մասիսի գորշ ուրուագիծը՝ գագաթը ամպերի մէջ պարուրուած: Հայոց Մասիսը... դերի Թուրքին:

Սովորութիւն դարձած էր արդէն, Հայր Աբրահամն ու Պապաչան, կէսօրից յետոյ, ինձ մօտ էին գալիս մի բաժակ «Ախթամար» թիւ 35 կարմիր գինու եւ մտերիմ զրոյցի համար, անցեալի եւ ապագայի մասին:

Այդ օր Հայր Աբրահամը առանձնապէս թախծոտ էր:

— Կարծես մի բան պիտի պատահի, ասում էր նա:

— Էլ ի՞նչ մի բան, հարցրեց Պապաչան, բան մնա՞ց, որ պատահած չլինի:

Եւ, իսկապէս, բան մնացե՞լ էր, որ պատահած չլինէր մեր գլխին, Հայ ժողովրդի ու Հայաստանի գլխին: Այն օրից, երբ ազատասէր Հայկը եկաւ հաստատուեց այս քաքաւոտ լեռներում, մեծ ճանապարհի վրայ, դարեր ու դարեր, մինչեւ այսօր, ի՞նչ է Հայի

Aram webaram.com

ճակատագիրը... ինչո՞ւ չմնար իր Սանասարի հայատառ հովտում եւ խաղաղ չորոճար իր հայը Բէլի մասուրից...

— Զառանցում ես, վրդովուեց Պապաչան: Եթէ այդքան խելացի ես, ինչո՞ւ չես ուղում ապրել Ստալինի ախոռում՝ կերակրուելով բոլշեւիկների մսուրից...

Պապաչան հազիւ վերջացրել էր խօսքը, երբ օդում զգացուեց ինչ որ իրարանցում. հեռուից հասնող դնդացիրի տրաքտրաքոց լինէր կարծես, որ արագ մօտենում էր:

Զանգի Բասարի կողմից, բարձր երկնքում, չառաչով լինում էր մի սաւառնակ, որ սոսկալի չառաչով շրջան արաւ Երեւանի վերեւ՝ սոսկում պատճառելով բնակիչներին եւ իջաւ դեռին կայարանի ուղղութեամբ, անթել հեռագրի կայանի մօտերը:

Ո՛վ պիտի լինէր այս անհրաւէր այցելուն: Վաղեցի հեռախօսի մօտ, բայց Երեւանի հեռախօսը այն օրերին... աւելի արագ կարող էիր Նիւ Եորքից լուր առնել, քան թէ հեռախօսով մայրաքաղաքի արեւէ թաղից... Հեռախօսի գործիքը մերժեց հնազանդուել ինձ:

— Ես գնացի, կանչեցի իմ հիւրերին եւ դուրս թռայ անից:

Քաղաքը արդէն անհանգիստ շարժման մէջ էր: Փողոցում մարդիկ չուտաած հարցնում էին իրար.

— Ո՛վ է, ի՞նչ է...

Կառավարական չէնքում պարզուեց. մեր պինուորական սաւառնակն էր, սեւ գոյժ էր բերել մեզ.

— Կարսը ընկել էր Թուրքերի ձեռքը...

Օգոստոս, 1959

Բուա դը Բուլոն, Լիբանան

Aram webaram.com

ՃԱՄԲՈՒՍ ՎՐԱՑ

I. ՍԵՒԵՐ ՀԱԳԱԾ ԿԻՆԸ

Ամերիկայումն էի։

Յովսէփ Նահիկեանը եւ ձան Արզուհալճեանը գրել էին Շիքագոյէն, որ անպատճառ կիրակի օր իրենց մօտ լինեմ, հրապարակային ժողովի եւ կարեւոր խորհրդակցութեան համար։

Մտածեցի՝ Շաբաթ օր սաւառնակ կ'առնեմ, երեկոն կ'անցընեմ Յովսէփի եւ Արզուհալի հետ, կիրակի էլ ներկայ կը լինեմ հրապարակային եւ խորհրդակցական ժողովներին։

Բայց մարդ մտածում է, ճակատագիրն է անօրինում։

Տոմսակը գնել էի, Նիւ Եորքի 42րդ փողոցի վրայ, եւ տեղատորում էի գրպանումս դրամի մնացորդը, երբ ականջիս հասաւ յուզուած խօսակցութիւն տոմս ծախող պաշտօնեայի եւ սեւեր հագած մի կնոջ միջեւ։

— *Այսօրուայ համար Շիքագոյի տոմս չի մնացել, տիկին, վերջինը այս պարոնը առաւ, ասում էր պաշտօնեան՝ ցոյց տալով ինձ։*

— *Բայց ես անպատճառ պէտք է մեկնիմ այսօր, հասկանո՞ւմ էք, պէտք է մեկնիմ, անպատճառ, հիւանդ աղջիկս ինձ է սպասում հիւանդանոցում...*

— *Ցաւում եմ, այսօրուայ համար տոմս չի մնացել... Դիմեցէք պարոնին, դուցէ պիջի...*

Սեւեր հագած կինը անհամարձակ՝ դարձաւ ինձ.

— *Պարոն, աղաչում եմ, ասաց լացակումած ձայնով, ջանալով զսպել արցունքները, աղաչում եմ... Աղջիկս ծանր հիւանդ է*

Aram webaram.com

Շիքագոյի հիւանդանոցում... Ինձ է սպասում, ո՞վ գիտէ... ես այսօր պէտք է հասնեմ նրա մօտ... աղաչում եմ՝ ներկեցէք ինձ ձեր տոմսակը...

Իմ ծրագիրը խանգարւում էր, բայց ինչպէ՞ս մերժէի սեւեր հագած այս կնոջ թախանձագին խնդրանքը: Գուցէ իսկապէս աղջիկը մահամերձ վիճակի մէջ՝ անհամբեր սպասում էր մօրը վերջին համբոյրին...

— Շատ բարի, պատասխանեցի տիկնոջ, ահա՛ տոմսը, առէ՛ք:

Քիչ մնաց ձեռքս համբուրէր խեղճ կինը:

Օրհնելով հեռացաւ: Ես անցայ փողոցի միւս կողմը, Գրանդ Սէնտրըլի կայարանը՝ ապահովելու Շիքագօ մեկնող առաջին գնացքի տոմսը:

Բըֆլօ կայարանում Նիւ Եորք–Շիքագոյի գնացքը կանգնում է բաւական երկար, եւ ճամբորդները հնարաւորութիւն ունեն դուրս գալու մի քիչ ոտքերը չարժելու եւ օրուայ վերջին թերթերը գնելու:

Տեղական թերթի առաջին էջի վրայ, խոշոր տառերով, կարդացի սարսափով.

Էքըըն, Օհայոյի մօտ, խորտակուել էր այն սաւառնակը, որի մէջ սեւեր հագած կինը գնում էր Շիքագօ իր մահամերձ աղջկայ տեսութեան: Սաւառնակի բոլոր ճամբորդները, քառասուն քանի հոգի, մեռել էին...

Այդ քառասուն քանի հոգու մէջ պէտք է լինէի եւ ես, եթէ սեւեր հագած ապարախտ կինը, լացակումած աչքերով, չաղերսէր ինձ, իրեն փոխանցելու իմ տոմսը...

Վերջը, Շիքագոյում, երբ պատմեցի պատահածը, Ցովսէփը ուրախ բացագանչեց.

— Փառք տուր Աստծուն... Աստծոյ պահած թռչունին ուրուրը չի մօտենար...

— Ի՞նչ Աստուած, ի՞նչ ուրուր, պատահմունք է, զուգադիպութիւն, ընդմիջեց Արզուհալը:

Ցովսէփը, որ հաւատացեալ մարդ էր, ծուռ-ծուռ նայեց ընկերոջ եւ դարձաւ ինձ:

— Դուն ի՞նչ կը կարծես, հրաշք չէ՞ր քեզ հետ պատահածը:

Ջեմ յիշում՝ ես ինչ պատասխանեցի ու շատ կարեւորութիւն էլ չտուի դէպքին. մարդու կեանքում այնքան բաներ են պատահում: Բայց այժմ, յաճախ, մտածում եմ. իսկապէս ի՞նչ էր պատահածը՝ պատահմո՞ւնք, զուգադիպութի՞ւն, ճակատագի՞ր, թէ՞ հրաշք...

Դժբախտաբար, հրաշքներին չենք հաւատում մենք այսօր,

Aram webaram.com

ճակատագիր չենք տեսել: Պատահմո՞ւնք, զուգադիպութի՞ւն. ես ի՞նչ գիտեմ: Ո՞վ գիտէ...

Ինչ որ գիտեմ՝ այն է, որ սեւեր հագած, լացակումած աչքերով կինը այլեւս գոյութիւն չունի, իսկ ես դեռ ապրում եմ: Եւ շատ անգամ էլ մտածում եմ. աւելի լաւ չէ՞ր լինի, եթէ ես դրամն ու տոմսակը դուրսը տեղաւորէի գրպանումս եւ չհանդիպէի սեւեր հագած կնոջ...:

II. ԻՄ ՈՒՂԵԿԻՑ ՊԱՏՈՒԵԼԻՆ

Փըրլ Հարբորի օրերն էին: Ամերիկան արդէն մտել էր պատերազմի մէջ: Լօս Անճէլէսից գնում էի Սան Ֆրանչիսքօ, բանախօսելու հրապարակային ժողովում:

Ֆրէզնոյում վագոն մտաւ միջահասակ ու միջին տարիքի մի պարոն եւ գրաւեց իմ յետեւի նստարանը:

Նորեկը անհանգստարար շարժումներով դէս ու դէն էր նայում, կարծես աչքաւորում էր իր վրայ հրաւիրել իմ ուշադրութիւնը. խօսակից էր փնտռում: Վերջը չդիմացաւ եւ հարցրեց հայերէն.

— Կը ներէք համարձակութեանս, կարծեմ հա՞յ ըլլալու էք:

— Հայ եմ, ատատխանեցի ես կարճ:

— Ես ալ հայ եմ, յայտարարեց նա ուրախացած, թէեւ դրա կարիքը չէր զգացւում. հայերէն լեզուն եւ ամբողջ արտաքինն ու շարժուձեւը հայկական էին:

Աւելի ճիշդ՝ քալիֆորնիական: Քալիֆորնիացի հայը մէկին որ հանդիպի, մինչեւ որ եօթը պորտը չիմանայ, օձիքը բաց չի թողնի:

— Ներողութիւն, թոյլ կու տա՞ք ձեր քով նստիմ, ասաց պարոնը եւ առանց իմ արտօնութեան սպասելու, տեղաւորուեց մօտս:

— Այսպէս լաւ եղաւ, դուն հայ, ես հայ, մեր մէջ չկայ խըտրութիւն, արտասանեց զուարթ: Թոյլ տուէք՝ ներկայացնեմ անձս. Պատուելի Այտինէեան. Ֆրէզնոյէն: Պատուելի ըսի, բայց Աստծուն սպասաւորելը այժմ հաց չի տար: Քիչիկ մըն ալ ուրիշ գործերով ալ կը զբաղիմ...

Ու յետեւի գրպանից հանեով՝ պարզեց ինձ այցետոմսը. Պատուելի Այտինէեան, հասցէ ու հեռախօսի թիւ. եւ վարը՝ ձեռագիր՝ դորգ ու կապերտի վաճառորդ...: Մարդը թէ՛ Աստծուն էր ծառայում, թէ՛ մարդկանց:

Aram webaram.com

— Խանութ չունիմ, ո՛չ, ձեռքի վրայ կ՚առնեմ–կը ծախեմ։ Ցանճնակատարութիւն ալ կ՚ընեմ... Ինչ ընենք, կին ու զաւակի ապրուստը պէտք է հանել։

— Է, կը հանէ՞ք, հարցրի ես։

— Կը հանուի, ինչո՞ւ չէ։ Գործդ նորոգել ալ կրնամ։ Գործ ընել պիտցողը Ամերիկայի մէջ անօթի չի մնար։ Օրհնեալ երկիր է այս երկիրը... բայց ներողամիտ եղէք, կ՚ապաչեմ. ես է որ կը շատախօսեմ, որո՞ւ հետ պատիւ ունիմ ծանօթանալու։

— Այդ շատ էլ կարեւոր չէ, պատասխանեցի, մի պատահական ճամբորդ...

— Հարկաւ, հարկաւ... բայց մարդ, ճամբորդն ալ անուն կ՚ունենայ, կ՚ապաչե՛մ...

— Իմ անունը հազիւ թէ բան ասէ ձեզ. Սիմոնեանց...

— Շատ ուրախ եմ, Պր. Սիմոնեանց, շատ ուրախ եմ, ասաց նա պինդ սեղմելով ձեռքս. կրնա՞մ իմանալ, կ՚ապաչեմ, ո՞ւրտեղէն կու գաք, ի՞նչ գործով...

Ահա, մոռցեցի ես, մինչեւ որ ես թը պրոս չիմանայ, օձիքս բաց չի ձգի։ Ու չուզեցի բաւարարութիւն տալ.

— Ղարաբաղցի եմ, Փարիզից եմ գալիս, Նիւ Եորք էի, այժմ այստեղ եմ, առեւտրական գործով, ալիշ–վերիշ...

Մակայն, մարդը այդքանով չբաւականացաւ. ուզեց իմանալ նաեւ, թէ ի՞նչ գործով եմ զբաղւում, ի՞նչ կ՚առնեմ–կը ծախեմ։

— Ալիշ–վերիշ, պատասխանեցի ես, մէկից առնում եմ, միւսին ծախում, ձեզ պէս...

— Ֆրանսա հայերը ի՞նչպէս են, փոխեց նիւթը, ազգային կեանքը հոն ինչպէ՞ս է, կուսակցութիւնները համերա՞շխ են....

— Հայերը լաւ են։ Ազգային կեանքն էլ լաւ կ՚երեւի։ Կուսակցութիւններից լուր չունեմ...

— Կուսակցութիւններէն լուր չունի՞ք, զարմացաւ նա, Ամերիկայի կուսակցական պայքարներու մասին լսած կ՚ըլլաք, անշուշտ։

— Բան չեմ լսել, ես առեւտրական մարդ եմ, ուրիշ բանով չեմ հետաքրքրւում... Այստեղ, ձեզ մօտ ինչպէ՞ս է ազգային կեանքը, դիմեցի ես յարձակման. կուսակցութիւններ կա՞ն, ի՞նչ են անում։

— Կան, ինչո՞ւ չէ, ժպտաց նա, ի՞նչ պիտի ընեն, կը կռւին իրարու հետ. բեմերէն, թերթերէն, եկեղեցիներու մէջ, ամէն տեղ...

— Ի՞նչ կուսակցութիւններ կան ձեր Ֆրէզնոյում։

— Ինչ որ ամէն տեղ՝ դաշնակ, հնչակ, ռամկավար։

Aram webaram.com

— Դո՞ւք որ կուսակցութեան էք պատկանում, հետաքրքրուեցի ես:

— Ե՛ս, ժպտաց նա կասկածելի ժպիտով, ես ձեր կուսակցութեան կը պատկանիմ, առեւտուրէ զատ ուրիշ բանի գլուխ չունիմ:

Մի վայրկեան կասկածեցի, թէ այս մարդը արդեօք ձեռք չէ՞ր առնում ինձ, բայց այնքան բնական եւ անկեղծ էր պահում իրեն...

— Ամենուն ժողովներուն ալ կ'երթամ, ասաց նա, կարծես փարատելու համար իմ կասկածը, բոլորի մէջ ալ ունիմ լաւ բարեկամներ:

— Է՛, ո՞րը աւելի զօրաւոր է Ֆրէզնոյում:

— Միայն Ֆրէզնոյի՞ մէջ, ամբողջ Քալիֆորնիոյ եւ ամբողջ Ամերիկայի մէջ Դաշնակցութեանն է առաջին տեղը. եկեղեցի, ընտրոց, ակումբ, կիներու եւ երիտասարդներու կազմակերպութիւն, բանիմաց մարդիկ, անոնք են առաջին տեղը...

— Ինչ էք ասում, զարմացայ ես, հապա Նիւ Եորքում ասացին ինձ, թէ Դաշնակները այժմ ոչինչ են...

— Ձեզի այդպէս ըսողները ոչինչ են...

Գնացքը մօտենում էր Բըրքլի կայարանին: Այստեղ պէտք է բաժանուէինք. բարեկամս պէտք է մնար Բըրքլիում, իսկ ես հանրակառքով պիտի կորէի լայն ծոցի կամուրջը, Սան Ֆրանչիսքօ հասնելու համար:

Պատուելին սկսեց վերից վար իջեցնել պայուսակները. իսկ ես ներքին զոհունակութեամբ մտածում էի, թէ ինչպէս ձեռք առի նրան:

Գնացքը կեցաւ: Բարեկամս ձախ ձեռքում պայուսակը, աջով պինդ թոթուում էր ձեռքս՝ ուրախութեամբ:

— Ցտեսութիւն... Պարոն Վրացեան: Շատ ուրախ եմ, շա՛տ, որ պատիւ ունեցայ ծանօթանալու ձեզ հետ, Պր. Սիմոն Վրացեան...

Կարո՞ղ էք երեւակայել իմ վիճակը. ես կարծում էի՝ ես եմ ձեռք առնում նրան, մինչդեռ նա էր ինձ խաղացնում...

Յաջորդ օր հրապարակային ժողով ունէինք «Իոստոմ» ակումբում: Երբ ես բարձրացայ բեմ բանախօսելու, տեսայ առաջին շարքում, ժպտում էր իմ ուղեկից պատուելին...

Երբ վերջը կոմիտէի առենապետ Եսայիին հարցրի թէ ո՞վ է այս մարդը, ծիծաղելով պատասխանեց.

— Պատուելին մեր համակիրներէն է:

— Բոլորի համակիրներէն, վրայ բերեց մի ուրիշ ընկեր:

Aram webaram.com

— Իր դրպանի համակիրն է, սրբագրեց խստակրօն ընկ. Յովսէփ Գասապեանը: Ուր հաց, հոն կաց...

Համակիր թէ ոչ, բայց իմ դլխին լաւ խաղ խաղաց «ալիշվերիշ» պատուելին, որ զորդ նորոգել էլ դիտէր...

III. ՇՈՒԵԴՈՒՀԻՆ

Լաւ չեմ յիշում, Հէվըրհիլ, թէ Լորէնս, կարծեմ Լորէնս էինք գնում բանախօսելու Հ. Ց. Դաշնակցութեան հրապարակային ժողովում, Օննիկ Զէոկիւրեան, ճէսփըր Ռըստիկեան եւ ես:

Օննիկը դերձակ էր, համոզուած դաշնակցական, մի քիչ ընկերվարական հովերով: Կարդում էր Ֆրանսերէն գրքեր եւ Ֆրանսերէնից թարգմանութիւններ անում «Հայրենիք»ի համար: Մեր «Հայրենիք»ի ընտանիքի սիրուած անդամներից էր: Առաջին Համաշխարհային պատերազմից առաջ վերադարձաւ Պոլիս, ուր հիմնեց «Միներվա» դերձակատունը: Նշանուած էր եւ պատրաստւում էր ամուսնանալու, երբ զոհ գնաց Մեծ Եղեռնին, ուր նահատակուեցաւ եւ իր եղբայրը՝ համակրելի գրող Տիգրան Զէոկիւրեանը:

ճէսփըր իրաւաբանութեան ուսանող էր համալսարանում, հետաքրքրւում էր ընկերային հարցերով, սկսել էր աշխատակցել «Հայրենիք»ին. հռետորական յատկութիւններ ունէր: Ես համոզուած էի, թէ դաշնակցական փայլուն գործիչ պիտի դառնար ապագային եւ ամէն կերպ առաջ էի քաշում նրան:

Նորթ Ստէյընից գնացք առինք եւ տեղաւորուեցինք վերջին վագոնի յետեւի մասում, մուտքի մօտ:

Գնացքի շարժուելուց մի վայրկեան առաջ, չտապով ներս մտաւ բարձրահասակ եւ ուշադրաւ տեսքով մի աղջիկ եւ, առանց շուրջը նայելու, տեղ գրաւեց առջեւի նստարանի վրայ, ճէսփըրի կողքին:

— Համեղ պատառ ունեցար, ճէսփըր, նկատեց Օննիկը:

Շէկ, սիրուն, յարդարուած մազերով, դէմքի նուրբ դծերով, ծաւալ աչքերով, ճաշակով հագնուած երիտասարդ աղջիկ էր, որ խոկապէս չէր կարող չգրաւել մարդու ուշադրութիւնը:

— Բախտդ բանեց, մեր տղայ, ասաց Օննիկը ճէսփըրին, որ մինչեւ ականջը կարմրեց:

— Սիրով կը դիջեմ քեզ, պատասխանեց նա:

— Չէ, քեզ պահէ: Լաւ որսը որսորդը ուրիշին չի դիջիր...

Aram webaram.com

— Զդոյշ խօսեցէք, զգուշացրի ես եւ պատմեցի մի դէպք իմ ուսանողական կեանքից:

Մի օր ընկերներով նստած էինք Պետերբուրգի Ամառնային Պարտէզում, երկար նստարանի վրայ: Մի ծայրում նստած էր տարէց մի կին: Պետերբուրգի պարտէզում նստած կինը, անշուշտ, ռուս պիտի լինէր:

Տղաները սկսեցին սրախօսութիւններ անել այդ կնոջ հասցէին. ինչպէ՞ս է եղել երիտասարդութիւնը, քանի՞ սիրական է ունեցել, եւայլն: Ի՞նչ կարող են խօսել երիտասարդները կնոջ մասին, մանաւանդ, եթէ նրանց մէջ կան ղարաբաղցիներ: Կինը նստած էր անտարբեր: Մէկ էլ թղթերի տրցակը թեւի տակ՝ վազելով մեզ մօտեցաւ մի տղայ, նետեց մի թերթ ու վազեց-գնաց:

Մի մեծ վաճառատան յայտարարութիւն էր: Թերթը ձեռքից ձեռք անցաւ եւ երբ հասել էր կնոջ մօտը նստողի ձեռքը, կինը դարձաւ նրան՝ մաքուր հայերէնով.

— Ինդրեմ, պարոն, կարո՞ղ եմ տեսնել այդ թերթը...

Եթէ թռչունների երամի վրայ, յանկարծ, քար նետէիր, մեզանից աւելի արագ չէին փախչի:

— Զդոյշ խօսեցէք, խրատեցի ես, դի ոչ գիտէք, թէ ինչը ինչոց է:

Աղջիկը նստած էր անտարբեր: Դէմքի ոչ մի մկան չէր շարժւում: Որոշ էր, որ հայերէն չէր հասկանում:

— Ձէսփըր, ասաց Օննիկը, փորձէ հետը խօսել հայերէն:

— Անգլուհի է, պատասխանեց Ձէսփըր:

— Չեմ կարծեր, առարկեց Օննիկը, աւելի հաւանական է չուեդուհի է:

— Դո՞ւ ինչ կը կարծես, բոս, դարձաւ ինձ Ձէսփըրը:

— Չգիտեմ: Կարող է անգլիացի լինել, կարող է եւ գերմանացի լինել, հաւանական է, չուեդ է, բայց քիչ դատելով՝ կարող է հայ էլ լինել...

— Հայ չէ, վճռական կերպով յայտարարեց Օննիկը:

Եւ քանի որ հայ չէր, այնուհետեւ սկսուեցին քննական վերլուծումները օրիորդի մարմնական եւ հոգեկան յատկութիւնների մասին... Ինչե՛ր կարող են ասել երեք ամուրի երիտասարդներ մի գեղեցիկ կնոջ մասին... Օրիորդը լսում էր անտարբեր, դէմքի ոչ մի մկան չէր շարժւում: Է՛հ, չուեդուհին ի՞նչ պիտի հասկնար հայերէն խօսքերից...

Aram webaram.com

*
**

Սրահը բերնէ բերան լեցուած էր երկսեռ բազմութեամբ: Ակ–ներես էր, որ յաջող հրապարակային ժողով պիտի ունենայինք:

Նախագահը հանդիսաւոր բացումը կատարեց եւ Ամերիկեան ազգային երգից յետոյ, բեմ հրաւիրեց բանախօսելու ճէմփըը Ռըս–տիկեանին:

Ճէմփըըը հաստատուն քայլերով բարձրացաւ բեմ, թափ տը–ւեց գանգուր մազերը եւ սկսեց առաջուց պատրաստած ճառը.

— Տիկիննե՛ր եւ պարոններ, տասերորդ դարու վերջերը, Ա–սիայի խորքերէն... ու, յանկարծ, կաս–կարմիր կտրած՝ կեցաւ: Գրպանից հանեց թաշկինակը, սրբեց ճակատի քրտինքը ու նորից սկսեց:

— Տիկիննե՛ր եւ պարոններ...

Բնաւ ճէմփըրի նման չէր: Սովորաբար, նա համարձակ ու տրամաբանօրէն խօսող էր: Այժմ յուզւում եւ անկապ բաներ էր ա–սում: Ես ծանօթ էի նրա խօսելիքին: Այժմ տարօրինակ բաներ էր ասում եւ կարճ կապելով՝ իջաւ բեմից:

Ըստ յայտագրի, յաջորդ խօսողը Օննիկ Զէոկիւրեանն էր: Գրեթէ բառացի նոյն բանը պատահեց եւ Օննիկի հետ: Հազիւ սկսել էր իր նիւթը ներկայացնել, մէկ էլ խօսքի թելը կորցրեց: Մի պահ կեցաւ: Ումպ–ումպ պարպեց սեղանի վրայի ջուրը եւ նոյնպէս կարճ կապելով՝ իջաւ բեմից:

Վերջապէս, հերթը հասաւ ինձ: Ես առաւելութիւն ունէի բա–նախօսելիս նայել յետեւի շարքերին: Իմ բանախօսութիւնը ընթա–ցաւ հարթ, առանց միջադէպի: Խօսքս աւարտելու վրայ էի, որ աչք նետեցի առջեւի շարքերի վրայ: Եւ, ով ասրսափ, ճիշդ իմ դիմաց, երկրորդ շարքում, նստած էր... «չուեղուհի»ն: Հայեացքը ուղղած բեմախօսին, բերանը կիսաբաց, կարծես ուզում էր ասել հեգնան–քով.

— Զոյչ խօսիր, հա՛...

Մի պահ չփոթուեցի, բայց արդէն վերջանում էր...

Երբ ժողովից յետոյ դուրս էինք գալիս սրահից, Օննիկն ու ճէմփըրը իրար յետեւից հարցրին.

— Տեսա՞ր...

— Տեսայ, տեսայ, պատասխանեցի ես, նրան էլ տեսայ, ձեզ էլ տեսայ:

Բայց պատմութիւնը սրանով չվերջացաւ:

Aram webaram.com

Ժողովից յետոյ հրաւիրուած էինք ճաշի ընկերներից մէկի տանը: Այսպէս է Ադամ–Եւայի օրերից սկսած. առաջ ճառ, վերջը՝ ճաշ:

Սեղանի շուրջ նստած՝ ականջ էինք դնում խոհանոցի ամանների երաժշտութեան: Մէկ էլ դուռը բացուեց, ներս մտաւ տանտիկինը՝ կերակուրի մեծ ափսէն բռնած, նրա յետեւից էլ անիրաւ շուեդուհին՝ նոյնպէս ափսէով զինուած՝ անտարբեր հայեացքով, կարծես առաջին անգամն էր տեսնում մեզ: Տան տիկնոջ ազգականն էր, որ իր մօտ հիւր էր եկել Նիւ Եորքից եւ շատ սիրած էր մեր խօսածները... Այդպէս ներկայացրեց մեզ տանտիկինը:

Մեր ո՞ր խօսածները սիրած էր, սակայն...

IV. ԱՐԺԱՆԹԻՆԻ ԿԻԶԻՉ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

Քիչ անդին, ուսս երիտասարդ նկարիչ Պետեան, իմ բարեկամը եւ պանդոկի բոլոր բնակիչների սիրելին, դիմաւորի ընկերակցութեամբ երգում էր զուցմունքով.

— Արժանթինի կիզիչ երկնքի տակ...

Իսկապէս որ երկինքը կրակ էր թափում: Թէեւ Պիրենէի բարձունքից թեթեւ հով էր փչում, որից ոսոխի տերեւները դողում էին նուրբ նուագով, բայց հարաւի արեւը այնքան խիստ էր, որ մարդ ծուլանում էր տեղից չարժուելու:


Արժանթինի կիզիչ երկնքի տակ, անընդհատ կրկնում էր ա–նիրաւ Պետեան, փեռնոյի դաւաթը առջեւը, սեղանի վրայ: Եւ այդ երգը իմ երեւակայութիւնը տարաւ դէպի հեռաւոր Հարաւային Ամերիկան, որտեղից այնքան յիշողութիւններ ունէի եւ, որոնք դեռ թարմ էին իմ մտքում:

Ցիշեցի մի ճամբորդութիւն, պատահական մի հանդիպում պատահական մի անձի հետ, պատահական մի վայրում: Շատ ճամբորդող մարդիկ կը վկայեն. երբեմն աննշան մի դէպք, աննշան մի վայրում, այնպէս ամուր տեղաւորւում է ուղեղիդ մէջ, որ երբեք չես մոռանայ:

Վերադառնում էի Մէջին Արժանթինի կենտրոնական քաղաք Քորդոբայից Բուէնոս Այրէս, ընկերների ուղեկցութեամբ: Քորդոբան, իր բնութեամբ ու կլիմայով, մի քիչ յիշեցրեց ինձ մեր Իջեւանի չրջանը: Իջեւանում միայն նարնջենիներ պակաս են: Օդը մաքուր եւ կազդուրիչ, հողը արդասաբեր, ճոխ բուսականութիւն: Ար–

Aram webaram.com

ժանթինի դիւղատնտեսական նախարարութիւնից առաջարկեցին, որ մի քանի հազար հողագործ հայեր բերենք Քորդոբայի շրջանը։ Խոստանում էին տալ հողեր, բանալ վարկ, որոշ ժամանակ տուրք չգանձել նորեկներից։ Անձնապէս ես համամիտ չէի։ Առաջարկը տարի Հ. Հ. Փարիզի պատուիրակութեան, եւ ընթացք չտուինք։ Նախ՝ արտասահմանի հայերը չէին սիրում հողագործութիւնը. Ցունաստանից եւ Սուրիայից Ֆրանսա փոխադրուած չափահաս որբերի պատմութիւնը դեռ թարմ էր բոլորի յիշողութեան մէջ. Ֆրանսա բերուած էին որոշ ժամանակ ագարակներում աշխատելու պայմանով. համարեա ամէնքը փախան քաղաքներ։



ԶԱՊԷԼԻԿԸ ԵՒ ԻՐ ԾՆՈՂՆԵՐԸ

Երկրորդ, մտածում էինք մենք, Արժանթինում, ճիշդ է, հայերը կարող էին բարեկեցիկ դառնալ եւ անձնապէս գոհ լինել, բայց նրանց զաւակները անխուսափելի կերպով պիտի օտարանային ու կորչէին Հայութեան համար։ Այն ժամանակ դեռ աւելի լաւատես էինք, չասելու համար միամիտ, եւ հաւատում էինք, որ Եւրոպայում հայը հայ կը մնայ, կամ գէթ աւելի երկար ժամանակ հայ կը մնայ։ Ո՛վ սրբազան միամտութիւն...

Քորդոբայում ես վայելեցի ընկերների եւ բարեկամների, կարելի է ասել, ողջ հայ գաղութի սէրն ու գուրգուրանքը. հիւրասիր-

Aram webaram.com

ուեցի ընկ. Յովհաննէս Թախտաճեանի համակրելի յարկի տակ եւ այժմ փոքրիկ Զապէլիկին մնաս բարովի համբոյր տալով՝ վերադառնում էի Բուէնոս Այրէս ընկերների հետ:

Զապէլիկը, ընկ. Յովհաննէսի սիրուն աղջնակը, սովորում էր Հայոց ազգային դպրոցում, ուր դասաւանդում էր համակրելի Գուրգէն քհնյ. Թաշճեանը, որ վերջը չուստակ վարդապետ դարձաւ:

Մի օր սեղանի վրայ, հարցրի.

— Զապէլիկ, ո՞վ է ձեր ուսուցիչը:

— Մեր օրիո՞րդը:

— Հա՛, ձեր օրիորդը:

— Մեր օրիորդը տէր-հայրն է, պատասխանեց Զապէլիկը չարաճճի մի ժպիտով:

Ուրեմն, Քորդոպայից վերադառնում էի Բուէնոս Այրէս: Երկաթուղին անցնում էր անծայրածիր պարարտ դաշտերով, ուր արածում էին անհաշիւ անասուններ: Այստեղից էր գալիս այն աղի եւ անախորժ հոտ արձակող միսը, որ Փարիզի Սէն Միշէլ թաղի աժաններց ճաշարաններում հրամցնում էին մեզ:

Աստուած իմ, ի՜նչ ընդարձակ է, հարուստ այս երկիրը: Բնութիւնը ամէն բարիք չնորհել է նրան, բայց մարդը, այդ ագահ ու գիշատիչ անասունը, ոչ մի ջանք չի խնայում անտանելի դարձնելու կեանքը:

— Այս երկու կողմի հողերը կը տեսնե՞ս, ասում է ինձ ընկերս, բոլորը մէկ մարդու կը պատկանին: Գնացքը չորս ժամ պիտի անցնի մէկ մարդու հողերէն: Տէրը ոչ հողի հաշիւը գիտէ, ոչ անասուններուն...

Իսկ ես, Բուէնոս Այրէսի մէջ, տեսայ թաղեր, ուր երեխաները ուտելու հաց չունէին եւ դործազուրկները երկար շարքեր կազմել էին աշխատանք հայթայթող դրասենեակների առջեւ...

Մեզ մօտ նստած էին երեք երիտասարդներ՝ տխուր դէմքերով: Բարձրահասակ, բարեկազմ, կոկիկ հագնուած, ակնյայտնի կերպով, Քաստիլիայի սերնդից, անխօս ծխում էին: Մեր ընկերներից մէկը փորձեց խօսքի բռնուել նրանց հետ. խուսափեցին: Մէկը մանաւանդ, խիստ մռայլ էր. երեւի, մեծ դժբախտութեան էր ենթարկուել: Գլուխը կախ, լուռ, ականջներով հետեւում էր մեր խօսակցութեան: Վերջապէս, հարցրեց.

— Պարոնները ի՞նչ լեզուով են խօսում:

Եւ երբ իմացաւ, որ հայ ենք, ասաց աչխուժացած.

Aram webaram.com

— Ես հայ բարեկամներ ունեմ Բուէնոս Այրէսում: Համակրելի մարդիկ են Հայերը:

Սառոյցը կոտրուած էր: Երեք հայեր, երեք արժանթինցիներ — շուտով խօսակցութիւնը կենտրոնացաւ: Սպանիերէնից զատ ուրիշ լեզու չէին խօսում: Արժանթինից դուրս ուրիշ երկիր չէին տեսել:

Մեզ պէս վերադառնում էին Բորդոյից, ուր գնացել էին նահանգային ընտրութեան առթիւ: Մոայլ պարոնը նահանգապետութեան թեկնածուն էր իր երկու ընկերների հետ: Զարաչար պարտուած՝ այժմ վերադառնում էին մայրաքաղաք՝ յուսահատ:

— Վերջացաւ, ձեռքի վճռական շարժումով, յայտարարեց թեկնածուն: Մէկ էլ այսպիսի յիմարութիւն չեմ դործի: Կ'երթամ իմ փաստաբանութիւնը շարունակելու...

Երիտասարդ փաստաբան էր, հարուստ ընտանիքից: Ամէն արժանթինցի փաստաբանի առաջին ձգտումն էր Բորհդոպարանի ընտրեալ կամ նահանգապետ ընտրուել, որպէսզի քիչ աշխատի եւ շատ շահի: Իրար դէմ պայքարող երկու մեծ կուսակցութիւններից մէկի պարագլուխներից էր:

— Վերջացաւ ,կրկնեց նա մի քանի անգամ՝ անյոյս:

— Ինչո՞ւ վերջացաւ, հարցրի ես:

— Ինչպէ՞ս թէ ինչու. չարաչար պարտուեցայ:

— Ուրիշ անգամ պարտուե՞լ էք:

Նա զարմացած՝ նայեց երեսիս:

— Այո՛, ուրիշ անգամ պարտուե՞լ էք:

— Ո՛չ, պատասխանեց նոյն զարմացական հայեացքով, այս առաջինն է եւ վերջինը:

— Առաջինը՝ հաւատում եմ, բայց թէ վերջինն է՝ դժուարանում եմ հաւատալ: Ինչո՞ւ պէտք է վերջինը լինի:

Նա աւելի եւս զարմացաւ:

— Այո՛, այո՛, դժուարանում եմ հաւատալ... դուք, տեսնում եմ, շատ էք ծխում: Եթէ այսօր գլխի կամ սրտի ցաւ զգաք, պիտի վերջ տա՞ք ծխելուն: Ձեմ կարծում: Հանրային գործունէութիւնն էլ մոլութիւն է. եթէ այդ բնատուր յատկութիւն է ձեր մէջ, չէք կարող ձգել:

— Բայց այս խայտառակ պարտութի՞ւնը...

— Միեւնոյն պարտութեան ցաւն զգացողը կը զգայ յաղթութեան քաղցրութիւնը:

Ես պատմեցի նրան իմ առաջին, շատ խայտառակ պարտու-

Aram webaram.com

թիւնը էջմիածնի կենտրոնական ժողովի ընտրութիւնների ժամանակ:

— Եւ այնուհետեւ նորի՞ց մասնակցել էք ընտրութեան:

— Անշուշտ:

— Եւ յաղթե՞լ էք, եւ պարտուե՞լ ...

— Անշուշտ, ե՛ւ յաղթել եմ, ե՛ւ պարտուել:

— Եւ ցաւ չէ՞ք զգացել, եւ չէ՞ք յուսահատուել:

— Անշուշտ որ ցաւ զգացել եմ. բայց ինչո՞ւ պիտի յուսահատուէի: Մեր դիւղացիները մի առած ունեն. պարի մէջ մոնողը պէտք է մարմինը շարժել իմանայ:

Եթէ չիմանաս կամ չկամենաս մարմինդ շարժել, չես կարող պարել...

Ընկերներից մէկը պատմեց Հայաստանի Հանրապետութեան վերջին դէպքերի, Փետրուարեան ապստամբութեան մէջ իմ ունեցած դերի մասին: Մարդը լսում էր՝ զարմանքից լայն բացած աչքերով:

— Եւ այդ բոլորից յետոյ, դուք չէ՞ք յուսահատուել եւ շարունակո՞ւմ էք հաւատալ, թէ ձեր իդէալին պիտի հասնիք, հարցրեց նա չուարումով:

— Այո՛, շարունակում եմ հաւատալ, ինչո՞ւ պիտի չհաւատամ: Ես չհասնեմ, ինձանից յետոյ եկողները կը հասնեն իմ իդէալին: Կեանքը պայքար է, բարեկամ, եւ վա՛յ պայքարի դաշտը լքողին. նա անպատճառ կը տրորուի կեանքի անիւների տակ...

Իմ աչ կողմը նստած երիտասարդը առանձին ուշադրութեամբ հետեւում էր մեր խօսակցութեան:

— Այս պարոնը, ասաց նա, խօսում է այն՝ ինչ որ ես եմ մտածում. յաջորդ ընտրութեան մենք պէտք է վերադառնանք Քորդոբա:

Զգիտեմ, Քորդոբա՞ վերադարձան, թէ ուրիշ տեղ գնացին, բայց տարիներ վերջը ես լսեցի, որ առաջին պարտութիւնից յուսահատ փաստաբանը ընտրուել է նահանգապետ:

Գնացքը մօտենում էր Բուէնոս Այրէսին: Արուարձաններից մէկում մեծ աղմուկով մեր վագոնը խուժեցին խայտաբղէտ հագուստներով երիտասարդներ եւ աղջիկներ: Եւ երբ տեղաւորուեցին, մեծ բեղերով մէկը, տնկատնկացնելով ուսից կախուած գիթառը, սկսեց երգել քնքոյշ ձայնով տանգոյի ծանօթ եղանակը: Իմ բարեկամ Պետեայի երգած եղանակն էր.

— Արժանքինի կիզիչ երկնքի տակ...

Aram webaram.com

V· ՕԶԱՍԿՈՑՈՒՄ

— Պատրա՞ստ էք Օզասկօ գնալու· ինքնաշարժը կը սպասէ:

Մեր սիրելի Գիւտն էր, Գիւտ Մխիթարեանը, Սան Փաուլոյի հայ գաղութի վարչապետը: Ուզում էր, որ Օզասկօն էլ այցելեմ: Իմ ցանկութիւնն էլ էր այդ, բայց մի՛շտ մի արդելք խանգարում էր:

Այսօր, վերջապէս, հնարաւորութիւն կար, եւ ինքնաշարժները պատրաստ էին: Գիւտը չտապեցնում էր· կարծես վախենում էր, թէ նորից մի արդելք կը պատահի:



ԳԻՒՏ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Օզասկօն Սան Փաուլոյի յետամնաց արուարձանն է ր ի ց մէկն էր: Մուրիայից եւ Լիբանանից եկած մէկ բուռը հայ տարագիրները ծուարել էին այս ցեխոտ փիւղում եւ փորձում էին դիւղացիական կեանք հաստատել: Կով էին պահում, բանջարեղէն մշակում, բայց գոհ չէին· բոլորի աչքը քաղաքի վրայ էր:

Սան Փաուլոյի մեծահարուստ վահրամ Քէօթէնէճեանը, մի համեստ եկեղեցի էր շինել Օզասկոյի հայերի համար, որ միաժամանակ ծառայում էր իբրեւ դպրոց եւ ժողովրդական սրահ:

Քաղաքի հովիւը երբեմն գալիս էր պատարագելու այստեղ: Համայնքը դեռ կազմակերպութեան չէր ենթարկուում էր, հանրային կեանքը եկեղեցու եւ դպրոցի չուրջն էր դառնում, դաշնակցական երիտասարդութեան ղեկավարութեան տակ: Քաղաքի կոմիտէն աչքը պա-

Aram webaram.com

հում էր Օզասկոյի վրայ, եւ Գիւտը, որ Բրազիլի հայութեան ազգային ոգիի պահակն էր, ինձ յաճախ էր խօսում Օզասկոյի հայ գիւղացիութեան մասին:

Երեք ինքնաշարժներով, ընկերներ եւ ընկերուհիներ, հասանք Օզասկո: Թեթեւ անձրեւ էր մաղում, եւ փողոցները ցեխոտ էին: Գեղեցիկ Բրազիլի բնութիւնը տխուր էր: Օրը այնքան պայծառ էր եւ ուրախ, երբ երգով եւ ուրախութեամբ շարժուեցինք քաղաքից, եւ այժմ երկինքը ամպամած եւ չրջապատը մռայլ էր երեւում:

Կառքերը կանգ առին եկեղեցու առջեւ: Անձրեւի տակ, շարք-շարք, կանգնած էին աշակերտներն ու աշակերտուհիները եռագոյն փոքր դրօշակները ձեռներին, ուսուցչուհիների հսկողութեան ներքեւ: Շուրջը համախմբուել էր Օզասկոյի ամբողջ հայ գաղութը, այր ու կին, խայտաբղէտ հագուստներով: Ամէնքի հայեացքը մեզ էր ուղղուած:

Հնչում էին եկեղեցու զանգերը, եւ հաւաքուած բազմութիւնը կեցցէներով ու ծափերով դիմաւորեց մեզ:

Եկեղեցին վերածուել էր հանդիսասրահի. երգ, արտասանութիւն, ուղերձներ՝ վաղուց պատրաստուած ծրագրով: Եւ բոլոր խօսքերի մէջ կարօտ ու սէր դէպի Մայր-Հայրենիքը եւ արցունք ու թախիծ տարապիր աչքերից: Եւ ամէն անգամ երբ խօսքը ուղղւում էր ինձ, սիրտս ճմլւում էր ցաւագին: Ի՞նչ պիտի պատասխանէի ես այս հայցող հայեացքներին, որոնք, հայրենիքից հեռու, անյոյս օտարութեան մէջ, յոյս էին սպասում մէկից, որ իրենց պէս անյոյս էր ու անզօր:

Իմ սիրտս առանձնապէս խոցեց ժժգոյն տեսքով, մառալի աչքերով մի տղընակ, որ լացակումած ձայնով արտասանեց.

— Հայրենիքից հեռացել եմ, խեղճ պանդուխտ եմ թափառական, տուն չունեմ...

Ու բազմութեան մէջ, սեւ շալը ուսին, կանգնած, բանաստեղծի ազիզ մօր նման մի կին, հառաչանքով ա՛խ քաշեց:

Ինչո՞ւն էր պատճառը, այս անճար ու թշուառ բազմութեան տե՞սքը, մի խորունկ վիշտ համակել էր հոգիս ու թուլացրել կամքս: Վախով սպասում էի այն վայրկեանին, երբ ստիպուած պիտի լինէի խօսելու: Ի՞նչ պիտի ասէի ես հարազատ հողից պոկուած եւ հեռաւոր օտարութեան մէջ նետուած անօգնական այս բազմութեան, որ եկել էր յուսատու խօսք լսելու իմ բերանից, որ իմ մէջ, ո՛վ սրբազան մխամտութիւն, վրկութեան լաստ էր ուզում տեսնել:

Aram webaram.com

Ի՞նչ յոյս կարող էի ես ներշնչել այս հայրենակորոյս ու մտամոլոր մարդկանց, է՛ս, որ ինքս էլ կորցրել էի իմ հայրենիքը եւ անտուն էի ու թափառական...

Ընդունելութեան հանդէսի խնամքով կազմուած ծրագիրը վերջացել էր: Հերթը իմն էր խօսելու:

Մի պահ տիրեց խորին լռութիւն: Բոլորի հայեացքները ինձ էին ուղղուած, բայց ես ամուր դամուած էի իմ բազկաթոռին: Մարմինս կարծես արճիճով էր լեցուած, չէի կարողանում շարժուել: Ելնէի, բայց ի՞նչ պիտի խօսէի ես այս մարդկանց, որոնք, կարծես, սկսում էին զարմանալ եւ անհամբեր դառնալ:

Դժուարութեամբ ոտքի ելայ եւ լուռ դիտեցի շուրջս: Մարդկային կենդանի կերպարանքներ չէին իմ առջեւ: Ինձ թուաց, թէ չրջապատուած եմ կմախքներով: Դէմքերի ոսկրացած խոռոչներից ինձ էին նայում սուր աչքեր եւ կարծես, հարցնում էին.

— Ո՞ւր ես բերել մեզ, ինչո՞ւ ես բերել այստեղ: Տուր մեզ մեր հայրենիքը: Տար մեզ այս օտար հողից:

Անխօս ողբում ու յանդիմանում էին կարծես:

Աննշան վայրկեան էր թերեւս, բայց ինձ երկար, տառապալից յաւիտենականութիւն թուաց. երբեք կեանքումս այդպիսի ցաւատանջ մի պահ չեմ ունեցել: Երբեք այդպիսի մղձաւանջային զգացում չեմ ապրել...

Երբ ինքս ինձ դատայ, խօսեցի ինչ որ առաջուց մտածել էի խօսելու: կմախքները կորան: Ինձ չրջապատող մեռելները կենդանացան: Ի՞նչ խօսեցի, ինչպէ՞ս խօսեցի — ոչինչ չեմ յիշում: Միքանի մնացել է միայն Օզասկոյի եկեղեցին՝ լեցուն բազմութեամբ, որ ծարաւ-պապակ սրտով իր ցաւի դարմանն էր փնտռում դրսից եկած հայրենակցի խօսքերի մէջ: Բայց ի՞նչ կարող էր տալ դրսից եկած հայրենակիցը, երբ իր սիրտն էլ ծարաւ էր ու պապակ...

Աչակերտները իրենց ձեռքի եռադոյն դրօշակները շարժելով, եւ մամիկները մեզ ճամբու դրին եկեղեցուց: Այս անգամ եկեղեցու զանգակները չէին հնչում, եւ Օզասկոյի տարագիր հայերը ցրւում էին իրենց տները լուռ ու մտախոհ...

Քանի տարի անցած ես նորից այցելեցի Օզասկօն, այս անգամ առանց Գիւտի, բայց ճորճ Մարտիկեանի հետ: Ամէն ինչ փոխուած էր: Հայութիւնը արմատ էր ձգել օտար հողում, որ այլեւս օտար չէր: Գիւղի գերեզմանոցում կային բաւական թուով հայկական գերեզմաններ: Ընդմիշտ հեռացողների տեղը բռնել էին նորերը՝ կէսով

Aram webaram.com

հայ, կէսով բրազիլիացի: Եւ սրանց յետեւից էլ հասակ էին նետում ուրիշներ, այս անգամ լրիւ բրազիլացիներ:

Մեզ ընդունեցին սիրով եւ հետաքրքրութեամբ, վահրամ փէօթէնէճեանի չինած նոյն եկեղեցում, որ զարդարուն էր հայկական եւ բրազիլական դրօշակներով: Աշակերտների ձեռներում էլ կային հայկական եռագոյնը եւ բրազիլական դրօշը: Եւ մառալի աչքերով հայ աղջնակը այս անգամ չարտասանեց «Հայրենիքից հեռացել եմ»ը, այլ փորթուգալերէն, ինձ համար անհասկանալի ոտանաւոր:

Եւ երբ ես ոտքի ելայ խօսելու, կմախքներ չերեւացին աչքիս, ոչ էլ թախծոտ հառաչանքներ լսեցի, այլ իմ առջեւ կանգնած էին կուշտ դէմքով եւ հոգեկան անդորրութիւնը դուած բրազիլահայեր — մեծերի համար չնչտը վերջին վանկի վրայ, փոքրերի համար՝ առաջին...

Օզասկօն ինքն իրեն պտել էր: Մայր-Հայրենիքը նրա համար այլեւս դարձել էր հեռաւոր մի երազ...

Օզասկոյի մի երիտասարդ եւ Սան Փաուլոյի ուրիշ հայ երիտասարդներ, այժմ անգամ էին բրազիլիական երեսփոխանական ժողովների: Հայ նոր սերունդը արդէն զգալի դեր էր կատարում Բրազիլի տնտեսական եւ քաղաքային կեանքում: Սան Փաուլոյի նահանգապետը եւ քաղաքապետը խօսք չէին դնում դովելու հայերին, որպէս տնտեսագէտ, չինարար եւ պարկեշտ ժողովուրդ:

Այդ ամէնը դեղեցիկ, բայց ինչո՞ւ ամէն անգամ, երբ ես վերյիշում եմ առաջին այցելութիւնը Օզասկօ, սիրտս ճմլւում է կսկիծով, ինչո՞ւ չեն անհետանում իմ մտքի առջեւից Օզասկոյի հայ կըմախքների յանդիմանական հայեացքները ցաւագին...

Երբեմնի խեղճ գաղթականը այժմ դարձել էր բարեկեցիկ, հարուստ քաղաքացի. երբեմնի կարճ տափատով մանկապարտէզ յաճախող չոճուխը հիմա երեսփոխան էր Բրազիլի տնտեսական գլխաւոր ոստանում, հայը նախանձելի դիրք է դրաւել, բայց հայութի՞ւնը — ի՞նչ է լինում հայութիւնը նրա մէջ... Ի՞նչ պիտի ասէիր այժմ, սիրելի Գիւտ, եթէ դլուխդ բարձրացնէիր գերեզմանից եւ տեսնէիր ներկայ Օզասկօն, ներկայ Բրազիլի հայերին, ներկայ հայկական Սփիւռքը:

— Հայը առանց հայկական հողի, նշանակում է Հայաստան առանց Հայի...:

Aram webaram.com

VI. ԴՐՕՇԱԿԻ ՀԱՆԴԷՍ

Ճորճ Մարտիկեանի հետ հիւր էինք, կենտրոնական Արժանթինի Քորդոբա քաղաքում, եւ մի քանի օր տեղի հայութիւնը խանդավառութեան մէջ էր:

Հանդիսաւոր ընդունելութիւն օդակայանում եւ եռապոյն դրօշակներով զարդարուած բազմաթիւ ինքնաշարժների շքերթ, օդակայանից մինչեւ քաղաք եւ քաղաքի փողոցներով: Ժողովրդական ցոյցեր ու ոգեւորութիւն: Պաշտօնական այցելութիւններ նահանգապետին եւ քաղաքապետին եւ փոխայցելութիւններ: Այցելութիւն Արամ Երկանեանին եւ ուրիշ հայորդիների դերեզմաններին: Հաւաքոյթներ, ճառեր, արցունք ու ծիծաղ: Անմոռանալի օրեր...



ՃՈՐՃ ՄԱՐՏԻԿԵԱՆ

Բայց ինչ որ իսկապէս կարելի չէ մոռանալ երբեք, դրօշակի հանդէսը եղաւ:

Այն օրը հանդիսաւոր ճաշկերոյթ կար չքեղ սրահում, որ բերնէ-բերան լեցուած էր հայրենասէր հայերով եւ բարեկամ արժանթինցիներով: Սեղանների վրայ՝ ծաղիկներ եւ ամէն տեսակ համադամ ուտելիքներ. անհատնում ճառեր, հայերէն ու սպաներէն լեզուներով՝ Հայաստանի, Հայ ժողովրդի եւ հայ-արժանթինեան բարեկամութեան մասին: Ընդունուած կարգը այդպէս է ամէն տեղ: Նախ՝ փառաւոր ընդունելութիւն, այցելութիւններ եւ ժողովներ, ապա՝ ճաշ ու ճառ:

Aram webaram.com

Ամէն հայ պերճախօս հռետոր է սեղանի չուրջ...

Ճաշի ընթացքին Ճորճը հրաւիրուեց ռադիոկայան՝ հեռարձակելու համար մեր պատգամը: Ապա տեղի պիտի ունենար դրօշակի հանդիսութիւնը տեղական իշխանութիւնների մասնակցութեամբ: Բացառիկ պատիւ, որ Քորդոբայի կառավարութիւնն ու ժողովուրդը ընծայում էին հայերին:

Քորդոբայի կենտրոնական ընդարձակ հրապարակը ծայրից-ծայր բռնուած էր հայ եւ ոչ-հայ խանդավառ բազմութեամբ: Արեւոտ, պայծառ օր էր: Բնութիւնը ապրում էր բովանդակ եռուն կեանքով:

Մեր երեւումը ընդունուեց որոտընդոստ ծափերով եւ «կեցցէ»-ներով:

Առաջ պէտք է մի դեղեցիկ ծաղկեփունջ դնէինք Արժանթինի ազատարար Սէն Մարթինի արձանի վրայ, իբրեւ յարգանքի արտայայտութիւն Հայ ժողովրդի կողմից: Յետոյ՝ դրօշակի հանդէս — արժանթինական դրօշի կողքին պէտք է բարձրացնէինք Հայոց ազգային եռագոյնը...

Արժանթինի դրօշը ծածանւում էր բարձր երկաթէ ձողի վրայ, Սէն Մարթինի արձանի դիմաց: Կողքին՝ նոյն բարձրութեամբ պարապ ձող՝ Հայաստանի դրօշի համար:

Մեծ դժուարութեամբ ճեղքում ենք խռնուած բազմութիւնը՝ մօտենալու համար երկաթէ ձողերին: Մարդիկ յուզուած՝ համբուրում են մեր ձեռքերը, աշխատում են որեւէ ձեւով արտայայտել իրենց սէրն ու դուրգուրանքը մեզ եւ մեր միջոցով՝ Հայաստանին: Հայաստանի խորհրդանշանն էին տեսնում մեր անձի մէջ...

— Փառք Աստուծոյ, այս օրն ալ տեսնելու պիտի արժանանայինք...

Ցուզումի մի դող համակեց եւ ինձ, երբ ձեռքս դրին բարակ պարանի ծայրը, որով պիտի բարձրացնէի հայկական եռագոյնը բազմութեան աննկարագրելի խանդավառութեան մէջ:

Մեղմ շարժումով քաշում էի պարանը, եւ եռագոյնը յամրօրէն բարձրանում էր վեր, վե՛ր, հասնելու համար արժանթինեան դրօշի բարձրութեան:

Ժողովուրդը ցնծութեամբ ծափահարում էր, բացագանչում՝ «կեցցէ՛ Հայաստան», «կեցցէ՛ Արժանթին»: Աղմուկ, ժխոր...

Մէկ էլ՝ տիրեց քար լռութիւն: Կարծես դանակով կտրեցին: Պարանը էլ չէր քաշւում: Վեր նայեցի. արժանթինեան դրօշի կողքին, թեթեւ հովից, հպարտ ծածանւում էր Հայոց փառաւոր եռա-

Aram webaram.com

դոյնը, այնպէս, ինչպէս ժամանակին ծածանուում էր ազատ Հայաստանի խորհրդարանի դլխին...

Նայեցի շուրջս. անխօս բազմութիւն: Ամէնքը լուռ հիացումով դիտում էին դոյդ դրօշակների ծածանումը օդի մէջ, ազատ Արժանթինի երկնքի տակ: Եւ բոլորի աչքերից արտասուք էր հոսում...

Արտասուում էր եւ կողքիս կանդնած Ճորճը, եւ Ճորճի կողքին կեցած արժանթինցի մեծաւորը. ամենքը արտասուում էին ուրախութեան արտասուքով:

Մէկ էլ՝ կարծես ռումբեր պայթեցին իրար յետեւից. հազարաւոր բազմութիւնը սկսեց ծափահարել անդուսպ ու հազար բերաններով գոչել.

— կեցցէ՛ Հայաստան... կեցցէ՛ Արժանթին... կեցցէ՛, կեցցէ՛...

Եւ հազար բերաններից թնդաց.

— Մեր հայրենիքը, թշուառ, անտէր...

Թշուա՛ռ, անտէ՛ր... Ո՛չ, քանի Հայոց եռագոյնը ապրում է Հայ ժողովրդի սրտում, մեր հայրենիքը թշուառ չէ, ոչ էլ անտէր...

— Օր մըն ալ Արժանթինի դրօշակը պիտի ծածանի հայկական եռագոյնի կողքին, Երեւանի մէջ, այնպէս չէ՞, ասաց Ճորճ Մարտիկեանը իր շուրջիններին:

— Այո՛, այո՛, պատասխանեցին ամենքը միաբերան. օր մըն ալ Արժանթինի դրօշակը պիտի ծածանի հայկական եռագոյնի կողքին, Երեւանի մէջ...

Եւ երբ վերադառնում էինք պանդոկ՝ մեր յետեւը թողնելով խանդավառ բազմութիւնը, որ դեռ երկար պիտի հրճուէր եռագոյնի խոյանքներով օդում, Ման Մարթինի հրապարակի վրայ, ես յիշեցի մի ուրիշ հրապարակ, մի ուրիշ հանդէս Մասիսի հովանու ներքեւ, մի ուրիշ բազմութիւն, եռագոյնի ծածանումը օդում ծափահարելիս...:

1920 թ. Մայիս 28 էր:

Հայաստանը նոր էր ազատուել ներքին խռովութիւններից: Սարըղամիշից մինչեւ Իջեւան, ամբողջ տարածութեան վրայ, Հայ ժողովրդի միահամուռ կամքով եւ երկաթէ բազուկով, երկիրը մաքրուել էր բոլշեւիկեան ցեցից, որ ներսից կրծում էր նրա մարմինը:

Հայաստանի բոլոր մասերում անկախութեան տարեդարձի օրը, Մայիս 28-ը, տօնւում էր համաժողովրդական ինքնարուխ, բա-

Aram webaram.com

ցառիկ հանդիսութեամբ. բայց առանձնապէս բարձր էր ժողովրդի տրամադրութիւնը մայրաքաղաք Երեւանում:

Վաղ առաւօտից քաղաքը զարդարուել էր անհամար դրօշակներով եւ դոյնզդոյն դրօշներով եւ կարպետներով: Առաւօտից մինչեւ երեկոյ տեղի ունեցան ժողովրդական հաւաքոյթներ, զօրահանդէս, զօրքի, արիների, աշակերտների, արհեստակցական միութիւնների թափօրներ եւ ամէն տեսակ ուրախութիւններ:

Բայց ամենէն յուզիչը եւ անմոռանալին հանրապետութեան մաղթանքն էր, մայրաքաղաքի կենտրոնական հրապարակի վրայ, խորհրդարանի ու կառավարութեան անդամների, բանակի բարձր հրամանատարութեան, դեսպանների եւ օտար հիւրերի, խուռնամբոխ բազմութեան ներկայութեամբ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ի նախագահութեան տակ:

Այսօրուայ պէս աչքիս առջեւն է տեսարանը: Արեւոտ եւ պայծառ օր էր: Մասիսի ձիւնոտ գագաթը կարծես ճառագոյթներ էր տարածում շուրջը: Մասիսի հովանու ներքեւ, Երեւանի սրտում, Պարէտի հրապարակի վրայ, Հայոց աւագանին յաղթական, հաւաքուել էր ոտնելու հայրենիքի ազատութեան տարեդարձը: Իրար կողքկողքի կանգնած էին խորհրդարանի նախագահը, Հայոց բանակի սպարապետը, Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Իմ ուշադրութիւնը յատկապէս դրաւում էր Կաթողիկոսի դէմքը՝ երկար, սպիտակ մօրուքով զարդարուած: Ամէն անգամ, երբ դպիրները երգում էին «Եւ գՀաւիրապետութիւն Հայաստան Աշխարհի», Կաթողիկոսի դէմքը կարծես պայծառանում էր: Հայեացքը ուղղուած Պարէտի դրօշադարդ չէնքի դլխին ծածանուող եռագոյնին՝ նա չէր նկատում աչքերից հոսող արցունքը, որ կաթիլ-կաթիլ սահում էր մօրուքն ի վար, ճիշդ այն արցունքների պէս, որ այժմ հոսում էին Քորդոբայի իմ հայրենակիցների աչքերից, Արժանթինի արեւոտ երկնքի տակ...:

1958, Մայիս
Շիմլաեւ, Լիբանան

Aram webaram.com

ԴՐՕՇԱԿԸ ՍՐՏՈՒՄ

Դի Փի, անգլերէն դիսփլէյսըդ փերսընս բառերի սկզբնատառերն են, նշանակում են՝ «տեղահանուած մարդիկ»:

Այդպէս էին կոչել Ամերիկացիք այն դժբախտներին, որոնց Հիթլէրը բերել էր տուել Խորհրդային Միութիւնից եւ Բալկանեան երկրներից գերման գործարաններում եւ ագարակներում աշխատացնելու համար:

Պատերազմը վերջանալուց յետոյ, դրանց մեծ մասը, չկարողանալով վերադառնալ իրենց նախկին բնակավայրը՝ մնաց անտուն, անտէր, անօգնական: Ամերիկան, ինչպէս ուրիշ շատերին, սրանց եւս առաւ իր խնամակալութեան ներքեւ՝ միջոց տալով տեղափոխուելու Նոր Աշխարհ:

Հազարաւոր հայ Դի Փիներ եւս Խորհրդային Միութիւնից, Հնորհիւ Ճորճ Մարտիկեանի, Գերմանիայի Շտուտգարտ Ջամբարից եւ այլ վայրերից, փոխադրուեցին Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, որոնք, իրրեւ հարազատներ, գրկաբաց ընդունուեցին ամերիկաբնակ իրենց աղգակիցների կողմից:

Բոլշեւիկ եւ Նացի անբարոյական վարչաձեւերի տակ տրորուած եւ հոգեպէս աղաւաղուած բազմութիւն էր այդ, որ պէտք ունէր վերադաստիարակութեան, նոր արիւն ներարկել կարողանալու համար ամերիկահայութեան ազգային երակների մէջ, ինչպէս յոյս էին յայտնում բերողները: Արդարացրի՞ն նրանք այդ յոյսը, ես չեմ կարող ասել անվարան: Եթէ արդարացրին էլ, ոչ շատ մեծ չափով: Դէթ հեռուից Դի Փիների ազդեցութիւնը ամերիկահայ հանրային կեանքի վրայ շատ չի նշմարուում: Թուում է թէ, Դի Փի բառի հետ կորել են եւ նորեկների հետ կապուած յոյսերը:

Հետաքրքրական կը լինէր ուսումնասիրել բոլշեւիկ եւ նացի

Aram webaram.com

վարչաձեւերի տակ ապրած մարդկանց հոգեբնաիօսական եւ կենցաղային վիճակը. մանաւանդ, Ամերիկա հասնելու առաջին շրջանին: Այդ աշխատանքը ժամանակին չկատարուեց, դժբախտաբար:

Ինձ առանձնապէս հետաքրքրում էր նոպէ-բոլշեւիկ վարչաձեւերի ազդեցութիւնը հայ անհատական եւ ընտանեկան բարքերի վրայ, մասնաւորապէս ազգային տեսակէտից:

Ես բազմաթիւ փաստեր եմ արձանագրել, որոնք ցոյց էին տալիս, թէ ինչքան ընկել էին հայկական բարքերը: Խօսքս միայն կենցաղային երեւոյթների մասին չէ, ինչպէս չափազանց դործածութիւնը ոդելից ըմպելիների, կամ ծայրայեղ նիւթապաշտութիւնը եւ կամ փոխադարձ օդնութեան բնազդի տկարացումը: Ընտանեկան կեանքի հայկական հասկացողութիւնը խախտուած էր արմատից: Որոշ չափով հասկանալի էին, օրինակ, օտար ամուսնութիւնները ռուսների կամ գերմանուհիների հետ. հայկական միջավայրից հեռու ընկած երիտասարդները, որոնք յաճախ, ստիպուած էին օտարների հետ ընտանիք կազմել: Բայց ի՞նչ կարելի էր ասել այն բազմաթիւ մարդկանց մասին, որոնք հայրենիքում կին ու զաւակներ թողած՝ Գերմանիայում առել էին գերմանուհիներ կամ ռուսուհիներ եւ իրենց հետ բերել Ամերիկա, ի դայթակղութիւն եւ ի ցասումն նահանգատում կամ օդակայանում ընդունելութեան եկած ամերիկա-հայ տիկիններին:

Եւ երբ դատապարտութեան խօսք էին լսում, զարմանում էին. ի՞նչ կայ որ. հայրենիքում մնացած իրենց կանայք էլ թող ուրիշների հետ ամուսնանային... Մայր աստիճան տկարացել էր ընտանեկան ոգին հայ մարդու մէջ բոլշեւիկեան վարչաձեւի ներքեւ...

Ընդհանուր երեւոյթ էր եւ հայերէն լեզուի նահանջը ռուսերէնի առջեւ: Նոյնիսկ հայախօս ընտանիքներում, շատերը գերադասում էին խօսել ռուսերէն: Եւ եթէ Ամերիկայում այդպէս էր, զարմանալի՞ էր, որ Ռուսաստանում հայերէն լեզուն ի պատուի չէր: Լեզուի կորուստը Ռուսաստանում, աւելի քան որեւէ տեղ, նշանակում է ազգութեան կորուստ:

Դժուար է ասել՝ ի պատուի. աւելի ճիշդ՝ հայերէնը պէտք չէ, աւելորդ է ռուսական տարերքի մէջ, իբրեւ կեանքի լեզու(*):

(*) Խորհրդային վերջին մարդահամարը, 1959 թ. Յունուարին, ցոյց է տալիս, որ Խորհ. Միութեան սահմանիներում ապրող հայերի 10 տոկոսից աւելին իր մայրենի լեզուն համարում է ռուսերէնը, որ ասել է ստոյգ ռուսացման ճամբու վրայ է գտնւում: Եթէ Խորհ. Միութեան հայերի թիւը մօտ երեք միլիոն է, նշանակում է մօտ 300·000 Հայեր դատապարտուած են ռուսանալու:

Aram webaram.com

Հետաքրքրական էր եւ այն փաստը, որ բարեյաջող պայմաններում, արագ կերպով տեղի էր ունենում ապատուսացումը: Շատուգարտի հայկական ակումբի դպրոցում որոշ ժամանակ սովորած ռուսախօս մանչերն ու աղջիկները բոլորովին հայացած եկան Ամերիկա: Հայացած ո՛չ միայն լեզուով, այլեւ զգացումներով ու վիտակցութեամբ:

Դրանցից մէկի մասին ուզում եմ պատմել այստեղ:



ՎԱՐԴ ԵԻ ՆԱԶԻԿ

1949 թուականն էր: Մայիս: Դի Փինների մեծ մասը արդէն փոխադրուել էր Ամերիկա եւ տեղաւորուել: Ամէնքը գոհ էին երեւում, բայց կային նաեւ դժգոհներ: Այս ի՞նչ երկիր է, ասում էին, ոչ իշխանութիւն կայ, ոչ կարգ ու կանոն: Քանի ժամանակ է եկել եմ, ոչ անցագիր են հարցնում, ոչ էլ հետաքրքրւում են, թէ ո՞ւր ես ապրում եւ ի՞նչ բանի ես: Այսպէս կառավարութիւն կը լինի՞...

Ամերիկայում, ասկայն, ե՛ւ կարգ կար, ե՛ւ իշխանութիւն: Շուտով ամէնքը վարժուեցին ամերիկեան «անկարգութեան»: Մեծերը մտան գործարան, փոքրերը ընդունուեցին վարժարան:

Եւ մի օր, 1949 թ. Մայիսին, Քալիֆօրնիայի Ֆրէզնօ քաղաքից, ես դողդոջուն ձեռքով գրուած մի նամակ առի: Ուրախ էս յայտում եմ, որ այդ նամակը չեմ կարող դնել իմ թղթերի լաբիւրինտոսում, բայց բովանդակութիւնը յիշում եմ լաւ:

Aram webaram.com

Մի մատաղ աղջիկ էր գրողը՝ Վարդիթեր, որ ծնողների եւ Նապիկ քրոջը հետ, Շատուպարտից եկել էր Ֆրէզնօ, Քալիֆորնիա, մտել էր ամերիկեան դպրոց, ուր հոգեկան նոր տառապանք էր ապրում: Որեղից որեղ դեռ էր հասցէս եւ խորհուրդ էր հարցնում զարմանելու համար իր սրտի ցաւը:

Ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ չէր կարողանում զարմանել իր ցաւը բժշկական դեղերով:

Աղջիկը, մեծ յուզումով, գրում էր, որ ինքը Գերմանիայից ընտանիքով փոխադրուել է Քալիֆորնիա: Ինքը եւ քոյրը՝ Նապիկ, մտել են ամերիկեան դպրոց: Ամէն բան լաւ է, բայց դպրոցում առաւօտները երգման արարողութիւն են կատարում ամերիկեան աստղաղարդ դրօշին, որին ինքը չի մասնակցում, չկամենալով դաւաճանել հայկական եռագոյնին: Ընկերուհիները վատ աչքով են նայում վրան, ծաղրում եւ նոյնիսկ նախատում են, բայց ինչպէս կարող է դաւաճանել աղգային դրօշին, որ, իբր սրբութիւն, բերել է հետը Ամերիկա:

Իր հոգեկան տանջանքները իմացել է պատմութեան ուսուցիչը եւ կանչել է իր մօտ: Աղջիկը բաց է արել նրա առջեւ իր սիրտը: Աղջիկս, ասել է նրան ուսուցիչը, ամերիկեան դրօշը ազատ երկրի դրօշ է եւ ոչ ոքին չի սիրում բռնութեամբ իրեն ենթարկուել: Եթէ ուզում ես ազատ կամքով յարգանք մատուցանել նրան, կարող ես մատուցանել: Եթէ չես ուզում, քեզ ոչ ոք իրաւունք չունի սիրելու, բայց քո հանդգնութեան համար, ես խորհուրդ եմ տալիս քեզ մասնակցել դրօշակի հանդէսին...

Ուսուցչի բերանով իմաստութիւնն էր խօսում. այդ էր իսկական ամերիկանիզմը, բայց աղջիկը չարունակում է բացակայել դրօշակի հանդէսից՝ վախենալով դաւաճանել իր աղգային եռագոյնին: Ընկերուհիները չարունակում են ծաղրել կամ արհամարհել նրան, նա հոգեպէս տառապում է, բայց չի փոխում իր վերաբերումը:

Եւ ահա սիրտը բաց է արել իմ առջեւ. ի՞նչ խորհուրդ կը տամ իրեն, ազատելու նրան ներքին տագնապից: Շիտա՞կ է իր վերաբերումը, թէ սխալ: Եթէ մասնակցի ամերիկեան դրօշի երգման արարողութեան, դաւաճանած չի՞ լինի հայկական եռագոյնին...

Ցաւոնապէս դերզգայուն հոգի էր: Ո՛վ գիտէ քանինե՛ր ապրել են նոյն ողբերգութիւնը, բայց քաջութիւն չեն ունեցել խոստովանելու: Ի՞նչպէս կարելի էր ամոքել աղջկայ վիշտը: Ի՞նչպէս ասէի որ նա դիւրութեամբ կարողանար երկու դրօշները տեղաւորել իր սրտում: Եւ գրեցի նրան հետեւեալ նամակը.

Aram webaram.com

«Սիրելիս, Ամերիկան ազատ երկիր է, եւ ոչ ոք իրաւունք ունի բռնանալու ուրիշի ազատ կամքի վրայ: Հետեւաբար, ոչ ոք իրաւունք ունի ստիպելու քեզ, որ դու, քանի քաղաքացի չես, դրօշակի երդում կատարես: Այդ քո անձնական իրաւունքն է:

Բայց, սիրելիս, երեւակայիր, որ դու մտել ես, օրինակ, ժամերգութեան ժամանակ, մի օտար եկեղեցի: Ցարգելով այդ հաստատութիւնը՝ քեզ կը պահե՞ս այնպէս, որ ժամուրների զգացումները վիրաւորուեն: Անշուշտ, ոչ:

Եւ կամ թէ ներկայ կը լինես մի հաւաքոյթի, ուր երկրի ազգային օրհներգը կ'երգեն. ամէնքը ոտքի կ'ելնեն, դուն նստա՞ծ կը մնաս: Ի հարկէ, ոչ: Դու պարտաւոր չես ուրիշի ազգային երգի ժամանակ ոտքի կանգնելու, բայց կը կանգնես ի յարգանս ուրիշների զգացմունքին:

Օրէնքով պարտաւոր չես օտար դրօշակի առջեւ բարեւի կեցնելու, բայց տարրական փափկանկատութիւնը կը պահանջէ, որ երբ ամէնքը բարեւի կը կեցնան, դու էլ կեցնաս, քո ապրած երկրի զաւակների համար նուիրական արբուբիւն նկատուող դրօշակի առջեւ. մանաւանդ, որ հարցը վերաբերում է ամերիկեան դրօշակին, որ իսկապէս ազատութեան խորհրդանիշ է: Եթէ խօսքը բռնապետական երկրի դրօշակի մասին լինէր, ի հարկէ, խնդիրը կը տարբերուէր:

Առնենք քո պարագան. դու դեռ քաղաքացի չես, ճիշդ է, բայց, անշուշտ, պիտի ուզես ժամանակին քաղաքացի դառնալ: Դու դեռ հիւր ես այս երկրի մէջ, որ քեզ ապաստան է տուել եւ ամէն տեսակ ազատութիւն չնորհել, առանց որեւէ խտրութիւն դնելու քո եւ իր քաղաքացի զաւակների միջեւ: Դու մտել ես դպրոց, ուր տովորութիւն է երկրի ազգային դրօշակի առջեւ երդման արարողութիւն կատարել: Քաղաքացի լինելը պայման չէ անպատճառ, ամէն ոք, որ կը սիրէ ազատութիւնը, կը սիրէ եւ ազատութիւն խորհրդանշող դրօշակը: Ոչ մէկ բանաւոր պատճառ չկայ, որ դու էլ ուրիշների հետ ոտքի ելնես, ձեռքդ դնես սրտիդ վրայ եւ արտասանես երդման խօսքերը — I pledge··· Դրանով դու ուրացած չես լինի քո Մայր Հայրենիքը — Հայաստանը, այլ յայտնած կը լինես քո յարգանքը քեզ հիւրընկալող այս ազատ երկրին եւ նրա զաւակներին: Հակառակը վարուելով՝ դու անարդած կը լինես ամերիկեան ժողովրդի սրտին նուիրական արբուբիւնը եւ վիրաւորած կը լինես քեզ շրջապատող մարդկանց զգացմունքները: «Վախի նախապաշարում» չէ, սիրելիս, ոչ էլ «ազատ դատելուն» հակառակ՝ ուրիշի նուիրական արբուբիւնների հանդէպ յարգալից վերաբերում ունենալը:

Aram webaram.com

Անշուշտ, քո վարմունքի համար քեզ ոչ ոք նախատելու իրաւունք չունի: Եւ քո պատմութեան ուսուցչի պատասխանը շատ օրինական է, բայց ես կարծում եմ, որ քո ուսուցիչն էլ աւելի ուրախ կը լինէր, եթէ դու տարրեր վերաբերում ցոյց տուած լինէիր իր եւ ազգային դրօշի հանդէպ:

Կեանքի մէջ, սիրելիս, շատ բաներ կան, որոնք օրէնքով կամ սառն դատողութեամբ չեն չափւում: Օրինակ, ո՞ր օրէնքով կարելի է ստիպելը որ մի երիտասարդ տղայ կամ աղջիկ ուրքի մնայ եւ իր աթոռը զիջի զառամեալ մի անձի: Բայց բարեկրթութիւնը եւ ներքին զգացումը այդպէս կը թելադրէ. որպէսզի մարդիկ յարգեն քո զգացումները, դու էլ պէտք է յարգես ուրիշների զգացումները: Որպէսզի քեզ սիրեն, դու էլ պէտք է սիրես ուրիշներին: Որպէսզի քո դրօշակը յարգեն ու սիրեն, դու էլ պէտք է սիրես ու յարգես ուրիշի դրօշակը: Ես յիշում եմ, Հայաստանում գտնուող բոլոր ամերիկացիները մեզ պէս համահաւասար պատուի էին կենում մեր եռագոյնի առջեւ, եւ նրանց մտքովն էլ չէր անցնում՝ քաղաքացի՞ են թէ քաղաքացի չեն եւ կամ թէ, այդ վարմունքով դաւաճանո՞ւմ են իրենց ազգային դրօշակին:

Այնպէս որ՝ դպրոցում թէ դուրսը, ամէն տեղ, ամերիկեան ազգային դրօշի եւ ազգային օրհներգի առջեւ պէտք է վարուես այնպէս, ինչպէս, վարւում են ամերիկեան քաղաքացիները: Դրանով դու բնաւ կաշկանդուած պիտի չզգաս քո ազատ գտնելու իրաւունքը: Միայն յարգած կը լինես այն երկիրը եւ այն ազգը, որ իր ծոցում սիրով տեղ է տուել քեզ»:

Ես չգիտեմ իմ նոր բարեկամուհիս ի՞նչ զգաց այս նամակը կարդալով:

Ես տրամաբանում էի, այն ինչ նրա մէջ սիրտն էր խօսում: Ծովում խեղդուողի պէս նա ճիչով փրկութեան լաստ էր խնդրում, իսկ ի՞նչ լաստ էր իմ գրածը: Ներքին բնազդով նա զգում էր, որ իրեն ուզում են հեռացնել իր հոգուն հարազատ մայրենի մթնոլորտից եւ յուսահատ՝ հաւար էր կանչում, բայց ի՞նչ էի պատասխանում ես. փաստօրէն ես դիւրացնում էի նրա ապազգայնացման գործը: Ճարպանք մատուցիր ամերիկեան օտար դրօշին, որ վաղը պիտի գտնայ քո հարազատ դրօշը, հապա եռագո՞յնը: Ամենահազատ երկիրն անգամ աշխարհիս երեսին, երկու դրօշ չի հանդուրժի: Ազգազրկի տակ էլ եռագոյն չկայ...

Aram webaram.com

Իմ պատասխանը, ըստ երեւոյթին, չհանգստացրեց աղջկայ հոդեկան խռովքը, բայց, ենթադրում եմ, մեղմացրեց սրտի ցաւը՝ հաշտեցնելով օտար դրօշի հետ: Երկրորդ նամակով, որ աւա՛ղ, նոյնպէս չեմ կարողանում գտնել, նա չարունակում է խօսել իր վրանումների մասին, բայց այլեւս ոչ նախկին վճռականութեամբ: Ես այդ նամակին էլ պատասխանեցի միեւնոյն ոգով: Միեւնոյն ոգով ասելու տեղ կարելի էր գործածել եւ պատեհապաշտ բառը: Ես գրեցի աղջկան, որի հոգեկան ապրումները այնքան հետաքրքրեցին ինձ.

«Սիրելիս, նամակդ ժամանակին ստացել եմ: Ներողամիտ եղիր, որ ուշ եմ պատասխանում գրաղումներիս պատճառով:

Դու բնաւ քաշուելու պէտք չունէիր նամակը գրելիս. ընդհակառակը, ես մեծ հաճոյքով կարդացի: Հաճոյքս մեծ էր, մանաւանդ, նամակիդ մէջ արտայայտուած մտքերի եւ զգացմունքների պատճառով: Շատ ուրախ եմ, որ առաջին օրից իսկ հասկացել ես, թէ ինչ է հայկական Ամերիկան:

Այո՛, Ամերիկան հսկայ ճուլարան է, ուր մեծ կաթսայում լուծւում են բոլոր ազգերը, որպէսզի մէկ ամերիկեան ազգ ստեղծուի: Բայց պէտք չէ վհատուել. զօրաւոր կամք ունեցող անհատներ կարող են պահել իրենց ազգային հոգին: Դժուար է, ճիշդ է, եւ ես ըմբռնում եմ քո եւ քեզպէսների վախը, «օտարացող զանգուածի պատերազմից», բայց վախենալու էլ բան չկայ. մարդու արժէքը դրա մէջ է, որ նա դժուար բաներին կարողանայ յաղթել, դիւրին բաներին մամս էլ կը յաղթէ: Դուք՝ նորեկներդ, ձեզ հետ ազգային սրբազան կրակ բերողներդ, ոչ թէ «օտարացող զանգուած»ին պէտք է ենթարկուէք, այլ աշխատէք ձեր կրակով այդ զանգուածի սրբատերն էլ տաքացնել: Պէտք է ձեր մէջ անշէջ պահէք սրբազան հուրը եւ ձեզ տարեկից «օտարացող» հայ երիտասարդութեան էլ փոխանցէք այդ հուրը:

Մենք այստեղ, Ամերիկայում, հիանալի նոր սերունդ ունենք, միայն թէ նրանք ձեզ պէս չեն, տարբեր հետաքրքրութիւններով են ապրում: Նրանց դժբախտութիւնը այն է, որ ծնողները զարգացումով իրենցից վար են եւ չեն կարող ազդեցութիւն բանեցնել, ներշնչել նրանց հայկական ոգով, չեն սովորեցնում հայերէն: Մեղքը նոր սերունդինը չէ, այլ ծնողներինն է:

Դու այդ տեսակէտով աւելի բախտաւոր ես, ինչպէս եւ բոլոր Եւրոպայից եկողները: Աշխատիր օգտուել Ամերիկայի պատեհութիւններից — Ամերիկան մեծ պատեհութիւնների երկիր է, — եւ

Aram webaram.com

միաժամանակ չմոռանաս եւ հայութիւնդ: Կարդա եւ հետաքրքրուիր հայ կեանքով եւ ուրիշներին էլ աշխատիր որ հետաքրքրես:

Մի վախեցիր «մտնել կեանքի հոսանքի մէջ»: Կեանքը համարձակներին է պատկանում: Այն «մեծ ծարաւը», որ դու զգում ես քո մէջ, թող աւելի քաջ եւ համարձակ դարձնէ քեզ:

«Ինչպէ՞ս մտնել կեանքի հոսանքի մէջ» հարցնում ես դու: Շատ պարզ· արա ինչ որ ներքին ձայնդ կը թելադրէ, միայն թէ առանց վախի եւ համարձակութեամբ: Կեանքում ամէն մարդ, ամէնից առաջ, ինքը պիտի հարթէ իր ճամբան: Ամերիկան ազատ երկիր է· քո վրայ բռնացող չկայ: Ջա՞ղ ես, խելք ու կամք, ձեռներէցութեան ոգի ունե՞ս — ամէն ասպարէզ բաց է քո առջեւ: Ամերիկան նաեւ աշխատանքի երկիր է — կամք ունեցող եւ աշխատել սիրող մարդկանց համար «ինչպէս մտնել կեանքի հոսանքի մէջ» հարցում չկայ: Կեանքը ինքը կ'ասի, թէ ինչպէս պէտք է մտնել եւ ինչ պէտք է անել...»:

Այնուհետեւ ես հեռուից հետաքրքրւում էի, թէ ի՞նչ եղաւ իմ դրօշապաշտ բարեկամուհիս: Ամերիկեան դպրոցը աւարտել էր յաջողութեամբ: Մտել էր համալսարան: Եւ համալսարանում ուսանողուհի էր, երբ ես առաջին անգամ հանդիպեցի նրան:

Անցել էին մի քանի տարիներ եւ թւում էր թէ եռագոյնն ու աստղազարդը այլեւս հաշտուել էին նրա մտքում: Բայց նա չէր դաւաճանել եւ հայկական եռագոյնին: Աստղազարդը կեանքում՝ ներկայի համար, եռագոյնը սրտում՝ ապագայի համար: Ամերիկան այլեւս իր Ամերիկան էր, բայց աչքերում թախիծ կար:

Թախիծ՝ հեռաւոր Հայաստանի համար, մտածեցի ես:

Aram webaram.com

ՀԵՐՈՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ձեմ յիշում, ո՞ր տարին էր, եւ այդ կարեւոր էլ չէ: Պապաչան դեռ ողջ էր — Լեւոն Թադէոսեանը, որ վարիչ էր Հ. Բ. Դաշնակցութեան դիւան-թանգարանի, Մոնմորանսիում:

Ճաճախ հաւաքւում էինք Պապաչայի մօտ, ինչպէս ասում էր Դրօն, հոգեշարժ զրոյցի համար՝ թէյի սեղանի չուրջ: Խօսում էինք օրուայ կամ անցեալ հարցերի մասին:

Մի օր էլ խօսք բացուեց հերոսութեան մասին. ի՞նչ է հերոսութիւնը, ո՞վ է իրաւ հերոսը: Եւ որոշուեց, որ ներկաներից ամէն մէկը իր կեանքից հերոսական մի դէպք պատմէ:

Ռուբէնը պատմեց մի դէպք Սասունի իր անձնական կեանքից: Պատմութիւնն էր մի այցելութեան քիւրդ ցեղապետի. մանրամասնութիւնները մոքից ելել են, բայց իսկապէս հերոսութիւն էր: Մահուան եւ կեանքի հարց:

Նժդեհը, որ այդ միջոցին Փարիզում էր, Խուստուփի իր ապրումներից մի դրուագ պատմեց՝ չա՛տ հերոսական, եթէ միայն ե-բեւակայական չէր:

Աբրահամ Գիւլխանդանեանը պատմեց իր մասնակցութեան մասին Նակաշիձէի ահաբեկման: Դուրս էր գալիս, որ հերոսը միայն Դրօն չէր:

Ուրիշներ էլ պատմութիւններ արին աւելի կամ պակաս հերոսական: Հերթը հասաւ ինձ: Որքան էլ ամօթ է խոստովանուել, բայց պէտք է ասեմ, որ ես իմ կեանքում ոչ մէկ հերոսական գործ չէի գտնում: Ո՛չ Սասունում էի եղել, ո՛չ Խուստուփից սպառնալիքներ էի դանձել բոլշեւիկների դէմ, ոչ Նակաշիձէի գործին էի մասնակ-

Aram webaram.com

ցել, ո՛չ իսկ մի ճանճ էի սպաննել — ես ի՛նչ կարող էի պատմել:

Սուտ չխօսեմ. երբ դեռ փոքր էի, հերոսանալու բուռն փափաք ունէի, եւ հերոսի իմ իդէալը չուկայի ոստիկան Իվանն էր: Ես նախանձով դիտում էի նրա հերոսական շարժումները:

Բարձրահասակ, երկար, ցից բեխերով, ոստիկանական համազգեստով, չխչխկան սուրը մէկ կողքին, ատրճանակը մեա կողքին՝ նա աքաղաղի պէս հպարտ պտտում էր մեր հրապարակում եւ խրոխտ ձայնով կամ զիլ սուլոցով հրամաններ էր արձակում: Եւ մարդիկ սարսափում էին նրանից: Չէք կարող ըմբռնել, թէ ես ինչքան նախանձում էի ոստիկան Իվանին, բայց բախտը ինձ չժպտաց. ես ոստիկան չդարձայ:

Այնուհետեւ մի նոր տենդ համակեց հոգիս. ուզում էի ազատել Սասունը: Այս կը լինէր իրական հերոսութիւն: Նզովեալ ճակատագիրը այդ բախտից էլ զրկեց ինձ: Սասունը ուրիշներ ազատեցին:

Եւ որքան տարիները անցնում էին, այնքան հերոսութիւնը փախչում էր ինձանից, մինչեւ որ համոզուեցի, որ հերոս ու հերոսութիւն գոյութիւն չունեն աշխարհի երեսին: Խելք ու քաջութիւն՝ դատարկ բաներ են. կարեւորը բախտն է: Բախտ ունե՞ս, հերոս ես:

Մի աննշան դէպք բոլորովին սպաննեց իմ մէջ հերոսութեան զաղափարը:

Վանի ազատագրութիւնից յետոյ, 1915ի ամառը, Նիկոլ Աղբալեանի հետ գնացել էինք մեր կամաւորական խումբերի այցելութեան: Մեր խումբերը, Արարատեան ջոկատ անունով, Վարդանի ընդհանուր հրամանատարութեան տակ, գտնւում էին լճի հարաւակողմը:

Բանակը նոր էր դրաւել Սոլփը, եւ զօրամասերը սրարշաւ հետապնդում էին թշնամուն: Մենք, թիկունքային հերոսներս, հետեւում էինք զօրքին: Այ ու ձախ մեզ հանդիպում էին վիրաւոր կամ դասալիք զինուորներ, որոնց մէջ պատահում էին եւ մեր կամաւորները:

Սոլփի վերելքին, ճանապարհի վրայ, հեռուից նկատեցինք մի թնդանօթ եւ վրան կուչ եկած մի մարդ: Մօտեցանք: Թուրքերի լքած լեռնային թնդանօթի վրայ նստած էր Թիֆլիսի մեր «Մի բաժակ թէյ» սրճարանի մնայուն յաճախորդ ուսանողներից մէկը: Ես էի ուղարկել նրան ճակատ: Հարց ու փորձից երեւաց, որ, իբր թէ, հիւանդացել է եւ խմբապետի արտօնութեամբ գնում է Վան:

Aram webaram.com

— Ջտարիւն դասալիք, նկատեց Աղբալեանը: Հարիւր տոկոսով դասալիք:

— Պարոն Նիկոլ, հոգուդ մատաղ, ես դասալիք չեմ, հիւանդ եմ, աղաչական ձայնով պաշտպանուեց վախեցած ուսանող կամաւորը, որ, դիտակցում էր, անշուշտ, թէ ինչ ծանր յանցանք էր դործել լքելով զօրամասը կռուի ժամանակ:

Մեր խօսակցութեան միջոցին վրայ հասան մի քանի ռուս զինուորականներ: Ճակատի հրամանատարն էր իր համհարզներով: Մեր հիւանդ կամաւորը սրանց որ տեսաւ, ընդոստ թռաւ տեղից եւ զինուորական բարեւի կեցաւ:

— Դորբրովո՞լեց — կամաւո՞ր ես, հարցրեց հրամանատարը:

— Այո՛, ձերդ գերազանցութիւն:

— Այս թնդանօթը դո՞ւ ես գրաւել թշնամուց:

— Տակ տոչնօ — այո՛, ձերդ գերազանցութիւն:

— Մալադեց, դորբրովոլեց — կեցցե՛ս, կամաւոր, դովեց հրամանատարը: Ջաջութեան մէդալ նրան, հրամայեց համհարզին եւ անցաւ առաջ:

— Տեսա՞ր ինչ պատահեց, զարմացաւ Աղբալեանը: Էս գեաղան հիմա հերոսութիւն պիտի ծախի Թիֆլիսի սրճարաններում: Ահա քեզ հերոսութիւն...

Եւ, իսկապէս, այնուհետեւ հերոս ուսանողը ամէն տեղ երեւում էր արծաթէ մէդալը կրծքին՝ Գէորգեան ժապաւէնից կախուած եւ ի հիացումն սպասարկու օրիորդների՝ պատմելով թնդանօթի գրաւման իր քաջագործութիւնը...

Իմ մէջ այդ դէպքը բոլորովին ապաննեց հերոսապաշտութեան զգացումը: Հիմա ի՞նչ պատմէի հերոսութեան մասին իմ կեանքից: Պապաչան պնդում էր եւ կարելի չէր ազատուել:

— Հերթը քոննն է, պատմիր, տեսնենք:

Ես պատմեցի մի դէպք, որ անվիճելի կերպով հերոսական կարելի էր համարել: Գէթ ինձ այդպէս էր թւում: Հիմա էլ երբեմն պատմում եմ այդ հերոսական դէպքը, բայց խնդրում եմ լուրջ չառնէք ու չհաւատաք կամ դոնէ վերապահութեամբ ընդունեցէք:

1909ի ամառը Հ. Ց. Դաշնակցութեան Կովկասեան Ռայոնական ժողով ունեցանք Բաքւում: Բազմաթիւ հրատապ հարցեր կային օրակարգի վրայ: Նոր էին ստացւում Աղանայի ջարդի մանրամասնութիւնները. Պարսկաստանի յեղափոխութիւնը, որին մերոնք

Aram webaram.com

մասնակցում էին Ռոստոմի եւ Եփրեմի դեկավարութեամբ. ցարիզմի հալածանքը Դաշնակցութեան դէմ, եւայլն:

Ժողովը տեղի ունեցաւ Բալախանիում, խիստ գաղտնի: Տըրուեցին «խիստ յեղափոխական» որոշումները, որոնք եթէ ընկնէին ոստիկանութեան ձեռքը, ժողովի բոլոր անդամները Սիբիր տաժանակիր աշխատանքի կը դատապարտուէին:

Վերջին նիստում ընտրուեց երեք հոգինոց մի յանձնախումբ — Աբր. Գիւլխանդանեան, Լեւոն Թադէոսեան (Պապաշա) եւ տողերիս գրողը — որի վրայ պարտք դրուեց վաւերացնել արձանագրութիւնները եւ որոշումները ուղարկել մարմիններին:

Յաջորդ օրն իսկ անցանք գործի՝ Պապաշայի Բալախանիի դրասենեակում: Մինչեւ ճաշ աշխատեցինք միասին, ճաշից յետոյ Աբրամն ու ես տարածուեցինք յատակի վրայ հանգստանալու, կողք-կողքի՝ Ռայոնական ժողովի արձանագրութիւնների կապոցը իմ բարձի տակ: Պապաշան աշխատում էր դրասեղանի մօտ:

Չէի քնել, բայց արթուն էլ չէի: Մէկ էլ ականջիս հասան աղմուկ եւ իրարանցում: Սենեակը լեցուեց ոստիկաններով, ու Աբրամը աճապարանքով անհետացաւ յետեւի դռնից: Ես մնացի ոստիկանների մէջ:

Մինչ ոստիկանապետը հարցեր էր տալիս Պապաշային, ես արագ ոտքի ելայ, առի բարձիս տակի կապոցը, դրի թեւիս տակ եւ հանդարտ ուղղուեցի դէպի դուռը, իբրեւ թէ հաստատութեան պաշտօնեայ լինէի: Շէմքի վրայ կանգնած ոստիկանը յետ-յետ քաշուեց եւ ինձ ճանապարհ տուեց: Դուրսը անհանգիստ կեցած էին բանուոր ընկերները: Մէկը յափշտակեց ձեռքիցս արձանագրութիւնների կապոցը եւ արագ անհետացաւ: Մէկ ուրիշը նետեց ինձ մի կառք եւ չտապով տարաւ Նաւթարդիւնաբերողների Խորհրդի հիւանդանոցը, ուր կառավարիչ էր Բժ. Յակոբ Զաւրեանը: Անմիջապէս հագուստս հանեցին եւ դրին ինձ անկողին, ծանր հիւանդների բաժնում...

— Մալադեց —, դովեց ինձ Բժ. Զաւրեանը: Սարսափելի է մտածել, թէ ինչ կը պատահէր, եթէ այդ թղթերը բռնուէին:

Ամբողջ օր գալիս էին մօտս ընկերները հիւանդատեսի եւ հիացում յայտնում իմ հերոսութեան մասին: Խոստովանում եմ, որ ես էլ հիացած էի իմ պաղարիւնութեամբ եւ քաջագործութեամբ: Դեռ Սորփի հերոսին չէի պատահել:

Երբ պատմութիւնս վերջացրի, ամէնքը համաձայնուեցին, որ

Aram webaram.com

իսկապէս հերոսութիւն էր իմ արածը: Գիւլխանդանեանը, իրրեւ դէպքին մասնակից, հաստատեց պատմածս: Պապաչան էլ, իրրեւ ականատես վկայ, միացաւ նրան, երեւի, հաստատելու համար ռուսական առածը՝ «սուտ ես խօսում ականատեսի պէս»...

Մի քանի օր վերջը, երբ ես թղթատում էի արխիւի թղթերը, Պապաչան մօտեցաւ սեղանիս՝ խորհրդաւոր ժպիտը դէմքին:

— Գիտե՞ս ինչ, ասաց նա. ես այն օրը չուզեցի ասել, անյարմար էր ուրիշների ներկայութեամբ, բայց պէտք է մի փոքրիկ ուղղութիւն մտցնեմ քո պատմութեան մէջ:

— Ի՞նչ սրբագրութիւն, հետաքրքրուեցի ես:

— Այն ոստիկանապետը, որ եկել էր խուզարկութեան, մեր մարդն էր, մենք նրան ամէն ամիս յիսուն ռուբլի կաշառք էինք տալիս, որ աչք դոցէ մեր դործերի վրայ: Այդ էր պատճառը, որ քեզ ազատ թողին, որ դուրս գաս...

Իր այս յայտարարութեամբ Պապաչան մահացու հարուած հասցրեց իմ հերոսապաշտութեան վերջին մնացորդներին: Էլ ի՞նչ հերոսութիւն, ի սէր Աստծոյ...

Եթէ սխալմամբ կամ պարծենկոտութեամբ փորձեմ պատմել ձեզ իմ հերոսութեան մասին, մի՛ հաւատաք, կ'աղաչեմ: Հերոսութիւն գոյութիւն չունի: Հապար անգամ իրաւունք ունի Քաջ Նազարը.

— Ի՞նչ խելք, ի՞նչ քաջութիւն, բախտ բան է...

***

Պապաչան զարմանալի մարդ էր. ի՞նչ պէտք ունէր մեղցնելու իմ մէջ այդ պատրանքը... յանուն ճշմարտութեա՞ն: Մա՞րդն է կարեւորը, թէ՞ ճշմարտութիւնը...

Թէեւ հերոսութեան հետ կապ չունի, բայց մի դէպք էլ պատմեմ Պապաչայի կեանքից:

Ֆրանսայում ազգային վիճակահանութիւն մտնելուց յետոյ, Փարիզի բոլոր անկուտինները իրենց բախտը կապեցին այդ վիճակահանութեան հետ: Ամսական տասը Ֆրանկ վճարելով՝ երեսուն օր կարելի էր ապրել այն յոյսով, թէ յանկարծ, 100·000 կը չահես: Եւ մարդիկ ի՛նչ օդային ամրոցներ էին կառուցանում...

Մարդկային բնութեան տարօրինակութիւններից մէկը: Դերասան Զարիֆեանը Հարաւ. Ամերիկայում չահած իր ամբողջ դրամը

Aram webaram.com

վատնել էր վիճակահանութեան տոմսերի վրայ: Երբ ես նրան հանդիպեցի Բուէնոս Այրէսում, դրեթէ անօթի էր եւ ինձ ցոյց տուեց, իր սեղանի վրայ դասած, մի քանի հազար փեսոյի արժէքով հին տոմսեր, որոնք ոչինչ չէին չահել: Բայց դեռ չէր յուսահատւում եւ սրանից-նրանից պարտք առնելով՝ նոր տոմսեր էր գնում մէկ անդամից հարստանալու երազով:

Պապաչան էլ հաւատում էր, թէ վիճակահանութիւնից մեծ գումար պիտի չահի, կէսը Դաշնակցութեան, կէսը զաւակներին նուիրելու համար: Բաժնեկիցների մի խումբ էր կազմել, 10 հոգի, եւ ամէն ամիս 100 ֆրանկնոց մի տոմս էր գնում, իւրաքանչիւրից 10 ֆրանկ դանձելով: Պէտք է չահէր մէկ միլիոն ֆրանկ, ամէն մէկին 100·000: Չեմ յիշում, որ մի բան չահած լինէր, բայց ընկերութիւնը չարունակում էր ամէն ամիս 100 ֆրանկ մտցնելով ֆրանսական պետութեան գանձարանը:

Պապաչան իւրաքանչիւր ամիս վիճակահանութեան տոմս գնելուց առաջ վերաքննում էր անդամների ցանկը եւ դուրս էր ձգում այս կամ այն անբախտին, որի պատճառով տոմսը չէր չահում: Եւ մի օր դիմեց ինձ.

— Ես կարծում եմ Աբրամն է մեր մէջ անբախտը, նրան ջնջենք ցանկից. ուզո՞ւմ ես քեզ դնեմ տեղը:

— Խնդրեմ, համաձայնուեցի ես եւ վճարեցի 10 ֆրանկ:

Պապաչան հանեց դրպանից անդամների ցանկը, դիծ քաշեց Աբրամ Գիւլխանդանեանի անունի վրայ եւ աւելացրեց իմ անունը: Ապա 10 ֆրանկը յանձնեց ընկերութեան դանձապահ Օր. Ֆլորային, որ տուեց ինձ ստացական: Իմ անունը բախտ պիտի բերէր ընկերութեան անդամներին...

Քիչ վերջը Պապաչան հարցրեց ինձ.

— Աա՛, նայինք, ի՞նչ պիտի անես, եթէ մեր տոմսակը չահի մէկ միլիոն:

— Ամէնից առաջ, պատասխանեցի ես, պիտի խզեմ յարաբերութիւնս բոլոր դաշնակցական ընկերների հետ, որպէսզի ստիպուած չլինեմ նրանց դրամ տալու: Յետոյ՝ պիտի հրաժարուեմ Դաշնակցութիւնից, որպէսզի նրան էլ դրամ չտամ: Եւ, վերջապէս, պիտի հեռանամ այնպիսի երկիր, ուր ոչ մի հայ չլինի՝ ազգային հանգանակութիւններին չմասնակցելու համար...

Պապաչան ապշած նայում էր դէմքիս ակնոցների տակից: Ապա, առանց մի խօսք արտասանելու, դրպանից հանեց վիճակահա-

Aram webaram.com

նութեան անդամների ցանկը եւ մատիտով հաստ գիծ քաշեց անունիս վրայ:

— Պապաշա, ի՞նչ ես անում, ես կատակ էի անում, խնդրեցի ես:

— Կատա՞կ... բաներ կան, որ կատակով էլ կարելի չէ ասել, ցասումով պատասխանեց Պապաշան: Եւ, որքան խնդրեցի, մնաց անդրդուելի, չհամաձայնուեց անունս նորից մտցնել ցանկի մէջ:

Տաբօրինակ մարդ էր Պապաշան: Ով գիտէ, գուցէ այժմ ես մէլիոնատէր դարձած կը լինէի, եթէ այդ յիմար կատակը արած չլինէի:

Անտեղի էր Պապաշայի վախը. ես Դաշնակցութիւնից չէի հեռանայ: Ո՞ւր պիտի երթայի, եթէ Դաշնակցութիւնից հեռանայի: Այն ժամանակ դեռ վազգէն կաթողիկոս էլ չկար, որ ինձ էջմիածին հրաւիրէր...

Aram webaram.com

Ի Վ Ա Ն Ը

Եկաւերինոդարում էի կազմակերպական գործով, երբ հեռագիր ստացայ կենտր. կոմիտէից.— Անմիջապէս վերադառնալ Նոր Նախիջեւան:

Հ. Ց. Դաշնակցութեան Զորբորդ Ընդհ. ժողովը բացուել էր արդէն, Վիեննայում. Նալբանդի կենտր. կոմիտէն նոր նամակ էր ստացել Բիւրոյից, որ յիշեցնում էր պատգամաւոր ուղարկելու մեր իրաւունքը եւ անհրաժեշտութիւնը:

Շրջանային ժողով գումարելու հնարաւորութիւն չկար, եւ կենտր. կոմիտէն որոշել էր իր անդամներից մէկին ուղարկել: Ամենից ազատ ժամանակ ունեցող անդամը ես էի. որոշուել էր որ Նալբանդի շրջանը ես ներկայացնեմ Ընդհ. ժողովում:

Պէտք էր անմիջապէս անցագիր հանելով արտասահման մեկնելու արտօնութիւն ստանալ Ռոստովի իշխանութիւնից: Մովրաբար, չաբաթներ տեւող գործողութիւն, իսկ ես պէտք է մեկնէի աճապարանքով: կենտր. կոմիտէի դանճապահ ընկ. Նաւասարդը ասաց.

— Սպասիր, ես մի բան կ'անեմ:

Նաւասարդը գինեվաճառ էր անում վիրահայ գինեվաճառատունը կենտր. կոմիտէի հաւաքատեղին էր: Գինու չնորհիւ Նաւասարդը շատ ծանօթներ ունէր կառավարական եւ ոստիկանական շրջաններում եւ հետեւաբար, մի բան անելը դժուար չէր նրա համար:

Ռոստով–Նախիջեւանը առանձին քաղաքականութիւն էր կազմում նահանգապետական իրաւունքներով: Քաղաքապետ էր գերմա-

Aram webaram.com

նական ծագումով մէկը, որի դրասենեակից պէտք է ստանայի արտասահմանի անցագիրը:

Ճաշորդ օր Նաւասարդը յայտնեց.

— Կ'երթաս քաղաքապետարան, իմ կողմից կը տեսնես դռնապան Իվանին, մէկ ռուբլի կը տաս, նա ամէն բան կը կարգադրէ:

Գտայ դռնապան Իվանին, մէկ ռուբլի վճարեցի, եւ նա երկու թէ երեք օրից պատրաստել տուեց իմ արտասահմանի անցագիրը:

Այնուհետեւ Իվանը դարձաւ իմ խաս բարեկամը: Ամէն անգամ, որ պէտք էր լինում քաղաքապետարան դիմելու որեւէ խնդրի համար, նախ տեսնում էի դռնապան Իվանին, եւ սա արագ ու ճշդութեամբ գործադրել էր տալիս խնդիրը: Ամէն դուռ նրա առջեւ բաց էր եւ բանալին իմ մէկ ռուբլին էր:

Տարիներ անցան: Պետերբուրգի Հայկական Համագումարից 1916ին, վերադառնում էինք Կովկաս: Նոր Նախիջեւանում պէտք ունեցայ քաղաքապետին դիմելու: Քաղաքապետը փոխուել էր. այժմ լեհական ծագումով մէկն էր, բայց դռնապանը նոյն իմ բարեկամ Իվանն էր: Ճանաչեց ինձ եւ բարեկամական տեսակցութիւնից յետոյ անվրէպ կատարել տուեց իմ գործը:

1917 թ. ամառը ես նորից Նախիջեւանում էի: Վերադառնում էի Մոսկուայի Պետական Խորհրդակցութիւնից:

Ռուսաստանի յեղափոխութեան մեղրամիսն էր:

Այս անգամ Ռոստովի քաղաքապետը բարեկամ հրեայ փաստաբան Զէլէրն էր, որին դնացի այցելութեան: Քաղաքապետարանի դռնապանը միշտ նոյն Իվանն էր, որ թեւին կարմիր ժապաւէն կապած՝ ժպտերես դիմաւորեց ինձ:

— Իվան, դու այստե՞ղ, զարմացայ ես:

— Հապա, ո՞ւր պիտի լինէի, պատասխանեց նա, եւ ձեռքը դէպի քաղաքապետի սենեակը պարզելով ասաց.

— Ներանք կ'երթան, մենք կը մնանք:

Զէլէրին վերջը ես հանդիպեցի տարագրութեան մէջ, Փարիզում: Ներանից իմացայ, որ բոլշեւիկների յաղթանակից յետոյ Դոնի շրջանում, Ռոստով–Նախիջեւանի կոմիսար եղել է հայ Սարգիս Սրապիոնեան–Լուկաշինը եւ դռնապան մնացել է նոյն ուս Իվանը:

Ես յայտնեցի իմ զարմանքը.

— Իրար յետեւից փոխուեցին քաղաքապետները՝ դերմանացի, լեհ, հրեայ, հայ, բայց ուս դռնապանը միշտ մնաց իր տեղը անփոփոխ:

— Ինչո՞ւ էք զարմանում, պատասխանեց բարեկամս. ուսա-

Aram webaram.com

կան տարերքն է այդ. Ռուսաստանի վերնախաւը օտարներն են, ենթախաւը ռուս Իվաններըն: Սկիզբից մինչեւ այսօր այդպէս է եղել. օտարներն են կառավարել Ռուսաստանը, ռուս ժողովուրդը կառավարուել է: Հիմա էլ նոյնը չէ՞. Տրոցկի, Ստալին, Կարախան, Հրեայ, վրացի, հայ... Դրանք բոլորը, ի վերջոյ, կ'երթան, բայց Իվաններըն կը մնան...

Ինձ մտածել տուին բարեկամիս խօսքերը:

Եթէ պատմութիւնը ունի իր փիլիսոփայութիւնը, ապա ռուս պատմութեան փիլիսոփայութիւնը բանաձեւուած է այս դռնապան Իվանի մէջ:

— Նրանք կ'երթան, բայց մենք կը մնանք...

Դարեր, դարեր առաջ, Սարմատեան անծայրածիր տափաստանը բնակեցուած էր Իվաններով, որոնք անընդունակ էին կառավարելու իրենց: Երկրում տիրող քաոսից եւ անիշխանութիւնից յուսահատ՝ նրանք դիմեցին վարեագներին՝ իրենց հիւսիսի հարեւաններին, թէ.

— Մեր երկիրը ընդարձակ է եւ հարուստ, բայց մէջը կարգ ու կանոն չկայ. եկէք եւ կառավարեցէք մեզ...

Եւ երեք եղբայրներ Սկանդինաւեան երկրից՝ Սինէոս, Տրուվոր եւ Ռիւրիկ եկան, իրենց իշխանութեան տակ առին Իվաններին: Եւ այնուհետեւ երկար դարեր Իվանները աշխատեցին եւ եկուոր իշխանները վայելեցին: Եւ ով ասես չկառավարեց այդ անճարակ Իվաններին — ե՛ւ վարեագը, ե՛ւ թաթարը, ե՛ւ գերմանը, ե՛ւ, ի վերջոյ, հայն ու վրացին, մինչեւ որ...

... Մինչեւ որ մի օր էլ Իվանը խելքի եկաւ եւ ըմբոստացաւ իր Իվանութեան դէմ: Ըմբոստացաւ այնպիսի խելագար Իվանութեամբ, որ ոչ գահ մնաց մէջտեղը, ոչ օրէնք: Եւ ահա քանի՛ տասնեակ տարիներ Իվանը — ըմբոստացած տարուկը — նորից գահ եւ օրէնք է փնտռում ու չի գտնում...

Իմ բարեկամ Զէլէրը թէեւ ծագումով հրեայ, բայց հոգիով աւելի ռուս, հաւատացնում էր, թէ ռուսական յեղափոխութիւնը Իվաններին ինքնագիտակցութեան արդիւնք էր: Երբ ռուսական ալեկոծ տարերքը հանդարտի, փիլիսոփայում էր նա, եւ տիղմը իջնէ յատակը, խաղաղ ու վճիտ ջրերում լողալը դիւրին կը լինի:

Ես նման փիլիսոփայութիւնից շատ բան չեմ հասկանում եւ աւելի տրամադիր եմ մտածելու, որ ըմբոստացած տարուկը տարուկ էլ կը մնայ, եթէ մխայն ըմբոստութեան պատճառը իր մարմինը կաշկանդող շղթան է եւ ոչ թէ հոգեկան ազատութեան պահանջը:

Aram webaram.com

Մի բան, սակայն, անուրանալի է. վարեպետներին օգնության կանչող Իվանները այժմ իրենք են ուզում վարեպետ դեր կատարել ուրիշ Իվանների համար: Բայց չպէտք է մոռանալ, որ սողալու վարժուածը թռչել չի կարող: Ուրիշին ազատություն խոստացողը նախ ինքը պէտք է լինի ազատ, կամ դէթ ազատության ճգտում ունենայ իր հոգում: Դարեր շարունակ ստրուկի համակերպությամբ բռնաւորի լուծը իր վզին կրող եւ այսօր էլ դեռ գլխակոխի այդ լուծը իր վրայից չթօթափած մի ժողովուրդ, միայն որովհետեւ ինքը մեծ է թւով, իրաւունք չունի ուրիշի ազատության մասին մտածելու, երբ ինքը անազատ է: Անօրէն, առաջ գերանը քո աչքից հանիր...

Ո՞րտեղից որտեղ: Ինչով սկսեցինք եւ ուր հասանք: Ներողություն. իմ նպատակը միայն Ռոստով–Նախիջեւանի քաղաքապետարանի դռնապան Իվանին ծանօթացնելն էր ձեզ, որ, անշուշտ, եթէ ողջ է, շարունակում է առաջուայ նման, դռնապանի պաշտօնը վարել, հաւանաբար, վաստակաւոր դռնապանի տիտղոսով: Ի՞նչու մէկը կարող է լինել վաստակաւոր դերասան, մի ուրիշը վաստակաւոր հովիւ, մի երրորդը Ստալինեան լաւուրէատ, իսկ մեր Իվանը չի կարող լինել վաստակաւոր դռնապան:

Իսկ եթէ, Աստուած հոգին լուսաւորէ, Իվանը ոչ եւս է, նրա տեղը, բնականաբար, բռնել է մի ուրիշ Իվան: Այդպէս է կարգն աշխարհի. բնութիւնը դատարկութիւններ չի սիրում. մի Իվան գնում է, տեղը մի ուրիշ Իվան է գալիս...

Բէյրութ, 1957

Aram webaram.com

ՄԻ ՈՒՐԻՇ ԻՎԱՆ

Ռուսաստանը լեցուն է Իվաններով: Իմ մանկութեանս առաջին բարեկամն էլ Իվան էր, մեր դիւղի հռչակաւոր դարբին Իվանը:

— Բոլոր Իվաննեերի մէջ առաջին Իվանը ես եմ, ասում էր նա, Իվան Իվանովիչ Իվանով:

Հսկայ մարդ էր դարբին Իվանը: Երկար, սեւ մազերը թափուած էին ճակատի վրայ: Ուժեղ, սուր աչքեր ունէր: Ուժեղ, հաճելի ձայն: Որ երգէր, տախտակէ չինուած դարբնոցը դողում էր վախից:

Գիւղացիք սիրում էին դարբին Իվանին, որ Մեծ Սալայի միակ մնայուն ուուն էր: Իվանն էլ սիրում էր մեծ սալայիներին:

— Այ քեզ ժողովուրդ, ասում էր նա, օղի չի խմում, բայց սիրում է խմեցնել...

Ո՞րտեղից եւ ե՞րբ էր եկել Իվանը Մեծ Սալա: Ձեմ կարծում, թէ մէկը դիտէր, յամենայն դէպս, երբ ես աշխարհ եկայ, նա արդէն դիւղումն էր, իր երեւելի դարբնոցում:

Մայրս պատմում էր, որ երբ ինձ եւ Գեղեցիկ Հօրաքրոջս աղջկան՝ Հոռոմայիին միասին տարել են եկեղեցի մկրտելու, Իվանն է եղել մեր կնքահայրը: Առհասարակ, մեր դիւղում եթէ մէկը քաւոր չունենար, Իվանին էր դիմում: Դարբին Իվանը անհաշիւ սաներ ունէր Մեծ Սալա դիւղում:

Իվանի դարբնոցը գոնէում էր մեզ շատ մօտ, «մեր ազգարի քենաբը», ասում էր տատս: Մեր նշանաւոր կամուրջի կողքին, ժամի ճամբուն:

Այդ կամուրջը նշանաւոր էր նրանով, որ ամէն տարի, մարտ

Aram webaram.com

ամսին, երբ հալուող ձիւնից հեղեղները էին գոյանում, հիմքից քանդւում էր եւ ամէն տարի Միքիչքա քեռիս հրամանով նորոգութեան գումար էր յատկացւում: Այդ գումարը ծախսւում էր, մեծ մասամբ, ռախի վրայ եւ յաջորդ տարի կամուրջը նորից քանդւում էր:

Կամուրջի այդ վերւզումները Իվանին վնաս չէին հասցնում: Ջորը, որի վրայ ձգուած էր կամուրջը, խորունկ չէր, նոյնիսկ երեխաները, ծալելով վարտիքի պալախը, ապահով անցնում էին առանց թրջուելու:

Դարբնոցից մի քանի փողոց անդին, մի փոքրիկ տախտակէ տնակում, ապրում էր Իվանի ընտանիքը — կինը, որ ճիշդ իր ամուսնու հակապատկերն էր, եւ հօր պարծանք երեք ժառանգորդները՝ Մինէուս, Ռիւրիկ եւ Տրուվոր, որոնց երեխաները կոչում էին՝ Սվինուս, Կոռել եւ Տաւար:

Իվանի ընտանիքը դրեթէ հայացած էր, կինը եւ ինքը գիտէին ռուսերէն, բայց երեխաները խօսում էին միայն հայերէն: Երբ գիւղի տղաքը նրանց կոչում էին «ռուս», նրանք բարկանում էին եւ բռունցքներով յարձակում իրենց ռուս կանչողների վրայ: Ինչ ռուս, իրենք հայի զաւակ հայ էին... Իվանը ծիծաղում էր:

Իվանը աքանչելի մարդ էր: Հիանալի արհեստաւոր. ամենանուրբ գործիքներ էր չինում: Գիւղացիները հիանում էին նրա չինած խոփերով: Ջուարթ բնաւորութեան տէր, կատակասէր, հրաշալի երգիչ: Միայն մէկ պակասութիւն ունէր Իվանը, մեծ պակասութիւն — շատ էր խմում: Ռուս եւ չխմող, ի հարկէ, տարօրինակ կը լինէր, բայց այդքան խմելն էլ շատ էր. կարծես ուզում էր արդարացնել ռուսական առածը.

— Ռուսաստանի ուրախութիւնը խմելն է:

Մօտաւորապէս նոյնն է եւ հայկական առածը.

— Գինի ուրախ առնէ զմարդ:

Օղին Իվանը խմում էր ջրի տեղ եւ չէր հարբում: Այդ աժդահա մարմնին օղի կ'ազդէ՞ր: Տարին մի քանի անգամ նա քէֆ էր անում, մի քանի օր անընդհատ: Կանչում էր վառդաւն չալող Ալեշին, լսում էր նրա նուագած տխուր մեղեդիները եւ խմում: Այդ վիճակում կարելի չէր մօտենալ նրան. կը ծեծէր:

Կամ Ալեշին ձգում էր առջեւը եւ օղիի շիշը ճօճելով օդում՝ շրջում էր փողոցներում: Խմում էր եւ հայհոյում: Հայհոյում էր թագաւորին եւ բոլոր մինիստրներին: Հայհոյում էր իմ քեռի Մի-

Aram webaram.com

քիշքային, որ դիւղը լաւ չէր կառավարում: Հայհոյում էր ամենքին: Պատահողի հետ կռուի էր բռնւում, խմում էր եւ հայհոյում: Իսկական բոլշեւիկ դեռ Լենինից առաջ...

Երբ այդ նոպան անցնէր, դառնում էր նախկին պարզունակ, բարի եւ խաղաղ դարբին Իվանը:

Ես չորս կամ հինգ տարեկան կը լինէի, երբ դարբին Իվանը իր բարեհաճ ուշադրութիւնը դարձրեց իմ վրայ: Թէեւ ես նրա սանն էի, բայց նա այնքան սան ունէր դիւղում, որ չէր կարող ամենքին բաժին հանել իր ուշադրութիւնից:

Մի դիւղացի ձի էր բերել դարբնոց, պայտելու: Ես շատ էի սիրում դիտել Իվանի ձի պայտելը: Այնպէս ճարտար շարժումներ ունէր: Այս անգամ, սակայն, չէր յաջողում ձին դապել. հանդիստ չէր մնում եւ թոյլ չէր տալիս ոտքը ամրացնելու:

Ես գրպանումս շաքար ունէի: Շաքարը ափիս մէջ դրած՝ երկարեցի ձիուն: Կենդանին, կարծես, զարմանքով նայեց վրաս եւ հանդարտած՝ շրթունքով խլեց ձեռքիցս շաքարը: Իվանը օգտուեց առիթից եւ կապեց ձիու ոտքը:

— Մալադեց (կեցցես), ասաց նա՝ մեծ գոհունակութիւն պատճառելով իմ սրտին: Այստեղից սկսուեց մեր մտերմութիւնը:

Ես յաճախ այցելում էի Իվանի դարբնոցը: Օգնում էի նրան փուքս քաշել: Գրպանս լեցնում էի երկաթի կտորներով: Հիանում էի նրա հուժկու բազուկներով, երբ աջցանով բռնած չիկացած երկաթի կտորը հանում էր քուրայից եւ ծեծում ծանր մուրճով սալի վրայ: Ինձ թւում էր, որ աշխարհիս ամենաուժեղ տղամարդը դարբին Իվանն էր, ի հարկէ, իմ հօրից վերջը:

Երբեմն ինձ հետ խօսքի էր բռնւում Իվանը, կարծես իրեն հաւասար մէկը լինէի:

— Այս փուքսը տեսնո՞ւմ ես, ասաց նա ինձ մի օր, սա է տալիս իմ հացը:

— Եւ օդին, թոգրի ես բերանիցս:

— Այո՛, չան լակոտ, եւ օդին: Օդի խմելը մեղք չէ, բայց լսիր ինձ. երբ մեծանաս, օդի չխմես: Քեզ ասում եմ չխմես: Իմ բանը ուրիշ է. ես կը խմեմ...

Մեր բարեկամութիւնը, սակայն, երկար չտեւեց: Շուտով մենք ընտանիքով հեռացանք Մեծ Սալայից, եւ դարբին Իվանի անունը նսեմացաւ նոր բարեկամների առջեւ:

Aram webaram.com

Տարիներ վերջը, երբ մենք վերադարձանք Մեծ Սալա, ես Իվանին գտայ նոյն տեղը, բայց մի քիչ ծերացած էր երեւում եւ աւելի էր խմում: Նա ինձ ընդունեց գրկաբաց եւ ակնածանքով. ես արդէն դիտէի Թուաբանութիւն եւ հաշիւ, ուրեմն, ուսեալ մարդ էի, իսկ ուսումից իմ բարեկամը պատկառում էր:

— Աստ, նայենք, քանի՞ կ'անէ եօթին անգամ եօթը:

— Քառասուն ինը, պատասխանում էի ես, առանց մտածելու:

— Ճիշդ է, մալադեց, հիացումով հաստատում էր նա, իսկ մեր լակոտները...

Նրա սրտի ցաւն էր, որ իր լակոտները Թուաբանութիւն չգիտէին, առհասարակ, ուսման գլուխ չունէին:

— Իվանի որդիք միայն չորան կարող են լինել, դառնութեամբ ասում էր նա:

Իվանի որդիք աշակերտ էին Հայոց դպրոցում, բայց մարդ լինելիք չունէին...

Ես երբեմն իմ բարեկամիս դիրք էի կարդում: Նա սիրում էր լսել: Նստում էր խոնարհ, աջ ձեռքով յենած գլուխը եւ լուռ ականջ դնում: Նա մի քանի անգամ կարդալ տուեց Գոգոլի «Տարաս Բուլբան». շատ էր սիրում նաեւ «Երուսլան Լազարեւիչ եւ Բովա Կորոլեւիչ» հէքեաթը:

Զարմանում էր եւ չէր կարողանում բացատրել, թէ ինչպէս մի գիր ուրիշ գրի մօտ դնելով՝ բառ էր դուրս գալիս: Եւ երբ սովորականից աւելի խմած էր լինում, հայհոյանքով սպառնում էր հեռաւոր մէկին, որ պատճառ էր եղել, որ ինքը անդրադէտ, անասուն էր մնացել:

Այս անգամ էլ Մեծ Սալայում երկար չմնացինք: Ես երկար չմնացի Նոր Նախիջեւանում էլ, ուր փոխադրուել էինք ընտանիքով: Գնացի էջմիածին, Գէորգեան ճեմարանը: Ապա Պետերբուրգ, ապա Հայաստան, ապա Ամերիկա, ապա Կովկաս եւ 18 տարի վերջը, 1916ին, նորից այցելեցի Մեծ Սալան:

Անմիջապէս ուզեցի տեսնել դարբին Իվանին, բայց իմ բարեկամը այլեւս չկար: Դարբնոցը հնացել էր, անհրապոյր էր դարձել, եւ սալի մօտ, մուրճը ձեռքին, կեցած էր Իվանի մեծ տղան: Նա ճանաչեց ինձ եւ պատմեց իր հօր մասին:

Վերջին տարիները Իվանը բոլորովին կորցրել էր իրեն: Ծմռում էր անդուռապ: Հայհոյում էր աներեւակայելի չառերով: Կռւում էր

Aram webaram.com

ամենքի հետ: Կարծում էին, թէ խելագարուել էր:

Մի առաւօտ էլ գտել են Իվանին գարբնոցում կախուած...

Մեծ Սալայում հրապուրիչ բան չէր մնացել այլեւս: Հոլիչ մօրաքոյրս եփեց իմ սիրած խաշըխ պէրէֆը, կերայ, բայց առաջուայ համը չունէր:

Սերովբէ Տիրացուեանը, իրենց տան մէջ, գաւուլ-զուռնայով քէֆ սարքեց, յիշեցնելու համար ինձ առաջուայ օրերը. չուրա-խացայ:

Մի բան պակասել էր Մեծ Սալայում: Առաջուայ համը չէր մնացել...

1960, Օգոստոս.
Մուբարզէլ Պաենդոկ.

Վ Ե Ր Ջ

Aram webaram.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեղինակի կողմից	էջ
Դէպի Ազբիւրը լոյսին	5
Սուրբ Համբարձման դպրոցում	7
Թեմական դպրոցում	7
Ճանապարհին	14
Գէորգեան Ճեմարանը	25
Գէորգեան Ճեմարանում	36
Իմ ճեռի Միխիշճաճ	46
Վիեննայի Ընդհանուր ժողովը	75
Պետերբուրգում	84
Մոսկուայում – «Պսակ» ժողովածուն	109
Արմաշի Արշաւանքը	124
Սիւնիի գործը	128
կարինում	140
Հանդիպումներ մեծ ճանապարհի վրայ	151
Ուղեւորութիւն ի Քղի	175
Ոջիլի Օրիէնտացիա	205
կարսում Ա. Բաբալեանի հետ	227
Ծանօթութիւն էրզրումում	237
Կարսում	237
Հոկտեմբեր 14	240
Անուրախ Երեւանում	248
Ճամբուս վրայ	253
Մեւեր հազած կինը	260
Իմ ուղեկից պատուելին	260
Շուեդուհին	262
Արժանդինի կիպիչ երկնքի տակ	265
Օգասկոյում	268
Դրօշակի հանդէս	273
Դրօշակը սրտում	277
Հերոսութեան մասին	281
Իվանը	289
Մի ուրիշ Իվան	296
	300

Aram webaram.com

ՑԱՆԿ ՆԿԱՐՆԵՐՈՒ

		էջ
1	— Սիրանոյշ	21
6	— Գէորգ Սարկաւագ Զէօրէքճեան	25
3	— Մասիսը՝ Հայոց Աշխարհի պահապան	35
4	— Գէորգ Դ.	36
5	— Գէորգեան ճեմարան	37
6	— կարապետ Վ. Տէր Մկրտիչեան	42
7	— Մէկ նմոյշ ճեմարանի լսարաններէն	45
8	— Սուրբ Էջմիածին	47
9	— Ներսէս Արք. Մելիքթանդեան	70
10	— Գամառ Քաթիպա	72
11	— Սիմոն Զաւարեան	87
12	— Թոստոմ	89
13	— Թումմաս Ճելալեան	91
14	— Աւետիք Իսահակեան	99
15	— Ուսանողը՝ Պետերբուրգում	113
16	— Հ. Տէրտէրեան եւ Ե. Պահլաւունի	115
17	— Փրոֆ. Ն. Ադոնց	119
18	— Եղիշէ Թօփչեան	121
19	— Ա. Վռամեան	133
20	— Ղեւոնդ Մելոյեան	137
21	— Փիլոս, Գ. Սիւնի, Մահրանդ, Ս. Վրացեան	141
22	— Վ. Փափազեան (Կոմս)	143
23	— Վարդգէս Սէրէնկիւլեան եւ զաւակը	145
24	— Սեպուհ	154
25	— Կարին	155
26	— Արմէն Գարօ	157
27	— Սանասարեանի ուսուցչական կազմը	158
28	— Շաւարշ Միսաքեան եւ Տիգրան Ծամհուր	159
29	— Հռիփսիմեանց դպրոցի իմ դասարանը	161
30	— Գառնիկ Լուսպարոնեան	163
31	— Առաջնորդ Սմբատ Եպս. եւ Ազգ. իշխանութեան կազմը	167
32	— Ս. Տաճար	170
33	— Թոստոմը, քոյրը Համասը եւ մայրը	171
34	— Բժ. Յակոբ Զաւրեան	177

Aram webaram.com

35.– Աւետիս Ահարոնեան 195
36.– Գարեգին Յաժակ 197
37.– Ս. Զաւարեան, գրկում որդին՝ Վիգէնը 199
38.– Անդրանիկ Եսայեան 216
39.– Մխրան Թէրլէմէզեան 231
40.– Ռուբէն Տէր Մինասեան 239
41.– Բժ. Արտաշէս Բաբալեան 241
42.– Գարեգին Եպս. Յովսէփեանց 245
43.– Զօր. Թովմաս Նազարբէգեան 255
44.– Լեւոն Թադէոսեան — Պոպաչա 257
45.– Զապէլիկը եւ իր ծնողները 269
46.– Գիւտ Մխիթարեան 273
47.– Ճօրճ Մարտիկեան 277
48.– Վարդ եւ Նազիկ 283

Aram webaram.com

Aram webaram.com